

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 7, No 1, 2019



**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
7 (1)**

Երևան 2019

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, պատմագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պագմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիոսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”)

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic Universtiy, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор истории, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусахаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазманя, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

«Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հասմիկ Գ. Գրիգորյան

Մանկի ձեռքերունան եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես «ոչ զինված դիմադրության» դրսևորում. երեխաների փորձառությունները 9

Նարինե Վ. Մարգարյան

Հալեպի հայկական որբանոցը 1915-1924 թթ.27

Հայկ Մ. Մարտիրոսյան

Մարի և Վիլհելմ Շպիբերներ. Հայոց ցեղասպանության սկանալիտ գերմանացի հումանիտար ամուսինները..... 54

Քրիստինե Վ. Նաջարյան

Կրթական կյանքի կազմակերպումը Մարաշի որբանոցներում համիդյան կոորդրացիոնից հետո (1896-1909 թթ.) 66

Ռոբերտ Ա. Թաթոյան

Վանի գալատակի հայկական վանքերը և վանական կյանքը Մեծ եղեռնի նախաշեմին (1870-ական թթ. – 1914).....77

Էլինա Չ. Միրզոյան

Երիտթուրքական մամուլի պատմությունից (մինչև 1908 թ.). համառոտ սկնարկ..... 103

Թեհմինե Ռ. Մարտոյան

Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ 116

Նարինե Ս. Հակոբյան

Պատմելով անպատմելին. Տրապիզոնի հայերի տեղահանություններն ու կոորդացիոնը Հարություն Մելքոնի Կիրակոսյանի հուշերում..... 126

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 139

CONTENT

ARTICLES

Hasmik G. Grigoryan

*Ways of Food Procurement During the Armenian Genocide as an Manifestation of
“Unarmed Resistance”: Children’s Experiences* 9

Narine V. Margaryan

The Armenian Orphanage of Aleppo (1915-1924)27

Hayk M. Martirosyan

*Mari and Wilhelm Spieckers: A German Humanist Couple Witnessing the
Armenian Genocide*..... 54

Kristine V. Najaryan

*The Organization of Educational Life of Marash Orphanages
after the Hamidian Massacres (1896-1909)*..... 66

Robert A. Tatoyan

*Armenian Monasteries and Monastic Life in Van Sub-District on the Eve of
the Armenian Genocide (1870s – 1914)*77

Elina Z. Mirzoyan

*From the History of Young Turkish Press: A Short Review
(Until 1908)*..... 103

Tehmine R. Martoyan

The Issue of the History of Greek Genocide in the Armenian Historiography.....116

Narine S. Hakobyan

*Telling the Untold: Deportations and Massacres of Trapizon Armenians
in the Memoirs of Harutyun Kirakossian* 126

ABOUT THE AUTHORS 139

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Асмик Г. Григорян

*Способы нахождения еды как “не вооруженное сопротивление”
при Геноциде армян: опыты детей* 9

Нарине В. Маргарян

Армянский сиротский приют Алеппо (1915-1924) 27

Айк М. Мартиросян

*Мари И Вильгельм Шпикеры: немецкие супруги гуманисты,
свидетели Геноцида армян* 54

Кристине В. Наджарян

*Организация учебного процесса в сиротских приютах Мараша
после гамидовских погромов (1896-1909)* 66

Роберт А. Татоян

*Армянские монастыри и монастырская жизнь в Ванском округе
накануне Геноцида армян (1870-е гг. – 1914)* 77

Элина З. Мирзоян

Из истории младотурецкой прессы (до 1908 г.): краткий очерк 103

Тегмине Р. Мартоян

Вопрос истории Геноцида греков в армянской историографии 116

Нарине С. Акопян

*Рассказывая неописуемое: депортации и массовые убийства армян
Трапезунда в воспоминаниях Арутюна Киракосяна* 126

ОБ АВТОРАХ 139

**ՄԵՆԴԻ ԶԵՆՔԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ՈՐՊԵՄ «ՈՉ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴԻՐՈՒԹՅԱՆ» ԴԻՄԵՎՈՐՈՒՄ.
ԵՐԵՒՆԱՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հացը, իմ մրքիս մէջ, կապուած է կշտանալու գոհունակութեան եւ անօրոյթեան
տառապանքին: Ես ու իմ ժողովուրդս, դարերու չափ երկար սեւ ամառ մը, մնա-
ցինք հացի կարօյ, անօթի: Այն օրէն ի վեր հացը նուիրական է ինծի համար ու
անոր հանդէպ ունեցած սէրս պաշտամունքի կը մօտենայ:*

Արամ Հայկազ (Զեքեմեան),

Հայոց ցեղասպանության վերապրող

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հոլոքոստ, երեխաներ, ոչ զինված դիմադրու-
թյուն, սնունդ, հուշագրություններ, բանավոր պատմություններ:

Հողվածի գլխավոր խնդիրն է քննարկել, թե արդյո՞ք Հայոց ցեղասպանության ժամանակ սննդի ձեռքբերման եղանակները կարող են դիտարկվել որպես ոչ զինված դիմադրու-
թյուն: Այս նպատակով հողվածի առաջին մասում անդրադարձ է կատարված գիտակար-
գային որոշ հարցադրումների և ոչ զինված դիմադրության հայեցակարգի ձևավորմանը
Հոլոքոստի համատեքստում:

Ման գիտական հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ չնայած Հայոց ցեղասպանության ժամանակ եղել են մի շարք զինված դիմադրություններ՝ ինքնա-
պաշտպանական մարտեր, այդ թվում նաև՝ հաղթական ելքով, ինչպես Վանում, այնու-
ամենայնիվ կա մտայնություն, որ հայերը ինչ-որ չափով մեղավոր են, քանի որ «մոռվել
են ոչխարների պես», այն է՝ առանց դիմադրության: Այդ իսկ պատճառով այս հողվածի
նպատակն է գիտական գնահատական առաջարկել «դիմադրություն» հասկացությանը՝
վերջինիս ենթակատեգորիաները դարձնելով առանձին հետազոտության առարկաներ:
Անշուշտ, մեկ հողվածի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ հիմնախնդրի բոլոր
տեսանկյուններին և դիմադրության բոլոր ձևերին, այնուամենայնիվ հողվածը փորձ է՝
ձևավորելու Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում նոր հարցա-
դրումներ:

Հողվածի երկրորդ հատվածում փորձ է արված խմբավորել Հայոց ցեղասպանության
ժամանակ սննդի ձեռքբերման ձևերը և դիտարկել դրանք ոչ զինված դիմադրության
հայեցակարգի համատեքստում: Անդրադարձ է կատարված հատկապես երեխաների
փորձառություններին՝ փորձելով նաև վեր հանել, թե որ սոցիալական խմբերը ինչ տեսա-
կի գործունեության մեջ են ընդգրկված եղել և ինչ ծավալով: Հայոց ցեղասպանության
առօրեականության մաս կազմող սննդի ձեռքբերման եղանակները սովյալ հողվածում
քննարկվում են որպես Ցեղասպանության՝ մարդկանց սովամահության դատապարտելու
քաղաքականության դեմ գիտակցված և չգիտակցված պայքարի դրսևորում:

1 Արամ Հայկազ, *Չորս տարի Քիւրքիսպանի լեռներում մէջ* (Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան
Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1972), 282:

Հողվածի համար աղբյուրագիտական հիմք են Հայոց ցեղասպանությունը վերապրողների տպագրված հուշագրությունները և բանավոր պատմությունները²: Աղբյուրագիտական նյութը ցույց է տալիս, որ սննդի ձեռքբերման եղանակները բազմազան են եղել: Սակայն հողվածում ներկայացված են ամենից հաճախ հանդիպող ձևերը՝ *վայրի խոփերով սնվելը, մրգերի, հասրասպուղների և ընկուզեղենի հավաքչություն, մուրացկանություն*, որոնք հաճախ վերապրողների կողմից մեկնաբանվում են որպես կենսա-մահու պայքար:

Ոչ զինված դիմադրություն. գիտակարգային որոշ հարցադրումներ

Հրեից դիմադրությունը և դրա տարբեր դրսևորումները կես դարից ավել է ակտիվ լուսաբանվում են ինչպես Հոլոքոստի պատմագրության մեջ, այնպես էլ հասարակական քննարկումներում³: Մինչդեռ Հայոց ցեղասպանության համատեքստում *ոչ զինված դիմադրության* խնդիրը գրեթե ուսումնասիրված չէ⁴: Այդ իսկ պատճառով նախքան բուն թեմային անդրադառնալը և սննդի ձեռքբերման եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես ոչ զինված դիմադրություն դիտարկելը ստորև համառոտ քննարկենք մեթոդաբանական բնույթի որոշ հարցադրումներ՝ հենվելով հրեական փորձի վրա:

2 Հողվածում հիմնականում օգտագործված են “Oral History Project”-ի նյութերը, որոնք հավաքագրվել են 1978 թ. սկսած: Ծրագրի մասին մանրամասն տե՛ս <https://umdearborn.edu/casl/centers-institutes/center-armenian-research/armenian-assembly-oral-history-project>, դիտվել է 04.04.2019:

3 Հրեից դիմադրությանը նվիրված գրականության մասին տե՛ս *Jewish Resistance, A Working Bibliography*, Third Edition (Washington: Center for Advanced Holocaust Studies, USHMM, 2003): Իսրայելում Հոլոքոստի զոհերի հիշատակին 1957 թ. կառուցված հուշարձան/թանգարանի առաջին ցուցանմուշները ներկայացնում էին Վարշավայի գետտոյում հրեական դիմադրությունը, Սոբիբորի ու Տրեբլինկայի մահվան ճամբարների ապստամբություններն ու Իսրայել հասնելու համար կենդանի մնացածների պայքարը: Տասը տարի անց՝ 1968 թ. գարնանը, ինստիտուտում տեղի ունեցած առաջին գիտական հավաքը ևս նվիրված էր հրեից դիմադրության թեմային: Զեկույցների ժողովածուն տե՛ս *Jewish Resistance during the Holocaust: Proceeding of the Conference on Manifestations of Jewish Resistance, Jerusalem, April 7-11, 1968*, ed. Grubsztain Meir (Jerusalem: Yad Vashem, 1971):

4 Հայոց ցեղասպանության համատեքստում ոչ զինված դիմադրության թեմայի ուսումնասիրությամբ է զբաղվում ԱՄՆ-ի Կոլումբիա համալսարանի պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանը: Տե՛ս Khatchig Mouradian, “The Meskeneh Concentration Camp, 1915-1917: A Case Study of Power, Collaboration, and Humanitarian Resistance During the Armenian Genocide,” *Journal of the Society for Armenian Studies* 24 (2015): 44-55; Khatchig Mouradian, “Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1916,” *Études Arméniennes Contemporaines* 7 (2016): 87-103, <https://journals.openedition.org/eac/1023?lang=en>, <https://doi.org/10.4000/eac.1023>; Khatchig Mouradian, “The Role of Armenian Women During the Genocide,” filmed 04 April 2017 at YouTube, AGBU, video, 08:06, <https://www.youtube.com/watch?v=MHjPzHsf1j4>, դիտվել է 10.02.2019; Khatchig Mouradian, “Not Like a Lamb to the Slaughtert: Humanitarian Resistance during the Armenian Genocide,” filmed 11 February 2017 at YouTube, Programme of Armenian Studies, video, 01:41:17, <https://www.youtube.com/watch?v=UPTzTY-7LHc>, դիտվել է 10.02.2019: Դեռևս 2011 թ. խնդրի ուսումնասիրության կարևորության հարցին է անդրադարձել նաև ազգագրագետ, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Հարություն Մարությանը: Տե՛ս Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմա-բանասիրական հանդես* 2 (2011), 30-35:

Հոլոքոստի պատմագիր Դան Միհմանը գրում է, որ հրեաների և ոչ հրեաների կողմից նացիստներին դիմադրելու հարցը գիտական և հասարակական ուշադրության կենտրոնում է հայտնվել դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, քանի որ ընդհատակյա շարժումները զգայական և բարոյական տեսանկյունից մեծ արձագանք էին գտնում: Այս հետաքրքրությունն առավել մեծանում է հատկապես նացիստական Գերմանիայի անկումից անմիջապես հետո ազատագրված եվրոպական երկրներում: 1960-ական թթ. վերջերին արդեն Հոլոքոստի պատմագրության մեջ «դիմադրություն» եզրի իմաստաբանական շրջանակներն ընդլայնվում են, և ձևավորվում է նոր հայեցակարգ, որը կոչվում է “Kiddush Hahayim” («Կյանքի սրբացում»)⁵: Ակադեմիական գրականության մեջ սկսվում են շրջանառվել երկու եբրայերեն եզրեր՝ ամիդա (“Amidah”/ תפילה) և հիտնագդուտ (“Hitnagdut”/ התנגדות): Առաջինը ներառում էր դիմադրության բոլոր ասպեկտները, այդ թվում՝ զինված դիմադրությունը՝ հիտնագդուտը⁶:

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված «դիմադրության» իմաստաբանական ընդլայնումը: Հոլոքոստի պատմագրության մեջ դիմադրությանը նվիրված աշխատություններում հիմնականում շրջանառվում են հետևյալ առանցքային հարցադրումները. մի՞թե Հոլոքոստի պատմությունը միայն բռնության, ոչնչացման ու տառապանքի մասին է, արդյո՞ք Հոլոքոստի ժամանակ չի եղել հերոսականության ոգի, թե՞ բոլորը մահվան են գնացել «մոթթվելու ոչխարների նման» (צאן לטבח): Ի՞նչն է պետք ընդհանրապես որակել որպես դիմադրություն, ինչի՞ն էին մարդիկ դիմադրում և ինչպե՞ս:

Հայոց ցեղասպանությունից ու Հրեից հոլոքոստից հետո թե՛ հայերի, թե՛ հրեաների մեջ ձևավորվել է այն կարծրատիպը, որ մարդիկ «մոթթվել են ոչխարների պես», առանց դիմադրության: Չնայած հրեից պարագայում այս արտահայտությունը համարվում է հինկտակարանային և ունի երկար պատմություն⁷, Հոլոքոստի պատմագրության մեջ քննարկվում է Վիլյուսի գետտոյի ընդհատակային Աբբա Կովների կոչը⁸: 1942 թ. հունվարի 1-ին Կովները հայտարարեց. «Մենք ոչխարների նման չենք փարվի մոթթվելու: Ճիշտ է, մենք թույլ և անօգնական ենք, բայց միակ պարտախախտող սպանությանը սպափանքությունն է: Եղբայրներ, ավելի լավ է մեռ-

5 Եզրի մեկնաբանման մասին մանրամասն տե՛ս Rabbi Aaron Rakeffet, “The “Kedoshim” Status of the Holocaust Victims,” *Hirhurim Musings Torah Journal*, July (2010): 185-198:

6 Дан Михман, *Историография катастрофы. Еврейский взгляд: Концептуализация, терминология, подходы и фундаментальные вопросы*, пер. М. Губа и др. (Днепропетровск: Центральный Украинский Фонд истории Холокоста «Ткума», 2005), 242.

7 Հղում է կատարվում Սաղմոսներին և Եսայո մարգարեությանը. «Բայց ամեն օր սպանվում ենք քեզ համար, եւ մոթթուելու ոչխարի պէս ենք համարվում» (Սաղմ. ԽԳ- 44:22) և «Նա անիրաւութիւն կրեց եւ չարչարուեցաւ, բայց իր բերանը չ’բացաւ, ինչպէս մի ոչխար որ մոթթուելու է տարվում, եւ ինչպէս մի մուսնջ մաքի իր խուզողների առաջին, այնպէս իր բերանը չ’բացաւ» (Եսայիա Գլ.ԾԳ 53:7): Տե՛ս *Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կրակարանների* (Yerevan: Bible League International, 2010):

8 Մանրամասն տե՛ս Yael Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” *Jewish Social Studies* 19, no. 3 (2013): 139-169:

նեղ կռվելով, որպես ազատ մարդիկ, քան սպրեղ մարդասպանների ողորմածությամբ: Արթնացե՛ք, արթնացե՛ք վերջին շնչով: Քաջալերվե՛ք»⁹:

Իր հարցազրույցներից մեկի ժամանակ Հոլոքոստի պատմագիր Յեհուդա Բաուերը նշում է. «...այս այլաբանությամբ նա փորձել է հենց այդ արտահայտության դեմ դիմադրություն առաջացնել»¹⁰: Համաձայն Յ. Բաուերի՝ դրա շրջանառումը Հոլոքոստից հետո մեծապես տարբերվում է, քանի որ ձեռք է բերել դատապարտող բովանդակություն¹¹: Վերջինիս նպաստող հանգամանքներից է այն, որ 1960-ականներին որոշ հրեա մտավորականներ, այդ թվում նաև՝ Ռ. Հիրբերգը և Հ. Արենդթը, առաջ քաշեցին այն մոտեցումը, որի համաձայն՝ հրեաները մասամբ մեղավոր են իրենց ոչնչացման համար, քանի որ չեն դիմադրել: Ռաուլ Հիրբերգը նշում է, որ հրեաները որևէ ծրագիր չունեին ոչ միայն զինված, այլև նույնիսկ հոգեբանական պայքարի համար¹², իսկ Հաննա Արենդթը Հոլոքոստի ժամանակ հրեաների վարքը գնահատում է ավելի շատ որպես հնազանդ, քան հերոսական¹³:

Չնայած մինչև այսօր հրեից դիմադրությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ են տպագրվել, որոնք քննադատում են Հոլոքոստի ժամանակ հրեաների «պասիվության միֆը», այնուամենայնիվ այն դեռ կա ժողովրդական մտածողության մեջ և հաճախ շրջանառվում է լրատվությամբ¹⁴: Հրեաների պասիվության և «ոչխարների պես մորթվելու» կարծրատիպը ոչ միայն վերապրողների, այլև հետպատերազմյան հրեական համայնքի վրա խոր հետք է թողել՝ ձևավորելով անկարողության, պասիվության, հնազանդության և քաջության բացակայության ընկալումներ¹⁵:

Հենց այս կարծրատիպի դեմ ուղղված պայքարով է պայմանավորված, որ «դիմադրություն» եզրն իմաստաբանական առումով ընդլայնվեց և ընդգրկեց դիմադրության զինված և ոչ զինված ձևերը՝ ձևակերպվելով որպես «Հրեաների պատասխանը Հոլոքոստին» (Jewish response to the Holocaust): Վերջինիս մեծապես նպաստեց այն, որ ուսումնասիրությունների կենտրոնում հայտնվեցին հրեաների ամենօրյա կյանքն ու մարդկանց առօրյա, հասարակ գործողությունները:

Եվրոպական պատմագրության մեջ ի հայտ եկան ոչ զինված դիմադրության տարբեր ձևակերպումներ, որոնց որոշ մասը մատնանշում են որոշակի գործողություններ՝

9 Richard Middleton-Kaplan, “The Myth of Jewish Passivity,” in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), 6.

10 Amos Goldberg, “Like Sheep to the Slaughter?” Excerpt from Interview with Yehuda Bauer, Director of the International Center for Holocaust Studies of Yad Vashem, January 18, 1998, Yad Vashem, Jerusalem, http://www.yadvashem.org/odot_pdf/Microsoft%20Word%20-%20203667.pdf, դիտվել է 23.07.2017:

11 Նույն տեղում:

12 Raul Hilberg, *The Destruction of the European Jews*. Third Edition, vol. 3 (New Haven and London: Yale University Press, 2003), 1104.

13 Hannah Arendt, *Eichmann in Jerusalem. A Report on the Banality of Evil* (New York: Viking Press, 1964), 11.

14 Patrick Henry, “Introduction,” in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), xiii.

15 Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” 143.

փաստաթղթերի կեղծում, կալանավորվածների ընտանիքի անդամներին ցուցաբերած աջակցություն, հարկադրական աշխատանքներից խուսափողներին ծածուկ պահելը և այլն: Եմանօրինակ գործողությունները նիդեռլանդական գրականության մեջ առավել հայտնի են որպես «ոչ բռնի ինքնապաշտպանություն» (geweldloze verdediging), ֆրանսիականում՝ «դիմադրության բարեգործական գործողություններ» (activites caritatives), «մշակութային դիմադրություն» (resistance culturelle), դանիական և այլ երկրների գրականության մեջ՝ որպես «պասիվ դիմադրություն» և «խորհրդանշական դիմադրություն»¹⁶, հանդիպում են նաև «հոգևոր դիմադրություն» և/կամ «բարոյական դիմադրություն» ձևակերպումները, որոնք ընդգրկում են հոգևոր և մշակութային գործունեությունը¹⁷:

Հայոց ցեղասպանության համատեքստում «անօգնական զոհի» կերպարը ստեղծվել է 1950-ականների կեսերին խորհրդային ղեկավարության կողմից: Այս շրջանում Խորհրդային Միության վարած քաղաքականության մասին Հարություն Մարությանը գրում է. «...1950-ական թվականների երկրորդ կեսից խորհրդային ղեկավարությունը ոչ այնքան արգելում էր ցեղասպանության մասին խոսելը, որքան նպաստում էր ցեղասպանության շուրջ այնպիսի հիշողության պահպանմանը, որտեղ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի»¹⁸: Համաձայն հետազոտողի՝ իրավիճակը սկսում է փոխվել Հայոց ցեղասպանության հիշատակման 50-րդ տարեկիցից¹⁹, 1988 թ. Ղարաբաղյան շարժման և Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակից հետո²⁰: Այնուամենայնիվ. «...հայաստանյան հասարակության որոշ շերտերի մեջ (թերևս, առավելապես երիտասարդության) նկատվում են միտումներ, թե բավական է

16 Михман, *Историография катастрофы*, 248.

17 “Moral and Spiritual Resisitance,” <https://www.holocaust.com.au/resources/moral-and-spiritual-resistance/>, դիտվել է 10.02.2019; “Spiritual Resistance in the Ghettos,” <https://encyclopedia.ushmm.org/content/en/article/spiritual-resistance-in-the-ghettos>, դիտվել է 10.02.2019; Հոգևոր դիմադրության մասին մանրամասն տե՛ս *Spiritual Resistance: Art from Concentration Camps, 1940–1945*, ed. Miriam Novitch (New York: Union of American Hebrew Congregations, 1981); Rachile Kostanian, *Spiritual Resistance in the Vilna Ghetto* (Vilnius: Vilna Gaon Jewish State Museum, 2002); Joseph Rudavsky, *To Live With Hope, To Die With Dignity: Spiritual Resistance in the Ghettos and Camps* (Northvale, NJ: Jason Aronson, 1997):

18 Մարության, «Հայոց ցեղասպանության», 31:

19 1965 թ. հայ ժողովուրդը Խորհրդային Հայաստանում և համայն Սփյուռքում համընդհանուր ոգեկոչեց Հայոց ցեղասպանության զոհերին և նշեց նրանց հիշատակի օրը: Տե՛ս “50th Anniversary of the Armenian Genocide 1965 USA,” filmed 17 February 2017 at YouTube, Eboni Coursey, video, 16:20, <https://www.youtube.com/watch?v=laLB9yb3B64&fbclid=IwAR3x10Scr9v4EW7rWzKCrFi2Vh3DW8aCuyH1YrO3lrVfFT7sODfQY2xEoTw>, դիտվել է 05.11.2018; “Armenian Genocide 50th anniversary UN debate, 1965,” filmed 31 October 2014, at YouTube, The Genocide Education Project, video, 18:12, https://www.youtube.com/watch?v=h02U7pMOfg&fbclid=IwAR2t2NC9I54jV1kAqwa_cqlfbNq9X980JijnXnKUCIulCxCHNzi05ww2lec, դիտվել է 05.11.2018; Maïke Lehmann, “Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia,” *Slavic Review* 74, no. 1 (2015): 10-31; Ավագ Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և երկրորդ հանրապետությունը* (Երևան, Երասմուս, 2015):

20 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը: Հայրոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, Գիտություն, 2009):

խոսել ցեղասպանության մասին, դա մեզ պետք չէ, այն որոշակի ձևախեղումներ է առաջացնում մանուկների և պարանիների սերունդների հոգեբանության մեջ, նպաստում է օտարապաշտության ծավալների մեծացմանը և այլն, և այլն»²¹: Ըստ հեղինակի՝ նման մոտեցման ձևավորման գործոններից մեկն այն է, որ հաճախ հասարակության որոշակի խմբերում ընկալվում է իբրև թե՛ «հայերը մոթթվել են ոչխարների նման», գրեթե առանց դիմադրության²²:

Իրականում ո՛չ հայ, ո՛չ էլ հրեա դիմադրողներն իրենց չէին զգում անօգնական զոհեր: Ճիշտ հակառակը, նրանք նախընտրում էին պայքարել զենքը ձեռքին և արժանապատվորեն մահանալ: Համաձայնելով Յ. Բաուերի տեսակետի հետ՝ պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության համատեքստում ևս զինված ինքնապաշտպանությունը կարծես ուղղված լիներ հենց այդ ընկալման դեմ: Այդ մասին է վկայում մասնավորապես այն հանգամանքը, որ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը»²³ վեպի հերոսներից մեկը՝ Մուսա լեռան ինքնապաշտպանության առաջնորդներից քահանա Արամ Թոմասյանը, մերժում է մահանալ «անպաշտպան ոչխարի» նման՝ որոշելով կենաց-մահու պայքար մղել. «Ես գիտեմ, թե ինչպես պետք է մեռնեմ: Ոչ իբրև անպաշտպան ոչխար, ո՛չ Տեր Զորի ճանապարհին, ո՛չ քարավանային ճամբարների աղյուղության մեջ, ո՛չ քաղցից, ո՛չ էլ գարշահոտ համաճարակից: Ոչ, ես կմեռնեմ իմ փան շեմին, զենքը ձեռքիս...»²⁴:

Իրական փաստերի վրա գրված ստեղծագործությունը դարձավ խորհրդանշական սիոնիստական երիտասարդական շարժման համար թե՛ Պաղեստինում, թե՛ Եվրոպայում, հատկապես գետտոներում²⁵: Հոլոքոստի պատմագիրները համարում են, որ 1930-ական թթ. այս ընկալումն այնքան տարածված էր, որ երբայերեն թարգմանելիս հեղինակն «անպաշտպան ոչխար» արտահայտությունը թարգմանել է որպես «ոչ որպես մոթթվելու ոչխար»²⁶: Հրեա պատմաբան Յաիր Օրոնը գրում է, որ հրեական ընդհատակի անդամների համար Մուսա լեռան պաշտպանության պատմությունն ասես առակի, նաև մոդելի նշանակություն ուներ, ոգեշնչման աղբյուր էր: Նրանք հավասարության նշան էին դնում իրենց և հայերի ճակատագրի միջև: Երկու դեպքում էլ հանցագործի նպատակը մարդկանց իրենց արմատներից կտրելն ու տեղահան անելն էր, ամբողջական համայնքների ֆիզիկական բնացնումը, և երկու դեպքում էլ դիմադրությունը մարմնավորում էր կա՛մ պատվաբեր մահը, կա՛մ փրկության հնարավորությունը²⁷:

21 Մարության, «Հայոց ցեղասպանության», 30:

22 Նույն տեղում, 30-31:

23 Ֆրանց Վերֆել, *Մուսա լեռան քառասուն օրը* (Երևան, «Լույս», 1988):

24 Նույն տեղում, 223-224:

25 Մանրամասն տե՛ս Yair Auron, *The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide* (New Brunswick (USA) and London (UK): Transaction Publishers, 2000), 293-311: Հմմտ. Մարության, «Հայոց ցեղասպանության», 31-35:

26 Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” 158.

27 Yair Auron, *The Banality of Indifference*, 309.

Դրա մեկ այլ օրինակ է, այն, որ 1915 թ. Կիլիկիայում (համաձայն աղբյուրի՝ հավանաբար Ջեյթունում) հայերի կողմից ինքնապաշտպանության դիմելու մասին ժամանակի մամուլը գրում է. «Կորորածն սկսվել է և Կիլիկիայի շրջանում: Սուրհանդակները կարողացել են հասնիլ Վան: Նրանք էլ պարզել են սպարամբութեան դրոշակը: Այս անգամ չեն ուզում ոչխարի պէս մորթվել (ընդգծումը – Հ.Գ.): Եւ իրավացի է այդ վճիռը: Միեւնոյնն է, պիտի մեռնին, գո՛նէ կռուելով մեռնին. դա պատիւ է բերում նրանց»²⁸: 1915 թ. մայիսին՝ ռուսական բանակի և հայ կամավորական խմբերի կողմից Վանի գրավումից հետո տեղի ունեցած ճաշկերույթի ժամանակ, ինքնապաշտպանության դեկավար Արամ Մանուկյանը, դիմելով ռուս զորավարին [Ա. Կիկոյան], ասում է. «Երբ ամիս մը առաջ սպարամբութիւն հռչակեցինք, յոյս չունէինք ռուսերու գալուն: Մեր կացութիւնը անել էր. պէտք էր կամ անձնապարտ լինելով թոյլ տայինք որ մեզ մորթեն ոչխարներու նման (ընդգծումը – Հ.Գ.), կամ մեռնէինք, «Թիթանիք» ի նազախումբին պէս՝ երաժշտութեան հանդիսատար հնչիւններով: Մենք նախընտրեցինք վերջինը»²⁹: Վերջինիս հակառակ բնեռը «ոչխարի նման մորթվելն էր», նահապարկվելը/նարպիրոսվելը, քավության նոխազ դառնալը³⁰:

Առհասարակ զինված դիմադրությունը ևս կարող է դիտարկվել որպես բարոյական դիմադրության դրսևորում, քանի որ ինքնապաշտպանության դիմողների կողմից նման որոշման կայացումն ունի խոր բարոյականություն, ինչպիսին է, օրինակ, պատվաբեր կամ գիտակցված մահվան գաղափարը³¹: Թերևս հենց սրանով է պայմանավորված, որ Հոլոքոստի պատմագիրները զինված դիմադրությունը համարում են «դիմադրության»՝ ավելի լայն ընկալման մի դրսևորում: Ելնելով այս տրամաբանությունից՝ Յ. Բաուերը *դիմադրությունը* սահմանում է հետևյալ կերպ. «Հոլոքոստի ժամանակ հրեաների դիմադրությունը եւ կասեմանների որպէս ցանկացած խմբային գործողություն, որը գիտակցաբար նախաձեռնվել է գերմանացիների և նրանց դաշնակիցների կողմից հրեաների դեմ ուղղված հայտնի կամ ենթադրյալ օրենքների, գործողությունների կամ մտադրությունների դեմ»³²:

28 «Ապստամբությունը Կիլիկիոյ մէջ», *Արև* (Ադեքսանդրիա), 21 յունիս, № 19, 1915, 3:

29 «Վանի մէջ», Հայաստան (Սօֆիա), 6 յունիս, № 25, 1915, 1:

30 «Ոչխարի նման մորթվել, նահատակվել/մարտիրոսվել, քավության նոխազ դառնալ» և նմանօրինակ ձևակերպումներ հաճախ հանդիպում են ինչպես Հայոց ջեղասպանությունը վերապրողների հուշագրություններում, բանավոր պատմություններում, այնպես էլ ժամանակի մամուլում: Օրինակ, «Թիֆլիսէ Ճէյմս Պրայսի հեռագրուած է թէ Սըվազցի 160.000 բնակչութենէ միայն 100.000 հոգի մնացած են. անոնք ալ ծերերն և անկարներն են միայն: Հեռագրողը ականատես մըն է, որ յաջողած է Թիֆլիս անցնիլ: Կը պատմէ թէ շատեր ոչխարի նման մորթուեցան և հազարատրներ գետերու մէջ նետուեցան»: Տե՛ս «Սվազի կտորածը», *Ազգ* (Պոսթոն), 31 յունուար, № 25, 1916, 1:

31 Գիտակցված մահվան գաղափարը լավագույնս արտահայտվում է հետևյալ բանաձևում՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահություն է» («Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»): Տե՛ս Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին Դաթի երիցու Մամիկոնի հայցեալ», Երկրորդ յեղանակ, 2:

32 Yehuda Bauer, *The Jewish Emergence from Powerlessness* (Toronto, Buffalo: University of Toronto Press, 1979), 27.

Փաստորեն Հոլոքոստի պատմագիրները ցանկացած գործողություն՝ ուղղված ֆիզիկական գոյության ու «մարդկային դիմագծի» պահպանմանը, ցանկացած գործողություն, որն ուղղված էր ընդդեմ ոչնչացման քաղաքականության կամ «ոչնչացման տրամաբանության», նույնիսկ մտադրությունների, ցանկացած գործողություն, որը խոչընդոտ կհանդիսանար ոճրագործության վերջնական նպատակին հասնելու ճանապարհին, համարում են *դիմադրություն*։

Ոչ զինված դիմադրությունը Հայոց ցեղասպանության ժամանակ

1948 թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի կետերից մեկի համաձայն՝ որևէ խմբի կյանքի համար միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ, ցեղասպանություն է³³։

Հայոց ցեղասպանության ժամանակ կյանքի համար անբարենպաստ պայմանների ստեղծման գործիքներից մեկը հարյուրավոր և հազարավոր մարդկանց սովամահության դատապարտելն էր ինչպես բռնագաղթի ճանապարհին, այնպես էլ համակենտրոնացման ճամբարներում։ Սովամահությունը դիտարկելով որպես ցեղասպանության իրագործման քաղաքականություն՝ Ջորջ Շիրինյանը մատնանշում է նման քաղաքականության շարժառիթները. «Վերջապես մենք ուսումնասիրեցինք թուրքերի կողմից սովամահությունը՝ որպես ցեղասպանության գործիք կիրառելու շարժառիթները՝ բացահայտելով, որ այն մասամբ արդարացնում է իրենց այն պատճառաբանությունը, որ հայերը բնական մահով են մահացել, բայց և պատժելու դանդաղ, հոգեվարքային մահով՝ վրեժխնդրության և հայերի նկարամամբ փրկապետություն հաստատելու համար, քանի որ նրանք հրաժարվեցին օսմանյան սոցիալական և քաղաքական համակարգում մնալ սրտրադաս դիրքում»³⁴։

Ստորև ներկայացվում է, թե հայերը ինչ միջոցների են դիմել բռնագաղթի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում՝ սնունդ ձեռք բերելու համար՝ անդրադառնալով հատկապես երեխաների փորձառություններին։ Մսնդի ձեռքբերումը և ֆիզիկական գոյության պահպանումը դիմադրություն էին Հայոց ցեղասպանությանը և խոչընդոտ՝ ոճրագործների վերջնական նպատակին հասնելու համար։

Հայոց ցեղասպանության ժամանակ երեխաներն անցնում էին բազմաթիվ փորձությունների միջով՝ հաճախ նաև միայնակ թափառելով մի բնակավայրից մյուսը, անցնելով մուսուլմանական ընտանիքներով, տարբեր «տերերի ձեռքի տակով», ճարակու-

33 *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted by the General Assembly of the United Nations on 9 December 1948*, 280.

Տե՛ս <https://treaties.un.org/doc/publication/unts/volume%2078/volume-78-i-1021-english.pdf>:

34 George N. Shirinian, “Starvation and Its Political Use in the Armenian Genocide,” *Genocide Studies International* 11, no. 1 (2017): 29-30.

թյուն և խորամանկություն դրսևորելով՝ գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար պայքար մղում՝ ողջ մնալու համար:

Հայոց ցեղասպանությունը վերապրողների հուշագրությունները, ինչպես նաև բանահավաքների գրառած բանավոր պատմությունները, որպես կանոն, սկսվում են խաղաղ կյանքի մասին նկարագրություններով: Ուշագրավ է, որ գաղթի ճանապարհի մասին պատմելիս վերապրողները հաճախ հղում են կատարում «երջանիկ մանկությանը»՝ որպես մի ժամանակահատվածի, որը «մնացել էր ետևում» կամ ավարտված էր: Երեխաները, կորցնելով երջանիկ մանկությունը, կանգնել էին նոր մարտահրավերների առաջ: Ակթորայի թուրքական որբանոցի հնգամյա սան Գառնիկ Բանյանն իր հայրենի օջախը հիշատակում է որպես աղոթատեղի, իսկ այգին՝ որպես դրախտավայր. «Մեր տունը աղօթքի տաճար էր, տարտամ չորս եղանակներուն էլ աղօթքի մղմունջներ կը լսուէին»³⁵: Բռնելով գաղթի ճանապարհը՝ հասկացել էր, որ աշխարհն ավելի ընդարձակ է. «Կը հեռանայինք, բայց յանկարծ, մտքով կը դառնայի մեր քաղաքը, մեր տունը, մեր տան տարուկ շունչը, մեր տան թարմ հացը, մեր պարտեզի համով պտուղները, մեր սաքուին վրայ շուք ընող ծառերը, իրենց մէջէն սահող-անցնող զով հոսանքը օդի... Անոնք ամենքը մնացեր էին մեր երկեր...»³⁶:

Հետևում թողնելով երջանիկ մանկությունը՝ երեխաները կարծես ժամանակից շուտ հասունանում էին՝ երբեմն ստանձնելով նաև «տան գլխավորի» դերը: Նրանք ընդգրկվում էին որոշումներ կայացնելու և ապրուստի միջոցներ հայթայթելու պարտականությունների մեջ, երբեմն էլ միայնակ հոգ տանում ընտանիքի անդամների մասին: Ընդ որում նրանք իրենց վրա էին վերցնում այս գործառնությունները բռնագաղթի հենց սկզբից: Վերապրողներն իրենք բացատրում են սա նրանով, որ երեխաներից ամենամեծն էին կամ եթե նույնիսկ երեխաներից ամենամեծը չէին, այնուամենայնիվ իրենք իրենց ընկալում էին արդեն «հասուն մարդ»: 1902 թ. Կեսարիայում ծնված Նիկոլաս Բերբերյանը պատմում է. «Նրանք սասցին, որ յոթ օրից պեղք է դուրս գանք [քնակավայրից]: Հերևաքար մենք մեր իրերը դրեցինք կտրքի վրա և ամբողջ ընտանիքով դուրս եկանք: Հայրս հեռացել էր, ուսրի ընտանիքի գլխավորը ես էի, ես ամենամեծն էի»³⁷:

Հայ երեխաները ոչ միայն ստանձնում էին աքսորի նախապատրաստական աշխատանքները, այլև արդեն իսկ բռնագաղթի ճանապարհին՝ մեծահասակներին մխիթարելու և հուսադրելու գործը: Վերապրող Աշխեն Պողիկյանը³⁸ պատմում է 1915 թ. աշնանը Տիգրանակերտում իրենց քարավանի հետ տեղի ունեցածի մասին. «Հաջորդ օրը Լևոնիկը մեռավ: Ես մնացի մենակ մայրիկիս հետ: Արդեն ութ տարեկան էի և մխիթարում ու հանգստացնում էի մայրիկիս»³⁹:

35 Գառնիկ Բանյան, *Յուշեր մանկության և որբության* (Ալթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992), 17:

36 Նույն տեղում, 84:

37 Nicholas Berberyan, Armenian Assembly Oral History Project, <https://umdearborn.edu/casl/centers-institutes/center-armenian-research/armenian-assembly-oral-history-project>, դիտվել է 08.08.2016:

38 Ծնվել է 1908 թ. Էրզրումում: Հուշագրությունը գրի է առնվել 1978 թ.:

39 Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. սկանալիտ վերապրողների վկայություններ* (Երևան, «Գիտություն», 2011), 226:

1907 թ. Մարաշում ծնված Սիրանուշ Բոյաջյանը (օրիորդական ազգանունը՝ Ղազարյան) զարմանքով է հիշում, թե ինչպես է կարողացել մոր մահից հետո յոթ տարեկան հասակում հոգ տանել ընտանիքի, այդ թվում՝ նորածին երեխայի մասին, վարել ամբողջ կենցաղը: Մարաշից դուրս եկած քարավանի հետ հասնելով Հոմս՝ այնտեղից տեղափոխվել են Մարդին և բնակություն հաստատել: Նա մանրամասն նկարագրում է այն կենցաղային ծանրաբեռնվածությունը, որը ստանձնել է մոր մահվանից հետո. «Ես ամենամեծն էի: ...Հեղոր մենք հողատերերից մայրիկիս և եկանք Կոնստանդնուպոլիս... [նորածին – Հ.Գ.] երեխա կար, մենք չգիտեինք ինչ անել: Ոչ որ չկար, ումից կարելի լիներ կայսրիսը, հեղորաբար ես սրիսկված էի մեկ ամիս հոգ տանել այդ երեխայի մասին: ... Ինչպե՞ս է Աստված ինձ ուժ տվել անելու այդ ամենը»⁴⁰:

Վերապրողները, խոսելով իրենց տարիքին անհարիր վարքի, ցուցաբերած խորամանկության ու ճկունության մասին, նշում են, որ սովը, մահը և հարազատների սպանությանն ականատես լինելը թմրեցրել էին իրենց զգացողությունները, իրենք այլևս վախ չէին զգում և գիտակցում էին, որ այլընտրանքը մահն է: Վերապրողներից մեկի՝ տասնմեկամյա Համբարձում Բերբերյանի նկարագրության համաձայն՝ իրենք դարձել էին «դաժան» և «անզգա», քանի որ գիտակցում էին, որ հաջորդ գոհը կարող են իրենք լինել⁴¹:

Մանդի ձեռքերումը՝ որպես կենաց-մահու պայքար

Ուշագրավ է այն հանգամանքը, որ գաղթականության ճանապարհին երեխաների վարքը հաճախ հակասական էր. որքան էլ հաշտվել էին մահվան հետ, նույնքան և ձգտում էին այն ամենին, ինչը թույլ կտար պահպանել գոյությունը: Իննամյա Հովակիմ Դիշդիշյանը⁴² պատմում է. «...մաս առ մաս սպառելով մեր ունեցած ջրի պաշարը, նախորդ օրվա օրինակով նորից կանգնել էինք մահվանը շար մոտիկ, և պեղք է ասեմ, որ արդեն հաշտվել էինք նրա հետ... Գիշերով ինչքան առաջանում էինք, նույնքան էլ նոսրանում էին մեր շարքերը, յուրաքանչյուրն սպրում էր միայն իր ցավերով, ճանապարհը ծածկվում էր մեր բախտակիցների դիակներով, բայց ես ու քույրս լուսնի լույսով և նրա զորությանը շարունակում էինք դեպի աննկարագրելի փանջալի քարավանի իջևանը, այսինքն՝ մեր երազած ջուրը...»⁴³:

1900 թ. Բիթլիսում ծնված Թագուհի Աստոնյանը, խոսելով սնվելու եղանակների մասին, այն ներկայացնում է որպես կյանքի ու մահվան միջև տարվող պայքար. «Հորաքույրս սարկած կովին արյունը թենեքեի մը մեջ եփեց, մենք կերանք: Յա՛ պիպի մեռնինք, յա՛ պիպի սպրինք: Ձիերուն քալած փեղը չիշ, անձրև լցված էր, աղ սլ ջրորի պես խմեցինք, ի՛նչ ընենք՝ ծարավ ենք»⁴⁴:

40 Siranoush Boyajian, Armenian Assembly Oral History Project.

41 Hamparsoum Berberian, նույն տեղում:

42 Ծնվել է 1906 թ. Զիլե քաղաքում: Հուշագրությունը գրի է առնվել Հայրենական մեծ պատերազմից հետո:

43 Հովակիմ Դիշդիշյան, *Դեր-Չորի անսպասում: Հիշողություններ* (Երևան, «Գիտություն», 2006), 123-127:

44 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 104:

Վայրի խոտերով սնվելը

Հայոց ցեղասպանությունը վերապրած երեխաները գաղթականության ճանապարհը նկարագրում են որպես անվերջանալի քայլերթ, որը վերահսկվում էր զինված ոստիկանների կողմից: Չնայած այն հանգամանքին, որ նրանցից շատերն ականատես են եղել իրենց հարազատների ու հայրենակիցների սպանությանը, այնուամենայնիվ շատ փոքրահասակները հաճախ գաղթի ճանապարհը նույնականացնում են քաղցի զգացողության հետ՝ առաջին հերթին մեկնաբանելով որպես ջրի և սննդի բացակայություն: 1912 թ. Թոմարգայի մոտակա գյուղերից մեկում ծնված Աբրահամ Աղբաշյանը վերհիշում է, որ գաղթի ճանապարհին, բացի սննդից, իրենց ոչինչ չէր անհանգստացնում, նույնիսկ զինված ոստիկանները: Քանի որ իրենց ամռանն են գաղթեցրել, վերապրողի վկայությամբ իրենք սնվել են վայրի խատուտիկներով և անձրևաջրով. «Մեկ փարի, փարի ու կես մենք ուրեղու ոչինչ չունեինք բացի վայրի խատուտիկներից»⁴⁵: Աբրահամ Աղբաշյանը պատմում է, որ որտեղ կանաչ խոտ էին տեսնում, «կովերի պես արածում էին» և «շների պես խմում անձրևաջուրը»⁴⁶:

Միվրի Հիսարից Նվարդ Այտընյանը, ով Հայոց ցեղասպանության ժամանակ մանկահասակ է եղել, վկայում է. «Անշարուած կառախումբին ճամբորդներս սպասեցինք Գոնիսա արեն մը ես եւ տաւ մեր գոյքերը էշերու վրայ բեռոցոցս ճամբայ ինկանք հերիտորն դէպի Մերսին: ...Երբ Մերսին հասանք, սկսանք դաշտերէն խորեր հաւաքել ու ուրել: Բայց եւ այնպէս ասով ալ գոհացած էինք՝ եթէ մարախները խոռոներս չյարձակէին ու չընսջնջէին խորերը: Երկու երեք շաբաթի չափ մնացինք Մերսին: Վերջապէս այլազան ու աննկարագրելի փառասպանքներէ ետքը հասանք Բագգա...»⁴⁷:

Մտունդ ձեռք բերելու խնդիրն անընդհատ առկա էր ոչ միայն բռնագաղթի ճանապարհներին, որտեղ մարդիկ սնվում էին վայրի խոտերով, ինչն էլ հաճախ պատճառ էր դառնում թունավորումների և մահվան⁴⁸: Խոտակերությամբ էին ապրում նաև այն հայ գաղթականները, որոնք ապաստանել էին լեռներում: «Առավոտ» թերթի 1919 թ. մայիսի 12-ի համարում կյուրթ է տպագրվել յոթ որբերի մասին, որոնք հայտնաբերվել են անգլիացի զինվորների կողմից և հանձնվել Ադանայից եկող գաղթականներին՝ Կ.Պոլիս ուղարկվելու համար: Նրանք հանձնվել են Հայդար փաշայի որբանոց: Տարիներով բնակվելով լեռներում՝ փոքրիկները կորցրել են խոսելու ունակությունը և միայն խաչակնքելով են կարողացել հասկացնել, որ իրենք հայ են: Թերթը գրում է. «Երբ ուրիշ կայան մը կը հանդիպին, իրենց հաց կը փրուի, հացը խափու կը մերժեն, վար կը ցարկեն, խորեր կը ժողունեն ու վակոնին մէջը կսկսին ուրել: Տարիներով խորանարակութեան վարժութիւնը հացը մոռցնել փրուած է»⁴⁹:

45 Abraham Aghbashian, Armenian Assembly Oral History Project.

46 Նույն տեղում:

47 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Ջոր* (Փարիզ, Պ. Էլէկեան, 1955), 62:

48 Հայկանուշ Մելքոնեան, *Կեսնք եւ մահ*: Մատենաշար Ապրիլեան Եղեռնի, թիւ 9 (Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկոյ, 1960), 26:

49 «Լեռը գտնուած եօթը որբեր», *Առաօտ* (Կ.Պոլիս), 12 մայիս, № 3, 1919:

Կեսարացի հոգևորական Տեր Վահան քահանայն հետևյալն է պատմում վայրի խոտերով սնվելու և ողջ մնալու մասին. «Մեր գիւղին ամբողջ այր մարդիկը իրօթիհարի ոճրագործ հետևորդներուն կողմէ՛ ձորերու մէջ կացինահար եղած են, կիներէն մեծ մասը գելեր թափուած են կամ բռնաբարուած ու իսլամացուած առ այժմ 570 անձերէն կը մնան միայն 25 կիներ՝ որոնք լեռը սպասարանելով և խոյր ուրելով ճողոպրած են ահռելի եղեռնէն»⁵⁰:

Հնգամյա Անդրեաս Գարամանյանը⁵¹ գաղթի ճանապարհին քաղցի, ծարավի և սնունդ հայթայթելու մասին պատմում է. «Արեն արեն կարաւանը կանգ կ'առնէր հանգչելու, անձրեւներէն գոյացած փոսերու ջուրերու վրայ կը վազէր, փոշորը անցնելու զիրար արմկահարելով և վայրի բոյսեր կը փնտրէր ուրելու համար...»⁵²:

Ուրֆայի որբանոցի սան Բարեկէն Ինճեարապայանը պատմում է. «Յաջորդ օր, երկուշաբթի, պարերսզմը կը վերսկսի: Ասօթութիւն ալ իր հեւր: Թեթեա սպորի հեւր շար քիչ հացեր էին սննդեղէնի բաժինը: Ստիպուեցանք խոյր ուրել: Որբանոցէն, ծակէ մը դուրս կը փախչէինք խոյր հաւաքելու և ճաշակելու զայն: Այդ կողմերը խոյրը նոյնիսկ դժուարութեամբ կը ճարէինք: Երբեմն գիշերները որբանոցէն կը փախչէինք մէկ քանի որբեր, և հեռու տեղ երթալով բաւական խոյր կը հայթայթէինք: Այդպիսով ամէն օր խոյր կուրէինք...»⁵³:

Մրգերի, հատապտուղների և ընկուզեղենի հավաքչություն

Սնունդ հայթայթելու մյուս եղանակը մրգերի, հատապտուղների ու ընկուզների հավաքչությունն էր: Յոթնամյա Արշալույս Բոյաջյանը պատմում է, որ դուրս գալով Սեբաստիայից՝ նույնիսկ չի հիշում, թե քանի ամիս են քայլել մինչև Այնթափ հասնելը՝ առանց գուլպաների ու կոշիկների: Նա վերհիշում է, որ փոքր գյուղերի մոտով անցնելիս տեղի բնակչությունը սնունդ է վաճառել քարավանին, սակայն Այնթափ հասնելուն պես սնվել են այն ամենով, ինչ կարողացել են հավաքել քաղաքից դուրս գտնվող այգիներից⁵⁴: Այս պրակտիկան շատ ակտիվ կիրառում էին այն երեխաները, ովքեր փախել էին քրդական, թուրքական կամ արաբական ընտանիքներից ու միայնակ վերադառնում էին իրենց բնակավայրերը կամ բռնում Հալեպի ճանապարհը: Համբարձում Բերբերյանը, եղբոր հետ փախչելով գնացքից, ոտքով ճանապարհ է ընկնում դեպի ծննդավայր՝ Ադանա, որտեղ գտնվում էր նրանց զինվորական եղբայրը: Վերապրողը ճանապարհին սնվելու մասին պատմում է. «Մենք փոքր էինք: Միայն մի փոքր գնալուց հետո, այնտեղ ինչ-որ բան կար, այգի, մենք գլխանք, ինչ էր այդ, լոլիկներ, այդ այգում լոլիկներ էին, լոլիկներ: ...Մենք կերանք մեկ կամ երկուսը»⁵⁵:

50 «570 անձերէ 25 կիներ միայն մնացեր են», *Արիամարտ* (Կ.Պոլիս), 11 դեկտեմբեր, № 17 (1832), 1918:

51 Ծնվել է Կարս Բազարում 1911 թ.:

52 Անդրեաս (Տարոս) Գարամանեան, *Տարագրեալի մը յուշերը*: Երկրորդ հատոր (Պուլնոս Այրէս-Արժանթին, 1972), 10:

53 Բարեկէն Ինճեարապեան, *Մեծ եղեռնի շրջանին հայ որբի մը ողբասկանը* (Փարիզ, Turabian Press, 1951), 230-231:

54 Arshalous Boyajian, Armenian Assembly Oral History Project.

55 Hamparsoum Berberian, նույն տեղում:

Մուրացկանություն

Մտնող ձեռք բերելու մյուս ձևը, որին դիմում էին հայ գաղթականները ոչ միայն արքունի ճանապարհին գյուղերի ու գյուղաքաղաքների միջով անցնելիս, այլև արաբական բնակավայրերում, մուրացկանությունն էր, որը շատ տարածված էր նաև երեխաների շրջանում:

Խարբերդում ԱՄԵ-ի դեսպան Լեալի Դեկիսը գրում է. «Տարբեր ժամանակ բազմաթիվ երեխաներ էլ էի գրել հյուսպարտաբանում պատրաստել՝ չհաշված նրանց, ովքեր մայրերի հետ էին ինձ մոտ սպրում: Առաջինը, ում սպասարան փակեցի՝ Ներսես Տեր-Կարապետյանն էր, ինը տարեկան մի տղա... Հեղտ հորը, մորը, բոլոր քույրերին ու եղբայրներին կոտորել էին, ինքը մնացել, շուկայի հրապարակում մուրացկանություն էր անում»⁵⁶:

Քեսաբցի Զարուհի Այանյանը, ով Հայոց ցեղասպանության ժամանակ վեց տարեկան էր, պատմում է, որ տեղահանվելիս իրենց հետ ունեցել են կով, որը ճանապարհին մայրը կթել է: Գաղթել են Բագուր գյուղ, որտեղ վաճառել են կովը, ապա հասել են Համա, Հոմա, այնտեղից՝ Դամասկոսի մոտ գտնվող Ներիկ բնակավայրը: Այստեղ մնալով մեկ տարի՝ մոր հետ մուրացկանություն են արել՝ ապրելու համար⁵⁷: Արդեն հիշատակված Աբրահամ Աղբաշյանը, ով պատմում էր խատուտիկներով սնվելու մասին, շարունակում է. «Ես կովի պես մեծ սրամոքս ունեի, որովհետև միայն վայրի խաբուրտիկներով էինք սնվում: Ժամանակ առ ժամանակ, ես հիշում եմ, թե ինչպես էինք մայրիկիս հետ փնից փուն գնում՝ անունդ մուրալու»⁵⁸: Բալումում ծնված տասնամյա Գառնիկ Արփաջյանը Հալեպում մնում է երկու տարի՝ մինչև անգլիացիների մուտք գործելը: Այստեղ երկու որբ երեխաների հետ մուրացկանություն են արել՝ գոյատևելու համար. «Ես այդև չէի վախենում ոչնչից, ամենավաղը, որ նրանք կարող էին անել, ինձ սպանելն էր: Ես սա միշտ պահում էի իմ մորքում: Ես միշտ մորածում էի վաղը այլ օր է, մյուս օրը ուրիշ, այդպես ես չէի մորածում, այս այն էր, ինչ ես զգում էի: Ես քաղցած եմ, ես սովամահ եմ լինում, ես մորում եմ այստեղ և այստեղ, երկու շաբաթ ես մուրացի, մուրացի, ես ուրում էի խնձորի միջուկները, ես ուրում էի փանձի միջուկները, ես ուրում էի ձմերուկի կեղևները, ես ուրում էի սեխի կեղևները, ես ուրում էի ամեն անիծված բան, որ կարելի էր ուրել, դրանք ուրելու չէին, բայց ես սրիպված էի ուրել»⁵⁹:

1901 թ. Բալուի Հավալ գյուղում ծնված Սուրեն Փափազյանն իր ունեցած փորձառության մասին գրում է. «1917 թ. ձմեռը միս-մինակ Փերի հասայ: Մեկը չէի ճանչնար, շուկան, փողոցները դարձայ, տեսայ, որ իմ տարիքիս, ինձմե պզտիկ խլեակ մը հայ որբեր ամբողջ օրը կը մուրան, գիշերն ալ կատավարական ձիերու ախոռը կ'երթան, կը քնանան: Իրենց միացայ, փրփված անկիւն մը գրայ, ծուարեցայ: Ամէն մեկը ինչ որ մուրացած էր, հսնեց, սկսաւ ուրել: Ես ամբողջ օրը անօթի էի, անօթի ալ քնացայ»⁶⁰:

56 Լեալի Ա. Դեկիս, *Սպանդի նահանգը*, թարգմ.՝ Գրիգոր Զանիկյան (Երևան, Դավլ, 2001), 238:

57 Zarouhi Ayanian, Armenian Assembly Oral History Project.

58 Abraham Aghbashian, նույն տեղում:

59 Karnig Arpajian, նույն տեղում:

60 Սուրեն Փափազեան, *Վերապրողի մը ողիսականը* (Երևան, «Ամարաս», 2000), 113:

Հայկանուշ Մելքոնյանը պատմում է, թե ինչպես է Աղբրոնարում կառավարությունը սննդով ապահովել գաղթականներին, որպեսզի վերջիններս մուրացկանություն չանեն և հիվանդություն չտարածեն Այնթափում: Նա պատմում է. «Քոչրս և ես միտենոյն գիւղին բաժին ինկանք որ Աղբրոնար կը կոչուէր: Մեզ հեւր կին մը կար որ 5-6 տարեկան մանչ մ'ունէր, կինը քաղաք կ'երթար մուրալու որ կարենար պզգիկը ապրեցնել: Կառավարութիւնը օրական փոքրիկ հաց մը կու տար որպէս զի քաղաք մուրալու չերթայինք և հիւանդութիւն տարածէինք»⁶¹:

Ընտանեկան համերաշխությունն ու փոխօգնությունը

Կենցաղի կազմակերպման համատեքստում, մասնավորապես սննդի հայթայթման, ոչ զինված/բարոյական դիմադրություն կարելի է համարել նաև ընտանեկան համերաշխությունն ու փոխօգնությունը: Որոշ դեպքերում վերապորոզներն իրենք են այս երևույթը նկարագրում և մեկնաբանում որպես «ողջ մնալու ձև», որոշ դեպքերում մենք ենք այն գնահատում որպես այդպիսին: Հոլոքոստի համատեքստում թեմայի քննարկման ժամանակ կարևորվում է փոխօգնության դիմելու ռիսկայնությունը, այսինքն՝ առկա վտանգը և վերջինիս տեսակները. որքանո՞վ էին մարդիկ վտանգի տակ դնում իրենց կյանքը՝ ընտանիքի անդամներին կամ պարզապես ազգակիցներին օգնելու համար: Այս հարցադրումը հաճախ օգնում է պատասխանելու այն մտայնությանը, թե ինչու միմյանց օգնության չէին հասնում: Կենցաղում ցուցաբերված «փոխօգնությունը» դիտարկվում է որպես «կառուցողական վարք», ինչը և նպաստել է վերապրելուն⁶²:

Հայոց ցեղասպանությունը վերապրած բալուեցի Փառանձեմ Ալեքսանյանը պատմում է, որ մի թուրք իրեն վերցրել է գաղթի ճանապարհից՝ անջատելով իր ընտանիքի անդամներից: Հացաբուլկեղենի խանութի մոտով անցնելու ժամանակ իրեն հաց են տվել. «Երբ նա տվեց մի կտոր հաց, ես իմ եկած ճանապարհով եր վազեցի: Մարդը հեւրնեց ինձ՝ հասկանալով, որ ես ցանկանում եմ այդ հացը տալ մայրիկիս: Ես հասա, նրանց գցեցի հացը, եր դարձա և միացա այդ մարդուն»⁶³: Աբրահամ Աղբաշյանը հպարտությամբ է հիշում, թե ինչպես է, վտանգի ենթարկելով սեփական կյանքը, անձամբ հաց հասցրել հայ գաղթականներին, երբ իր մայրն աշխատում էր մի արաբական ընտանիքում⁶⁴:

Մի նպարավաճառի մոտից գողություն անելու և հայրենակիցներին օգնելու մասին Գառնիկ Արփաջյանը պատմում է. «Ես սկսեցի գողանալ, դա լավ չէ, բայց ես գողանում էի իմ ազգակիցներին օգնելու համար, նրանք քաղցած էին, ես ցանկանում էի օգնել իմ ժողովրդին: Ես տաս, տասնմեկ տարեկան եմ, բայց մտածում եմ իմ ազգության և կրոնի մասին, որը չէի ցանկանում փոխել...»⁶⁵:

61 Մելքոնեան, *Կեսնք եւ մահ*, 27-28:

62 Boaz Kahana, et. al., “The Victim as Helper-Prosocial Behavior during the Holocaust,” *Humboldt Journal of Social Relations* 13, no. 1/2 (1985-86): 361.

63 Parantzem Alexanian, Armenian Assembly Oral History Project.

64 Abraham Aghbashian, նույն տեղում:

65 Karnig Arpajian, նույն տեղում:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ հայ երեխաները գիտակցել են, որ վտանգի են ենթարկում սեփական կյանքը, բայց և այնպես դիմել են ռիսկի և օգնության հասել ազգակիցներին:

Այսպիսով, հողվածում անդրադարձ կատարվեց գիտակարգային կարևոր մի հարցադրման՝ ի՞նչ է ոչ զինված դիմադրությունը և վերջինիս ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Այս հենքի վրա, բազմահազար վկայություններից ընդամենը մի քանի բնութագրական օրինակների հիմամբ առաջ քաշվեց և հիմնավորվեց այն մտայնությունը, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների կողմից սննդի ձեռքբերման տարբեր եղանակները կարող են դիտարկվել որպես *ոչ զինված դիմադրության* դրսևորումներ:

Hasmik G. Grigoryan
PhD in History

WAYS OF FOOD PROCUREMENT DURING THE ARMENIAN GENOCIDE AS AN MANIFESTATION OF “UNARMED RESISTANCE”: CHILDREN’S EXPERIENCES

Summary

Key words: Armenian Genocide, Holocaust, children, unarmed resistance, food, memories, oral stories.

The aim of the article is to discuss whether the methods of food procurement can be considered as an manifestations of unarmed resistance during the Armenian Genocide. For this purpose, the article first presents the concept of an unarmed resistance in the context of the Holocaust.

Such scientific interest is motivated by the fact that despite a number of self-defense battles during the Armenian Genocide, including some with victorious outcome, as in Van, there is a common perception that Armenians were somewhat guilty, because “they have been slaughtered like sheep,” without resistance. For this reason article gives a scientific assessment of the concept of “resistance” by making its sub-categories separate subjects of research. Certainly, within the framework of one article it is impossible to touch upon all the aspects and forms of resistance, however, the article is an attempt to pose new questions in the field of the Armenian Genocide studies.

In the second part of the article, the ways of food procurement during the Armenian Genocide are grouped and observed in the context of the concept of unarmed resistance. Mainly the children’s experiences were discussed trying to find out which social groups have been involved in what kind of activities and to what extent. In the article, the methods of food procurement, part of the daily life of the Armenian Genocide, are discussed as a conscious and unconscious struggle against the policy of starvation during the Genocide. The article is based on published memoirs and oral testimonies of the Armenian Genocide

survivors. The source materials are indicating on the variety of food procurement ways. However, in the article, the most common ones – feeding on grass, gathering fruits, berries and nuts, begging – were presented, often interpreted by the survivors as a life-and-death struggle.

Асмик Г. Григорян
кандидат исторических наук

СПОСОБЫ НАХОЖДЕНИЯ ЕДЫ КАК “НЕ ВООРУЖЕННОЕ СОПРОТИВЛЕНИЕ” ПРИ ГЕНОЦИДЕ АРМЯН: ОПЫТЫ ДЕТЕЙ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост, дети, не вооруженное сопротивление, еда, воспоминания, устные рассказы.

В статье обсуждается возможность рассматривания методов приобретения еды во время Геноцида армян в качестве не вооруженного сопротивления. С этой целью в начале статьи затронуты некоторые научные вопросы, а также сформирована концепция не вооруженного сопротивления в контексте Холокоста.

Такой научный интерес обусловлен тем, что несмотря на тот факт, что во время Геноцида армян имело место вооруженное сопротивление: самооборонительные бои, в том числе и с победным исходом, как в Ване, однако бутует мнение, что армяне в какой-то мере сами виновны, так как “были зарезаны как бараны,” а именно без сопротивления. Исходя из этого, в статье дается научная оценка понятию “сопротивление,” превращая подкатегории последнего в отдельные предметы исследования. Несомненно, в рамках одной статьи невозможно коснуться всех аспектов проблемы и всех видов сопротивления, однако можно сформировать опыт постановки новых вопросов в сфере изучения Геноцида армян.

В статье сделана попытка объединить способы приобретения еды во время Геноцида армян и рассмотреть их в контексте концепции не вооруженного сопротивления. Особенно это относится к опыту детей, а также к вопросу о том, какие социальные группы были вовлечены в какие виды деятельности и в какой степени? Способы нахождения еды, составляющие повседневную часть Геноцида армян, в данной статье рассматриваются в качестве осознанной или не осознанной борьбы против политики обречения людей на голодную смерть. Научными источниками статьи являются изданные мемуары и устные рассказы людей, переживших Геноцид армян. Источники описывают различные способы достования еды. Но в статье приведены наиболее распространенные из них: употребление травы, сбор фруктов, ягод и орехов, выпрашивание – все это люди, пережившие геноцид, объясняют как борьбу за выживание.

REFERENCES

- Banean, Garnik. *Յուշեր մանկության և որբության* [Memories of Childhood and Orphanage]. Antelias-Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1992;
- Davis, Leslie. *Սպանդի նահանգը* [The Slaughterhouse Province], trans. Grigor Janikyan. Yerevan: Dall, 2001;
- Dishdshyan, Hovakim. *Դեր-Չորի անսպարում: Հիշողություններ* [In the Desert of Der-Zor: Memories]. Yerevan: Gitut'yun, 2006;
- Eghishe, Վասն Վարդանայ և Հայոց պարերազմին Դատի երիցու Մամիկոնի հայցեալ [History of Vardan and the Armenian War [written] at the Request of David Mamikonian], Erkrord yeghanak. Eruand Ter-Minasean, ed. Yerevan: Academy of Sciences of Arm. SSR, 1957;
- Garamanean, Andre'as (Tavros). *Տարագրեալի մը յուշերը* [The Memories of an Exiled], Erkrord hator. Buenos Aires, Argentina, 1972;
- Harut'yunyan, Avag. *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և երկրորդ հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic]. Yerevan: Noravanq, 2015;
- Haykaz, Aram. *Չորս տարի Քիւրդիստանի լեռներուն մէջ* [Four Years in the Mountains of Kurdistan]. Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1972;
- Inche'arapean, Babke'n. *Մեծ եղեռնի շրջանին հայ որբի մը ողիսականը* [The Odyssey of an Armenian Genocide Orphan]. Paris: Turabian Press, 1951;
- Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of the Armenian Genocide and the Jewish Holocaust Memory], *Patma-banasirakan handes* 2 (2011): 24-46;
- Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հատոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;
- Melqonean, Haykanush. *Կեսնը և մահ* [Life and Death], Matenashar Aprilean Egherni, t'iv 9. Antelias-Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1960;
- Michman, Dan. *Историография катастрофы. Еврейский взгляд: Концептуализация, терминология, подходы и фундаментальные вопросы* [Holocaust Historiography. A Jewish Perspective: Conceptualizations, Terminology, Approaches and Fundamental Issues], trans. M. Guba et all. Dnepropetrovsk: Tsentral'nyi Ukrainskii Fond istorii Kholokosta «Tkuma», 2005;
- P'ap'azyan, Suren. *Վերապրողի մը ողիսականը* [The Odyssey of a Survivor]. Yerevan: Amaras, 2000;
- Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն. սկսնապես վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors]. Yerevan: Gitut'yun, 2011;
- Werfel, Franz. *Մուսս լեռան քառասուն օրը* [Forty Days of Musa Dagh]. Yerevan: Luys, 1988.

Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զօր* [Survivors of a Catastrophe: Der-Zor], comp. by Levon Mesrop. Paris: P. E'le'kean, 1955;

Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանների [Holy Bible]. Yerevan: Bible League International, 2010;

«570 անձերէ 25 կիներ միայն մնացեր են» [Only 25 Women are Left out of 570], *Ariamart* (Constantinople), 11 December, no. 17 (1832), 1918;

«Ապստամբութիւնը Կիլիկիոյ մէջ» [Rebellion in Cilicia], *Arev* (Alexandria), 21 June, no. 19, 1915, 3;

«Լեռը գտնուած եօթը որբեր» [Seven Orphans Found on the Mountain], *Aravot* (Constantinople), 12 May, no. 3, 1919;

«Սվազի կոտորածը» [The Massacre of Sivas], *Azg* (Boston), 31 January, no. 25, 1916, 1;

«Վանի մէջ» [In Van], *Hayastan* (Sofia), 6 June, no. 25, 1915, 1.

ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ 1915-1924 ԹԹ.

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Հալեպ, որբեր, որբանոց, արհեստանոց, կրթություն, աջակցություն, փրկություն, Ահարոն Շիրաճյան, Ատուր Լևոնյան, հուշագրություններ:

Հոդվածում ներկայացվում է 1915 թ. հուլիսին Հալեպում հիմնադրված և մինչև 1924 թ. անընդմեջ գործունեություն ծավալած հայկական որբանոցի պատմությունը, որբերի փրկության հարցում կառույցի ունեցած դերը, վերլուծվում են որբերի թվական տվյալները, ներկայացվում որբանոցի կրթական, առողջապահական, ֆինանսական, արհեստագործական ոլորտի մանրամասները, խնամատար մարմինների ծավալած գործունեությունը, ինչպես նաև որբանոցի առջև ծառայած խնդիրներն ու դրանց լուծումները: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև խնդրո առարկա ժամանակահատվածում տարածաշրջանային քաղաքական իրադարձություններին, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել որբանոցային կյանքի վրա:

Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են որբանոցային կյանքի մանրամասները մինչև 1918 թ. Սիրիայի անկախացումը, այսուհետև՝ արաբական անկախության երկու տարիների ու արդեն 1920 թ. Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատման տարիների գործունեությունը: Վերլուծվում է կրթական ոլորտը, ներկայացվում են դասավանդման ծրագրերը, առողջապահական ոլորտը: Անդրադարձ է կատարվում որբանոցում իրականացվող հատուկ քաղաքականությանը, ըստ որի՝ երեխաներին արհեստ էին սովորեցնում, ինչը միտված էր հետագայում իրենց ապրուստի միջոցը սեփական ուժերով հայթայթելուն:

Հոդվածում ներկայացվում է նաև 1919 թ. փետրվարի արաբա-թուրքական ուժերի հարձակումը որբանոցի վրա և տնօրենության ձեռնարկած քայլերը՝ որբերի փախուստները կանխելու, ֆինանսական միջոցներ հայթայթելու և որբանոցը ապահով ու վստահելի ապաստան դարձնելու ուղղությամբ:

Հոդվածի արդյուրագիտական հիմքն են որբանոցի տեղեկագիրը, որբանոցի սաների ու աշխատակիցների հուշագրությունները, ինչպես նաև ժամանակի մամուլը:

Հալեպի հայկական որբանոցը՝ երիտթուրքական իշխանության տարիներին

Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն տվեց երիտթուրքական կառավարությանն իրականացնելու հայերի ցեղասպանության ծրագիրը: Օսմանյան կայսրության գրեթե բոլոր նահանգների հայ բնակչությունը ենթարկվեց տեղահանության ու զանգվածային կոտորածների: Երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրի վերջին հանգրվանը սիրիական անապատներն էին:

1915 թ. հունիսին Հալեպը դարձել էր խաչմերուկ, ուր վճռվում էր գաղթականների ճակատագիրը: Ցեղասպանության առաջին ամիսներին գաղթականների մի մասը տարագրվում է Հատրանի, Համայի, Հոմսի ուղղությամբ, շատերին հաջողվում է մնալ Դամասկոսում կամ անցնել Երուսաղեմ: Մեծ մասը, սակայն, Հալեպի հարավ-

արևելյան երկայնություն երկայնքով քշվում էին Դեր Զորի անապատներ: Ցեղասպանության ընթացքում հայ երեխաների վիճակը թերևս ամենաբարդն էր. նրանք ստիպված էին հաղթահարել գաղթի ճանապարհը, հարազատների կորստի ցավը, սովը և մշտապես կանգնած էին ձուլման վտանգի առջև:

Ցեղասպանության և դրան հաջորդող տարիներին բացվում են բազմաթիվ հայկական, միսիոներական որբանոցներ՝ հայ ժողովրդի դեռևս կենդանի բեկորները փրկելու համար: Նման որբանոցները քիչ չէին, բայց դրանց մեջ առանձնանում էր Հալեպի հայկական որբանոցը: Վերջինս այն հազվագյուտ որբանոցներից էր, որը հիմնվել էր հայկական կողմի նախաձեռնությամբ, ցեղասպանության բուն ընթացքի ժամանակ, և որն անընդմեջ գործել է մինչև 1924 թ.:

Հալեպի հայկական որբանոցն իր գործունեությունը սկսել է 1915 թ. հուլիս 31-ին Վերպատվելի Ահարոն Շիրաճյանի¹ ղեկավարությամբ: Սա այն ժամանակահատվածն էր, երբ Օսմանյան կայսրությունը հետևողականորեն իրականացնում էր հայերի բնաջնջման քաղաքականությունը: Որբանոցի հիմնադրման գործում մեծ էր բժշկապետ Ասատուր Ալթունյանի և նրա դստեր՝ Նորա Ալթունյանի դերը, ովքեր իրենց անձնական կապերն օգտագործելով՝ փորձել են որբերի կեցության և առողջության հարցերը լուծել: Հալեպ հասած որբերի վիճակը կարելի էր հետևյալ ձևով բնութագրել. «1915ին բռնագաղթի ամենասուկալի շրջանին էր, մահվան ճիրաններէն խլուած և հրաշքով ազատուած հայ որբը Հալեպի մէջ դարձեալ մեռնելու դատապարտուած էր»²: Հայ գաղթականների քարավանները Հալեպ էին հասնում հյուծված ու լքված վիճակում, քաղաքում ավելանում էր համաճարակից մահացողների թիվը, սանիտարահիգիենիկ վիճակն աղետաբեր էր տեղացիների և գաղթական հայերի համար: Այս իրավիճակում Հալեպի քաղաքային իշխանությունները կարգադրել էին որոշ աշխատակիցների աղբատար կառքերով շրջել քաղաքի փողոցներով և հավաքել նորածնից մինչև 8-10 տարեկան կիսամեռ երեխաների՝ այս կերպ փորձելով վերահսկել քաղաքի մաքրությունը³:

1 Ահարոն Շիրաճյանը ծնունդով Մարաշից էր: Ուսում էր ստացել Այնթափի «Կեդրոնական Թուրքիոյ քոլեջում», որից հետո հաճախել էր Մարաշի աստվածաբանական դպրոցը, 1912 թ. մեկնել էր Էդիսբուրգ՝ աստվածաբանական ուսումը շարունակելու համար: Նա ակնատես էր եղել համիդյան, երիտթուրքական, քեմալական ժամանակահատվածների հայաջինջ քաղաքականությանը: Ահարոն Շիրաճյանը Մարաշից արտաքսվելուց հետո հասել էր Հալեպ, որտեղ և հիմնել էր որբանոցը: Ավելի ուշ նա աջակցել է «Հայերի բարեկամներ» բրիտանական ընկերության նախաձեռնությամբ Հալեպում հիմնված «Աղջկանց տան», Հալեպի Կարմիր խաչի դարմանատան, Հայ ազգային ծերանոցանկելանոցի գործունեությանը, ինչպես նաև մասնակցել է 1932-1933 թթ. Թել Բրաք հայկական գյուղի հիմնադրման աշխատանքներին, շուրջ 700 ընտանիքների տեղավորել է Հալեպ քաղաքի Մեյդան թաղամասում: Տե՛ս Վեր. Յ. Փ. Ահարոնեան, «Վեր. Ա. Շիրաճեան՝ քաջ առաջնորդը», *Ջանասաէր* երկշաբաթաթերթ (Բեյրութ), Ի՛ւ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 401: Վեր. Տիգրան Խրլորեան, «Այնպես ինչպես կը ճանչնամ Վեր. Ահարոն Շիրաճեանը», *Ջանասաէր* (Բեյրութ), Ի՛ւ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 402-403:

2 Տիգրան Երեցեան, *Որբերու քոյնը 1915-1921* (Հալեպ, Անի, Ա. Էքմէքճեան, Սալիպէ-Հալեպ, 1934), 5-6:

3 Նույն տեղում, 6:

Ստեղծված իրավիճակում Նորա Ալթունյանը դիմում է իր շվեյցարացի բարեկամ, առևտրական, Հալեպում գործող հիվանդանոցի հիմնադիր Էմիլ Ջոլինկերին՝ որբահավաք գործը ստանձնելու և որբերին պատասպարելու նպատակով շինություն տրամադրելու համար: Շուտով Ջոլինկերը Հալեպի Ագապա թաղամասում երկու սենյականոց բնակարան է հատկացնում՝ հայ որբերին ապաստան տալու համար: Բժիշկ Ալթունյանն էլ իր կապերի միջոցով աշխատում էր կազմակերպել ֆինանսական և առողջապահական հարցերը: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ որբանոց հիմնելու նրանց նախաձեռնությունն աջակցություն էր ստանում նաև ամերիկյան, գերմանական, ինչպես նաև գերմանաշվեյցարական միսիոներական կազմակերպությունների կողմից⁴, Հալեպի ամերիկյան, գերմանական հյուպատոսարանների կողմից, ինչպես նաև անգլիական բանակի, ամերիկացիների, շվեյցարացի անհատ բարերարների միջոցով: Բացի նշված անձանցից՝ որբանոցի ֆինանսավորմամբ, երբեմն էլ միջամտությամբ, որի շնորհիվ որբանոցը շարունակել է գործել մինչև 1924 թ., իրենց ներդրումն են ունեցել հայ և օտար անհատներ՝ գեներալ-մայոր Մեքենդրուն, գնդապետ Բրեյնը, գնդապետ Կլուսթարը, Վերապատվելի Ջենթել-Քաքերը, Էմիր Ֆեյսալը, Կ.Պոլսի «Bible House»-ը⁵: Սկզբնական ժամանակահատվածում մատակարարման հարցերը լուծելու համար ստեղծվել էր նաև մոտ 80 հոգանոց Տիկնանց խնամատար մարմինը, որի անդամներն ամսական կես ոսկի են վճարել, սակայն, հարկ է նշել, որ նրանց գործունեությունը կարճաժամկետ է եղել⁶: Նորա Ալթունյանը տեղի հայկական համայնքում նույնպես որբանոցի համար հանգանակություններ է կազմակերպել⁷:

Որբանոցը ցեղասպանության տարիներին այն վստահելի վայրն էր, ուր դիմում էին անապատներից, հարեմներից փախուստի դիմած հայ որբերը: Որբանոցն իր գոյության գրեթե տասնամյա շրջանում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի քաղաքներից ու գյուղերից հավաքված ավելի քան 8.000 որբերի ապաստան է եղել⁸: Որբանոցում որբերի անընդհատ տեղաշարժ է եղել, նրանք, ովքեր հարազատներին գտել են կամ արդեն ինքնաբավ են դարձել և կարողացել են իրենց առօրյա կարիքները հոգալ, դուրս են եկել որբանոցից՝ իրենց տեղը զիջելով նոր եկողներին:

Որբանոցն իր գործունեությունն աստիճանաբար ընդլայնել է, իսկ որբերի թիվը՝ աճել: Համաձայն «Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի» տվյալների՝ հետևյալ պատկերն է արձանագրվել որբանոցում⁹:

4 Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-NY: I.B. Tauris, 2011), 643.

5 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919)* (Հալեպ, ա.տ., 1919), 6:

6 ՅԶ, «Այժմու հայ որբանոցը», *Տարագիր* (Հալեպ), 13 դեկտեմբերի 1918, թիվ 2:

7 *Դար մը պարմություն Հայ բարեգործական ընդհանուր միություն 1906-1940*, ղեկավարությամբ Ռ. Գեորգեանի եւ Վ. Թաշճեանի, հ. Ա (Գահիրե-Փարիզ-Նիւ Եորք, Impression, Brochage, 2006), 66:

8 Միհրան Մինասեան, «Մանկություն չունեցողներուն» տարուկ բոյըր՝ Հալեպի հայկական որբանոցը», *Շաիղ եռամսյա պարբերական* (Հալեպ), 1999 (1), 22:

9 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 1:

31 հուլիս 1915 թ.	13
10 օգոստոս	250
31 օգոստոս	340
31 դեկտեմբեր	402
30 հունիս 1916 թ.	500
31 դեկտեմբեր	548
30 հունիս 1917 թ.	620
31 մարտ 1918 թ.	1.478
31 դեկտեմբեր	1.751

Աշխատանքի տարիներին որբանոցի ծավալած գործունեության հաջողությունը երբեմն վերագրել են Սիրիայում գործող թուրքական չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային՝ նշելով, որ նա, հակառակ Կ.Պոլսի կենտրոնական կառավարության հրամանի, հովանավորել է որբանոցը¹⁰, անգամ հրամայել է օսմանյան բանակին՝ որբանոցին սնունդ, քարյուղ ու փայտ մատակարարել¹¹: Նշենք, որ Ջեմալ փաշան Հալեպի նահանգապետ Սամի Բեքիրի¹² միջոցով հանդիպել է Ասատուր Ալթունասին, որտեղից էլ սկսվել են նրանց սերտ շփումները:

«Որբերու բոյնը» գրքուկի հեղինակ Տիգրան Երեցյանն այս հարցին անդրադառնալիս նշում է. «Ջեմալ փաշան և Եավեր¹³ Նուսրեթ պէյը քանիցս խօսած էին Տօքթ. Ալթունասի որ եթէ բաղձանք մ'ունենայ իրենց իմացն»¹⁴: Այնուհետև հավելում է. «Տօքթ. Ալթունեան ըլլայ ՃԷմալ փաշայի, ըլլայ իր մշակած բարեկամութենէն անձնական շահ մը չունէր... Բարձրաստիճան զինուորականներու և անոնց ընտանքիներու հիանդները ձրի կը դարմանէր և դեղ կուտար: Եւ այս բոլոր գոհողութիւնները կ'ընէր յանուն Հայ որբին և անպաշտպանին»¹⁵:

Պետք է փաստել, որ Ջեմալ փաշան իրականում ուներ նկատառումներ հայ գաղթականների հարցում իր շահագրգռվածությունն արտահայտելու համար¹⁶: Այնուա-

10 Երեցյան, *Որբերու բոյնը*, 7:

11 *Դար մը պատմութիւն*, 66:

12 Սամի Բեքիրը եղել է նաև Հանրապետական Թուրքիայի արտաքին գործերի նախարարը (1920 թ. մայիս – 1921 թ. մայիս):

13 Յավեր՝ թիկնապահ, ով զբաղվում էր նաև իր վերադասի կարգադրությունների իրականացմամբ:

14 Երեցյան, *Որբերու բոյնը*, 8:

15 Նույն տեղում, 9:

16 Հարկ է նշել, որ տեղահանման և ոչնչացման ճանապարհին գտնվող հայերի նկատմամբ ցուցաբերած որոշակի մեղմ դիրքորոշումը թելադրված էր ոչ այնքան Ջեմալ փաշայի մարդասիրական վերաբերմունքով, որքան պայմանավորված էր քաղաքական հաշվարկով: Հայերին նա դիտում էր որպես Սիրիայում և Լիբանանում արաբներին հավասարակշռող տարր և հայ արհեստավորներին արաբական տարածքներում բնակեցնելով ձգտում էր լուծել երկու խնդիր՝ թուլացնել արաբական

մենայնիվ, բժիշկ Ալթունյանի՝ Ջենալ փաշայի հետ ունեցած կապը հնարավորություն ընձեռեց ստանալու որբանոցի անվտանգությունն ապահովող փաստաթուղթ. «Մեծագոյն և իրական նուէրը եղաւ որբանոցին համար, թողութի կտոր մըն էր գոր յանձնեց Օր. Ալթունեանի, և որով կը յանձնարարէր Հալէպի իշխանութեանց՝ բնավ չդպչիլ որբանոցին: Այս թողութին շնորհիվ կարելի եղավ հաստատութիւնը գերծ պահել ոստիկանութեան ոտնձգութիւններէն: Ճիշտ է, որ փորձանքները պակաս չեղան եւ Հալէպի կառավարութիւնը բազմիցս փորձեց այդ որբերն ալ առնել եւ անապատի սպանդանոցները դրկել»¹⁷: Բացի այդ՝ բժիշկ Ալթունյանն որոշակի միջամտություն է ունեցել Հալէպի հայությանը տեղահանելու ծրագիրը կանխելու գործում. «Սակաւաթիւ ժողովուրդ մը ունէինք այնտեղ, բայց անոր շուրջը կը պարտկուէին քանի մը հազար հայ գաղթականներ: Եթէ արտորուէին, այս գաղթականներն ալ չպիտի կրնային մնալ ու պիտի կորսուէին»¹⁸:

Այնուամենայնիվ, արդեն նշվեց, որ Ջենալ փաշայի տված փաստաթուղթը չէր կարող որբանոցն ամբողջովին ապահովագրել թուրքական ոտնձգություններից: Եղել են դեպքեր, երբ Ահարոն Շիրաճյանը մերժել է որբանոցից աղջիկ տուն տանելու համար եկած թուրք բեյերին այն հիմնավորմամբ, որ որբանոցը գերմանական հովանավորության ներքո է գտնվում: Նշենք նաև, որ գերմանական հյուպատոսարանի անմիջական հարևանությունը¹⁹ զգալիորեն նպաստում էր որբանոցի անվտանգության ապահովմանը, երբեմն էլ Պատվելին խոստումներով ձգձգում էր՝ հուսալով, որ ազատությունը մոտ է²⁰:

Ավելին, թեև որբանոցի համար թուրքական իշխանությունները որոշակի արտոնություններ կիրառում էին, բայց, ինչ վերաբերում է որբանոցի կրթական կյանքին, ապա 1915-1918 թթ. ընթացքում կրթական գործունեություն սկսելու փորձերը երեք անգամ կասեցվել են թուրքական կառավարության կողմից²¹:

Հայկական որբանոցի գործունեությունը կապված է եղել նաև արաբական կողմի բարիդրացիական վերաբերմունքի հետ: Վերապատվելին կարողացել է բարեկամա-

ներկայությունը, արաբական ազգային-ազատագրական շարժման միտումները և ստեղծել բանակի կարիքները հոգալու նոր հենարան: Այս տեսանկյունով է կարելի բացատրել ժամանակ առ ժամանակ հայ տարագիրների նկատմամբ նրա ձեռնարկած քայլերը:

17 Ա. Ա. [Արամ Անտոնյան], «Տօթթ. Ալթունեան», *Վերածնունդ. շաբաթաթերթ* (Փարիզ), 27 մայիսի 1919, Գ տարի, թիվ 12, 202-203:

18 Նույն տեղում, 203:

19 Հալէպը հյուսիսային Սիրիայի կարևոր կենտրոն էր: Այստեղ էին հատվում Սիրիայի ֆրանսիական և Բաղդադի գերմանական երկաթուղիները, բացի դա Հալէպը ռազմամթերքի մատակարարման գործում հույժ կարևոր դերակատարություն ուներ: Այս հանգամանքով էր պայամանավորված, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները հյուպատոսարաններ էին բացել Հալէպում, ինչը թուրքական իշխանություններին ավելի զգոն էր պահում քաղաքում բացահայտ կոտորածներ ու անօրինակություններ կատարելու հարցում:

20 Էլմաս Պոյաճեան, «Հայկական որբանոցի կենսքէն», *Ջանաստէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 416:

21 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 3:

կան հարաբերություններ հաստատել արար երկրագործների հետ և նրանցից պարբերաբար հացահատիկ գնել որբանոցի համար²²:

Վերապատվելի Շիրաճյանի գործունեությանը զուգահեռ Նորա Ալթունյանը նույնպես զբաղվել է սնունդ հայթայթելու գործով: 1916-1917 թթ. ընթացքում, երբ երկրում համատարած սով էր, Նորա Ալթունյանը դիմել է Նուսրեթ բեյին՝ ներկայացնելով որբանոցի դրությունը: Ի պատասխան՝ Նուսրեթ բեյը Ջեմալ փաշայի զինվորական գորանոցի մթերանոցից ցորեն է հատկացրել որբանոցին, ինչը բնական է, որ չէր կարող լինել առանց Ջեմալ փաշայի թույլտվության կամ համաձայնության:

Ամեն նոր քարավանի Հալեպ հասնելով՝ քաղաքի գաղթականների թիվն ավելանում էր. տեղի կառավարիչների վերահսկողությունից դուրս էր եկել քաղաք հասնող աքաղաղների թիվը, համատարած սով ու համաճարակ էր: Այս իրավիճակում թուրքերը փոխում են իրենց գործելակերպը. հայերին արգելելով մնալ Հալեպում՝ փոխարենը նրանց տեղավորում էին երկաթուղուն հարակից ճամբարներում: Այնուամենայնիվ, կառավարության հսկողությունից և հետապնդումներից խուսափելու համար շատերը մի քանի օրով ապաստան էին խնդրում որբանոցում: Վերջինս ավելի մարդաշատ էր դառնում, հորերի ջուրը չէր բավարարում կենցաղային նվազագույն պայմաններն ապահովելու համար, յուրաքանչյուր նոր քարավանի հոսքի հետ շատանում էին հիվանդությունները, աճում էր մահացությունների թիվը: Դժվար էր նաև լուծել կեցության, հագուստի, սննդի խնդիրները:

Սկզբնական շրջանում որբանոցը կամ այդ ժամանակների *Օրհնության Տունը*²³ պարզապես պատսպարան էր հայ որբերի համար՝ հապճեպ կահավորված, հարդով տաշեղներով լցված բազմոցներով, որոնց վրա մեկից ավելի երեխաներ էին պտկում, առանձնացվել էր հատուկ սենյակ՝ ամեն օր մուտք գործող երեխաների համար: Վերապատվելի Շիրաճյանի՝ որբերին բժշկական աջակցություն տրամադրելու խնդրանքով որբանոց այցելած բժիշկ Պողոսյանը գրում է. «... Ընդարձակ սենեակ մը կարելի եղալ յստակեցնել ամէն օր մուտք գործող մահամերձներու որոնց մեծ մասը կը մեռնէին մտնելէ գրեթէ մի քանի ժամ ետք»²⁴: Որբերը հաճախ չէին հիշում իրենց անունը, Պատվելին նրանց նոր անուններով էր մկրտում՝ Ապառաժ, Վէմ, Ժայռ և այլն՝ հույս ունենալով, որ նմանօրինակ անունները նրանց կպարտադրեն պայքարել կյանքի համար:

Անդրադառնալով որբերի վիճակին՝ Հալեպի «Տարագիր» թերթը գրում է. «... անմեղ եակներ, որոնք իրեն ցնցոտիներուն մէջ յաճախ մերկ ու բոպիկ, քաղցած ու անպատսպար, անխելահաս, հետեաբար և անկարող ըմբռնելու իրենց վիճակի ծանրութիւնը կամ ատելի ճիշտ ծանրութեան պատճառը, ողբալի ու չարքաշ կեանք մը կը վարեն, այս օտար մթնոլորտի տակ, որ կեանք չէ, կը քալեն բայց չգիտեն ուր»²⁵:

22 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

23 Սարգիս Լալեան, *Յուշանայտեսն նուիրուած Արտուր Յ. Լեռնեանի: Ինքնակենսագրութիւն եւ դրուագներ իր կեանքէն ու գործէն* (Պէյրութ, Ատլաս, 1967), 197:

24 Տոքթ. Պողոսեան, «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը», *Ջանասէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 414:

25 Սպերցի, «Որբանոցը. Ա», *Հայ Չայն* (Հալեպ), 18 դեկտեմբերի 1918, Ա տարի, թիվ 4:

Որբանոցի աշխատակից Էլմաս Պոյաճյանն²⁶ իր հուշերում որբանոցի մասին գրում է. «Նորաբաց որբանոցին դուռը շարաններով կը սպասէին դժբախտներ՝ տնօրէնին կարգադրութեանը: Այժմ որբանոցը եղաւ «Հայ տուն», ուր կային կաթընկեր մանուկներէն մինչև Հայնիէն արտորված ծերունի, բարի Ռեբեկա մայրիկը ... Թէպէտ բաւարար ուտելիք չունէինք՝ Պատուելին կ'ըսէր. «Թող հայուն բեկորները փողոցը չմտնին»²⁷: Վերապատվելի Շիրաճյանը որբանոց է ընդունել բոլոր որբերին՝ բորոտով, տրախտ-մայով, դիզինտերիայով կամ տիֆով վարակված՝ առանց որևէ խտրականության²⁸:

1917 թ. փետրվարին Հալեպում գործող որբանոցների վերահսկողությունն անցել է թուրքական կառավարությանը և վերջինիս հրամանով որբերը պետք է տեղափոխվեին Անթուրայի, Կոնիայի, Էսկիշեհիրի և Կ.Պոլսի թուրքական որբանոցներ: Հալեպի հայկական որբանոցը չէր կարող շրջանցել այդ հրամանը և որբանոցի մոտ 80 որբ տեղափոխվել են հիմնականում Լիբանանի Անթուրայի թուրքական որբանոց²⁹: Այս դեպքերին ադրադառնում է Էլմաս Պոյաճյանը. «...Մեր որբանոցին ալ ցանկը ուզեցին և օր մը ոտք կոխեցին թուրք պաշտօնեաներ եւ 80ի չափ որբեր տարին իրենց ծնողաց ճակատագրին միացնելու»³⁰: Որբանոցից երեխաների առևանգումները կանխելու համար Շիրաճյանն երբեմն որբերին տեղավորում էր քաղաքի հայկական ընտանիքներում, որոնք դժվարությամբ ու վախով էին գնում այդ քայլին:

Որբանոցի տեղեկագրում ներառված են նաև մինչև 1919 թ. նոյեմբեր ամսվա ֆինանսական մուտքերի և ելքերի հաշվեկշիռները: Ստորև ներկայացվում են որոշ տվյալներ՝

Ֆինանսական աղբյուրները	Գումարը/ոսկի ³¹
1918 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներ	562
1916-1918 թվականներ	26.425
1919 թ. անգլիական իշխանությունների կողմից	29.015
Եկեղեցիներից ու բարեկամներից	214

26 Էլմաս Պոյաճյանը գաղթի ճանապարհին կորցրել էր երեք զավակներից երկուսին, մեկի հետ հասել էր Ռալ ուլ-Այն, հետո՝ Հալեպ, որտեղ Պատվելի Հովհաննես Էսփիջյանի միջամտությամբ սկսել էր աշխատել Հալեպի հայկական որբանոցում:

27 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքէն», 415:

28 Kévorkian, *The Armenian Genocide*, 643.

29 Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915 -1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no.1 (2016), 25-43:

30 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքէն», 416:

31 Գումարներն ընդունվում էին մեծամասամբ թղթադրամներով, մինչդեռ հաշվեկշիռը ներկայացված է արդեն ոսկու փոխարժեքով: Նշենք, որ այս ժամանակահատվածում ոսկու արժեքը թանկացել է, որի արդյունքում որբանոցը որոշակի դրամական օգուտ է ունեցել:

Ֆինանսական աղբյուրները	Գումարը/նսկի
Անգլիական բանակից ցորեն, միս (անվճար ³²)	500
Ջեմալ փաշայի սվիրատվություն՝ փայտ, ցորեն, յուղ, ոսպ, սիսեռ (անվճար)	3.600
Ամերիկյան Կարմիր խաչի կողմից տրամադրված ալյուր, կաթ, հագուստ (անվճար)	200
Որբանոցի արհեստանոցներից ու առևտրից ստացված եկամուտ	2.470
Ոսկու արժեքի բարձրացումից	620
Ընդհանուր	63.606

Այս գումարից հանվել են որոշակի մանր ծախսերը, արհեստանոցին անհրաժեշտ նյութերի գնումների և տեղափոխման ծախսերը: Հանրագումարում ստանում ենք, որ հիմնադրումից մինչև 1919 թ. սեպտեմբերի 30-ը որբանոցի մուտքերը կազմել են 57.366 օսմանյան ոսկի³³:

Այսպիսով՝ իր գործունեության առաջին չորս տարիներին որբանոցը պատասպարան էր, որի հիմնական նպատակը որբերին թուրքական կառավարության հետապնդումներից փրկելն էր, սնունդ տրամադրելն ու հիվանդություններից ապաքինելը: Դրան գուցահեռ՝ սկսում են հիմնվել արհեստանոցներ, որոնք ապահովում էին որբերի զբաղվածությունն ու որոշակի եկամուտ բերում որբանոցին: Որբանոցի ուսուցիչ Արամ Շարվոդյանը ստեղծված իրավիճակում Ահարոն Շիրաճյանի գործունեությունը հետևյալ ձևով է ներկայացնում. «Ոճրապարտ թուրքին դատապարտեալներուն մէջէն, ինքն ալ դատապարտեալ մը, դահճին ձեռքէն կ'ազատէ 6 հազարէ աւելի դատապարտեալներ, եւ զանոնք դահճին աչքին ու հսկողութեան առջեւ չորս տարիներէ աւելի կը կերակրէ եւ կը պատասպարէ»³⁴: Իրողություն, որի հետ դժվար է չհամաձայնել. հայթայթել գումարներ, սնունդ՝ համատարած սովի պայմաններում, խուսափել մոլեռանդ իշխանությունների՝ երեխաներին թրջացնելու քաղաքականությունից, իսկապես պահանջում էր գերագույն լարում, բանակցելու հմտություն և վարչական ձիրք:

32 Հաշվեկշռում ներառվել է նաև անվճար տրամադրված սննդի ցանկը՝ յուրաքանչյուր որբի համար ծախսվելիք գումարի չափը ճիշտ որոշելու համար:

33 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի, 8*:

34 Արամ Շարվոդյան, «Կարգ մը թուանշաններ որբանոցի կեանքէ», *Ջանասէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 418:

Որբանոցի գործունեությունը 1918-1924 թթ.

1918 թ. սեպտեմբերին անգլիական և արաբական ուժերի կողմից Դամասկոսի, Հալեպի ազատագրումով³⁵ որբանոցը նույնպես հնարավորություն է ստանում ազատ գործելու: Այս ժամանակ Պատվելիի կյանքին վտանգ էր սպառնում, և նա ապաստանել էր մի արաբ շեյխի տանը: Էլմաս Պոյաճյանի վկայությամբ, երբ Շիրաճյանը ստանում է անգլիացիների՝ Հալեպ մտնելու լուրը, շտապում է արաբական տարագրով նրանց դիմավորել³⁶: Ինչպես նշված էր, սկզբնական շրջանում Ահարոն Շիրաճյանը անհատների մակարդակով էր համագործակցել արաբների հետ, իսկ արդեն 1918 թ.՝ Սիրիայի ազատագրումից հետո, բարեկամական կապեր է հաստատել նաև երկրի արաբական ղեկավար կազմի հետ, ովքեր նույնպես աջակցել են որբանոցի գործունեությանը: Դանիել Ոսկյանն իր հողվածում գրում է. «Հալեպի մէջ ալ ան լաւ յարաբերութիւն կը մշակէր բարձրաստիճան պաշտօնատարներու հետ որոնք մեծ յարգանք ունէին իրեն հանդէպ ու անմիջապէս ընթացք կուտային իր դիմումներուն»³⁷:

Անգլիական զինվորական իշխանությունն իր պաշտպանության ներքո է վերցնում որբանոցը, ողջ ծախսերը հոգալուց բացի՝ վճարելով նաև նախորդ տարիներին գոյացած պարտքը³⁸: Անգլիական իշխանությունները որբանոցի վարչական ներքին հարցերն ամբողջությամբ վստահել էին հայկական կողմին:

Ստորև ներկայացնում ենք 1919 թ. որբանոցում ապաստանած որբերի թվական տվյալները³⁹

27 փետրվար	2.000
31 մարտ	1.875
31 մայիս	1.771
30 հուլիս	1.812
30 սեպտեմբեր	2.016

Նշենք մեկ կարևոր փաստ ևս. 1919 թ. սեպտեմբերի դրությամբ որբանոցում եղել են նաև 11 խառնածին երեխաներ⁴⁰: Այս հանգամանքն ընդգծում էր որբանոցի ղեկա-

35 1918 թ. սեպտեմբերի 30-ին Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Էդուարդ Ալենբիի և Էմիր Ֆեյսալի զորքը մտնում է Դամասկոս, հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմում է Սիրիայի առաջին անկախ կառավարությունը: Տե՛ս Ali A. Allawi, *Faisal I of Iraq* (New Haven and London: Yale University Press, 2014), 154.

36 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

37 Դանիել Ոսկեան, «Համազգային դեմք մը», *Ջանասեր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 424:

38 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 13: Երեցեան, *Որբերու բոյնը*, 11:

39 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 1:

40 Նույն տեղում:

վարության այն սկզբունքը, որը նպատակաուղղված էր անգամ խառնածին, բայց հայ ինքնությամբ ու գիտակցությամբ երեխաների փրկությանը:

Որբանոցի վարչությունն անգլիական կողմի աջակցությամբ տասը շենք է վարձում՝ 135 սենյակներով՝ Ագապա թաղամասում, Անտիոքի Դռան շրջակայքում: Սաբուն խանը դառնում է որբանոցի կրթական հատվածը, ինչպես նաև մոտ 1.000 որբերի ապաստարանը: Որբանոցի շինություններից մեկի շենքը հետագայում վերածվել է պետական վարժարանի:

Ինչպես վկայում է դպրոցահասակ տղաների «մայրիկ» Էլմաս Պոյաճյանը, Սաբուն խանը դառնում է փոքրիկ Հայաստան՝ ազգային երգերով, փայտյա զենքերով և զինվորական մարզանքներով: Կիրակի՝ կեսօրից հետո, որբանոցին պատկանող բոլոր տներից որբերն իրենց պատասխանատուների հետ հավաքվում էին, և յուրաքանչյուր խումբ իր սովորած երգն էր երգում հյուրերի ներկայությամբ: Որբանոցի զինվորական մարզանքը սկսվում էր Հայաստանի Հանրապետությանն ուղղված ողջունով⁴¹:

Որբանոցը, ինչպես արդեն նշվեց, իր գործունեության սկզբնական հատվածում չի ունեցել հստակ վարչական և կառուցվածքային ստորաբաժանումներ: Վերջիններս ձևավորվել են աստիճանաբար, ժամանակի պահանջներից ելնելով՝ հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները: Ձևավորող վարչական, կրթական, առողջապահական ստորաբաժանումները դյուրացրել են որբանոցի առջև ծառայած որոշ խնդիրների արդյունավետ լուծումները:

Առաջնային և կարևոր ոլորտը կրթականն էր, որին որբանոցում 1918 թ. հետո հատուկ ուշադրություն է դարձվել: Կանոնավոր դասընթացները սկսվել են անգլիական գորբերի Սիրիա մտնելուց հետո: 1919 թ. սեպտեմբերին դպրոցն ունեցել է 1.377 երկսեռ աշակերտություն՝ 38 երկսեռ ուսուցիչներով⁴²:

Որբանոցն ունեցել է գիշերային վարժարան, որպեսզի արհեստավոր որբերը չգրկվեին կրթություն ստանալու հնարավորությունից: Գիշերային դասընթացը գործել է հինգ կարգերի բաժանումով, և 181 որբ ամեն երեկո մեկուկես ժամ այցելել է հայերենի, ֆրանսերենի և անգլերենի դասերի: Դասերն իրականացվել են Հալեպի ազգային վարժարանի⁴³ 12 տարվա դասընթացի ծրագրով: Տղաների նախակրթարանի 81 որբ ուղարկվել են Ազգային վարժարան՝ մասնավոր վճարով, իսկ 164 տղա և 552 աղջիկ կրթությունը ստացել են որբանոցի դպրոցում:

Որբանոցում գործել է նաև կույրերի դպրոց, որտեղ 1919 թ. տվյալներով սովորել են 43 երկսեռ կույր աշակերտներ: Նրանց մեկ չորրորդն աչքի խոլերայի պատճառով կորցրել էր տեսողությունը, իսկ մյուսներն արդեն կույր էին մտել որբանոց⁴⁴:

41 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

42 Երեցեան, *Որբերու բոյնը*, 13:

43 Հայկազյան վարժարանը 1919 թ. դրությամբ Հալեպում գործող միակ վարժարանն էր՝ առաքելական-ավետարանական միացյալ ծրագրով, որը 1921 թ. բաժանվեց: Տե՛ս Յակոբ Չօլաքեան, «Հայ վերապրողներու տեղաբաշխումը եւ կրթական գործի կազմակերպումն ու դպրոցները Սուրիոյ մէջ (1918-1946)», *Սուրիոյ հայերը* գիտաժողովի նյութեր (Հալեպ, HU PESS, 2018), 279:

44 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 3:

Երեխաները ջութակ կամ մանդոլին էին նվագում, օրվա մնացած ժամերին ասեղ-նագործությամբ կամ փսիաթագործությամբ⁴⁵ էին զբաղվում:

Առողջապահական ոլորտը նույնպես կարևոր էր՝ հաշվի առնելով տարածված համաճարակներն ու սովը: Որբերը գտնվում էին բժշկի հսկողության տակ, ծանր հիվանդները տեղափոխվում էին հիվանդանոց, որի պատասխանատուն էր Ա. Ալթունյանը: Որբանոցի հիվանդանոցը գտնվում էր քաղաքի ճեղքում արվարձանի Քեթթեպ փողոցի անկյունում: Ատուր Ալթունյանն անկախ բժիշկ էր, հիվանդանոցի մշտական բժիշկներից էին Սամուել Շամվոնյանը (ՀԲԸՄ Հալեպի վարչության նախագահ), Խաչիկ Պողոսյանը, Երվանդ Էլմաճյանը, Նուրի Իշխանյանը և ուրիշները:

Հիվանդանոցն ունեցել է 40 անկողին և հիվանդանոցային պարագաներ, ինչպես նաև մոտ հիսուն բժշկական սարքավորումներ՝ տրախոմայի, բորոտության և, մասնավորապես, գոնչությունը⁴⁶ բժշկելու համար⁴⁷: Աչքի հիվանդությունները, բորոտությունը սկզբում շատ տարածված էին, ավելի ուշ գրեթե վերացել էին: Հալեպի որբանոցի սան Անդրանիկ Շառուկյանն իր հուշերում հիվանդանոցը հետևյալ ձևով է բնութագրում. «...երկնային դրախտ էր երկրի վրա ... առասպելական բարիքներու շտեմարան», որտեղ կար մահճակալ, կաթ, հավկիթ, սպիտակ հաց և բարի մայրիկներ, որոնք չէին բարկանում⁴⁸:

Տեղեկագրում 1919 թ. սեպտեմբերի դրությամբ առողջապահական վիճակի մասին նշվում է. «Ուրախ ենք ըսելու, թե վերջին ինը ամիսներում մեջ երեք երեխաներ եւ մանչ մը մեռած են միայն»⁴⁹: Մահացությունների բարձր աստիճանը նախորդ տարիներին պայմանավորված էր տիրող ծանր պայմաններով և նշվում էր, որ որբերից շատերը կիսամեռ վիճակում էին մտնում որբանոց և նրանց համար բախտավորություն էր մեռնել որբանոցում՝ փողոցների փոխարեն⁵⁰:

Որբանոցը ներքին հարցերը կարգավորելու մշակված համակարգ է ունեցել: Տասը տարին լրացած յուրաքանչյուր որբ պարտավոր էր նաև որբանոցին կից գործող արհեստանոցում որևէ արհեստ սովորել: Այսօրինակ համակարգը բնորոշ է ցեղասպանությունից հետո շատ հայկական որբանոցների, ինչը հնարավորություն էր տալիս որբանոցներին ինքնաբավ լինելու: Արհեստագործական արտադրանքի վաճառքից ստացված գումարի մի մասը պահվում էր և տվյալ որբին էր տրվում որբանոցից դուրս գալու ժամանակ:

Տեղեկագրում նշվում են ուսուցանվող արհեստների ու տղա որբերի ցանկերը, որոնք հարկ ենք համարում ներկայացնել՝

45 Ճահճային բույսերից, արմավենու տերևներից պատրաստված հյուսվածք, որ օգտագործել են հատակին փռելու և որոշ իրեր փաթաթելու համար:

46 Գոնչություն կամ գոնչություն (հնց.)՝ ֆիզիկական արատ ունեցող, խեղանդամ, բորոտ կամ քոստո:

47 Բակուր Տաթևեան, «Հալեպի հայկական որբանոցը», *Գեղարդ, Սուրիահայ պարեզիրք, 1976-1978 միացնալ թիւ*, Բ գիրք (Հալեպ, Շարք, 1978) 379:

48 Անդրանիկ Շառուկյան, *Մանկություն չունեցող մարդիկ* (Երևան, Հայպետհրատ, 1963), 62:

49 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 2:

50 Նույն տեղում:

կոշկակարություն	62 տղա
հյուանություն	30
հացագործություն	20
մուճակակարություն	18
դերձակություն	13
բեռնակրություն	13
դարբնություն	12
պարտիզականություն	12
կաշեգործություն	12
կառապանություն	9
կաթնագործություն	6

Ամփոփելով նշենք, որ արհեստ սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 216 հոգի⁵¹:

Որբանոցի չորս հիմնական արհեստանոցները քաղաքի ամենաբանուկ փողոցի վրա էին տեղակայված՝ ատաղձագործական արհեստանոցը, կոշկակարատունը, դերձակատունն ու նկարչատունը, որոնց արտադրանքը վաճառվում էր որբանոցի կենտրոնական վաճառատանը՝ տնօրենի և գրագրի հսկողությամբ:

Աղջիկները նույնպես իրենց զբաղմունքներն ունեին: Բացի արհեստներից տասը տարեկանից բարձր աղջիկները մասնակցում էին նաև որբանոցի ներքին գործերին: Կարի հատուկ սենյակում մոտ 40 աղջիկներ կարունձի դասերի էին մասնակցում⁵²: Որբանոցի դերձակատունը հոգում էր որբանոցի հագուստի, անկողնային պարագաների հարցերը: Նրանք օրական մեկուկես ժամ ասեղնագործությամբ էին զբաղվում, և այդ գործերը վաճառվում էին արհեստանոցի վաճառատանը: Մոտ 60 երեխաներ աշխատում էին դեղատներում, ատամնաբույժների ու լուսանկարիչների մոտ:

Որբանոցն ունեցել է իր ներքին պայմանական բաժանումները՝ ըստ տարիքի և սեռի երեխաները բաժանվել են 30 կարգերի, որոնց հսկում էին 30 կանայք ու աղջիկներ՝ որպես «մայրիկներ»: Ի տարբերություն ուսուցիչների՝ վերջիններս մնում էին որբանոցում: Որբանոցի սան Անդրանիկ Ծառուկյանն իր հուշագրության մեջ անդրադառնում է «մայրիկների» գործունեությանը՝ նշելով. «Մայրիկները կը կանչվեին իրենց անուններով՝ Յուդաբեր մայրիկ, Սանդուխտ մայրիկ, Աղավնի մայրիկ, իսկ Մեծ Մայրիկին անունը չէին տար: Հսկիչները և մայրիկները նրան դիմում էին

51 Նույն տեղում, 4:

52 Երեցեան, *Որբերու բոյնը*, 15:

տիկին Եղիսաբեթ: Մեզի համար իր անունը կամ վախի ու ծեծի սպառնալիք էր, կամ ինքնապաշտպանության վերջին սպառնալիքը»⁵³:

Որբանոցում աշխատող կանանցից շատերն անձնվիրաբար են աշխատել: Նրանցից են եղել Թ-ագուհի (Ադիյամանցի) Ալեքսանյանը, ով հոգում էր որբանոց մտնող յուրաքանչյուր որբի հիգիենայի հարցերը, Տուտու մայրիկ -Քեշիշյանը, որը ցեղասպանության տարիներին ազատվել ու իր զավակների հետ որբանոց էր հասել: Նրա հին-նական գործը ոչլուտ երեխաների մաքրության ապահովումն էր: Ինչպես նաև Մենենա Մլայանը և Ահարոն Շիրաճյանի կինը՝ Լուսիա Ռուպյան-Շիրաճյանը, որոնք իրենց վրա ծանր պարտականություն էին վերցրել՝ կազմակերպել մահացած երեխաների աննկատ տեղափոխումը որբանոցից գերեզմանոց: Նշենք, որ Լուսիան որբանոցի երեխաներից վարակվում է տիֆով և մահանում⁵⁴:

Որբանոցում աշխատում էին նաև 20 լվացարարուհիներ, 25 մառանի և խոհանոցի պատասխանատուներ, 30 մաքրողներ, 40-45 կարողներ, 12 գիշերապահուհիներ, 15 հիվանդանոցի պաշտոնյաներ, որոնք իրենց օրվա ուտելիքն ու հագուստն անվճար էին ստանում⁵⁵:

Հագուստի ձեռքբերման հարցերում որբանոցն աստիճանաբար կարողացել էր բարելավել պայմանները: Ամեն որբ ապահովված էր վերմակով, բարձով, սպիտակեղենով, երեք ձեռք հագուստով, ամեն տարի յուրաքանչյուր տղայի տրվում էր երկու գույզ կոշիկ, իսկ աղջկա՝ մեկ գույզ⁵⁶: Նշենք, որ սննդի հարցերին նույնպես հատուկ ուշադրություն է դարձվել. որբերն օրական ստանում էին երկու անգամ՝ տաք, մեկ անգամ՝ չոր սնունդ: Տեղեկագրում մանրամասն նշվում են որբանոցի սննդի մատակարարման ցուցակները, յուրաքանչյուր որբին տրամադրվող սննդի չափաբաժինը⁵⁷:

Բարոյական տեսանկյունից որբանոցի նշանաբանը հետևյալն էր. «Որբերը համեստ ու օգտակար հայեր ըլլալու պատրաստել, սորվեցնելով նաև քրիստոնեական կենսք եւ բարոյականութիւն: Բոլորն ալ ազատ են իրենց ուզած եկեղեցին երթալու»⁵⁸:

Անդրանիկ Ծառուկյանն իր հուշագրությունում նշում է, որ Եղիսաբեթ մայրիկը շաբաթը երկու անգամ որբանոցի բակում Սուրբ գրքից ընթերցումներ էր կատարում, և բոլորը պետք է համակ ուշադրությամբ հետևեին նրան, իսկ անուշադիրներն ու լսելիս քնո՞վ ընկած երեխաները պատժվում էին⁵⁹:

Հետքաքրքրական է, որ Առաքելական եկեղեցու հետևորդ երեխաներն ավելի քիչ են եղել: Այս հանգամանքը կարելի է հիմնավորել այն փաստով, որ այդ տարիքում երեխաների համար դժվար էր ընկալել երկու եկեղեցիների տարբերությունը, չնայած Անդրանիկ Ծառուկյանը հիմնավորում է երևույթը՝ գրելով. «Մեր Եկեղեցի գացողները

53 Ծառուկյան, *Մանկություն չունեցող մարդիկ*, 28:

54 Ա. Շիրաճեան, «Վեր. Շիրաճեանին Գործակիցները», 405:

55 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 4:

56 Երեցեան, *Որբերու բոյնը*, 14:

57 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 2:

58 Նույն տեղում, 3:

59 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 39-40:

կը տարվեին դասին ճիշտ ետևը ու ամբողջ երկու ժամ ոտքի կը մնային: Իսկ Ժողովարան գացողները հանգիստ կը նստեին նստարաններու վրա: Հետերին կը բերեին նաև գունավոր նկարներ»⁶⁰: Ամեն դեպքում հարկ է նշել, որ Ժողովարանի բարեկեցիկ պայմանները նպաստել են երեխաների ավետարանչական կողմնորոշմանը, չնայած որևէ ձևով հարկադրանքի ու ստիպողականության դեպքերի ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Որբանոցային կյանքը հարթ չէր ընթանում. ամենօրյա կեցության, սննդի խնդիրներ, ներքին կազմակերպչական հարցեր, թուրքական ոտնձգություններ և այլ խոչընդոտներ, որոնք պարբերաբար ծառանում էին որբանոցի առջև: Որբանոցի երեխաները 1919 թ. փետրվարի 28-ին ենթարկվում են թուրքերի ու արաբների կազմակերպած հարձակմանը⁶¹: Թուրք ջարդարարները, առաջնորդելով մի խումբ արաբների, տարածվում են քաղաքով մեկ՝ Ջումսա բազար, Ագապա, Բաբ Ալ-Ջնեյնի, Բասթալ Հարամի, Բաբ Ալ-Նասր, հարձակվում են հայերի որբանոցի, դպրոցների, նախկին գորանոցի վրա⁶²:

Դեպքերի ականատես, Հալեպի որբանոցի սան Հովակիմ Դիշդիշյանն⁶³ իր հուշերում անդրադառնում է դեպքերի մանրամասներին՝ նշելով, որ որբանոցի տղաներից շատերը փայտե հրացաններով ավելի քան երկու ժամ պաշտպանել են որբանոցը պ. Կարապետի և Սեբաստացի Անդրանիկի հետ, և հարձակվողները, փայտե հրացաններն իսկականի տեղ դնելով, չեն համարձակվել շենք խուժել⁶⁴, չնայած փաստերը վկայում են, որ արաբական ու թուրքական զինված ամբոխը, այնուամենայնիվ, մուտք է գործել որբանոց:

Փետրվարյան այս դեպքերին է անդրադարձել նաև որբանոցի մեկ այլ սան՝ Արմենակ Կյուրեղյանը⁶⁵, ով որբանոցում հատուկ առաքելություն է ունեցել. քաղաքում շրջելով՝ հայ որբեր հայտնաբերել ու նրանց որբանոց տեղափոխել: Դեպքի օրը Արմեն-

60 Նույն տեղում, 42:

61 Դեպքերի մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Նարինե Մարգարյան, *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հասարակած հայ տարագիրների կարգավիճակը և հայարաբական փոխհարաբերությունները 1915-1924 թթ.* (Երևան, Կոլլաժ, 2013), 102-112:

62 Եղիա Նաջարյան, «Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում (1918 հոկտեմբեր – 1919 հունիս)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ* հ. 6 (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974), 154; Allawi. *Faisal I*, 218.

63 Հովակիմ Դիշդիշյանը ծնվել է Զիլե քաղաքում, 1906 թ.: Նա ականատես է եղել ցեղասպանությանը, ընտանիքի անդամներից փրկվել է միայն ինքը: Անցել է գաղթի ողջ ճանապարհը, ենթարկվել տարբեր փորձությունների՝ հայտնվելով արաբական, քրդական միջավայրում: Դեր Զորում հանդիպել է որբախույզ Ռուբեն Հերյանին, ով ներկայացրել է իր որբահավաք գործունեության մասին, տեղեկություններ է հարցրել արաբական ցեղախմբերի մոտ ապաստանած հայ որբերի մասին, իսկ Հովակիմին առաջարկել է լուսանկարվել՝ խոստանալով այն Ամերիկա ուղարկել՝ որդեգրման հարցերը լուծելու համար: Դեր Զորից Հովակիմը հասել է Հալեպ ու հայտնվել Պատվելիի որբանոցում: Տե՛ս Հովակիմ Դիշդիշյան, *Դեր-Զորի անսպասարում*, 252-253:

64 Դիշդիշյան, *Դեր-Զորի անսպասարում*, 264-265:

65 Արմենակ Հարությունի Կյուրեղյանը ծնվել է 1900 թ. Սեբաստիա քաղաքում: Ուսանել տեղի Արամյան վարժարանում մինչև երրորդ դասարան: Անցել է գաղթի ճանապարհը, յոթ քույր ու եղբայրներից փրկվել են միայն ինքն ու եղբայրը:

նակն ուղեկցող որբի հետ չի հասցրել որբանոց մտնել, իսկ հարձակումից հետո է միայն որբանոցում ակնաստես եղել, որ ուսուցիչներից մի քանիսը գոհվել են, հանդերձարանի պատասխանատու ծեր աշխատակցի թևերը կտրել են⁶⁶: Էլմաս Պոյաճյանը դեպքի կապակցությամբ գրում է, որ փետրվարի 28-ին որբանոցը կորուստներ է կրել, Արմաշի վանքից երկու շաբաթ առաջ որբանոց հասած Արմենակին սրախող-խող են արել, ուրֆացի կույր ու ծեր տղամարդու վրա կրակարանի տաք կրակ են լցրել, չեն խնայել անգամ ձեռքերը պարզած աղոթող կնոջը: Իսկ իրեն խղճացել են թերևս երեխա գրկած լինելու պատճառով⁶⁷:

1919 թ. փետրվարյան դեպքերից հետո շատ հայ երեխաներ, կորցնելով իրենց վստահությունը, պարբերաբար փորձեր են կատարել փախչելու, փաստ, որը ակնհայտ է որբերի թվական տվյալներից. մեկ ամսվա ընթացքում որբերի թիվը նվազել է 125-ով: Որբերի շրջանում վստահությունը վերականգնելու համար Ա. Շիրաճյանը որբանոցում ընդունելություն է կազմակերպել: Շիրաճյանի խնդրանքով Իսախիֆը⁶⁸, ինչպես նշում է Հովակիմ Դիշդիշյանը, ավելի քան հիսուն արաբ պաշտոնյաների ներկայությամբ, որբերին, որոնց թվում է եղել նաև հեղինակը, հավաստիացրել է, որ եղածը չի կարող կրկնվել, քանի որ դեպքը հրահրված էր թուրքական գործակալների կողմից, իսկ արաբները, նախկինում թուրքերի կողմից հավասարաչափ ճնշված լինելով, համակրում են հայերին և խոստանում իրենց ձեռքի տակ եղած միջոցներով օժանդակել հայ գաղթականներին ու որբերին⁶⁹:

Դեպքերից հետո աստիճանաբար որբանոցն անցել է իր ամենօրյա գործունեությանը: Արդեն 1919 թ. նոյեմբերին 15-ին⁷⁰ Հալեպից բրիտանացիների մեկնումով որբանոցի հոգաձությունը փոխանցվել է ֆրանսիական զինվորական իշխանությանը, որի ղեկավար Կլոսքարը նվազագույն միջամտությունն է ցուցաբերել որբանոցի ներքին գործերին:

1919-1920 թթ. տարածաշրջանում քաղաքական իրավիճակը նույնպես իր ազդեցությունն է թողել որբանոցում կատարվող շարժերի վրա: Ադանայի նահանգի կառավարիչ նշանակված գնդապետ Էդուարդ Բրեմոնը, «Սիրիայում ու Հայաստանում ֆրանսիական հանրապետության գերագույն կոմիսար» Ժորժ Պիկոն կոչ էին անում Սիրիայի, Միջագետքի հայ գաղթականներին համախմբվել Կիլիկիայում՝ հայկական պետականություն ստեղծելու նպատակով: Այդ հայտարարությունները հիմք ընդունելով՝ հայ գաղթականների մի ստվար հատված Սիրիայի տարբեր վայրերից հավաք-

66 Արմենակ Կյուրեղյան, «Կեանքս 1915-1918 թուականներին» <http://www.raa-am.com/raa/public/publish.php?clear=1&mid=5&more=1&cont=33&obid=112&content=show>, դիտվել է 02.02.2019:

67 Պոյաճյան, «Հայկական որբանոցի կեանքէն», 417:

68 Հուշագիրը նշում է Իսախիֆ, որն ամենայն հավանականությամբ եղել է Սիրիայի թագավոր Էմիր Ֆեյսալը:

69 Դիշդիշյան, *Դեր-Չոր*, 265-266:

70 1919 թ. նոյեմբերին Սայքս-Պիկոյի համաձայնագրի համաձայն արևմտյան Սիրիայում բրիտանական զորքերը փոխարինվում են ֆրանսիական զորքերով, և նոյեմբերի 21-ին Մերձավոր Արևելքի ֆրանսիական զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Գուրոն նշանակվում Սիրիայի գերագույն կոմիսար:

վում էին Հալեպում, ապա ֆրանսիական կողմի միջոցներով տեղափոխվում էին Կիլիկիա⁷¹:

Որբանոցի տեղեկագրում Ահարոն Շիրաճյանն անդրադառնում է 1919 թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ֆրանսիական բարեխնամ վերաբերմունքին, որի համար շնորհակալություն է հայտնում և նշում, որ ընդհանուր կացությունն ու որբերի ֆիզիկական վիճակը գոհացուցիչ է: Նա նշում է նաև, որ վերջին երեք ամիսների ընթացքում որբերից շատերն իրենց ազգականների, դրացիների հետ, երբեմն էլ ինքնազուլս մեկնել են Կիլիկիա: Այդ ժամանակ որբանոցն ամբողջությամբ Կիլիկիա տեղափոխելու ծրագիր է եղել⁷²:

Երկու ամիսների ընթացում հեռացողների թիվը կազմել է 587 հոգի, մինևույն ժամանակ որբանոց են ընդունվել 330, մահվան երկու դեպք է գրանցվել որբանոցի հիվանդանոցում, որբերի ընդհանուր թիվը կազմել է 1.757, որից 1.012-ը դպրոց են հաճախել, ուր աշխատել են 7 ուսուցիչ և 29 ուսուցչուհի⁷³:

1920 թ. հոկտեմբերի 1-ից եռամսյա շրջանում Հալեպի ամերիկյան նպաստամատույցը ստանձնել է որբանոցի մատակարարումը: Երբ ֆրանսիական իշխանությունների կողմից հատկացված նպաստը ժամանակավորապես դադարեցվել է, Հալեպի ազգային միությունը երեք ամիս տևողությամբ՝ մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ն իր վրա է վերցրել Ամերիկյան նպաստամատույցի փոխառությունը: 1921 թ. հունվարի 1-ին ֆրանսիական իշխանությունը կրկին ստանձնել է որբանոցի հոգածությունը, իսկ Նպաստամատույցը մասնակիորեն է ֆինանսավորել: Այս անգամ Հայ ազգային միությունն իր վրա է վերցրել որբանոցի ողջ վարչական պատասխանատվությունը, կազմվել է վարչական խորհուրդ, որը շարունակել է գործել մինչև 1921 թ. օգոստոսի 31-ը:

1921 թ. օգոստոսին 31-ին ֆրանսիական զինվորական իշխանությունը մեկ տարով կրկին իր պատասխանատվության ներքո է վերցրել որբանոցի ծախսերը: Այս ընթացքում Հայ ազգային միության ջանքերով ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպությունը հոգացել է երկու հազար օսմանյան ոսկի պահանջող բյուջեի մեծ մասը⁷⁴: Հայ ազգային միությունը ընտրել է յոթ անդամներից կազմված որբանոցի վարչական խորհուրդ⁷⁵, որն արժանացել է Ամերիկյան նպաստամատույցի վստահությանն ու հավանությանը: Նա երեք ամիսը մեկ անգամ իր գործունեության ընդարձակ տեղեկագիր է պատրաստել՝ ներկայացնելով Նպաստամատույցի վարչությանը:

Մինչև 1922 թ. օգոստոս որբանոցի տնօրենն էր Ահարոն Վերապատվելին: Այս ընթացքում նրա դեմ դժգոհություններ էին առաջացել, որի արդյունքում Պատվելին հրաժարական է տվել: Դժգոհությունների պատճառները տարբեր էին՝ ֆինանսական

71 Հովհաննես Թովմոզյան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986), 162:

72 *Տեղեկագիր Հայկական որբանոցի*, 10:

73 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 10:

74 Երեցեան, *Որբերու բյուջը*, 12:

75 Վարչական խորհրդի Ատենապետ՝ Ֆիլիպ Հովնանյան, Գ. Արսլանյան, Տիգրան Պեքճիպաշյան, Լևոն Գարազաշյան, Համբարձում Պեպերյան, Հարություն Նալբանդյան և Լուի Հեքիմյան:

հաշվետվությունների ոչ պատշաճ կերպով ներկայացումը, երեխաների փախուստները, որոնք, ճիշտ է, քաղաքական և ընդհանուր հայ գաղթականների տրամադրություններից էին կախված, բայց, այնուամենայնիվ, ստվերում էին Ահարոն Շիրաճյանի գործունեությունը:

Հավելյի «Տարագիր» թերթը, անդրադառնալով հարցին, փորձում է ավելի հավասարակշռված ներկայացնել իրավիճակը և փաստում է, որ իրականացվող ցեղասպանության, ընթացող պատերազմի մթնոլորտում հիմնել որբանոց, կազմակերպել որբանոցի գործերը բարդ էր և քիչ հայեր են կարողացել որբանոցներ հիմնելու նախաձեռնությունը կյանքի կոչել: Ինչ վերաբերում է Հավելյի հայկական որբանոցի ծախսերն ու հոգածությունը ստանձնած այս մի քանի հայերին՝ անկախ նրանց թույլ տված բացթողումների, պետք է գովեստով խոսել նրանց մասին. «Հավածանքի ծանօթ շրջանին մեջ բացառիկ թուով հայ արին կրող անհատներ կառավարեր են որբանոցը, քանի մը հարիւր որբեր ազատեր են ստոյգ մահէն յանձներ են ազգին: Ասոնք ահա անժխտելիօրէն բարոյական իրատունք, շնորհակալութեան և երախտագիտութեան են արժանի»⁷⁶:

Թերթի հրապարակման մեջ անդրադարձ է արվում որբանոցի բյուջեին և նշվում, որ վերջինիս մասին հստակ պատկերացումներ չկան, հայտնի է միայն, որ որբանոցին դրամական աջակցություն են ցուցաբերել ամերիկյան հյուպատոս Ջեսի Ջեքսոնը, դոկտոր Ֆիշերը, Զոլինկերը, իսկ թե ովքեր ինչ չափի գումարներ են ուղարկել, ինչ պարբերականությամբ և ում անունով, հստակ չէ: Արտաքին ֆինանսական աղբյուրներից բացի եղել են նաև ներքին աղբյուրներ՝ իբրև բարերարների ամսավճարներ և մասնավոր անհատների միանվագ գումարներ: Այս հարցադրումներին ի պատասխան՝ Ահարոն Շիրաճյանը խոստացել էր որբանոցի հաշիվները հրապարակել, որը հատուկ ստուգող խորհրդի կողմից մամուլի միջոցով պետք է հանրությանը ներկայացվեր: 1922 թ. Ասատուր Ալթունյանը հողված է տպագրել «Մուրիական մամուլ»-ում, որտեղ կրկին պահանջել է Պատվելիի նկատմամբ տիրող դժգոհություններին վերջ տալու համար երեք հարանվանական եկեղեցիների ղեկավարներից խորհուրդ ստեղծել և գործը քննել⁷⁷: Նշենք, սակայն, որ հաշվետվությունների մանրամասներն այդպես էլ Ահարոն Շիրաճյանը չի ներկայացրել⁷⁸:

Որբանոցի մատակարարման բաժինն ունեցել է բարդ կառուցվածք, բաժանումները կառարվել են ժամանակի պահանջներին համապատասխան: Կառավարման ողջ գործը կենտրոնացված է եղել տնօրենի կողմից: Այս է պատճառը, որ հասարակության որոշ շրջաններում դժգոհությունները միգուցե և հիմնավոր էին՝ հաշվի առնելով, որ ամեն պարագայում, մարդը, որքան էլ արտասովոր ուժերով օժտված լիներ, անկարող էր այդ ամենը հասցնել, կանոնավոր և արդյունավետ կառավարել՝ գնումներից մինչև ներքին կարգադրություններ ու հսկողության իրականացում, իսկ օգնականներ չունենալու փաստը Վերապատվելիի օգտին չէր խոսում, ինչպես և նշում է հողվածագիրը:

76 Սպերցի, «Որբանոցը. Բ», *Տարագիր*, Ա տարի, 22 դեկտեմբերի 1918, թիվ 5:

77 Ասատուր Ալթունեան, «Նամակ խմբագրութեան», «Մուրիական մամուլ», 17 սեպտեմբերի 1922, no. 64:

78 «Հարցումներ պատկանեալ իշխանութեան», «Մուրիական մամուլ», 12 նոյեմբերի 1922, թիվ 80:

«Սա մոռացություն, գանցառություն, թե անվստահություն էր ուրիշ մարդոց, բարեխղճություն և կարողութեան մասին կամ այլ նկատառումներ կային, բացատրութեան կարօտ պարագայ մէջ»⁷⁹:

Հողվածի երրորդ մասում հողվածագիրը գրում է, որ որբանոցի նյութական կատարելության մասին գնահատական տալը դժվար է, եթե չասենք պատասխանատու, բայց կան գնահատումներ և քննադատություններ⁸⁰, որոնք ուսումնասիրման կարիք ունեն և եզրակացնում է. «Ամեն դեպքում տիրող իրավիճակն «գանցառելի ալ չէ»⁸¹:

Ինչ վերաբերում է որբերի փախուստին՝ նշենք, որ ըստ հողվածագրի, շատ որբեր ու աղջիկներ, քաջատեղյակ լինելով որբանոցից դուրս տիրող ծանր վիճակին, ամեն դեպքում գերադասում են դրսի անապաստան, մերկ ու քաղցած կյանքը, ուստի հողվածագիրը կոչ է անում նաև խնամքով, սեփական ընտանեկան հարկի նման միջավայր ստեղծել որբանոցում, որպեսզի նման դեպքերն այլևս չկրկնվեն:

Ամփոփելով նշվում է, որ որբանոցն ունի թերություններ, որոնց պարզաբանումը պահանջում է լրացուցիչ փաստեր: Նշվում է, որ 1918 թ. դեկտեմբերի դրությամբ ամեն հնարավորություն կա, գոյություն ունի սահմանված բյուջե, որբերի թվի սահմանափակում չկա, որբանոցի ղեկավարությանը հանձնարարված է ընդունել բոլոր «ճշմարիտ որբերին», և ղեկավարությունը պետք է արդյունավետ գործի, որպեսզի բաց ճակատով կարողանան դիմագրավել յուրաքանչյուր քննադատության:

Հալեայի հայկական շրջանակներում որոշ դժգոհությունների առիթ է դարձել որբանոցի ամանորյա միջոցառումը: «Հայ Ձայն» թերթն իր հունվարյան համարներում անդրադարձել է այդ թեմային և նշել, որ միջոցառումը ոչ պատշաճ ձևով էր կազմակերպվել: Միջոցառմանը ներկայացուցչական հյուրեր են եղել՝ Հալեայի ընդհանուր կառավարիչ Շուքրի Ալ-Այուբին, բանակի հրամանատար Մաք Էնդրյուն, Ժորժ Պիկոն, Մարկ Սալքսը, եգիպտահայ պատվիրակ Ռուբեն Հեյրյանը: Նորա Ալթունյանի հրավերով միջոցառմանը մասնակցել են նաև Հալեայի առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Եսայանը հինգ քահանաների հետ, ովքեր սառն ընդունելություն ստանալով, չեն մնացել մինչև միջոցառման ավարտը⁸²:

Միքայել Նաթանյանն իր հողվածում քննադատել է, մասնավորապես, որբանոցում թուրքերենով հաղորդակցվելու փաստը՝ նման գործելաոճը որակելով որպես «Հայ լեզուին մարտիրոսացում»⁸³: Թերևս պետք է հակադրվենք այս փաստին՝ նշելով, որ որբերն իրենց հուշագրություններում նշում են հայերեն լեզվով հաղորդակցվելու փաստը: Անդրանիկ Ծառուկյանը, Արմենակ Կյուրեղյանը նշում են, որ որբանոցում որբերն աստիճանաբար վերհիշում էին հայերենը: Որբանոցի հիմնադրման ժամանակներից ևեթ դաստիարակության հայեցի ուղղվածության փաստն ընդգծում է նաև որբանոցի հաջորդ տնօրեն Ատուր Լևոնյանը, որին կանդրադատանք ավելի

79 Սպերցի, «Որբանոցը. Բ», *Տարագիր*, Ա տարի, 22 դեկտեմբերի 1918, թիվ 5:

80 Սպերցի, «Որբանոցը. Գ», *Տարագիր*, Ա տարի, 27 դեկտեմբերի 1918, թիվ 7:

81 Նույն տեղում:

82 «Ամանորի հանդես որբանոցի մէջ», *Հայ Ձայն* (Հալեայ), Ա տարի, թիվ 49, 9 հունվարի 1919:

83 Նույն տեղում:

ուշ: Բացի այդ՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մինչև 1918 թ. հոկտեմբեր ամիսը Հալեպը վերահսկվում էր թուրքական իշխանությունների կողմից: Այս կապակցությամբ հարկ է նշել. «Պատվելի Շիրաճեանի բոլոր ճիգերը՝ հայերենով դասավանդում մտցնելու որբանոցին մէջ բախեցան երիտթուրք իշխանություններու վճռական արգելքին. բացայայտ էր, որ տեղական իշխանություններու հանդուրժողականութիւնը, այս պարագային հասած էր իր ծայրագոյն սահմանին»⁸⁴:

Միջոցառման մասին Մ. Նաթանյանը գրում է. «Հոգ չէ, թէ առանց յայտագրի հանդէսը շատ տափակ ու անհաճ ըլլալէն զատ, հակամանկավարժական էր ու երբեք շինիչ ու ազնուացուցիչ հանգամանք չունէր: Հայերէն արտասանութիւնները ու երգերը բոլորն ալ աղճատուած ու օտարաբոյր, քիչ տեղ կը գրաւէին ... աւաղ, այդ հայ որբերուն հոգին կը խամրի ու կը մեռնի»⁸⁵:

Միջոցառման ավարտին ելոյթ է ունեցել Շուքրի Ալ-Այուբին, ով փաստել է, որ արարներն ու հայերը եղբայրներ են, ու արաբ կառավարությունը պիտի որբանոցի ծախսերը հոգա: Միջոցառումը «հայացնող» անձը Ռուբեն Հերյանն է եղել, ով երեխաներին դիմել է «մեր վաղուայ յոյսերը» և հորդորել ու կոչ է արել ներկաներին՝ պահպանելու հայ ինքնությունը⁸⁶:

Ուշագրավ է ամանորյա օրերին Երվանդ Օտյանի այցը որբանոց, որի մասին երեխաներին նախօրոք տեղեկացրել են. «Հյուրը նշանավոր մեկն է, շատ մը գիրքեր գրած է և միշտ կը խնդա ու կը խնդացնէ»⁸⁷: Սակայն որբերն այդ ժամանակ չեն հիշել ու չեն իմացել Երվանդ Օտյանի ով լինելը: Միջոցառմանը գրողը մեծ դժվարությամբ է փորձել ողջույնով դիմել որբերին, սակայն խիստ հուզվել է և միայն մի նախադասություն է արտաբերել. «Որբե՛ր, ես ձեզ շատ կսիրեմ»: Տարիներ հետո Անդրանիկ Ծառուկյանը, իր նախակրթարանի դասագրքում տեսնելով Օտյանի նկարը, հիշել է նշանավոր հավաքի օրը, իրենց հավաքական ողբը, իսկ ավելի ուշ, ծանոթանալով գրողի աշխատություններին, ըմբռնել է. «... տասնյակներով գրքերու հեղինակ գրագետն ինչու երկու խոսք չէր գտած մեզի ըսելիք»⁸⁸: Ամեն դեպքում կարելի է Ռ. Հերյանի, Ե. Օտյանի նման հայրենասեր ու ազգանվեր մարդկանց այցերից անգամ ենթադրել, որ որբանոցում հայեցի դաստիարակությունը կարևոր նշանակություն ուներ:

Շիրաճյանի նկատմամբ անհարկի դժգոհությունները հետագա տարիներին աստիճանաբար խորանում են, և Վերապատվելին հրաժարվում է պաշտոնից: Նրա հրաժարականից⁸⁹ հետո Հայ ազգային միություն կազմակերպության խորհրդակցությամբ

84 Դար մը պարմութիւն, 66:

85 Դէտ, «Որբանոցին մէջ հանդէս մը», *Հայ Չայն*, Ա տարի, թիվ 48, 8 հունվարի 1919:

86 Միքայէլ Նաթանեան, «Որբերու աշխարհէն. Հայ լեզուի մարտիրոսութիւնը», *Հայ Չայն*, № 47, 7 հունվարի 1919:

87 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 47:

88 Նույն տեղում, 52:

89 Վերապատվելի Շիրաճյանը հետագայում՝ 1930-ական թվականներին, հիմնել է ապաստարան հարեմներից վերադարձող հայ կանանց համար: Տաթևեան, «Հալեպի հայկական որբանոցը», 386:

Ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունը 1922 թ. օգոստոսին որբանոցի տնօրեն է ընտրում Ատուր Լևոնյանին⁹⁰:

Ստորև ներկայացվում են որբանոցի որբերի թվական տվյալները գործունեության վերջին ընթացքում.

Օգոստոս 1922 թ.	1.150
Դեկտեմբեր 1922 թ.	1.164
Հուլիս 1923 թ.	900

Ատուր Լևոնյանի պաշտոնավարման առաջին տարում՝ 1922 թ., որբանոցում եղել են 1150 որբ, որից 670 աղջիկ՝ 4-18 տարեկան և նույն տարիքային խմբի 470 տղա⁹¹: Նշենք, որ այդ որբերը եղել են 121 քաղաքներից ու գյուղերից, մոտավորապես 300 խարբերդոցի, 300 սեբաստացի, 175 տիգրանակերտցի և 140 կարինցի որբեր⁹²:

Համաձայն Հայ ազգային պատվիրակության 1923 թ. հուլիսի 1-ով թվագրված «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացության, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագրի՝ 1922 թ. դեկտեմբերի դրությամբ Հալեպի հայկական որբանոցում եղել է 1.164 երեխա⁹³:

Վերջիններս բաժանված էին հետևյալ տարիքային բաժանումներով՝ 1-5 տարեկան՝ 45 որբ, 6-10 տարեկան՝ 220, 11-12 տարեկան՝ 470, 13-15 տարեկան՝ 367, 16-17 տարեկան՝ 65 որբ, որոնցից 114-ը կույր էին: Համաձայն նույն տեղեկագրի՝ 1922 թ. դրությամբ 170 չափահաս որբեր դերձակություն, կոշկակարություն, վարորդություն էին սովորում, իսկ աղջիկներն էլ ասեղնագործությամբ էին զբաղվում: 1921թ. հոկտեմբերից գործող Կիլիկյան որբանոց-արհեստանոցում⁹⁴ արհեստ էին սովորում 97 որբ⁹⁵:

Ատուր Լևոնյանի կառավարման սկզբնական ժամանակաշրջանում որբանոցը կյուրթական լուրջ խնդիրներ չի ունեցել, հիմնականում ներքին բարեկարգման աշխատանքներ են իրականացվել, որբերի հարանվանականության հարցը մնացել է նախկինի պես, յուրաքանչյուր որբ, իր ուսուցչի հետ կիրակի օրերին գնացել է իր եկեղեցին: Սարգիս Լալայանն իր «Յուշամատենան նուիրոծ Ատուր Յ. Լեւոնեանի» աշխատության մեջ գրում է. «Տարիներ առաջ սկսած որբախնամ այս գործը երկու տարուան կարճ ժամա-

90 Ատուր Լևոնյանը որպես պահեստային սպա ծառայել էր Սուեզի հարձակմանը, անգլիական բանակում: 1920 թ. եղել էր Այնթափի ինքնապաշտպանության ղեկավարներից, զինվորական հրամանատար:

91 Լալեան, *Յուշամատենան*, 207:

92 Նույն տեղում, 210:

93 Սույն ձեռագիր-տեղեկագիրը մեզ է տրամադրել ՀՅԹԻ հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժին վարիչ, աղբյուրագետ Միհրան Մինասեանը, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան:

94 Արհեստանոց ստեղծելու գաղափարը Վահան Քյուրքճյանին էր, ով ՀԲԸՄ վարչության Սիրիայի և Կիլիկիայի պատվիրակն էր: Ըստ ծրագրի ամեն տարի 15-ը լրացրած հարյուր որբ այստեղ արհեստ էին սովորում:

95 «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացության, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր, 1923 թ.:

նակին մը ընթացքին Լեոնեանը այնպիսի կատարելութեան ու նախանձելի դիրքի մը հասցոց որ ոչ թէ միայն Հայոց, այլ Ֆրանսական կառավարութեան բարձրագոյն ներկայացուցիչներուն ալ հիացման ու գնահատանքին արժանացաւ»⁹⁶:

1922 թ. օգոստոսին «Սուրիական Մամուլ» թերթում հոդված է տպագրվում, որտեղ հոդվածագիրը որբանոցի հետագա գործունեության ֆինանսական հարցերի համար իր մտահոգությունն է հայտնում՝ նշելով, որ անցումային շրջան է, շարունակվում են ավելանալ անապատներից որբանոց հասնող հայերի թիվը՝ հաշվի առնելով Կիլիկիայի վերջնական հայաթափումն ու այն փաստը, որ ֆրանսիական գործողությունների հետևանքով Հալեպից Գեր Զոր, Մոսուլ և Բաղդադ փակ ճանապարհներն արդեն բաց էին⁹⁷: Ուստի թերթի խմբագրությունը ևս մեկ անգամ կոչ է անում. «... ներկայիս տխուր է իրականությունը, եւ ալ անլի եղերական պիտի ըլլայ եթէ մենք ալ ազգովին ներկայ նպաստաւոր վարկեանին մեր բոլոր տրամադրելի ոյժերը չմիացնենք որբերու ազատագրութեան կենսական խնդրոյն շուրջ»⁹⁸:

Որբերի ու որբանոցի վրա բոլոր հայկական բարեգործական ու հայրենակցական միությունների ուշադրությունն է հրավիրում Հալեպում Բոստոնի «Ազգ-Պահակ» թերթի թղթակից Նշան Կ. Տեր-Պետրոսյանն իր «Հայկական որբանոցը Հալեպի մէջ» հոդվածում⁹⁹:

Որոշ բնագավառներում Ատուր Լևոնյանը բարեփոխումներ է իրականացնում: Առաջին հերթին ականատեսների վկայությամբ նկատելի էր որբերի հոգեբանական վստահությունը, որոնք կարողացել էին հաղթահարել ցեղասպանությունը վերապրածի վախը. «Լեոնեան այնպիսի խանդ ու եռանդ ներշնչեց անոնցմէ իւրաքանչիւրին որ իրենք զիրենք սկսան նկատել Հայ ազգին ապագայի յոյսը, եւ սկսան քալել հասակնին ուղիղ, կուրծք ու գլուխ բարձր բռնած»¹⁰⁰:

Կարևոր առաջընթաց էր որբանոցում մարզական կյանքի ակտիվացումը: Անդրանիկ Ծառուկյանն այս կապակցությամբ գրում է. «...թաղին մեջ շինվեցավ մարզարան մը, մեծ տղաքը ֆուտբոլ ունեցան և բոլորս միասին ունեցանք պարոն Լևոնը»¹⁰¹: Վերջինս մարզիչ էր, ու մարմնամարզությունը որբանոցի ծրագրի անբաժան մասն է դարձրել:

Կրթական ոլորտում դասընթացները նախկինի նման շարունակվել են: Նշան Կ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ որբանոցում երեխաները սովորում էին հայերեն, անգլերեն և ֆրանսերեն՝ հավելելով. «Մէկ-երկու դասարաններու Ազգային պատմութեան դասաւանդութեան հանդիպեցայ, չէ կարելի հիացումս չի յայտնել այդ առթիւ»¹⁰²:

96 Լալեան, *Յուշանկարեան*, 199:

97 «Հալեպի հայկական որբանոցը», *Սուրիական մամուլ* (Հալեպ), 17 օգոստոսի 1922, Ա տարի, թիվ 55:

98 Նույն տեղում:

99 Լալեան, *Յուշանկարեան*, 206-210:

100 Նույն տեղում, 199:

101 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 119:

102 Լալեան, *Յուշանկարեան*, 207:

1923 թ. դրությամբ 900 երեխաներից 614-ը կանոնավոր կերպով դպրոց են հաճախել՝ հետևյալ բաժանումով¹⁰³՝

Նախակրթարան	130 տղա	150 աղջիկ
Ծաղկոց	191 տղա	93 աղջիկ
Մանկապարտեզ	25 տղա	25 աղջիկ

Ատուր Լևոնյանն իր «Հալեյի Հայկական Որբանոցը» տեղեկագրում գրում է. «Որբանոցիս սաներն ու սանուհիները առաջին օրէն սկսեալ շարունակ դաստիարակուած են իբր հարազատ Հայեր, հայ տոհմային կրթութեամբ»¹⁰⁴:

Որբերի գրագիտության մակարդակը բարձրացնելու համար որբանոցում գրադարան է բացվել ամերիկացի հիվանդապահուհի Նորթոնի ջանքերով, ով սեփական նախաձեռնությամբ գրքեր էր հավաքում, ինչպես նաև առաջարկում էր որբանոց այցելողներին մեկական գիրք նվիրել¹⁰⁵:

Որբանոցի ղեկավարությունը կարևորություն է տվել նաև երաժշտության դասերին: Ազգային վարժարանների երաժշտության ուսուցիչ Գևորգ Նալբանդյանի ջանքերի շնորհիվ նվագախումբ է ստեղծվել, որը ողջ քաղաքով հարգանք է վայելել: Որբանոցն ունեցել է նաև կույրերի նվագախումբ, ինչպես նաև 80 հոգանոց քառաձայն երգչախումբ՝ Ազնիվ Մանուկյանի ղլխավորությամբ: Երգչախմբի կատարմամբ «Սոնա Յար» երգը հիացրել է 1923 թ. որբանոց այցելած Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիական Հանրապետության Բարձրագույն կոմիսար Վեյգանին, ով, լսելով կատարումը, խնդրել է այն ևս մեկ անգամ կրկնել¹⁰⁶: Մի քանի օր անց որբանոցի ղեկավարությունը կոմիսարից նամակ է ստացել, որտեղ նշված է եղել. «Լիբանանի և Սուրիոյ մէջ չեն յիշեր տեղ մը ուր այցելած եւ այդքան տպատրուած ու գոհ մնացած ըլլամ որքան ձեր Հայկական որբանոցին մէջ»¹⁰⁷:

1922-1924 թթ. ընթացքում որբանոցում որպես գիշերօթիկ վարժարանի ուսուցիչ Արամ Շարվիղյանի հետ պաշտոնավարած Հովակիմ Պազալեանը պետք է պատրաստեր որբերի կենսագրություններն ու թղթածրարները¹⁰⁸, սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել որևէ տեղեկություն այս նախաձեռնության կյանքի կոչման վերաբերյալ:

Որբանոցի նյութական բարեկեցության շրջանը երկար չի տևել, Ամերիկյան նպաստամատուցի նյութական օժաղակությունն աստիճանաբար նվազել է, այնուհետև՝ դադարել: 1923 թ. վերջին Ամերիկյան նպաստամատուցի ղեկավարությունից ներքին հրահանգ է եղել, ըստ որի՝ որբերին տեղավորեն տներում՝ իբրև սպասուհի, արհեստա-

103 Սուրիական փարեցոյց, Ա տարի (Գահիրէ, Զարեհ Պէրպլերեան, 1924), 57-58:

104 Սուրիական փարեցոյց, 57:

105 Լալէեան, Յուշամարեան, 209:

106 Նույն տեղում, 201-202:

107 Նույն տեղում:

108 Տաթևեան, «Հալեյի հայկական որբանոցը», 38:

նոցներում՝ իբրև աշակերտ, իսկ ավելի մեծահասակներն էլ մեկնեն տարբեր երկրներ: Այս հրահանգին Աստուր Լևոնյանն ընդդիմացել է՝ առաջարկելով որբանոցի խնամատարությունը հանձնել ազգային մարմիններին՝ հույս ունենալով արհեստանոցի եկամուտներով և հայ բարերարների նպաստներով շարունակել որբանոցի գործունեությունը, որին էլ Նպաստամատույցը չի համաձայնել, անգամ որպես փոխզիջումային տարբերակ առաջարկել են Լևոնյանին Բեյրութի իրենց հաստատություններից մեկում պաշտոն տալ:

Բանակցությունները տևում են ամիսներ: Դեպքերի մանրամասներին տեղեկանում ենք Տեր Ներսես քահանա Թավուզճյանի՝ Ջունեյիի իր կարգակից եղբորը՝ Տեր Գարեգին քահանա Պողարյանին գրած նամակից՝ թվագրված 7 հունիս 1924 թ.: Նա տեղեկացնում է, որ Նպաստամատույցի նպատակն է պահել արհեստանոցը, իսկ դպրոցը տեղափոխել Ջիրեյլ (Բիրլիոս): Բացի այդ՝ նշենք, որ ներքին տարածայնություններ էին առաջ եկել Լևոնյանի և Նպաստամատույցի պատասխանատու աշխատակից Մըրֆիի մեջ: Վերջինիս ավարտական քննության օրը պահանջել էր որբանոցի 15 աղջիկների՝ արաբ ընտանիքներում որպես սպասուհի աշխատանքի տեղավորել, իսկ ավելի ուշ առաջարկել, որ աշխատանոցի տղաներից շատերը լքեն արհեստանոցը: Երկու պահանջներն էլ հիմնավոր պատճառներով մերժվել էին, սակայն ի վերջո Աստուր Լևոնյանը հրաժարական է տվել, իսկ նրա փոխարեն պարտականությունները ստանձնել է որբանոցի հոգաբարձության անդամ Տիգրան Պեքճիպաշյանը¹⁰⁹: Այս ընթացում Ա. Լևոնյանը դիմել է Կիլիկիո Տան Սահակ Բ կաթողիկոսին, ՀԲԸՄ-ին, Հալեպի առաջնորդարանին՝ խոստանալով առկա եկամուտներով և գործերով պահել որբանոցը ևս երկու տարի, բայց դրական արդյունքի չի հասել:

Որբերի մի մասը տեղափոխվել են Նպաստամատույցի Լիբանանի կենտրոններ՝ մասնավորապես Ջիրեյլ: Ամերիկյան նպաստամատույցի վարչության և ՀԲԸՄ-ի համատեղ որոշմամբ՝ որբերի մի մասը մեկնել է Ֆրանսիա՝ ազարակներում աշխատելու համար: Որբերի անվտանգության և աշխատանքով ապահովելու հարցում Գաբրիել Նուրատունկյանը¹¹⁰ կարողացել էր Ֆրանսիայի հողային նախարարության հետ պայմանավորվածություն ձեռք բերել: Աղջիկների մեծ մասը Հալեպում և Բեյրութում որպես սպասուհի է սկսել աշխատել: Սակայն նշենք, որ այնուամենայնիվ, եղել են որբեր, որոնք որևէ հարազատ չեն ունեցել: Այս խմբի որբերից տարիքով մեծ՝ մոտավորապես 50 հոգի, տեղափոխվել են ՀԲԸՄ Հալեպի Կիլիկյան արհեստանոց-որբանոց¹¹¹:

Որբանոցի գործունեության վերջին շրջանում կարևոր դեր է ունեցել Նպաստամատույցի տնօրենի օգնական Լուի Հեքիմյանը¹¹², ով որբանոցի կարիքների համար ջանք չի խնայել ու զբաղվել է որբերի տեղավորման աշխատանքներով:

109 Լալեան, *Յուշանկարեան*, 219:

110 Գաբրիել Նուրատունկյանը Հայ ազգային պատվիրակության նախագահն էր (մայիս 1921-1923) և ՀԲԸՄ փոխնախագահը (1921-1932):

111 *Դար մը պայրմութիւն*, 151:

112 Հազարապետ Լուի Հեքիմյանը Եգիպտոսում անգլիական բանակում կարևոր պաշտոն է ունեցել: 1918 թ. Պորտ Սաիդում նա տեղի հայությանը աջակցել է, մասնակցել է նաև որբերի մի կայանից մյուսը փոխադրելու աշխատանքներին: Մասնակցել է նաև Այնթափի 1920-1921 թթ. ինքնապաշտպանության մարտերին:

Որբանոցի գործունեությունը դադարեցվել է 1924 թ. ամռանը, երբ բոլոր որբերը հիմնականում հարազատ, օգնող ձեռք են գտել կամ արդեն կարողացել են իրենց աշխատանքով օրվա ապրուստը հայթայթել:

Մինչ այժմ Սաբուն Խանի և որբանոցի այլ շենքերից շատերի վրա նշմարվում են հայ որբերի հետքերը՝ անուն ազգանունները՝ փորագրված իրենց «դողդոջուն մատներով»¹¹³: Նշենք, որ որբանոցի սաներից է եղել նաև հայտնի նկարիչ Կալենցը, ում Անդրանիկ Ծառուկյանը հետևյալ կերպ է բնութագրում. «Հարությունը կը հաջողեր զարմանալի նմանություն մը տալ իր գծած պատկերներուն: Գծագրությունը դարձած էր ստորյա իր միակ զբաղումը: Տասը տարեկանին հայտնի էր արդեն, թե ուժեղ բան մը կը խլրտի իր մեջ»¹¹⁴:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ որբանոցը վստահելի ապաստան է եղել որբերի համար: Այն գործել է մեր ժողովրդի համար օրհասական ժամանակահատվածում՝ իր գործունեությունն անընդմեջ շարունակելով գրեթե տասը տարի. փաստ, որ քիչ որբանոցների է հաջողվել: Իր գործունեության ընթացքում որբանոցն ընդունել է շուրջ 8.000 որբի, որոնցից 4.000-ը դուրս են եկել որբանոցից երկարատև կամ կարճատև մնալուց հետո: Միայն 1924 թ. 450 աղջիկներ ամուսնացել են ու հայ ընտանիքներ կազմել: Որբանոցի գործունեության տարիներին նշանակալի մեծ դեր է ունեցել Վերապատվելի Շիրաճյանը: Խնդրո առարկա ժամանակահատվածում տարբեր առիթներով որբանոցը փակելու բազմաթիվ փորձեր են արվել, մի քանի անգամ Պատվելի Շիրաճյանը փնտրվել է իբրև «վտանգավոր տարր», բանտարկվել ու աքսորի սպառնալիքներ ստացել: Այնուամենայնիվ, հարկ է մեջբերել Պատվելիի գործընկեր, աջակից բժիշկ Հովհաննես Պողոսյանի խոսքերը, որը նշում է, որ շատերը ձաղկեցին ու քննադատեցին Վեր. Շիրաճյանի որբախնամ գործը հայաջինջ շրջանում, սակայն նրանցից շատերը ոչ միայն թաքստոցներում էին և չէին համարձակվում որբեր հավաքել, այլև վախենում էին անգամ դուրս գալ իրենց թաքստոցներից¹¹⁵: Ահարոն Շիրաճյանը հաջորդ ղեկավարությանը փոխանցեց կայացած, ներքին վարչական ստորաբաժանումներով գործող, համեմատաբար առողջ միջավայրում որբերին կրթություն ու ապագայի համար կայունություն ապահովող հաստատություն: Հաջորդ ղեկավարությունն էլ Ատուր Լևոնյանի գլխավորությամբ հնարավոր քայլերը ձեռնարկեց որբանոցի հետագա գործունեության ու որբերի վերջնական տեղավորման հարցերում: Որբանոցը մինչև վերջ հավատարիմ է մնացել իր կոչմանը՝ որբերին պատրաստել գործնական կյանքին, որպեսզի որբանոցից դուրս գալուց հետո կարողանային ապրել սեփական միջոցներով:

113 Մինասեան, «Մանկութիւն չունեցողներուն», 23:

114 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 84:

115 Պողոսեան, «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը», 414:

Narine V. Margaryan

PhD in History

THE ARMENIAN ORPHANAGE OF ALEPPO (1915-1924)

Key words: Armenian Genocide, deportations, Aleppo, orphans, orphanage, workshops, education, relief, survival, Aharon Shirachyan, Atur Levonyan, memoirs.

During and after the Armenian Genocide many Armenian benevolent, missionary orphanages were opened in different places of the Ottoman Empire to save the remnants of the Armenian people. The Aleppo orphanage has a unique place in the chain of these orphanages. It was one of the few established by the Armenian initiative during the Genocide and continued its uninterrupted activities till 1924.

The paper describes the activities of the orphanage, numbers of orphans, details of educational, financial, healthcare and manufactory spheres. The activities of the caretaker bodies as well as the problems of the orphanage and the ways of their settlement are analyzed. The paper also deals with the political situation of the region, which has had a direct impact on the orphanage. The main sources of the paper are the Bulletin published by the orphanage, the Bulletin prepared by the Armenian National Delegation as well as the memoirs of the orphans and periodicals.

Нарине В. Маргарян

кандидат исторических наук

АРМЯНСКИЙ СИРОТСКИЙ ПРИЮТ АЛЕППО (1915-1924)

Ключевые слова: Геноцид армян, депортация, Алеппо, сироты, сиротский приют, мастерская, образование, вспомоществование, спасение, Аарон Шираджян, Атур Левонян, мемуары.

В годы Геноцида армян и после в различных городах Османской империи с целью спасения оставшихся осколков армянского народа были открыты многочисленные армянские благотворительные миссионерские сиротские приюты. Из подобного рода заведений можно выделить армянский сиротский приют в Алеппо. Особенностью данного приюта являлось то, что он был основан по инициативе самих армян еще в то время, когда процесс уничтожения армянского населения Османской империи был в самом разгаре, и бесперебойно функционировал до 1924 года.

В статье представлены основные аспекты деятельности сиротского приюта: сведения о численности сирот, подробности организации образовательного процесса, финансировании, мерах по обеспечению здоровья и организации мастерских, а также проблемы, с которыми сталкивалось заведение, и меры по их решению.

В статье также освещены события региональной политики рассматриваемого времени, которые имели непосредственное влияние на деятельность сиротского приюта.

Основными первоисточниками для написания статьи послужили бюллетень сиротского приюта, бюллетень, подготовленный Армянской национальной делегацией, а также мемуары воспитанников сиротского приюта и периодика времен событий.

REFERENCES

Aharonyan, Ver Y. P. Վեր. Ա. Շիրաճեան՝ քաջ ստաշտորդը [Rev. A. Shiradzian: The Brave Leader], *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Alt'uncan, Asatur, «Նամակ խմբագրութեան» [A Letter to Editorial Board], *Suriakan mamul* (Aleppo), 17 September, 1922, no. 64;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթոնյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12;

Ch'olaqean, Yakob. «Հայ վերապրողներու տեղաբաշխումը եւ կրթական գործի կազմակերպումն ու դպրոցները Սուրիոյ մէջ (1918-1946)» [The Settlement of the Armenian Survivors and the Organization of the Education and Schools in Syria] in *Armenians of Syria, Conference Proceedings*. Aleppo: HU PESS, 2018: 261-304;

Det, «Որբանոցին մէջ հանդէս մը» [A party in the Orphanage]. *Hay Dzayn* (Aleppo), 8 January, 1919, no. 48;

Erets'yan, Tigran. *Որբերու բոնար 1915-1921* [The Orphans' Nest, 1915-1921]. Aleppo: Ani, A. E'qmeqchean, Salipe, 1934;

Khrlobean, Rev. Tigran. «Այնպէս ինչպէս կը ճանչնամ Վեր. Ահարոն Շիրաճեանը» [How I know Rev. Aharon Shiradzian]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Kyureghyan, Armenak. *Կեանքս 1915-1918 թուականներին* [My Life in 1915-1918]. <http://www.raa-am.com/raa/public/publish.php?clear=1&mid=5&more=1&cont=33&obid=112&content=show>;

Lale'ean, Sargis. *Յուշանկարեան նուիրուած Ատուր Յ. Լեւոնեանի: Բնքնակենսագրութիւն եւ դրուագներ իր կեանքէն ու գործէն* [Memoires Devoted to Atur Y. Levonyan: Autobiography and Episodes from His Life and Activities]. Beirut: Atlas, 1967;

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրութեան պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Margaryan, Narine. *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ փառագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները 1915-1924 թթ.* [The Status of the Armenian Refugees Established in Syria as a Result of the Armenian Genocide and the Armenian-Arab Relations in 1915-1924]. Yerevan: Collage, 2013;

Minasean, Mihran. ««Մանկութիւն չունեցողներուն» տաքով բոյնը՝ Հալէպի հայկական որբանոցը» [The Warm Nest of Children without a Childhood: the Armenian Orphanage in Aleppo]. *Shavigh* (Aleppo), 1999, no. 1;

Najaryan, Eghia. «Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում (1918 հոկտեմբեր – 1919 հունիս)» [Armenian-Arab Relations in Syria (October 1918 – June 1919)]. *Merdzavor ev Mijin Arevelqi erkrner u zhoghovurdner*, 6 (1976): 128-169;

Nat'anean, Miqael. «Որբերու աշխարհէն, Հայ լեզուի մարտիրոսութիւնը» [From the world of the orphan: Martyrdom of Armenian Language]. *Hay Dzayn* (Aleppo), 7 January, 1919, no. 47;

Poghosean, Toqt'. «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը» [The Founder of the Great National Initiative]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Poyachean, Elmas. «Հայկական որբանոցի կեանքէն» [From the Life of the Armenian Orphanage]. *Janasér* (Beirut), 1 October, 1964;

Sharvoghlean, Aram. «Կարգ մը թուանշաններ որբանոցի կեանքէն», [Some Data on the Orphanage Life]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Shirach'ean, Aharon. «Վեր. Շիրաճեանի Գործակիցները» [Rev. Shirachian Partners]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Sperts'i. «Որբանոցը. Ա» [The Orphanage: A]. *Taragir* (Aleppo), 18 December, 1918, no. 4;

Sperts'i. «Որբանոցը. Բ» [The Orphanage: B]. *Taragir* (Aleppo), 18 December, 1918, no. 5;

T'op'uzyan, Hovhannes. *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն* [The History of Syrian and Lebanese Armenian Communities]. Yerevan: Academy of Sciences of Arm. SSR, 1986;

Tat'evan, Bakur. «Հալէպի հայկական որբանոցը» [Armenian Orphanage in Aleppo]. *Geghard, Suriahay taregirq* 2 (1976-1978): 376-387;

Tsarukyan, Andranik. *Մանկություն չունեցող մարդիկ* [People Without a Childhood]. Yerevan: Haypethrat, 1963;

Kevorkian, Raymond and Tachjian, Vahe (eds.). *Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, 1906-1940* [A Century History of the Armenian General Benevolent Union, 1906-1940]. Cairo, Paris-New York: Impression, Brochage, 2006;

«Ամանորի հանդէս որբանոցի մէջ» [New Year Party in the Orphanage]. *Hay Dzayn* (Aleppo) 9 January, 1919, no. 49;

«Այժմու հայ որբանոցը» [The Armenian Orphanage Nowadays]. *Taragir* (Aleppo), 13 December, 1918, no. 2;

«Հալէպի հայկական որբանոցը» [The Armenian Orphanage in Aleppo]. *Suriakan mamul* (Aleppo), 17 August, no. 55, 1922;

«Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կաջութեան, որբանոցներու, հոգաբար մարմիններու մասին և վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր [Armenian Orphans. Bulletin on Armenian Orphans, Orphanages, Caring Offices and Statistical Lists]. Manuscript bulletin, 1923, unpublished.

«Հարցումներ պատկանեալ իշխանութեան» [Questions Addressed to Concerned Authorities]. *Suriakan mamul* (Aleppo), 12 November, 1922, no. 80;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919) [Bulletin of the Armenian Orphanage in Aleppo]. Aleppo, 1919.

**ՄԱՐԻ ԵՎ ՎԻԼՀԵԼՄ ՇՊԻՔԵՐՆԵՐ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԿԱՆԱՏԵՄ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀՈՒՄԱՆԻՏՍ ԱՄՈՒՄԻՆՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Վիլհելմ Շպիքեր, Մարի Շպիքեր, գերմանացի ականատեսներ, վկայություններ:

Մարի և Վիլհելմ Շպիքերները Հայոց ցեղասպանության գերմանացի հումանիստ ականատեսներից են, ովքեր ձեռնամուխ են լինում մարդասիրական աշխատանքների՝ փորձելով օգնել հայ արքայալիներին, որոշ դեպքերում՝ նաև փրկել նրանց: Շպիքեր ամուսիններն Օսմանյան կայսրության հայերի շրջանում իրենց գործունեությունը ծավալել են դեռևս 19-րդ դարի վերջից, նախ՝ Կ.Պոլսում, ապա՝ Մարաշում: Առաջին աշխարհամարտի ու Հայոց ցեղասպանության տարիներին ամուսինները Հալեպում էին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել գերմանացի Շպիքեր ամուսիններին որպես Հայոց ցեղասպանության ականատեսներ, նրանց մարդասիրական գործունեությունը, վերհանել և ակտիվ գիտական շրջանառության մեջ դնել նրանց վկայությունները ներառող սկզբնաղբյուրները: Ներկայացվում է, թե ինչ հանգամանքներում նրանք կարողացան մնալ հումանիստական դիրքերում, անգամ կյանքեր փրկել (թեկուզ և ժամանակավոր) ինչպես Հայոց ցեղասպանության տարիներին, այնպես էլ հետագայում:

Հոդվածը գերազանցապես պատրաստվել է Շպիքեր ամուսինների զեկույցների, «Արևելքում քրիստոնեական օգնության միություն» առաքելության ու Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիվի, ինչպես նաև ժամանակի գերմանալեզու մամուլի և առաջնային այլ գրականության հիման վրա:

Հայոց ցեղասպանության տարիներին եղել են բազմաթիվ օտար ականատեսներ, որոնց մի մասի վկայությունները, հուշերը հետագայում անհայտ են մնացել կամ սակավ ուսումնասիրվել: Եթե բրիտանացիները կամ ֆրանսիացիները ստիպված էին Առաջին աշխարհամարտի սկսվելուց առաջ կամ դրա սկսվելուն պես լքել իրենց գործունեության վայրը՝ որպես թշնամի երկրի հպատակներ, ապա զգալի թվով ամերիկացիներ, գերմանացիներ, շվեյցարացիներ ու սկանդինավներ, այնուամենայնիվ, մնացել էին Օսմանյան կայսրությունում՝ դառնալով Հայոց ցեղասպանության ականատեսներ: Վերջիններիս շարքում հատկապես պետք է կարևորել գերմանացիների վկայությունները: Բանն այն է, որ երբեմն թուրք կամ թուրքամետ ժխտողական պատմաբանները փորձում են նվազեցնել շատ ականատեսների վկայությունների կարևորությունը: Նրանց հիմնական փաստարկներից մեկն այն է, որ շատ ականատեսներ «կողմնակալ» վերաբերմունք են հանդես բերել՝ փորձելով իրենց վկայություններով ի շահ սեփական երկրի վնաս հասցնել Օսմանյան կայսրությանը: Գերմանացի ականատեսների պարագայում այս «փաստարկն» ուղղակի հիմնազուրկ է դառնում, քանզի Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակից երկիր էր, հետևաբար նրա քաղաքացիները պակաս շահագրգռված չէին պատերազմում թուրքերի, ուրեմն նաև գերմանա-

թուրքական դաշինքի հաջողություններով և նման վկայություններով սեփական երկրին վնասելու որևէ շահագրգռվածություն չէին կարող ունենալ:

Եթե փորձենք ընդհանրացնել, թե հիմնականում որ խմբերի ներկայացուցիչներ էին գերմանացի ականատեսները, կատանանք հետևյալ պատկերը. ա) սպաներ, զինվորականներ, ռազմական ոլորտի ներկայացուցիչներ, բ) դեսպանատան, հյուպատոսությունների աշխատակիցներ, գ) երկաթուղիների, (Բաղդադի և Անատոլիական), առևտրային և բանկային (Deutsche Bank, Palästina Bank) ոլորտի ներկայացուցիչներ, դ) գերմանական առաքելությունների և հումանիտար-կրթական բնագավառի այլ ներկայացուցիչներ:

Այս համատեքստում Մարի և Վիլհելմ Շպիբերների վկայություններն առանձնանում են մի քանի հանգամանքներով: Նախ՝ ամուսինները երկու՝ իրարից ամբողջովին տարբեր հաստատությունների՝ Հալեպի գերմանական ռեալական դպրոցի և Բաղդադի երկաթուղու աշխատակիցներ էին, հետևաբար առնչվում էին մարդկանց ավելի լայն շրջանակի հետ: Բացի այդ, երկուսն էլ Օսմանյան կայսրությունում էին շատ երկար ժամանակ՝ Մարի 1897 թ., իսկ Վիլհելմը 1898 թ. ի վեր, հետևաբար շատ լավ էին ճանաչում ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին ու կայսրությունում տիրող ավանդույթներն ու բարքերը, որոշ չափով՝ նաև լեզուները: Չլինելով ռազմական ոլորտի ներկայացուցիչներ՝ նրանք գերծ էին իրենց վկայություններով զինվորական գաղտնիք հրապարակելու վտանգից: Շպիբերների վկայությունների հավաստիությունը Գերմանական կայսրության կանցլերին ուղարկած իր նամակներում երաշխավորել է նաև Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռյոսերը: Անգամ Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ժամանակ դրանք օգտագործվել են վերջինիս փաստաբանների կողմից: Նրանց վկայությունները հիմնականում հստակ են. նշվում է իրադարձությունների վայրը, առկա են զգալի թվով այլ ականատեսների (նաև գերմանացի) կամ դեպքերի մասնակիցների անուններ, թվային տվյալներ:

Շպիբեր ամուսինները որպես ականատեսներ և հումանիստներ

Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի տարիների ընթացքում ծառայած զինվորների և սպաների թիվը՝ հաշվի առնելով ու ավելացնելով վերոհիշյալ մյուս բնագավառների ներկայացուցիչներին՝ կարելի է փաստել, որ Հայոց ցեղասպանության հարյուրավոր (գուցե հազարավոր) գերմանացի ականատեսներ (նաև մասնակիցներ) են եղել², որոնց մի փոքր մասը հայերի հետ առնչվում էր ցեղասպանությունից ավելի քան մեկ տասնամյակ առաջ:

1 Աշխարհամարտի տարիներին գերմանացի սպաների թիվն Օսմանյան կայսրությունում հասնում է 700-800-ի, իսկ զինվորներինը՝ շուրջ 12.000-ի: Vahakn Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide: a Review of the Historical Evidence of German Complicity* (Cambridge: Blue Crane Books, 1996), 110.

2 Պետք է նկատել, որ ելնելով վերոնշյալից՝ Հայոց ցեղասպանության գերմանացի ականատեսների, առավել ևս մասնակիցների «ցուցակագրումը» և նրանց վերաբերյալ լայնածավալ ու հնարավորինս մեծ թվով վկայությունների ընդգրկմամբ աշխատություն-հանրագիտարանը (նաև գերմանացի գործընկերների ներգրավմամբ) խիստ օգտակար կարող էր լինել իրավիճակն ավելի հստակ պատկերացնելու համար՝ միաժամանակ ունենալով լուրջ կիրառական նշանակություն:

Երանցից էին Շպիքեր ամուսինները, ովքեր Օսմանյան կայսրությունում էին գտնվում դեռևս 19-րդ դարի վերջից: Մարի Լյուդեքեն (հետագայում՝ Մարի Շպիքեր, Marie Spiecker)³ Կ.Պոլիս էր ժամանել դեռևս 1897 թ. ապրիլի 14-ին «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությանը (ԱՔԲԳՕՄ)»⁴ պատկանող Կ.Պոլսի Բերեք թաղամասում բացված գերմանական որբանոցում⁵ աշխատելու նպատակով, ուր մեկ տարի անց ժամանում է նաև Վիլհելմ Շպիքերը (Wilhelm Spiecker)⁶: 1899 թ. գարնանը նրանք ամուսնանում են և տեղափոխվում Մարաշ՝ ստանձնելու 1896 թ. հիմնադրված ԱՔԲԳՕՄ-ի⁷ միսիոներական կայանի ղեկավարումը⁸, որտեղ Վիլհելմ Շպիքերը մնում է մինչև 1907 թ. (որպես կայանի ղեկավար միայն մեկ տարի)⁹: 1911 թ. Վիլհելմ Շպիքերը փորձում էր աշխատանքի անցնել

3 Մարի Շպիքերը (Marie Spiecker) (օրիորդական ազգանունը՝ Լյուդեքե) ծնվել է 1872 թ. մարտի 1-ին Նոյշտեդտիում (Պոմերան): Մասնագիտությամբ ուսուցչուհի էր: Մարաշում 1900-1906 թթ. ունեցել է չորս դուստր: Որբախնամ, աղքատախնամ և կրթական գործունեությունից գատ զբաղվել է նաև հոգևոր-քարոզչական գործունեությամբ: Այս մասին ավելի մանրամասն տես Marie Spiecker, “An die Pflege-Eltern unserer Marasch-Waisen,” *Mitteilungen aus dem Orient* (Frankfurt a. Main), April, 1900, 62-63; Marie Spiecker, “Der Herr thut Großes,” *Mitteilungen aus dem Orient*, Juli, 1900, 132-133; Marie Spiecker, “Hier ist eine Gelegenheit,” *Mitteilungen aus dem Orient*, Juli, 1903, 155-157; Pauline Skarnikat, “Reiseerlebnisse unserer Geschwister,” *Mitteilungen aus dem Orient*, Januar, 1904, 65-67.

4 Միությունը հիմնադրվել էր 1896 թ. հուլիսի 2-ին և նախապես կոչվել «Հայաստանի օգնության գերմանական միություն» (ՀՕԳՄ)՝ ունենալով երկու կենտրոնական կոմիտե (Մայնի Ֆրանկֆուրտի և Բեռլինի) ու մի շարք ենթակոմիտեներ: Հետագայում ՀՕԳՄ-ը տրոհվում է, ՀՕԳՄ-ի ժառանգորդը դառնում է Մայնի Ֆրանկֆուրտի կոմիտեն՝ վերանվանվելով «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միություն» (ԱՔԲԳՕՄ):

5 Որբանոցի բացման որոշումը կայացվել էր 1896 թ. օգոստոսի 28-ին ՀՕԳՄ երկրորդ համագումարի ժամանակ: “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V. (Hg.),” *Skizzen und Bilder aus dem Orient* (Dinglingen (Baden): St. Johannis-Druckerei, 1899), 54.

6 Վիլհելմ Շպիքերը (Wilhelm Spieker, հանդիպում է նաև Spieker տարբերակը, իսկ արևմտահայերեն գրականության մեջ՝ Սփիքըր) ծնվել է 1876 թ. հունիսի 6-ին Բելլեում (Լիպպե-Գետմոդ, Բիլեֆելդի մոտ): Մասնագիտությամբ ուսուցիչ էր: Որբախնամ-կրթական աշխատանքներից գատ Վիլհելմ Շպիքերը Մարաշում ակտիվ է եղել նաև աստվածաշնչյան թեմաներով հավաքներ, հոգևոր-քարոզչական գործունեություն իրականացնելու բնագավառում: Ավելի մանրամասն տես Wilhelm Spieker, “Eine Hochzeitsreise nach Armenien,” *Mitteilungen aus dem Orient* (Frankfurt a. Main), September, 1899, 84-85; Skarnikat, “Reiseerlebnisse unserer Geschwister,” 65-67; Խմբագրական, “Aus Marasch,” *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), Januar, 1906, 51.

7 ԱՔԲԳՕՄ-ի արխիվների մեծ մասն այրվել է Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի ունբակոծության ժամանակ, ինչի հետևանքով էլ ժամանակին իրենց աշխատակիցների՝ Շպիքերների մասին տեղեկություններն այս արխիվում սակավաթիվ են:

8 Խմբագրական, “Bericht für das Jahr 1907,” *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), April, 1908, 104. Մարաշի գերմանական միսիոներական կայանը հիմնադրվել էր դեռևս 1896 թ. աշնանը, սակայն առաջին գերմանացի աշխատակիցն այստեղ ժամանել էր միայն 1898 թ. սկզբին: Ելնելով հողվածի թեմայից՝ խիստ հակիրճ է ներկայացվում Շպիքերների՝ Մարաշում ծավալած գործունեությունը:

9 Խմբագրական, “Bericht für das Jahr 1907,” 104. 13 փետրվարի 1906 թվագրությամբ «ԱՔԲԳՕՄ Մարաշ ուղարկված աշխատակիցների օրենսդրության» տակ Վիլհելմ և Մարի Շպիքերներին են պատկանում առաջին երկու ստորագրությունները: Archiv des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient, Mappe O-001, Bestimmungen für die Deutschen Hilfsbund für christliches Liebeswerk im Orient auszusendenden Geschwister in Marasch, Frankfurt a. Main, 1906, 15.

Յոհաննես Լեփսիուսի ղեկավարած «Գերմանական արևելյան առաքելությունում»։ Վերջինս Վիլհելմին Ուրֆայի կամ Ուրմիայի կայաններում որպես ուսուցիչ աշխատանքի վերցնելու նպատակահարմարությունը հասկանալու համար ԱԲԲԳՕՄ տնօրեն Շուխարդտից տեղեկություններ է խնդրում նրա նախկին աշխատանքի մասին՝ խոստանալով դրանք գաղտնի պահել¹⁰։ Շուխարդտի հակիրճ պատասխանում գերագանցապես դժգոհություններ էին արտահայտվում Մարաշում Շպիքերի գործունեության վերաբերյալ։ Այնուամենայնիվ, ըստ Շուխարդտի, ակնկալվող աշխատանքը Վիլհելմը լիովին ի վիճակի էր կատարել¹¹։

Առաջին աշխարհամարտի տարիներին Շպիքեր ամուսինները Հալեպում էին, ուր և ականատես էին եղել Հայոց ցեղասպանությանը։ Մարին աշխատում էր գերմանական ռեալական դպրոցում (Realschule), իսկ Վիլհելմը՝ Բաղդադի երկաթուղում։ Ի տարբերություն շատերի՝ Շպիքեր ամուսինները չէին լուել, անմիջապես փորձել էին ընդվզել ստեղծված իրավիճակում, նամակներ ու զեկույցներ էին գրել՝ մանրամասն շարադրելով բռնագաղթն ու դրա հետևանքները, անգամ փորձել էին կյանքեր փրկել։ Շպիքերների մարդասիրական գործունեությանն աջակցել է նաև Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյուպերը (1871-1929)¹², որին ամուսինները, որպես դեպքերի ակասատեսներ կամ մասնակիցներ, պարբերաբար փոխանցում էին իրենց զեկույցները։ Դրանք հյուպատոսը կից գրությամբ ուղարկում էր ռայխսկանցյեր Բեթման Հոլվեգին՝ ավելացնելով, որ տեղեկության աղբյուրը խիստ հավաստի է։

Շպիքերների վկայությունները բովանդակային առումով մի քանի հիմնական ուղղություններ էին ներառում՝ աքսոր, սպանությունների իրականացման ձևեր, բռնաբարություններ, որբերի անմխիթար վիճակի նկարագրություններ, իրենց կամ գործընկերների կողմից ցուցաբերված օգնության դեպքեր, թուրքերի պահվածքը սպանություններից հետո։

Իր զեկույցներից մեկում Վիլհելմ Շպիքերը¹³ պատմում էր, թե ինչպես էր 1915 թ.

10 Lepsiushaus Potsdam e. V., Archiv, LAH 079, LE 1.170-1.186, NC 11.840-12.009, N. 11910, Herrn Direktor Schuchardt, 1.

11 Lepsiushaus Potsdam e. V., Archiv, LAH 079, LE 1.170-1.186, NC 11.840-12.009, N. 11909, Herrn Missionsdirektor Dr. Lepsius, 1.

12 Աջակցությունը փախադարձ էր։ Շպիքերներից բացի Ռյուպերի աջակիցների շարքում նշվում է նաև ԱԲԲԳՕՄ աշխատակցուհիներ Բեստրիցե Ռոհների, Բողիլ Բյորնի, Հանսինե Մարխերի, Կլարա Պֆայֆերի, Կալերավելթի գեղության քույրերի տան աշխատակցուհի և Հալեպի աղջիկների գերմանական դպրոցի տնօրեն Լինա Վայնկաուֆի ու այլոց անունները։ Kai Seyffarth, *Entscheidung in Aleppo - Walter Röbbler (1871-1929)* (Bremen: Donat Verlag, 2015), 128.

13 Վիլհելմ Շպիքերի մասին դրական է արտահայտվում նաև Հ. Գալուստեանը. «...Ան [Մր. Սփիքըր] կատարեալ հայասեր էր և չափազանց բարի անձնաորություն մըն էր։ Մեծ պատերազմի առն թուրքիոյ մէջ գտնուող գերմանացի միսիոնարներէն շատեր Հայոց հանդէպ իրենց բարեկամական դիրքը փոխեցին, սակայն Մր. Սփիքըր միշտ անկեղծ բարեկամ մըն էր և ջերմեռանդ պաշտպան մըն էր և Հայ ժողովուրդին և տեղահանութեանց միջոցին Հայ տարագրեալներուն օգնելով իր կյանքն ալ գոն տուաւ։ Անմոռանալի են իր սէրն ու գոհողութիւնները մեր ազգին համար»։ Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չեյթուն* (Ելի Եորք, 1934), 490։ Գրեթէ նույնությամբ Շպիքերին բնութագրում է նաև Վ. Գրիգորյանը. «...Վերջինս [միստր Սփիքըր] ազնիվ, բարի և շատ հայասեր մարդ էր։ Պատերազմի ժամանակ գերմանացի միսիոնարներից ոմանց նման նա չփոխեց իր վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Նա ջերմեռանդ կերպով պաշտպանում էր հայերին և ինքն

հուլիսի վերջին ութ հայ կանանց ու աղջիկների փրկել Ռ-աս-ուլ-Այնի ճանապարհից ու վերցրել իր խնամքի տակ: Նրանցից մեկին (ամուսինը սպանվել ու այրվել էր իր աչքերի առջև Խարբերդից Ռ-աս-ուլ-Այն ընկած ճանապարհին, իսկ յոթ ամսական միակ զավակը սովամահ էր եղել) Թուեմ (Touem) կոչվող կայարանի 7-8 աշխատակիցներն այնպես էին բռնաբարել, որ բժշկի և Շպիքերների կողմից վերջիններիս տանը խնամքի տակ վերցվելուց միայն երկու օր անց էր գիտակցության եկել¹⁴: Եվս մեկ կնոջ (իր երկու դուստրերի հետ միասին) Վիլհելմ Լինսմեյերի (Linsmeyer) օգնությամբ փրկել էր մի տասնապետի ու մոտ 15 զինվորի ձեռքից¹⁵: 14-ամյա մեկ այլ հայ աղջկա նրանք փրկել էին Հոջա կայարանի ղեկավարի բռնաբարությունից՝ սպառնալով նրան եղելության մասին տեղեկացնել Բաղդադի երկաթուղու ղեկավարությանը¹⁶: Այնուհետև Շպիքերը, շարադրելով սպանված ու Եփրատ նետված հայ կանանց ու երեխաների դիակների, կանանց նկատմամբ իրականացվող կամայականությունների, վերջիններիս ինքնասպանության մի շարք դեպքերի մասին, փաստում է, որ Ռ-աս ուլ-Այնում դեռևս կենդանի մնացած մարդիկ հազարավոր հայ գաղթականների մնացորդներն են միայն ու բացառապես կանայք ու երեխաներ¹⁷: Անգամ գերմանացիների (Բաղդադի երկաթուղու աշխատակից Լինսմեյերի և պահեստապետ Չենմանի) մոտ աշխատող երեք մահմեդական աշխատակիցներն էին լքել իրենց աշխատանքը՝ հայերին սպանելու նպատակով, քանզի վերջիններիս որպես պարզև տներ էին խոստացել հայկական գյուղերում¹⁸:

1915 թ. սեպտեմբերի 2-ին գրված և հյուպատոս Ռյուպերի միջոցով ուսյուսկանցլերին ուղարկված մեկ այլ նամակում Շպիքերը պատմում է հուլիս-օգոստոս ամիսներին Մարաշ կատարած իր այցի մասին, որտեղ նկարագրում է մի շարք գյուղերում՝ Սամում, Կարաբյույուքում, Չյուրուքկոզում, Ֆընդըջաքում, Ֆոնուզում ու այլուր իրականացված սպանությունների, բռնաբարությունների, կանանց վաճառքի դեպքերի մասին: Միայն Մարաշի մի դպրոցում Շպիքերը տեսել էր հարյուրից ավելի հայ կանանց ու երեխաների դիակներ՝ «պատառոտված փորերով, կտրատված ձեռքերով և բոլոր հնարավոր խեղումներով, որոնց թվում կային մեկից երկու տարեկան երեխաներ»¹⁹:

ել գոհ գնաց հայերի ցեղասպանության ժամանակ»: Վարդան Գրիգորյան, *Հայությանը նախընտրված կյանք. Հայրենուհի Հեղվիզ Բյուլի հայանապատ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911-1951 թթ.)* (Երևան, ՀՀ ԳԱԱ, ՀՅԹԻ, 1996), 19:

14 Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 46:

15 Wolfgang Gust (Hg.), “Der Konsul in Aleppo (Röbler) an den Reichskanzler (Bethmann Hollweg),” Anlage zu No. 81, in *Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts* (Springer: Klampen Verlag, 2005), 217.

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, 217-218:

18 Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 47. Հեղինակն իր հերթին հղում է անում A 23991. PA AA-Türkei 183, Bd. 38 փաստաթղթին:

19 Gust, “Der Konsul in Aleppo (Röbler) an den Reichskanzler (Bethmann Hollweg),” Anlage 5, 286.

Շպիքերը վկայում է նաև շրջակա գյուղերից Մարաշ բերված ու այստեղ գնդակահարված տասնյակ հայերի մասին, որոնց թվում անգամ երկու տարեկան երեխաներ կային²⁰: Շղթայակապ տղամարդիկ նախ մահմեդական բնակչության կողմից նվաստացումների էին ենթարկվել, որից հետո սպանվել: Անգամ գնդակահարվելուց հետո մահմեդականները շարունակել էին պատառոտել նրանց մարմինները: Նա նաև հավելում է, որ այդ ամբոխը Մարաշի ԱԶԲԳՕՄ կայանի Սալեմ հիվանդանոցի մոտով անցնելիս «Կեցցե Գերմանիան» էր գոչում²¹:

Բազմաթիվ են առանձին դեպքերի նկարագրությունները Վիլիելմ Շպիքերի վկայություններում. թուրքերի և քրդերի կողմից քարավանների վրա իրականացված հարձակումներ, կանանց նկատմամբ գործադրված բռնություններ, սպանություններ, դիակապտություն, անարգանք՝ հաճախ նաև հստակ անուններով ու թվային տվյալներով: Նա մանրամասն նկարագրում է Այրան-Փնար կոչվող բնակավայրում տեղի ունեցած բռնաբարություններն ու սպանությունները. «2500 հոգուց բաղկացած այս քարավանում ես տղամարդկանց չտեսա, բացառությամբ, հավանաբար, 30-40 հոգուց: 15 տարեկանից բարձր տղամարդիկ առանձնացվել էին և, հավանաբար, սպանվել: Մտածված կերպով այս հայերը շրջանցող ու վտանգավոր ճանապարհներով էին բերվել. Մարաշի վրայով չորս օրվա ճանապարհով բերվելու փոխարեն նրանք արդեն մեկ ամիս ճանապարհին էին: [...] Այնթապի մոտակայքում այս քարավանի բազմաթիվ կանայք Այնթապից քաղաքացիական անձանց կողմից գիշերը բռնաբարվել էին: Այրան-Փնար կոչվող վայրում հարձակման ժամանակ տղամարդիկ և կանայք կապկապվել էին ծառերին ու այրվել»²²:

Այնուհետև Շպիքերը նկարագրում է սպանությունների, անարգանքների ու բռնաբարությունների տեսարաններ Այնթապից, Մարաշից, Ալբիստանի մոտ գտնվող Բյովերեն գյուղից, Այնթապից հյուսիս գտնվող Բաշ-Փնար բնակավայրից: «Ինձ հետ ճամփորդում էին [Մարաշից] վեց հայ աղջիկներ, որոնցից հինգը ուսուցիչների ամերիկյան սեմինարիայից, մեկը գերմանական որբանոցից էին: Քարավանից 20 քայլ հեռավորության վրա զինվորներից մեկը [նրանք վեցն էին – Հ.Մ.)] սկսեց օդ կրակել: Մեկ ուրիշ զինվոր խլեց աղջիկներից մեկի ձեռքից անձրևանոցը և վստահաբար այլ բռնություններ կիրականացնել, եթե ես չմիջամտեի: Երբ ես իմ մտրակով գնացի նրա վրա, բոլորը փախան»²³: Իսկ Մարաշի մոտ գտնվող Ջամուպիլ բնակավայրի ճանապարհին Շպիքերի միջամտությամբ փրկում է իրեն ուղեկցող հային, որի վրա մոլլան ուղղել էր իր հրացանը²⁴: Փաստացի, իր օրինակով Շպիքերը բազմիցս կարողացել էր ցույց տալ, որ անհրաժեշտ ցանկություն ու կամք դրսևորելու դեպքում հնարավոր է կյանքեր

20 Նույն տեղում, 287:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, 287-288: Այս քարավանը նախապես մոտ 2.800 հոգուց էր բաղկացած և Գյուրյունից արտրվածներն էին ու հիմնականում ապահովված ընտանիքներից: Նրանց թվում կային նաև 400 բողոքական հայեր: Ալբիստանի ու Գյուրյունի կայմակամները նրանցից համապատասխանաբար 200 և 1.020 թուրքական լիրա էին վերցրել՝ խոստանալով ապահով Այնթապ հասցնել:

23 Նույն տեղում, 289:

24 Նույն տեղում:

փրկել, առավել ևս թեթևացնել հայերի տառապանքները՝ օգտվելով գերմանացի լինելու հանգամանքից:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ վիճակում էին քարավանները ժամանում Հալեպ՝ նա նշում է, որ Խարբերդից և Սվազից արտաքսված 18.000 հայերից քաղաք էին հասել 350 կին ու երեխա, իսկ Էրզրումից՝ 1.900-ից միայն 11-ը²⁵: Երբեմն կանանց ու երեխաների քարավանները օրեր շարունակ քայլել էին են ամբողջովին մերկ վիճակում:

Միևնույն զեկույցում Վիլհելմ Շպիբերը նկարագրում է Մարաշում գտնվող մի «այսպես կոչված հիվանդանոց»․ «[...] ես մի կիրակի մոտ 20 մետր լայնություն ու 40 մետր երկարություն ունեցող մի բակում տեսա 30 մահացած՝ այս ու այն կողմ ընկած: Մոտ 20-ն արդեն թաղվել էին այդ օրը: Այս 30 դիակները մինչև երեկո այդտեղ մնացին: Իմ կինը հանձնարարեց դրանք մթության մեջ տանել՝ վճարելով երեք հոգու մեկական մեջիդի: Դիակներից մեկի մաշկը մնաց տեղափոխողներից մեկի ձեռքերին կպած, այնպես որ քայքայման գործընթացն արդեն սկսվել էր: Մահացածների մեջ այրող արևի տակ այս ու այն կողմ ընկած էին մահացողներ ու ծանր հիվանդներ, մոտ 1.000 հոգի: Ամբողջն այնպիսի սարսափելի տեսարան էր ներկայացնում, ինչպիսին ես երբեք նախկինում՝ անգամ ամռանը, Մարաշում նկարագրված 24 հոգու գնդակահարության ժամանակ չէի տեսել [...]»²⁶:

Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունը նման զեկույցները գաղտնի էր պահում, իսկ դեռևս 1915 թ. աշնանից գործող գրաքննության օրենքն արգելում էր Գերմանիայում նման նյութերի տպագրումը: Փոխարենը Վիլհելմ Շպիբերի այս զեկույցը գրեթե ամբողջությամբ 1916 թ. նոյեմբերին հրատարակվում է շվեյցարական “Schweizerische Orient-Mission” պարբերականում՝ «Թուրքիայում մահացած մի գերմանացու գրառումներից» վերնագրով, ավագ ուսուցիչ, դոկտոր Էդուարդ Գրաստերի գրավոր թույլտվությամբ: Պարբերականում Շպիբերից մեջբերված հատվածն ավարտվում է արտաքսման հանձնաժողովի մի թուրք պաշտոնյայի պատասխանով, որին Վիլհելմ Շպիբերը դիմել էր չորս հայ երեխաների խնդրանքով. «Դուք չեք հասկանում, թե դուք ինչ եք ուզում: Մենք ցանկանում ենք ջնջել հայկական անունը: Ինչպես Գերմանիան է ցանկանում միայն գերմանացիներից բաղկացած լինել, այնպես էլ մենք ենք ցանկանում թուրքեր, միայն թուրքեր»²⁷:

Վիլհելմ Շպիբերը նշում է նաև այլ գերմանացիների անուններ, որոնք ականատես էին եղել սպանությունների զանազան տեսարանների²⁸:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 290:

27 M. Piranian, “Aus den Auszeichnungen eines in der Türkei verstorbenen Deutschen,” in *Schweizerische Orient-Mission*, 1. Jgg, November, 1916, S. 13-15. Kirchliches Archivzentrum Berlin, BMW 1-1982-06, Deutsche evangelische Missionshilfe (DEM), Orient - und Islam - Kommission, 10-12, <http://kab.scopearchiv.ch/Data/7/D36404.pdf> դիտվել է 20.02.2019.

28 Յոհ. Լեփսիուսի կողմից կազմված և 1919 թ. լույս տեսած դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի մեջ Վիլհելմ Շպիբերի վերոնշյալ վկայությունները բացակայում են: Johannes Lepsius (Hg.), *Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke* (Potsdam: Tempel Verlag, 1919).

Վիլհելմ Շպիբերի գեկույցները ուսյասկանցւերին էր փոխանցում ոչ միայն Հալեպի հյուպատոս Ռոյալերը: Կայսեր՝ Քաղաքացիական հարցերով հավատարմագրված գրասենյակի կողմից 1916 թ. սեպտեմբերի 10-ին ուսյասկանցւեր Բեթման-Հոլվեգին փոխանցված գեկույցում Վիլհելմ Շպիբերը շարունակում է ականատեսի իր վկայություններն աքտրվածների նկատմամբ իրագործվող դաժանությունների, մարդկանց թալանելու, նվաստացնելու և ոչնչացնելու բազմաթիվ եղանակների մասին ու ավելացնում. «Ինչ էս գրում եմ, միայն մի չնչին մասն է բոլոր այն սարսափների, որոնք երկու ամսից ի վեր այստեղ տեղի են ունենում, և որոնք ամեն օր ավելի մեծ ծավալների են հասնում: Սա միայն չնչին մասն է այն ամենի, որոնք էս ինքս եմ տեսել ու տեղեկացել ականատես դարձած ծանոթներից ու ընկերներից: Այս ամենի համար, ինչի մասին էս գեկույցում եմ, կարող եմ յուրաքանչյուր պահի թվային տվյալներ ու ականատեսների անուններ նշել»²⁹:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ իր գեկույցներում Վիլհելմը նկարագրել է ինչպես բռնագաղթի տարբեր տեսարաններ, այնպես էլ դրա ընթացքում իր միջամտությամբ փրկվածների պատմություններ:

Վիլհելմ Շպիբերի կինը՝ Մարին, ևս ապրել է Հալեպում ու անմասն չի մնացել տարագիրների մասին տարբեր գեկույցներ կազմելուց, ինչպես նաև անձամբ տարատեսակ աջակցություն ցուցաբերելուց: Այդ ժամանակ Մարին աշխատում էր որպես ուսուցչուհի Հալեպի գերմանական ռեալական դպրոցում: Նրա և ավագ ուսուցիչ դր. Մարտին Նիպագեի³⁰ հեղինակած գեկույց-նամակում խոսվում էր դպրոցի հարևանությամբ գտնվող շինության մասին (հատկացվել էր հատկապես ծանր հիվանդ աքտրյալներին), սակայն կատարվող իրադարձություններն ու դրանց հետևանքները փորձ էր արվում ներկայացնել գերմանական կրթության, հետևաբար նաև ազդեցության տարածման կարևորության համատեքստում՝ փորձելով գոնե այդ կերպ որոշակի աջակցություն ստանալ սեփական իշխանություններից. «[...] Մենք չենք ցանկանում կանգ առնել այն արյունալի սարսափների վրա, որոնցով ուղեկցվում է հայերին իրենց բնօրրանից տեղափոխումը. ոչ հազարավոր տղամարդկանց, ովքեր առանձնացված կամ երբեմն իրենց հարազատների աչքի առջև սպանվել էին, ոչ անթիվ աղջիկների, կանանց ու երեխաների, որոնք ենթարկվել էին իրենց հսկողների և նրանց հանցակիցների անարգանքին ու խեղամանը և որոնց մերկ դիակներն ընկած են ճանապարհների [...] Մենք ենթադրում ենք, որ Արտաքին գործերի նախարարությունն իր ներկայացուցիչների միջոցով տեղյակ է այն ամենին, ինչ կատարվում է այստեղ: [...] Մեր գործը չէ հայերի՝ իրենց բնօրրանից արտաքսման քաղաքական իրավունքը քննարկելը: Հետևյալը, սակայն, մենք ցանկանում ենք ու պարտավոր ենք բարձրաձայնել, որ գերմանական դպրոցական աշխատանքն այս երկրում երկարաժամկետ կտրվածքով անվերականգնելի վնասներ է կրում կանանց ու երեխաների զանգվածային սպանու-

29 Gust, "Das Geheime Zivil-Kabinet des Kaisers (Valentini) an den Reichskanzler (Bethmann Hollweg)," Anlage 4, "Bericht eines deutschen Beamten von der Bagdadbahn," 498-500.

30 Նիպագեն Հալեպ էր ուղարկվել Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության կողմից որպես տեղի գերմանական ռեալական դպրոցի ավագ ուսուցիչ: Gust, Anlage 3, "Bericht des deutschen Oberlehrers Dr. Niepage," 497.

թյան տեսքով արքայանան այս սարսափելի ձևերի պայմաններում, մի զանգվածային սպանություն, ինչպիսին պատմությունը մինչ այժմ դեռ չի տեսել»³¹:

Մարի Շպիքերը ոչ միայն գեկուցում էր իրավիճակի մասին, այլև փորձում էր անձամբ որևէ աջակցություն ցույց տալ խիստ ծանր վիճակում գտնվող տարագրյալների: Նա օճառ էր գնել ու բաժանել դեռևս կենդանի մնացած բազմաթիվ կանանց ու երեխաների (տղամարդիկ այլևս չկային այնտեղ): Բացի այդ, մի քանի կանայք նրա ղեկավարության ներքո սնունդ էին պատրաստում դեռևս կենդանի մնացածների համար, իսկ ինքը սնունդ էր բաժանում գաղթականներին³²: Այնուամենայնիվ, երբ տիֆի համաճարակն ավելի է տարածվում, Մարին ու դպրոցի մյուս աշխատակիցները ևս վարակվում են³³:

Մարին թեև վաղուց չէր հանդիսանում ԱԲԲԳՕՄ աշխատակից, սակայն ելնելով ստեղծված իրավիճակից՝ 1916 թ. հոկտեմբերի 18-ի նամակով ֆինանսական աջակցության է խնդրում նրանցից. «Մենք միայն այստեղ՝ քաղաքում ունենք 600-800 փոքրիկներ, որոնք որևէ հարազատ չունեն: Թե որտեղից կարող ենք մենք հայթայթել ամենաանհրաժեշտը, չգիտենք, դրան ավելանում է մոտալուտ ձմեռը»³⁴: Մարին, ինչպես նաև ամուսինն, իրենց վստահելի անձանց միջոցով կարողանում էին տարագիրներին նաև գումար բաժանել, որն ուղարկվել էր 1915 թ. աշնանը³⁵: Դրանով կարիքավորների համար առաքված գումարներն իրենց գործնական կիրառումն էին գտնում: Մարի Շպիքերն պարբերաբար հանդիպումներ էր ունենում հյուպատոս Ռյոսլերի հետ, ումից նաև գումար էր ստանում՝ տարագիրներին բաժանելու և օգնելու համար: Վերջինս նման հանդիպումը տեղի է ունեցել 1917 թ. փետրվարի 3-ին³⁶:

Վիլիելմ Շպիքերը, ցավոք, չի կարողանում վերադառնալ հայրենիք: Նա մահանում է Օսմանյան կայսրությունում (նրա մահվան հստակ օրն անհայտ է) հիվանդության հետևանքով³⁷: Որոշ ժամանակ անց Մարին, որը նաև չորս երեխաների մայր էր, վերադառնում է հայրենիք՝ Գերմանիա: Մարին հայրենիք վերադարձից հետո անգամ շարունակում է օգտակար լինել հայ ժողովրդին: 1921 թ. հունիսին Սողոմոն Թեղլիրյանի դատավարության ժամանակ Մարի Շպիքերը, ի թիվս այլոց, հանդես է գալիս որպես վկա, որի վկայությունները դատարանը պետք է լսեր դատավարության

31 Lepsius, "Deutsche Realschule in Aleppo," 165-167. Այս վկայություններն ամբողջ ծավալով հրատարակվել են Հալեպի գերմանական ռեալական ավագ դպրոցի ուսուցիչ, դր. Մարտին Նիպագեի հեղինակմամբ նաև առանձին գրքով 1917 թ., որը վերահրատարակվել է 1975 թ.: Niepage Martin, *The Horrors of Aleppo. Seen by a German Eyewitness* (London: T. Fisher Unwin LTD, 1917).

32 Gust, "Das Geheime Zivil-Kabinet des Kaisers (Valentini) an den Reichskanzler (Bethmann Hollweg)," Anlage 3, "Bericht des deutschen Oberlehrers Dr. Niepage," 494.

33 Նույն տեղում:

34 Marie Spieker, "Aus Briefen der Geschwister im Orient," *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), Februar 1916, 34.

35 Lepsius, "Kaiserlich Deutsches Konsulat, Aleppo, den 29. Januar 1916," 231.

36 Հանդիպումների ժամանակացույցը տես Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 252-269.

37 Heini Melidonian, *Vergangen, ... aber nicht vergessen! Erinnerungen und Erlebnisse eines armenischen Waisenkindes und der Missions-Station Marasch in der asiatischen Türkei* (Chemnitz: Kommissionsverlag, 1937), 21.

երկրորդ օրը՝ հունիսի 3-ին³⁸: Սակայն դատավարության կարճվելու պատճառով նա այդպես էլ ելույթ չի ունենում՝ պայմանավորված «դատարանի և երդվյալ ատենակալների կողմից հաստատված դատավճռի կայացման համար առկա ապացույցների բավարար լինելու հանգամանքով»³⁹: Որպես գրավոր վկայություն վերցվում է Մարիի ամուսնու՝ 1915 թ. հոկտեմբերի 6-ի զեկույցը⁴⁰: Այդ ժամանակ Մարին բնակվում էր Ռ-ուլերեն քաղաքում (ժամանակակից Թյուրինգիա երկրամաս, Roßleben a. d. Unstrut)⁴¹:

Մարի Շպիքերի հետագա գործունեության մասին տվյալները բացակայում են:

Ամփոփելով Շպիքեր ամուսինների վկայությունները Հայոց ցեղասպանության տարիներին ինչպես տարագրության, բռնությունների ու սպանությունների, այնպես էլ այդ ընթացքում իրենց գործունեության մասին՝ պետք է փաստել հետևյալը.

Լինելով Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանական կայսրության հպատակների վկայություններ՝ Շպիքերները չէին կարող միտում ունենալ իրենց զեկույցներով ու նկարագրություններով հանիրավի վնաս հասցնել իրենց դաշնակից երկրին, հետևաբար նաև Գերմանիային:

Շպիքերներն իրենց վկայություններում նշում են ցեղասպանության ականատես մի շարք այլ գերմանացիների անուններ:

Իրենց օրինակով Շպիքերները ցույց են տալիս, որ անհրաժեշտ վճռականություն հանդես բերելու պարագայում անգամ առանց լուրջ լծակների հնարավոր էր ոչ միայն այս կամ այն աջակցությունը ցուցաբերել հայ տարագիրներին, այլև առանձին դեպքերում անգամ փրկել նրանց մեկ տասնյակից ավելի թուրքերի ձեռքից: Գիծը

Նրանց աջակցության ձևերը տարբեր էին. տարագիրներին սնունդ կամ օճառ բաժանելուց մինչև Եվրոպայից օգնություն հայթայթելը, ստացված (նաև հյուպատոս Ռ-յուպերի միջնորդությամբ) միջոցներն իրենց վստահելի հայերի միջոցով տարագիրներին բաշխելը, այս ու այն կողմ ընկած դիակները թաղելը, իրենց զեկույցները Հալեպի հյուպատոսին փոխանցելը, որն էլ դրանք փոխանցում էր ռայխսկանցլերին, որոշ դեպքերում անգամ կանանց ու երեխաներին (հնարավոր է՝ որոշ ժամանակով) փրկելը՝ ապաստան տալով անգամ սեփական հարկի տակ:

38 Tessa Hofmann (Hg.), *Der Völkermord an den Armeniern. Der Prozeß- Talaat Pascha* (zweite ergänzte Ausgabe, Göttingen & Wien: Gesellschaft für bedrohte Völker, 1980), 5.

39 Նույն տեղում, 129:

40 Նույն տեղում, 131-132:

41 Հողվածի հեղինակը նամակով դիմել է Ռ-ուլերենի քաղաքապետարանին՝ Մարի Շպիքերի կամ նրա ժառանգների մասին լրացուցիչ տվյալներ գտնելու խնդրանքով, սակայն հողվածն ավարտելու պահին դեռևս որևէ պատասխան չի ստացվել:

MARI AND WILHELM SPIECKERS: A GERMAN HUMANIST COUPLE WITNESSING THE ARMENIAN GENOCIDE

Key words: Armenian Genocide, Ottoman Empire, Wilhelm Spiecker, Mari Spiecker, German eyewitnesses, testimonies.

SUMMARY

During World War I, thousands of Germans were working and serving in the Ottoman Empire, and a part of them witnessed the Armenian Genocide. Mari and Wilhelm Spieckers were in the Ottoman Empire starting from the end of the 19th century, and in 1915 they were working in Aleppo. Eyewitnessing deportation of Armenians they did not keep silence. They were sending reports with descriptions of violence and murders to the Consul of Aleppo. The latter was sending those to the Chancellor of the German Empire emphasizing that the information in these reports is highly credible. Not being satisfied with this, the humanist couple tried personally to be useful to the refugees. They distributed food and soap to them, found money for them, and in some instances saved lives by using the fact of being Germans.

Այկ Մ. Մարտիրոսյան

кандидат исторических наук

МАРИ И ВИЛЬГЕЛЬМ ШПИКЕРЫ: НЕМЕЦКИЕ СУПРУГИ ГУМАНИСТЫ, СВИДЕТЕЛИ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, Вильгельм Шпикер, Мари Шпикер, немецкие оцевидцы, свидетельства.

РЕЗЮМЕ

В годы Первой мировой войны в Османской империи работали и находились на военной службе тысячи немцев, часть которых стала свидетелями Геноцида армян. Мари и Вильгельм Шпикеры ещё с конца 19-го века находились в Османской империи, а в 1915 году они работали в Алеппо. Став очевидцами депортации армян, они не стали молчать, отправляя рапорты с описанием насилий и убийств консулу Германии в Алеппо, который передавал эти сведения канцлеру Германии, отмечая крайнюю степень достоверности этих рапортов. Не довольствуясь этим, супруги гуманисты пытались лично помогать депортированным армянам: раздавали еду и мыло, добывали деньги для них, а в некоторых случаях, пользуясь своим положением представителей нации, являющейся союзником Османской империи, спасали им жизни.

REFERENCES

Grigoryan, Vardan. *Էստոնուհի Հեդվիգ Բյուլի հայանպաստ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* [Life Dedicated to Armenians: Pro-Armenian Activity of Estonian Hedwig Büll in Cilicia and Syria (1911-1951)]. Yerevan: NAS RA, AGMI, 1996;

Kalousdian, Krikor. *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չէյթուն* [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988.

ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՐԱՇԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՄԻԳՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ (1896-1909 թթ.)

Բանալի քառեր՝ Մարաշ, Կիլիկիա, կրթություն, ուսում, որբեր, որբանոցներ, միսիոներներ, Համիդյան կոտորածներ:

Հոդվածը նվիրված է համիդյան կոտորածներից հետո Մարաշի որբանոցների կրթական կյանքի կազմակերպմանը հայ և օտարազգի մարդասերների և մարդասիրական կազմակերպությունների կողմից: Անդրադարձ է կատարվում հայկական, անգլիական և գերմանական որբանոցների լուսավորական ու կրթական հաջողություններին: Ներկայացնելով Մարաշի որբանոցներում ապաստանած երեխաների կրթական կյանքի հնարավորինս համապարփակ ուսումնասիրությունը՝ առանձնացրել ենք հայկական, անգլիական և գերմանական որբանոցներում իրականացվող կրթական ծրագրերի նշանակությունը սաների կյանքում: Հենվելով սկզբնաղբյուրային և օժանդակ գրականության վրա՝ հոդվածը փաստում է, որ հայկական որբանոցների հիմնումը բավական բարդ գործընթաց էր, և միանգամայն հասկանալի է, որ անհրաժեշտ միջոցների բացակայության պայմաններում, որքան էլ մեծ լինեք ցանկությունը հայ որբերին արժանավայել կրթություն տրամադրելու, հոգածության, խնամքի համար, այնուամենայնիվ, գումարի պակասը պետք է սահմանափակեր այդ հնարավորությունները: Եվ թերևս դա էր պատճառը, որ հայկական որբանոցները չէին կարողանում երկարատև գործունեություն ծավալել: Դրանով է պայմանավորված հայկական որբանոցների գործունեության մասին տեղեկությունների սակավությունը: Այս պայմաններում, բնականաբար, մեծ էր օտար մարդասերների ներդրումը, որոնք լրացրեցին, օժանդակեցին և արեցին հնարավոր ամեն ինչ հայ որբերի կյանքը բարելավելու ուղղությամբ:

Մարաշ քաղաքի ու գավառի հայ բնակչության թիվը. համիդյան կոտորածները Մարաշում

Մարաշն Օսմանյան կայսրության հայաշատ կենտրոններից, ինչպես նաև Կիլիկիայի կարևորագույն ու հարուստ քաղաքներից մեկն էր, որը հանդիսանում էր Հալեպի նահանգի Մարաշ գավառակի կենտրոնը: Մինչև 1911 թ. ընդգրկված էր Հալեպի վիլայեթի կազմում, որից հետո առանձնացվում է և դառնում առանձին գավառ (սանջակ)¹: Մարաշի սանջակն արևելքում սահմանակից էր Խարբերդի վիլայեթին, հյուսիսում՝ Սերաստիայի, արևմուտքում՝ Ադանայի վիլայեթներին, իսկ հարավում՝ Հալեպի նահանգի նույնանուն գավառին՝ ընդգրկելով 18.405 քառ. կմ տարածք²: 1890 թ.

1 Միհրան Մինասեան, «Անտիպ փաստաթղթերի կիլիկեան կոտորածներու օրերուն Մարաշի հայութեան իրավիճակին մասին», *Հանդէս Ամսօրեայ*, հունվար-դեկտեմբեր, 1-12 (2017), 306:

2 Ռուբեն Հ. Գասպարյան, «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», *Լրաբեր հասարակական գիտությունների* 1-2 (2011), 28:

Մարաշի գավառը բաժանված էր 5 գավառակի (5 սահիե, 552 գյուղ)³, իսկ 1905 թ. հրատարակված «Սալնամեի Դեկլեթի Օսմանիկ» պաշտոնական վիճակագրության համաձայն՝ սանջակի կազմում էին Մարաշի և Նրա ենթակա Ջեյթունի, Ալախթանի, Անտերունի և Փազարճըզի գավառակները՝ գյուղախմբերով և գյուղերով⁴:

Կ.Պոլսի հայոց պատրիարք Օրմանյանի 1912 թ. վիճակագրական տեղեկությունների համաձայն՝ Մարաշի թեմում (այն իր մեջ պարունակում էր Մարաշի, Ալախթանի և Փազարճըզի գավառակների տարածքը) հայ բնակչության թիվը հասնում էր 37.500-ի, Ջեյթունում՝ 21.000-ի, Ֆրնուզում՝ 7.000-ի: Գավառի 178.000 բնակիչներից 65.000-ը հայեր էին⁵: Հովսեփ Տեր-Վարդանյանի հաղորդմամբ Մարաշում հաշվվում էր մոտավորապես 75-80.000 բնակչություն, որոնց մեկ երրորդը հայ քրիստոնյաններ էին. 5.500՝ կաթոլիկ, 8.000՝ բողոքական, 16.500՝ հայ առաքելական⁶:

1890-ական թթ. սկիզբ առաջ հայերի զանգվածային կոտորածները հատկապես ծանր էին Ուրֆայի և Մարաշի սանջակներում: Յոհաննես Լեփսիուսի տեղեկության համաձայն՝ Մարաշում համիդյան կոտորածներին զոհ գնաց շուրջ 1.390 հայ⁷: Համիդյան ջարդերից հետո հրաշքով փրկված հազարավոր երեխաներ խնամքի ու հոգատարության կարիք ունեին:

Միսիոներական քարոզչության, կրթալուսավորական գործունեություն ծավալված հաստատությունների, բարեգործական աշխատանքների ձեռնարկումները եղան այն հիմնաքարը, որով հնարավոր եղավ պահել և պահպանել հայ որբերին, զբաղվել նրանց կրթության և դաստիարակության հարցերով:

Համիդյան կոտորածներից հետո առ 1909 թ. Մարաշում գործել են տասը որբանոց-վարժարաններ, այդ թվում՝ վեց ազգային, չորս միսիոներական⁸:

Ստորև առանձին ներկայացնում ենք հայ որբերի համար նախատեսված Մարաշ քաղաքում գործող որբանոցները և դրանց աշխատանքը կազմակերպող մարդասերների գործունեությունը:

3 Տե՛ս Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Մատենադարան «Արաքս»-ի (Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894), 313:

4 Գասպարյան, «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը», 28:

5 Գրիգոր Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջեյթուն (Ե. Ե. Լոնկ Այլընտ Սիթի, Կոչնակ, 1988), 33:

6 Յովսեփ Տեր-Վարդանեան, Մարաշի ջարդը 1920-ին (Հալեպ, Արեւելք, 2010), 51:

7 Johannes Lepsius, *Armenia and Europe: An Indictment*, trans. Harris Rendel (London: Hodder and Stoughton, 1897), 308.

8 Հողվածում անդրադառնում ենք չորս ազգային որբանոցներին, քանի որ մնացած երկուսից մեկը Ազգային այրիանոցն է, որը բացվել է 1909 թ., որտեղ աշխատել են կանայք և զբաղվել գույլալազագործությամբ: Տե՛ս Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ, 491: Մյուսը՝ Գրիգոր Պեհեսնիյանի որբանոցն է, որի գործունեության մասին մեզ չի հասցողվել բավարար տեղեկություն ձեռք բերել, «Բիւրակն» թերթում միայն նշված է, որ կա նման որբանոց, որտեղ ապրում են 12 աղջիկներ: Տե՛ս Սմբատ Դաթեան, «Մարաշ, քաղաքային, տեղագրական, ազգագրական, տնտեսական, կրթական եւ այլ տեղեկութիւններ», *Բիւրակն* (Կոստանդնուպոլիս), 19 նոյեմբեր 1898, թիւ 43, 759:

Հայկական որբանոցներ

Ա. Ճենանյանի որբանոցը

1896 թ. Հարություն Ճենանյանի⁹ ջանքերով Մարաշի Ս. Ստեփանոս եկեղեցու բակում բացվում է Ճենանյանի որբանոցը, որը գործել է մինչև 1914 թ.¹⁰: Որբանոցի գործունեությանը մեծապես նպաստել են հատկապես Ավետարանական-Ռուսիկյանց ընկերությունները¹¹: Այս որբանոցում պատսպարվել և ուսում է ստացել մոտ 40 տղա¹²:

Որբանոցն ուներ նաև իր խորհուրդը. այն բացվել էր Ս. Ստեփանոս եկեղեցում՝ ի հիշատակ Ճենանյանի մկրտության: Որբանոցի վարչությունում որպես հոգաբարձու, ուսուցիչ և պատասխանատու անձ մեծ ներդրում է ունեցել Սողոմոն Ոսկերչյանը, որը ղեկավարել է դպրոց-որբանոցը և կրթել բազում սաներ¹³: Որբանոցի հոգաբարձուների խորհրդի անդամներ են եղել Սահակ Տեր-Պետրոսյանը, Աբրահամ և Բաղդասար Չորպաճյանները, Նշան Էտալյանը, Կարապետ Նալչաջյանը և Սարգիս Թիվալիյանը, որոնք կարողացել են իրենց ներդրումն ունենալ ազգային և կրթական գործում¹⁴:

Բ. Հակոբ Գումրույանի որբանոցը

Այս որբանոցը նույնպես բացվել է 1896 թ.: Ծախսերը ևս հոգացել է Հարություն Ճենանյանը, սակայն իր մեծ ներդրումն է ունեցել նաև Հակոբ Գումրույանը: Տեր և տիկին Գումրույանների գործունեության շնորհիվ որբերի թիվը հասել է 60-ի¹⁵: Սակայն ֆինանսական խնդիրների պատճառով որբանոցն անցել է ամերիկացիների և գերմանացիների հովանու ներքո. այդ ժամանակ այնտեղ արդեն ապրում էին մոտ 100 որբ տղաներ¹⁶:

Գ. Իսահակ Ժամհարյանց որբանոց

1898 թ. հիմնվել է Իսահակ Ժամհարյանց որբանոցը: Այս որբանոցը հովանավորում էր Ժամհարյանների ընտանիքին բարեկամ մի մոսկվացի վաճառական՝ ի պատիվ իրենց հանգուցյալ հոր հիշատակի: Ժամհարյանց որբանոցում դաստիարակություն և ուսում էր ստանում 90 որբ:

9 Հարություն Ճենանյանը եղել է ԱՄՆ «Հայ ավետարանական եկեղեցու միության» վերատեսուչ, կարողացել է միջոցներ գտնել, որի շնորհիվ հարյուրավոր աղքատներ հնարավորություն են ունեցել ստանալ կրթություն: Մարաշում բացառիկ ներդրում է ունեցել կրթական հաստատություն ստեղծելով, որտեղ կրթություն և դաստիարակություն են ստացել 250-ից ավելի տղաներ: Տե՛ս Յովհաննես Անտիսեան, «Սիրուած դեմքեր», *Բիւրակն* (Կոստանդնուպոլիս), 8 յունվար 1905, թիւ 2, 36:

10 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 482:

11 Այս ընկերությունների հիմնական նպատակն էր բացել դպրոցներ և կյանքի կոչել կրթական գործը՝ ապահովելով երեխաների ուսման ու կրթության միջոցները: Ավելի մանրամասն տե՛ս Վարդի Բէլիշեան, «Մարաշ-դպրոցներ», <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppe/sandjakofmarash/educationandsport/educationalassociations.html>, դիտվել է 12.12.2018:

12 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 483:

13 Տէր-Վարդանեան, *Մարաշի ջարդը 1920-ին*, 55:

14 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 483:

15 Նույն տեղում, 485:

16 Տէր-Վարդանեան, *Մարաշի ջարդը*, 59:

Համաձայն բարերարների հորդորի՝ որբանոցներում հայեցի ուսում ստանալուց գատ, սովորում էին նաև արհեստներ, ինչպես նաև մուճակագործություն, կոշկակարություն և այլն: Որբանոցի հոգաբարձության նախագահը քահանա Հովհաննես Վարժապետյանն էր, իսկ անդամները՝ Տեր-Մինասյանը, Տիգրան Մերճանյանը, Մովսես Առաքելյանը:

Գ. Ազգային որբանոց

1909 թ. Կ.Պոլսի ազգային խնամատարության ջանքերով Մարաշում բացվում է ազգային որբանոցը, որտեղ պատսպարված էին 115 տղա (մանչ) և 90 աղջիկ սաներ, որոնք հավաքվել էին Մարաշի շրջակա գյուղերից և քաղաքներից¹⁷: Այստեղ տեսչությամբ զբաղվում էր Խաչատուր Գռուզյանը:

1910 թ. որբանոցի բացվելուց 7-8 ամիս հետո նրանց միացան նաև Այնթապի որբանոցի սաները, և աշակերտների ընդհանուր թիվը հասավ 360-ի¹⁸:

Ամերիկյան և անգլիական որբանոցներ

Օսմանյան կայսրությունում համիդյան կոտորածներից հետո, ինչպես հայտնի է, հիմնվում են միսիոներական կայաններ: Հայ բնակչության, հատկապես երիտասարդության շրջանում, գիտության և լուսավորության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ մեծ աշխատանք տարան նաև եվրոպացի և ամերիկացի միսիոներները՝ «գայթակղելով» նրանց որակյալ ուսմամբ և մասնագիտական կարողությունների կատարելագործման հնարավորություններով¹⁹:

Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության հայերի շրջանում միսիոներական գործունեության ամենաարդյունավետ ոլորտը լուսավորությունն էր. Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի տարածքում բացվեցին բազմաթիվ ամերիկյան և գերմանական որբանոցներ:

Միսիոներների նախաձեռնությամբ բացվող դպրոցները և նրանց բարեկարգ վիճակը, ինչպես նաև թուրքական կառավարող շրջանների թույլտվությունն ակնհայտորեն նպաստում էին բողոքականության տարածմանը:

Թուրքական կառավարությունը հանդուրժում էր միսիոներների կրթական ձեռնարկումները, քանի որ ի դեմս միսիոներական դպրոցների՝ տեսնում էր կարևոր օջախներ հայ ժողովրդի միասնությունը պառակտելու և դավանաբանական հակամարտություններն ավելի սրելու համար, իսկ դպրոցական հարմարավետ շենքերը, ըստ էության, հետագայում անցնելու էին թուրքերի ձեռքը՝ իբրև հաստատուն կապիտալ²⁰:

17 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 491:

18 Նույն տեղում, 491:

19 Նույն տեղում, 484:

20 Ստեփան Հ. Փայասյան, «Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին», *Բանբեր Հայաստանի արխիվների* no. 2 (2006), 111:

Ա. Էպեն-Էզեր (Աբեննեզեր)²¹ աղջիկների որբանոց

1896 թ. ամերիկյան առաջին որբանոցը բացվում է Մելբոն Հայրապետյանի տանը, որտեղ տեսուչ և տեսչուհի էին Մկրտիչ աղան և տիկին Դշխուն Տեր-Մկրտչյանը: Այնուհետև բացվում են երկրորդ²², երրորդ²³, չորրորդ²⁴ և հինգերորդ²⁵ որբանոցները, որոնք համալրվում են նոր աշակերտներով: Հայ որբերին հավաքագրող Մարաշի առաջին միսիոներուհիներից էր ամերիկացի տիկին Լին²⁶, սակայն պետք է նշել, որ նա, որբան էլ նվիրված էր որբախնամ գործունեությանը, առողջական խնդիրների պատճառով չկարողացավ շարունակել միսիոներական աշխատանքը: Նրան հաջորդեց օրիորդ Ագնես Սալմոնդը, որը բնութագրվում էր որպես ազնիվ և քրիստոնյա ընտանիքի գավակ և կարծես ծնված էր հատուկ այդ գործի համար²⁷:

Իր ծնողներից միշտ լսելով միսիոներական կյանքի պատմությունները՝ Ագնեսի մեջ արթնացել էր որբախնամ գործունեությամբ զբաղվելու հետաքրքրություն: Լոնդոնում ժողովներ, ցույցեր էին գումարվում, ինչպես նաև թերթերում տպագրվում էին սուկալի պատմություններ Հայաստանի մասին: Իբրև ականատես վկաներ, ներկա եղող հայերը պատմում էին մանուկների և կանանց տառապանքներից: Ժողովների և կոնցերտի արդյունքում կազմվում է Հայաստանի բարեկամներ (Friends of Armenia) ընկերությունը, որին անդամագրվում է օրիորդ Ագնեսը²⁸:

1898 թ. նա մեկնում է Մարաշ, արժանանում է թե՛ ամերիկյան, թե՛ հայ բարեկամների ջերմ ընդունելությանն ու ուշադրությանը: Առաջին գործը որպես ականատես՝ տեղեկություն և նամակներ հավաքելն էր, որից հետո նա այդ ամենն ուղարկում է Լոնդոն, ինչի արդյունքում նրան հնարավորություն են տալիս շարունակել որբախնամ գործունեությունը²⁹:

Հենց օրիորդ Ագնեսի ջանքերի շնորհիվ է բացվում «Էպեն-Էզեր» որբանոցը, որը նա ղեկավարում է 1897-1914 թթ.³⁰: Շատ կարճ ժամանակում օրիորդ Ագնեսին հաջող-

21 «Էպեն-Էզեր» նշանակում է «Աստված մեզ մինչև այստեղ առաջնորդեց»: Տե՛ս «Էպեն Էզեր Աղջկանց որբանոց», Նոր Մարաշ տեղեկատու Գերմանիկ-Վասպուրական մշակութային միության, no. 4 (2010), 37:

22 Բացվել է Աստվածաբանական ճեմարանի արևելյան շենքում, տե՛ս նույն տեղում, 36:

23 Այս որբանոցը բացվել է տեր և տիկին Ավետիս Իվեզյանի տեսչությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

24 Տեր և տիկին Հակոբ Նուսխեճյանների գլխավորությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

25 Նաջարյան Օհան աղայի և տիկնոջ հսկողությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

26 Հետաքրքիր է տիկին Լիի 1896 թ. նոյեմբերի 28-ի հետևյալ գրառումը «Ես չեմ կարող Ձեզ բառերով նկարագրել, թե ինչպիսի ուրախություն ինձ համակեց, երբ ես ամռանը Կ.Պոլսում տեղեկացա, որ պետք է Գերմանիայից 250 յիրս սրանամ Մարաշում 50 որբի խնամքի համար... Գերմանիայից այս պայմանավորվածության մասին լուրն սրացվեց, ինչպես երկրից մի նվեր», Հայկ Մ. Մարտիրոսյան, Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919 թթ. (Երևան, Զանգակ, 2016), 37:

27 Մանրամասն տե՛ս Ephraim K. Jernazian, *Judgment unto Truth Witnessing the Armenian Genocide*, trans. Alice Haig (New Brunswick and London: 1990), 18-19.

28 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 487:

29 Նույն տեղում, 487:

30 «Էպեն Էզեր Աղջկանց որբանոց», 36:

վում է գերազանց առաջադիմության հասցնել որբանոցի սաներին: Որբանոցին հարակից տարածքում նոր շենք է հիմնվում, որտեղ տղաները սովորում էին արհեստներ՝ ոստայնանկություն, կոշկակարություն, հացագործություն, աղջիկները՝ ձեռագործություն³¹: Սակայն և՛ տղաների, և՛ աղջիկների ընդունակություններ զարգացնողը դպրոցն ու քոլեջներին էին, և նրանցից շատերը օրիորդ Ագնեսի շնորհիվ դարձան բժիշկներ, վարժուհիներ, ուսուցիչներ³²:

Օրիորդ Ագնեսն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում նաև բարոյական և հոգևոր դաստիարակությանը: Բոլոր սաներն ամեն կիրակի քաղաքի եկեղեցիներ և կիրակնօրյա դպրոցներ էին այցելում³³:

Կարելի է անվարան նշել, որ օրիորդ Ագնեսի գործունեության շնորհիվ Էպեն-Էգերը դարձավ որբերի ապաստան, որտեղ նրանք կրթվեցին, յուրացրեցին արհեստներ՝ այդ ամենի հետ ստանալով հոգևոր ու բարոյական դաստիարակություն:

Գերմանական որբանոցները

1896 թ. օգոստոսի 28-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի է ունենում «Հայաստանի օգնության գերմանական միության» (ՀՕԳՄ)³⁴ երկրորդ համաժողովը: Այն կարևոր դեր կատարեց Մարաշում որբահավաքման և որբախնամության գործում³⁵:

Գերմանացի հայասեր Էռնեստ Լոհմանի օժանդակությամբ Մարաշ է տեղափոխվում օրիորդ Աննա Ռուբախը³⁶, որը 1898 թ. ստանձնում է ղեկավարել Բեթշալում³⁷ որբանոցը: Ավելի քան մեկ տարի Ա. Ռուբախը կայանի միակ գերմանացի աշխատակիցն էր: 1900 թ. հոկտեմբերին որբանոցում երեխաների թիվը կտրուկ աճում է՝ 30-ից հասնելով 180-ի: Երեխաներն ապրում էին երկու շինություններում, ավագ տարիքի 110 տղաներն առաջին որբանոցում՝ Բեթշալումում, իսկ կրտսեր տարիքի

31 Աղջիկների պատրաստած ձեռագործերը տեղ գտան Լոնդոնի շուկայում: Նույն տեղում, 37:

32 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 489:

33 Նույն տեղում, 490:

34 Հայաստանի օգնության գերմանական միությունը (ՀՕԳՄ) հիմնվել 1896 թ. հուլիսի 2-ին: Մանրամասն տե՛ս Աշոտ Ն. Հայրունի, *Հովհաննես Լեւիսիուսի ստաբիլությունը* (Երևան, Նաիրի, 2002), 47:

35 Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 36:

36 Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության (ԱՔԲԳՕՄ) առաջին ներկայացուցիչն է, որը 1897 թ. սեպտեմբերի 5-ին լինում է Բեբեքի, նոյեմբերի 13-ին՝ Մեգիրեի կայանում, այնուհետև հաստատվում Մարաշում, տե՛ս Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 37:

37 Բեթշալում երբայերենից թարգմանաբար նշանակում էր Խաղաղության տուն: Այս շենքն ի սկզբանե եղել էր երկու տուն, որոնց տերերը մինչև 19-րդ դարի վերջ եղել են հայեր: Նրանցից մեկի տերը որդիների և դուստրերի ամուսինների հետ համիդյան կոտորածների ժամանակ սպանվել է: Երկրորդ տանտիրոջն ու ընտանիքին ևս փորձել էին սպանել, սակայն տան սենյակներից մեկի հատակին փորված թաքստոցի շնորհիվ ամբողջ ընտանիքին հաջողվել էր փրկվել: Թուրքերը սպանել էին ընտանիքի մորը, որը կանգնել էր թուրքերի առաջ՝ ընտանիքի մյուս անդամներին թաքսվելու համար ժամանակ տալով: Տե՛ս Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 47:

70 տղաները՝ որբանոցի երկրորդ վարձակալված շենքում³⁸: 1901 թ. գերմանական հյուպատոսության նախկին շենքը վերակառուցվում և ծառայում է որպես որբանոց:

1904 թ. ամռանը Բեթշալոմում երեք տները ստանում են անուններ. առաջին տունը կոչվում է «Մեր», երկրորդ տունը՝ «Հավատք», երրորդը՝ «Հույս»: Բեթշալոմի շենքային հաջորդ ընդարձակումը լինում է 1908 թ., որն էլ հնարավորություն է տալիս 50 որբի օթևան տալու: Այս չորրորդ շինությունն էլ անվանվում է «Ողորմածություն»³⁹:

1898 թ. նոյեմբերի 28-ին բացվում է Բեթել⁴⁰ որբանոցը: 1899թ. մայիսի 27-ին այստեղ է ժամանում Վիլիելմ Շպիքերը կնոջ՝ Մարի Շպիքերի⁴¹ հետ: Շպիքերն իր գործին նվիրյալ անձի, հայ ժողովրդի անկեղծ բարեկամի համբավ ուներ⁴²:

Մարաշի որբանոցներում ներմուծվում է կառավարման նոր մեթոդ. յուրաքանչյուր երեխային «մայրիկ»⁴³ է նշանակվում՝ ավագ տարիքի որբուհի, որը որոշ չափով պետք է հետևեր նրանց կարգապահությանը⁴⁴: Շպիքերն իր առաքելությունը կատարելով՝ որբանոցի գործը հանձնում է պաստոր Բրունեմանին⁴⁵, որն ընդլայնում է որբանոցի տարածքը, տղաներին առանձնացնում է գերմանական որբանոցում, աղջիկներին՝ ամերիկյան: Գերմանացի միսիոներներն ամերիկացի իրենց գործընկերների համեմատ ավելի շատ դրամական միջոցներ և հովանավորներ ունեին, որի արդյունքում նրանց գործունեությունն ավելի բեղուն էր⁴⁶:

Գերմանական որբանոցներում առաջնահերթությունը տրվում էր կրթությանը. այդ է վկայում որբանոցների հիմնումից և որբերի հավաքագրումից հետո դպրոցների բացումը: Դպրոցները տալիս էին սկզբնական շրջանում տարրական գիտելիքներ, իսկ ավելի բարձր առաջադիմություն ունեցողները հնարավորություն էին ստանում շարունակել կրթությունը Մարաշի ամերիկյան քոլեջում, բացառիկ դեպքերում՝ նաև Գերմանիայում: Դասապատրաստման աշխատանքներում ներգրավված էին նաև հայեր. աղբյուրներում նշվում են Հովհաննես Հայդոսթյանի, Կարապետ Կերիկյանի և այլոց անունները: Ավագ տարիքի պատանիներին դասավանդում էր ուսուցիչ Շպիքերը, իսկ աղջիկների որբանոցից լավագույններին ուղարկում էին ամերիկյան քոլեջ՝ ուսուցչուհիներ դառնալու նպատակով⁴⁷:

38 Նույն տեղում, 43:

39 Նույն տեղում, 43-44:

40 Եբրայերենից թարգմանաբար նշանակում է Աստծո տուն: Տե՛ս նույն տեղում, 41:

41 Միսիոներների մասին մանրամասն տե՛ս Մարտիրոսյան *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 148:

42 Վարդան Գրիգորյան, *Հայությանը նվիրված կյանք. Էստրոնտի Հեղվիգ Բյուրի հայանպասք գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* (Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑՏԻ, 1996), 19:

43 Որբանոցները ղեկավարող կանանց անվանում էին «մայրիկ» կամ «տան մայրիկ»: Տե՛ս Մարտիրոսյան *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 20:

44 Նույն տեղում, 42:

45 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 490:

46 Նույն տեղում, 491:

47 Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 45:

1908 թ. հոկտեմբերին աղջիկների որբանոցում կառուցվում է 96 երեխայի և չորս դասարանի համար նախատեսված դպրոց: Այնուհետև աշակերտների թիվն աճում է՝ հասնելով 207-ի:

Որբանոցում առկա էին կրթական գործընթացի հետ կապված դժվարություններ, մասնավորապես՝ դասագրքերի և ուսուցիչների պակասության հետ կապված խնդիրը⁴⁸: Չկային աշխարհագրության, բնագիտության և պատմության դասագրքեր, իսկ 207 երեխայի համար կար ընդամենը 3 ուսուցչուհի՝ նախկին որբուհիներ Սենեմը, Դշլտունը և Օվսաննա Գյոնդյանը:⁴⁹ Դասագրքերի խնդիրը լուծելու համար փորձ է արվում մի քանի գիրք թարգմանել գերմաներենից: Ուսուցչուհիների թիվն էլ հետագայում ավելանում է⁵⁰:

Ի դեպ, որբանոցում դասագրքերի լեզուն հայատառ թուրքերենն էր, սակայն սաներն առաջին երեք տարում յուրացնում էին նաև արևմտահայերենն ու օսմաներենը, որոնց հետագայում ավելանում է նաև անգլերենը: 7-րդ դասարանից սկսած անցնում էին գերմաներեն և անգլերեն:

Տղաների որբանոցում ևս կրթական ոլորտում փոփոխություններ են տեղի ունենում: Երեխաների կրթությանը զուգահեռ հոգ էր տարվում նաև արհեստներ ուսուցանելու մասին, որն ուներ մի քանի նպատակ. նախ՝ որբերը դրանով հնարավորություն էին ստանում իրենց հետագա կյանքում սեփական վաստակով ապրելու, երկրորդ՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կողմից պատրաստված իրերը հանվում էին վաճառքի տեղում կամ Գերմանիայում, երրորդ՝ արհեստ սովորած երեխաներն օգտակար էին լինում որբանոցին՝ հոգալով իրենց հազուստի, կոշիկների և այլ անհրաժեշտ պարագաների համար⁵¹:

Ինչպես որբանոցներն էին առանձնացված տղաների և աղջիկների, այնպես էլ կրթական գործն ու արհեստների ուսուցանումն էր իրականացվում առանձին-առանձին: Կրտսեր տարիքի աղջիկներն ուսանում էին դպրոցում, ավագ տարիքի աղջիկները՝ որևէ արհեստ սովորում: Աղջիկները ստանում էին նաև երկու ժամ Աստվածաշնչի պատմության, մեկ ժամ երգեցողության դաս⁵²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ գերմանացի միսիոներները տարբերվում էին ամերիկյան միսիոներներից նրանով, որ բացի կրթական-մարդասիրական ծրագրերից, ունեին նաև այլ նպատակ՝ տնտեսության հետագա զարգացման համար որոշ նախադրյալների ձևավորում: Որբանոցների մեջ կարևորություն էին տալիս արհեստանոցների ստեղծմանը: Ամերիկյան միսիոներությունն առավելապես նվիրված էր կրթական գործունեությանը: Ավելացնենք, որ ամերիկյան միսիոներների հաջողության նախադրյալներից պետք է համարել նրանց ոչ քիչ ներկայացուցիչների

48 Նույն տեղում, 45:

49 Տեղին է նկատել, որ աղջիկների կրթությունը համեմատաբար նոր երևույթ էր հայ իրականության մեջ, իսկ նրանց համար ուսուցչուհիներ գտնելը՝ բարդ խնդիր:

50 Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 45:

51 Նույն տեղում, 46:

52 Նույն տեղում, 47:

մարդասիրական վերաբերմունքը տառապյալ հայերի նկատմամբ, հատկապես թուրքերի կազմակերպած ջարդերի և կոտորածների պայմաններում⁵³:

Հարկ ենք համարում փաստել, որ 1909 թ. օգոստոսի 7-ից 1910 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում *մարաշցի* (ընդգծումն իմն է՝ Ն.Բ.) որբերի թվաքանակն ըստ որբանոցների՝ համաձայն «Կիլիկիոյ Որբախնամ Կեդրոնական հանձնաժողովի տեղեկագրի» հետևյալն էր՝ Ազգային որբանոցում՝ 71 տղա և 124 աղջիկ, գերմանականում համապատասխանաբար 14 և 26, անգլիականում՝ 2 և 3, չժնանեանում՝ 1 տղա և 1 աղջիկ:⁵⁴

Ամփոփելով փաստենք, որ ամերիկյան ու գերմանական միսիոներների հիմնած դպրոցների ազդեցությունն արևմտահայ կրթական կյանքի վրա, ընդհանուր առմամբ, պետք է գնահատել դրական. դրանք նպաստել են սաների այս կամ այն մասնագիտության մեջ խորանալուն, լեզուների իմացությանը, գիտամանկավարժական և թարգմանական գրականության ստեղծմանը, թեև այդ ամենի ընդհանուր ուղղվածության պարագայում հաճախ մերժվում էր բուն հայկականը:

Թեև «քրիստոնյա» եվրոպական պետությունները գրեթե ոչինչ չարեցին հայերի քաղաքական վիճակը բարելավելու համար, սակայն քրիստոնյա եկեղեցիների, ընկերությունների և միսիոներների օժանդակությամբ հնարավոր եղավ ծավալել կրթական բեղուն գործունեություն:

Kristine V. Najaryan

THE ORGANIZATION OF EDUCATIONAL LIFE OF MARASH ORPHANAGES AFTER THE HAMIDIAN MASSACRES (1896-1909)

SUMMARY

Key words: Marash, Cilicia, education, study, orphans, orphanages, missionaries, Hamidian massacres.

The article examines the organization of educational life of Marash orphanages by the Armenian and foreign humanists and humanitarian organizations after the Hamidian period. Reference is made to the full enlightenment and educational success of the Armenian, English and German orphanages.

Based on primary and secondary sources the article concludes that the organization of the Armenian orphanages was complicated enough and there were a lot of financial problems and difficulties. That's why the Armenian orphanages could not expand a long a

53 Արման Ջ. Կիրակոսյան, *ԱՄՆ-ի արքայաբն քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար- 1914 թ.)* (Երևան, ԵՊՀ, 2014), 315:

54 Տե՛ս Տեղեկագիր Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական Յանձնաժողով 1909 օգոստոս 7-1910 դեկտեմբեր 31 եւ 1911 յունվ. 1-1911 յունիս 30 (Կ.Պոլիս, տպագրութիւն Օ. Արձուման, 1911), 90:

ctivity. The main conclusion is that Marash was considered to be an important educational center and had a great contribution to the life of the Armenian orphans. The activity of foreign and the Armenian missionaries greatly promoted and encouraged this humanitarian work.

Кристине В. Наджарян

ОРГАНИЗАЦИЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА В СИРОТСКИХ ПРИЮТАХ МАРАША ПОСЛЕ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ (1896-1909)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Мараш, Киликия, образование, обучение, сироты, приюты, миссионеры, гамидовская резня.

В статье рассматривается организация армянскими и иностранными миссионерами учебного процесса в приютах Мараша после гамидовских погромов. Отмечены успехи армянских, английских и немецких приютов в области образования и просвещения. Представляя разностороннее исследование учебного процесса детей нашедших убежище в приютах Мараша, отмечается важное значение образования в жизни воспитанников армянских, английских и немецких приютов. Опираясь на первоисточники и вторичную литературу, можно утверждать, что основание армянских приютов было достаточно сложным процессом, и как бы то ни было велико желание дать армянским сиротам достойное образование, недостаток необходимых средств ограничивал возможности. Скорее всего, именно это стало причиной того, что армянские приюты не могли развернуть долгосрочную деятельность. По этой же причине об их функционировании нет подробной информации. В этих условиях, несомненно, вклад иностранных деятелей, оказывающих огромную поддержку, делающих все возможное для улучшения условий жизни армянских сирот, был особенно велик.

REFERENCES

Avetisean, Jovanne's. «Սիրուած դէմքեր» [Favorite Faces]. *Byurakn* (Constantinople), 8 January, no. 2, 1905;

Davt'ean, Smbat. «Մարաշ, քաղաքային, տեղագրական, ազգագրական, տնտեսական, կրթական եւ այլ տեղեկութիւններ» [Marash, Urban, Topographic, Ethnographic, Economic, Educational and Other Information]. *Byurakn* (Constantinople), 19 November, no. 43, 1898;

Gasparyan, Ruben. «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին» [The Armenian Population and the Administrative Division of Cilicia at the End of the XIX Century and Beginning of the XX century]. *Banber Hayastani arkhivneri* 1-2 (2011);

Gasparyan, Ruben. *Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.)* [Armenian Massacres in Cilicia (90s of XIX century – 1921)]. Yerevan: HH GAA Gitut'yun, 2005;

Grigoryan, Vardan. *Էստրոնտի Հեղվիզ Բյուլի հայանպասք գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* [Life Dedicated to Armenians: Pro-Armenian Activity of Estonian Hedwig Büll in Cilicia and Syria (1911-1951)]. Yerevan: HH GAA AGMI, 1996;

Hayruni, Ashot. *Հովհաննես Լեփսիուսի առաքելությունը* [Mission of Johannes Lepsius]. Yerevan: Nairi, 2002;

Kalousdian, Krikor. *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չէյթուն* [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988;

Kirakosyan, Arman. *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914թ.)* [US Foreign Policy and Western Armenians (19th century -1914)]. Yerevan: YSU, 2014;

Martirosyan, Hayk. *Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919 թթ.* [German Missionary Activity in the Ottoman Empire: Marash Station (1896-1919)]. Yerevan: Zangak, 2016;

P'ayaslyan, Step'an. «Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին» [American Protestant Missionary Activity in the Ottoman Empire in the First Half of the 19th Century]. *Banber Hayastani arkhivneri* no. 2 (2006): 120-134;

Qeshishean, Vardi. «Մարաշ-դպրոցներ» [Marash – Schools]. <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppe/sandjakofmarash/educationandsport/educationalassociations.html>;

Ter-Vardanian, Hovsep'. *Մարաշի ջարդը 1920-ին* [The Massacre of Marash in 1920]. Aleppo: Arevelq, 2010;

«Էպեն Էզեր Աղջկանց որբանոց» [Epen Ezer Girls' Orphanage]. *Nor Marash teghekatu Germanik-Vasपुरakan mshakutayin miutyanyan*, no. 4 (2010);

Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ [Cilicia: An Attempt of Geographical Discription]. Saint Petersburg: I. Libermann tparan, 1894;

Տեղեկագիր Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական Յանձնաժողովի 1909 օգոստոս 7-1910 դեկտեմբեր 31 և 1911 յունիս. 1-1911 յունիս 30 [Newsletter of Cilician Orphan Care Central Committee 7 August 1909 – 31 December 1910 and 1 January 1911 – 30 June 1911]. Constantinople: O. Ardzuman, 1911.

ՎԱՆԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ (1870-ԱԿԱՆ ԹԹ. – 1914)

Բանալի բառերը՝ համիդյան կոտորածներ, Մեծ եղեռն, Վանի գավառակ, վանքեր, Վարա-գավանք, Լիմ, Կտուց:

Հոդվածում ներկայացվում և վերլուծության է ենթարկվում Վանի գավառակի տարածքում XIX դարի վերջին – XX դարի սկզբներին գործող հայկական վանքերի կացությունը: Նշված ժամանակաշրջանում հայկական վանական կյանքն ինչպես Վանի գավառակում, այնպես էլ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում բնութագրվում է շարունակական անկման միտումներով, ինչը պայմանավորված էր քրդերի կողմից վանքերի պարբերական ասպատակումներով և հայ բնակչության շարունակական աշխարհականացմամբ ու դրա հետ կապված՝ վանականի կյանքն ընտրողների թվի նվազմամբ:

Վերոնշյալի հետևանքով՝ 1870-ական թթ. – 1910-ական թթ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում ամայանում են Վան-Վասպուրականի բազմաթիվ վանքեր:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո հայկական ազգային կառույցների գործունեության շնորհիվ՝ Վանի վանքերի սոցիալ-տնտեսական վիճակն սկսում է ցույց տալ բարելավման միտումներ, հետզհետե սկսում է աշխուժանալ վանական կյանքը: Սակայն 1914 թ. բռնկված Առաջին աշխարհամարտը և Մեծ եղեռնը մեկընդմիջտ կասեցնում են այդ գործընթացը:

Ա. Վանի գավառակի վարչական և եկեղեցական-թեմական բաժանումը

Վանի գավառակը (կազա) համանուն գավառի (սանջակ) և նահանգի (վիլայեթ) կենտրոնն էր (թուրքերեն՝ «*մերքեզ կազա*»): Օսմանյան կայսրության՝ XIX դարի վերջի – XX դարի սկզբի վարչատարածքային բաժանմամբ՝ գավառակը կազմված էր կենտրոնական կուսակալանիստ Վան քաղաքից ու անմիջապես կուսակալի ենթակայության տակ գտնվող շրջակա գյուղերից (Վան-Տոսպ մերքեզ նահիե (կենտրոնական գյուղախումբ)) և երեք այլ նահիեններից՝ Թիմար (գտնվում էր Վան-Տոսպից դեպի հյուսիսարևմուտք), Արճակ (Վան-Տոսպից և Թիմարից դեպի արևելք) և Հայոց Ձոր (Վան-Տոսպից դեպի հարավ)¹:

Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ 1913-1914 թթ. Վանի թեմական իշխանությունների կողմից կազմված վիճակագրության՝ Վան քաղաքում կար 4.230 տուն, 22.470 շունչ հայ, Վան-Տոսպի շրջանի 20 հայաբնակ բնակավայրերում՝ 1.592 տուն, 9.614 շունչ հայ: Արճակի նահիեն ուներ 22 հայաբնակ բնակավայր՝ 1.013 տուն, 6.679 շունչ հայ բնակչությամբ, Թիմարի նահիեն՝ 40 հայաբնակ բնակա-

1 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», *Մտրճ* (Թիֆլիս), 1904, № 3, 42-43: Տե՛ս նաև Владимир Маевский, *Военно-Статистическое описание Вансакого и Битлисского вилайетовъ, I. Географический очеркъ* (Тифлисъ: Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 10-11:

վայր՝ 2.525 տուն, 15.411 շունչ հայ բնակչությամբ և Հայոց Ձորի նահիեն՝ 30 հայաբնակ բնակավայր՝ 1.383 տուն, 8.482 շունչ հայ բնակչությամբ: Այսպիսով, Մեծ եղեռնի նախօրյակին Վանի գավառակի հայ բնակչության թիվը կազմում էր 10.743 տուն, 62.656 շունչ²:

Վանի գավառակի առանձին շրջանների թեմական պատկանելությունը խայտաբղետ էր: Վան քաղաքն ու Վան-Տոսպի գյուղերը, Արճակի գյուղախումբն ամբողջությամբ, ինչպես նաև Թիմարի գյուղախումբը մասամբ գտնվում էին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի իրավասության ներքո՝ Վանի արքեպիսկոպոսական վիճակի կազմում, Թիմարի գյուղախմբի մի շարք հայաբնակ վայրեր ենթակա էին Լիմ-Կտուց վանական վիճակի հովվական իշխանությանը, Հայոց Ձորի գյուղախումբը Աղթամարի կաթողիկոսության թեմ էր³:

Վանի թեմը հիշատակվում է X դարից հետո՝ որպես Վարագավանքի թեմ: Վանքի վանահայրությունն ու վիճակի առաջնորդությունն ի սկզբանե գրեթե անբաժան էին, այսինքն՝ Վարագավանքի վանահայրը նաև թեմի առաջնորդն էր: Դարերի ընթացքում թեմը հաջորդաբար ենթարկվել է Աղթամարի և Էջմիածնի կաթողիկոսների հոգևոր իրավասությանը, իսկ 1828 թ. հետո անցել է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի ենթակայության տակ: XIX դարի վերջին – XX դարի սկզբին Վանի թեմը և նրան կից՝ Լիմ-Կտուցի և Հեքյարիի վիճակներն ընդգրկում էին Վանի նահանգի գրեթե ամբողջ տարածքը⁴:

Լիմ կղզու թեմը հիշատակվում է XIV դարից: Մինչև 1898 թ. կազմում էր անջատ վանահայրություն, երբեմն Աղթամարի կաթողիկոսության իրավասության տակ: 1898 թ. կցվում է Կտուցի վանահայրությանը⁵:

Կտուցի վանքը և թեմը հաստատվել էին Լիմից անջատված միաբանների կողմից՝ XV դարում (այլ տվյալներով՝ XVII դարում): 1828 թ. անցել է Վանի առաջնորդության իրավասության տակ, իսկ 1898 թ. միավորվել Լիմի վանական վիճակի հետ: Լիմ-Կտուց միացյալ վանական վիճակը կցվել է Վանի առաջնորդությանը 1904 թ.՝ Ազգային կենտրոնական վարչության որոշմամբ⁶:

Երբեմնի ազդեցիկ Աղթամարի կաթողիկոսությունը XX դարի սկզբի դրությամբ արդեն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին էր զիջել նախկին եկեղեցական վիճակների մեծ մասը՝ կորցնելով իր նշանակությունը: 1895 թ. Աղթամարի կաթողիկոս

2 Տե՛ս Ա-Դօ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին* (Երեւան, «Լոյս», 1917), 11-13, 18, 21:

3 Տե՛ս Մաղաբիա Օրմանեան, *Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը* (Կոստանդնուպոլիս, հրատարակիչք Վ. և Հ. Տէր-Ներսեսեան, 1911), 261, 265: Տե՛ս նաև Արշակ Ալպոյաճեան, «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1908), 312-313, 346: Հայոց Ձորի թեմական պատկանելության վերաբերյալ մասնավորապես տե՛ս Թեղդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօրին աղէկրալի 1915 տարիին* (Մի Շորք, 1985), 37, Սամվել Կարապետյան, *Հայոց Ձոր* (Երևան, ՀՃՈՒՀ, 2015), 32:

4 Տե՛ս Ալպոյաճեան, «Առաջնորդական վիճակներ», 312:

5 Նույն տեղում, 313:

6 Նույն տեղում:

Խաչատուր Շիրոյանի (1864 – 1895) մահից հետո կաթողիկոսության աթոռը մինչև Մեծ եղեռնը մնացել է թափուր՝ հանձնվելով Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից ուղարկված տեղապահների և Տնօրեն խորհրդի կառավարմանը⁷:

Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1904 թ. տվյալների՝ Վանի թեմում (Վան-Տոսպ, Ադիլջևազ, Բերկրի, Արճեշ) կային 114 եկեղեցի և 25 կանգուն (անվանապես գործող) վանք, Լիմ-Կտուցի թեմում (Թիմար)՝ 24 եկեղեցի և 8 վանք, Ադթամարի թեմում (Կարճկան, Ոստան, Կեցան, Կարկառ, Հայոց Ձոր, Շատախ)՝ 193 եկեղեցի և 41 վանք⁸:

Բուն Վանի գավառակի տարածքում Մեծ եղեռնի նախաշեմին կար անվանապես գործող 16 վանք, այդ թվում՝ Վան-Տոսպի գյուղախումբ՝ 5 (Վարագավանք, Սուրբ Գրիգորի կամ Սալնապատի վանք, Կարմրավորի Սուրբ Աստվածածին վանք, Սուրբ Խաչ վանք, Կռունկ Վանից կամ Ծովահայաց Սուրբ Աստվածածնի վանք), Թիմարի նահիե՝ 5 (Կտուցի Սուրբ Կարապետ վանք կամ Կտուց անապատ, Լիմ անապատ կամ Սուրբ Գևորգի վանք, Այլորի Սուրբ Աստվածածին վանք, Սուրբ Էջմիածին վանք, Էրերնա Սուրբ Սահակի վանք), Արճակի նահիե՝ 1 (Արճակի Սուրբ Աստվածածին) և Հայոց Ձորի նահիե՝ 5 (Անգղի Սուրբ Աստվածածինը, Սրխու Սուրբ Նշան կամ Սուրբ Մարի-նոսը, Խեքա Սուրբ Գևորգը, Սուրբ Աբրահամը, Ծիծաղաբեր Սուրբ Աստվածածինը)⁹:

Բ. Մեծ եղեռնի նախաշեմին Վանի գավառակի հայկական վանքերի սոցիալ-տնտեսական կացության ընդհանուր բնութագիրը

Պատմական Վան-Վասպուրականը Արևմտյան Հայաստանի վանքերով և սրբավայրերով առավել հարուստ տարածքներից մեկն էր: Ուսումնասիրողները դա պայմանավորում են հետևյալ երեք հիմնական հանգամանքներով. ա) հնում այդ տարածքը Հայաստանի առավել ընդարձակ և բազմամարդ նահանգներից մեկն էր, բ) Վասպուրականի թագավորները, եկեղեցական նվիրապետությունն ու ժողովուրդը եռանդուն են եղել վանքաշինության հարցում, գ) նահանգը նյութապես բավական հարուստ էր, ունեցել է խաղաղության և բնականոն զարգացման համեմատաբար ավելի երկար ժամանակաշրջաններ¹⁰:

XIX դարի վերջին – XX դարի սկզբների ընթացքում վանական կյանքը ինչպես Վանի գավառակում, այնպես էլ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում բնութագրվում է շարունակական անկման միտումներով: Դա պայմանավորված էր երկու հիմնական գործոնով՝ քրդերի կողմից վանքերի պարբերական ասպատակումներով

7 Տե՛ս Ներսէս Ակինեան, *Գաւազանագիրք Կաթողիկոսաց Ադթամարայ: Պատմական ուսումնասիրութիւն* (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1920), 192: Տե՛ս նաև Ալաօյաճեան, «Առաջնորդական վիճակներ», 345:

8 Տե՛ս «1904 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց» (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթեոսեան, 1904), 371-372, 394-395:

9 Հաշվարկը արվել է մեր կողմից՝ ըստ տարբեր աղբյուրների:

10 Տե՛ս Համազասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1947), 976:

և հայ բնակչության շարունակական աշխարհականացմամբ ու դրա հետ կապված՝ վանականի կյանքն ընտրողների թվի նվազմամբ:

Հատկապես մեծ ավերածություններ պատճառվեցին Վանի վանքերին համիդյան կոտորածների ժամանակ: 1895-1896 թթ. կողոպտվեցին և ավերվեցին Վանի գավառակի գրեթե բոլոր գործող վանքերը: Այսպես, Հայոց Ձորում տուժեցին Սպիտակ Սուրբ Աստվածածնի, Անգղա Սուրբ Աստվածածնի, Սրխու, Էրմերա Սուրբ Աստվածածին, Խեքա Սուրբ Գևորգ վանքերը¹¹, Թիմարում՝ Ալյուրի, Էրերնա Սուրբ Սահակ, Սուրբ Էջմիածին վանքերը, Լիմ և Կտուց անապատների «Դրսի տուն» (վանական համալիրի՝ համապատասխան կղզիներից դուրս գտնվող) հատվածները¹², Արճակում՝ Սուրբ Աստվածածին վանքը¹³: Վան քաղաքի և շրջակա գյուղերի ջարդի ընթացքում (1896 թ. հունիս)՝ կողոպտվեցին և հրկիզվեցին Վան-Տոսպի գյուղախմբի վանքերը (Վարագավանք, Կարմրավոր Սուրբ Աստվածածին, Սուրբ Խաչ, Սալնապատի Սուրբ Գրիգոր), սպանվեցին վանքային միաբանության անդամներ, վանքերին կից գործող դպրոցների աշակերտներ, վանքերում ապաստանած հայեր¹⁴: Միայն Լիմի ու Կտուցի անապատների՝ համապատասխան կղզիներում տեղակայված հատվածները, շնորհիվ իրենց անհասանելի դիրքի, խուսափեցին հարձակումներից՝ իրենց հերթին ապաստան տալով շուրջ 10.000 հայ փախստականի¹⁵:

Համաձայն 1896 թ. կազմված համագումար վիճակագրության՝ համիդյան ջարդերի արդյունքում Հայոց Ձորում թալանվել և հրկիզվել էին 5 վանք և 6 եկեղեցի, սպանվել էին 14 քահանա և վարդապետ, Թիմարում՝ համապատասխանաբար՝ 5 վանք, 2 քահանա և վարդապետ, Վան-Տոսպում և Արճակում՝ 4 վանք և 2 եկեղեցի, 4 քահանա և վարդապետ¹⁶:

Վերոնշյալի հետևանքով՝ 1870-ական թթ. – 1910-ական թթ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում Վան-Վասպուրականի բազմաթիվ վանքեր ամայացան և մատնվեցին անխնամության: Մեկ տվյալի համաձայն՝ Վասպուրականում 1870-ական թթ. կեսերին կար 70 գործող վանք՝ 1.500 միաբաններով, իսկ արդեն 1910-ական թթ. սկզբներին՝ միայն 30 կանգուն վանք¹⁷:

Դեռևս 1873 թ. Վանի Ալյուր գյուղի Սուրբ Աստվածածին վանքում տեսչական այցով գտնվող Երեմիա եպիսկոպոս Տեկանցն իր նոթերում կեսկատակ արձանագրում էր, որ վանքում միաբան չլինելու պատճառով միաբանության պաշտոն են վարում 4

11 Տե՛ս «Աղթամարայ հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի վերջին թողոթն եւ տեղեկագիրը», *Արարասր* (Սբ. Էջմիածին), 1896, Ե., մայիս, 247:

12 Տե՛ս «Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում», *Արարասր*, 1896, Բ., փետրվար, 89:

13 Տե՛ս «*Աշխարհանք շաբաթաթերթ գրական, քաղաքական, տնտեսական* (Վան), թիվ 18, 29 մայիս 1911, 12:

14 Տե՛ս «Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին», *Արարասր*, 1896, ԺԲ., դեկտեմբեր, 579:

15 Տե՛ս Մակար վրդ. Տեր-Յովհաննէսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», *Բիզանդիոն* (Կ.Պոլիս), փետրվար 21 (մարտ 6) 1911, թիվ 4366:

16 Տե՛ս «Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին», *Արարասր*, 1896, ԺԲ., դեկտեմբեր, 586:

17 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը. VI. Հայոց Ձորի հայ վանքերը», *Աշխարհանք*, 20 մարտի 1911 (թիվ 10), 273:

կատուներ¹⁸: Մեծ եղեռնի նախօրյակին Վանի գավառակի միայն հատուկենտ վանքեր ունեին կայուն միաբանություն, այն էլ՝ սովորաբար բաղկացած մեկից երեք անդամներից (Վարագավանք, Լիմ, Կտուց): Մնացած վանքերը միայն անվանապես էին գործող՝ տնօրինվելով այցելող հոգևորականի, հարևան հայաբնակ բնակավայրի քահանայի, հոգաբարձու մարմնի, երբեմն անգամ՝ վանքում բնակություն հաստատած որևէ պատահական աշխարհիկ անձի կողմից:

Վանքերի ամայացման հետևանքով առանց որևէ վերահսկողության թողնված վանքապատկան ընդարձակ կալվածքները գրավվում և օգտագործվում էին քուրդ և հայ գյուղացիների կողմից՝ չնչին վարձավճարի դիմաց, երբեմն՝ ձրի:

Անգամ առավել խոշոր գործող վանքերի միաբանները բողոքում էին նյութական միջոցների սղությունից և դրա հետևանքով՝ վանքային շինությունների, վանքապատկան տնտեսության անմխիթար վիճակից: Այսպես, Լիմ անապատի միաբան Մակար վարդապետ Տեր-Հովհաննիսյանը 1911 թ. իր թղթակցություններից մեկում արձանագրում էր, որ վանքը չունի կալի մեքենա, ինչի հետևանքով փչանում է հացահատիկի որոշ մասը, իսկ Լիմի անապատի ենթակայության տակ գտնվող և անվանապես գործող վանքերի (Էջմիածին, Սուրբ Սահակ) շենքերի մեծ մասը գրեթե ավերակ է¹⁹:

Քրդական հարձակումների հետևանքները հաղթահարելու, անմխիթար տնտեսական վիճակը բարելավելու հրամայականը հանգեցնում էր նրան, որ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի համաձայնությամբ որոշ վանքերի նկատմամբ հաստատվում էր աշխարհիկ անձանցից կազմված հոգաբարձություն: Այսպես, համիդյան կոտորածներից հետո նման հոգաբարձություն էր սահմանվել Վարագավանքի նկատմամբ (մանրամասն տե՛ս հոդվածի Վարագավանքին վերաբերող բաժնում):

Վանքի կառավարման գործառնությունը դրվում էր որևէ աշխարհիկ անձի կամ հոգաբարձության վրա՝ նաև այն պարագայում, երբ վանքը տարբեր պատճառներով (բնական մահ, կոտորածներ) այլևս դադարում էր ունենալ միաբաններ, կամ էլ վանքում ապրող միաբաններն իրենց գառամյալ տարիքի պատճառով այլևս անկարող էին վարել վանահայրության պաշտոնից բխող պարտականությունները²⁰:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը, գավառական խորհուրդները ծրագրեր էին մշակում կանգուն շենքեր ունեցող, սակայն սակավաթիվ միաբանությամբ կամ միաբաններից գուրկ վանքերը կրթական նպատակներով ծառայեցնելու ուղղությամբ: Այսպես, Վանի գավառակի վանքերից շատերում (Վարագավանք, Սալնապատի Սուրբ Գևորգ, Կարմրավոր Սուրբ Աստվածածին) բացվում են գիշերօթիկ դպրոց-որբանոցներ 1894-1896 թթ. համիդյան կոտորածների արդյունքում ծնողներին կորցրած երեխաների համար: Նշված դպրոցները պահելու համար, ի թիվս այլ միջոցների, օգտագործվում էր տվյալ վանքի վանքապատկան կալվածքներից ստացվող հասույթների մի

18 Տե՛ս Երեմիա Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.* (Երևան, Հայաստանի ԳԱԱ պատմ ինստ., 1991), 266:

19 Տե՛ս Մակար վրդ. Տեր-Յովհաննեսյան, «Վանա ծովն եւ իր կղզիները», *Բիզանդիոն*, 23 փետրվարի (8 մարտի) 1911, թիվ 4368, 1:

20 Տե՛ս Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, 995:

մասը²¹: Վանքերից շատերում դպրոցներն ու գիշերօթիկ վարժարանները գործում էին որոշ ընդհատումներով նախքան Մեծ եղեռնը:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո Վանի վանքապատկան տնտեսությունների կառավարման արդյունավետության բարձրացման հարցում որոշակի ներդրում են ունենում նաև Հ. Յ. Դաշնակցության տեղական կառույցները: Այսպես, օրինակ, Հայոց Ձորում դաշնակցական գործիչները կարողանում են որոշ չափով կարգ ու կանոն մտցնել վանքապատկան կալվածքների վարձակալության հարցերում, ավելացնել վարձակալությունից ստացված հասույթները և ուղղել դրանք գավառակի հայկական դպրոցների ծախսերի վրա²²:

Շնորհիվ ազգային-համայնքային կառույցների գործունեության՝ Վանի վանքերի սոցիալ-տնտեսական վիճակը սկսում է հետզհետե ցույց տալ բարելավման միտումներ: Սկսում է աշխուժանալ վանական կյանքը, ինչն արտահայտվում է Վան-Վասպուրականի առանձին խոշոր վանքերում վանականների թվի որոշակի ավելացմամբ: Սակայն 1914 թ. բռնկված Առաջին աշխարհամարտը և Մեծ եղեռնը մեկընդմիջտ կասեցրեցին այդ գործընթացը:

Գ. Վան-Տոսպի վանքերը

1. Վարազավանք (Ներքին Վարագ, Ստորին Վարագ, Նոր Մենաստան Սուրբ Իսաչի) Վարազավանքը կամ Ստորին (Ներքին) Վարագա վանական համալիրը Վան-Վասպուրականի և ամբողջ Արևմտյան Հայաստանի առավել նշանավոր վանքերից մեկն էր՝ «*համայն վասպուրականցուց պաշտելի և խնկելի արքայայր, հոգին ու միտք գրառող, արդար*»²³: Տեղակայված էր Վան քաղաքից հարավ-արևելք, Ներքին Վարագ լեռան արևմտահայաց լանջին, փոքրիկ հարթության վրա:

Մեծ եղեռնի նախաշեմին Վարազավանքը բաղկացած էր յոթ՝ միմյանց կից եկեղեցիներից, ինչի պատճառով տեղի մահմեդական բնակչության շրջանում այն հայտնի էր «Ետտի քիլիսե» (յոթ եկեղեցի) անունով²⁴: Վանքի շուրջը ձգվում էր երկհարկանի մի շինություն, որը ներառում էր վանականների և ուխտավորների համար նախատեսված

21 Նույն տեղում, 1089:

22 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 10, 274: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ Դաշնակցության կողմից Վանի գավառի որոշ վանքերի գույքի նկատմամբ վերահսկողության հաստատումը, վանական գործերին խառնվելը առանձին դեպքերում ուղեկցվեցին եկեղեցական գույքի ապօրինի բռնագրավմամբ և նման բռնագրավումների դեմ ձայն բարձրացնող հոգևորականների նկատմամբ բռնություններով: Տե՛ս Ավետիս Հարությունյան, «Հոգևոր-կրոնական հարաբերությունները Վանի նահանգում եւ Աղթամարի վանքի կողոպտման խնդիրը», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի* 8 (2016), 133-143:

23 Գեորգ Շերենց, *Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց* (Թիֆլիս, տպ. «Վերեիչե եւ Կամենմայիւր», 1902), 59:

24 Վանական համալիրի եկեղեցիներն էին՝ սուրբ Աստվածածինը (XI դար), սուրբ Գևորգը (գավիթ), սուրբ Նշանը (XI դար), սուրբ Իսաչը, սուրբ Սիոնը, սուրբ Հովհաննէսը կամ սուրբ Աբեղան (X դար) և սուրբ Սոփիան կամ Բերդավորը (981 թ.), տե՛ս Մուրադ Հասրաթյան, «Վարազավանք», «*Քրիստոնյա Հայաստան*» *հանրագիտարան* (Երևան, Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ., 2002), 962:

47 սենյակներ, փոռ, բաղնիք, Ժառանգավորաց դպրոցը, ինչպես նաև որպես վանքի առաջնորդարան ծառայող երկու մեծ սենյակ²⁵:

Վարագավանքի վերելքով և զարգացմամբ է բնութագրվում Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) վանահայրության մոտ 30-ամյա շրջանը (1857-1885 թթ., որոշ ընդմիջումներով): Խրիմյանի առաջին քայլերից է դառնում վանքը Վանի առաջնորդների իրավասությունից հանելը և այն Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին ուղղակի ենթակա դարձնելը²⁶:

Որպես Վարագավանքի վանահայր՝ Մկրտիչ Խրիմյանի նշանակալից ձեռնարկներից մեկն է դառնում 1857 թ. գարնանը վանքում Ժառանգավորաց վարժարան – գիշերօթիկ դպրոցի հաստատումը, որտեղ սկսում է ուսում ստանալ Վան քաղաքից և շրջակա գյուղերից մոտ 25 երեխա²⁷: Հետագա տարիներին վարժարանի աշակերտների թիվը հասցվում է 40-ի²⁸:

1885 թ. Մկրտիչ Խրիմյանի՝ Կ. Պոլիս կանչվելուց հետո Վարագավանքի վանահայրությունը նորից անցնում է Վանի թեմի առաջնորդներին: Դրանցից հատկապես Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեաթճյանը (պաշտոնավարել է մինչև 1888 թ.) հիմնանորոգում է տպարանը, Ժառանգավորաց դպրոցի կացարանը և այլ շինություններ²⁹:

Գ. Ալեաթճյանի և նրա հաջորդների օրոք վանքը շարունակում է իր ավելի կամ պակաս շեն ընթացքը մինչև 1896 թ. հունիս, երբ Վանի կոտորածի օրերին այն, ի թիվս շրջանի այլ եկեղեցիների և վանքերի, ենթարկվում է քուրդ ջարդարարների հարձակմանը: Վանքի միաբաններից, Ժառանգավորաց դպրոցի աշակերտներից, վանքում աշխատող մշակներից շատերը սպանվում են, վանքապատկան ունեցվածքը՝ շարժական գույքը, անասուններն ու արջառը, թալանվում: Հրկիզվում և ավերակույտի են վերածվում վանքի վարչական շինություններից շատերը: Վանքն առժամանակ ամայանում է³⁰:

Կոտորածների ալիքի մարելուց հետո վանեցիներն անմիջապես ձեռնամուխ են լինում վանքի վերականգնմանը: Որոշվում է վանքի վերաշինության և հետագա կառավարման գործը հանձնել աշխարհականների՝ անմիջապես Կ. Պոլսի պատրիարքարանի իրավասության տակ գործող և քաղաքի երևելի վաճառականներից բաղկացած հոգաբարձության: Հոգաբարձության մարմնին հաջողվում է մի քանի տարվա ընթացքում վերականգնել ավերված շինությունները, կառուցել նոր կացարաններ վանքի միաբանների, Ժառանգավորաց դպրոցի աշակերտների, վարժարանի ուսուցչական կազմի և ուխտավորների համար: Հաջողությամբ է պսակվում վանքի տնտեսության վերականգնումը, այն հասցվում է «աննախընթաց պայծառությամբ»³¹:

25 Տե՛ս Երուսնդ Լալայեան, «Վասպուրական. Նշանատր վանքեր», *Ազգագրական հանդես* (Թիֆլիս), 1911, գիրք XXI, 66:

26 Տե՛ս Շերենց, *Մրբավայրեր*, 64:

27 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», 51:

28 Տե՛ս Շերենց, *Մրբավայրեր*, 64:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», 52:

31 Նույն տեղում: Տե՛ս նաև Համբարձում Երամեան, *Յուշարձան*, հատ. Ա (Աղեքսանդրիա, տպ. Արամ Գասապեան, 1929), 433-434, նույնը, հատ. Բ., 133:

1909 թ. Վանի նահանգ այցելած արևելահայ ուսումնասիրող Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) հաղորդում է, որ վանքապատկան տնտեսությունն ընդգրկում էր 1.000 գլուխ ոչխար, 30-ից ավելի կով ու մատակ, 20-ից ավելի եզներ: Վանքն ուներ հսկայական արոտատեղիներ, ավելի քան 150 դեպյատին³² վարելահող, լավ պարտեզ, ընդարձակ ծառաստան, ջրաղաց, որի համար ջուր էր բերվել Վարագ լեռան լանջերից բխող աղբյուրներից: Բացի դրանից, վանքը տարեկան շոշափելի դրամական նպաստներ էր ստանում տարբեր կտակներից և հիմնադրամներից: Վանքի եկամուտների մեծ մասը ծախսվում էր դպրոցի վրա, մնացածը՝ միաբանության պետքերի և 40 մշակների վրա³³:

Նույն՝ 1909 թ. տվյալներով՝ Վարագավանքի Ժառանգավորաց վարժարանն ուներ երեք նախակրթական և չորս սովորական դասարաններ, որոնցում սովորում էր ավելի քան 60 երեխա³⁴: Վարժարանի առաջընթացը մեծապես պայմանավորված էր 1905 թ. այդ հաստատության տեսուչ նշանակված Արտակ Դարբինյանի գործունեությամբ: Նա մի շարք բարելավումներ է մտցնում դպրոցում, մասնավորապես՝ կազմում է ուսումնական նոր ծրագիր, որը համընկնում էր Կովկասի հայկական միջնակարգ դպրոցների, հատկապես Գևորգյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի ծրագրերին³⁵:

Վանի հայերի և Վարագավանքի կյանքում նշանակալից իրադարձություններ են դառնում 1910 թ. Ժառանգավորաց վարժարանի և Վարագավանքում Խրիմյան հայրիկի գործունեության 50-ամյա հոբելյանի տոնակատարությունները: Դրա առթիվ վանք եկած ուխտավորների շրջանում, ինչպես նաև Վանում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում կազմակերպվում են հանգանակություններ, որոնց արդյունքում հավաքված գումարներն ուղղվում են ի պետս վարժարանի կարիքների³⁶:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1914 թ. հունիսին Վարագավանք այցելած ռուսահայ հոգևորական Ռուբեն Բեկգուլյանցը հաղորդում էր, որ այն բավական բարեկարգ վիճակում է, թեև իր վրա դեռևս կրում է համիդյան ավերածությունների հետքերը: Վանքին կից շարունակում էր գործել Ժառանգավորաց գիշերօթիկ դպրոցը՝ 70 աշակերտով: Ընթացքի մեջ էր դպրոցի նոր շենքի կառուցումը³⁷:

Վանքում հատուկ ուշադրություն էր դարձվել մեղվապահության և թռչնապահության զարգացման վրա: Կար մեղվանոց՝ 12 նոր մեղվափեթակներով: Թռչնաբան էին բերվել և պահվում էին լավագույն ցեղատեսակների թռչուններ: Վանքում կար

32 Մեկ դեպյատինը մոտավորապես հավասար է մեկ հեկտարի:

33 Տե՛ս Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները* (Երևան, տպ. «Կուլտուրա», 1912), 24:

34 Նույն տեղում:

35 Տե՛ս Ժառանգավորաց դպրոցի սան Գարեգին Մովսիսյանի հուշերը, <http://www.raa-am.com/raa/public/publish.php?mid=5&more=2&cont=33&obid=112&uid=2012> դիտվել է 21.01.2019:

36 Տե՛ս Երամեան, *Յուշարձան*, հատ. Ա., 434, նույնի, հատ. Բ., 133:

37 Տե՛ս Рубен Бекгульяни, *По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году* (Ростовъ на Дону: типография Я. М. Искидарова, 1914), 18:

նաև ձիթահանք: Մենաստանի տնտեսական կառավարումը գտնվում էր վանական տեսչական խորհրդի ձեռքում, որը կազմված էր երևելի վանեցի հայերից³⁸:

1913 թ. Վարագավանք է այցելում Վանի նորանշանակ նահանգապետ Թահսին բեյը, որը, հաշվի առնելով վանքի առաջադիմությունը, վանքին ճոտահան մեքենա (ինկուբատոր) է նվիրում, ինչպես նաև լուսանկարվում է Ժառանգավորաց վարժարանի սաների հետ³⁹:

1914 թ. վանքի միաբանությունը բաղկացած էր ընդամենը երեք վարդապետներից⁴⁰ (համեմատության համար՝ 1873 թ. վանք այցելած Երեմիա Տեկանցը հաղորդում է, որ վանքի միաբանությունը բաղկացած էր 14 անդամներից, այդ թվում՝ 8 վարդապետ⁴¹): Փոխվանահայրը (վանահայրն ի պաշտոնե Վանի թեմի առաջնորդն էր) 86-ամյա Վրթանես ծայրագույն վարդապետ Տեկանցն էր (սպանվել է թուրք ոստիկանների կողմից 1915 թ. ապրիլի 7-ին)⁴²:



Լուս. 1. Վարագավանք. ընդհանուր տեսարան (Бекгульянц Р., По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году, Ростовь на Дону, 1914)

38 Նույն տեղում, 16-17:

39 Նույն տեղում, 18-19:

40 Նույն տեղում, 18:

41 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 272:

42 Տե՛ս Թ-էողիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 43:



Լուս. 2. Վարազավանքի հոգևորականներն ու սպասավորները Սենեքերիմ արքայի գահի շորջ («Արաքս» պատկերագարի հանդես, Ս. Պետերբուրգ, 1893, Գիրք Ա)



Լուս. 3. Վարազավանքի դպրոցի սաները ծղոտե գլխարկներ հյուսելուց (Бекгульянц Р., По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914)



Լուս. 4. Վանի կուսակալ Թահսին բեյը Վարազավանքում (Бекгульянци Р., По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914)

2. Ս. Գրիգոր վանք (Սալնապատի վանք, Սալնաձորի անապատ)

Վանքը գտնվում էր Վան քաղաքից դեպի հարավ-արևելք՝ 6 կմ հեռավորության վրա, Վարազա լեռան ստորոտում ձգվող մի ձորակի մեջ բարձրացած բլրակի գագաթին⁴³: Մեծ եղեռնի նախօրյակին վանքը բաղկացած էր Ս. Աստվածածնի և Ս. Կարապետի եկեղեցիներից և մի ժամատնից, շրջապատված էր պարսպով, ուներ վանականների և ուխտավորների համար նախատեսված կացարաններով առանձին շենք⁴⁴: Ամռանը վանքի տարածքը բավական հով էր, ուստի և Վանից շատ ընտանիքներ գալիս էին այնտեղ ամառանոց՝ ապաստանելով վանքի սենյակների կամ վրանների մեջ⁴⁵:

1873 թ. գարնանը վանք այցելած Երեմիա Տեկանցը հաղորդում էր, որ վանքն առանց միաբանների է, ունի միայն վանահայր: Վանքում էին ապրում մեկ մշակ, մեկ գառնարած, մեկ տնտես՝ իր երկու որդիներով: Վանքի թեմին էին պատկանում Վան-Տոսայի 11 հայաբնակ գյուղեր⁴⁶:

43 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 80:

44 Նույն տեղում, 83:

45 Նույն տեղում, 80: Տե՛ս նաև Շերենց, *Միբավայրեր*, 53:

46 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 243:

Ա-Դոյի տվյալներով (1909 թ.) վանքապատկան տնտեսությունը հարուստ չէր, ուներ ընդամենը 120 ոչխար և 30-ի չափ այլ անասուններ: Վանքապատկան արոտատեղիներն ու վարելահողերը տրված էին կապալով՝ տարեկան 30 ոսկի եկամտի դիմաց⁴⁷:

Վանքում գործում էր գիշերօթիկ դպրոց-որբանոց (բացվել էր 1898 թ.), որի ծախսերը հոգվում էին Հայոց պատրիարքարանի միջոցով տարբեր բարերարներից ստացվող նպաստներով (այդ թվում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում գործող որբախնամ ազգային ընկերությունը)⁴⁸: 1909 թ. տվյալներով՝ որբանոցն ուներ 40 սան⁴⁹:

3. Կարմրավորի Ս. Աստվածածին վանք

Կարմրավորի Ս. Աստվածածին վանքը գտնվում էր Վարազա և Զիաթնուկ լեռների լանջին տարածված փոքրիկ հարթության վրա: Հեռավորությունը Վանի Այգեստան թաղամասից՝ երեք, իսկ Վարազավանքից՝ մեկ կիլոմետր էր⁵⁰: Մեծ եղեռնի նախօրյակին վանքը բաղկացած էր մի եկեղեցուց և մի գավիթից, պարսպապատ էր: Եկեղեցին շինված էր հասարակ, անտաշ քարերից⁵¹: Վանքը վերանորոգվել է 1868-70 թթ., ապա՝ 1895-96 թթ. համիդյան կոտորածների ընթացքում դրան պատճառած ավերածություններից հետո⁵²:

1873 թ. ապրիլին վանք այցելած Երեմիա Տեկանցը հաղորդում էր, որ վանքը վանահայր չունի, ենթարկվում է ուղղակիորեն Վանի թեմի առաջնորդին: Վանքում ապրում էին մեկ միաբան, որը տեղափոխվել էր Լիմ անապատից, մեկ վերակացու, մեկ տիրացու, երկու մշակ, հինգ հոտաղ, երկու տնտես⁵³:

1880-81 թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում բռնկված սովից, ինչպես նաև 1895-96 թթ. կոտորածներից հետո վանքում առժամանակ բացվել էր որբանոց-գիշերօթիկ դպրոց⁵⁴:

Վանքն ուներ վարելահողեր, որոնք կառավարվում էին հատուկ հոգաբարձական մարմնի կողմից: 1910-ական թթ. սկզբներին վանքում էր ապրում մի վարդապետ, իբր վանահայր՝ ստանալով հոգաբարձությունից ուտեստ, հանդերձ և ամսական 30 դուրուշ ռոճիկ⁵⁵:

47 Տե՛ս Ա-Դ-ու, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 25:

48 Տե՛ս Տրդատ եպս. Պալեան, *Հայ վանորայք* (Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008), 264:

49 Տե՛ս Ա-Դ-ու, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 25:

50 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», գիրք XXI, 77:


51 Նույն տեղում:

52 Նուն տեղում, 51:

53 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 246:

54 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 51-52:

55 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 80: Թեոդիկը նշում է Մեծ եղեռնի նախօրյակին վանքի վանահոր անունը՝ Եղիշե վարդապետ Խերանյան, որն ըստ երևույթին Լալայանի հիշատակած նույն վարդապետն է: Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականություն*, 44:



Լուս. 5. Սալնապատի Ս. Գրիգոր վանք (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911)



Լուս. 6. Կարմրավորի Ս. Աստվածածին վանք (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911)

4. Ս. Խաչ վանք

Վանքը գտնվում էր Վան քաղաքից 5 կմ դեպի հարավ-արևելք՝ Կոտուրաչ գյուղի մոտ, բլրի գագաթին: Բաղկացած էր եկեղեցուց, մատուռից (սուրբ Գևորգ) և գավիթից: XX դարի սկզբներին գավիթի ծածկն արդեն քանդված էր, իսկ եկեղեցին խարխուլ վիճակում էր⁵⁶:

Վանքը ծառայել է Վան քաղաքի և շրջակա գյուղերի բնակչության համար որպես ուխտատեղի և օղակոխության համար հարմար տեղ: «*Հայ եւ թուրք զբօսաշրջիկները պակաս չեն նորա ուռնեսաց տակ քէֆ անելու, բայց ո՛չ մի օգուտ տալով վանքին*», – նշվում է մի վկայության մեջ⁵⁷:

XIX դ. վերջին – XX դ. սկզբներին վանքը կայուն միաբանություն չի ունեցել: 1873 թ. Սուրբ Խաչ այցելած Երեմիա վարդապետ Տևկանցը նշում է, որ վանքի վանահոր պարտականությունները կատարում էր կուրուբաշցի քահանա տեր Խաչատուրը: Բացի նրանից վանքում կային երկու տնտես, չորս մշակ, մեկ հովիվ, մեկ գառնարած: Վանական տնտեսությունը բաղկացած էր 103 անասունից (85 հաստ ոչխար, 4 գոմեշ, 4 եզ, 1 կով, 9 հորթ և այլն)⁵⁸:

Արևմտահայ ազգագրագետ և մանկավարժ Մանուել Միրախորյանի՝ վանք այցելության ժամանակ (1883 թ.) այն ունեցել է վարդապետ վանահայր (անունը չի նշվում), որը մտադիր էր վանքում գիշերօթիկ որբանոց-դպրոց բացել⁵⁹:

5. Կոռնկ Վանից կամ Ծովահայաց Ս. Աստվածածին վանք

Կոռնկ Վանից կամ Ծովահայաց Սուրբ Աստվածածին⁶⁰ վանքը գտնվել է Վան քաղաքից հարավ՝ մոտ հինգ կմ հեռավորության վրա, մի բլրակի գագաթին՝ Ծվստան և Արտամետ գյուղերի միջև: Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ վանական համալիրը բաղկացած էր եկեղեցուց, գավիթից, վանականների և ուխտավորների համար նախատեսված մի քանի սենյակներից, շրջապատված էր պարսպով⁶¹:

Վանքը գործում էր Աղթամարի կաթողիկոսության ենթակայության տակ: Մշտական միաբանությունից զուրկ էր: Վանքապատկան կավածքները ներառում էին պողաբեր այգի, ինչպես նաև 225 օրավար անջրդի վարելահող, որը տարեկան 15

56 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 86:

57 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 47:

58 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 241:

59 Տե՛ս Մանուել Միրախորեան, *Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի: Տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն պիտանի գիտնոց*, մասն Բ. (Կ. Պօլիս, տպ. Մ. Կ. Սարբեան, 1885), 241:

60 Մանուել Միրախորյանը վանքի «Կոռնկ Վանից» անվան ծագումը կապում է հետևյալ ավանդության հետ. «*Մի օր, երբ քահանայն պարսարագ կը մատուցանէ, Ս. Խորհրդեան գինին կը պակսի, կոռնկ մի յանկարծ եկեղեցուց պարտահանէն ներս կը մտնէ և կիջնէ սեղանին վերայ քահանային առջեւ՝ յիւր բերան բռնած հասուն մի ողկոյզ խաղողի. պարսարագիչ քահանայն մեծ երկիւղածութեամբ կառնու զայն (ողկոյզ) եւ վարագորի ետերը քամելով՝ Ս. Խորհուրդն կը կատարէ*»: Տե՛ս Միրախորեան, *Նկարագրական ուղևորություն*, մասն Բ., 227-229:

61 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 85:

ուսկի կապալով տրված էր երկու-երեք արտամետցու: Նրանք էլ վանքում բնակեցրել էին մի գյուղացի ընտանիք, որը վարում էր տնտեսությունը⁶²:

Դ. Թիմարի և Արճակի վանքերը

1. Կոտուցի Ս. Կարապետ վանք (Կոտուց անապատ)

Կոտուց անապատը գտնվում է Վանա լճի համանուն կղզու վրա: XIX դարի վերջին – XX դարի սկզբին վանքային համալիրը բաղկացած էր միայն մեկ՝ Ս. Կարապետ տաճարից, բազմաթիվ խցերից և «դրսի տուն» կոչվող հատվածից (գտնվում էր կղզու հանդեպ՝ լճի հարավային ափին, բաղկացած էր միաբանների համար մի քանի սենյակներից, փոքրիկ հասարակ եկեղեցուց, դպրոցական փոքրիկ շենքից և տնտեսական մասից (գոմեր, հացահատիկի շտեմարաններ):

1910-ական թթ. սկզբների դրությամբ Կոտուց անապատին էին պատկանում 300 գլուխ ոչխար և 100 գլուխ տավար, ընդարձակ վարելահողեր, անտառներ, այգիներ, մեկ ջրաղաց, ձիթհանք, խանութներ Վանում, Ադրիանապոլսում, Թիֆլիսում, Պոլսում⁶³: Վանքապատկան տնտեսությունից ընդհանուր եկամուտը հասնում էր 300 օսմանյան լիրայի, որը ծախսվում էր գլխավորապես միաբանությունը և որբանոցը պահելու վրա⁶⁴: Որբանոցը գտնվում էր «Դրսի տուն» հատվածում և 1909 թ. ուներ շուրջ 15 սան⁶⁵:

Մեծ եղեռնի նախօրյակին Կոտուց անապատի հոգևոր տեսչությանն էին ենթարկվում Թիմարի 8 գյուղեր (Այլուր, Խավենց, Դուլաշեն, Աննավանք, Ամենաշատ, Մարմետ, Եկմալ, Ջիրաշեն)⁶⁶:

1873 թ. դրությամբ անապատի միաբանությունը բաղկացած էր 33 հոգուց՝ 12 վարդապետ, 4 ավագ սարկավագ, 2 ուրարակիր, 5 դպիր, 11 մահտեսի⁶⁷: Դրա համեմատ՝ 1909 թ. Կոտուց այցելած Ա-Դ-ոն նշում է, որ վանքն ուներ միայն երեք վարդապետներից բաղկացած միաբանություն: Վանահայրության պաշտոնի տեղապահ Ստեփանոս վարդապետ Աղազատյանն ապրում էր «Դրսի տանը» և իր ձեռքում էր պահում վանքի տնտեսության ընդհանուր հսկողությունը: Դրսի գործերը վարելու պարտականությունը դրված էր Գրիգոր վարդապետի վրա, որը շարունակ շրջում էր վանքապատկան կալվածքներով, հետևում վար ու ցանքին, ինչպես նաև պտղին⁶⁸ էր հավաքում⁶⁹:

62 Տե՛ս Շերենց, *Մորավայրեր*, 45:

63 1910 թ. ամռանը Վանի նահանգ այցելած Երվանդ Լալայանը ներկայացնում է Կոտուց անապատի կալվածքների մանրամասն ցուցակը: Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXII, 93:

64 Նույն տեղում:

65 Տե՛ս Ա-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 29:

66 Նույն տեղում:

67 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 205-251:

68 Գյուղացիների կողմից վանքերին բնամթերքի տեսքով տրվող հարկ:

69 Տե՛ս Ա-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 29:

Ա-Դ-ոն նաև հաղորդում է, որ միաբանության վարդապետներն ապրում էին իրար հետ սիրով, իսկ վանքի տնտեսության մեջ նկատելի էր հոգացողություն: Առանձին հոգատարությամբ էր պահվում Կտուցի փոքրիկ մատենադարանը, ուր խնամքով դարսված պահպանվում էին հին ձեռագիր Ավետարաններ և այլ կրոնական գրքեր⁷⁰:

2. Լիմ անապատ (Ս. Գևորգ վանք)

Լիմ անապատը գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևելքում տեղակայված Լիմ կղզու վրա, որը Վանա լճի վեց կղզիներից ամենամեծն ու ընդարձակն է⁷¹:

XIX դարի վերջին – XX դարի սկզբներին Լիմի վանական համալիրը բաղկացած էր Ս. Գևորգ եկեղեցուց, վանականների խցերից և «Դրսի տուն» հատվածից, որը գտնվում էր լճի՝ կղզուն հանդիպակաց հարավային ափին⁷²: «Դրսի տուն» կոչվող հատվածն իր հերթին բաղկացած է եղել միաբանների համար նախատեսված սենյակներից, մոտ 15 սան ունեցող գիշերօթիկ դպրոց-վարժարանից, որի համար 1883 թ. կառուցվել էր նոր շենք, և տնտեսական մասից⁷³:

1896 թ. համիդյան կոտորածի ժամանակ «Դրսի տունը» ենթարկվել էր քրդերի ասպատակության և թալանի: Դրա հետ մեկտեղ՝ կոտորածների տարբեր ժամանակաշրջաններում Լիմի անապատի՝ կղզու հատվածը ապաստան էր տվել հազարավոր հայերի⁷⁴:

1873 թ. գարնանը վանք այցելած Տևկանցը հաղորդում է, որ այն ուներ 32 միաբան (14 վարդապետ, 2 ավագ սարկավագ, 2 ուրարակիր, 8 դպիր, 7 մահոտեսի)⁷⁵: 1880-ական թթ. սկզբներին Լիմի մեջ կար գրեթե 50 միաբան⁷⁶, սակայն հետագայում վանականների թիվը հետզհետե նվազել է: Արդեն 1910-ական թթ. սկզբներին Լիմի անապատի միաբանությունը բաղկացած էր միայն ութ անդամից (յոթ վարդապետ և մեկ եպիսկոպոս)⁷⁷: 1911 թվականից վանահայրն էր Հովհաննես վարդապետ Հյուսյանը, որի շնորհիվ 1915 թ. փրկվել և Էջմիածին են տեղափոխվել Լիմի ձեռագրերի մի մասն ու եկեղեցական սպասքը (Մեծ եղեռնի նախօրյակին Լիմն ուներ հարուստ

70 Նույն տեղում: Մեծ եղեռնի ընթացքում (1915-16 թթ.) Կտուց անապատից Էջմիածին տեղափոխվեցին և ներկայումս Մատենադարանում են պահվում 202 ձեռագիր մատյան: Տե՛ս Լուսինե Թումանյան, «Լիմ եւ Կտուց մենաստանները Մեծ եղեռնի օրերին», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, ԿԹ. տարի, 2013, Դ (ապրիլ), 106):

71 Տե՛ս Շէրեց, *Սրբավայրեր*, 76: Աղբյուրները Լիմ անունը ստուգաբանում են հունարեն «լիմնե»՝ լիճ կամ «լիմի» («լիմեն»)՝ նավահանգիստ, ապաստարան բառերից: Տե՛ս Համագասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1940), 4:

72 Լալայեան, «Վասպուրական», XXII, 85:

73 Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 45:

74 Տե՛ս Տէր-Յովհաննիսիւսան, «Վանայ ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

75 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 260:

76 Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 44:

77 Տե՛ս Տէր-Յովհաննիսիւսան, «Վանայ ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

մատենադարան՝ շուրջ 550 ձեռագրերով և 3,000-ից ավելի տպագիր գրքերով)⁷⁸:

Լիմ անապատի հոգևոր տեսչության տակ գտնվում էին Թիմարի գյուղախմբի 16 հայաբնակ գյուղեր՝ Ջանիկ, Դարաբեկ, Նորշեն, Ատեր, Նորավանց, Գոմս, Շահ-գյալդի, Խառաշիկ, Ամուկ, Փիրկարիբ: Լիմի ենթակայության տակ էին գործում Թիմարի Սուրբ Աստվածածին (Խաթուն Տիրամոր) և Էջմիածնի Սուրբ Սահակ վանքերը⁷⁹:

Վանքն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, անտառներ, այգի, չորս ջրաղաց, ինչպես նաև խանութներ Վանի մեջ և այլուր⁸⁰: Վանքի տնտեսությունից հասույթն ուղղվում էր միաբանության և վարժարանի ծախսերը հոգալու վրա:




Լուս. 7. Կտուց անապատ (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911)

78 Տե՛ս Թումանյան, «Լիմ եւ Կտուց մենաստանները», 104: Տե՛ս նաև Գեղամ Բաղայան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին. Մաս առաջին: Վանի վիլայեթի կենտրոնական, հյուսիսային և արևելյան գավառները», «Վե՛ս» համահայկական հանդես, Է (ԺԳ) տարի, թիվ 2 (50), ապրիլ-հունիս, 2015, 125:

79 Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 46:

80 Վանքապատկան կալվածքների ցուցակը տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXII, 91-92:



Լուս. 8. Լիմ անապատ (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911)

3. Ալյուրի Ս. Աստվածածին վանք

Ալյուրի Սուրբ Աստվածածին վանքը գտնվել է Թիմարի գյուղախմբի Ալյուր հայաբնակ գյուղից դեպի արևմուտք՝ մոտ 10 թուղե հեռավորության վրա: Վանքի հիմնադրման ժամանակի մասին տեղեկություններ չեն պահպանվել, ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարից ոչ ուշ⁸¹:

1873 թ. ապրիլին վանք այցելած Ե. Տևկանցը նշում է, որ վանական համալիրը բաղկացած էր սրբատաշ քարերով կառուցված գլխավոր եկեղեցու շենքից, գավիթից և վարչական-տնտեսական պետքերի համար օգտագործվող մի քանի փոքր շինություններից (առաջնորդարան, վարժարան, տնտեստուն, մառան, գոմ, հարդանոց): Վանքի վանահայրն էր Կարապետ վարդապետը, որը ձմեռը վարժապետություն էր անում վանքին կից վարժարանում, որտեղ սովորում էին գյուղի տղաները, իսկ ամառը զբաղվում էր հողագործությամբ՝ վանքապատկան հողերի մշակմամբ⁸²:

1900-ական թթ. սկզբներին վերաբերող վկայությամբ՝ վանքն այլևս չունեի մշտական վանահայր, այլ գտնվում էր Կոտուց անապատի իրավասության տակ՝ կառավարվելով այնտեղից վանք պարբերաբար այցելող վանականների կողմից⁸³:

81 Նույն տեղում, 99: Տե՛ս նաև Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 343:

82 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 266: Վանքի վանահոր մասին, առանց նրա անունը տալու, հիշատակում է նաև 1883 թ. վանքն այցելած Մանուել Միրախորյանը: Տե՛ս Միրախորեան, *Նկարագրական ուղեւորություն*, մասն Բ, 280:

83 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 74:

Հաղորդվում էր, որ թեև վանքն ուներ որոշ սեփական կալվածքներ և գյուղատնտեսական պարագաներ, սակայն կանոնավոր տնտեսության բացակայության պայմաններում վանքի հողերից ու հանդից օգտվում են Ալյուր գյուղի բնակիչները⁸⁴:

4. Ս. Էջմիածին վանք

Ս. Էջմիածնի վանքը⁸⁵ գտնվում էր Վանա լճի արևելյան ափին՝ Կտուց և Լիմ անապատների «Դրսի տուն» հատվածները միացնող ճանապարհի վրա: Վանքային համալիրը բաղկացած էր երկու եկեղեցիներից՝ Սուրբ Էջմիածին ու Սուրբ Աստվածածին, և մեկ մատուռից⁸⁶ (այլ տվյալներով՝ մեկ մատուռից (Վերին Էջմիածին) և մեկ եկեղեցուց (Ներքին Էջմիածին)⁸⁷): Մեկ այլ սկզբնաղբյուրի հեղինակ՝ Գեորգ Շերենցը, չմանրամասնելով վանքի եկեղեցական շինությունների թիվը, անվանում է այն «փոքրիկ վանք»⁸⁸:

1873 թ. վանք այցելած Տեղեկացրեցը հաղորդում է, որ այն ծառայում էր որպես Լիմ անապատի ազարակ, ուներ մեկ վանահայր և մեկ միաբան⁸⁹:

20-րդ դարի սկզբներին վանքն արդեն զուրկ էր մշտական միաբանությունից. հիշատակվում է միայն ոմն վարդապետ վանահայր⁹⁰: Գտնվում էր Լիմի անապատի տնօրինության տակ, որի անդամները պարբերաբար այցելում էին վանք՝ հետևելով վանքապատկան կալվածքներին (ընդարձակ թթաստան՝ 2.000-3.000 թթենիներով, պարտեզներ, անտառներ, արտեր, վարելահողեր, արոտատեղի և այլն)⁹¹:

5. Էրերնա Սուրբ Սահակ

Էրերնա Ս. Սահակ վանքը գտնվել է Թիմարի գյուղախմբի Էրերին հայաբնակ գյուղի հարավային կողմում բարձրացող լեռան լանջին: Վանքը պարսպապատ էր, բաղկացած էր մեկ գմբեթավոր տաճարից և գավիթից: Մեծ եղեռնին նախորդող շրջանում այն լքված էր⁹², շինություններն անմխիթար վիճակում էին⁹³:

84 Նույն տեղում:

85 Ավանդության համաձայն՝ վանքի տարածքը եղել է անապատականների ճգնաժամ, որոնց մի անգամ տեսիլքով հայտնվել է երկնքից իջնող Հիսուս Քրիստոսը (Միածինը). այդ տեսիլքից էլ վանքը ստացել է իր անունը: Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 350:

86 Տե՛ս Լալայեան Ե., «Վասպուրական», XXI, 99:

87 Տե՛ս Տեր-Յովհաննեսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

88 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75:

89 Տե՛ս Տեղեկացրեց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 254-255:

90 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75:

91 Տե՛ս Տեր-Յովհաննեսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

92 Լիմ անապատի միաբան Մակար վարդապետ Տեր-Հովհաննեսյանը՝ 1911 թ. գրված իր ակնարկում հաղորդում է, որ յոթանասուն տարի է, ինչ վանքը իբրև անպետք-ռչինչ մի բան տրված է ուրիշներին: Տե՛ս «Բիզանդիստ», 1913 թ. փետրվար 23 (մարտ 8), № 4368): Նշվածից կարելի է եզրակացնել, որ վանքը լքվել էր դեռևս 1840-ական թվականներին:

93 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75-76:

Վանքին էին պատկանում որոշակի հողային կալվածքներ, որոնք տրված էին վարձակալությամբ շրջակա գյուղերի բնակիչներին⁹⁴: 1873 թ. Էրերնա Ս. Սահակ այցելած Երուսաղ Տևկանցը նշում է, որ վանքում բնակություն էր հաստատել Էրերին գյուղից մի ընտանիք, որը զբաղվում էր երկրագործությամբ՝ հող չտանելով, սակայն, վանքի շինություններին⁹⁵:

1910-ական թթ. սկզբներին Լիմի միաբանները նախատեսում էին Սուրբ Սահակ վանքում բացել ամառային դպրոց՝ վանքի գիշերօթիկ վարժարանի սաների համար, սակայն միջոցների բացակայությունը և Մեծ եղեռնի արհավիրքը խոչընդոտեցին այդ ծրագրի իրականացմանը⁹⁶:

6. Արճակի Ս. Աստվածածին

Ս. Աստվածածին վանքը տեղակայված էր Արճակ բնակավայրից դեպի հարավ: Կառուցված էր բարձունքի վրա. նրա առջևից գեղեցիկ և ընդարձակ տեսարան էր բացվում դեպի Արճակի հովիտ: 1883 թ. վանք այցելած Մանուել Միրախոբյանը նշում է, որ վանքի տաճարը շինված էր քարուկիրով, ճարտարապետության առումով որևէ կերպ աչքի չէր ընկնում, և միայն մի քանի ուռենիներ էին շուք տալիս ամայի մենաստանին⁹⁷:

Թեմական պատկանելությամբ Վարազավանքին էր: Մինչև 1896 թ. վանքը գործող էր, ուներ շեն վիճակ, կանոնավոր տնտեսություն, երկամյա դպրոց, սակայն համիդյան ջարդերի ժամանակ վանքի վանահայրը սպանվում է, վանքը՝ կողոպտվում և լքվում, վանքապատկան կալվածքները՝ մատնվում անտերության⁹⁸:

Ե. Հայոց Ձորի վանքերը

1. Անգղա Սուրբ Աստվածածնի (Գաբենից Սուրբ Գևորգի) վանք

Անգղա Սուրբ Աստվածածնի վանքը գտնվում էր Հայոց Ձորի գյուղախմբի Անգղ գյուղից մոտ 1,5 կմ դեպի հարավ-արևելք: Բաղկացած էր մի փոքրիկ, անշուք եկեղեցուց, որը հին, հասարակ շենք էր⁹⁹: Ուսումնասիրության առարկա ժամանակաշրջանում վանքը համարվում էր գործող, սակայն չունեի միաբաններ՝ կառավարվում էր Անգղ գյուղում ապրող Տեր-Գեորգյան քահանայական գերդաստանի կողմից¹⁰⁰:

94 Տե՛ս *Բիզանդիոն*, 23 փետրվարի (8 մարտի) 1911 թ., № 4368:

95 Տե՛ս Տևկանց Ե., *Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական*, 256:

96 Տե՛ս *Բիզանդիոն*, 1911 թ. փետրվար 23 (մարտ 8), № 4368:

97 Տե՛ս Միրախոբյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Բ., 128:

98 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 83-84: Տե՛ս նաև «Աշխարհն» շաբաթաթերթ, Վան, 29 մայիսի 1911, թիվ 18, 12-13: Տե՛ս նաև Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա. մաս, 345:

99 Լալայեան, «Վասպուրական», XXI, 100:

100 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 99: Տե՛ս նաև Լալայեան, «Վասպուրական», XXI, 100: 1873 թ. ամռանը վանք այցելած Տևկանցը հաղորդում է, որ վանքում բացի տեր Գեորգ քահանայից ապրում էին նաև մշակներ՝ երեք գութանավոր, մեկ հովիվ, մեկ գառնարած: Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 280:

1882 թ. վանքում բացվում է Միացյալ ընկերության վարժարան, որը գործում է մինչև 1896 թ.¹⁰¹ վանքի հետ միասին թալանվելով և հրդեհվելով համիդյան ջարդերի օրերին¹⁰¹:

1911 թ. վերաբերող վկայության համաձայն՝ վանքի եկեղեցին խարխուլ և անշուք վիճակի մեջ էր, վանքը՝ անբնակ: Հաղորդվում էր, որ վանքապատկան կալվածքները (ընդարձակ հողեր, ծառաստաններ, մարգագետին, ջրաղացներ և այլ շինություններ) նախկինում սեփականություն էին մի քահանայի և նրա ընտանիքի (ըստ երևույթին, խոսքը վերաբերվում է Տեր-Գեորգյաններին), որոնք Աղթամարին վճարում էին տարեկան մի չնչին տուրք (մուքաթա), իսկ վերջին տարիներին Աղթամարը վանքապատկան հողերը տալիս էր վարձակալությամբ՝ տարեկան 40 չափ ցորեն (մոտ 17 լիրա) վճարի դիմաց¹⁰²:

2. Էրեմերու Ս. Աստվածածին (Ծիծաղաբեր Ս. Աստվածածին) վանք

Ծիծաղաբեր Ս. Աստվածածին վանքը¹⁰³ գտնվում էր Հայոց Ձորի Էրեմեր հայաբնակ գյուղից մոտ կես կիլոմետր դեպի արևելք՝ հարթավայրի մեջ հրվանդանաձև երկարած բլրաճյուղի վերջավորության վրա¹⁰⁴: Վանքը բաղկացած էր մեկ եկեղեցուց և կից գավիթից և շրջապատված էր պարսպով¹⁰⁵: Նշանավոր էր իր սքանչելի տեսարանով, ծառատնկիներով, բերրի և արգավանդ հողերով¹⁰⁶:

Մեծ եղեռնին նախորդող ժամանակաշրջանում վանքը կայուն միաբանություն չի ունեցել: Վանահայրության պաշտոն էին կատարում Էրեմերի քահանաները: 1895 թ. վերջերին վանքը ենթարկվում է քրդերի ասպատակությանը: Վանահայր Տեր Մարտիրոս քահանան փախչում է Վան, սակայն զոհվում է 1896 թ. հունիսին քաղաքում բռնկված ջարդերի ընթացքում¹⁰⁷:

1903 թ. տվյալներով՝ վանքի տարածքում էր գործում Էրեմերի դպրոցը՝ մեկ ուսուցչով և 40 աշակերտով¹⁰⁸:

1911 թ. վերաբերող մի վկայությամբ՝ վանքի տարածքում ապրում էր մի քահանա իր ընտանիքով, որը տնօրինում էր վանքի կալվածքները՝ դրա դիմաց Աղթամարի կաթոռիկոսությանը վճարելով տարեկան միայն 25 չափ (10 լիրա) ցորեն¹⁰⁹:

101 Տե՛ս Ծերենց, *Մոթավայրեր*, 100:

102 Վանքի մասին մանրամասն տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 46-51:

103 Ըստ ավանդության՝ վանքը կառուցվել է Թադեոս առաքյալի կողմից այն վայրում, որտեղ նրան ժպտացող Տիրամոր տեսիլք է երևացել. դրանից էլ ծագել է վանքի՝ Ծիծաղաբեր անունը: Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 56: Տե՛ս նաև Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս, 757:

104 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 56: Տե՛ս նաև Կարապետյան, *Հայոց Ձոր*, 77:

105 Լալայեան, «Վասպուրական», XXI, 56:

106 Նույն տեղում:

107 Նույն տեղում, 101:

108 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 82:

109 Տե՛ս Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 11, 290:

3. Սրխու Ս. Նշան կամ Ս. Մարինոսի վանք

Վանքը գտնվում էր Հայոց Ձորի հարավային կողմում՝ քրդաբնակ Կալպալասան բնակավայրից մոտ 2 կմ հեռավորության վրա: Տեղակայված էր քարածայրի կողքին, քարոտ հովտի մեջ: Բաղկացած էր կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցուց և նրան հարող տարբեր շինություններից¹¹⁰:

1883 թ. վանք այցելած Մ. Միրախոբյանը նշում է, որ այն դեռևս մասամբ շեն էր, երկու տարի առաջ (1881 թ.) ուներ վանահայր, որը, սակայն, թողել-գնացել է վանքից¹¹¹: Աղթամարի կաթողիկոսությունը, որի իրավասության տակ էր գտնվում վանքը, վարձակալությամբ տեղացի գյուղացիներին էր հանձնել վանքի 400 չափ արտերը¹¹²: 1895 թ. համիդյան ջարդերի օրերին վանքը թալանվել է¹¹³:

1911 թ. վերաբերող մի վկայության մեջ նշվում էր, որ վանքն ամայի և անբնակ է, թեև «տարիներ առաջ» այն ունեցել է կանոնավոր շինություններ և բազմաթիվ միաբաններ: Վանքապատկան հողերը՝ արդեն 300 չափ, շարունակում էին վարձակալել տեղացի գյուղացիները՝ տարեկան 35 չափ ցորեն (15 օսմանյան լիրա) վճարի դիմաց¹¹⁴:

4. Խեթա Ս. Գևորգ

Գտնվում էր Հայոց Ձորի հայաբնակ Խեթ (Հայկ) գյուղից դեպի հարավ-արևմուտք՝ մոտ 20 րոպե հեռավորության վրա: 1883 թ. վանքն այցելած Մ. Միրախոբյանը հիշատակում է վանահայր Ստեփան Տեր-Սարգսյանին, որի ջանքերով վանքում շինվել էին մի քանի նոր սենյակներ և խուցեր: Վանքում գործել է նաև վարժարան¹¹⁵:

Ս. Գևորգ վանքը կիսել է Հայոց Ձորի այլ վանքերի ճակատագիրը՝ թալանվելով և ավերվելով 1895 թվականին¹¹⁶: Ըստ երևույթին, դրանից հետո վանքը լքվել է:

1911 թ. վերաբերող մի վկայության մեջ հաղորդվում է, որ վանքի շինությունները վերջին տարիներին անտեր մնալով՝ քայքայվել ու խարխլվել են¹¹⁷:

Վանքն ուներ ընդարձակ վարելահողեր, որոնք Աղթամարի կաթողիկոսությունը տալիս էր վարձով՝ տարեկան 40 չափ ցորենի (մոտ 17 լիրա) դիմաց¹¹⁸:

110 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 114: Վանքի կառույցների մասին ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, 118-123:

111 Տե՛ս Միրախոբեան, *Նկարագրական ուղևորություն*, մասն Ա., 141:

112 Նույն տեղում, 140:

113 Տե՛ս *Արարապ*, 1896, Ե., 247:

114 Տե՛ս Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 11, 289:

115 Տե՛ս Միրախոբեան, *Նկարագրական ուղևորություն*, մասն Ա., 164:

116 Տե՛ս *Արարապ*, 1896, Բ, 88, Ե, 247:

117 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը» թիվ 11, 289:

118 Նույն տեղում:

5. Խեթրա Ս. Աբրահամ վանք

Վանքը գտնվել է Հայոց Ձորի հայաբնակ Խեթ գյուղից մոտ 2 կմ դեպի հարավ-արևելք՝ Ս. Գևորգ վանքից մեկ ժամ հեռավորության վրա, ձորադաշտի մի լեռան ստորոտում¹¹⁹: 1873 թ. վանքը դեռևս վանահայր ուներ՝ տեղի Պետրոս անունով, որը միաժամանակ նաև Խեթի Ս. Գևորգ վանքի առաջնորդն էր¹²⁰:

1883 թ. Ս. Աբրահամ այցելած Մ. Միրախոյանը նկարագրում է վանքի գլխավոր եկեղեցին որպես գեղեցիկ շինվածքով կանգուն շինություն: Նա նաև հաղորդում է, որ վանքն ամայի էր, մենակյացների սենյակները՝ կիսակործան¹²¹:

Վանքն ուներ հողային կալվածքներ, որոնք տրվում էին վարձակալությամբ¹²²:

Robert A. Tatoyan

PhD in History

ARMENIAN MONASTERIES AND MONASTIC LIFE IN VAN SUB-DISTRICT ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (1870s – 1914)

SUMMARY

Key words: Hamidian massacres, Armenian genocide, Van sub-district, monasteries, Varagavank, Lim, Ktuts.

Monastic life in the Armenian monasteries of both Van and the whole Western Armenia in the late XIX – early XX century is characterized by a steady decline. This decline was a result of two main factors: 1) periodic attacks and robberies of monasteries by the Kurds (particularly, during the Hamidian massacres in 1895-1896, when almost all active monasteries of Van province were looted and destroyed), 2) gradual secularization of the Armenian population and, correspondingly, a decrease in the number of persons who choose monastic life.

Because of these processes during 1870 – 1910s many of the monasteries of Van-Vaspourakan province were abandoned and left almost unattended.

After the Young Turk Revolution of 1908, the economic situation of the Van monasteries has demonstrated some tendencies of improvement owing to the activities of the Armenian national structures. The gradual revival of monastic life resulted in the increase in the number of monks in some monasteries of Van -Vaspurakan. However, the First World War and the Armenian Genocide put an end to this process.

119 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 100: Տե՛ս նաև *Աշխատանք*, 1911, թիվ 11, 289:

120 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 172:

121 Տե՛ս Միրախոյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Ա, 165:

122 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 103:

АРМЯНСКИЕ МОНАСТЫРИ И МОНАСТЫРСКАЯ ЖИЗНЬ В ВАНСКОМ ОКРУГЕ
НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (1870-е гг. – 1914)

РЕЗЮМЕ

Ключевые слова: гамидовская резня, Геноцид армян, Ванский округ, монастыри, Варагаванк, Лим, Ктуц.

Жизнь в армянских монастырях как Вана, так и по всей территории Западной Армении в конце XIX – начале XX веков характеризуется тенденциями постепенного упадка. Этот процесс был обусловлен двумя основными факторами: периодическими налетами курдов на монастыри (в частности, во время Гамидовских погромов в 1895-1896 годах почти все действующие монастыри провинции Ван были разграблены и разрушены); постепенной секуляризацией армянского населения и уменьшением числа людей, выбирающих монашескую жизнь.

В результате данного процесса в период с 1870-х гг. по 1910-е гг. было покинуто множество монастырей Ван-Васпуракана.

После младотурецкой революции 1908 г. благодаря деятельности армянских национальных организаций экономическое положение ванских монастырей начало проявлять тенденции к улучшению. Постепенное оживление монашеской жизни выразилось в некотором увеличении числа монахов в отдельных монастырях Ван-Васпуракана. Однако Первая мировая война и Геноцид армян положили конец этому процессу.

REFERENCES

A-Do. *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին* [Big Events in Vaspourakan in 1914-1915]. Yerevan: Luys, 1917;

A-Do. *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները* [The Vilayets of Van, Bitlis and Erzerum]. Yerevan: Kultura, 1912;

Akinean, Nerses. *Գաւազանագիրք Վայոթիկոսաց Աղթանաւրայ: Պատմական ուսումնասիրութիւն* [Chronological List of the Armenian Catholicoses of Akhtamar: Historical Study]. Vienna: Mkhitarean, 1920;

Alp'oyachean, Arshak. «Առաջտորդական վիճակներ», 1908 *Ընդարձակ Օրացոյց Ա. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* ["The Dioceses" in 1908 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople: Y. Matt'eosean, 1908;

Badalyan, Gegham. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրերին. Մաս առաջին: Վանի վիլայեթի կենտրոնական, հյուսիսային և արևելյան գավառները» [Historical and Demographic Overview of Western Armenia on the

Eve of the Armenian Genocide. Part One: Central, Northern and Eastern Provinces of Van Vilayet]. *Vem* VII (13) no. 2 (50) (2015): 112-143;

Begulyants', Ruben. *По Турецкой Армении. Впечатления отъ поездки летом въ 1914 году* [In Turkish Armenia. Impressions from the Journey in Summer 1914]. Rostov on Don: Iskidarov, 1914.

Harut'yunyan, Avetis. «Հոգևոր-կրոնական հարաբերությունները Վանի նահանգում և Աղթամարի վանքի կողպուման խնդիրը» [Spiritual-religious relations in Van province and the question of looting of Aghtamar monastery]. *Ejmiatsin* VIII (2016): 133-143;

Hasrat'yan, Murad. «Վարագավանք», «Քրիստոնյա Հայաստան» հանրագիրարանի [“Varagavank” in “Christian Armenia” Encyclopedia]. Yerevan: Armenian Encyclopedia, 2002;

Karapetyan, Samvel. *Հայոց Ձոր* [Hayots Dzor]. Yerevan: RAA publishing, 2015;

Lalayan, Ervand. «Վասպուրական. Նշանաւոր վանքեր» [Vaspourakan: Prominent monasteries]. *Azgagrakan Handes*, girq XXII (1911): 85-100;

Lalayan, Ervand. «Վասպուրական. Նշանաւոր վանքեր» [Vaspourakan: Prominent monasteries]. *Azgagrakan Handes*, girq XXII (1911): 85-100;

Mayevsky, Vladimir. *Военно-Статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ*, [Military and Statistical Description of Van and Bitlis Vilayets]. Tiflis: Tipografia shtaba Kavkazskogo voennogo okruga, 1904;

Menak, A. «Հայոց Ձորը. VI. Հայոց ձորի հայ վանքերը» [Hayots' Dzor. VI. The Armenian Monasteries of Hayots' Dzor]. *Ashkhatanq* (Van), 20 March, 1911, no. 10;

Menak, A. «Հայոց Ձորը. VI. Հայոց ձորի հայ վանքերը» [Hayots' Dzor. VI. The Armenian Monasteries of Hayots' Dzor]. *Ashkhatanq* (Van), 29 May, 1911, no. 18;

Mirakhoryan, Manuel. *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի հ. 1* [Descriptive Journey to the Armenian Populated Provinces of the Eastern Turkey, vol. I]. Constantinople: M. K. Sarëean, 1884;

Mirakhoryan, Manuel. *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, հ. 2* [Descriptive Journey to the Armenian Populated Provinces of the Eastern Turkey, vol. II]. Constantinople: M. K. Sarëean, 1885;

Ormanean, Maghakia. *Հայոց եկեղեցին և իր պարմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը* [The Armenian Church: Her History, Doctrine, Rule, Discipline, Liturgy, Literature and Existing Condition]. Constantinople: V. and H. Ter-Nersesian, 1911;

Paleian, Tachat. *Հայ վանորայք* [Armenian Monasteries]. Ejmiatsin: Holy See Publishing, 2008;

Sherents', Georg. *Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից և ուսումնարանաց* [Holy Places: Location of the Main Churches, Monasteries and Educational Institutions of Van-Vaspourakan Province]. Tiflis: Vereich'ev i Kamenmakher, 1902.

T'eodik. *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօրին աղէվրալի 1915 ցարիին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;

Ter-Hovhannisyán, Makar. «Վանա ծովն և իր կղզիները» [The Lake of Van and its Islands]. *Byzandion* (Constantinople), 21 February (6 March), 1911, no. 4366;

Ter-Hovhannisyán, Makar. «Վանա ծովն և իր կղզիները» [The Lake of Van and its Islands]. *Byzandion* (Constantinople), 23 February (8 March), 1911, no. 4368;

Tevkants', Eremia. *Ճանապարհորդությունն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.* [Journey to Upper Armenia and Vaspourakan]. Yerevan: NAS RA Institute of History, 1991;

Tseruk. «Վանի նահանգը ներկայումս» [The Province of Van at Present]. *Murch* (Tiflis), 1904, no. 3;

T'umanyan, Lusine. «Լիմ և Կտուց մենաստանները Մեծ Եղեռնի օրերին» [The Monasteries of Lim and Ktuts during the Armenian Genocide]. *Ejmiatsin*, IV, 2013, 96-107;

Voskean, Hamazasp. *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա. մաս [The Monasteries of Van-Vaspourakan, part I]. Vienna: Mkhitaréan, 1940;

Voskean, Hamazasp. *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս [The Monasteries of Van-Vaspourakan, part III]. Vienna: Mkhitaréan, 1947;

Yeramyán, Hambardzum. *Յուշարձան, հ. 1* [A Monument vol. I]. Alexandria: Aram Gasapean, 1929;

Yeramyán, Hambardzum. *Յուշարձան, հ. 2* [A Monument, vol. II]. Alexandria: Aram Stepanéan, 1929;

«1904 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց» [1904 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople: Y. Matt'eosean, 1904;

«Աղթամարայ հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի վերջին թուղթն և տելեկագիրը» [The Last Letter and Bulletin of Deceased Khachatour Catholicos of Akhtamar]. *Ararat* (Ejmiatsin), May 1896;

«Հայաստանեայց եկեղեցին Տանկաստանում» [The Armenian Church in Turkey]. *Ararat* (Ejmiatsin), February, 1896;

«Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին» [Bulletin of Massacres in Vaspourakan]. *Ararat* (Ejmiatsin), December 1896.

**ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՄԱՌԹՅՈՒՆԻՑ (ՄԻՆՉԵՎ 1908 Թ.).
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

Բանասիր քառերը՝ Օսմանյան կայսրություն, պարբերական մամուլ, երիտթուրքեր, երիտթուրքական մամուլ, «Իչդիհադ», «Մեշվերեթ», «Միզան»:

Հոդվածը երիտթուրքական պարբերական մամուլի պատմության (մինչև 1908 թ.) շուրջ համառոտ անդրադարձն է: Հատկապես կենտրոնացում է արվել երիտթուրքական մամուլի պատմության առաջին փուլի վրա: Հոդվածը լուսաբանում է նշված շրջանի երիտթուրքական առաջատար թերթերի հիմնադրման/սկզբնավորման, տարածման պատմությունը, որն ընդգրկում էր 1890-ական թթ. մինչև 1908/1909 թթ.: Այս շրջանում թերթերը տպագրվում էին Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ գլխավորապես Կահիրեում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլ վայրերում, քանի որ Օսմանյան կայսրությունում գործող արդուլհամիդյան գրաքննությունն ու տիրող բռնաճշումները կայսրության տարածքում սեփական գաղափարները, քաղաքական հայացքները ազատորեն տարածելու հնարավորություն չէին տալիս:

**Մինչև 1908 թ. հեղաշրջումը տպագրվող երիտթուրքական առաջատար
պարբերականները**

Երիտթուրքական մամուլն ուսումնասիրելիս անհրաժեշտաբար պետք է այս թեմատիկան դիտարկել տարբեր ժամանակային կտրվածքով և մի քանի գիտակարգային մոտեցումներով: Հարկ է նշել, որ երիտթուրքական հեղաշրջումից առաջ և հետո երիտթուրքական մամուլի ընդհանուր ուրվագիծն սկզբունքորեն փոխվել է՝ ընթանալով այլ գաղափարական ուղղություններով և նպատակային ուղեգծով: Եթե մինչև երիտթուրքերի հեղաշրջումը այս գաղափարական հոսանքին հարող և պատկանող թերթերը, խոսափելով արդուլհամիդյան գրաքննությունից և բռնաճշումների քաղաքականությունից, ստիպված էին հիմնական գործունեությունը ծավալել Օսմանյան կայսրության տարածքից դուրս, ապա հեղաշրջումից հետո երիտթուրքական մամուլը ներկայացնողների համար կատարելապես այլ իրավիճակ է ստեղծվում, որոնք կարող էին գործունեություն ծավալել կայսրության տարածքում, ինչպես նաև վերածվելով իշխանական լրատվամիջոցների՝ զերծ մնալ գրաքննությունից և ճշումներից, ընդդիմադիր լրատվամիջոցներին պարտադրված այլ խնդիրներից:

Երիտթուրքական մամուլի առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ թերթերի զգալի մասը ոչ թե պատկանում էր և ներկայացնում միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության կամ երիտթուրքական ինչ-որ շրջանակի կամ խմբի, այլ այդ թերթերը գլխավորապես անհատների սեփականությունն էին, իսկ վերջիններս կա՛մ երիտթուրքական քաղաքա-

կան թևի անդամ էին, կա՛մ էլ հարում էին երիտթուրքերի գաղափարական ուղղվածությամբ:

Հիմք ընդունելով երիտթուրքական մամուլի զարգացման առանձնահատկությունները, արտաքին գործոնները, պատմական իրողությունը՝ երիտթուրքական մամուլի պատմությունը, ինչպես արդեն նշվեց, կարելի է բաժանել երկու հիմնական փուլի, որոնք համապատասխանաբար կընդգրկեն արդուլիամիդյան շրջանը և սահմանադրության վերականգնումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Երիտթուրքական մամուլի զարգացման առաջին փուլն ընդգրկում է 1890-ական թթ. մինչև 1908/1909 թթ., երբ երիտթուրքական շարժումը ձևավորման փուլում էր և ընդդիմություն էր: Երկրորդ փուլը ընդգրկում է 1908/1909 թթ. մինչև 1918 թ., երբ երիտթուրքերը Օսմանյան կայսրության դեկին էին, ինչն էլ ենթադրում էր երիտթուրքական մամուլի կարգավիճակի ամբողջական և սկզբունքային փոփոխություն, այն է՝ ընդդիմադիր դաշտում և տարագրության մեջ գործունեությունից անցում իշխանական դաշտում գործունեության: Սա որակապես փոխում էր ոչ միայն երիտթուրքական թերթերի տարածման եղանակները, այլև բովանդակային առումով հիմնովին փոխում էր թերթերի ուղղվածությունը: Հատկանշական է, որ ընդդիմադիր շրջանում երիտթուրքական թերթերը կոչված էին վեր հանելու և քննադատելու կայսրության թերությունները, առաջ քաշելու իրենց քաղաքականությունը, սակայն իշխանության գալուց հետո փոխվում են առաջնահերթությունները, ինչպես նաև սկզբունքային փոփոխության են ենթարկվում թիրախները և կիրառվող բառապաշարը:

Երիտթուրքական մամուլի առանձնահատկությունները կարելի է դիտարկել ոչ միայն ժամանակային բաժանումով, այլ նաև ընդհանուր կտրվածքով: Ինչպես նշվեց, երիտթուրքերին հարող կամ պատկանող լրատվամիջոցները ոչ միայն պատկանում էին անմիջականորեն «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը, այլև անհատների՝ երիտթուրք գործիչների կամ այդ գաղափարները կիսողների: Ժամանակի ընթացքում թերթերի սեփականատերերի գաղափարների փոփոխությանը զուգահեռ փոխվում էր նաև լրատվամիջոցների քաղաքական կողմնորոշումը, իսկ իշխող երիտթուրքական գաղափարախոսությունից հրաժարումն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության քաղաքականության քննադատությունը բերում էր ոչ միայն պետության կողմից ճնշումների, այլ նաև դառնում էր թերթի փակման պատճառ, ինչպես եղավ երիտթուրքական շարժանը հարող «Միզան» թերթի դեպքում, որը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի օսմանյան մամուլի ամենանշանավոր և հայտնի օրգաններից էր¹:

Առաջին փուլի ընթացքում երիտթուրքական մամուլը ստիպված էր գործել Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, մասնավորապես Կահիրեում, Եվրոպական երկրներում՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլ վայրերում: Օսմանյան կայսրությունում գործող արդուլիամիդյան գրաքննությունն ու բռնաճնշումները կայսրու-

1 Muammer Göçmen, “Jön Türk Basını,” <https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=352209>, դիտվել է 14.05.2019:

թյան տարածքում ազատ գործելու հնարավորություն չէին տալիս², ինչի արդյունքում էլ երիտթուրքերն իրենց՝ արտասահմանում տպագրվող պարբերականների միջոցով էին փորձում արտահայտել սեփական գաղափարներն ու վեր հանել օսմանյան հասարակության և պետության խնդիրները՝ քննադատելով օսմանյան ղեկավարությանն Աբդուլ Համիդի գլխավորությամբ:

Արդեն երկրորդ փուլի ընթացքում երիտթուրքական մամուլը Օսմանյան կայսրության տարածքում գործելու հնարավորություն է ստանում՝ վերածվելով իշխանամերձ կամ անմիջականորեն իշխանական մամուլի: Բացի դրանից, կարգավիճակի փոփոխությունը հնարավորություն էր տալիս գործելու առանց լրացուցիչ բարդությունների: Այս ընթացքում, երբ երիտթուրքերի իշխանության ամրապնդումից հետո ավելի է խստացվում այլախոհ լրատվամիջոցների և լրագրողների դեմ տարվող ճնշումների ու սահմանափակումների քաղաքականությունը, երիտթուրքերին հարող թերթերի թիվը շարունակաբար աճում է:

Այս փուլերը ևս կարելի է պայմանականորեն բաժանել առանձին ենթափուլերի: Օրինակ՝ 1908-1918 թթ. առաջին ենթափուլը, որ ընդգրկում էր սահմանադրության ընդունումից մինչև 1913 թ. հեղաշրջումը, համեմատաբար ազատ գործելու և նվազ գրաքննության շրջան էր: Մինչդեռ երիտթուրքերի ձեռքում քաղաքական իշխանության կենտրոնացումից հետո ընդդիմադիր պարբերականները և սյունակագիրները ենթարկվում էին սուր գրաքննության:

Երիտթուրքերը ձգտում էին տապալել արդուլիամիդյան բացարձակապետությունը, ձգտում էին իշխանության՝ ցանկանալով այն վերածել իրենց տնտեսական վերելքի և տիրապետության գործիքի: Լինելով նոր օսմանների, հատկապես Իբրահիմ Շինասիի, Նամըք Քեմալի, Ալի Սուավիի տեսական գաղափարների՝ լեզվի մաքրման, ազգի, կրոնի դերի, հայրենիքի, անձի ազատության, դրա համար զոհողություններ կատարելու հետևորդները, կոմիտեի ստեղծման պահից սկսած՝ փորձեցին դրանք քաղաքական հիմքի վրա դնել³: Այս գաղափարախոսների ազդեցության ներքո լինելով հանդերձ՝ նրանք չէին հարում գաղափարախոսական մեկ ուղղության՝ հաճախ դրսևորելով ոչ հետևողական քաղաքական մոտեցումներ, ինչն ակնհայտորեն իր անդրադարձն էր ունենում այդ շրջանի նրանց պարբերականներում:

Աբդուլիամիդյան բռնատիրական և լրտեսական համակարգը երիտթուրքական մի շարք պարագլուխների ստիպում է հեռանալ երկրից: Փարիզը դառնում է վտարանդի երիտթուրքերի քարոզչության կենտրոններից: Եվ քարոզչության լավագույն և գործունե ղեկավարներից է դառնում մամուլը, քանի որ, ինչպես իրենք են նշում, երկրից երկիր թերթերն ավելի ապահով էին հասնում, քան երկրի ներսում⁴: Հատկանշական

2 Ալբերտ Խառատյան, «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870 —1890-ական թթ.)», *Պատմա-քանասիրական հանդես* 4 (1985), 113:

3 Erik Jan Zürcher, *The Young Turk Legacy and Nation building from the Ottoman Empire to Atatürk's Turkey* (London, New York: I. B. Tauris, 2010), 8.

4 Mehmet Burak Durdu, “Osmanlı Devletinde Jön Türk Hareketinin Başlaması ve Etkileri, Osmanlı Tarihi Araştırma ve Uygulama,” *Merkezi Dergisi Otam* 14 no. 14 (2003): 291-318.

է, որ սուլթանի պատվիրակները ժամանակ առ ժամանակ գնում էին Փարիզ և Լոնդոն՝ քանակցելու երիտթուրքի թերթերի խմբագիրներ Մուրադ բեյի, Ահմեդ Ռեզայի և Մելիմ բեյի հետ, նրանց պարզևատրում էին, տարբեր միջոցներով և տարբերակներով համոզում, որպեսզի նրանք հրաժարվեն իրենց գործունեությունից⁵:

Արդեն 1879-1907 թթ. արտասահմանում լույս էր տեսնում շուրջ 120 ընդդիմադիր թերթ, որոնցից աչքի էին ընկնում «Միզան», «Մեշվերեթ», «Իսթիքլյալ» և «Օսմանլը» պարբերականները, ինչպես նաև Աթենքում, Բուխարեստում, Լոնդոնում, Մոֆիայում լույս տեսնող այլ թերթեր: Հատկանշական է, սակայն, որ երիտթուրքական շարժման սկզբնական ընդդիմադիր լինելու տարիներին հիմնադրված և գործող բազմաթիվ առաջատար թերթեր իրենց գոյությունը չկարողացան պահել արդեն երիտթուրքերի կառավարման ու իշխանության տարիներին, ինչպես, օրինակ «Միզանը», այլ հայտնի թերթերից «Օսմանլըն», «Մեշվերեթը»:

Այս թերթերի էջերում երիտթուրքերն «իրենց դասակարգային ուղղվածության և աշխարհայացքի հետևանքով երկրի սոցիալական և քաղաքական բազմաթիվ խնդիրներ հանգեցնում էին թագավորող միապետի արատներին»⁶: Միաժամանակ նշված թերթերում ավելի ու ավելի հաճախ սկսվում է կիրառվել թուրքերի՝ «Միլլեթ ի հաքիմի» (տիրապետող-դոմինանտ ազգ) լինելու գաղափարը, և մամուլը դառնում է երիտթուրքական գաղափարների տարածման ամենագործուն եղանակներից:

Երիտթուրքերի «Միզան» թերթը


Օսմանյան կայսրության առավել հայտնի պարբերականներից էր երիտթուրքական «Միզան» (թուրք.՝ *Mizan*/կշեռք) թերթը: Միաժամանակ և՛ քաղաքական, և՛ գրական ուղղվածություն ունեցող պարբերականը հիմնադրվել է Կոստանդնուպոլսում 1886 թ. Մեհմեթ Մուրադ Միզանջի⁷ կողմից: Օսմանյան այս պարբերականի առաջին համարը լույս է տեսել 1886 թ. օգոստոսի 21-ին⁸: Իր պատմության ընթացքում «Միզանը» տպագրվել է տարբեր պետություններում և քաղաքներում, ինչը կապված էր թերթի ընդդիմադիր քաղաքական ուղղվածության հետ:

5 Նույն տեղում:

6 *Հոդիզոն* թերթ (Թիֆլիս), թիվ 34, 1909:

7 Մեհմեթ Մուրադ բեյը (1854-1917) պատմության ուսուցիչ էր, ավարտել էր Ս. Պետերբուրգի համալսարանը: Թանգիմաթի շրջանի հայտնի գրողներից է, խմբագիր, քաղաքագետ, պատմաբան: Նա հեղինակել է «Թուրքիայի ուժն ու թուլությունը» գրքույկը, որը երիտթուրքական գրականության ամենաընթերցված գրքերից էր այդ ժամանակաշրջանի: Տե՛ս Emil Birol, *Mizancı Murad Bey, Hayati ve Eserleri* (Istanbul: Üniversitesi Edebiyat Fakültesi, 1979), 229-399:

8 Göçmen, “Jön Türk Basını.”



1. Միզան (Միջուկ) եւ առաջին համաշխարհային կուսակցության պաշտոնաթերթ. շաբաթաթերթ, Ա. տարի, թիվ 21, 24 Մայիս 1897:

Հիմնադրումից հետո թերթը լույս էր տեսնում Կոստանդնուպոլսում շաբաթական մեկ անգամ: «Միզանում» տպագրվում էին շաբաթվա նորությունները, գրական և գիտական հոդվածներ, նոր գրքերի մասին տեղեկություններ: Միևնույն ժամանակ թերթն անդրադառնում էր քաղաքական և հասարակական հարցերի: Արդյո՞ք Համիդ Երկրորդ սուլթանի սահմանած խիստ գրաքննության և ճնշումների քաղաքականության հետևանքով թերթը ևս թիրախավորվում էր: Այս ամենի արդյունքում էլ 1890 թ. դեկտեմբերի 11-ին թերթը ժամանակավորապես դադարեցնում է տպագրությունը Կոստանդնուպոլսում՝ 158 թվակիր համարով: Այս ընթացքում «Միզանը» հնարավորություն չի ստանում վերսկսելու աշխատանքն Օսմանյան կայսրության տարածքում, և թերթի վերահրատարակումը հնարավոր է դառնում միայն արտասահմանում⁹: Սակայն միայն վեց տարի անց՝ 1896 թ. է հաջողվում թերթը վերահրատարակել Կահիրեում: Մեհմեթ Մուրադը ևս տեղափոխվում է Կահիրե: Այս ընթացքում թերթի հիմնադիրը կապ է հաստատում երիտթուրք գործիչների հետ և սկսում ակնհայտորեն հարել այդ շարժմանը՝ գլխավորելով երիտթուրքական շարժման աջ թևը: Թերթը նույնպես գաղափարախոսական փոփոխություններ է կրում և սկսում է ներկայանալ որպես երիտթուրքական առաջատար պարբերականներից մեկը, որտեղ էլ առաջ են քաշվում երիտթուրքերի գաղափարներն ու օսմանյան ղեկավարության քննադատությունները: Այս ընթացքում թերթում սուր քննադատական հոդվածներով հանդես է գալիս Թունալը Հիլմին¹⁰, ով երիտթուրք գործիչներից էր և ակտիվորեն ներկայանում էր երիտթուրքական մամուլում՝ թղթակցելով «Միզան» և «Մեշվերեթ» թերթերին:

9 Abdullah Uçman, “Mizan,” in *TDV İslam Ansiklopedisi*, <https://islamansiklopedisi.org.tr/mizan-gazete>, դիտվել է 07.05.2019.

10 Թուրք քաղաքական գործիչ, Օսմանյան կայսրության խորհրդարանի անդամ, ապա՝ Թուրքայի Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր: Եվրոպայում երիտթուրքական շարժման առաջին տարիների ակտիվիստներից է եղել, 1895 թ. միացել է Ժնևում երիտթուրքական խմբին: *St'u Sükrü Hanioğlu, Tunali Hilmi bey in "devlet modeli"* (Istanbul: İstanbul Üniversitesi İktisat Fakültesi, 2011), 109:

Ինչ վերաբերում է Հայկական հարցի շուրջ թերթի դիրքորոշմանը, ապա այստեղ Մուրադ բեյը հանդես էր գալիս համիդյան դիրքերից՝ ոչ միայն հակահայկական հողվածներ տպագրելով, այլև նպաստելով այլ հեղինակների կողմից այդ ուղղությամբ գործելուն: Նա ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները համարում էր դիվանագիտական բանասարկությունների արգասիք՝ դեմ լինելով կայսրությունից հայերի անջատողական ձգտմանը, քանի որ այդպիսի շարժումները ոտնձգություն էր համարում՝ ընդդեմ մահմեդականների հպարտությանը:

Թերթի տպագրության երկրորդ շրջանը սկսվում է Կահիրեում 1896 թ. հունվարի 21-ից մինչև նույն թվականի հուլիսի 8 (159-184 թվակիր համարներով): Թերթի խմբագրակազմը Կահիրեից տեղափոխվում է Փարիզ՝ շարունակելով պարբերականի հրատարակությունը¹¹: Փարիզում թերթը դառնում է երիտթուրքերի գլխավոր պարբերականը, որը շարունակում էր օսմանյան ղեկավարությանը քննադատող հողվածների շարքը: 1897 թ. թերթի խմբագրությունը՝ Փարիզում 18 համար տպագրելուց հետո (1896 թ. դեկտեմբերի 14-1897 թ. մայիսի 3) տեղափոխվում է Ժնև (1897 թ. մայիսի 10-1897 թ. հուլիսի 19)¹²:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո թերթը հնարավորություն է ստանում տպագրություն իրականացնելու Կոստանդնուպոլսում, որով սկսում է թերթի տպագրության երրորդ փուլը: Այնուամենայնիվ, Օսմանյան կայսրություն վերադառնալուց հետո թերթում սկսում են տպագրվել երիտթուրք ղեկավարներին քննադատող հողվածներ, ինչն էլ անհետևանք չի մնում: 1909 թ. ապրիլի 15-ին 135 թվակիր համարով¹³ Աբդուլ Համիդի կողմնակիցների ապստամբությունից հետո, երիտթուրք ղեկավարների որոշմամբ թերթը փակվում է, քանի որ երիտթուրքերը մեղադրում են պարբերականին՝ սուլթանի կողմնակիցների հետ կապեր հաստատելու և նրանց աջակցելու համար¹⁴: Ավելին՝ թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր Մեհմեթ Մուրադը կալանավորվում է¹⁵: Թերթի վերջին՝ 135-րդ համարը լույս է տեսնում 1909 թ. ապրիլի 14-ին¹⁶:

Այսպիսով, բավական հետաքրքիր քաղաքական և գաղափարական գծով «Միզան» թերթը հիմնադրվում է որպես ընդդիմադիր պարբերական, ապա հարում երիտթուրքական շարժմանը, իսկ երիտթուրքերի դեմ քննադատական հողվածներ հրատարակելուց հետո վերջնականապես փակվում է: Այնուամենայնիվ, այս թերթը մեծ կարևորություն ունի օսմանյան մամուլի պատմության մեջ, քանի որ հանդես էր գալիս ոչ միայն քաղաքական օրակարգով, այլև պարբերականի էջերում անդրադարձ էր կատարվում գրական և մշակութային կյանքին: «Միզանը» առանձնանում էր նաև

11 Göçmen, *Jön Türk Basını*.

12 Uçman, “Mizan.”

13 Նույն տեղում:

14 “*Mizancı Mehmed Murad*,” https://www.yeniakit.com.tr/kimdir/Mizanc%C4%B1_Mehmed_Murad_, դիտվել է՝ 10.02.2019:

15 Նույն տեղում:


16 1886-1890 թթ. Կ. Պոլսում հրատարակվում է պարբերականի 158 համար, 1896 թ. հունվար-հուլիս ամիսներին Կահիրեում՝ 26 թիվ, 1896-1897 թթ. Փարիզում՝ 18 թիվ, 1897 թ. մայիս-հուլիս ամիսներին Ժնևում՝ 11 թիվ, 1908 թ. հուլիսի 30-1909 ապրիլի 14-ին Պոլսում՝ 135 թիվ:

տնտեսական խնդիրներին վերաբերող իր հոդվածներով¹⁷: Թուրք հեղինակ Հըֆզը Թոփուզը «Միզանը» համարում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «ամենաբոցաշունչ պարբերականներից»¹⁸:

Այսպիսով, թերթն օսմանյան շրջանի կարևորագույն պարբերականներից էր և երիտթուրքական գաղափարների տարածման հիմնական միջոցներից մեկը:

Երիտթուրքերի «Մեշվերեթ» թերթը

«Մեշվերեթ» (թուրք.՝ *Meşveret/խոսրոմոթ*) թերթը երիտթուրքական կարևոր պարբերականներից էր: Այն հիմնադրվել էր Փարիզում, 1895 թ. Ահմեդ Ռ-ըզայի կողմից, որը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադիրներից էր¹⁹: Թերթը լույս էր տեսնում Փարիզում, քանի որ խիստ ընդդիմադիր հայացքներով պարբերականը Աբդուլ Համիդ Երկրորդ սուլթանի խիստ գրաքննություն պայմաններում չէր կարող գործել Օսմանյան կայսրությունում: «Մեշվերեթն» ակտիվ դերակատարում ուներ երիտթուրքական գաղափարների տարածման գործում՝ իր ստեղծման առաջին տարիներին կատարելով նաև երիտթուրքական շարժման մամուլի օրգանի դերը:



2.Մեշվերեթ, Փարիզ, Ա. տարի, թի 7, 14 Մարտ 1908:

«Մեշվերեթ» թերթը լույս էր տեսնում ամսական երկու անգամ: 1895-1898 թթ. լույս է տեսել «Մեշվերեթ» թերթի շուրջ 30 համար թուրքերենով, իսկ 1895-1908 թթ.՝ պարբերականի 200-ից ավելի համար ֆրանսերենով²⁰: Թերթում տեղ էին գտնում օսմանյան ղեկավարությանը քննադատող մեծ թվով հոդվածներ: Միաժամանակ անդրադարձ էր կատարվում օսմանյան հասարակությանը հուզող թեմաների²¹: Թերթի անդրանիկ

17 Göçmen, "Jön Türk Basin".

18 Topuz Hifzi, *Türk Basin Tarihi* (Istanbul: Remzi Kitabevi, 2014), 83.

19 Ահմեդ Ռ-ըզան ծնվել է Կոստանդնուպոլսում 1859 թ., մոր կողմից ավստրացու արյուն ունի: Նա քաղաքական, պետական գործիչ էր, գրող, կրթական ուղղությամբ բարեփոխումների կողմնակից, Սենատի անդամ: Մոր ազդեցությունը զգալի է եղել նրա մտածողության վրա՝ արևմտամետ լինելու առևտրությամբ: St'u Eminatp Malkoç, "Doğu-Bati Ekseninde Bir Osmanli Aydini: Ahmet Riza Yaşami ve Düşünce Dünyasi," *Yayinlandigi İstanbul Üniversitesi Yakın Dönem Türkiye Araştırmaları Dergisi II* (2007), 96: Նաև՝ Murtaza Korlaelci, "Ahmed Riza (1859-1930)," *Felsefe Dünyasi* 4 (1992), 47:

20 Şükrü M. Hanioğlu, "Jön Türk Basini," C. 3 (İstanbul: TCTA, 1985), 846-847.

21 Malkoç, "Doğu-Bati Ekseninde," 96.

համարում հրատարակված խմբագրական հոդվածում նշվում էր, որ այն նպատակ չի դնում կործանելու կառավարող դինաստիան, քանի որ իրենց օտար են ուժի միջոցով կարգավորվող լուծումները: Ըստ հոդվածի՝ իրենք բարենորոգումներ են պահանջում ոչ այս կամ այն նահանգի, այլև ամբողջ կայսրության համար:

Սուր քննադատական թեմաներով աչքի էր ընկնում թերթի հիմնադիր Ահմեդ Ռ-ըզան: Նա հմուտ պարսկագետ էր, գերազանց տիրապետում էր ռուսերենին: Նա թերթի միջոցով քարոզում էր իսլամական աշխարհի հոգևոր ավանդույթների վերածնության անհրաժեշտությունը: Մեծ ծավալով անդրադարձել է Հայկական հարցին՝ փորձելով ապացուցել, որ այն արտաքին հրահրումների արդյունք է: Հոդվածներից մեկում Ահմեդ Ռ-ըզան պանիսլամական դիրքերից օսմանյան և պարսկական կառավարություններին կոչ էր անում միասնական ջանքերով կանխել հայկական պետության վերականգնման վտանգը:

«Միություն և առաջադիմության» ծրագիրն առաջին անգամ Ահմեդ Ռ-ըզայի շնորհիվ տպագրվել է այս թերթում 1895 թ. դեկտեմբերի 3-ի ֆրանսերեն համարում²²:

Թերթում Ահմեդ Ռ-ըզայի գլխավոր քաղաքական գիծը հակառուսականությունն էր: Նա շատ երիտթուրքերի պարագլուխների պես ձգտում էր կապեր հաստատել եվրոպական առաջադիմական և սոցիալիստական շրջանակների հետ:

«Մեշվերեթի» սյունակագիրների թվում էին ժամանակի հայտնի հոդվածագիրներից Հոջա Քադրի Էֆենդին, Շերաֆեդդին Մադնումին, Աբդուլլահ Ջևդեթը: Ինչ-որ շրջանում թերթի հրատարակման աշխատանքներին մասնակցել է նաև «Միզան» թերթի հիմնադիր Մուրադ բեյը²³:

Թերթի սուր քննադատական և մեղադրական հոդվածներից հետո Օսմանյան կայսրությունը դիմում է Ֆրանսիային՝ դադարեցնելու թերթի տպագրությունն այդ երկրի տարածքում: Ֆրանսիան համաձայնում է կատարել օսմանյան դեկավարության խնդրանքը, և «Մեշվերեթ» թերթի տպագրությունը Ֆրանսիայում արգելվում է: Ահմեդ Ռ-ըզան ստիպված էր նոր երկրներ փնտրել, որտեղ հնարավորություն կատանար շարունակելու թերթի տպագրությունը: Այսպիսով, թերթը նախ տեղափոխում են Շվեյցարիա, ապա նաև՝ Բելգիա, որտեղ էլ շարունակվում է տպագրությունը²⁴: Հետաքրքրական է, որ այստեղ փակվում է թերթի թուրքերեն բաժինը՝ շարունակելով միայն ֆրանսերեն բաժնի աշխատանքները²⁵:

Թերթը մեծ կարևորություն ուներ երիտթուրքական մամուլի շարքերում, քանի որ աչքի էր ընկնում սուր քննադատական, հասարակական ու քաղաքական ծանր թեմաներ բարձրացնելով: Թերթն առանձնանում էր նաև նրանով, որ իրենց գաղափարները տարածելու համար եզակի հնարավորություն էր ստեղծում բազմաթիվ երիտթուրք գործիչների համար: Պետք է նշել նաև, որ այս թերթում Հայկական հարցի շուրջ հոդ-

22 Ziyad Ebüzziya, “Ahmed Riza,” in *TDV İslam Ansiklopedisi*, C. 2 (İstanbul: TDV Yayınları, 1989): 125.

23 Hanioğlu, “*Jön Türk Basını*,” 206.

24 “*Gazetecilik- Türk basınının doğuşu ve gelişimi*,” T.C. Millî Eğitim Bakanlığı (Ankara: MEB Yayını, 2008), 22.

25 Hanioğlu, “*Jön Türk Basını*,” 846-847.

վաճներով թղթակցել են նաև հայեր՝ տուրք տալով թուրքական գաղափարախոսական մոտեցումներին:

Երիտթուրքերի «Օսմանլը» թերթը

«Օսմանլը» (թուրք.՝ *Osmanli/osmanli-oumanliyan*) անունով մի քանի թերթ է լույս տեսել Օսմանյան կայսրությունում: Երիտթուրքական գաղափարներին հարող «Օսմանլը» անունով երկլեզու (ֆրանսերեն և թուրքերեն) թերթը սկսել են հրատարակել 1897 թ. դեկտեմբերի 1-ին²⁶: Թերթի վրա աշխատում էին Իսհաք Սյուքութին և Աբդուլլահ Ջևդեթը, որոնք երիտթուրքական շարժման ակտիվ անդամներից էին: Թերթը, ինչպես ժամանակի երիտթուրքական լրատվամիջոցների զգալի մասը, լույս է տեսել Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ Ժնևում (1897-1900 թթ.), ապա նաև տպագրությունը շարունակել Անգլիայում (1900-1904 թթ.): Թերթը տպագրվել է մինչև 1904 թ. դեկտեմբերի 7-ը, որի ընթացքում լույս է տեսել 142 համար: Ժամանակի ընթացքում տպագրվել են նաև անգլերեն հավելվածներ, որոնք տարածվել են եվրոպական երկրներում: Թերթի մի քանի համար լույս է տեսել նաև Եգիպտոսում՝ Կահիրեում, որը երիտթուրքական գաղափարախոսների կարևոր կենտրոններից էր:

Թերթում իրենց անդրադարձներն ու հողվածներն են տպագրել երիտթուրքական գաղափարակից հողվածագիրներ, գրողներ Աբդուլլահ Ջևդեթը, Իսհաք Սյուքութին, Մեհմեթ Ռեշիդը, Թունալը Հիւմին, Նուրի Ահմեդը, Ալի Հայդարը, Ահմեդ Ռեզան և այլք²⁷:

«Օսմանլըն» արտասահմանում տպագրվող երիտթուրքական այն թերթերից էր, որը ոչ միայն հանդես էր գալիս կայսրության ղեկավարության և քաղաքականության քննադատությամբ, այլև փորձ էր կատարում տարածելու երիտթուրքական գաղափարները: Ինչպես և այլ երիտթուրքական թերթեր, այն ստիպված էր անգամ արտասահմանում դիմակայել Աբդուլ Համիդ Երկրորդի և նրա համախոհների քայլերին՝ հաճախակի փոխելով տպագրության վայրը:

Կարևոր է նաև այն, որ 1894-1896 թթ. արդուլիամիդյան ջարդերի ժամանակ «Օսմանլը» թերթը լույս էր ընծայում հատուկ անգլերեն հավելված, որտեղ ուշադրության կենտրոնում Հայկական հարցն ու հայերն էին²⁸: Այս քայլով թերթի խմբագիրները փորձում էին անգլալեզու ընթերցողներին համոզել, որ հայերի զանգվածային կոտորածների հետևում ոչ թե թուրք բնակչությունն է, այլ Աբդուլ Համիդ սուլթանն ու նրա շրջապատը՝ միաժամանակ փորձելով երիտթուրքերին ներկայացնել որպես այլընտրանք Աբդուլ Համիդին, և որ հենց նրանք են ունակ կատարելու սկզբունքային փոփոխություններ Օսմանյան կայսրության քաղաքական և հասարակական կյանքում²⁹:

26 Nuri Inuğur, “*Basin ve Yayin Tarihi*,” (Istanbul: Der Yayinlari, 1993), 297.

27 Նույն տեղում:

28 Юрий А. Петросян, “Армянский вопрос на страницах редкого эмигрантского издания младотурок,” *Պարմա-բանասիրական հանդես* 2 (1982), 173-178:

29 *Osmanli* (Geneve) no. 2, 1.

Երիտթուրքական այլ պարբերականներ

Արդեն երիտթուրքերի կառավարման շրջանում, բացի վերոնշյալ պարբերականներից, լույս են տեսնում նաև այս քաղաքական ուժին հարող այլ պարբերականներ, որոնց մի մասը ևս համառոտ անդրադարձի կարիք ունի՝ ավելի ընդհանրական դարձնելու այս շրջանի մամուլի վերաբերյալ տեղեկությունը և օսմանյան մամուլի ընդհանուր պատկերը:

Ինչպես վերևում նշեցինք, երիտթուրք գործիչները բավական մեծ ուշադրություն էին հատկացնում մամուլին՝ փորձելով մեծ թվով թերթերի միջոցով իրենց կարծիքներն ու տեսակետները հասանելի դարձնել լսարանին: Ուստի երիտթուրքերի կառավարման ընթացքում ստեղծվում էին տասնյակ թերթեր, որոնք ոչ միշտ էին կարողանում հեղինակություն և ճանաչում ձեռք բերել՝ հիմնականում ապահովելով ավելի շատ քանակ, քան որակ: Այնուամենայնիվ, դրանք ևս կազմում էին երիտթուրքական մամուլի հատուկ մասը և լուծում էին տարատեսակ, հաճախ նաև տեղային խնդիրներ: Նման թերթերից էին «Շուրայը Ումմեթը», «Իչդիհադը» և այլ պարբերականներ, որոնք կարևոր դեր ունեին երիտթուրքական մամուլի զարգացման և ձևավորման գործընթացում:

«Շուրայը Ումմեթը»

«Շուրայը Ումմեթը» (թուրքատառ օսմաներեն՝ Şura-yi Ümmet/Ազգային խորհուրդ) պարբերականը հիմնադրել են հայտնի երիտթուրք գործիչներ Բեհաեդդին Շաքիրն³⁰ ու Սամիփաշագաղե Սեգահին³¹ 1902 թ. Կահիրեում³²:

«Շուրայը Ումմեթը» պարբերականը նոր ծավալով և հզորությամբ տպագրվել է 1908 թ. հուլիսից՝ դառնալով երիտթուրքերի կարևոր գաղափարական թերթերից մեկը: Թերթը ոչ միայն հանդես էր գալիս երիտթուրքական գաղափարների տարածմամբ և պաշտպանությամբ, այլ նաև հաճախ էր քննադատում այլ թերթերի և հողվածագիրների, որոնք չէին կիսում երիտթուրքական գաղափարախոսությունը³³:

Պարբերականը տարբեր ժամանակահատվածներում լույս է տեսել տարբեր ձևաչափերով. եղել է ինչպես օրաթերթ, այնպես էլ ամսագիր: Պարբերականում հողվածներով հանդես են եկել Ալի Քեմալը³⁴, Ահմեթ Ֆերիթը³⁵, Յուսուֆ Աքչուրան³⁶ և այլք: Թերթը, որոշ դադարներով հանդերձ, տպագրությունը շարունակել է մինչև 1929 թ.՝ լույս տեսնելով ընդհանուր 220 համարով³⁷:

30 Թուրք քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության անմիջական իրագործողներից: «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկրորդ քարտուղար:

31 Թուրք ռեալիստական հեքիաթասաց, վիպասան:

32 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 39 (Ankara: Türkiye Diyanet Vakfı, 2010), 240-242:

33 Inuğur, “*Basın ve Yayın Tarihi*,” 311.

34 Թուրք գրող, քաղաքական-հասարակական գործիչ, խմբագիր:

35 Թուրք քաղաքական գործիչ, մտավորական, դիվանագետ, երեսփոխան:

36 Գրող և հասարակական գործիչ:

37 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 39, 240-242.

«Իչդիհադ»

«Իչդիհադ» (թուրք.՝ İctihad/ճգնել³⁸) պարբերականը ևս կարելի է դասել երիտթուրքերի կարևոր թերթերի շարքում: Պարբերականը տպագրությունը սկսել է Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ Ժնևում, 1904 թ. սեպտեմբերին³⁹: Երկլեզու (թուրքերեն, ֆրանսերեն) ամսագիրը հիմնել և ղեկավարել է հայտնի երիտթուրք գործիչ Աբդուլլահ Ջևդեթը⁴⁰: 1905 թ. Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպանը Աբդուլլահ Ջևդեթի⁴¹ դեմ դատական հայց է ներկայացնում, ինչին հետևում են ճնշումները, որի արդյունքում Ջևդեթը ստիպված է լինում թերթի խմբագրությունը տեղափոխել Եգիպտոս⁴²: Թերթը 1906-1908 թթ. տպագրվում է Կահիրեում, 1911-1932 թթ.՝ Կոստանդնուպոլսում:

Ջևդեթը հրատարակում է ամսագրի 358 համար մինչև 1932 թ. դեկտեմբեր:



5. «Իչդիհադի տուն», Ֆաթիհ/Կոստանդնուպոլիս

(<https://odatv.com/abdullah-cevdetin-kutuphanesinde-neler-gordum-2307171200.html>)

38 Թերթի անվանումն օսմաներենից թարգմանաբար նշանակում է ճգնել, ճիգ ու ջանք թափել, չափազանց աշխատել, կրոն կամ որևէ վարդապետություն հաստատել, իսլամական կրոնի մեկնություն:

39 *İslâm Ansiklopedisi*, C. 21, (Istanbul: Türkiye Diyanet Vakfı, 2000), 446-448.

40 Արաբկիրում ծնված, քրդական արմատներով թուրք հասարակական-քաղաքական գործիչ, մտավորական, ակնաբույժ, բանաստեղծ և թարգմանիչ:

41 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 21, 446-448.

42 Նույն տեղում:

**FROM THE HISTORY OF YOUNG TURKISH PRESS: A SHORT REVIEW
(UNTIL 1908)**

SUMMARY

Key words: The Ottoman Empire, periodicals, Young Turkish press, “Meshveret,” “Ichitihad,” “Mizan.”

The scientific article presents a brief history of the Young Turkish Press (until 1908). Special attention is given to the first segment of this process. The article is devoted to the analysis of the process of the emergence and distribution of the leading young Turkish newspapers of the first period (1890-1908 / 1909).

During this period, newspapers were published outside the Ottoman Empire, mainly in Cairo, France, Switzerland, and other places, because Abdul Hamid’s censorship and persecutions throughout the Ottoman Empire restricted their ideas and political views from freely circulating.

Элина З. Мирзоян

кандидат филологических наук

**ИЗ ИСТОРИИ МЛАДОТУРЕЦКОЙ ПРЕССЫ (ДО 1908 Г.):
КРАТКИЙ ОЧЕРК**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Османская империя, периодические издания, младотурки, младотурецкая пресса, «Ичтихат», «Мешверет», «Мизан».

Статья представляет собой краткий обзор младотурецкой периодической прессы (до 1908 г.). Особое внимание уделено первому этапу истории младотурецкой прессы. Статья освещает историю основания и распространения ведущих младотурецких газет указанного периода, которая охватывает период с 1890-х по 1908/1909 гг. В это время газеты печатались за пределами Османской империи, в основном в Каире, Франции, Швейцарии и других местах, так как действующая в Османской империи абдुлгамидовская цензура и проводимые репрессии не давали возможности свободно распространять собственные идеи и политические взгляды на территории империи.

REFERENCES

Gladishev, Andrey. “«Le Courier de Smyrne»: из истории антирусской пропаганды в Турции в н. 1820-х годов,” [“«Le Courier de Smyrne»: From the History of anti-Russian Propaganda in Turkey (1820's)]. *Izvestiya Saratovskogo universiteta. Novaya seriya. Seriya istoriya i mejhdunarodniye otnosheniya* 13 no. 2 (2013);

Kharatyan, Albert. Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870–1890-ական թթ.), [The Ottoman Censorship and the Press of Western Armenia (from the 1870s to the 1890s)]. *Patmabanasirakan handes* 4 (1985): 103-116;

Kharatyan, Albert. *Արևմտահայ մամուլի իր պատմության ավարտին (1900-1922 թթ.)* [The Western-Armenian Press at the End of its History (1900-1922)]. Yerevan, NAS RA, Institute of History, 2015;

Petrosyan, A. Yuri. Армянский вопрос на страницах редкого эмигрантского издания младотурок [The Armenian Question in the Emigrant Publication of the Young Turks]. *Patmabanasirakan handes* 2 (1982): 173-178;

Petrosyan, A. Yuri. *Турецкая публицистика эпохи реформ Османской империи (конец XVIII начало XX в.)* [Turkish Publicism of Reforms in the Ottoman Empire (XVIII-XX)]. Moskva: Nauka, 1985;

Zheltakov, D. Anatoli. *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)* [The Press in Turkish Social, Political and Cultural Life (1729-1908)]. Moskva: Nauka, 1972;

Հորիզոն [Horizon] t'ert, Tiflis, 1909.

ՀՈՒՅՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանասյի բառեր*¹ Հույների ցեղասպանություն, Օսմանյան պետություն, հայ պատմագրու-
թյուն, կոտորած, տեղահանություն, Փոքրասիական աղետ, Պոնտոս, Թրակիա

Հույների ցեղասպանության հարցն՝ ամենատարբեր հանգամանքներով պայմանավոր-
ված՝ տասնամյակներ շարունակ լռության է մատնվել²: Պետք է նշել, որ չնայած Հայոց
ցեղասպանության պատմագրության զարգացմանը, ինչպես Հայաստանի Հանրապե-
տությունում, այնպես էլ Սփյուռքում քիչ են այն հայ պատմաբանները, ովքեր հետազոտել
են Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած տարիներին Օսմանյան պետության
հակահունական քաղաքականության շարժառիթներն ու հետևանքները: Կարելի է անվա-
րան ընդգծել, որ հարցին ուսումնասիրողներն անդրադարձել են կա՛մ հակահայկական
քաղաքականության և Հայոց ցեղասպանության համատեքստում, կա՛մ ժամանակի հույն-
թուրքական հարաբերությունների ձևաչափով:

Ներկայացնելով հայ պատմագրության մեջ հարցին անդրադարձած հեղինակնե-
րին՝ հիմնական շեշտը դնում ենք Գևորգ Վարդանյանի «Հույն բնակչությունն Օսմանյան
կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)» մենագրության վրա:

20-րդ դարակզբին Օսմանյան պետության իրագործած ցեղասպանության հետևան-
քով բնաջնջվեց, բռնի իսլամացվեց և տարագրվեց ևս մեկ քրիստոնյա ժողովուրդ.
Թրակիայում, Փոքր Ասիայում և Պոնտոսում վերջ դրվեց տեղի հունական քաղա-
քակրթությանը³:

Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման գործընթացը, ինչպես
նաև 1970-80-ական թթ. Արևմուտքում Հրեից հոլոքոստի թեմայի նկատմամբ հետաքրք-
րության աճը նպաստեցին Հույների ցեղասպանության հարցի բարձրացմանը (1980-
1990-ական թթ.)³: Հատկանշական է, որ այն իրականություն դարձավ շնորհիվ Պոն-
տոսի հույների համառ և հետևողական ջանքերի: 1994 թ. փետրվարի 24-ին Հունաս-
տանի Հանրապետության խորհրդարանը մայիսի 19-ը հայտարարեց Հույների ցեղաս-
պանության հիշատակի օր, որը կապված է Մուստաֆա Բեմալի Սամսուն հասնելու

1 Հրապարակումը նվիրվում է Պոնտոսի հույների ցեղասպանության 100-ամյակին:

2 Թեոֆանի Մակիդիս, *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս*, հեղինա-
կագործված թարգմանությունը՝ Թեհմինե Մարտոյանի (Ալեքսանդրուպոլիս, 2014), 18:

3 Այդ մասին մանրամասն տե՛ս Գևորգ Վարդանյան, «Պոնտոսի հույները և հանրապետական
Թուրքիան. պատմական հիշողություն և նոր մարտահրավերներ», *Շամանակակյից Եվրասիա* III, no.
2 (2014), 86-105:

հետ⁴: Հույների ցեղասպանությունը ոգեկոչվում է նաև սեպտեմբերի 14-ին՝ կապված 1922 թ. Ջնյոնիայի քրիստոնյաների կանխամտածված բնաջնջման, ապա՝ քաղաքի հրկիզման հետ:

Հայ պատմագրություն մեջ օսմանահպատակ հույների պատմության նախացեղասպանական և բուն ցեղասպանական շրջանին որոշակիորեն անդրադարձել են Մանվել Ջուլյանը⁵, Ջոն Կիրակոսյանը⁶, Հրաչ Բարթիկյանը⁷, Վահագն Դադրյանը⁸, Ռիչարդ Հովհաննիսյանը⁹, Հովհաննես Ինճիկյանը¹⁰, Հրաչիկ Սիմոնյանը¹¹, Արման Կիրակոսյանը¹², Արսեն Ավագյանը¹³, Գևորգ Քիլիմջյանը¹⁴, Արտեմ Ուլունյանը¹⁵ և այլք:

Վերը հիշատակված հեղինակներից առանձնանում է հատկապես պատմաբան Գևորգ Քիլիմջյանը: Նրա հետազոտությունները նվիրված են Բալկանյան պատե-

4 Մակիդիս, *Հույների ցեղասպանությունը*, 154:

5 Մանվել Ջուլյան, ««Դեվչիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների», *Պարմա-բանասիրական հանդես* no. 2-3 (1959), 247-256:

6 Ջոն Կիրակոսյան, *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը* (XIX դարի 70-ական թթ.) (Երևան, «Հայաստան», 1978):

7 Հրաչ Բարթիկյան, «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ», *Պարմա-բանասիրական հանդես* no. 2-3 (1999), 397-407: Հրաչ Բարթիկյան, Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին, *Պարմա-բանասիրական հանդես* no. 2 (1981), 290-299:

8 Vahagn Dadrian, “The Determinants of the Armenian Genocide,” working paper GS 02. (Yale Center for International and Area Studies, H.F. Guggenheim Foundation, 1998), 1-32; Vahagn Dadrian, *The History of the Armenain Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence-Oxford: Berghahn Books, 1995); Vahagn Dadrian, *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (New Brunswick: Transaction Publishers, 1999).

9 Ռիչարդ Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն, հարրո I. Առաջին փուլին, 1918-1919* (Երևան, ՀՀ ԳԱԱ, 2005); “Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities,” ed. by Richard G. Hovannisyan (California: Mazda Publishers, 2009); Richard Hovannisyan, “Armenia on the Road to Independence, 1918 (Los Angeles: University of California Press, 1967).

10 Հովհաննես Ինճիկյան, *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* (Երևան, «Հայաստան», 1984), Оганнес Инджикян, *Буржуазия Османской империи* (Ер., Изд-во АН Арм. ССР, 1977).

11 Հրաչիկ Սիմոնյան, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* (Երևան, «Հայաստան», 1986):

12 Արման Կիրակոսյան, *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.)* (Երևան, «Գիտություն», 1999):

13 Арсен Авакян, *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* (Երևան: “Գիտություն,” 1999); Арсен Авакян, *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, отв. ред. Г. Аветисян (Երևան: “Գիտություն,” НАН РА, 2001).

14 Գևորգ Քիլիմջյան, *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988); Նույնի, «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 8 (1970), 11-16; Նույնի, «Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 10 (1976), 32-41:

15 Артем Улунян, *Политическая история современной Греции (конец XVIII в. – 90-е гг. XX в.)* (Москва: ИВИ РАН, 1998), 233.

րազմներից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբն ընկած ժամանակահատվածում հույն-թուրքական հարաբերությունների և հույների առաջին բռնի տեղահանությունների քննարկմանը:

Պատմաբան Գևորգ Վարդանյանի¹⁶ «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)» մենագրությունը¹⁷ հայրենական պատմագրության մեջ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան պետության մեջ հույների դրությունը, բնակության շրջանները, թուրքական իշխանությունների՝ հույն ժողովրդի բռնի տեղահանությունների և կոտորածների հետևողական քաղաքականությունը համապարփակ ներկայացնելու առաջին փորձն է: Մենագրությունն ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսից 20-րդ դարի առաջին քառորդն ընկած ժամանակահատվածը:

Իհարկե, ուսումնասիրության մեջ հիշատակվող որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են ժամանակագրական այդ շրջանակներից, ինչը պայմանավորված է քննության առարկա հիմնահարցն առավել խորությամբ հետազոտելու անհրաժեշտությամբ: Վարդանյանն այս հետազոտությամբ հայ պատմագրության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում Կ.Պոլսի հունական տիեզերական պատրիարքարանի, հունական կազմակերպությունների տեղեկագրերն ու արխիվային փաստաթղթերի ժողովածուների նյութերը, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների վերաբերյալ: Հույն ժողովրդի պատմության և Օսմանյան պետության մեջ նրանց դրության հետ կապված հարցերի մեկնաբանման համար հեղինակն օգտագործել է ինչպես հույն և հայ, այնպես էլ եվրոպացի ու ամերիկացի հասարակական գործիչների, դիվանագետների, զինվորականների, բժիշկների, ժամանակակիցների աշխատանքները՝ այդ թվում նամակներ, հուշագրություններ և այլն¹⁸:

Գևորգ Վարդանյանն իր հետազոտությունն իրականացնելիս նկատում և փաստում է, որ հույն ուսումնասիրողներն ավելի շատ են սկսել անդրադառնալ սեփական ժողովրդի ցեղասպանության պատմության հիմնահարցին՝ գիտական հետաքրքրության բարձրացումը կապելով Հունաստանում հաստատված գաղթական հույների հիշողության պահպանման հետ: Հեղինակը հավաստիացնում է, որ հիշողությունն այն հիմնական շարժիչ ուժն էր, որը հիմնահարցի վերաբերյալ գիտական և քաղաքական մեծ հետաքրքրություն առաջացրեց¹⁹:

16 Հյուսիսային Կարոլինայի համալսարանի դոկտորանտ և դասախոս Գևորգ Վարդանյանը պատմական գիտությունների թեկնածու է, շուրջ երկու տասնյակ գիտական հրատարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության հեղինակ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ հայերի և հույների ցեղասպանությունների պատմություն, Օսմանյան և Ռուսական կայսրությունների համեմատական հետազոտություն, հանրային պատմություն և այլն: 2017-2018 թթ. ղեկավարել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Մինչ այդ եղել է նույն հիմնարկի գիտաշխատող, բաժնի վարիչ, գիտական քարտուղար և այլն:

17 Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Կոլաժ», 2012, 196 էջ):

18 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում*, 10-11:

19 Նույն տեղում, 13:

Մենագրության առաջին գլխում («*Հույների բնակության շրջաններն ու դրությունն Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին և XX դարի սկզբին*») ներկայացնելով հույների դրությունը՝ Վարդանյանը խիստ կարևոր է համարում հույն բնակչության թվաքանակի վերաբերյալ ամենատարբեր աղբյուրների համադրումն ու վերլուծությունը և հանգում այն եզրակացության, որ թեև թուրքական մարդահամարների տվյալները դիտավորությամբ կեղծված են, այնուամենայնիվ, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան պետության մեջ ապրում էր շուրջ 2,5 մլն հույն: Անդրադառնալով հույների ծանր վիճակին՝ հեղինակը փաստում է, որ թուրքական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին պետականության հարուստ ավանդույթներ ունեցող և զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող հույների ազգային առաջընթացը²⁰: Դիտարկելով իրադարձությունների ընթացքը՝ հետազոտողը եզրակացնում է, որ 1894-1896 թթ. հայերի կոտորածների ժամանակ սուլթան Աբդուլ Համիդն ուղղափառ հույների նկատմամբ վարել է սիրաշահման քաղաքականություն: Ըստ հեղինակի՝ այն պայմանավորված էր միջազգային բարդ իրադրությամբ՝ խուսափել Հունաստանի հետ առճակատումից, ինչպես նաև սեպ խրել հույն և հայ քրիստոնյաների հարաբերությունների մեջ, թշնամանք սերմանել նրանց միջև, հասնել հույների չեզոքությանը Հայկական հարցում՝ ամեն գնով թույլ չտալով նրանց միջամտությունը և այլն:

Գևորգ Վարդանյանը, այնուամենայնիվ, լուրջ բացթողումներ է նկատում վերոհիշյալ քաղաքականության մեջ և այն հիմնավորում առանձին վայրերում հույների կոտորածներով: Նա առանձնացնում է թուրքացման քաղաքականության ջատագովներից հատկապես դոկտոր Նազրմին, ով 1910 թ. առաջ է քաշել Մակեդոնիան մահմեդական գաղթականներով բնակեցնելու ծրագիրը²¹: Հեղինակը համոզմունք է հայտնում, որ 1913-1914 թթ. բռնագաղթը պետական քաղաքականություն էր, երիտթուրքերի բռնի օսմանացման (թուրքացման) քաղաքականության բաղադրիչն էր և նպատակ ուներ զրկելու Էգեյան ծովափը հույն (քրիստոնյա) բնակչությունից: Վարդանյանը թուրքացման քաղաքականության բաղկացուցիչ է համարում հույների տնտեսական դիրքերի թուլացումը, ապա՝ տնտեսությունից նրանց դուրս մղելը կամ «տնտեսության թուրքացումը», որն ամբողջացնում է երիտթուրքերի «հունական» քաղաքականության էությունը²²:

Ամփոփելով ուսումնասիրության առաջին գլխի արդյունքները՝ հեղինակը եզրակացնում է, որ օսմանյան իշխանությունների կողմից 1913-1914 թթ. հույն ժողովրդի նկատմամբ իրագործվեց բռնի տեղահանությունների քաղաքականություն, որը թուրքական կողմը հետևողականորեն փորձել է ներկայացնել որպես բնակչության «կամա-

20 Նույն տեղում, 47:

21 Նույն տեղում, 65, 71:

22 Նույն տեղում, 78:

վոր փոխանակում»։ Դրա նպատակն ըստ հետազոտողի՝ Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հունաթափումն էր, որը տնտեսական պատժամիջոցների հետ միասին Օսմանյան պետության թուրքացման քաղաքականության մի մասն էր կազմում։

Մենագրության երկրորդ գլխում («Օսմանյան կայսրության հույն բնակչությունն Առաջին համաշխարհային և 1919-1922 թվականների հույն-թուրքական պատերազմների տարիներին: Հայ-հունական համագործակցության փորձերը») հեղինակը փաստում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական փուլում հույների հավաճանքները, ընդհանուր առմամբ, նույն քաղաքականության շարունակությունն էին, որ նրանց նկատմամբ կիրառվեց Բալկանյան պատերազմների վերջին շրջանում և 1914 թ. գարնան ու ամռան ամիսներին: Վարդանյանը, սակայն, ժամանակի ընթացքում հակահունական քաղաքականության «արմատավորում և խորացում» է տեսնում:

Ուսումնասիրողը նկատում է, որ եթե նախորդ շրջանում հիմնական շեշտը դրվում էր արտաքսումների վրա, իսկ գործողության տարածքը միայն Թրակիան և Փոքր Ասիայի արևմտյան ծովափն էին, ապա Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (սկսած 1916 թվականից) հույների զանգվածային ջարդերն ընդգրկեցին կայսրության ամբողջ տարածքը: Մեկնաբանելով Պոնտոսում հակահունական քաղաքականությունը, որը տարվում էր պատերազմի հենց սկզբից, հեղինակն իրադարձությունների բոռն ծավալման՝ հույն բնակչության նկատմամբ «իսկական հաշվեհարդարի» տարեթիվ նշում է 1916 թ. ապրիլը՝ այն կապելով ռուսների կողմից տարածքի գրավման, այնուհետև նահանջի հետ: Համեմատելով Պոնտոսում տեղի ունեցած ջարդերն ու արտաքսումները՝ Գևորգ Վարդանյանն առանցքային ոչ մի տարբերություն չի նկատում ո՛չ Փոքր Ասիայում, ո՛չ Թրակիայում: Հեղինակը նշում է, որ Պոնտոսում տեղի ունեցածը դիտարկվել է որպես առանձին՝ «պոնտական ազգի» ցեղասպանություն՝ պայմանավորված այդ խնդրով հիմնականում զբաղվող, պոնտական ծագում ունեցող հույներով: Վարդանյանը նպատակահարմար և արդարացված է համարում դրանք դիտարկել որպես մեկ ցեղասպանություն՝ չտարանջատելով միմյանցից²³:

Հույն-թուրքական պատերազմի տարիներին (1919-1922 թթ.) Օսմանյան պետության հունաթափումը տեղի է ունեցել առավել մեծ ծավալներով և ընդհանուր առմամբ ավարտին հասցվել երկիրը հույներից «ազատելու» քաղաքականությունը: Հեղինակը փաստում է, որ Փոքր Ասիայում՝ հատկապես Պոնտոսում և Էգեյան ծովի ափերի հունաշատ շրջաններում, հույն բնակչությունը բնաջնջվեց: Միայն Առաջին աշխարհամարտի տարիներին Պոնտոսից տեղահանվածների ու կոտորվածների թիվը հասնում էր շուրջ 100.000 մարդու²⁴: Ամփոփելով 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին Օսմանյան պետության տարածքում հույն ժողովրդի զանգվածային տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրության արդյունքները՝ Գևորգ Վարդանյանը հավաստիացնում է, որ քեմալականներն «ավարտին հասցրին» երիտթուրքերի որդեգրած քաղաքականությունը, որի նպատակը կայսրության տարածքի

23 Նույն տեղում, 97-98:

24 Նույն տեղում, 100:

«մաքրումն» էր հույն հպատակների²⁵: Թեմայի ուսումնասիրության համատեքստում հետաքրքիր է հատկապես հեղինակի անդրադարձը հայ-հունական համագործակցության փորձերին (XX դարի առաջին քառորդ): Ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան պետության տարածքում գրեթե զուգահեռաբար իրականացվող երկու ժողովուրդների զանգվածային կոտորածների և արտաքսումների քաղաքականությունը՝ հետազոտողն ընդգծում է հնարավոր համագործակցության փաստը: Հատկանշական է հեղինակի՝ ընթերցողի ուշադրության բևեռումը 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին Պոնտոսի լեռներում համատեղ ինքնապաշտպանության բազմաթիվ դեպքերի և հայ-հունական միացյալ մարտախմբերի գործունեության վրա: Վարդանյանի հավաստմամբ՝ բազմաթիվ են այն օրինակները, երբ հույներն իրենց հնարավորության սահմաններում օգնում էին հայերին²⁶:

Ուսումնասիրության երրորդ գլխում («Հունական հարցը Լոզանի վեհաժողովում: Հայերի և հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների թուրքական քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները») հեղինակը դիտարկում է Օսմանյան պետության և հասարակության մեջ հույների ներգրավվածությունն ու նրանց դերակատարությունը:

Բնական համարելով միևնույն պետության, վարչակարգի և գործող անձանց իրագործած ցեղասպանությունների զգալի նմանություններն ու ընդհանրությունները (տնտեսական պատժամիջոցներ, զորակոչ, աշխատանքային գումարտակների ստեղծում, բռնի իսլամացում, զանգվածային տեղահանություններ և կոտորածներ, մշակութային, կրթական և կրոնական հաստատությունների ոչնչացում)՝ հեղինակը հատկապես ընդգծում է դրանց տարբերությունները՝ մարդկային կորուստների թվաքանակ, քրդական տարր և այլն²⁷:

Անդրադառնալով հույների բռնագաղթի և կոտորածների փուլային զարգացմանը՝ կապված ժամանակագրության և աշխարհագրության հետ, հեղինակը դժվարանում է պնդել մեկ կոնկրետ ծրագրի առկայության փաստը, մինչդեռ ակնհայտ է համարում, որ 1914-1923 թթ. հույների տեղահանություններն ու կոտորածները (Արևելյան Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս), կազմելով մեկ միասնական քաղաքականություն, կրել են պետական բնույթ և իրագործվել կայսրության հույն բնակչությունից ազատվելու դիտավորությամբ²⁸:

Իրականացնելով հետևանքների համեմատություն՝ հեղինակն ամփոփում է. «1914-1923 թթ. թուրքական երկու վարչակարգերի կողմից քրիստոնյաների նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության հետևանքը եղավ երկու ժողովուրդների՝ մի դեպքում արևմտահայության, մյուս դեպքում՝ օսմանահպատակ հույների հայրենազրկումը: Նրանց պատճառվեց առեղծված մարդկային, նյութական և հոգեբանական

25 Նույն տեղում, 132:

26 Նույն տեղում, 136-137:

27 Նույն տեղում, 167:

28 Նույն տեղում, 168:

կորուստ... Չնայած մեծաքանակ հույներ (գլխավորապես Պոնտոսից) գաղթեցին Ռուսաստան, նախկին խորհրդային հանրապետություններ և ԱՄՆ, այնուամենայնիվ, նրանց ճշող մեծամասնությունը հանգրվան գտավ Հունաստանում: Իսկ հայերի հոծ զանգվածներ տարածվեցին աշխարհով մեկ՝ ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա»²⁹:

Գևորգ Վարդանյանն օգտագործել է Հայոց ցեղասպանության պատմության հայտնի ուսումնասիրողներ Վահագն Դադրյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, մասամբ նաև թուրք պատմաբան, սոցիոլոգ Թաներ Աքչամի մոտեցումները, սակայն չի հետևել նրանցից և ոչ մեկի՝ ցեղասպանություն երևույթը բացատրելու ձևաչափին: Նա քննարկում է բազմաթիվ գործոններ՝ կրոնական, թուրքական ազգայնականության, ժամանակի միջազգային քաղաքական և այլն: Սակայն այս հետազոտության մեջ որևէ գործոնի առանձին առաջնային կամ եզակի նշանակություն և կարևորություն չի տրվում Հույների ցեղասպանության պատճառներն ու ընթացքը բացատրելու հարցում: Ավելին, հույների բնաջնջման նպատակադրությունը հաստատող փաստաթղթի բացակայությունը չի կաշկանդել հեղինակին այդ քաղաքականությունը ցեղասպանություն որակելու հարցում: Այդուհանդերձ, Վարդանյանի՝ հակահունական քաղաքականության աստիճանական արմատականացման օգտին արվող փաստարկները հիշեցնում են գերմանացի պատմաբան Հանս Մոմզենի «cumulative radicalization» դրույթը, որն օգտագործվել է ինչպես Հրեից հոլոքոստի, այնպես էլ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, թեև հեղինակն այն որպես նմուշ-օրինակ չի դիտարկել:³⁰

Ամփոփելով փաստենք, որ հետազոտությունն ունեցել է կիրառական կարևոր նշանակություն, մասնավորապես, 2015 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հույների ցեղասպանության փաստը ճանաչելիս և այն դատապարտող փաստաթուղթը կազմելիս օգտագործվել են աշխատության մեջ ներկայացված դրույթներն ու մշակումները:

29 Նույն տեղում, 172-173:

30 Hans Mommsen, "Hitler's Reichstag Speech of 30 January 1939," *History and Memory* 9, no. 1-2 (1997), 147-161, տե՛ս նաև հետևյալ ուսումնասիրությունը՝ Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford: Oxford University Press, 2005).

Tehmine R. Martoyan

PhD in History

THE ISSUE OF THE HISTORY OF GREEK GENOCIDE IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

SUMMARY

Key-words: Greek Genocide, Ottoman Empire, Armenian historiography, massacre, deportation, Asia Minor disaster, Pontus, Trance.

Researches dealing with the Greek pre-genocidal and genocidal period are written by the Armenian historians Manvel Zulalyan, John Kirakosyan, Hratch Bartikyan, Vahakn Dadryan, Richard Hovhannisyanyan, Gevorg Kilimjyan, etc.

Gevorg Vardanyan's monograph "The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster (1914–1923)" is the first attempt of comprehensive research which presents and analyzes the mass deportations and massacres of the Greeks in the Ottoman Empire from 1914 to 1923.

In 2015 the provisions of the monograph were used during the recognition and formation of the document of the Greek Genocide at the Parliament of the Republic of Armenia.

Тегмине Р. Мартоян

кандидат исторических наук

ВОПРОС ИСТОРИИ ГЕНОЦИДА ГРЕКОВ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид греков, Османская Империя, армянская историография, резня, депортация, Малоазийская катастрофа, Понт, Фракия.

Тему предгеноцидного и геноцидного периода истории османских греков, в армянской историографии частично упоминули Манвел Зулалян, Джон Киракосян, Грач Бартикян, Ваакн Дадрян, Ричард Оганнисян, Геворк Килимджян и др. Монография историка Геворка Варданяна «Греческое население в Османской империи и Малоазийская катастрофа» стала первой попыткой всестороннего рассмотрения положения греков в Османской империи в конце 19-го и начале 20-х веков. Исследование имело важное прикладное значение, в частности, при признании факта Греческого Геноцида в Национальном Собрании Республики Армения в 2015 г. представленные в работе положения и разработки были использованы при формулировке подтверждающего документа.

REFERENCES

Avagyan, Arsen. *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* [The Genocide of 1915. The Mechanisms of Decision-making and Implementation]. Yerevan: Gitutyun, 1999;

Avagyan, Arsen. *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)* [The Circassian Factor in the Ottoman Empire and Turkey (The Second half of the XIX c.- The first quarter of the XX c.)]. Yerevan: NAS RA, Gitutyun, 2001;

Bart'ikyan, Hrach'. «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ» [The Greeks of Russia and Soviet Union: Resettlements and Deportations]. *Patma-banasirakan handes* 2-3 (1999): 397- 407;

Bart'ikyan, Hrach'. «Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին» [The Greek Encyclopedia “Hidra” about Armenia and the Armenians]. *Patma-banasirakan handes* 2 (1981): 290-299;

Hovannisyán, Rich'ard. *Հայաստանի Հանրապետություն, Հարրր I. Մուշին տարին, 1918-1919* [Republic of Armenia, volume I, The First Year, 1918-1919]. Yerevan: NAS RA Institute of History, Tigran Mets, 2005;

Inchikyan, Hovhannes., *Буржуазия Османской империи* [The Bourgeois of the Ottoman Empire]. Yerevan: NAS RA, 1977;

Inchikyan, Hovhannes. *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* [The Fall of the Ottoman Empire: Socio-Economic Review]. Yerevan: Hayastan, 1984;

Qilimjyan, Gevorg. *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* [Turkish-Greek Relations in 1908-1914]. Yerevan: YSU, 1988;

Qilimjyan, Gevorg. «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը» [About the Question of the Young Turks' National Policy]. *Lraber Hasarakakan Gitut' yunneri* 10 (1976): 11-16;

Qilimjyan, Gevorg. «Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)» [The Greek-Turkish Relations on the Eve of the World War I]. *Lraber Hasarakakan Gitut' yunneri* 8 (1970): 32-41;

Kirakosyan, John. *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)* [The Bourgeois Diplomacy and Armenia in the 70s of the 19th century]. Yerevan: Hayastan, 1978;

Kirakosyan, John. *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության ինտիդը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թթ.)* [The British Diplomacy and the Question of Western Armenians in the 30s of the 19th century]. Yerevan: Gitutyun, 1999;

Malkidis, T'eofanis. *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս* [The Greek Genocide, Trace, Asia Minor, Pontus]. Alexandroupolis, Limuna, 2014;

Simonyan, Hrach'. *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* [Ideology and Policy of the Turkish National Bourgeois]. Yerevan: Hayastan, 1986;

Ulunyan, Artem. *Политическая история современной Греции* [Political History of Modern Greece]. Moscow: Institute of General History, NAS, 1998;

Vardanyan, Gevorg. *Հոյն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* [The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster, 1914-1923]. Yerevan: Collage, 2012;

Vardanyan, Gevorg. «Պոնտոսի հույները և հանրապետական Թուրքիան. Պատմական հիշողություն և նոր մարտահրավերներ» [The Greeks of Pontus and the Republican Turkey: Historical Memory and New Challenges]. *Modern Eurasia* no. 3 (2) (2014): 86-105;

Zulalyan, Manvel. ««Դեվշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների» [“Devshirme” in the Ottoman Empire According to Armenian and Turkish Sources]. *Patma-banasirakan handes* 2 (1959): 247-256.

**ՊԱՏՄԵԼՈՎ ԱՆՊԱՏՄԵԼԻՆ. ՏՐԱՊԻՉՈՆԻ ՀԱՅԵՐԻ
ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Տրապիզոն, Հարություն Կիրակոսյան, հուշեր, հայերի տեղահանություն, հայերի կոտորած, Ակն, Արաբկիր:

Հարություն Կիրակոսյանն իր հուշագրության մեջ ներկայացնում է իր և իր ընտանիքի փորձառությունը Մեծ եղեռնի տարիներին: 1915 թ., լինելով ընդամենը 11 տարեկան, նա անցել է տարագրության ճանապարհը՝ կորցնելով ընտանիքի անդամներին և միայն հրաշքով փրկվելով: Նա մեկն էր այն սակավաթիվ հայերից, որոնք ոչ միայն փրկվեցին, այլ նաև իրենց փորձառությունը հուշագրության տեսքով հանձնեցին ապագա սերունդներին:

Հուշագրությունը գրվել է Մեծ եղեռնից 50 տարի անց: Անշուշտ, ժամանակն իր ազդեցությունն է ունեցել դեպքերը վերհիշելու և պատմելու հեղինակի նախաձեռնության վրա: Այդուհանդերձ, այս հուշագրությունը բավական կարևոր սկզբնաղբյուր է Հայոց ցեղասպանության և հատկապես տրապիզոնահայության տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրության համար:

Հայոց ցեղասպանության ընթացքում զանգվածային տեղահանություններ և կոտորածներ տեղի ունեցան Օսմանյան կայսրության բոլոր վարչական միավորներում: Այս առումով Տրապիզոնի նահանգը բացառություն չէր: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Տրապիզոնի նահանգում բնակվում էր 73.395 հայ, որոնցից 5.539-ը՝ նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում¹: Պատերազմի ժամանակ Տրապիզոնն ուներ ռազմավարական բացառիկ նշանակություն Օսմանյան իշխանությունների համար, այդ պատճառով նահանգում հակահայկական գործողությունները գտնվում էին երիտթուրք պարագլուխների անմիջական վերահսկողության տակ: Այստեղ հակահայկական քաղաքականության մեջ առանցքային դեր ունեին Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչեղի Նայիլը²: Ականատեսների վկայությամբ՝ հակահայկական միջոցառումներն արագանում են, երբ հունիսի 22-23-ին Տրապիզոն է ժամանում Բեհաեդդին Շաքիրը³: Արդեն հունիսի 26-ին հրաման է ստացվում, որ հայերը մի քանի օրվա ընթացքում պետք է տեղահանվեն: Սկզբում տեղահանվում են տղամարդիկ, այնուհետև՝ կանայք և երե-

1 Ռոբերտ Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* (Երևան, ՀՅԹԻ, 2015), 120:

2 Մելինե Անույան, *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, ՀՅԹԻ, 2013), 101-102:

3 Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* (New York: I.B. Tauris, 2011), 469.

խաները: Տղամարդկանց մեծ մասը սպանվում է Դեյիրմենդերե կոչված վայրում, որը գտնվում էր քաղաքից 10 րոպե հեռավորության վրա: Որոշ կանայք և երեխաներ խեղդամահ են արվում ծովում: Երեխաների մյուս մասն էլ ուղարկվում է «Կարմիր մահիկի» հիվանդանոց, որտեղ նրանց թունավորում են: Տեղահանվողներին պատկանող թանկարժեք իրերն ու ամբողջ ունեցվածքը թալանվում է⁴:

Տրապիզոնից հայերի առաջին խմբի տեղահանությունը տեղի է ունենում 1915 թ. հուլիսի 1-ին: Այդ օրը գորբերը շրջապատում են Տրապիզոնի հայաբնակ հատվածը և սկսում տեղահանել քաղաքի բնակիչներին, որոնց ոչ մեծ խմբերով տեղափոխում են Դեյիրմենդերե, ապա՝ Գյումուշխանե: Ընդհանուր առմամբ շուրջ 6.000 մարդ է տեղահանվում քաղաքից հուլիսի 1-ից 3-ն ընկած հատվածում⁵:

Հարություն Կիրակոսյանը Տրապիզոնից տեղահանված հազարավոր հայերից մեկն էր: Ծնվել է 1903 թ. (ամիսն ու օրը հայտնի չեն), ընտանիքի յոթ երեխաներից ամենակրտսերն էր: 1915 թ. ընդամենը 11 տարեկան էր, երբ, կորցնելով ընտանիքը, ազգականների և այլ հայերի հետ 62 օր տարագրության ճանապարհ է անցնում: Ընտանիքի անդամներից փրկվում են միայն ավագ եղբայրը՝ Ավետիսը, որը սովորելիս է եղել Կրասնոդարում, և քույրերից մեկը, որովհետև ամուսնացած է եղել Թիֆլիսում: Հարությունը միայն հրաշքով է փրկվել, ապա մի թուրք որդեգրել է նրան, որի ընտանիքի հետ տեղափոխվել է Կոնիա: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո նա փախել է Կոստանդնուպոլիս, որտեղ մեկ տարի մնալուց հետո վերադարձել է Տրապիզոն: 1919 թ. նրա եղբայրը, որն ապրում էր Ռուսաստանի Կրասնոդար քաղաքում, գալիս է Տրապիզոն և նրան տանում Ռուսաստան, որտեղ էլ սկսվում է նրա կյանքի հաջորդ փուլը:



Լուս. 1. Չախից՝ Հարություն Կիրակոսյանը, աջից՝ եղբայրը՝ Ավետիս Կիրակոսյանը, կենտրոնի անձն անհայտ է (Հարություն Կիրակոսյանի ընտանեկան արխիվ):

4 Նույն տեղում, 477:

5 Նույն տեղում, 480:

Այնուհետև Հարությունը տեղափոխվում է Երևան, երկու տարի սովորում և 1925 թ. ավարտում է Երևանի №2 դպրոցը: Բացի այդ, ջութակ նվագել է սովորում Երևանի կոնսերվատորիայում, սակայն ձիուց վայր ընկնելու հետևանքով մատը վնասում է՝ չկարողանալով շարունակել ուսումը: Որոշ ժամանակ անց եղբոր՝ Ավետիսի հետ մեկնում է Վրաստան և 1930 թ. ընդունվում Անդրկովկասի ինժեներամելիորատիվ համալսարանի (Закавказский инженерно-мелиоративный институт) հիդրոտեխնիկական ֆակուլտետը՝ ավարտելով այն 1935 թ.: Թիֆլիսում Հարությունը բնակվում է Կամենի փողոց, տուն №1, բնակարան 7 հասցեում: 1937 թ.՝ եղբոր բանտարկվելուց հետո, ադրբեջանցի ընկերոջ միջնորդությամբ առանց պետական մարմիններում ձևակերպման տեղավորվում է աշխատանքի Թիֆլիսի պետական ադրբեջանական թատրոնում որպես ջութակահար՝ աշխատելով օրավարձով:

Հայրենական պատերազմի ժամանակ, ռազմաճակատ մեկնելու ճանապարհից հետ է կանչվում, քանի որ հրաման էր տրվել Վրաստանից ռազմաճակատ չուղարկել բարձրագույն կրթություն ունեցող անձանց, և գործուղվում է աշխատանքի Ռոստով՝ Անդրկովկասի մետալուրգիական գործարան՝ որպես նախագծման բաժնի ինժեներ: 1946 թ. ընտանիքով տեղափոխվում է Կիրովական (այժմ՝ Վանաձոր) և աշխատում տեղի քիմիական կոմբինատում: 1951 թ. կրկին վերադառնում է Թիֆլիս և շարունակում աշխատել Ռոսթավիի մետալուրգիական գործարանում:

1962 թ. ընտանիքով տեղափոխվում է Հայաստան, աշխատում է «Հայհիդրոէներգաշին» կազմակերպությունում: Մահացել է Երևանում 1973 թ. հունվարին:

Մեծ եղեռնից կես դար անց՝ 1965 թ. մարտի 5-ին, աշակերտական տետրի մեջ իր ձեռագրով հատուկ եղբորորդու՝ Ռաֆայել Իշխանյանի համար նա գրի է առնում իր կյանքի պատմությունը, մասնավորապես ցեղասպանության ժամանակ իր փորձառությունը: Բացի իր անձնական փորձառությունից, նա իր 12 թերթանոց տետրի վերջում գրի է առել նաև մեկ այլ տրապիզոնցու՝ Սուրեն Օհանյանի պատմությունը: Հուշերի վերջում թվականն է՝ 5/04. 65 թ., իսկ տետրի կազմի հետևամասում՝ տետրի արտադրության թիվը՝ 1964 թ.: Հուշերը թանգարան-ինստիտուտին է փոխանցել Ռաֆայել Իշխանյանի որդին՝ Վահան Իշխանյանը:

Այստեղ հրապարակում ենք Հարություն Կիրակոսյանի հուշերն ուղղագրական և կետադրական ուղղումներով: Առանձին բառերի, անձնանունների և տեղանունների վերաբերյալ տալիս ենք լրացուցիչ բացատրություններ ինչպես տողատակում, այնպես էլ ուղղանկյուն փակագծերի մեջ:

Հարություն Կիրակոսյանի հուշերը

1915 թ. Տրապիզոնի հայկական բոլոր թաղամասերի պատերին տեղի թուրք կառավարության կողմից հետևյալ բովանդակությամբ թղթեր փակցվեցին. «Հայտարարությունից երեք օր հետո... Տրապիզոնի հայությունը պետք է տեղահանվի, տեղահանությունը պետք է կատարվի երեք խմբով»:


Հայտարարության օրերին ոստիկանները շրջում էին հայկական թաղերում, հանգստացնում ժողովրդին՝ ասելով, որ նրանք չմտածեն, քանի որ նրանց տեղահանե-

լու են Գյումուշխանե⁶, Երզնկա, և իբր այնտեղ պետությունը նրանց համար հնարավոր բոլոր միջոցները կատեղծի մինչև պատերազմի ավարտը, որից հետո նորից կարող են վերադառնալ իրենց տները. առայժմ նրանք կարող են փակել իրենց դռները և բանալիները հանձնել կառավարությանը՝ ապահով լինելով իրերի համար:

Լրացավ հայտարարության երեք օրը. չորրորդ օրն առավոտյան ոստիկանները, հավաքելով մեր թաղի հայերին, խումբ-խումբ հանեցին քաղաքից դուրս՝ հայոց գերեզմանատնից ոչ հեռու գտնվող մի հարթավայր, և ասկյարներով շրջապատելով՝ տարան (աքսորյալների առաջին խումբը մեր թաղի հայերն էին):

Հասանք Տրապիզոնին մոտ գտնվող քիրեյխանեն (կրի գործարան) [հավանաբար կրի արտադրության վայր, թրք. Kireç բառից – Ե. Հ.]: Շրջապատված «պահապան» ասկյարներով՝ առաջին օրը գիշերեցինք այդտեղ՝ բացօթյա:

Մի քանի օր հետո խիստ հսկողության տակ հասանք փոքրիկ գյուղաքաղաք Գյումուշխանե: Դեռ քաղաք չմտած՝ մեզ մոտեցան մի խումբ չեթեներ՝ [անկանոն զինվորականներ, ավագակախումբ – Ե. Հ.] զինված ատրճանակներով, դամաներով (երկբերան դաշույն), կրծքները ծածկված փամփիշտակալներով:



Լուս. 2. Հարություն Կիրակոսյանի հուշատետրից մեկ էջ (Հարություն Կիրակոսյանի ընտանեկան արխիվ):

6 Բնակավայր Տրապիզոնի վիլայեթում՝ Տրապիզոն քաղաքից մոտ 105 կմ հարավ:

Չեթենները խումբը կանգնեցրին քաղաքի կենտրոնում՝ ճանապարհի վրա: Նրանց ավագը, խիստ հայացքով մոտենալով խմբին, կարգադրեց տղամարդկանց առանձնացնել՝ ասելով, թե այդ գիշեր տղամարդիկ և կանայք ջոկ-ջոկ պետք է գիշերեն:

Առանձնացան տղամարդիկ, որոնց հետ բաժանվեցին նաև իմ հասակի 10-15 տարեկան տղաներ. ես մնացի կանանց խմբում:

Մույթը վրա էր հասել. չեթենների ավագը հրամայեց տանել տղամարդկանց, իսկ կանանց լցրին մի ախոռ և դռան մոտ կանգնեցրին երկու զինված ասկյար:

Առաջին սարսափը տիրեց ողջ խմբին: Մի քանի կանայք գիկումները (ջրի պղնձե ամաններ) մեկնում էին դրսում կանգնած թուրք կանանց և տղաներին ու խնդրում, որ ջուր բերեն: Նրանք տանում էին գիկումները և այլևս չէին վերադառնում:

Խոր մթության մեջ ախոռի զանազան անկյուններից լսվում էին ծանր հեկեկանքներ. ոչ ոքի քունը չէր տանում: Խմբի անդամներից յուրաքանչյուրը զգում էր, որ ինչ-որ զարհուրելի բան է կատարվելու. շատերը լաց էին լինում և շշնջում, թե տղամարդկանց տարան սպանելու: Լուսացավ: Առավոտյան ասկյարները, ախոռի դուռը բանալով, դիմեցին մեզ. «չըբըն դիշարի գյավուրլար (դու՛րս եկեք, անհավատներ)»: Խումբն ամբողջությամբ դուրս եկավ ախոռից, ասկյարներն անմիջապես շրջապատեցին մեզ և հրամայեցին քայլել:

Կանանցից շատերը խնդրում, աղաչում էին ասկյարներին, որ ասեն, թե ուր տարան իրենց ամուսիններին, որդիներին: Ասկյարները պատասխանում էին, որ նրանք շուտով կգան:

Գնում ենք՝ շրջապատված ասկյարներով: Մի քանի օրից, դեռ Երզնկա չհասած, գիշերելու համար մեզ նորից լցրին մի մեծ ախոռ: Մույթն ընկել էր: Ներս մտան մի քանի չեթեններ և սկսեցին պտտվել խմբի մեջ, մեկ էլ ախոռի զանազան մասերում լացուկոծ լսվեց: Չեթենները մայրերից խլում էին նրանց աղջիկներին և թևերից բռնած, քարշ տալով տանում էին: Դուստրերին փրկելու մայրերի բոլոր դիմադրություններն ու ջանքերն իզուր էին: Խեղճերի դիմադրության ամեն մի փորձ պատասխանվում էր չեթենների քացիներով: Գիշերվա խավարում իրենց գավակներից գրկված մայրերի լացուկոծը սգի էր մատնել բոլորին: Այդ օրից անցել է 50 տարի. սգավոր մայրերի վիշտն ու կսկիծը մինչև հիմա էլ մնացել են հիշողությանս մեջ:

Առավոտյան չեթենները եկան, շրջեցին խմբի մեջ և մի փոքր խորհրդակցելուց հետո նրանցից չորսը մոտեցան ախոռի դռանը և կարգադրեցին աքսորյալներին մեկ-մեկ դուրս գալ: Հերթով մոտենում էինք դռանը, չեթենները խուզարկում էին մեզ, խլում թաքցրած զարդերը և դրամներն ու թողնում դուրս: Ավարը հավաքելուց հետո նրանք նստեցին ձիերն ու հեռացան: Այնուհետև նորից ասկյարներով շրջապատված՝ մենք շարժվեցինք:

Մի քանի օր հետո հասանք Երզնկա, մեզ նստեցրին ճանապարհի եզրին՝ հայոց գերեզմանատան մոտ (գերեզմանատանը Էրզրումի գաղթականներն էին): Երեք օր մնացինք Երզնկայում, սովորականի նման գիշերում էինք հողի վրա՝ գլխներիս տակ դնելով մի քար:

Մեզ մոտենում էին թուրք, քուրդ տղաներ, հայիոյում, քարեր նետում, ծաղրում: Լուռ տանում էինք ամեն մի ցավ, հայիոյանք, վիրավորանք. կորցրել էինք մեր մարդկային արժանապատվությունը: Ասկյարների հսկողությունը մեզ վրա այնքան էլ խիստ չէր, բայց հեռանալ կամ փախուստի դիմել, մինևույն է, չէինք կարող, քանի որ յուրաքանչյուր թուրք կամ քուրդ իրեն հանդիպած ցանկացած հայի իրավունք ուներ տեղն ու տեղը սպանել:

Չորրորդ օրվա առավոտյան ճանապարհվեցինք, մի քանի օրից հասանք Քեմախ, գիշերելու համար մեզ իջեցրին Եփրատի ափը: Բոլորը ցրվեցին խմբից ոչ շատ հեռու, ցախ և զանազան խոտեր հավաքելու համար: Մեր սնունդը ճանապարհին արտերից հավաքած հատիկներն ու խաշած զանազան կանաչիներն էին:

Սովորական երևույթ էր ճանապարհին քաղցի, հոգնածության կամ հիվանդության պատճառով խմբից հետ մնացողներին սպանելը. լսված հրացանի յուրաքանչյուր ձայնից զգում էինք, որ նորից ասկյարները սպանեցին մեկին: Չէինք հետաքրքրվում սպանվածների ով լինելով, որովհետև դա արդեն սովորական երևույթ էր դարձել մեզ համար, և համոզված էինք, որ նույն վախճանն էլ կարող է մեզ վիճակվել:

Օրը մթնում էր, մեզանից յուրաքանչյուրը ոտքերի փաթաթած չուլերը կարգի էր բերում. քայլելուց շատերի ոտքերն ուռել էին ու վերքեր առաջացել: Խմբից շատերը պառկել էին, մյուսներն էլ պատրաստվում էին քնել: Մեկ էլ խմբի մեջ շշուկ տարածվեց, թե երկու կին իրենց գցել են գետը: Ոմանք ցավում էին, շատերն էլ երանի էին տալիս խեղդվածներին, թե ազատվեցին տանջանքներից:

Առավոտ է, լուսացավ, խմբից յուրաքանչյուրը սկսեց զբաղվել իր առօրյա հոգսերով, նորից շշուկ, թե այնինչը իրեն գցեց գետը:

Ցերեկ է, մեզ մոտեցան մի քանի չեթեներ, շոջեցին ամբողջ խումբը: Բայց ոչ ոքի ոչ մի վնաս չտվեցին և հեռացան: Մթնեց, ևս մի գիշեր Եփրատի գով ափին անցկացրինք:

Երրորդ օրն առավոտյան լույսը նոր էր սփռել իր թևերը, երբ ասկյարները հրամայեցին պատրաստվել ճանապարհվելու: Սկսեցինք պատրաստվել, ոմանք ոտքերը փաթաթեցին չուլերով, շատերն էլ նախորդ օրվա պատրաստած «ճաշը» կերան ու վեր կացան ճանապարհվելու: Ասկյարներն իրենց սովորական կոպիտ հայիոյանքներով, հրացանների կոթերի հարվածներով շտապեցնում էին մեզ:

Գնում էինք, շարունակում ճանապարհը. ինչ-որ վախ ընկավ բոլորիս սիրտը, զգում էինք, որ այստեղ ինչ-որ վատ բան է կատարվելու:

Անցել էինք ոչ շատ տարածություն, հասանք այն կամուրջը, որը Եփրատի ձախ ափը միացնում էր աջ ափին: Հետ նայեցինք, ի՞նչ, մի խումբ ձիավոր չեթեներ մեզ էին հետևում, հասկացանք այդ օրվա մեր գլխին գալիք զուլումը: Լսեցինք խմբի վերջից հրացանի չորս կրակոց, նորից սպանեցին խմբից հետ մնացածներին: Անցնում ենք կամուրջը, մեկ էլ ի՞նչ, կանանցից երեքին միայն տեսա իրենց գետը գցելիս, նորից երանի էինք տալիս խեղդվածներին:

Չնայած համոզված էինք, որ մեր մահվան օրերը հաշված էին, հասկացել էինք, որ կոտորվելու ենք, մահն անխուսափելի է, այնուամենայնիվ, չէինք տխրում, կենդանի

մեռելներ էինք, փառք էինք տալիս, որ շուտով ազատվելու ենք, վերջ է դրվելու մեր տանջանքներին:

Հասանք Քեմախից ոչ հեռու մի ձոր, որտեղից հոսում էր բարակ մի առու: Տեղավորվեցինք ձորի աջ լանջում՝ ոչ մեծ մի տափարակի վրա: Մեզանից յուրաքանչյուրը տեղավորվեց գիշերելու փոքր հողատարածության վրա: Մեկ էլ ի՞նչ, աքտոյալներիս հետևող չեթեների խումբը մեզանից ոչ հեռու մի բարձունքի վրա իջավ ձիերից: Չեթեների մեծը կարգադրեց խումբը բաժանել երեք մասի՝ կանանց, տղաների, աղջիկների ու երիտասարդ կանանց:

Սարսափը տիրեց մեզ, զգում էինք, որ այսօր մեր վերջին օրն է, չէինք խոսում, գույներս գցել էինք, սարսուռ էր տիրել մեզ: Մեկ էլ ի՞նչ, խորհրդակցեցին չեթեները՝ չենք իմանում, նրանց մեծը ձեռքով ցույց տալով մեզ՝ առանձնացած տղաներիս, հրամայեց միանալ կանանց, ուրախացանք, ժպիտ անցավ մեր այտերով, բարձր ձայնով «եաշասըն փատիշահումուզ (կեցցե՛ մեր թագավորը)» գոռացինք ու վազ տալով միացանք խմբին: Մեր մայրերը, որոնց տիրել էր հուզումը, տեսնելով մեզ իրենց մոտ, ուրախությունից թրջեցին իրենց աչքերն արտասուքով:

Օրը մթնում էր, բացի մեր խմբից՝ չեթեները մյուսներին շրջապատած տարան, ո՛ր...

Մենք՝ մնացածներս, սկսեցինք մեր սովորական զբաղմունքը՝ օջախներ վառել, «կերակուր» եփել:

Մթնեց, պատկեցինք քնելու, խմբի կանանցից շատերը չէին քնում, հեկեկում էին, ցամաքել էր նրանց արտասուքը:

Առավոտ էր, արևի ճառագայթները մոտակա սարերից իջնում էին ցած, լուսացավ, պատրաստվեցինք շարունակել ճանապարհը:

Գնում էինք, ճանապարհը ձգվում էր Եփրատին զուգահեռ: Նրա ափերը սևացել էին մեզանից առաջ նույն մեր բախտին արժանացած այլ գյուղերից ու քաղաքներից աքտոյալ հայ կանանց, տղամարդկանց և անչափահասների դիակներով, իսկ ճանապարհին հաճախ ընկած էին հայերի նեխած, քայքայված, այլանդակված դիակները: Քայլում էինք՝ այդ ողբալի տեսարաններին ակնառես լինելով: Քարացել էր մեր սիրտը, արտասուքներս չորացել, տեսնում էինք այն, ինչ մեզ էր սպասում:

Գնում էինք, քայլում ուռած, հին շորերով փաթաթված, վերքոտ ոտքերով: Մի քանի օրից հասանք Էզին (Ակն): Նորից իջանք գիշերելու Եփրատի ափին: Էզինը փոքրիկ գյուղաքաղաք էր, նրա բնական գեղեցկությունը գերազանցում էր մինչ այդ մեր տեսած քաղաքները: Եփրատի երկու ափերի բարձունքները ծածկված էին բազմատեսակ այգիներով և պտղատու ծառերով: Խումբը հանգստանում էր Եփրատի աջ ափին, մենք՝ տղաներս, ցրվեցինք մոտակա թթի այգիները՝ հավաքելու ծառերի տակ թափված չոր թուփը և այլ մրգեր: Ակնում չէր մնացել ոչ մի հայ. բոլորը տեղահան էին արված:

Խմբում ծխում էին նորից օջախները, կանայք զբաղված էին իրենց օրվա «կերակուրը» պատրաստելով: Գիշերեցինք այդ օրը ևս, նորից Եփրատի հոսանքի զովը փակեց մեր աչքերը: Քնեցին շատերը, իսկ ոմանց աչքերը չէին փակվում, չէին քնում,

նրանց առօրյա ցավերը չէին հեռանում, չէին մոռանում իրենց զավակներին և հարազատներին:

Առավոտ է, զարթնեց խումբը, վեր կացանք, նորից մեզնից յուրաքանչյուրը զբաղված էր իր առօրյա հոգսերով: Մեկ էլ ի՞նչ, քրոջս ամուսնու մայրը, որի միակ տղային տարել էին Գյումուշխասնե տղամարդկանց հետ, ամբողջ ճանապարհին մտածում էր նրա մասին, հույս էինք տալիս, հանգստացնում խեղճ պատավին, թե մի մտածիր, Երվանդը ողջ է, կգա: Նա կտրել էր հույսը և շատ հանգիստ մոտեցավ Եփրատի ափին ու իրեն գցեց ջուրը, խառնվեց ջրի ալիքներին, անհայտացավ՝ վերջ տալով ցավերին: Նրան հետևեց նաև մի ուրիշը, որն ուժասպառ էր եղել, այլևս հնարավորություն չունեի շարունակելու տանջալի ճանապարհը:

Երկու օր գիշերեցինք Ակնում, երրորդ օրն առավոտյան շարունակեցինք ճանապարհը, չեմ հիշում որ գյուղից ոչ հեռու, մեզ նստեցրին գիշերելու, օրը նոր էր մթնել, ասկյարները սկսեցին հրաձգությունը, չանցավ շատ ժամանակ՝ մեզ մոտեցան մի խումբ զինված քրդեր: Ասկյարները հեռացան մեզանից: Զինված քրդերը հրացանի սպառնալիքների տակ տարան մեզ մոտակա գյուղը և լցրին առանց ծածկի, ոչ բարձր պատերով շրջապատված մի ախոռ:

Գիշերեցինք այդ օրը: Առավոտյան եկան մի քանի զինված քրդեր, ախոռի մուտքի երկու կողմերը շարքով, ծալապատիկ նստեցին: Զինված մեր նոր «պահապան» քրդերը մեզ՝ խմբի անդամներին, մեկ-մեկ դուրս բերելով, պառկեցնում, այլանդակ ձևով խուզարկում և եթե դրամ էին գտնում, վերցնում էին և հանում հագուստները, որոնք իրենց դուր էին գալիս: Վերջացավ խուզարկությունը. զինված քրդերի սպառնալիքների տակ սկսեցինք քայլել՝ շարունակելով ճանապարհը:

Գյուղի մեջ, թե գյուղից դուրս, քուրդ կանայք, թե տղաները, հետևելով մեզ՝ քարեր էին շարտում, ծեծում խմբից շատերին: Տանում էինք ամեն մի ցավ ու վիրավորանք: Մայրս նկատեց, որ գլխավորապես հարվածում էին տղաներին, հանեց իր վերին շորը, հագցրեց ինձ, որ չնկատեն իմ տղա լինելը. այդպես քայլեցի այդ օրը:

Մի քանի օրից, դեռ չհասած Արաբկիրի, ճանապարհին զգացինք ծանր, նեխած լեշերի հոտ: Կարճ ժամանակից հետո ճանապարհից ոչ շատ հեռու մի հարթավայրում տեսանք արևի կիզիչ ճառագայթներից ուռած, այլանդակված մի քանի հարյուր սպանված հայերի դիակներ:

Անցանք այդ ողբալի տեսարանը: Հասանք Արաբկիրից ոչ հեռու մի դաշտավայր՝ գիշերելու: Այդ պատմական, հին հայկական փոքրիկ քաղաքում չէր մնացել ոչ մի հայ. բոլորը գոհ էին դարձել երիտասարդ թուրքերի դաժանություններին:

Սովորականի նման մեզ մոտենում էին թուրք, քուրդ աղջիկներ և տղաներ, ծիծաղում, քարեր շարտում, բռունցքներն իրար խփելով գոռում էին. «քյաֆերլեր գեբերին, սիզե էյի լյազիմ տուր» (գլավուրներ, սատկե՛ք, ձեզ այդպես է հարկավոր):

Մեկ օր գիշերեցինք Արաբկիրի մոտակա այդ դաշտավայրում: Մի քանի օրից հասանք Եփրատի այն մասը, որտեղից լաստով տեղափոխվեցինք գետի ձախ ափն ու շարունակեցինք քայլել: Անցանք Գյումիշ-մադեն կոչված վայրը, վաթսուներկուերորդ օրն էր, հասանք Խարբերդից ցածր, տափարակ վայրում գտնվող Մամուրեթ-

ույ Ազիզ⁷ քաղաքը: Տարան մեզ հայոց գերեզմանատունը: Չորս օր մնացինք գերեզմանատանը. Մեզանից առաջ ուրիշ հայ արքայալներ էին իջևանել այդտեղ: Իմբից ոչ ոքի չէին թողնում դուրս գալ գերեզմանատանից: Այդտեղ մեզ տալիս էին հաց ու բերում տակառներով ջուր:

Ամառվա կիզիչ շոգը ծանրացրել էր գերեզմանատան աղտեղության ծանր հոտը: Իմբից ոմանք մահացան, ոմանք էլ կիսամեռ վիճակում էին: Մի փոլիս (ոստիկան) և մի ասկյար հավաքեցին տղաներիս, ստիպեցին փորել ոչ շատ խորը մի մեծ փոս ու կարգադրեցին մեռելների, ինչպես նաև ցույց տալով մի քանի հոգու, ովքեր դեռ մահացած չէին, կիսակենդան մարմինները քարշ տալ, լցնել փոսը և ծածկել հողով: Կատարեցինք ոստիկանի հրամանը: Դեռ չմահացածների աղերսը, նրանց բերանից հազիվ լսելի բառերը չէին հուզում մեր քարացած սրտերը, անուշադիր էինք թողնում նրանց ողբը, չէինք կարող չկատարել փոլիսի հրամանը, հակառակ դեպքում մեզ էլ նույն վիճակին կմատնեին:

Հինգերորդ օրն էր, առավոտյան մեզ դուրս բերեցին գերեզմանատանից, շրջապատված ասկյարներով և բաշխրոգուկներով, տարան: Հասանք Ուլ-Ազիզից ոչ հեռու Գյուլջուկ կոչված փոքրիկ լիճը: Երեկո էր, մութը վրա էր հասել, սկսվեց կոտորածը, հրացաններով և սառը գեներով:

Հանգստացավ ամեն ինչ, երկու տղա կենդանի էինք մնացել դիակների մեջ: Մութ գիշեր էր, զգույշ վեր կացանք ու սկսեցինք ճանապարհ ընկել Ուլ-Ազիզ: Հասանք քաղաք, իմացանք, որ կառավարությունը որբանոց է բացել և հավաքում է կենդանի մնացած հայ որբերին: Իմանալով որբանոցի տեղը՝ երկու դժբախտներս գնացինք, դիմեցինք որբանոցի մյուդիր Թահսին բեյին: Նա ընդունեց մեզ: Չանցավ շատ ժամանակ, նույն օրն ևեթ, Թահսին բեյը ինձ կանչեց իր մոտ, նրա մոտ էր նաև իր մեծ տղան՝ Մյուքերեմը, որը հազիվ կլիներ իմ հասակին. հայրը պատվիրեց տղային տանել ինձ իր տուն: Մյուքերեմի հետ գնացի տուն, լողացրին ինձ, փոխեցին շորերս, անունս դրեցին Իսմայիլ, և մնացի Թահսին բեյի տանը: Նա ուներ երկու տղա և մեկ աղջիկ: Բացի ինձանից, նրա տանը կային ևս երկու երզնկացի երիտասարդ հայ աղջիկներ: Փոքրի, որը հազիվ կլիներ իմ հասակին, անունը դրել էին Իգպալ, իսկ մեծինը, որը կլիներ քսան տարեկան՝ Ֆաթմա:

Անցել էր տասը օր ինչ Թահսին բեյի տանն էի. նրա բնակարանը բաղկացած էր հինգ սենյակից, սենյակներից մեկում քնում էինք ես, Իգպալը և Ֆաթման: Մենք միմյանց հետ գաղտնի հայերեն էինք խոսում, այնպես, որ Թահսին բեյի ընտանքիքի անդամներից ոչ ոք չլսի մեր խոսակցությունը, իսկ ընդհանրապես մեր խոսակցության լեզուն տաճկերենն էր: Իգպալն ու Ֆաթման պատմում էին իրենց կրած տանջանքների մասին, որոնք չէին տարբերվում մեր կրած զարհուրանքներից:

Իմանալու համար, թե ինչ է անում իմ ընկերը, որին թողել էի որբանոցում, գնացի այն շենքը, որտեղ որբերն էին: Դժբախտաբար, այնտեղ ոչ մի որբ չէր մնացել: Հետաքրքրվեցի Թահսին բեյի տղայից՝ Մյուքերեմից, թե ինչ արեցին որբերին: Նա

7 Մամուրեթ-ույ Ազիզը բնակավայր է Խարբերդի վիլայեթում, Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք:

պարզ ասաց, որ նրանց տարան կոտորեցին: Քառասունինը տարի անց պարզվեց, որ Թալեաթ փաշան հրաման էր տվել տաճիկ կառավարության կողմից տարբեր վայրերում բացված որբանոցներում գտնվող բոլոր հայ որբերի կյանքին անխնա վերջ տալ⁸:

Մեկուկես տարի Ուլ-Ազիզում մնալուց հետո Թահսին բեյի ընտանիքի հետ ֆուրգոններով ճանապարհվեցինք Կոնիա: Ճանապարհին եղա Մալաթիայում, Սեբաստիայում, Կեսարիայում, և հասանք Կոնիա: Վերոհիշյալ քաղաքների հայերին աքսորել էին: Ուլ-Ազիզում մի քանի թրքացած հայերի պատահեցի, Կեսարիայում ևս՝ մի քանի թրքախոս հայերի: Կոնիայում ևս կային կոտորածներից ողջ մնացած հայ որբեր և ընտանիքներ:

1918 թիվն էր, վերջացավ Առաջին համաշխարհային պատերազմը. հարմար մի առիթ գտնելով՝ ծայտյալ հեռացա Թահսին բեյի տնից, նստեցի գնացք և մի քանի օրից հասա Սկյուտաք⁹, որտեղ Պոլսո բարեգործական ընկերության ներկայացուցիչները գնացքից իջնող որբերին և հայ ընտանիքներին հավաքում, տանում էին Պոլսի Գում Գափու մայր եկեղեցին¹⁰, որտեղ զանազան վայրերից հավաքված էին շատ որբեր, ինչպես նաև կանայք ու տղամարդիկ:

1913 թվին մեծ եղբայրս Տրապիզոնից մեկնել էր Ռոստով՝ ուսումը շարունակելու: Ես, իմանալով այդ, մեկ տարի Պոլսո մայր եկեղեցում մնալուց հետո որոշեցի մեկնել Տրապիզոն, ապա՝ Ռոսասատան եղբորս գտնելու:

8 Մեծ եղեռնի 50-ամյակը նշանավորվեց այն փաստող բազմաթիվ հրատարակությունների երևան գալով: Այստեղ թերևս դժվար է միանշանակ պնդել, թե հատկապես որ աղբյուրի վրա հիմնվելով է հեղինակը խոսում բոլոր երեխաների ֆիզիկական ոչնչացման մասին, սակայն փաստ է, որ դեպքերից 49 տարի անց հրատարակված աղբյուր է Արամ Աստուրյանի կազմած «Շայիմ բեյի հուշերը» (երկրորդ հրատարակություն), որտեղ ներկայացված են Թալեաթի կողմից հայ երեխաներին ոչնչացնելու մտադրությունը փաստող փաստաթղթեր: Տե՛ս օրինակ 1915 թ. դեկտեմբերի 12-ի և 1916 թ. հունվարի 23-ի հրամանները (Արամ Աստուրյան, *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոլորածները և Թալեաթ փաշա* (Պեյրուֆ, 1965: Երևան, Արևիկ, 1990), 125-129: Դեկտեմբերի 12-ի հեռագրում մասնավորապես նշվում է. «Հաւաքեցէք եւ սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել զուլումը, որոնք ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք»: Հեռագրի մեկնաբանության մեջ նշվում է, որ ««Կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք» պարբերութիւնը կը նշանակէ. – «Անապատները ղրկեցէք», այսինքն՝ մեռցուցէք»։ տե՛ս Արամ Աստուրյան, *Մեծ ոճիրը*, 125: Այդուհանդերձ, հեռագրից պարզ է դառնում, որ այդ ամենը չէր վերաբերում այն որբերին, որոնք «չեն կրնար յիշել զուլումը», ուստի այդքան էլ ճիշտ չէ պնդել, որ նպատակը բոլոր հայ երեխաների ֆիզիկական ոչնչացումն է եղել: Այնուհայտ է, որ այն երեխաները, որոնք ֆիզիկապես չէին ոչնչացվելու, թրքացվելու էին թուրքական որբանոցներում: Հայ երեխաների թրքացման գործընթացի մասին առավել մանրամասն տե՛ս Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4 no. 1 (2016), 25-44:

Նոյն՝ 1965 թ. հրատարակված մեկ այլ կարևոր աղբյուր է Գերսամ Ահարոնեանի «Յուշամատենան Մեծ եղեռնի» գիրքը, որտեղ ևս խոսվում է դիտարկվող խնդրի մասին: Տե՛ս Գերսամ Ահարոնեան, *Յուշամատենան Մեծ եղեռնի (1915-1965)* (Պեյրուֆ, Ատլաս, 1965), 86, 255:

Ցեղասպանության տարիներին հայ երեխաների ճակատագրի մասին տե՛ս նաև, Vahakn Dadrian, “Children as Victims of Genocide: The Armenian Case,” *Journal of Genocide Research* 5, no. 3 (2013): 421-427:

9 Պոլսի ափական հատվածում գտնվող թաղամաս:

10 Խոսքը, հավանաբար, Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին է:

Դիմեցի Պոլսո քարեգործական ընկերության նախագահին. նա տվեց ինձ ճանապարհաձև, ու մեկնեցի Տրապիզոն: Երեք օրվա ճանապարհորդությունից հետո նավը հասավ Տրապիզոն: Իջա նավից, ապա նավակով դուրս եկանք նավամատույց ու քաղաք: Գտա մի քանի հայրենակից հայերի, որոնք բախտի բերմամբ ողջ էին մնացել: Տեղավորվեցի նրանց մոտ, գիշերեցի, հաջորդ օրը նրանց խորհրդով դիմեցի Տաճկաստանում մեծահարուստ Իբրանույանի մագազինի դիրեկտոր [խանութի տնօրեն] Միհրան էֆենդիին աշխատանքի ընդունվելու համար: Միհրան էֆենդին չմերժեց իմ խնդրանքը, ընդունվեցի իբրև գործակատար, և իր օգնական Թագվոր էֆենդիին կարգադրեց անվճար ինձ տալ պատրաստի շորեր և կոշիկ:

Սկսեցի աշխատել: Ճանապարհը դեպի Ռուսաստան ազատ էր: Վեց ամիս հետո եղբայրս տեղեկացավ, որ կենդանի եմ, եկավ Տրապիզոն, վերցրեց ինձ, ու մեկնեցինք Եկատերինոպոլ (Կրասնոդար): Սկսվեց իմ կյանքի երկրորդ շրջանը:

Սուրեն Օհանյանի պատմածը

Տրապիզոնի հայերի աքսորը սկսվելուց երկու-երեք օր առաջ շատ մայրեր 4-ից 10-12 տարեկան զավակներին տարան պատվելիների դպրոցը, երեխաների կյանքը փրկելու համար: Այնտեղ էր նաև մեր դպրոցի ուսուցիչներից Թորոս էֆենդիի տղան՝ Սուրեն Օհանյանը, որը ներկայումս գտնվում է Երևանում, նա պատմեց հետևյալը:

Պատվելիների դպրոցի ընդարձակ բակում հավաքվել էին երեք հարյուրից ավելի երեխաներ: Երեք օր դպրոցի բակում գիշերեցինք, չորրորդ օրը եկան մի քանի փոլիսներ և ասկյարներ, առանձնացրին մեզ՝ 7-ից 12 տարեկան երկու հարյուրի չափ տղաներիս, կազմեցին մի խումբ և, շրջապատված ասկյարներով, տարան Տրապիզոնից ոչ հեռու Ջևիզլիք¹¹ կոչված վայրը և բոլորին սպանեցին: Ինձ և մի քանի տղաների թուրքերը վերցրին իբրև հոգեզավակ: Այդպիսով փրկվեցինք մահից, իսկ պատվելիների դպրոցում մնացած փոքրերին հավաքեցին և տարան լցրին ծովն ու խեղդեցին:

Տրապիզոնի հայության տեղահանումից մեկ ամիս առաջ քաղաքի աչքի ընկնող մարդկանց, մոտավորապես 30 հոգու, որոնց թվում էր նաև Արսեն Եսայանի հայրը՝ Սեդրակ էֆենդին, լցրին նավակները, Մամսուն, թե Կերասուն, լավ չեմ հիշում, տեղափոխելու պատրվակով հեռացրին ծովափից, հրացաններից կրակ բացեցին զոհերի վրա, սպանեցին ու ծովը լցրին: Մեկը, որ թերևս վիրավորված էր, լողալով դուրս եկավ ծովափ ու պատմեց եղելության մասին քաղաքի հայերին:

Ահա տաճիկ երիտասարդ իթթիհատականների կողմից ծրագրված եղեռնում զոհված մեկուկես-երկու միլիոն հայերի չնչին մի տոկոսի զարհուրանքների համառոտ պատմությունը, որին ես սկանառես եմ եղել:

11 Բնակավայր Տրապիզոնի վիլայեթում՝ Տրապիզոն քաղաքից մոտ 30 կմ հարավ-արևմուտք:

Narine S. Hakobyan

**TELLING THE UNTOLD: DEPORTATIONS AND MASSACRES OF TRAPIZON
ARMENIANS IN THE MEMOIRS OF HARUTYUN KIRAKOSSIAN**

SUMMARY

Key-words: Armenian Genocide, Trapizon (Trebizond), Harutyun Kirakossian, memoires, deportation of Armenians, massacres of Armenians, Akn, Arabkir.

In his memoir Harutyun Kirakossian presents his and his family's experience during the Armenian Genocide. In 1915, at the age of eleven, he walked in the death march, lost his family, and survived by chance. He was one of the few Armenians, who not only survived the Armenian Genocide but also wrote memoirs telling his stories to the future generations.

The memoir was written in 1964, 50 years after the Genocide. Of course, time had influence on how he recalls and represents his story. Nevertheless, this memoir is a very important primary source documenting the Armenian Genocide in general, and the experience of Trapizon Armenians, in particular.

Нарине С. Акопян

**РАССКАЗЫВАЯ НЕОПИСУЕМОЕ: ДЕПОРТАЦИИ И МАССОВЫЕ УБИЙСТВА
АРМЯН ТРАПЕЗУНДА В ВОСПОМИНАНИЯХ АРУТЮНА КИРАКОСЯНА**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Трапезунд, Арутюн Киракосян, мемуары, депортация армян, резня армян, Акн, Арабкир.

В своих воспоминаниях Арутюн Киракосян описывает испытания, выпавшие во время Геноцида армян всей его семьи. В 1915 году, когда ему было всего 11 лет, он прошел маршем смерти, потерял семью и выжил лишь чудом, став одним из немногих армян, которые не только остались живы, но и написали воспоминания, передавая описания их испытаний будущим поколениям.

Мемуары были написаны в 1964 году, через 50 лет после Геноцида. Конечно, время оказало свое влияние на написанное, многие детали были забыты. Однако эти мемуары являются очень важным первоисточником для изучения Геноцида армян и особенно депортации и истребления армян Трапезунда.

REFERENCES

Aharonyan, Gersam. *Յուշանկարեան Մեծ եղեռնի* [Commemorative Book on Medz Yeghern]. Beirut: Atlas, 1965;

Anumyan, Meline. *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատաւարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* [Recognition and Condemnation: The Trials of Young Turks (1919-1921 and 1926)]. Yerevan: AGMI, 2013;

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Orphans in the State Orphanages of the Ottoman Empire]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-44;

T'at'oyan, R'obert. *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* [The Question of Western Armenian Population Number in 1878-1914]. Yerevan: AGMI, 2015.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Հասմիկ Գ. Գրիգորյան, պատմ. գիտ. թեկն., մշակութաբան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության իրազորման մեխանիզմները, ցեղասպանության ռճրագործներն ու զոհերը, ոչ զինված դիմադրությունը ցեղասպանությունների ժամանակ, հետցեղասպանություն և հետհիշողություն:

Էլ. հասցե՝ grigoryanhasmik86@yahoo.com

Hasmik G. Grigoryan, PhD in History, cultural anthropologist, researcher at the Department of Contemporary Anthropological Studies, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Republic of Armenia.

Research fields – the mechanisms of Genocide implementation, perpetrators and victims of Genocide, non-armed resistance during the genocides, post-genocide and post-memory.

E-mail: grigoryanhasmik86@yahoo.com

Асмик Г. Григорян, канд. ист. наук, культуролог, научный сотрудник Отдела этнологии современности, Институт археологии и этнографии, Национальная академия наук Республики Армения.

Область исследований – механизмы исполнения Геноцида, изучение жертв и преступников, не вооруженное сопротивление, пост-геноцид и пост-память.

Эл. почта: grigoryanhasmik86@yahoo.com

Նարինե Վ. Մարգարյան – պատմ. գիտ. թեկն., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտնական քարտուղար:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանությունից հետո Մերձավոր Արևելքի արաբական երկրներում հայտնված հայ տարագիրների վիճակը, նրանց սոցիալ-տնտեսական, քաղաքական ինտեգրումը այդ երկրներում, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները տեղի արաբական ժողովուրդների հետ:

Էլ. հասցե՝ narine.margaryan@genocide-museum.am

Нарине В. Маргарян – канд. ист. наук, востоковед, ученый секретарь Фонда «Музей-институт геноцида армян».

Область исследований – положение армянских депортированных лиц на Ближнем Востоке после Геноцида армян, их интеграция в общественно-политическую жизнь арабских стран, а также их взаимоотношения с местным арабским населением.

Эл. почта: narine.margaryan@genocide-museum.am

Narine V. Margaryan, PhD in history, Orientalist, Academic-secretary, Armenian Genocide Museum Institute Foundation.

Research fields – the plight of Armenian refugees in the Arabic countries of the Middle East after the Armenian Genocide, the process of their social – economic and political integration as well as their relations with local Arab population.

E-mail: narine.margaryan@genocide-museum.am

Հայկ Մ. Մարտիրոսյան, պատմ. գիտ. թեկնածու, թուրքագետ, պատմաբան, Էռլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ-Ալեքսանդր համալսարանի (Գերմանիա) հրավիրյալ գիտնական, Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիվի (Պոտսդամ) աշխատակից:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ համիդյան կոտորածներ, Հայոց ցեղասպանություն, եվրոպացի ականատեսներ, գերմանական առաքելությունների սկզբնավորում գործունեություն և կայաններ, առաքելությունների աշխատակիցների կենսագրություններ, գերմանական մամուլի արձագանքներ:

Էլ. հասցե՝ martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Hayk M. Martirosyan, PhD in History, turkologist, historian, visiting scholar at the Friedrich-Alexander University (Germany) of Erlangen-Nuremberg, an employee of Johannes Lepsius's House-Archive (Potsdam).

Research fields – Hamidian massacres, Armenian Genocide, European eyewitnesses, initiation of German missions, activities and stations, biographies of mission employees, German press echoes.

E-mail: martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Айк М. Мартиросян, кандидат исторических наук, тюрколог, историк, приглашенный ученый Эрланген-Нюрнбергского университета им. Фридриха-Александра (Германия), сотрудник Дома-архива Иоганна Лепсиуса (Потсдам).

Области исследований – Гамидовская резня, Геноцид армян, европейские очевидцы, инициирование немецких миссий, деятельность и станции, биографии сотрудников миссий, эхо немецкой прессы.

Эл. почта: martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Քրիստինե Վ. Նաջարյան, բանասեր, կրթության գործի կազմակերպման մասնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Կրթական ծրագրերի բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության դասավանդման հիմնախնդիրներ, արևմտահայ կրթական կյանք:

Էլ. հասցե՝ kristnajaryan@genocide-museum.am

Kristine V. Najaryan, philologist, specialist in education, PhD student, Head of the Educational Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Genocide education, educational life in Western Armenia.

E-mail: kristnajaryan@genocide-museum.am

Кристина В. Наджарян, филолог, специалист по образованию, соискатель фонда «Музей-институт Геноцида армян», заведующая Отдела образовательных программ Фонда «Музей-институт Геноцида армян».

Область исследований - задачи преподавания Геноцида армян, изучение образовательной жизни в Западной Армении.

Эл. почта: kristnajaryan@genocide-museum.am

Ռոբերտ Ա. Թատոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. հասցե՝ r.tatoyan@gmail.com

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@gmail.com

Роберт А. Татоян, кандидат исторических наук, старший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда «Музей-институт Геноцида армян».

Области исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@gmail.com

Էլինա Ջ. Միրզոյան, բան. գիտ. թեկն., արևելագետ (թյուրքագետ), սիյուն-բազետ, բանասեր (հայոց լեզու և գրականություն), ՀՅԹԻ Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թյուրքահայ, թյուրքական մամուլում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն, ազգային ինքնություն, հայկական թեմատիկան թյուրքական տպագիր մամուլում:

Էլ. հասցե՝ elina.mirzoyan@genocide-museum.am

Elina Z. Mirzoyan, PhD in Philology, orientalist, philology, specialists of Diaspora Studies, researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – The Armenian Genocide in the Turkish, Armenian-Turkish Press, national Identity.

E-mail: elina.mirzoyan@genocide-museum.am

Элина З.Мирзоян, канд. фил. наук, востоковед, филолог, диаспоравед, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян”, Старший преподаватель ЕГУ.

Область исследований – вопрос Геноцида армян на страницах турецкой и армяно-турецкой прессы, национальная идентичность, армянская тематика на страницах турецкой прессы.

Эл. почта: elina.mirzoyan@genocide-museum.am

Թեհմինե Ռ. Մարտոյան, պատմ. գիտ. թեկն., միջազգայնագետ-արևելագետ (իրանագետ), «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման և քաղաքի հրկիզման պատմություն, գոհի հոգեբանական ժխտում և այլն:

Էլ. հասցե՝ tehminemartoyan@gmail.com

Tehmine R. Martoyan, PhD in History, Specialist on International Relations/Oriental Studies (Iranology), Senior Researcher at the Department of Organizing Museum Exhibitions, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the history of the annihilation of the Armenians and Greeks of Smyrna and the fire of the city, psychological denial of victim, etc.

E-mail: tehminemartoyan@gmail.com

Тегмине Р. Мартоян, канд. ист. наук, специалист по международным отношениям/востоковед (иранист), старший научный сотрудник Отдела организаций музейных выставок Фонда “Музей-Институт Геноцида армян”.

Область исследований – история истребления армян и греков в Смирне и поджога города, психологическое отрицание жертвы.

Эл. почта: tehminemartoyan@gmail.com

Նարինե Ս. Հակոբյան, միջազգայնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցողը, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածներ:

Էլ. հասցե՝ hakobyan.narine@genocide-museum.am

Narine S. Hakobyan, international relations specialist, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation, junior researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian massacres of 1894-1896.

E-mail: hakobyan.narine@genocide-museum.am

Нарине С. Акопян, специалист по международным отношениям, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян”. Младший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований – массовые убийства армян в 1894-1896 годах.

Эл. почта: hakobyan.narine@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Յեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են անվագն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ *Յեղասպանագիտական հանդեսի* տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Յեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը, պաշտոնը և աշխատավայրը, էլ. փոստի հասցեն:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 100-150 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի ազգանուն, անուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հարտր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական փարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'p'e'ran, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշարակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թ-էշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)” in Armenian Genocide – 100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարատրություններ Հայաստան-Սփիոք յարաբերությունների համատեքստում», *Սփիոք և ինքնություն* (խմբ.՝ Շահան Գանտահարյան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in *Diaspora and Identity* (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տոբն. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

Հղումներ

10. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition-ի*:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդաններից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդաններից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146. Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը:
Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle. Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը:
Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը:

Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
 2. Վերժինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90, հողվածների ժողովածու* (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
 3. Сурен Манукян, "Наказание за верность". От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.
- 2) Բազմակի ոչ շարունակական հղումներների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով(երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:

Օր.՝

1. Dadrian, "Ottoman Archives," 471.
2. Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:
3. Манукян, "Наказание за верность," 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier):

Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
2. Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը:

Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.
2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հողվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հողվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հողվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “*King Lear and Its Folktale Analogues*” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Բաֆանի *Լեմկինի կողմից*» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը: Օր.՝

1. Rutz, “*King Lear*,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը (երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ):
Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

11. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոս 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտ 2017 թ.:

12. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

13. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ë ë
Թ թ - T' t'
Ճ ճ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Չ չ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրելի օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ ճ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ յ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք ք - Q q
Եվ էվ Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ i
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսերթ, թուղթը՝ օֆսերթ,
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
7 (1)**

Երևան 2019

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, պատմագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պագմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շենասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”)

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic Universtiy, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор истории, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусахаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазманя, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ կյուրերն արտահայտում են հեղինակների մտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

«Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հասմիկ Գ. Գրիգորյան

Մանկի ձեռքբերման եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես «ոչ զինված դիմադրության» դրսևորում. երեխաների փորձառությունները 9

Նարինե Վ. Մարգարյան

Հալեպի հայկական որբանոցը 1915-1924 թթ.27

Հայկ Մ. Մարտիրոսյան

Մարի և Վիլհելմ Շպիբերներ. Հայոց ցեղասպանության սկանալիտ գերմանացի հումանիտար ամուսինները..... 54

Քրիստինե Վ. Նաջարյան

Կրթական կյանքի կազմակերպումը Մարաշի որբանոցներում համիդյան կոորդրացիայից հետո (1896-1909 թթ.) 66

Ռոբերտ Ա. Թաթոյան

Վանի գալատակի հայկական վանքերը և վանական կյանքը Մեծ եղեռնի նախաշեմին (1870-ական թթ. – 1914).....77

Էլինա Չ. Միրզոյան

Երիտթուրքական մամուլի պատմությունից (մինչև 1908 թ.). համառոտ սկնարկ..... 103

Թեհմինե Ռ. Մարտոյան

Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ 116

Նարինե Ս. Հակոբյան

Պատմելով անպատմելին. Տրապիզոնի հայերի տեղահանություններն ու կոորդացիան Հարություն Մելքոնի Կիրակոսյանի հուշերում..... 126

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 139

CONTENT

ARTICLES

Hasmik G. Grigoryan

*Ways of Food Procurement During the Armenian Genocide as an Manifestation of
“Unarmed Resistance”: Children’s Experiences* 9

Narine V. Margaryan

The Armenian Orphanage of Aleppo (1915-1924)27

Hayk M. Martirosyan

*Mari and Wilhelm Spieckers: A German Humanist Couple Witnessing the
Armenian Genocide*..... 54

Kristine V. Najaryan

*The Organization of Educational Life of Marash Orphanages
after the Hamidian Massacres (1896-1909)*..... 66

Robert A. Tatoyan

*Armenian Monasteries and Monastic Life in Van Sub-District on the Eve of
the Armenian Genocide (1870s – 1914)*77

Elina Z. Mirzoyan

*From the History of Young Turkish Press: A Short Review
(Until 1908)*..... 103

Tehmine R. Martoyan

The Issue of the History of Greek Genocide in the Armenian Historiography.....116

Narine S. Hakobyan

*Telling the Untold: Deportations and Massacres of Trapizon Armenians
in the Memoirs of Harutyun Kirakossian* 126

ABOUT THE AUTHORS 139

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Асмик Г. Григорян

*Способы нахождения еды как “не вооруженное сопротивление”
при Геноциде армян: опыты детей* 9

Нарине В. Маргарян

Армянский сиротский приют Алеппо (1915-1924) 27

Айк М. Мартиросян

*Мари И Вильгельм Шпикеры: немецкие супруги гуманисты,
свидетели Геноцида армян* 54

Кристине В. Наджарян

*Организация учебного процесса в сиротских приютах Мараша
после гамидовских погромов (1896-1909)* 66

Роберт А. Татоян

*Армянские монастыри и монастырская жизнь в Ванском округе
накануне Геноцида армян (1870-е гг. – 1914)* 77

Элина З. Мирзоян

Из истории младотурецкой прессы (до 1908 г.): краткий очерк 103

Тегмине Р. Мартоян

Вопрос истории Геноцида греков в армянской историографии 116

Нарине С. Акопян

*Рассказывая неописуемое: депортации и массовые убийства армян
Трапезунда в воспоминаниях Арутюна Киракосяна* 126

ОБ АВТОРАХ 139

**ՄԵՆԴԻ ԶԵՆՔԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ՈՐՊԵՄ «ՈՉ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴԻՐՈՒԹՅԱՆ» ԴԻՄԵՎՈՐՈՒՄ.
ԵՐԵՒՆԱՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հացը, իմ մրքիս մէջ, կապուած է կշտանալու գոհունակութեան եւ անօրոյթեան
տառապանքին: Ես ու իմ ժողովուրդս, դարերու չափ երկար սեւ ամառ մը, մնա-
ցինք հացի կարօյ, անօթի: Այն օրէն ի վեր հացը նուիրական է ինծի համար ու
անոր հանդէպ ունեցած սէրս պաշտամունքի կը մօտենայ:*

Արամ Հայկազ (Զեքեմեան),

Հայոց ցեղասպանության վերապրող

Բանալի քառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հոլոքոստ, երեխաներ, ոչ զինված դիմադրու-
թյուն, սնունդ, հուշագրություններ, բանավոր պատմություններ:

Հողվածի գլխավոր խնդիրն է քննարկել, թե արդյո՞ք Հայոց ցեղասպանության ժամանակ սննդի ձեռքբերման եղանակները կարող են դիտարկվել որպես ոչ զինված դիմադրու-
թյուն: Այս նպատակով հողվածի առաջին մասում անդրադարձ է կատարված գիտակար-
գային որոշ հարցադրումների և ոչ զինված դիմադրության հայեցակարգի ձևավորմանը
Հոլոքոստի համատեքստում:

Ման գիտական հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ չնայած Հայոց ցեղասպանության ժամանակ եղել են մի շարք զինված դիմադրություններ՝ ինքնա-
պաշտպանական մարտեր, այդ թվում նաև՝ հաղթական ելքով, ինչպես Վանում, այնուա-
մենայնիվ կա մտայնություն, որ հայերը ինչ-որ չափով մեղավոր են, քանի որ «մոթովել
են ոչխարների պես», այն է՝ առանց դիմադրության: Այդ իսկ պատճառով այս հողվածի
նպատակն է գիտական գնահատական առաջարկել «դիմադրություն» հասկացությանը՝
վերջինիս ենթակատեգորիաները դարձնելով առանձին հետազոտության առարկաներ:
Անշուշտ, մեկ հողվածի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ հիմնախնդրի բոլոր
տեսանկյուններին և դիմադրության բոլոր ձևերին, այնուամենայնիվ հողվածը փորձ է՝
ձևավորելու Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում նոր հարցա-
դրումներ:

Հողվածի երկրորդ հատվածում փորձ է արված խմբավորել Հայոց ցեղասպանության
ժամանակ սննդի ձեռքբերման ձևերը և դիտարկել դրանք ոչ զինված դիմադրության
հայեցակարգի համատեքստում: Անդրադարձ է կատարված հատկապես երեխաների
փորձառություններին՝ փորձելով նաև վեր հանել, թե որ սոցիալական խմբերը ինչ տեսա-
կի գործունեության մեջ են ընդգրկված եղել և ինչ ծավալով: Հայոց ցեղասպանության
առօրեականության մաս կազմող սննդի ձեռքբերման եղանակները սովյալ հողվածում
քննարկվում են որպես Ցեղասպանության՝ մարդկանց սովամահության դատապարտելու
քաղաքականության դեմ գիտակցված և չգիտակցված պայքարի դրսևորում:

1 Արամ Հայկազ, *Չորս տարի Քիւրքիսպանի լեռներում մէջ* (Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան
Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1972), 282:

Հողվածի համար աղբյուրագիտական հիմք են Հայոց ցեղասպանությունը վերապրողների տպագրված հուշագրությունները և բանավոր պատմությունները²: Աղբյուրագիտական նյութը ցույց է տալիս, որ սննդի ձեռքբերման եղանակները բազմազան են եղել: Սակայն հողվածում ներկայացված են ամենից հաճախ հանդիպող ձևերը՝ *վայրի խոփերով անվելը, մրգերի, հասրասպուղների և ընկուզեղենի հավաքչություն, մուրացկանություն*, որոնք հաճախ վերապրողների կողմից մեկնաբանվում են որպես կենսա-մահու պայքար:

Ոչ զինված դիմադրություն. գիտակարգային որոշ հարցադրումներ

Հրեից դիմադրությունը և դրա տարբեր դրսևորումները կես դարից ավել է ակտիվ լուսաբանվում են ինչպես Հոլոքոստի պատմագրության մեջ, այնպես էլ հասարակական քննարկումներում³: Մինչդեռ Հայոց ցեղասպանության համատեքստում *ոչ զինված դիմադրության* խնդիրը գրեթե ուսումնասիրված չէ⁴: Այդ իսկ պատճառով նախքան բուն թեմային անդրադառնալը և սննդի ձեռքբերման եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես ոչ զինված դիմադրություն դիտարկելը ստորև համառոտ քննարկենք մեթոդաբանական բնույթի որոշ հարցադրումներ՝ հենվելով հրեական փորձի վրա:

2 Հողվածում հիմնականում օգտագործված են “Oral History Project”-ի նյութերը, որոնք հավաքագրվել են 1978 թ. սկսած: Ծրագրի մասին մանրամասն տե՛ս <https://umdearborn.edu/casl/centers-institutes/center-armenian-research/armenian-assembly-oral-history-project>, դիտվել է 04.04.2019:

3 Հրեից դիմադրությանը նվիրված գրականության մասին տե՛ս *Jewish Resistance, A Working Bibliography*, Third Edition (Washington: Center for Advanced Holocaust Studies, USHMM, 2003): Իսրայելում Հոլոքոստի զոհերի հիշատակին 1957 թ. կառուցված հուշարձան/թանգարանի առաջին ցուցանմուշները ներկայացնում էին Վարշավայի գետտոյում հրեական դիմադրությունը, Սոբիբորի ու Տրեբլինկայի մահվան ճամբարների ապստամբություններն ու Իսրայել հասնելու համար կենդանի մնացածների պայքարը: Տասը տարի անց՝ 1968 թ. գարնանը, ինստիտուտում տեղի ունեցած առաջին գիտական հավաքը ևս նվիրված էր հրեից դիմադրության թեմային: Զեկույցների ժողովածուն տե՛ս *Jewish Resistance during the Holocaust: Proceeding of the Conference on Manifestations of Jewish Resistance, Jerusalem, April 7-11, 1968*, ed. Grubsztain Meir (Jerusalem: Yad Vashem, 1971):

4 Հայոց ցեղասպանության համատեքստում ոչ զինված դիմադրության թեմայի ուսումնասիրությամբ է զբաղվում ԱՄՆ-ի Կոլումբիա համալսարանի պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանը: Տե՛ս Khatchig Mouradian, “The Meskeneh Concentration Camp, 1915-1917: A Case Study of Power, Collaboration, and Humanitarian Resistance During the Armenian Genocide,” *Journal of the Society for Armenian Studies* 24 (2015): 44-55; Khatchig Mouradian, “Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915-1916,” *Études Arméniennes Contemporaines* 7 (2016): 87-103, <https://journals.openedition.org/eac/1023?lang=en>, <https://doi.org/10.4000/eac.1023>; Khatchig Mouradian, “The Role of Armenian Women During the Genocide,” filmed 04 April 2017 at YouTube, AGBU, video, 08:06, <https://www.youtube.com/watch?v=MHjPzHsf1j4>, դիտվել է 10.02.2019; Khatchig Mouradian, “Not Like a Lamb to the Slaughtert: Humanitarian Resistance during the Armenian Genocide,” filmed 11 February 2017 at YouTube, Programme of Armenian Studies, video, 01:41:17, <https://www.youtube.com/watch?v=UPTzTY-7LHc>, դիտվել է 10.02.2019: Դեռևս 2011 թ. խնդրի ուսումնասիրության կարևորության հարցին է անդրադարձել նաև ազգագրագետ, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Հարություն Մարությանը: Տե՛ս Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմա-բանասիրական հանդես* 2 (2011), 30-35:

Հոլոքոստի պատմագիր Դան Միհմանը գրում է, որ հրեաների և ոչ հրեաների կողմից նացիստներին դիմադրելու հարցը գիտական և հասարակական ուշադրության կենտրոնում է հայտնվել դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, քանի որ ընդհատակյա շարժումները զգայական և բարոյական տեսանկյունից մեծ արձագանք էին գտնում: Այս հետաքրքրությունն առավել մեծանում է հատկապես նացիստական Գերմանիայի անկումից անմիջապես հետո ազատագրված եվրոպական երկրներում: 1960-ական թթ. վերջերին արդեն Հոլոքոստի պատմագրության մեջ «դիմադրություն» եզրի իմաստաբանական շրջանակներն ընդլայնվում են, և ձևավորվում է նոր հայեցակարգ, որը կոչվում է “Kiddush Hahayim” («Կյանքի սրբացում»)⁵: Ակադեմիական գրականության մեջ սկսվում են շրջանառվել երկու եբրայերեն եզրեր՝ ամիդա (“Amidah”/ תפילה) և հիտնագդուտ (“Hitnagdut”/ התנגדות): Առաջինը ներառում էր դիմադրության բոլոր ասպեկտները, այդ թվում՝ զինված դիմադրությունը՝ հիտնագդուտը⁶:

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված «դիմադրության» իմաստաբանական ընդլայնումը: Հոլոքոստի պատմագրության մեջ դիմադրությանը նվիրված աշխատություններում հիմնականում շրջանառվում են հետևյալ առանցքային հարցադրումները. մի՞թե Հոլոքոստի պատմությունը միայն բռնության, ոչնչացման ու տառապանքի մասին է, արդյո՞ք Հոլոքոստի ժամանակ չի եղել հերոսականության ոգի, թե՞ բոլորը մահվան են գնացել «մոռոթելու ոչխարների նման» (זכאי לטבח): Ի՞նչն է պետք ընդհանրապես որակել որպես դիմադրություն, ինչի՞ն էին մարդիկ դիմադրում և ինչպե՞ս:

Հայոց ցեղասպանությունից ու Հրեից հոլոքոստից հետո թե՛ հայերի, թե՛ հրեաների մեջ ձևավորվել է այն կարծրատիպը, որ մարդիկ «մոռոթել են ոչխարների պես», առանց դիմադրության: Չնայած հրեից պարագայում այս արտահայտությունը համարվում է հինկտակարանային և ունի երկար պատմություն⁷, Հոլոքոստի պատմագրության մեջ քննարկվում է Վիլյուսի գետտոյի ընդհատակային Աբբա Կովների կոչը⁸: 1942 թ. հունվարի 1-ին Կովները հայտարարեց. «Մենք ոչխարների նման չենք փարվի մոռոթվելու: Ճիշտ է, մենք թույլ և անօգնական ենք, բայց միակ պարտախախտող սպանությանը սպափանքությունն է: Եղբայրներ, ավելի լավ է մեռ-

5 Եզրի մեկնաբանման մասին մանրամասն տե՛ս Rabbi Aaron Rakeffet, “The “Kedoshim” Status of the Holocaust Victims,” *Hirhurim Musings Torah Journal*, July (2010): 185-198:

6 Дан Михман, *Историография катастрофы. Еврейский взгляд: Концептуализация, терминология, подходы и фундаментальные вопросы*, пер. М. Губа и др. (Днепропетровск: Центральный Украинский Фонд истории Холокоста «Ткума», 2005), 242.

7 Հղում է կատարվում Սաղմոսներին և Եսայո մարգարեությանը. «Բայց ամեն օր սպանվում ենք քեզ համար, եւ մոռոթելու ոչխարի պէս ենք համարվում» (Սաղմ. ԽԳ- 44:22) և «Նա անիրաւութիւն կրեց եւ չարչարուեցաւ, բայց իր բերանը չ’բացաւ, ինչպէս մի ոչխար որ մոռոթելու է տարվում, եւ ինչպէս մի մուսն մարի իր խուզողների առաջին, այնպէս իր բերանը չ’բացաւ» (Եսայիա Գլ.ԾԳ 53:7): Տե՛ս *Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կրակարանների* (Yerevan: Bible League International, 2010):

8 Մանրամասն տե՛ս Yael Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” *Jewish Social Studies* 19, no. 3 (2013): 139-169:

նեղ կռվելով, որպես ազատ մարդիկ, քան սպրեղ մարդասպանների ողորմածությամբ: Արթնացե՛ք, արթնացե՛ք վերջին շնչով: Քաջալերվե՛ք»⁹:

Իր հարցազրույցներից մեկի ժամանակ Հոլոքոստի պատմագիր Յեհուդա Բաուերը նշում է. «...այս աշխարհային խառնուրդում նա փորձել է հենց այդ արտահայտության դեմ դիմադրություն առաջացնել»¹⁰: Համաձայն Յ. Բաուերի՝ դրա շրջանառումը Հոլոքոստից հետո մեծապես տարբերվում է, քանի որ ձեռք է բերել դատապարտող բովանդակություն¹¹: Վերջինիս նպաստող հանգամանքներից է այն, որ 1960-ականներին որոշ հրեա մտավորականներ, այդ թվում՝ նաև՝ Ռ. Հիրբերգը և Հ. Արենդթը, առաջ քաշեցին այն մոտեցումը, որի համաձայն՝ հրեաները մասամբ մեղավոր են իրենց ոչնչացման համար, քանի որ չեն դիմադրել: Ռաուլ Հիրբերգը նշում է, որ հրեաները որևէ ծրագիր չունեին ոչ միայն զինված, այլև նույնիսկ հոգեբանական պայքարի համար¹², իսկ Հաննա Արենդթը Հոլոքոստի ժամանակ հրեաների վարքը գնահատում է ավելի շատ որպես հնազանդ, քան հերոսական¹³:

Չնայած մինչև այսօր հրեից դիմադրությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ են տպագրվել, որոնք քննադատում են Հոլոքոստի ժամանակ հրեաների «պասիվության միֆը», այնուամենայնիվ այն դեռ կա ժողովրդական մտածողության մեջ և հաճախ շրջանառվում է լրատվությամբ¹⁴: Հրեաների պասիվության և «ոչխարների պես մորթվելու» կարծրատիպը ոչ միայն վերապրողների, այլև հետպատերազմյան հրեական համայնքի վրա խոր հետք է թողել՝ ձևավորելով անկարողության, պասիվության, հնազանդության և քաջության բացակայության ընկալումներ¹⁵:

Հենց այս կարծրատիպի դեմ ուղղված պայքարով է պայմանավորված, որ «դիմադրություն» եզրն իմաստաբանական առումով ընդլայնվեց և ընդգրկեց դիմադրության զինված և ոչ զինված ձևերը՝ ձևակերպվելով որպես «Հրեաների պատասխանը Հոլոքոստին» (Jewish response to the Holocaust): Վերջինիս մեծապես նպաստեց այն, որ ուսումնասիրությունների կենտրոնում հայտնվեցին հրեաների ամենօրյա կյանքն ու մարդկանց առօրյա, հասարակ գործողությունները:

Եվրոպական պատմագրության մեջ ի հայտ եկան ոչ զինված դիմադրության տարբեր ձևակերպումներ, որոնց որոշ մասը մատնանշում են որոշակի գործողություններ՝

9 Richard Middleton-Kaplan, “The Myth of Jewish Passivity,” in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), 6.

10 Amos Goldberg, “Like Sheep to the Slaughter?” Excerpt from Interview with Yehuda Bauer, Director of the International Center for Holocaust Studies of Yad Vashem, January 18, 1998, Yad Vashem, Jerusalem, http://www.yadvashem.org/odot_pdf/Microsoft%20Word%20-%20203667.pdf, դիտվել է 23.07.2017:

11 Նույն տեղում:

12 Raul Hilberg, *The Destruction of the European Jews*. Third Edition, vol. 3 (New Haven and London: Yale University Press, 2003), 1104.

13 Hannah Arendt, *Eichmann in Jerusalem. A Report on the Banality of Evil* (New York: Viking Press, 1964), 11.

14 Patrick Henry, “Introduction,” in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), xiii.

15 Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” 143.

փաստաթղթերի կեղծում, կալանավորվածների ընտանիքի անդամներին ցուցաբերած աջակցություն, հարկադրական աշխատանքներից խուսափողներին ծածուկ պահելը և այլն: Եմանօրինակ գործողությունները նիդեռլանդական գրականության մեջ առավել հայտնի են որպես «ոչ բռնի ինքնապաշտպանություն» (*geweldloze verdediging*), ֆրանսիականում՝ «դիմադրության բարեգործական գործողություններ» (*activites caritatives*), «մշակութային դիմադրություն» (*resistance culturelle*), դանիական և այլ երկրների գրականության մեջ՝ որպես «պասիվ դիմադրություն» և «խորհրդանշական դիմադրություն»¹⁶, հանդիպում են նաև «հոգևոր դիմադրություն» և/կամ «բարոյական դիմադրություն» ձևակերպումները, որոնք ընդգրկում են հոգևոր և մշակութային գործունեությունը¹⁷:

Հայոց ցեղասպանության համատեքստում «անօգնական զոհի» կերպարը ստեղծվել է 1950-ականների կեսերին խորհրդային ղեկավարության կողմից: Այս շրջանում Խորհրդային Միության վարած քաղաքականության մասին Հարություն Մարությանը գրում է. «...1950-ական թվականների երկրորդ կեսից խորհրդային ղեկավարությունը ոչ այնքան արգելում էր ցեղասպանության մասին խոսելը, որքան նպաստում էր ցեղասպանության շուրջ այնպիսի հիշողության պահպանմանը, որտեղ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի»¹⁸: Համաձայն հետազոտողի՝ իրավիճակը սկսում է փոխվել Հայոց ցեղասպանության հիշատակման 50-րդ տարեկիցից¹⁹, 1988 թ. Ղարաբաղյան շարժման և Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակից հետո²⁰: Այնուամենայնիվ. «...հայաստանյան հասարակության որոշ շերտերի մեջ (թերևս, առավելապես երիտասարդության) նկատվում են միտումներ, թե բավական է

16 Михман, *Историография катастрофы*, 248.

17 “Moral and Spiritual Resisitance,” <https://www.holocaust.com.au/resources/moral-and-spiritual-resistance/>, դիտվել է 10.02.2019; “Spiritual Resistance in the Ghettos,” <https://encyclopedia.ushmm.org/content/en/article/spiritual-resistance-in-the-ghettos>, դիտվել է 10.02.2019; Հոգևոր դիմադրության մասին մանրամասն տե՛ս *Spiritual Resistance: Art from Concentration Camps, 1940–1945*, ed. Miriam Novitch (New York: Union of American Hebrew Congregations, 1981); Rachile Kostanian, *Spiritual Resistance in the Vilna Ghetto* (Vilnius: Vilna Gaon Jewish State Museum, 2002); Joseph Rudavsky, *To Live With Hope, To Die With Dignity: Spiritual Resistance in the Ghettos and Camps* (Northvale, NJ: Jason Aronson, 1997):

18 Մարության, «Հայոց ցեղասպանության», 31:

19 1965 թ. հայ ժողովուրդը Խորհրդային Հայաստանում և համայն Սփյուռքում համընդհանուր ոգեկոչեց Հայոց ցեղասպանության զոհերին և նշեց նրանց հիշատակի օրը: Տե՛ս “50th Anniversary of the Armenian Genocide 1965 USA,” filmed 17 February 2017 at YouTube, Eboni Coursey, video, 16:20, <https://www.youtube.com/watch?v=laLB9yb3B64&fbclid=IwAR3x10Scr9v4EW7rWzKCrFi2Vh3DW8aCuyH1YrO3lrVfFT7sODfQY2xEoTw>, դիտվել է 05.11.2018; “Armenian Genocide 50th anniversary UN debate, 1965,” filmed 31 October 2014, at YouTube, The Genocide Education Project, video, 18:12, https://www.youtube.com/watch?v=h02U7pMOfg&fbclid=IwAR2t2NC9I54jV1kAqwa_cqlfbNq9X98OJijnXnKUCIulCxCHNzi05ww2lec, դիտվել է 05.11.2018; Maïke Lehmann, “Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia,” *Slavic Review* 74, no. 1 (2015): 10-31; Ավագ Հարությունյան, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և երկրորդ հանրապետությունը* (Երևան, Երասմուս, 2015):

20 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը: Հայրոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, Գիտություն, 2009):

խոսել ցեղասպանության մասին, դա մեզ պետք չէ, այն որոշակի ձևախեղումներ է առաջացնում մանուկների և պարանիների սերունդների հոգեբանության մեջ, նպաստում է օտարապաշտության ծավալների մեծացմանը և այլն, և այլն»²¹: Ըստ հեղինակի՝ նման մոտեցման ձևավորման գործոններից մեկն այն է, որ հաճախ հասարակության որոշակի խմբերում ընկալվում է իբրև թե՛ «հայերը մոթթվել են ոչխարների նման», գրեթե առանց դիմադրության²²:

Իրականում ո՛չ հայ, ո՛չ էլ հրեա դիմադրողներն իրենց չէին զգում անօգնական զոհեր: Ճիշտ հակառակը, նրանք նախընտրում էին պայքարել զենքը ձեռքին և արժանապատվորեն մահանալ: Համաձայնելով Յ. Բաուերի տեսակետի հետ՝ պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության համատեքստում ևս զինված ինքնապաշտպանությունը կարծես ուղղված լիներ հենց այդ ընկալման դեմ: Այդ մասին է վկայում մասնավորապես այն հանգամանքը, որ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը»²³ վեպի հերոսներից մեկը՝ Մուսա լեռան ինքնապաշտպանության առաջնորդներից քահանա Արամ Թոմասյանը, մերժում է մահանալ «անպաշտպան ոչխարի» նման՝ որոշելով կենաց-մահու պայքար մղել. «Ես գիտեմ, թե ինչպես պետք է մեռնեմ: Ոչ իբրև անպաշտպան ոչխար, ո՛չ Տեր Զորի ճանապարհին, ո՛չ քարավանային ճամբարների աղյուղության մեջ, ո՛չ քաղցից, ո՛չ էլ գարշահոտ համաճարակից: Ոչ, ես կմեռնեմ իմ փան շեմին, զենքը ձեռքիս...»²⁴:

Իրական փաստերի վրա գրված ստեղծագործությունը դարձավ խորհրդանշական սիոնիստական երիտասարդական շարժման համար թե՛ Պաղեստինում, թե՛ Եվրոպայում, հատկապես գետտոներում²⁵: Հոլոքոստի պատմագիրները համարում են, որ 1930-ական թթ. այս ընկալումն այնքան տարածված էր, որ երբայերեն թարգմանելիս հեղինակն «անպաշտպան ոչխար» արտահայտությունը թարգմանել է որպես «ոչ որպես մոթթվելու ոչխար»²⁶: Հրեա պատմաբան Յաիր Օրոնը գրում է, որ հրեական ընդհատակի անդամների համար Մուսա լեռան պաշտպանության պատմությունն ասես առակի, նաև մոդելի նշանակություն ուներ, ոգեշնչման աղբյուր էր: Նրանք հավասարության նշան էին դնում իրենց և հայերի ճակատագրի միջև: Երկու դեպքում էլ հանցագործի նպատակը մարդկանց իրենց արմատներից կտրելն ու տեղահան անելն էր, ամբողջական համայնքների ֆիզիկական բնացնումը, և երկու դեպքում էլ դիմադրությունը մարմնավորում էր կա՛մ պատվաբեր մահը, կա՛մ փրկության հնարավորությունը²⁷:

21 Մարության, «Հայոց ցեղասպանության», 30:

22 Նույն տեղում, 30-31:

23 Ֆրանց Վերֆել, *Մուսա լեռան քառասուն օրը* (Երևան, «Լույս», 1988):

24 Նույն տեղում, 223-224:

25 Մանրամասն տե՛ս Yair Auron, *The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide* (New Brunswick (USA) and London (UK): Transaction Publishers, 2000), 293-311: Հմմտ. Մարության, «Հայոց ցեղասպանության», 31-35:

26 Feldman, “Not as Sheep Led to Slaughter?” 158.

27 Yair Auron, *The Banality of Indifference*, 309.

Դրա մեկ այլ օրինակ է, այն, որ 1915 թ. Կիլիկիայում (համաձայն աղբյուրի՝ հավանաբար Ջեյթունում) հայերի կողմից ինքնապաշտպանության դիմելու մասին ժամանակի մամուլը գրում է. «Կորորածն սկսվել է և Կիլիկիայի շրջանում: Սուրհանդակները կարողացել են հասնիլ Վան: Նրանք էլ պարզել են սպարամբութեան դրոշակը: Այս անգամ չեն ուզում ոչխարի պէս մորթվել (ընդգծումը – Հ.Գ.): Եւ իրավացի է այդ վճիռը: Միեւնոյնն է, պիտի մեռնին, գո՛նե կռուելով մեռնին. դա պատիւ է բերում նրանց»²⁸: 1915 թ. մայիսին՝ ռուսական բանակի և հայ կամավորական խմբերի կողմից Վանի գրավումից հետո տեղի ունեցած ճաշկերույթի ժամանակ, ինքնապաշտպանության դեկավար Արամ Մանուկյանը, դիմելով ռուս զորավարին [Ա. Կիկոյան], ասում է. «Երբ ամիս մը առաջ սպարամբութիւն հռչակեցինք, յոյս չունէինք ռուսերու գալուն: Մեր կացութիւնը անել էր. պէտք էր կամ անձնապարտ լինելով թոյլ տայինք որ մեզ մորթեն ոչխարներու նման (ընդգծումը – Հ.Գ.), կամ մեռնէինք, «Թիթանիք» ի նազախումբին պէս՝ երաժշտութեան հանդիսատար հնչիւններով: Մենք նախընտրեցինք վերջինը»²⁹: Վերջինիս հակառակ բնեռը «ոչխարի նման մորթվելն էր», նահապարակվելը/նարպիրոսվելը, քավության նոխազ դառնալը³⁰:

Առհասարակ զինված դիմադրությունը ևս կարող է դիտարկվել որպես բարոյական դիմադրության դրսևորում, քանի որ ինքնապաշտպանության դիմողների կողմից նման որոշման կայացումն ունի խոր բարոյականություն, ինչպիսին է, օրինակ, պատվաբեր կամ գիտակցված մահվան գաղափարը³¹: Թերևս հենց սրանով է պայմանավորված, որ Հոլոքոստի պատմագիրները զինված դիմադրությունը համարում են «դիմադրության»՝ ավելի լայն ընկալման մի դրսևորում: Ելնելով այս տրամաբանությունից՝ Յ. Բաուերը *դիմադրությունը* սահմանում է հետևյալ կերպ. «Հոլոքոստի ժամանակ հրեաների դիմադրությունը եւ կասեմանների որպես ցանկացած խմբային գործողություն, որը գիտակցաբար նախաձեռնվել է գերմանացիների և նրանց դաշնակիցների կողմից հրեաների դեմ ուղղված հայտնի կամ ենթադրյալ օրենքների, գործողությունների կամ մտադրությունների դեմ»³²:

28 «Ապստամբությունը Կիլիկիոյ մէջ», *Արև* (Ադեքսանդրիա), 21 յունիս, № 19, 1915, 3:

29 «Վանի մէջ», Հայաստան (Սօֆիա), 6 յունիս, № 25, 1915, 1:

30 «Ոչխարի նման մորթվել, նահատակվել/մարտիրոսվել, քավության նոխազ դառնալ» և նմանօրինակ ձևակերպումներ հաճախ հանդիպում են ինչպես Հայոց ջեղասպանությունը վերապրողների հուշագրություններում, բանավոր պատմություններում, այնպես էլ ժամանակի մամուլում: Օրինակ, «Թիֆլիսէ Ճէյմս Պրայսի հեռագրուած է թէ Սըվազցի 160.000 բնակչութենէ միայն 100.000 հոգի մնացած են. անոնք ալ ծերերն և անկարներն են միայն: Հեռագրողը ականատես մըն է, որ յաջողած է Թիֆլիս անցնիլ: Կը պատմէ թէ շատեր ոչխարի նման մորթուեցան և հազարատրներ գետերու մէջ նետուեցան»: Տե՛ս «Սվազի կոտորածը», *Ազգ* (Պոսթոն), 31 յունուար, № 25, 1916, 1:

31 Գիտակցված մահվան գաղափարը լավագույնս արտահայտվում է հետևյալ բանաձևում՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահություն է» («Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»): Տե՛ս Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին Դաթի երիցու Մամիկոնի հայցեալ», Երկրորդ յեղանակ, 2:

32 Yehuda Bauer, *The Jewish Emergence from Powerlessness* (Toronto, Buffalo: University of Toronto Press, 1979), 27.

Փաստորեն Հոլոքոստի պատմագիրները ցանկացած գործողություն՝ ուղղված ֆիզիկական գոյության ու «մարդկային դիմագծի» պահպանմանը, ցանկացած գործողություն, որն ուղղված էր ընդդեմ ոչնչացման քաղաքականության կամ «ոչնչացման տրամաբանության», նույնիսկ մտադրությունների, ցանկացած գործողություն, որը խոչընդոտ կհանդիսանար ոճրագործության վերջնական նպատակին հասնելու ճանապարհին, համարում են *դիմադրություն*։

Ոչ զինված դիմադրությունը Հայոց ցեղասպանության ժամանակ

1948 թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի կետերից մեկի համաձայն՝ որևէ խմբի կյանքի համար միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ, ցեղասպանություն է³³։

Հայոց ցեղասպանության ժամանակ կյանքի համար անբարենպաստ պայմանների ստեղծման գործիքներից մեկը հարյուրավոր և հազարավոր մարդկանց սովամահության դատապարտելն էր ինչպես բռնագաղթի ճանապարհին, այնպես էլ համակենտրոնացման ճամբարներում։ Սովամահությունը դիտարկելով որպես ցեղասպանության իրագործման քաղաքականություն՝ Ջորջ Շիրինյանը մատնանշում է նման քաղաքականության շարժառիթները. «Վերջապես մենք ուսումնասիրեցինք թուրքերի կողմից սովամահությունը՝ որպես ցեղասպանության գործիք կիրառելու շարժառիթները՝ բացահայտելով, որ այն մասամբ արդարացնում է իրենց այն պատճառաբանությունը, որ հայերը բնական մահով են մահացել, բայց և պատժելու դանդաղ, հոգեվարքային մահով՝ վրեժխնդրության և հայերի նկարամամբ փրկապետություն հաստատելու համար, քանի որ նրանք հրաժարվեցին օսմանյան սոցիալական և քաղաքական համակարգում մնալ սրտրադաս դիրքում»³⁴։

Ստորև ներկայացվում է, թե հայերը ինչ միջոցների են դիմել բռնագաղթի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում՝ սնունդ ձեռք բերելու համար՝ անդրադառնալով հատկապես երեխաների փորձառություններին։ Մսնդի ձեռքբերումը և ֆիզիկական գոյության պահպանումը դիմադրություն էին Հայոց ցեղասպանությանը և խոչընդոտ՝ ոճրագործների վերջնական նպատակին հասնելու համար։

Հայոց ցեղասպանության ժամանակ երեխաներն անցնում էին բազմաթիվ փորձությունների միջով՝ հաճախ նաև միայնակ թափառելով մի բնակավայրից մյուսը, անցնելով մուսուլմանական ընտանիքներով, տարբեր «տերերի ձեռքի տակով», ճարպկու-

33 *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted by the General Assembly of the United Nations on 9 December 1948*, 280.

Տե՛ս <https://treaties.un.org/doc/publication/unts/volume%2078/volume-78-i-1021-english.pdf>:

34 George N. Shirinian, “Starvation and Its Political Use in the Armenian Genocide,” *Genocide Studies International* 11, no. 1 (2017): 29-30.

թյուն և խորամանկություն դրսևորելով՝ գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար պայքար մղում՝ ողջ մնալու համար:

Հայոց ցեղասպանությունը վերապրողների հուշագրությունները, ինչպես նաև բանահավաքների գրառած բանավոր պատմությունները, որպես կանոն, սկսվում են խաղաղ կյանքի մասին նկարագրություններով: Ուշագրավ է, որ գաղթի ճանապարհի մասին պատմելիս վերապրողները հաճախ հղում են կատարում «երջանիկ մանկությանը»՝ որպես մի ժամանակահատվածի, որը «մնացել էր ետևում» կամ ավարտված էր: Երեխաները, կորցնելով երջանիկ մանկությունը, կանգնել էին նոր մարտահրավերների առաջ: Ակթորայի թուրքական որբանոցի հնգամյա սան Գառնիկ Բանյանն իր հայրենի օջախը հիշատակում է որպես աղոթատեղի, իսկ այգին՝ որպես դրախտավայր. «Մեր տունը աղօթքի տաճար էր, տարտամ չորս եղանակներուն էլ աղօթքի մղմունջներ կը լսուէին»³⁵: Բռնելով գաղթի ճանապարհը՝ հասկացել էր, որ աշխարհն ավելի ընդարձակ է. «Կը հեռանայինք, բայց յանկարծ, մտքով կը դառնայի մեր քաղաքը, մեր տունը, մեր տան տարուկ շունչը, մեր տան թարմ հացը, մեր պարտեզի համով պտուղները, մեր սաքուին վրայ շուք ընող ծառերը, իրենց մէջէն սահող-անցնող զով հոսանքը օդի... Անոնք ամենքը մնացեր էին մեր երեւը...»³⁶:

Հետևում թողնելով երջանիկ մանկությունը՝ երեխաները կարծես ժամանակից շուտ հասունանում էին՝ երբեմն ստանձնելով նաև «տան գլխավորի» դերը: Նրանք ընդգրկվում էին որոշումներ կայացնելու և ապրուստի միջոցներ հայթայթելու պարտականությունների մեջ, երբեմն էլ միայնակ հոգ տանում ընտանիքի անդամների մասին: Ընդ որում նրանք իրենց վրա էին վերցնում այս գործառնությունները բռնագաղթի հենց սկզբից: Վերապրողներն իրենք բացատրում են սա նրանով, որ երեխաներից ամենամեծն էին կամ եթե նույնիսկ երեխաներից ամենամեծը չէին, այնուամենայնիվ իրենք իրենց ընկալում էին արդեն «հասուն մարդ»: 1902 թ. Կեսարիայում ծնված Նիկոլաս Բերբերյանը պատմում է. «Նրանք սասցին, որ յոթ օրից պեղք է դուրս գանք լինակավայրից»: Հերևաքար մենք մեր իրերը դրեցինք կառքի վրա և ամբողջ ընտանիքով դուրս եկանք: Հայրս հեռացել էր, ուսրի ընտանիքի գլխավորը ես էի, ես ամենամեծն էի»³⁷:

Հայ երեխաները ոչ միայն ստանձնում էին աքսորի նախապատրաստական աշխատանքները, այլև արդեն իսկ բռնագաղթի ճանապարհին՝ մեծահասակներին մխիթարելու և հուսադրելու գործը: Վերապրող Աշխեն Պողիկյանը³⁸ պատմում է 1915 թ. աշնանը Տիգրանակերտում իրենց քարավանի հետ տեղի ունեցածի մասին. «Հաջորդ օրը Լևոնիկը մեռավ: Ես մնացի մենակ մայրիկիս հետ: Արդեն ութ տարեկան էի և մխիթարում ու հանգստացնում էի մայրիկիս»³⁹:

35 Գառնիկ Բանյան, *Յուշեր մանկության և որբության* (Ալթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992), 17:

36 Նույն տեղում, 84:

37 Nicholas Berberyan, Armenian Assembly Oral History Project, <https://umdearborn.edu/casl/centers-institutes/center-armenian-research/armenian-assembly-oral-history-project>, դիտվել է 08.08.2016:

38 Ծնվել է 1908 թ. Էրզրումում: Հուշագրությունը գրի է առնվել 1978 թ.:

39 Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. սկանալիտ վերապրողների վկայություններ* (Երևան, «Գիտություն», 2011), 226:

1907 թ. Մարաշում ծնված Սիրանուշ Բոյաջյանը (օրիորդական ազգանունը՝ Ղազարյան) զարմանքով է հիշում, թե ինչպես է կարողացել մոր մահից հետո յոթ տարեկան հասակում հոգ տանել ընտանիքի, այդ թվում՝ նորածին երեխայի մասին, վարել ամբողջ կենցաղը: Մարաշից դուրս եկած քարավանի հետ հասնելով Հոմս՝ այնտեղից տեղափոխվել են Մարդին և բնակություն հաստատել: Նա մանրամասն նկարագրում է այն կենցաղային ծանրաբեռնվածությունը, որը ստանձնել է մոր մահվանից հետո. «Ես ամենամեծն էի: ...Հեղոր մենք հողատերերից մայրիկիս և եկանք Կոնստանդնուպոլիս... [նորածին – Հ.Գ.] երեխա կար, մենք չգիտեինք ինչ անել: Ոչ որ չկար, ումից կարելի լիներ կայսրիսը, հեղորաբար ես սրիսկված էի մեկ ամիս հոգ տանել այդ երեխայի մասին: ... Ինչպե՞ս է Աստված ինձ ուժ տվել անելու այդ ամենը»⁴⁰:

Վերապրողները, խոսելով իրենց տարիքին անհարիր վարքի, ցուցաբերած խորամանկության ու ճկունության մասին, նշում են, որ սովը, մահը և հարազատների սպանությանն ակնատես լինելը թմրեցրել էին իրենց զգացողությունները, իրենք այլևս վախ չէին զգում և գիտակցում էին, որ այլընտրանքը մահն է: Վերապրողներից մեկի՝ տասնմեկամյա Համբարձում Բերբերյանի նկարագրության համաձայն՝ իրենք դարձել էին «դաժան» և «անզգա», քանի որ գիտակցում էին, որ հաջորդ գոհը կարող են իրենք լինել⁴¹:

Մանդի ձեռքերումը՝ որպես կենսագ-մահու պայքար

Ուշագրավ է այն հանգամանքը, որ գաղթականության ճանապարհին երեխաների վարքը հաճախ հակասական էր. որքան էլ հաշտվել էին մահվան հետ, նույնքան և ձգտում էին այն ամենին, ինչը թույլ կտար պահպանել գոյությունը: Իննամյա Հովակիմ Դիշդիշյանը⁴² պատմում է. «...մաս առ մաս սպառելով մեր ունեցած ջրի պաշարը, նախորդ օրվա օրինակով նորից կանգնել էինք մահվանը շար մոտիկ, և պեղք է ասեմ, որ արդեն հաշտվել էինք նրա հետ... Գիշերով ինչքան առաջանում էինք, նույնքան էլ նոսրանում էին մեր շարքերը, յուրաքանչյուրն սպրում էր միայն իր ցավերով, ճանապարհը ծածկվում էր մեր բախտակիցների դիակներով, բայց ես ու քույրս լուսնի լույսով և նրա զորությանը շարունակում էինք դեպի աննկարագրելի փանջալի քարավանի իջևանը, այսինքն՝ մեր երազած ջուրը...»⁴³:

1900 թ. Բիթլիսում ծնված Թագուհի Աստոնյանը, խոսելով սնվելու եղանակների մասին, այն ներկայացնում է որպես կյանքի ու մահվան միջև տարվող պայքար. «Հորաքույրս սարկած կովին արյունը թենեքեի մը մեջ եփեց, մենք կերանք: Յա՛ պիպի մեռնինք, յա՛ պիպի սպրինք: Ձիերուն քալած փեղը չիշ, անձրև լցված էր, աղ սլ ջրորի պես խմեցինք, ի՛նչ ընենք՝ ծարավ ենք»⁴⁴:

40 Siranoush Boyajian, Armenian Assembly Oral History Project.

41 Hamparsoum Berberian, նույն տեղում:

42 Ծնվել է 1906 թ. Զիլե քաղաքում: Հուշագրությունը գրի է առնվել Հայրենական մեծ պատերազմից հետո:

43 Հովակիմ Դիշդիշյան, *Դեր-Չորի անսպասում: Հիշողություններ* (Երևան, «Գիտություն», 2006), 123-127:

44 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 104:

Վայրի խոտերով սնվելը

Հայոց ցեղասպանությունը վերապրած երեխաները գաղթականության ճանապարհը նկարագրում են որպես անվերջանալի քայլերթ, որը վերահսկվում էր զինված ոստիկանների կողմից: Չնայած այն հանգամանքին, որ նրանցից շատերն ականատես են եղել իրենց հարազատների ու հայրենակիցների սպանությանը, այնուամենայնիվ շատ փոքրահասակները հաճախ գաղթի ճանապարհը նույնականացնում են քաղցի զգացողության հետ՝ առաջին հերթին մեկնաբանելով որպես ջրի և սննդի բացակայություն: 1912 թ. Թոմարգայի մոտակա գյուղերից մեկում ծնված Աբրահամ Աղբաշյանը վերհիշում է, որ գաղթի ճանապարհին, բացի սննդից, իրենց ոչինչ չէր անհանգստացնում, նույնիսկ զինված ոստիկանները: Քանի որ իրենց ամռանն են գաղթեցրել, վերապրողի վկայությամբ իրենք սնվել են վայրի խատուտիկներով և անձրևաջրով. «Մեկ փարի, փարի ու կես մենք ուրեղու ոչինչ չունեինք բացի վայրի խատուտիկներից»⁴⁵: Աբրահամ Աղբաշյանը պատմում է, որ որտեղ կանաչ խոտ էին տեսնում, «կովերի պես արածում էին» և «շների պես խմում անձրևաջուրը»⁴⁶:

Միվրի Հիսարից Նվարդ Այտընյանը, ով Հայոց ցեղասպանության ժամանակ մանկահասակ է եղել, վկայում է. «Անշարուած կառախումբին ճամբորդներս սպասեցինք Գոնիսա արեն մը ես եւ տաւ մեր գոյքերը էշերու վրայ բեռոցոցս ճամբայ ինկանք հերիտորն դէպի Մերսին: ...Երբ Մերսին հասանք, սկսանք դաշտերէն խորեր հաւաքել ու ուրել: Բայց եւ այնպէս ասով ալ գոհացած էինք՝ եթէ մարախները խոռոներս չյարձակէին ու չընաշնջէին խորերը: Երկու երեք շաբաթի չափ մնացինք Մերսին: Վերջապէս այլազան ու աննկարագրելի տառապանքներէ ետքը հասանք Բագգա...»⁴⁷:

Մտունդ ձեռք բերելու խնդիրն անընդհատ առկա էր ոչ միայն բռնագաղթի ճանապարհներին, որտեղ մարդիկ սնվում էին վայրի խոտերով, ինչն էլ հաճախ պատճառ էր դառնում թունավորումների և մահվան⁴⁸: Խոտակերությամբ էին ապրում նաև այն հայ գաղթականները, որոնք ապաստանել էին լեռներում: «Առավոտ» թերթի 1919 թ. մայիսի 12-ի համարում կյուրթ է տպագրվել յոթ որբերի մասին, որոնք հայտնաբերվել են անգլիացի զինվորների կողմից և հանձնվել Ադանայից եկող գաղթականներին՝ Կ.Պոլիս ուղարկվելու համար: Նրանք հանձնվել են Հայդար փաշայի որբանոց: Տարիներով բնակվելով լեռներում՝ փոքրիկները կորցրել են խոսելու ունակությունը և միայն խաչակնքելով են կարողացել հասկացնել, որ իրենք հայ են: Թերթը գրում է. «Երբ ուրիշ կայան մը կը հանդիպին, իրենց հաց կը փրուի, հացը խափու կը մերժեն, վար կը ցարկեն, խորեր կը ժողունեն ու վակոնին մէջը կսկսին ուրել: Տարիներով խորանարակութեան վարժութիւնը հացը մոռցնել փրուած է»⁴⁹:

45 Abraham Aghbashian, Armenian Assembly Oral History Project.

46 Նույն տեղում:

47 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Ջոր* (Փարիզ, Պ. Էլէկեան, 1955), 62:

48 Հայկանուշ Մելքոնեան, *Կեսնք եւ մահ*: Մատենաշար Ապրիլեան Եղեռնի, թիւ 9 (Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկոյ, 1960), 26:

49 «Լեռը գտնուած եօթը որբեր», *Առաօտ* (Կ.Պոլիս), 12 մայիս, № 3, 1919:

Կեսարացի հոգևորական Տեր Վահան քահանայն հետևյալն է պատմում վայրի խոտերով սնվելու և ողջ մնալու մասին. «Մեր գիւղին ամբողջ այր մարդիկը իրօթիհարի ոճրագործ հետևորդներուն կողմէ՛ ձորերու մէջ կացինահար եղած են, կիներէն մեծ մասը գելեր թափուած են կամ բռնաբարուած ու իսլամացուած առ այժմ 570 անձերէն կը մնան միայն 25 կիներ՝ որոնք լեռը սպասարանելով և խոյր ուրելով ճողոպրած են ահռելի եղեռնէն»⁵⁰:

Հնգամյա Անդրեաս Գարամանյանը⁵¹ գաղթի ճանապարհին քաղցի, ծարավի և սնունդ հայթայթելու մասին պատմում է. «Արեն արեն կարաւանը կանգ կ'առնէր հանգչելու, անձրեւներէն գոյացած փոսերու ջուրերու վրայ կը վազէր, փոչորը անցնելու զիրար արմկահարելով և վայրի բոյսեր կը փնտրէր ուրելու համար...»⁵²:

Ուրֆայի որբանոցի սան Բաբկէն Ինճեարապայանը պատմում է. «Յաջորդ օր, երկուշաբթի, պարերսզմը կը վերսկսի: Ասօթութիւն ալ իր հետ: Թեթեա սպորի հետ շար քիչ հացեր էին սննդեղէնի բաժինը: Ստիպուեցանք խոյր ուրել: Որբանոցէն, ծակէ մը դուրս կը փախչէինք խոյր հասարելու և ճաշակելու զայն: Այդ կողմերը խոյրը նոյնիսկ դժուարութեամբ կը ճարէինք: Երբեմն գիշերները որբանոցէն կը փախչէինք մէկ քանի որբեր, և հեռու տեղ երթալով բաւական խոյր կը հայթայթէինք: Այդպիսով ամէն օր խոյր կուրէինք...»⁵³:

Մրգերի, հատապտուղների և ընկուզեղենի հավաքչություն

Սնունդ հայթայթելու մյուս եղանակը մրգերի, հատապտուղների ու ընկուզների հավաքչությունն էր: Յոթնամյա Արշալույս Բոյաջյանը պատմում է, որ դուրս գալով Սեբաստիայից՝ նույնիսկ չի հիշում, թե քանի ամիս են քայլել մինչև Այնթափ հասնելը՝ առանց գուլպաների ու կոշիկների: Նա վերհիշում է, որ փոքր գյուղերի մոտով անցնելիս տեղի բնակչությունը սնունդ է վաճառել քարավանին, սակայն Այնթափ հասնելուն պես սնվել են այն ամենով, ինչ կարողացել են հավաքել քաղաքից դուրս գտնվող այգիներից⁵⁴: Այս պրակտիկան շատ ակտիվ կիրառում էին այն երեխաները, ովքեր փախել էին քրդական, թուրքական կամ արաբական ընտանիքներից ու միայնակ վերադառնում էին իրենց բնակավայրերը կամ բռնում Հալեպի ճանապարհը: Համբարձում Բերբերյանը, եղբոր հետ փախչելով գնացքից, ոտքով ճանապարհ է ընկնում դեպի ծննդավայր՝ Ադանա, որտեղ գտնվում էր նրանց զինվորական եղբայրը: Վերապրողը ճանապարհին սնվելու մասին պատմում է. «Մենք փոքր էինք: Միայն մի փոքր գնալուց հետո, այնտեղ ինչ-որ բան կար, այգի, մենք գլորանք, ինչ էր այդ, լոլիկներ, այդ այգում լոլիկներ էին, լոլիկներ: ...Մենք կերանք մեկ կամ երկուսը»⁵⁵:

50 «570 անձերէ 25 կիներ միայն մնացեր են», *Արիամարտ* (Կ.Պօլիս), 11 դեկտեմբեր, № 17 (1832), 1918:

51 Ծնվել է Կարս Բազարում 1911 թ.:

52 Անդրեաս (Տարոս) Գարամանեան, *Տարագրեալի մը յուշերը*: Երկրորդ հատոր (Պուլնոս Այրէս-Արժանթին, 1972), 10:

53 Բաբկէն Ինճեարապեան, *Մեծ եղեռնի շրջանին հայ որբի մը ողիսականը* (Փարիզ, Turabian Press, 1951), 230-231:

54 Arshalous Boyajian, Armenian Assembly Oral History Project.

55 Hamparsoum Berberian, նույն տեղում:

Մուրացկանություն

Մտնող ձեռք բերելու մյուս ձևը, որին դիմում էին հայ գաղթականները ոչ միայն արքայի ճանապարհին գյուղերի ու գյուղաքաղաքների միջով անցնելիս, այլև արաբական բնակավայրերում, մուրացկանությունն էր, որը շատ տարածված էր նաև երեխաների շրջանում:

Խարբերդում ԱՄՆ-ի դեսպան Լեալի Դեկար գրում է. «Տարբեր ժամանակ բազմաթիվ երեխաներ էլ էի գրել հյուսպարտաբանում պատրաստել՝ չհաշված նրանց, ովքեր մայրերի հետ էին ինձ մոտ սպրում: Առաջինը, ում սպասարան փակեցի՝ Ներսես Տեր-Կարապետյանն էր, ինքը փարեկան մի փղա... Հեղտ հորը, մորը, բոլոր քույրերին ու եղբայրներին կոտորել էին, ինքը մնացել, շուկայի հրապարակում մուրացկանություն էր անում»⁵⁶:

Քեսաբցի Զարուհի Այանյանը, ով Հայոց ցեղասպանության ժամանակ վեց տարեկան էր, պատմում է, որ տեղահանվելիս իրենց հետ ունեցել են կով, որը ճանապարհին մայրը կթել է: Գաղթել են Բագուր գյուղ, որտեղ վաճառել են կովը, ապա հասել են Համա, Հոմա, այնտեղից՝ Դամասկոսի մոտ գտնվող Ներիի բնակավայրը: Այստեղ մնալով մեկ տարի՝ մոր հետ մուրացկանություն են արել՝ ապրելու համար⁵⁷: Արդեն հիշատակված Աբրահամ Աղբաշյանը, ով պատմում էր խատուտիկներով սնվելու մասին, շարունակում է. «Ես կովի պես մեծ սրամորս ունեի, որովհետև միայն վայրի խալուտիկներով էինք սնվում: Ժամանակ առ ժամանակ, ես հիշում եմ, թե ինչպես էինք մայրիկիս հետ փնից փուն գնում՝ անունդ մուրալու»⁵⁸: Բալումում ծնված տասնամյա Գառնիկ Արփաջյանը Հալեպում մնում է երկու տարի՝ մինչև անգլիացիների մուտք գործելը: Այստեղ երկու որբ երեխաների հետ մուրացկանություն են արել՝ գոյատևելու համար. «Ես այդև չէի վախենում ոչնչից, ամենավաղը, որ նրանք կարող էին անել, ինձ սպանելն էր: Ես սա միշտ պահում էի իմ մորքում: Ես միշտ մորածում էի վաղը այլ օր է, մյուս օրը ուրիշ, այդպես ես չէի մորածում, այս այն էր, ինչ ես զգում էի: Ես քաղցած եմ, ես սովամահ եմ լինում, ես մորում եմ այստեղ և այստեղ, երկու շաբաթ ես մուրացի, մուրացի, ես ուրում էի խնձորի միջուկները, ես ուրում էի փանձի միջուկները, ես ուրում էի ձմերուկի կեղևները, ես ուրում էի սեխի կեղևները, ես ուրում էի ամեն անիծված բան, որ կարելի էր ուրել, դրանք ուրելու չէին, բայց ես սրիպված էի ուրել»⁵⁹:

1901 թ. Բալուի Հավալ գյուղում ծնված Սուրեն Փափազյանն իր ունեցած փորձառության մասին գրում է. «1917 թ. ձմեռը միս-մինակ Փերի հասայ: Մեկը չէի ճանչնար, շուկան, փողոցները դարձայ, փեսայ, որ իմ փարիքիս, ինձմե պզտիկ խլեակ մը հայ որբեր ամբողջ օրը կը մուրան, գիշերն ալ կատավարական ձիերու ախտոը կ'երթան, կը քնանան: Իրենց միացայ, փրփված անկիւն մը գրայ, ծուարեցայ: Ամէն մեկը ինչ որ մուրացած էր, հսնեց, սկսա ուրել: Ես ամբողջ օրը անօթի էի, անօթի ալ քնացայ»⁶⁰:

56 Լեալի Ա. Դեկար, *Սպանդի նահանգը*, թարգմ.՝ Գրիգոր Զանիկյան (Երևան, Դավլ, 2001), 238:

57 Zarouhi Ayanian, Armenian Assembly Oral History Project.

58 Abraham Aghbashian, նույն տեղում:

59 Karnig Arpajian, նույն տեղում:

60 Սուրեն Փափազեան, *Վերապրողի մը ողիսականը* (Երևան, «Ամարաս», 2000), 113:

Հայկանուշ Մելքոնյանը պատմում է, թե ինչպես է Աղբրոնարում կառավարությունը սննդով ապահովել գաղթականներին, որպեսզի վերջիններս մուրացկանություն չանեն և հիվանդություն չտարածեն Այնթափում: Նա պատմում է. «Քոչրս և ես միտենոյն գիւղին բաժին ինկանք որ Աղբրոնար կը կոչուէր: Մեզ հեւր կին մը կար որ 5-6 տարեկան մանչ մ'ունէր, կինը քաղաք կ'երթար մուրալու որ կարենար պզգիկը ապրեցնել: Կառավարութիւնը օրական փոքրիկ հաց մը կու տար որպէս զի քաղաք մուրալու չերթայինք և հիւանդութիւն տարածէինք»⁶¹:

Ընտանեկան համերաշխությունն ու փոխօգնությունը

Կենցաղի կազմակերպման համատեքստում, մասնավորապես սննդի հայթայթման, ոչ զինված/բարոյական դիմադրություն կարելի է համարել նաև ընտանեկան համերաշխությունն ու փոխօգնությունը: Որոշ դեպքերում վերապորոզներն իրենք են այս երևույթը նկարագրում և մեկնաբանում որպես «ողջ մնալու ձև», որոշ դեպքերում մենք ենք այն գնահատում որպես այդպիսին: Հոլոքոստի համատեքստում թեմայի քննարկման ժամանակ կարևորվում է փոխօգնության դիմելու դիսկալյությունը, այսինքն՝ առկա վտանգը և վերջինիս տեսակները. որքանո՞վ էին մարդիկ վտանգի տակ դնում իրենց կյանքը՝ ընտանիքի անդամներին կամ պարզապես ազգակիցներին օգնելու համար: Այս հարցադրումը հաճախ օգնում է պատասխանելու այն մտայնությանը, թե ինչու միմյանց օգնության չէին հասնում: Կենցաղում ցուցաբերված «փոխօգնությունը» դիտարկվում է որպես «կառուցողական վարք», ինչը և նպաստել է վերապրելուն⁶²:

Հայոց ցեղասպանությունը վերապրած բալուեցի Փառանձեմ Ալեքսանյանը պատմում է, որ մի թուրք իրեն վերցրել է գաղթի ճանապարհից՝ անջատելով իր ընտանիքի անդամներից: Հացաբուլկեղենի խանութի մոտով անցնելու ժամանակ իրեն հաց են տվել. «Երբ նա տվեց մի կտոր հաց, ես իմ եկած ճանապարհով եր վազեցի: Մարդը հեւրնեց ինձ՝ հասկանալով, որ ես ցանկանում եմ այդ հացը տալ մայրիկիս: Ես հասա, նրանց գցեցի հացը, եր դարձա և միացա այդ մարդուն»⁶³: Աբրահամ Աղբաշյանը հպարտությամբ է հիշում, թե ինչպես է, վտանգի ենթարկելով սեփական կյանքը, անձամբ հաց հասցրել հայ գաղթականներին, երբ իր մայրն աշխատում էր մի արաբական ընտանիքում⁶⁴:

Մի նպարավաճառի մոտից գողություն անելու և հայրենակիցներին օգնելու մասին Գառնիկ Արփաջյանը պատմում է. «Ես սկսեցի գողանալ, դա լավ չէ, բայց ես գողանում էի իմ ազգակիցներին օգնելու համար, նրանք քաղցած էին, ես ցանկանում էի օգնել իմ ժողովրդին: Ես տաս, տասնմեկ տարեկան եմ, բայց մտածում եմ իմ ազգության և կրոնի մասին, որը չէի ցանկանում փոխել...»⁶⁵:

61 Մելքոնեան, *Կեսնք եւ մահ*, 27-28:

62 Boaz Kahana, et. al., “The Victim as Helper-Prosocial Behavior during the Holocaust,” *Humboldt Journal of Social Relations* 13, no. 1/2 (1985-86): 361.

63 Parantzem Alexanian, Armenian Assembly Oral History Project.

64 Abraham Aghbashian, նույն տեղում:

65 Karnig Arpajian, նույն տեղում:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ հայ երեխաները գիտակցել են, որ վտանգի են ենթարկում սեփական կյանքը, բայց և այնպես դիմել են ռիսկի և օգնության հասել ազգակիցներին:

Այսպիսով, հողվածում անդրադարձ կատարվեց գիտակարգային կարևոր մի հարցադրման՝ ի՞նչ է ոչ զինված դիմադրությունը և վերջինիս ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Այս հենքի վրա, բազմահազար վկայություններից ընդամենը մի քանի բնութագրական օրինակների հիմամբ առաջ քաշվեց և հիմնավորվեց այն մտայնությունը, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների կողմից սննդի ձեռքբերման տարբեր եղանակները կարող են դիտարկվել որպես *ոչ զինված դիմադրության* դրսևորումներ:

Hasmik G. Grigoryan
PhD in History

WAYS OF FOOD PROCUREMENT DURING THE ARMENIAN GENOCIDE AS AN MANIFESTATION OF “UNARMED RESISTANCE”: CHILDREN’S EXPERIENCES

Summary

Key words: Armenian Genocide, Holocaust, children, unarmed resistance, food, memories, oral stories.

The aim of the article is to discuss whether the methods of food procurement can be considered as an manifestations of unarmed resistance during the Armenian Genocide. For this purpose, the article first presents the concept of an unarmed resistance in the context of the Holocaust.

Such scientific interest is motivated by the fact that despite a number of self-defense battles during the Armenian Genocide, including some with victorious outcome, as in Van, there is a common perception that Armenians were somewhat guilty, because “they have been slaughtered like sheep,” without resistance. For this reason article gives a scientific assessment of the concept of “resistance” by making its sub-categories separate subjects of research. Certainly, within the framework of one article it is impossible to touch upon all the aspects and forms of resistance, however, the article is an attempt to pose new questions in the field of the Armenian Genocide studies.

In the second part of the article, the ways of food procurement during the Armenian Genocide are grouped and observed in the context of the concept of unarmed resistance. Mainly the children’s experiences were discussed trying to find out which social groups have been involved in what kind of activities and to what extent. In the article, the methods of food procurement, part of the daily life of the Armenian Genocide, are discussed as a conscious and unconscious struggle against the policy of starvation during the Genocide. The article is based on published memoirs and oral testimonies of the Armenian Genocide

survivors. The source materials are indicating on the variety of food procurement ways. However, in the article, the most common ones – feeding on grass, gathering fruits, berries and nuts, begging – were presented, often interpreted by the survivors as a life-and-death struggle.

Асмик Г. Григорян
кандидат исторических наук

СПОСОБЫ НАХОЖДЕНИЯ ЕДЫ КАК “НЕ ВООРУЖЕННОЕ СОПРОТИВЛЕНИЕ” ПРИ ГЕНОЦИДЕ АРМЯН: ОПЫТЫ ДЕТЕЙ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Холокост, дети, не вооруженное сопротивление, еда, воспоминания, устные рассказы.

В статье обсуждается возможность рассматривания методов приобретения еды во время Геноцида армян в качестве не вооруженного сопротивления. С этой целью в начале статьи затронуты некоторые научные вопросы, а также сформирована концепция не вооруженного сопротивления в контексте Холокоста.

Такой научный интерес обусловлен тем, что несмотря на тот факт, что во время Геноцида армян имело место вооруженное сопротивление: самооборонительные бои, в том числе и с победным исходом, как в Ване, однако бутует мнение, что армяне в какой-то мере сами виновны, так как “были зарезаны как бараны,” а именно без сопротивления. Исходя из этого, в статье дается научная оценка понятию “сопротивление,” превращая подкатегории последнего в отдельные предметы исследования. Несомненно, в рамках одной статьи невозможно коснуться всех аспектов проблемы и всех видов сопротивления, однако можно сформировать опыт постановки новых вопросов в сфере изучения Геноцида армян.

В статье сделана попытка объединить способы приобретения еды во время Геноцида армян и рассмотреть их в контексте концепции не вооруженного сопротивления. Особенно это относится к опыту детей, а также к вопросу о том, какие социальные группы были вовлечены в какие виды деятельности и в какой степени? Способы нахождения еды, составляющие повседневную часть Геноцида армян, в данной статье рассматриваются в качестве осознанной или не осознанной борьбы против политики обречения людей на голодную смерть. Научными источниками статьи являются изданные мемуары и устные рассказы людей, переживших Геноцид армян. Источники описывают различные способы достования еды. Но в статье приведены наиболее распространенные из них: употребление травы, сбор фруктов, ягод и орехов, выпрашивание – все это люди, пережившие геноцид, объясняют как борьбу за выживание.

REFERENCES

- Banean, Garnik. *Յուշեր մանկության և որբության* [Memories of Childhood and Orphanage]. Antelias-Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1992;
- Davis, Leslie. *Սպանդի նահանգը* [The Slaughterhouse Province], trans. Grigor Janikyan. Yerevan: Dall, 2001;
- Dishdshyan, Hovakim. *Դեր-Չորի անսպարուս: Հիշողություններ* [In the Desert of Der-Zor: Memories]. Yerevan: Gitut'yun, 2006;
- Eghishe, Վասն Վարդանայ և Հայոց պարերազմին Դատի երիցու Մամիկոնի հայցեալ [History of Vardan and the Armenian War [written] at the Request of David Mamikonian], Erkrord yeghanak. Eruand Ter-Minasean, ed. Yerevan: Academy of Sciences of Arm. SSR, 1957;
- Garamanean, Andre'as (Tavros). *Տարագրեալի մը յուշերը* [The Memories of an Exiled], Erkrord hator. Buenos Aires, Argentina, 1972;
- Harut'yunyan, Avag. *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և երկրորդ հանրապետությունը* [The 50th Anniversary of the Armenian Genocide and the Second Republic]. Yerevan: Noravanq, 2015;
- Haykaz, Aram. *Չորս տարի Քիւրդիստանի լեռներուն մէջ* [Four Years in the Mountains of Kurdistan]. Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1972;
- Inche'arapean, Babke'n. *Մեծ եղեռնի շրջանին հայ որբի մը ողիսականը* [The Odyssey of an Armenian Genocide Orphan]. Paris: Turabian Press, 1951;
- Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of the Armenian Genocide and the Jewish Holocaust Memory], *Patma-banasirakan handes* 2 (2011): 24-46;
- Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հատոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;
- Melqonean, Haykanush. *Կեանք և մահ* [Life and Death], Matenashar Aprilean Egherni, t'iv 9. Antelias-Lebanon: Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1960;
- Michman, Dan. *Историография катастрофы. Еврейский взгляд: Концептуализация, терминология, подходы и фундаментальные вопросы* [Holocaust Historiography. A Jewish Perspective: Conceptualizations, Terminology, Approaches and Fundamental Issues], trans. M. Guba et all. Dnepropetrovsk: Tsentral'nyi Ukrainskii Fond istorii Kholokosta «Tkuma», 2005;
- P'ap'azyan, Suren. *Վերապրողի մը ողիսականը* [The Odyssey of a Survivor]. Yerevan: Amaras, 2000;
- Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն. սկսնակներու վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors]. Yerevan: Gitut'yun, 2011;
- Werfel, Franz. *Մուսս լեռան քառասուն օրը* [Forty Days of Musa Dagh]. Yerevan: Luys, 1988.

Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զօր* [Survivors of a Catastrophe: Der-Zor], comp. by Levon Mesrop. Paris: P. E'le'kean, 1955;

Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանների [Holy Bible]. Yerevan: Bible League International, 2010;

«570 անձերէ 25 կիներ միայն մնացեր են» [Only 25 Women are Left out of 570], *Ariamart* (Constantinople), 11 December, no. 17 (1832), 1918;

«Ապստամբութիւնը Կիլիկիոյ մէջ» [Rebellion in Cilicia], *Arev* (Alexandria), 21 June, no. 19, 1915, 3;

«Լեռը գտնուած եօթը որբեր» [Seven Orphans Found on the Mountain], *Aravot* (Constantinople), 12 May, no. 3, 1919;

«Սվազի կոտորածը» [The Massacre of Sivas], *Azg* (Boston), 31 January, no. 25, 1916, 1;

«Վանի մէջ» [In Van], *Hayastan* (Sofia), 6 June, no. 25, 1915, 1.

ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ 1915-1924 ԹԹ.

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Հալեպ, որբեր, որբանոց, արհեստանոց, կրթություն, աջակցություն, փրկություն, Ահարոն Շիրաճյան, Ատուր Լևոնյան, հուշագրություններ:

Հոդվածում ներկայացվում է 1915 թ. հուլիսին Հալեպում հիմնադրված և մինչև 1924 թ. անընդմեջ գործունեություն ծավալած հայկական որբանոցի պատմությունը, որբերի փրկության հարցում կառույցի ունեցած դերը, վերլուծվում են որբերի թվական տվյալները, ներկայացվում որբանոցի կրթական, առողջապահական, ֆինանսական, արհեստագործական ոլորտի մանրամասները, խնամատար մարմինների ծավալած գործունեությունը, ինչպես նաև որբանոցի առջև ծառայած խնդիրներն ու դրանց լուծումները: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև խնդրո առարկա ժամանակահատվածում տարածաշրջանային քաղաքական իրադարձություններին, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունեցել որբանոցային կյանքի վրա:

Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են որբանոցային կյանքի մանրամասները մինչև 1918 թ. Սիրիայի անկախացումը, այսուհետև՝ արաբական անկախության երկու տարիների ու արդեն 1920 թ. Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատման տարիների գործունեությունը: Վերլուծվում է կրթական ոլորտը, ներկայացվում են դասավանդման ծրագրերը, առողջապահական ոլորտը: Անդրադարձ է կատարվում որբանոցում իրականացվող հատուկ քաղաքականությանը, ըստ որի՝ երեխաներին արհեստ էին սովորեցնում, ինչը միտված էր հետագայում իրենց ապրուստի միջոցը սեփական ուժերով հայթայթելուն:

Հոդվածում ներկայացվում է նաև 1919 թ. փետրվարի արաբա-թուրքական ուժերի հարձակումը որբանոցի վրա և տնօրենության ձեռնարկած քայլերը՝ որբերի փախուստները կանխելու, ֆինանսական միջոցներ հայթայթելու և որբանոցը ապահով ու վստահելի ապաստան դարձնելու ուղղությամբ:

Հոդվածի արդյուրագիտական հիմքն են որբանոցի տեղեկագիրը, որբանոցի սաների ու աշխատակիցների հուշագրությունները, ինչպես նաև ժամանակի մամուլը:

Հալեպի հայկական որբանոցը՝ երիտթուրքական իշխանության տարիներին

Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն տվեց երիտթուրքական կառավարությանն իրականացնելու հայերի ցեղասպանության ծրագիրը: Օսմանյան կայսրության գրեթե բոլոր նահանգների հայ բնակչությունը ենթարկվեց տեղահանության ու զանգվածային կոտորածների: Երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրի վերջին հանգրվանը սիրիական անապատներն էին:

1915 թ. հունիսին Հալեպը դարձել էր խաչմերուկ, ուր վճռվում էր գաղթականների ճակատագիրը: Ցեղասպանության առաջին ամիսներին գաղթականների մի մասը տարագրվում է Հատրանի, Համայի, Հոմսի ուղղությամբ, շատերին հաջողվում է մնալ Դամասկոսում կամ անցնել Երուսաղեմ: Մեծ մասը, սակայն, Հալեպի հարավ-

արևելյան երկայնություն երկայնքով քշվում էին Դեր Զորի անապատներ: Ցեղասպանության ընթացքում հայ երեխաների վիճակը թերևս ամենաբարդն էր. նրանք ստիպված էին հաղթահարել գաղթի ճանապարհը, հարազատների կորստի ցավը, սովը և մշտապես կանգնած էին ձուլման վտանգի առջև:

Ցեղասպանության և դրան հաջորդող տարիներին բացվում են բազմաթիվ հայկական, միսիոներական որբանոցներ՝ հայ ժողովրդի դեռևս կենդանի բեկորները փրկելու համար: Նման որբանոցները քիչ չէին, բայց դրանց մեջ առանձնանում էր Հալեպի հայկական որբանոցը: Վերջինս այն հազվագյուտ որբանոցներից էր, որը հիմնվել էր հայկական կողմի նախաձեռնությամբ, ցեղասպանության բուն ընթացքի ժամանակ, և որն անընդմեջ գործել է մինչև 1924 թ.:

Հալեպի հայկական որբանոցն իր գործունեությունը սկսել է 1915 թ. հուլիս 31-ին Վերպատվելի Ահարոն Շիրաճյանի¹ ղեկավարությամբ: Սա այն ժամանակահատվածն էր, երբ Օսմանյան կայսրությունը հետևողականորեն իրականացնում էր հայերի բնաջնջման քաղաքականությունը: Որբանոցի հիմնադրման գործում մեծ էր բժշկապետ Ասատուր Ալթունյանի և նրա դստեր՝ Նորա Ալթունյանի դերը, ովքեր իրենց անձնական կապերն օգտագործելով՝ փորձել են որբերի կեցության և առողջության հարցերը լուծել: Հալեպ հասած որբերի վիճակը կարելի էր հետևյալ ձևով բնութագրել. «1915ին բռնագաղթի ամենասուկալի շրջանին էր, մահվան ճիրաններէն խլուած և հրաշքով ազատուած հայ որբը Հալեպի մէջ դարձեալ մեռնելու դատապարտուած էր»²: Հայ գաղթականների քարավանները Հալեպ էին հասնում հյուծված ու լքված վիճակում, քաղաքում ավելանում էր համաճարակից մահացողների թիվը, սանիտարահիգիենիկ վիճակն աղետաբեր էր տեղացիների և գաղթական հայերի համար: Այս իրավիճակում Հալեպի քաղաքային իշխանությունները կարգադրել էին որոշ աշխատակիցների աղբատար կառքերով շրջել քաղաքի փողոցներով և հավաքել նորածնից մինչև 8-10 տարեկան կիսամեռ երեխաների՝ այս կերպ փորձելով վերահսկել քաղաքի մաքրությունը³:

1 Ահարոն Շիրաճյանը ծնունդով Մարաշից էր: Ուսում էր ստացել Այնթափի «Կեդրոնական Թուրքիոյ քոլեջում», որից հետո հաճախել էր Մարաշի աստվածաբանական դպրոցը, 1912 թ. մեկնել էր Էդիսբուրգ՝ աստվածաբանական ուսումը շարունակելու համար: Նա ակնատես էր եղել համիդյան, երիտթուրքական, քեմալական ժամանակահատվածների հայաջինջ քաղաքականությանը: Ահարոն Շիրաճյանը Մարաշից արտաքսվելուց հետո հասել էր Հալեպ, որտեղ և հիմնել էր որբանոցը: Ավելի ուշ նա աջակցել է «Հայերի բարեկամներ» բրիտանական ընկերության նախաձեռնությամբ Հալեպում հիմնված «Աղջկանց տան», Հալեպի Կարմիր խաչի դարմանատան, Հայ ազգային ծերանոցանկելանոցի գործունեությանը, ինչպես նաև մասնակցել է 1932-1933 թթ. Թել Բրաք հայկական գյուղի հիմնադրման աշխատանքներին, շուրջ 700 ընտանիքների տեղավորել է Հալեպ քաղաքի Մեյդան թաղամասում: Տե՛ս Վեր. Յ. Փ. Ահարոնեան, «Վեր. Ա. Շիրաճեան՝ քաջ առաջնորդը», *Ջանասաէր* երկշաբաթաթերթ (Բեյրութ), Ի՛ւ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 401: Վեր. Տիգրան Խրլորեան, «Այնպես ինչպես կը ճանչնամ Վեր. Ահարոն Շիրաճեանը», *Ջանասաէր* (Բեյրութ), Ի՛ւ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 402-403:

2 Տիգրան Երեցեան, *Որբերու քոյնը 1915-1921* (Հալեպ, Անի, Ա. Էքմէքճեան, Սալիպէ-Հալեպ, 1934), 5-6:

3 Նույն տեղում, 6:

Ստեղծված իրավիճակում Նորա Ալթունյանը դիմում է իր շվեյցարացի բարեկամ, առևտրական, Հալեպում գործող հիվանդանոցի հիմնադիր Էմիլ Ջոլինկերին՝ որբահավաք գործը ստանձնելու և որբերին պատասպարելու նպատակով շինություն տրամադրելու համար: Շուտով Ջոլինկերը Հալեպի Ագապա թաղամասում երկու սենյականոց բնակարան է հատկացնում՝ հայ որբերին ապաստան տալու համար: Բժիշկ Ալթունյանն էլ իր կապերի միջոցով աշխատում էր կազմակերպել ֆինանսական և առողջապահական հարցերը: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ որբանոց հիմնելու նրանց նախաձեռնությունն աջակցություն էր ստանում նաև ամերիկյան, գերմանական, ինչպես նաև գերմանաշվեյցարական միսիոներական կազմակերպությունների կողմից⁴, Հալեպի ամերիկյան, գերմանական հյուպատոսարանների կողմից, ինչպես նաև անգլիական բանակի, ամերիկացիների, շվեյցարացի անհատ բարերարների միջոցով: Բացի նշված անձանցից՝ որբանոցի ֆինանսավորմամբ, երբեմն էլ միջամտությամբ, որի շնորհիվ որբանոցը շարունակել է գործել մինչև 1924 թ., իրենց ներդրումն են ունեցել հայ և օտար անհատներ՝ գեներալ-մայոր Մեքենդրուն, գնդապետ Բրեյնը, գնդապետ Կլուսթարը, Վերապատվելի Ջենթել-Քաքերը, Էմիր Ֆեյսալը, Կ.Պոլսի «Bible House»-ը⁵: Սկզբնական ժամանակահատվածում մատակարարման հարցերը լուծելու համար ստեղծվել էր նաև մոտ 80 հոգանոց Տիկնանց խնամատար մարմինը, որի անդամներն ամսական կես ոսկի են վճարել, սակայն, հարկ է նշել, որ նրանց գործունեությունը կարճաժամկետ է եղել⁶: Նորա Ալթունյանը տեղի հայկական համայնքում նույնպես որբանոցի համար հանգանակություններ է կազմակերպել⁷:

Որբանոցը ցեղասպանության տարիներին այն վստահելի վայրն էր, ուր դիմում էին անապատներից, հարեմներից փախուստի դիմած հայ որբերը: Որբանոցն իր գոյության գրեթե տասնամյա շրջանում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի քաղաքներից ու գյուղերից հավաքված ավելի քան 8.000 որբերի ապաստան է եղել⁸: Որբանոցում որբերի անընդհատ տեղաշարժ է եղել, նրանք, ովքեր հարազատներին գտել են կամ արդեն ինքնաբավ են դարձել և կարողացել են իրենց առօրյա կարիքները հոգալ, դուրս են եկել որբանոցից՝ իրենց տեղը զիջելով նոր եկողներին:

Որբանոցն իր գործունեությունն աստիճանաբար ընդլայնել է, իսկ որբերի թիվը՝ աճել: Համաձայն «Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի» տվյալների՝ հետևյալ պատկերն է արձանագրվել որբանոցում⁹

4 Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-NY: I.B. Tauris, 2011), 643.

5 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919)* (Հալեպ, ա.տ., 1919), 6:

6 ՅԶ, «Այժմու հայ որբանոցը», *Տարագիր* (Հալեպ), 13 դեկտեմբերի 1918, թիվ 2:

7 *Դար մը պարմություն Հայ բարեգործական ընդհանուր միությունն 1906-1940*, ղեկավարությամբ Ռ. Գեորգեանի եւ Վ. Թաշճեանի, հ. Ա (Գահիրե-Փարիզ-Նիւ Եորք, Impression, Brochage, 2006), 66:

8 Միհրան Մինասեան, «Մանկություն չունեցողներուն» տարուկ բոյըր՝ Հալեպի հայկական որբանոցը», *Շաիղ եռամսյա պարբերական* (Հալեպ), 1999 (1), 22:

9 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 1:

31 հուլիս 1915 թ.	13
10 օգոստոս	250
31 օգոստոս	340
31 դեկտեմբեր	402
30 հունիս 1916 թ.	500
31 դեկտեմբեր	548
30 հունիս 1917 թ.	620
31 մարտ 1918 թ.	1.478
31 դեկտեմբեր	1.751

Աշխահամարտի տարիներին որբանոցի ծավալած գործունեության հաջողությունը երբեմն վերագրել են Սիրիայում գործող թուրքական չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային՝ նշելով, որ նա, հակառակ Կ.Պոլսի կենտրոնական կառավարության հրամանի, հովանավորել է որբանոցը¹⁰, անգամ հրամայել է օսմանյան բանակին՝ որբանոցին սնունդ, քարյուղ ու փայտ մատակարարել¹¹: Նշենք, որ Ջեմալ փաշան Հալեպի նահանգապետ Սամի Բեքիրի¹² միջոցով հանդիպել է Ասատուր Ալթունասին, որտեղից էլ սկսվել են նրանց սերտ շփումները:

«Որբերու բոյնը» գրքուկի հեղինակ Տիգրան Երեցյանն այս հարցին անդրադառնալիս նշում է. «Ջեմալ փաշան և Եավեր¹³ Նուսրեթ պէյը քանիցս խօսած էին Տօքթ. Ալթունայանի որ եթէ բաղձանք մ'ունենայ իրենց իմացնէ»¹⁴: Այնուհետև հավելում է. «Տօքթ. Ալթունեան ըլլայ ՃԷմալ փաշայի, ըլլայ իր մշակած բարեկամութենէն անձնական շահ մը չունէր... Բարձրաստիճան զինուորականներու և անոնց ընտանքիներու հիանդները ձրի կը դարմանէր և դեղ կուտար: Եւ այս բոլոր գոհողութիւնները կ'ընէր յանուն Հայ որբին և անպաշտպանին»¹⁵:

Պետք է փաստել, որ Ջեմալ փաշան իրականում ուներ նկատառումներ հայ գաղթականների հարցում իր շահագրգռվածությունն արտահայտելու համար¹⁶: Այնուա-

10 Երեցեան, *Որբերու բոյնը*, 7:

11 *Դար մը պատմութիւն*, 66:

12 Սամի Բեքիրը եղել է նաև Հանրապետական Թուրքիայի արտաքին գործերի նախարարը (1920 թ. մայիս – 1921 թ. մայիս):

13 Յավեր՝ թիկնապահ, ով զբաղվում էր նաև իր վերադասի կարգադրությունների իրականացմամբ:

14 Երեցեան, *Որբերու բոյնը*, 8:

15 Նույն տեղում, 9:

16 Հարկ է նշել, որ տեղահանման և ոչնչացման ճանապարհին գտնվող հայերի նկատմամբ ցուցաբերած որոշակի մեղմ դիրքորոշումը թելադրված էր ոչ այնքան Ջեմալ փաշայի մարդասիրական վերաբերմունքով, որքան պայմանավորված էր քաղաքական հաշվարկով: Հայերին նա դիտում էր որպես Սիրիայում և Լիբանանում արաբներին հավասարակշռող տարր և հայ արհեստավորներին արաբական տարածքներում բնակեցնելով ձգտում էր լուծել երկու խնդիր՝ թուլացնել արաբական

մենայնիվ, բժիշկ Ալթունյանի՝ Ջենալ փաշայի հետ ունեցած կապը հնարավորություն ընձեռեց ստանալու որբանոցի անվտանգությունն ապահովող փաստաթուղթ. «Մեծագոյն և իրական նուէրը եղաւ որբանոցին համար, թողութի կտոր մըն էր գոր յանձնեց Օր. Ալթունեանի, և որով կը յանձնարարէր Հալէպի իշխանութեանց՝ բնավ չդաչիլ որբանոցին: Այս թողութին շնորհիվ կարելի եղավ հաստատութիւնը գերծ պահել ոստիկանութեան ոտնձգութիւններէն: Ճիշտ է, որ փորձանքները պակաս չեղան եւ Հալէպի կառավարութիւնը բազմիցս փորձեց այդ որբերն ալ առնել եւ անապատի սպանդանոցները դրկել»¹⁷: Բացի այդ՝ բժիշկ Ալթունյանն որոշակի միջամտություն է ունեցել Հալէպի հայությանը տեղահանելու ծրագիրը կանխելու գործում. «Սակաւաթիւ ժողովուրդ մը ունէինք այնտեղ, բայց անոր շուրջը կը պարտկուէին քանի մը հազար հայ գաղթականներ: Եթէ արտորուէին, այս գաղթականներն ալ չպիտի կրնային մնալ ու պիտի կորսուէին»¹⁸:

Այնուամենայնիվ, արդեն նշվեց, որ Ջենալ փաշայի տված փաստաթուղթը չէր կարող որբանոցն ամբողջովին ապահովագրել թուրքական ոտնձգություններից: Եղել են դեպքեր, երբ Ահարոն Շիրաճյանը մերժել է որբանոցից աղջիկ տուն տանելու համար եկած թուրք բեյերին այն հիմնավորմամբ, որ որբանոցը գերմանական հովանավորության ներքո է գտնվում: Նշենք նաև, որ գերմանական հյուպատոսարանի անմիջական հարևանությունը¹⁹ զգալիորեն նպաստում էր որբանոցի անվտանգության ապահովմանը, երբեմն էլ Պատվելին խոստումներով ձգձգում էր՝ հուսալով, որ ազատությունը մոտ է²⁰:

Ավելին, թեև որբանոցի համար թուրքական իշխանությունները որոշակի արտոնություններ կիրառում էին, բայց, ինչ վերաբերում է որբանոցի կրթական կյանքին, ապա 1915-1918 թթ. ընթացքում կրթական գործունեություն սկսելու փորձերը երեք անգամ կասեցվել են թուրքական կառավարության կողմից²¹:

Հայկական որբանոցի գործունեությունը կապված է եղել նաև արաբական կողմի բարիդրացիական վերաբերմունքի հետ: Վերապատվելին կարողացել է բարեկամա-

ներկայությունը, արաբական ազգային-ազատագրական շարժման միտումները և ստեղծել բանակի կարիքները հոգալու նոր հենարան: Այս տեսանկյունով է կարելի բացատրել ժամանակ առ ժամանակ հայ տարագիրների նկատմամբ նրա ձեռնարկած քայլերը:

17 Ա. Ա. [Արամ Անտոնյան], «Տօթթ. Ալթունեան», *Վերածնունդ. շաբաթաթերթ* (Փարիզ), 27 մայիսի 1919, Գ տարի, թիվ 12, 202-203:

18 Նույն տեղում, 203:

19 Հալէպը հյուսիսային Սիրիայի կարևոր կենտրոն էր: Այստեղ էին հատվում Սիրիայի ֆրանսիական և Բաղդադի գերմանական երկաթուղիները, բացի դա Հալէպը ռազմամթերքի մատակարարման գործում հույժ կարևոր դերակատարություն ուներ: Այս հանգամանքով էր պայամանավորված, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները հյուպատոսարաններ էին բացել Հալէպում, ինչը թուրքական իշխանություններին ավելի զգոն էր պահում քաղաքում բացահայտ կոտորածներ ու անօրինակություններ կատարելու հարցում:

20 Էլմաս Պոյաճեան, «Հայկական որբանոցի կենսքէն», *Ջանասուէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 416:

21 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 3:

կան հարաբերություններ հաստատել արար երկրագործների հետ և նրանցից պարբերաբար հացահատիկ գնել որբանոցի համար²²:

Վերապատվելի Շիրաճյանի գործունեությանը զուգահեռ Նորա Ալթունյանը նույնպես զբաղվել է սնունդ հայթայթելու գործով: 1916-1917 թթ. ընթացքում, երբ երկրում համատարած սով էր, Նորա Ալթունյանը դիմել է Նուսրեթ բեյին՝ ներկայացնելով որբանոցի դրությունը: Ի պատասխան՝ Նուսրեթ բեյը Ջեմալ փաշայի զինվորական գորանոցի մթերանոցից ցորեն է հատկացրել որբանոցին, ինչը բնական է, որ չէր կարող լինել առանց Ջեմալ փաշայի թույլտվության կամ համաձայնության:

Ամեն նոր քարավանի Հալեպ հասնելով՝ քաղաքի գաղթականների թիվն ավելանում էր. տեղի կառավարիչների վերահսկողությունից դուրս էր եկել քաղաք հասնող աքաղաղների թիվը, համատարած սով ու համաճարակ էր: Այս իրավիճակում թուրքերը փոխում են իրենց գործելակերպը. հայերին արգելելով մնալ Հալեպում՝ փոխարենը նրանց տեղավորում էին երկաթուղուն հարակից ճամբարներում: Այնուամենայնիվ, կառավարության հսկողությունից և հետապնդումներից խուսափելու համար շատերը մի քանի օրով ապաստան էին խնդրում որբանոցում: Վերջինս ավելի մարդաշատ էր դառնում, հորերի ջուրը չէր բավարարում կենցաղային նվազագույն պայմաններն ապահովելու համար, յուրաքանչյուր նոր քարավանի հոսքի հետ շատանում էին հիվանդությունները, աճում էր մահացությունների թիվը: Դժվար էր նաև լուծել կեցության, հագուստի, սննդի խնդիրները:

Սկզբնական շրջանում որբանոցը կամ այդ ժամանակների *Օրհնության Տունը*²³ պարզապես պատսպարան էր հայ որբերի համար՝ հապճեպ կահավորված, հարդով տաշեղներով լցված բազմոցներով, որոնց վրա մեկից ավելի երեխաներ էին պտկում, առանձնացվել էր հատուկ սենյակ՝ ամեն օր մուտք գործող երեխաների համար: Վերապատվելի Շիրաճյանի՝ որբերին բժշկական աջակցություն տրամադրելու խնդրանքով որբանոց այցելած բժիշկ Պողոսյանը գրում է. «... Ընդարձակ սենեակ մը կարելի եղալ յստակեցնել ամէն օր մուտք գործող մահամերձներու որոնց մեծ մասը կը մեռնէին մտնելէ գրեթէ մի քանի ժամ ետք»²⁴: Որբերը հաճախ չէին հիշում իրենց անունը, Պատվելին նրանց նոր անուններով էր մկրտում՝ Ապառաժ, Վէմ, Ժայռ և այլն՝ հույս ունենալով, որ նմանօրինակ անունները նրանց կպարտադրեն պայքարել կյանքի համար:

Անդրադառնալով որբերի վիճակին՝ Հալեպի «Տարագիր» թերթը գրում է. «... անմեղ եակներ, որոնք իրեն ցնցոտիներուն մէջ յաճախ մերկ ու բոպիկ, քաղցած ու անպատսպար, անխելահաս, հետեաբար և անկարող ըմբռնելու իրենց վիճակի ծանրութիւնը կամ անելի ճիշտ ծանրութեան պատճառը, ողբալի ու չարքաշ կեանք մը կը վարեն, այս օտար մթնոլորտի տակ, որ կեանք չէ, կը քալեն բայց չգիտեն ուր»²⁵:

22 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

23 Սարգիս Լալեան, *Յուշանայտեան նուիրուած Այտուր Յ. Լեռնեանի: Ինքնակենսագրութիւն եւ դրուագներ իր կեանքէն ու գործէն* (Պէյրութ, Ատլաս, 1967), 197:

24 Տոքթ. Պողոսեան, «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը», *Ջանասէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 414:

25 Սպերցի, «Որբանոցը. Ա», *Հայ Չայն* (Հալեպ), 18 դեկտեմբերի 1918, Ա տարի, թիվ 4:

Որբանոցի աշխատակից Էլմաս Պոյաճյանն²⁶ իր հուշերում որբանոցի մասին գրում է. «Նորաբաց որբանոցին դուռը շարաններով կը սպասէին դժբախտներ՝ տնօրէնին կարգադրութեանը: Այժմ որբանոցը եղաւ «Հայ տուն», ուր կային կաթընկեր մանուկներէն մինչև Հայնիէն արտորված ծերունի, բարի Ռեբեկա մայրիկը ... Թէպէտ բաւարար ուտելիք չունէինք՝ Պատուելին կ'ըսէր. «Թող հայուն բեկորները փողոցը չմտնին»²⁷: Վերապատվելի Շիրաճյանը որբանոց է ընդունել բոլոր որբերին՝ բորոտով, տրախտ-մայով, դիզինտերիայով կամ տիֆով վարակված՝ առանց որևէ խտրականության²⁸:

1917 թ. փետրվարին Հալեպում գործող որբանոցների վերահսկողությունն անցել է թուրքական կառավարությանը և վերջինիս հրամանով որբերը պետք է տեղափոխվեին Անթուրայի, Կոնիայի, Էսկիշեհիրի և Կ.Պոլսի թուրքական որբանոցներ: Հալեպի հայկական որբանոցը չէր կարող շրջանցել այդ հրամանը և որբանոցի մոտ 80 որբ տեղափոխվել են հիմնականում Լիբանանի Անթուրայի թուրքական որբանոց²⁹: Այս դեպքերին ադրադառնում է Էլմաս Պոյաճյանը. «...Մեր որբանոցին ալ ցանկը ուզեցին և օր մը ոտք կոխեցին թուրք պաշտօնեաներ եւ 80ի չափ որբեր տարին իրենց ծնողաց ճակատագրին միացնելու»³⁰: Որբանոցից երեխաների առևանգումները կանխելու համար Շիրաճյանն երբեմն որբերին տեղավորում էր քաղաքի հայկական ընտանիքներում, որոնք դժվարությամբ ու վախով էին գնում այդ քայլին:

Որբանոցի տեղեկագրում ներառված են նաև մինչև 1919 թ. նոյեմբեր ամսվա ֆինանսական մուտքերի և ելքերի հաշվեկշիռները: Ստորև ներկայացվում են որոշ տվյալներ՝

Ֆինանսական աղբյուրները	Գումարը/ոսկի ³¹
1918 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներ	562
1916-1918 թվականներ	26.425
1919 թ. անգլիական իշխանությունների կողմից	29.015
Եկեղեցիներից ու բարեկամներից	214

26 Էլմաս Պոյաճյանը գաղթի ճանապարհին կորցրել էր երեք զավակներից երկուսին, մեկի հետ հասել էր Ռալ ուլ-Այն, հետո՝ Հալեպ, որտեղ Պատվելի Հովհաննես Էսփիջյանի միջամտությամբ սկսել էր աշխատել Հալեպի հայկական որբանոցում:

27 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքէն», 415:

28 Kévorkian, *The Armenian Genocide*, 643.

29 Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915 -1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no.1 (2016), 25-43:

30 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքէն», 416:

31 Գումարներն ընդունվում էին մեծամասամբ թղթադրամներով, մինչդեռ հաշվեկշիռը ներկայացված է արդեն ոսկու փոխարժեքով: Նշենք, որ այս ժամանակահատվածում ոսկու արժեքը թանկացել է, որի արդյունքում որբանոցը որոշակի դրամական օգուտ է ունեցել:

Ֆինանսական աղբյուրները	Գումարը/նսկի
Անգլիական բանակից ցորեն, միս (անվճար ³²)	500
Ջեմալ փաշայի սվիրատվություն՝ փայտ, ցորեն, յուղ, ոսպ, սիսեռ (անվճար)	3.600
Ամերիկյան Կարմիր խաչի կողմից տրամադրված ալյուր, կաթ, հագուստ (անվճար)	200
Որբանոցի արհեստանոցներից ու առևտրից ստացված եկամուտ	2.470
Ոսկու արժեքի բարձրացումից	620
Ընդհանուր	63.606

Այս գումարից հանվել են որոշակի մանր ծախսերը, արհեստանոցին անհրաժեշտ նյութերի գնումների և տեղափոխման ծախսերը: Հանրագումարում ստանում ենք, որ հիմնադրումից մինչև 1919 թ. սեպտեմբերի 30-ը որբանոցի մուտքերը կազմել են 57.366 օսմանյան ոսկի³³:

Այսպիսով՝ իր գործունեության առաջին չորս տարիներին որբանոցը պատասպարան էր, որի հիմնական նպատակը որբերին թուրքական կառավարության հետապնդումներից փրկելն էր, սնունդ տրամադրելն ու հիվանդություններից ապաքինելը: Դրան գուցահեռ՝ սկսում են հիմնվել արհեստանոցներ, որոնք ապահովում էին որբերի զբաղվածությունն ու որոշակի եկամուտ բերում որբանոցին: Որբանոցի ուսուցիչ Արամ Շարվոդյանը ստեղծված իրավիճակում Ահարոն Շիրաճյանի գործունեությունը հետևյալ ձևով է ներկայացնում. «Ոճրապարտ թուրքին դատապարտեալներուն մէջէն, ինքն ալ դատապարտեալ մը, դահճին ձեռքէն կ'ազատէ 6 հազարէ աւելի դատապարտեալներ, եւ զանոնք դահճին աչքին ու հսկողութեան առջեւ չորս տարիներէ աւելի կը կերակրէ եւ կը պատասպարէ»³⁴: Իրողություն, որի հետ դժվար է չհամաձայնել. հայթայթել գումարներ, սնունդ՝ համատարած սովի պայմաններում, խուսափել մոլեռանդ իշխանությունների՝ երեխաներին թրջացնելու քաղաքականությունից, իսկապես պահանջում էր գերագույն լարում, բանակցելու հմտություն և վարչական ձիրք:

32 Հաշվեկշռում ներառվել է նաև անվճար տրամադրված սննդի ցանկը՝ յուրաքանչյուր որբի համար ծախսվելիք գումարի չափը ճիշտ որոշելու համար:

33 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի, 8*:

34 Արամ Շարվոդյան, «Կարգ մը թուանշաններ որբանոցի կեանքէ», *Ջանասէր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 418:

Որբանոցի գործունեությունը 1918-1924 թթ.

1918 թ. սեպտեմբերին անգլիական և արաբական ուժերի կողմից Դամասկոսի, Հալեպի ազատագրումով³⁵ որբանոցը նույնպես հնարավորություն է ստանում ազատ գործելու: Այս ժամանակ Պատվելիի կյանքին վտանգ էր սպառնում, և նա ապաստանել էր մի արաբ շեյխի տանը: Էլմաս Պոյաճյանի վկայությամբ, երբ Շիրաճյանը ստանում է անգլիացիների՝ Հալեպ մտնելու լուրը, շտապում է արաբական տարագով նրանց դիմավորել³⁶: Ինչպես նշված էր, սկզբնական շրջանում Ահարոն Շիրաճյանը անհատների մակարդակով էր համագործակցել արաբների հետ, իսկ արդեն 1918 թ.՝ Սիրիայի ազատագրումից հետո, բարեկամական կապեր է հաստատել նաև երկրի արաբական ղեկավար կազմի հետ, ովքեր նույնպես աջակցել են որբանոցի գործունեությանը: Դանիել Ոսկյանն իր հողվածում գրում է. «Հալեպի մէջ ալ ան լաւ յարաբերութիւն կը մշակէր բարձրաստիճան պաշտօնատարներու հետ որոնք մեծ յարգանք ունէին իրեն հանդէպ ու անմիջապէս ընթացք կուտային իր դիմումներուն»³⁷:

Անգլիական զինվորական իշխանությունն իր պաշտպանության ներքո է վերցնում որբանոցը, ողջ ծախսերը հոգալուց բացի՝ վճարելով նաև նախորդ տարիներին գոյացած պարտքը³⁸: Անգլիական իշխանությունները որբանոցի վարչական ներքին հարցերն ամբողջությամբ վստահել էին հայկական կողմին:

Ստորև ներկայացնում ենք 1919 թ. որբանոցում ապաստանած որբերի թվական տվյալները³⁹

27 փետրվար	2.000
31 մարտ	1.875
31 մայիս	1.771
30 հուլիս	1.812
30 սեպտեմբեր	2.016

Նշենք մեկ կարևոր փաստ ևս. 1919 թ. սեպտեմբերի դրությամբ որբանոցում եղել են նաև 11 խառնածին երեխաներ⁴⁰: Այս հանգամանքն ընդգծում էր որբանոցի ղեկա-

35 1918 թ. սեպտեմբերի 30-ին Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Էդուարդ Ալենբիի և Էմիր Ֆեյսալի զորքը մտնում է Դամասկոս, հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմում է Սիրիայի առաջին անկախ կառավարությունը: Տե՛ս Ali A. Allawi, *Faisal I of Iraq* (New Haven and London: Yale University Press, 2014), 154.

36 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

37 Դանիել Ոսկեան, «Համազգային դեմք մը», *Ջանասեր*, ԻԷ տարի, 1 հոկտեմբերի 1964, թիվ 19, 424:

38 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 13: Երեցեան, *Որբերու բոյնը*, 11:

39 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 1:

40 Նույն տեղում:

վարության այն սկզբունքը, որը նպատակաուղղված էր անգամ խառնածին, բայց հայ ինքնությամբ ու գիտակցությամբ երեխաների փրկությանը:

Որբանոցի վարչությունն անգլիական կողմի աջակցությամբ տասը շենք է վարձում՝ 135 սենյակներով՝ Ագապա թաղամասում, Անտիոքի Դռան շրջակայքում: Սաբուն խանը դառնում է որբանոցի կրթական հատվածը, ինչպես նաև մոտ 1.000 որբերի ապաստարանը: Որբանոցի շինություններից մեկի շենքը հետագայում վերածվել է պետական վարժարանի:

Ինչպես վկայում է դպրոցահասակ տղաների «մայրիկ» Էլմաս Պոյաճյանը, Սաբուն խանը դառնում է փոքրիկ Հայաստան՝ ազգային երգերով, փայտյա զենքերով և զինվորական մարզանքներով: Կիրակի՝ կեսօրից հետո, որբանոցին պատկանող բոլոր տներից որբերն իրենց պատասխանատուների հետ հավաքվում էին, և յուրաքանչյուր խումբ իր սովորած երգն էր երգում հյուրերի ներկայությամբ: Որբանոցի զինվորական մարզանքը սկսվում էր Հայաստանի Հանրապետությանն ուղղված ողջույնով⁴¹:

Որբանոցը, ինչպես արդեն նշվեց, իր գործունեության սկզբնական հատվածում չի ունեցել հստակ վարչական և կառուցվածքային ստորաբաժանումներ: Վերջիններս ձևավորվել են աստիճանաբար, ժամանակի պահանջներից ելնելով՝ հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները: Ձևավորող վարչական, կրթական, առողջապահական ստորաբաժանումները դյուրացրել են որբանոցի առջև ծառայած որոշ խնդիրների արդյունավետ լուծումները:

Առաջնային և կարևոր ոլորտը կրթականն էր, որին որբանոցում 1918 թ. հետո հատուկ ուշադրություն է դարձվել: Կանոնավոր դասընթացները սկսվել են անգլիական գործերի Սիրիա մտնելուց հետո: 1919 թ. սեպտեմբերին դպրոցն ունեցել է 1.377 երկսեռ աշակերտություն՝ 38 երկսեռ ուսուցիչներով⁴²:

Որբանոցն ունեցել է գիշերային վարժարան, որպեսզի արհեստավոր որբերը չգրկվեին կրթություն ստանալու հնարավորությունից: Գիշերային դասընթացը գործել է հինգ կարգերի բաժանումով, և 181 որբ ամեն երեկո մեկուկես ժամ այցելել է հայերենի, ֆրանսերենի և անգլերենի դասերի: Դասերն իրականացվել են Հալեպի ազգային վարժարանի⁴³ 12 տարվա դասընթացի ծրագրով: Տղաների նախակրթարանի 81 որբ ուղարկվել են Ազգային վարժարան՝ մասնավոր վճարով, իսկ 164 տղա և 552 աղջիկ կրթությունը ստացել են որբանոցի դպրոցում:

Որբանոցում գործել է նաև կույրերի դպրոց, որտեղ 1919 թ. տվյալներով սովորել են 43 երկսեռ կույր աշակերտներ: Նրանց մեկ չորրորդն աչքի խոլերայի պատճառով կորցրել էր տեսողությունը, իսկ մյուսներն արդեն կույր էին մտել որբանոց⁴⁴:

41 Պոյաճեան, «Հայկական որբանոցի կեանքն», 416:

42 Երեցեան, *Որբերու բոյնը*, 13:

43 Հայկազյան վարժարանը 1919 թ. դրությամբ Հալեպում գործող միակ վարժարանն էր՝ առաքելական-ավետարանական միացյալ ծրագրով, որը 1921 թ. բաժանվեց: Տե՛ս Յակոբ Չօլաքեան, «Հայ վերապրողներու տեղաբաշխումը եւ կրթական գործի կազմակերպումն ու դպրոցները Սուրիոյ մէջ (1918-1946)», *Սուրիոյ հայերը* գիտաժողովի նյութեր (Հալեպ, HU PESS, 2018), 279:

44 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 3:

Երեխաները ջութակ կամ մանդոլին էին նվագում, օրվա մնացած ժամերին ասեղ-նագործությամբ կամ փսիաթագործությամբ⁴⁵ էին զբաղվում:

Առողջապահական ոլորտը նույնպես կարևոր էր՝ հաշվի առնելով տարածված համաճարակներն ու սովը: Որբերը գտնվում էին բժշկի հսկողության տակ, ծանր հիվանդները տեղափոխվում էին հիվանդանոց, որի պատասխանատուն էր Ա. Ալթունյանը: Որբանոցի հիվանդանոցը գտնվում էր քաղաքի ճեղքում արվարձանի Քեթթեպ փողոցի անկյունում: Ատուր Ալթունյանն անկախ բժիշկ էր, հիվանդանոցի մշտական բժիշկներից էին Սամուել Շամվոնյանը (ՀԲԸՄ Հալեպի վարչության նախագահ), Խաչիկ Պողոսյանը, Երվանդ Էլմաճյանը, Նուրի Իշխանյանը և ուրիշները:

Հիվանդանոցն ունեցել է 40 անկողին և հիվանդանոցային պարագաներ, ինչպես նաև մոտ հիսուն բժշկական սարքավորումներ՝ տրախտմայի, բորոտության և, մասնավորապես, գոնչությունը⁴⁶ բժշկելու համար⁴⁷: Աչքի հիվանդությունները, բորոտությունը սկզբում շատ տարածված էին, ավելի ուշ գրեթե վերացել էին: Հալեպի որբանոցի սան Անդրանիկ Շառուկյանն իր հուշերում հիվանդանոցը հետևյալ ձևով է բնութագրում. «...երկնային դրախտ էր երկրի վրա ... առասպելական բարիքներու շտեմարան», որտեղ կար մահճակալ, կաթ, հավկիթ, սպիտակ հաց և բարի մայրիկներ, որոնք չէին բարկանում⁴⁸:

Տեղեկագրում 1919 թ. սեպտեմբերի դրությամբ առողջապահական վիճակի մասին նշվում է. «Ուրախ ենք ըսելու, թե վերջին ինը ամիսներում մեջ երեք երեխաներ եւ մանչ մը մեռած են միայն»⁴⁹: Մահացությունների բարձր աստիճանը նախորդ տարիներին պայմանավորված էր տիրող ծանր պայմաններով և նշվում էր, որ որբերից շատերը կիսամեռ վիճակում էին մտնում որբանոց և նրանց համար բախտավորություն էր մեռնել որբանոցում՝ փողոցների փոխարեն⁵⁰:

Որբանոցը ներքին հարցերը կարգավորելու մշակված համակարգ է ունեցել: Տասը տարին լրացած յուրաքանչյուր որբ պարտավոր էր նաև որբանոցին կից գործող արհեստանոցում որևէ արհեստ սովորել: Այսօրինակ համակարգը բնորոշ է ցեղասպանությունից հետո շատ հայկական որբանոցների, ինչը հնարավորություն էր տալիս որբանոցներին ինքնաբավ լինելու: Արհեստագործական արտադրանքի վաճառքից ստացված գումարի մի մասը պահվում էր և տվյալ որբին էր տրվում որբանոցից դուրս գալու ժամանակ:

Տեղեկագրում նշվում են ուսուցանվող արհեստների ու տղա որբերի ցանկերը, որոնք հարկ ենք համարում ներկայացնել՝

45 Ճահճային բույսերից, արմավենու տերևներից պատրաստված հյուսվածք, որ օգտագործել են հատակին փռելու և որոշ իրեր փաթաթելու համար:

46 Գոնչություն կամ գոնչություն (հնց.)՝ ֆիզիկական արատ ունեցող, խեղանդամ, բորոտ կամ քոստո:

47 Բակուր Տաթևեան, «Հալեպի հայկական որբանոցը», *Գեղարդ, Սուրիահայ պարեզիրք, 1976-1978 միացնալ թիւ*, Բ գիրք (Հալեպ, Շարք, 1978) 379:

48 Անդրանիկ Շառուկյան, *Մանկություն չունեցող մարդիկ* (Երևան, Հայպետհրատ, 1963), 62:

49 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 2:

50 Նույն տեղում:

կոշկակարություն	62 տղա
հյուանություն	30
հացագործություն	20
մուճակակարություն	18
դերձակություն	13
բեռնակրություն	13
դարբնություն	12
պարտիզականություն	12
կաշեգործություն	12
կառապանություն	9
կաթնագործություն	6

Ամփոփելով նշենք, որ արհեստ սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 216 հոգի⁵¹:

Որբանոցի չորս հիմնական արհեստանոցները քաղաքի ամենաբանուկ փողոցի վրա էին տեղակայված՝ ատաղձագործական արհեստանոցը, կոշկակարատունը, դերձակատունն ու նկարչատունը, որոնց արտադրանքը վաճառվում էր որբանոցի կենտրոնական վաճառատանը՝ տնօրենի և գրագրի հսկողությամբ:

Աղջիկները նույնպես իրենց զբաղմունքներն ունեին: Բացի արհեստներից տասը տարեկանից բարձր աղջիկները մասնակցում էին նաև որբանոցի ներքին գործերին: Կարի հատուկ սենյակում մոտ 40 աղջիկներ կարունձի դասերի էին մասնակցում⁵²: Որբանոցի դերձակատունը հոգում էր որբանոցի հագուստի, անկողնային պարագաների հարցերը: Նրանք օրական մեկուկես ժամ ասեղնագործությամբ էին զբաղվում, և այդ գործերը վաճառվում էին արհեստանոցի վաճառատանը: Մոտ 60 երեխաներ աշխատում էին դեղատներում, ատամնաբույժների ու լուսանկարիչների մոտ:

Որբանոցն ունեցել է իր ներքին պայմանական բաժանումները՝ ըստ տարիքի և սեռի երեխաները բաժանվել են 30 կարգերի, որոնց հսկում էին 30 կանայք ու աղջիկներ՝ որպես «մայրիկներ»: Ի տարբերություն ուսուցիչների՝ վերջիններս մնում էին որբանոցում: Որբանոցի սան Անդրանիկ Ծառուկյանն իր հուշագրության մեջ անդրադառնում է «մայրիկների» գործունեությանը՝ նշելով. «Մայրիկները կը կանչվեին իրենց անուններով՝ Յուդաբեր մայրիկ, Սանդուխտ մայրիկ, Աղավնի մայրիկ, իսկ Մեծ Մայրիկին անունը չէին տար: Հսկիչները և մայրիկները նրան դիմում էին

51 Նույն տեղում, 4:

52 Երեցեան, *Որբերու բոյնը*, 15:

տիկին Եղիսաբեթ: Մեզի համար իր անունը կամ վախի ու ծեծի սպառնալիք էր, կամ ինքնապաշտպանության վերջին սպառնալիքը»⁵³:

Որբանոցում աշխատող կանանցից շատերն անձնվիրաբար են աշխատել: Նրանցից են եղել Թ-ագուհի (Ադիյամանցի) Ալեքսանյանը, ով հոգում էր որբանոց մտնող յուրաքանչյուր որբի հիգիենայի հարցերը, Տուտու մայրիկ Քեշիշյանը, որը ցեղասպանության տարիներին ազատվել ու իր զավակների հետ որբանոց էր հասել: Նրա հին-նական գործը ոչլուտ երեխաների մաքրության ապահովումն էր: Ինչպես նաև Մենենա Մլայանը և Ահարոն Շիրաճյանի կինը՝ Լուսիա Ռուսյան-Շիրաճյանը, որոնք իրենց վրա ծանր պարտականություն էին վերցրել՝ կազմակերպել մահացած երեխաների աննկատ տեղափոխումը որբանոցից գերեզմանոց: Նշենք, որ Լուսիան որբանոցի երեխաներից վարակվում է տիֆով և մահանում⁵⁴:

Որբանոցում աշխատում էին նաև 20 լվացարարուհիներ, 25 մառանի և խոհանոցի պատասխանատուներ, 30 մաքրողներ, 40-45 կարողներ, 12 գիշերապահուհիներ, 15 հիվանդանոցի պաշտոնյաներ, որոնք իրենց օրվա ուտելիքն ու հագուստն անվճար էին ստանում⁵⁵:

Հագուստի ձեռքբերման հարցերում որբանոցն աստիճանաբար կարողացել էր բարելավել պայմանները: Ամեն որբ ապահովված էր վերմակով, բարձով, սպիտակեղենով, երեք ձեռք հագուստով, ամեն տարի յուրաքանչյուր տղայի տրվում էր երկու գույզ կոշիկ, իսկ աղջկա՝ մեկ գույզ⁵⁶: Նշենք, որ սննդի հարցերին նույնպես հատուկ ուշադրություն է դարձվել. որբերն օրական ստանում էին երկու անգամ՝ տաք, մեկ անգամ՝ չոր սնունդ: Տեղեկագրում մանրամասն նշվում են որբանոցի սննդի մատակարարման ցուցակները, յուրաքանչյուր որբին տրամադրվող սննդի չափաբաժինը⁵⁷:

Բարոյական տեսանկյունից որբանոցի նշանաբանը հետևյալն էր. «Որբերը համեստ ու օգտակար հայեր ըլլալու պատրաստել, սորվեցնելով նաև քրիստոնեական կենսք եւ բարոյականութիւն: Բոլորն ալ ազատ են իրենց ուզած եկեղեցին երթալու»⁵⁸:

Անդրանիկ Ծառուկյանն իր հուշագրությունում նշում է, որ Եղիսաբեթ մայրիկը շաբաթը երկու անգամ որբանոցի բակում Սուրբ գրքից ընթերցումներ էր կատարում, և բոլորը պետք է համակ ուշադրությամբ հետևեին նրան, իսկ անուշադիրներն ու լսելիս քնո՞վ ընկած երեխաները պատժվում էին⁵⁹:

Հետքաքրքրական է, որ Առաքելական եկեղեցու հետևորդ երեխաներն ավելի քիչ են եղել: Այս հանգամանքը կարելի է հիմնավորել այն փաստով, որ այդ տարիքում երեխաների համար դժվար էր ընկալել երկու եկեղեցիների տարբերությունը, չնայած Անդրանիկ Ծառուկյանը հիմնավորում է երևույթը՝ գրելով. «Մեր Եկեղեցի գացողները

53 Ծառուկյան, *Մանկություն չունեցող մարդիկ*, 28:

54 Ա. Շիրաճեան, «Վեր. Շիրաճեանին Գործակիցները», 405:

55 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 4:

56 Երեցեան, *Որբերու բոյնը*, 14:

57 *Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի*, 2:

58 Նույն տեղում, 3:

59 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 39-40:

կը տարվեին դասին ճիշտ ետևը ու ամբողջ երկու ժամ ոտքի կը մնային: Իսկ Ժողովարան գացողները հանգիստ կը նստեին նստարաններու վրա: Հետերին կը բերեին նաև գունավոր նկարներ»⁶⁰: Ամեն դեպքում հարկ է նշել, որ Ժողովարանի բարեկեցիկ պայմանները նպաստել են երեխաների ավետարանչական կողմնորոշմանը, չնայած որևէ ձևով հարկադրանքի ու ստիպողականության դեպքերի ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Որբանոցային կյանքը հարթ չէր ընթանում. ամենօրյա կեցության, սննդի խնդիրներ, ներքին կազմակերպչական հարցեր, թուրքական ոտնձգություններ և այլ խոչընդոտներ, որոնք պարբերաբար ծառանում էին որբանոցի առջև: Որբանոցի երեխաները 1919 թ. փետրվարի 28-ին ենթարկվում են թուրքերի ու արաբների կազմակերպած հարձակմանը⁶¹: Թուրք ջարդարարները, առաջնորդելով մի խումբ արաբների, տարածվում են քաղաքով մեկ՝ Ջումսա բազար, Ագապա, Բաբ Ալ-Ջնեյնի, Բասթալ Հարամի, Բաբ Ալ-Նասր, հարձակվում են հայերի որբանոցի, դպրոցների, նախկին գորանոցի վրա⁶²:

Դեպքերի ականատես, Հալեպի որբանոցի սան Հովակիմ Դիշդիշյանսն⁶³ իր հուշերում անդրադառնում է դեպքերի մանրամասներին՝ նշելով, որ որբանոցի տղաներից շատերը փայտե հրացաններով ավելի քան երկու ժամ պաշտպանել են որբանոցը պ. Կարապետի և Սեբաստացի Անդրանիկի հետ, և հարձակվողները, փայտե հրացաններն իսկականի տեղ դնելով, չեն համարձակվել շենք խուծել⁶⁴, չնայած փաստերը վկայում են, որ արաբական ու թուրքական զինված ամբոխը, այնուամենայնիվ, մուտք է գործել որբանոց:

Փետրվարյան այս դեպքերին է անդրադարձել նաև որբանոցի մեկ այլ սան՝ Արմենակ Կյուրեղյանը⁶⁵, ով որբանոցում հատուկ առաքելություն է ունեցել. քաղաքում շրջելով՝ հայ որբեր հայտնաբերել ու նրանց որբանոց տեղափոխել: Դեպքի օրը Արմենակը

60 Նույն տեղում, 42:

61 Դեպքերի մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Նարինե Մարգարյան, *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հասարակած հայ տարագիրների կարգավիճակը և հայարաբական փոխհարաբերությունները 1915-1924 թթ.* (Երևան, Կոլլաժ, 2013), 102-112:

62 Եղիա Նաջարյան, «Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում (1918 հոկտեմբեր – 1919 հունիս)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ* հ. 6 (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974), 154; Allawi. *Faisal I*, 218.

63 Հովակիմ Դիշդիշյանը ծնվել է Զիլե քաղաքում, 1906 թ.: Նա ականատես է եղել ցեղասպանությանը, ընտանիքի անդամներից փրկվել է միայն ինքը: Անցել է գաղթի ողջ ճանապարհը, ենթարկվել տարբեր փորձությունների՝ հայտնվելով արաբական, քրդական միջավայրում: Դեր Զորում հանդիպել է որբախույզ Ռուբեն Հերյանին, ով ներկայացրել է իր որբահավաք գործունեության մասին, տեղեկություններ է հարցրել արաբական ցեղախմբերի մոտ ապաստանած հայ որբերի մասին, իսկ Հովակիմին առաջարկել է լուսանկարվել՝ խոստանալով այն Ամերիկա ուղարկել՝ որդեգրման հարցերը լուծելու համար: Դեր Զորից Հովակիմը հասել է Հալեպ ու հայտնվել Պատվելիի որբանոցում: Տե՛ս Հովակիմ Դիշդիշյան, *Դեր-Զորի անսպասարում*, 252-253:

64 Դիշդիշյան, *Դեր-Զորի անսպասարում*, 264-265:

65 Արմենակ Հարությունի Կյուրեղյանը ծնվել է 1900 թ. Սեբաստիա քաղաքում: Ուսանել տեղի Արամյան վարժարանում մինչև երրորդ դասարան: Անցել է գաղթի ճանապարհը, յոթ քույր ու եղբայրներից փրկվել են միայն ինքն ու եղբայրը:

նակն ուղեկցող որբի հետ չի հասցրել որբանոց մտնել, իսկ հարձակումից հետո է միայն որբանոցում ակնաստես եղել, որ ուսուցիչներից մի քանիսը գոհվել են, հանդերձարանի պատասխանատու ծեր աշխատակցի թևերը կտրել են⁶⁶: Էլմաս Պոյաճյանը դեպքի կապակցությամբ գրում է, որ փետրվարի 28-ին որբանոցը կորուստներ է կրել, Արմաշի վանքից երկու շաբաթ առաջ որբանոց հասած Արմենակին սրախող-խող են արել, ուրֆացի կույր ու ծեր տղամարդու վրա կրակարանի տաք կրակ են լցրել, չեն խնայել անգամ ձեռքերը պարզած աղոթող կնոջը: Իսկ իրեն խղճացել են թերևս երեխա գրկած լինելու պատճառով⁶⁷:

1919 թ. փետրվարյան դեպքերից հետո շատ հայ երեխաներ, կորցնելով իրենց վստահությունը, պարբերաբար փորձեր են կատարել փախչելու, փաստ, որը ակնհայտ է որբերի թվական տվյալներից. մեկ ամսվա ընթացքում որբերի թիվը նվազել է 125-ով: Որբերի շրջանում վստահությունը վերականգնելու համար Ա. Շիրաճյանը որբանոցում ընդունելություն է կազմակերպել: Շիրաճյանի խնդրանքով Իսախիֆը⁶⁸, ինչպես նշում է Հովակիմ Դիշդիշյանը, ավելի քան հիսուն արաբ պաշտոնյաների ներկայությամբ, որբերին, որոնց թվում է եղել նաև հեղինակը, հավաստիացրել է, որ եղածը չի կարող կրկնվել, քանի որ դեպքը հրահրված էր թուրքական գործակալների կողմից, իսկ արաբները, նախկինում թուրքերի կողմից հավասարաչափ ճնշված լինելով, համակրում են հայերին և խոստանում իրենց ձեռքի տակ եղած միջոցներով օժանդակել հայ գաղթականներին ու որբերին⁶⁹:

Դեպքերից հետո աստիճանաբար որբանոցն անցել է իր ամենօրյա գործունեությանը: Արդեն 1919 թ. նոյեմբերին 15-ին⁷⁰ Հալեպից բրիտանացիների մեկնումով որբանոցի հոգաձությունը փոխանցվել է ֆրանսիական զինվորական իշխանությանը, որի ղեկավար Կլոսքարը նվազագույն միջամտությունն է ցուցաբերել որբանոցի ներքին գործերին:

1919-1920 թթ. տարածաշրջանում քաղաքական իրավիճակը նույնպես իր ազդեցությունն է թողել որբանոցում կատարվող շարժերի վրա: Ադանայի նահանգի կառավարիչ նշանակված գնդապետ Էդուարդ Բրեմոնը, «Սիրիայում ու Հայաստանում ֆրանսիական հանրապետության գերագույն կոմիսար» Ժորժ Պիկոն կոչ էին անում Սիրիայի, Միջագետքի հայ գաղթականներին համախմբվել Կիլիկիայում՝ հայկական պետականություն ստեղծելու նպատակով: Այդ հայտարարությունները հիմք ընդունելով՝ հայ գաղթականների մի ստվար հատված Սիրիայի տարբեր վայրերից հավաք-

66 Արմենակ Կյուրեղյան, «Կեանքս 1915-1918 թուականներին» <http://www.raa-am.com/raa/public/publish.php?clear=1&mid=5&more=1&cont=33&obid=112&content=show>, դիտվել է 02.02.2019:

67 Պոյաճյան, «Հայկական որբանոցի կեանքէն», 417:

68 Հուշագիրը նշում է Իսախիֆ, որն ամենայն հավանականությամբ եղել է Սիրիայի թագավոր Էմիր Ֆեյսալը:

69 Դիշդիշյան, *Դեր-Չոր*, 265-266:

70 1919 թ. նոյեմբերին Սայքս-Պիկոյի համաձայնագրի համաձայն արևմտյան Սիրիայում բրիտանական զորքերը փոխարինվում են ֆրանսիական զորքերով, և նոյեմբերի 21-ին Մերձավոր Արևելքի ֆրանսիական զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Գուրոն նշանակվում Սիրիայի գերագույն կոմիսար:

վում էին Հալեպում, ապա ֆրանսիական կողմի միջոցներով տեղափոխվում էին Կիլիկիա⁷¹:

Որբանոցի տեղեկագրում Ահարոն Շիրաճյանն անդրադառնում է 1919 թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ֆրանսիական բարեխնամ վերաբերմունքին, որի համար շնորհակալություն է հայտնում և նշում, որ ընդհանուր կացությունն ու որբերի ֆիզիկական վիճակը գոհացուցիչ է: Նա նշում է նաև, որ վերջին երեք ամիսների ընթացքում որբերից շատերն իրենց ազգականների, դրացիների հետ, երբեմն էլ ինքնազուլս մեկնել են Կիլիկիա: Այդ ժամանակ որբանոցն ամբողջությամբ Կիլիկիա տեղափոխելու ծրագիր է եղել⁷²:

Երկու ամիսների ընթացում հեռացողների թիվը կազմել է 587 հոգի, մինևույն ժամանակ որբանոց են ընդունվել 330, մահվան երկու դեպք է գրանցվել որբանոցի հիվանդանոցում, որբերի ընդհանուր թիվը կազմել է 1.757, որից 1.012-ը դպրոց են հաճախել, ուր աշխատել են 7 ուսուցիչ և 29 ուսուցչուհի⁷³:

1920 թ. հոկտեմբերի 1-ից եռամսյա շրջանում Հալեպի ամերիկյան նպաստամատույցը ստանձնել է որբանոցի մատակարարումը: Երբ ֆրանսիական իշխանությունների կողմից հատկացված նպաստը ժամանակավորապես դադարեցվել է, Հալեպի ազգային միությունը երեք ամիս տևողությամբ՝ մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ն իր վրա է վերցրել Ամերիկյան նպաստամատույցի փոխառությունը: 1921 թ. հունվարի 1-ին ֆրանսիական իշխանությունը կրկին ստանձնել է որբանոցի հոգածությունը, իսկ Նպաստամատույցը մասնակիորեն է ֆինանսավորել: Այս անգամ Հայ ազգային միությունն իր վրա է վերցրել որբանոցի ողջ վարչական պատասխանատվությունը, կազմվել է վարչական խորհուրդ, որը շարունակել է գործել մինչև 1921 թ. օգոստոսի 31-ը:

1921 թ. օգոստոսին 31-ին ֆրանսիական զինվորական իշխանությունը մեկ տարով կրկին իր պատասխանատվության ներքո է վերցրել որբանոցի ծախսերը: Այս ընթացքում Հայ ազգային միության ջանքերով ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպությունը հոգացել է երկու հազար օսմանյան ոսկի պահանջող բյուջեի մեծ մասը⁷⁴: Հայ ազգային միությունը ընտրել է յոթ անդամներից կազմված որբանոցի վարչական խորհուրդ⁷⁵, որն արժանացել է Ամերիկյան նպաստամատույցի վստահությանն ու հավանությանը: Նա երեք ամիսը մեկ անգամ իր գործունեության ընդարձակ տեղեկագիր է պատրաստել՝ ներկայացնելով Նպաստամատույցի վարչությանը:

Մինչև 1922 թ. օգոստոս որբանոցի տնօրենն էր Ահարոն Վերապատվելին: Այս ընթացքում նրա դեմ դժգոհություններ էին առաջացել, որի արդյունքում Պատվելին հրաժարական է տվել: Դժգոհությունների պատճառները տարբեր էին՝ ֆինանսական

71 Հովհաննես Թովմոզյան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986), 162:

72 *Տեղեկագիր Հայկական որբանոցի*, 10:

73 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի*, 10:

74 Երեցեան, *Որբերու բյուջը*, 12:

75 Վարչական խորհրդի Ատենապետ՝ Ֆիլիպ Հովնանյան, Գ. Արսլանյան, Տիգրան Պեքճիպաշյան, Լևոն Գարազաշյան, Համբարձում Պեպերյան, Հարություն Նալբանդյան և Լուի Հեքիմյան:

հաշվետվությունների ոչ պատշաճ կերպով ներկայացումը, երեխաների փախուստները, որոնք, ճիշտ է, քաղաքական և ընդհանուր հայ գաղթականների տրամադրություններից էին կախված, բայց, այնուամենայնիվ, ստվերում էին Ահարոն Շիրաճյանի գործունեությունը:

Հավելյի «Տարագիր» թերթը, անդրադառնալով հարցին, փորձում է ավելի հավասարակշռված ներկայացնել իրավիճակը և փաստում է, որ իրականացվող ցեղասպանության, ընթացող պատերազմի մթնոլորտում հիմնել որբանոց, կազմակերպել որբանոցի գործերը բարդ էր և քիչ հայեր են կարողացել որբանոցներ հիմնելու նախաձեռնությունը կյանքի կոչել: Ինչ վերաբերում է Հավելյի հայկական որբանոցի ծախսերն ու հոգածությունը ստանձնած այս մի քանի հայերին՝ անկախ նրանց թույլ տված բացթողումների, պետք է գովեստով խոսել նրանց մասին. «Հավածանքի ծանօթ շրջանին մեջ բացառիկ թուով հայ արին կրող անհատներ կառավարեր են որբանոցը, քանի մը հարիւր որբեր ազատեր են ստոյգ մահէն յանձներ են ազգին: Ասոնք ահա անժխտելիօրէն բարոյական իրատունք, շնորհակալութեան և երախտագիտութեան են արժանի»⁷⁶:

Թերթի հրապարակման մեջ անդրադարձ է արվում որբանոցի բյուջեին և նշվում, որ վերջինիս մասին հստակ պատկերացումներ չկան, հայտնի է միայն, որ որբանոցին դրամական աջակցություն են ցուցաբերել ամերիկյան հյուպատոս Ջեսի Ջեքսոնը, դոկտոր Ֆիշերը, Զոլինկերը, իսկ թե ովքեր ինչ չափի գումարներ են ուղարկել, ինչ պարբերականությամբ և ում անունով, հստակ չէ: Արտաքին ֆինանսական աղբյուրներից բացի եղել են նաև ներքին աղբյուրներ՝ իբրև բարերարների ամսավճարներ և մասնավոր անհատների միանվագ գումարներ: Այս հարցադրումներին ի պատասխան՝ Ահարոն Շիրաճյանը խոստացել էր որբանոցի հաշիվները հրապարակել, որը հատուկ ստուգող խորհրդի կողմից մամուլի միջոցով պետք է հանրությանը ներկայացվեր: 1922 թ. Ասատուր Ալթունյանը հողված է տպագրել «Սուրիական մամուլ»-ում, որտեղ կրկին պահանջել է Պատվելիի նկատմամբ տիրող դժգոհություններին վերջ տալու համար երեք հարանվանական եկեղեցիների ղեկավարներից խորհուրդ ստեղծել և գործը քննել⁷⁷: Նշենք, սակայն, որ հաշվետվությունների մանրամասներն այդպես էլ Ահարոն Շիրաճյանը չի ներկայացրել⁷⁸:

Որբանոցի մատակարարման բաժինն ունեցել է բարդ կառուցվածք, բաժանումները կառարվել են ժամանակի պահանջներին համապատասխան: Կառավարման ողջ գործը կենտրոնացված է եղել տնօրենի կողմից: Այս է պատճառը, որ հասարակության որոշ շրջաններում դժգոհությունները միգուցե և հիմնավոր էին՝ հաշվի առնելով, որ ամեն պարագայում, մարդը, որքան էլ արտասովոր ուժերով օժտված լիներ, անկարող էր այդ ամենը հասցնել, կանոնավոր և արդյունավետ կառավարել՝ գնումներից մինչև ներքին կարգադրություններ ու հսկողության իրականացում, իսկ օգնականներ չունենալու փաստը Վերապատվելիի օգտին չէր խոսում, ինչպես և նշում է հողվածագիրը.

76 Սպերցի, «Որբանոցը. Բ», *Տարագիր*, Ա տարի, 22 դեկտեմբերի 1918, թիվ 5:

77 Ասատուր Ալթունեան, «Նամակ խմբագրութեան», «Սուրիական մամուլ», 17 սեպտեմբերի 1922, no. 64:

78 «Հարցումներ պատկանեալ իշխանութեան», «Սուրիական մամուլ», 12 նոյեմբերի 1922, թիվ 80:

«Սա մոռացություն, գանցառություն, թե անվստահություն էր ուրիշ մարդոց, բարեխղճություն և կարողութեան մասին կամ այլ նկատառումներ կային, բացատրութեան կարօտ պարագայ մէ՛ջ»⁷⁹:

Հողվածի երրորդ մասում հողվածագիրը գրում է, որ որբանոցի նյութական կատարելության մասին գնահատական տալը դժվար է, եթե չասենք պատասխանատու, բայց կան գնահատումներ և քննադատություններ⁸⁰, որոնք ուսումնասիրման կարիք ունեն և եզրակացնում է. «Ամեն դեպքում տիրող իրավիճակն «գանցառելի պ չէ»⁸¹:

Ինչ վերաբերում է որբերի փախուստին՝ նշենք, որ ըստ հողվածագրի, շատ որբեր ու աղջիկներ, քաջատեղյակ լինելով որբանոցից դուրս տիրող ծանր վիճակին, ամեն դեպքում գերադասում են դրսի անապաստան, մերկ ու քաղցած կյանքը, ուստի հողվածագիրը կոչ է անում նաև խնամքով, սեփական ընտանեկան հարկի նման միջավայր ստեղծել որբանոցում, որպեսզի նման դեպքերն այլևս չկրկնվեն:

Ամփոփելով նշվում է, որ որբանոցն ունի թերություններ, որոնց պարզաբանումը պահանջում է լրացուցիչ փաստեր: Նշվում է, որ 1918 թ. դեկտեմբերի դրությամբ ամեն հնարավորություն կա, գոյություն ունի սահմանված բյուջե, որբերի թվի սահմանափակում չկա, որբանոցի ղեկավարությանը հանձնարարված է ընդունել բոլոր «ճշմարիտ որբերին», և ղեկավարությունը պետք է արդյունավետ գործի, որպեսզի բաց ճակատով կարողանան դիմագրավել յուրաքանչյուր քննադատության:

Հալեայի հայկական շրջանակներում որոշ դժգոհությունների առիթ է դարձել որբանոցի ամանորյա միջոցառումը: «Հայ Ձայն» թերթն իր հունվարյան համարներում անդրադարձել է այդ թեմային և նշել, որ միջոցառումը ոչ պատշաճ ձևով էր կազմակերպվել: Միջոցառմանը ներկայացուցչական հյուրեր են եղել՝ Հալեայի ընդհանուր կառավարիչ Շուքրի Ալ-Այուբին, բանակի հրամանատար Մաք Էնդրյուն, Ժորժ Պիկոն, Մարկ Սալքսը, եգիպտահայ պատվիրակ Ռուբեն Հեյրյանը: Նորա Ալթունյանի հրավերով միջոցառմանը մասնակցել են նաև Հալեայի առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Եսայանը հինգ քահանաների հետ, ովքեր սառն ընդունելություն ստանալով, չեն մնացել մինչև միջոցառման ավարտը⁸²:

Միքայել Նաթանյանն իր հողվածում քննադատել է, մասնավորապես, որբանոցում թուրքերենով հաղորդակցվելու փաստը՝ նման գործելաոճը որակելով որպես «Հայ լեզուին մարտիրոսացում»⁸³: Թերևս պետք է հակադրվենք այս փաստին՝ նշելով, որ որբերն իրենց հուշագրություններում նշում են հայերեն լեզվով հաղորդակցվելու փաստը: Անդրանիկ Ծառուկյանը, Արմենակ Կյուրեղյանը նշում են, որ որբանոցում որբերն աստիճանաբար վերհիշում էին հայերենը: Որբանոցի հիմնադրման ժամանակներից ևեթ դաստիարակության հայեցի ուղղվածության փաստն ընդգծում է նաև որբանոցի հաջորդ տնօրեն Ատուր Լևոնյանը, որին կանդրադատանք ավելի

79 Սպերցի, «Որբանոցը. Բ», *Տարագիր*, Ա տարի, 22 դեկտեմբերի 1918, թիվ 5:

80 Սպերցի, «Որբանոցը. Գ», *Տարագիր*, Ա տարի, 27 դեկտեմբերի 1918, թիվ 7:

81 Նույն տեղում:

82 «Ամանորի հանդես որբանոցի մէջ», *Հայ Ձայն* (Հալեայ), Ա տարի, թիվ 49, 9 հունվարի 1919:

83 Նույն տեղում:

ուշ: Բացի այդ՝ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մինչև 1918 թ. հոկտեմբեր ամիսը Հալեպը վերահսկվում էր թուրքական իշխանությունների կողմից: Այս կապակցությամբ հարկ է նշել. «Պատվելի Շիրաճեանի բոլոր ճիգերը՝ հայերենով դասավանդում մտցնելու որբանոցին մէջ բախեցան երիտթուրք իշխանություններու վճռական արգելքին. բացայայտ էր, որ տեղական իշխանութիւններու հանդուրժողականութիւնը, այս պարագային հասած էր իր ծայրագոյն սահմանին»⁸⁴:

Միջոցառման մասին Մ. Նաթանյանը գրում է. «Հոգ չէ, թէ առանց յայտագրի հանդէսը շատ տափակ ու անհաճ ըլլալէն զատ, հակամանկավարժական էր ու երբեք շինիչ ու ազնուացուցիչ հանգամանք չունէր: Հայերէն արտասանութիւնները ու երգերը բոլորն ալ աղճատուած ու օտարաբոյր, քիչ տեղ կը գրաւէին ... աւաղ, այդ հայ որբերուն հոգին կը խամրի ու կը մեռնի»⁸⁵:

Միջոցառման ավարտին ելոյթ է ունեցել Շուքրի Ալ-Այուբին, ով փաստել է, որ արարներն ու հայերը եղբայրներ են, ու արաբ կառավարությունը պիտի որբանոցի ծախսերը հոգա: Միջոցառումը «հայացնող» անձը Ռուբեն Հերյանն է եղել, ով երեխաներին դիմել է «մեր վաղուայ յոյսերը» և հորդորել ու կոչ է արել ներկաներին՝ պահպանելու հայ ինքնությունը⁸⁶:

Ուշագրավ է ամանորյա օրերին Երվանդ Օտյանի այցը որբանոց, որի մասին երեխաներին նախօրոք տեղեկացրել են. «Հյուրը նշանավոր մեկն է, շատ մը գիրքեր գրած է և միշտ կը խնդա ու կը խնդացնէ»⁸⁷: Սակայն որբերն այդ ժամանակ չեն հիշել ու չեն իմացել Երվանդ Օտյանի ով լինելը: Միջոցառմանը գրողը մեծ դժվարությամբ է փորձել ողջույնով դիմել որբերին, սակայն խիստ հուզվել է և միայն մի նախադասություն է արտաբերել. «Որբե՛ր, ես ձեզ շատ կսիրեմ»: Տարիներ հետո Անդրանիկ Ծառուկյանը, իր նախակրթարանի դասագրքում տեսնելով Օտյանի նկարը, հիշել է նշանավոր հավաքի օրը, իրենց հավաքական ողբը, իսկ ավելի ուշ, ծանոթանալով գրողի աշխատություններին, ըմբռնել է. «... տասնյակներով գրքերու հեղինակ գրագետն ինչու երկու խոսք չէր գտած մեզի ըսելիք»⁸⁸: Ամեն դեպքում կարելի է Ռ. Հերյանի, Ե. Օտյանի նման հայրենասեր ու ազգանվեր մարդկանց այցերից անգամ ենթադրել, որ որբանոցում հայեցի դաստիարակությունը կարևոր նշանակություն ուներ:

Շիրաճյանի նկատմամբ անհարկի դժգոհությունները հետագա տարիներին աստիճանաբար խորանում են, և Վերապատվելին հրաժարվում է պաշտոնից: Նրա հրաժարականից⁸⁹ հետո Հայ ազգային միություն կազմակերպության խորհրդակցությամբ

84 Դար մը պարմութիւն, 66:

85 Դէտ, «Որբանոցին մէջ հանդէս մը», *Հայ Չայն*, Ա տարի, թիվ 48, 8 հունվարի 1919:

86 Միքայէլ Նաթանեան, «Որբերու աշխարհէն. Հայ լեզուի մարտիրոսութիւնը», *Հայ Չայն*, № 47, 7 հունվարի 1919:

87 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 47:

88 Նույն տեղում, 52:

89 Վերապատվելի Շիրաճյանը հետագայում՝ 1930-ական թվականներին, հիմնել է ապաստարան հարեմներից վերադարձող հայ կանանց համար: Տաթևեան, «Հալեպի հայկական որբանոցը», 386:

Ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունը 1922 թ. օգոստոսին որբանոցի տնօրեն է ընտրում Ատուր Լևոնյանին⁹⁰:

Ստորև ներկայացվում են որբանոցի որբերի թվական տվյալները գործունեության վերջին ընթացքում.

Օգոստոս 1922 թ.	1.150
Դեկտեմբեր 1922 թ.	1.164
Հուլիս 1923 թ.	900

Ատուր Լևոնյանի պաշտոնավարման առաջին տարում՝ 1922 թ., որբանոցում եղել են 1150 որբ, որից 670 աղջիկ՝ 4-18 տարեկան և նույն տարիքային խմբի 470 տղա⁹¹: Նշենք, որ այդ որբերը եղել են 121 քաղաքներից ու գյուղերից, մոտավորապես 300 խարբերդոցի, 300 սեբաստացի, 175 տիգրանակերտցի և 140 կարինցի որբեր⁹²:

Համաձայն Հայ ազգային պատվիրակության 1923 թ. հուլիսի 1-ով թվագրված «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացության, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագրի՝ 1922 թ. դեկտեմբերի դրությամբ Հալեպի հայկական որբանոցում եղել է 1.164 երեխա⁹³:

Վերջիններս բաժանված էին հետևյալ տարիքային բաժանումներով՝ 1-5 տարեկան՝ 45 որբ, 6-10 տարեկան՝ 220, 11-12 տարեկան՝ 470, 13-15 տարեկան՝ 367, 16-17 տարեկան՝ 65 որբ, որոնցից 114-ը կույր էին: Համաձայն նույն տեղեկագրի՝ 1922 թ. դրությամբ 170 չափահաս որբեր դերձակություն, կոշկակարություն, վարորդություն էին սովորում, իսկ աղջիկներն էլ ասեղնագործությամբ էին զբաղվում: 1921թ. հոկտեմբերից գործող Կիլիկյան որբանոց-արհեստանոցում⁹⁴ արհեստ էին սովորում 97 որբ⁹⁵:

Ատուր Լևոնյանի կառավարման սկզբնական ժամանակաշրջանում որբանոցը կյուրթական լուրջ խնդիրներ չի ունեցել, հիմնականում ներքին բարեկարգման աշխատանքներ են իրականացվել, որբերի հարանվանականության հարցը մնացել է նախկինի պես, յուրաքանչյուր որբ, իր ուսուցչի հետ կիրակի օրերին գնացել է իր եկեղեցին: Սարգիս Լալայանն իր «Յուշամատենան նուիրոծ Ատուր Յ. Լեւոնեանի» աշխատության մեջ գրում է. «Տարիներ առաջ սկսած որբախնամ այս գործը երկու տարուան կարճ ժամա-

90 Ատուր Լևոնյանը որպես պահեստային սպա ծառայել էր Սուեզի հարձակմանը, անգլիական բանակում: 1920 թ. եղել էր Այնթափի ինքնապաշտպանության ղեկավարներից, զինվորական հրամանատար:

91 Լալեան, *Յուշամատենան*, 207:

92 Նույն տեղում, 210:

93 Սույն ձեռագիր-տեղեկագիրը մեզ է տրամադրել ՀՅԹԻ հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժին վարիչ, աղբյուրագետ Միհրան Մինասեանը, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան:

94 Արհեստանոց ստեղծելու գաղափարը Վահան Քյուրքճյանին էր, ով ՀԲԸՄ վարչության Սիրիայի և Կիլիկիայի պատվիրակն էր: Ըստ ծրագրի ամեն տարի 15-ը լրացրած հարյուր որբ այստեղ արհեստ էին սովորում:

95 «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացության, որբանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր, 1923 թ.:

նակին մը ընթացքին Լեոնեանը այնպիսի կատարելութեան ու նախանձելի դիրքի մը հասցոց որ ոչ թէ միայն Հայոց, այլ Ֆրանսական կառավարութեան բարձրագոյն ներկայացուցիչներուն ալ հիացման ու գնահատանքին արժանացաւ»⁹⁶:

1922 թ. օգոստոսին «Սուրիական Մամուլ» թերթում հոդված է տպագրվում, որտեղ հոդվածագիրը որբանոցի հետագա գործունեության ֆինանսական հարցերի համար իր մտահոգությունն է հայտնում՝ նշելով, որ անցումային շրջան է, շարունակվում են ավելանալ անապատներից որբանոց հասնող հայերի թիվը՝ հաշվի առնելով Կիլիկիայի վերջնական հայաթափումն ու այն փաստը, որ ֆրանսիական գործողությունների հետևանքով Հալեպից Գեր Զոր, Մոսուլ և Բաղդադ փակ ճանապարհներն արդեն բաց էին⁹⁷: Ուստի թերթի խմբագրությունը ևս մեկ անգամ կոչ է անում. «... ներկայիս տխուր է իրականությունը, եւ ալ անլի եղերական պիտի ըլլայ եթէ մենք ալ ազգովին ներկայ նպաստաւոր վարկեանին մեր բոլոր տրամադրելի ոյժերը չմիացնենք որբերու ազատագրութեան կենսական խնդրոյն շուրջ»⁹⁸:

Որբերի ու որբանոցի վրա բոլոր հայկական բարեգործական ու հայրենակցական միությունների ուշադրությունն է հրավիրում Հալեպում Բոստոնի «Ազգ-Պահակ» թերթի թղթակից Նշան Կ. Տեր-Պետրոսյանն իր «Հայկական որբանոցը Հալեպի մէջ» հոդվածում⁹⁹:

Որոշ բնագավառներում Ատուր Լևոնյանը բարեփոխումներ է իրականացնում: Առաջին հերթին ականատեսների վկայությամբ նկատելի էր որբերի հոգեբանական վստահությունը, որոնք կարողացել էին հաղթահարել ցեղասպանությունը վերապրածի վախը. «Լեոնեան այնպիսի խանդ ու եռանդ ներշնչեց անոնցմէ իւրաքանչիւրին որ իրենք զիրենք սկսան նկատել Հայ ազգին ապագայի յոյսը, եւ սկսան քալել հասակնին ուղիղ, կուրծք ու գլուխ բարձր բռնած»¹⁰⁰:

Կարևոր առաջընթաց էր որբանոցում մարզական կյանքի ակտիվացումը: Անդրանիկ Ծառուկյանն այս կապակցությամբ գրում է. «...թաղին մեջ շինվեցավ մարզաբան մը, մեծ տղաքը ֆուտբոլ ոնեցան և բոլորս միասին ոնեցանք պարոն Լևոնը»¹⁰¹: Վերջինս մարզիչ էր, ու մարմնամարզությունը որբանոցի ծրագրի անբաժան մասն է դարձրել:

Կրթական ոլորտում դասընթացները նախկինի նման շարունակվել են: Նշան Կ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ որբանոցում երեխաները սովորում էին հայերեն, անգլերեն և ֆրանսերեն՝ հավելելով. «Մէկ-երկու դասարաններու Ազգային պատմութեան դասաւանդութեան հանդիպեցայ, չէ կարելի հիացումս չի յայտնել այդ առթիւ»¹⁰²:

96 Լալեան, *Յուշանկարեան*, 199:

97 «Հալեպի հայկական որբանոցը», *Սուրիական մամուլ* (Հալեպ), 17 օգոստոսի 1922, Ա տարի, թիվ 55:

98 Նույն տեղում:

99 Լալեան, *Յուշանկարեան*, 206-210:

100 Նույն տեղում, 199:

101 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 119:

102 Լալեան, *Յուշանկարեան*, 207:

1923 թ. դրությամբ 900 երեխաներից 614-ը կանոնավոր կերպով դպրոց են հաճախել՝ հետևյալ բաժանումով¹⁰³՝

Նախակրթարան	130 տղա	150 աղջիկ
Ծաղկոց	191 տղա	93 աղջիկ
Մանկապարտեզ	25 տղա	25 աղջիկ

Ատուր Լևոնյանն իր «Հալեյի Հայկական Որբանոցը» տեղեկագրում գրում է. «Որբանոցիս սաներն ու սանուհիները առաջին օրէն սկսեալ շարունակ դաստիարակուած են իբր հարազատ Հայեր, հայ տոհմային կրթութեամբ»¹⁰⁴:

Որբերի գրագիտության մակարդակը բարձրացնելու համար որբանոցում գրադարան է բացվել ամերիկացի հիվանդապահուհի Նորթոնի ջանքերով, ով սեփական նախաձեռնությամբ գրքեր էր հավաքում, ինչպես նաև առաջարկում էր որբանոց այցելողներին մեկական գիրք նվիրել¹⁰⁵:

Որբանոցի ղեկավարությունը կարևորություն է տվել նաև երաժշտության դասերին: Ազգային վարժարանների երաժշտության ուսուցիչ Գևորգ Նալբանդյանի ջանքերի շնորհիվ նվագախումբ է ստեղծվել, որը ողջ քաղաքով հարգանք է վայելել: Որբանոցն ունեցել է նաև կույրերի նվագախումբ, ինչպես նաև 80 հոգանոց քառաձայն երգչախումբ՝ Ազնիվ Մանուկյանի ղլխավորությամբ: Երգչախմբի կատարմամբ «Սոնա Յար» երգը հիացրել է 1923 թ. որբանոց այցելած Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիական Հանրապետության Բարձրագույն կոմիսար Վեյգանին, ով, լսելով կատարումը, խնդրել է այն ևս մեկ անգամ կրկնել¹⁰⁶: Մի քանի օր անց որբանոցի ղեկավարությունը կոմիսարից նամակ է ստացել, որտեղ նշված է եղել. «Լիբանանի և Սուրիոյ մէջ չեն յիշեր տեղ մը ուր այցելած եւ այդքան տպատրուած ու գոհ մնացած ըլլամ որքան ձեր Հայկական որբանոցին մէջ»¹⁰⁷:

1922-1924 թթ. ընթացքում որբանոցում որպես գիշերօթիկ վարժարանի ուսուցիչ Արամ Շարվիղյանի հետ պաշտոնավարած Հովակիմ Պազալեանը պետք է պատրաստեր որբերի կենսագրություններն ու թղթածրարները¹⁰⁸, սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել որևէ տեղեկություն այս նախաձեռնության կյանքի կոչման վերաբերյալ:

Որբանոցի նյութական բարեկեցության շրջանը երկար չի տևել, Ամերիկյան նպաստամատուցի նյութական օժաղակությունն աստիճանաբար նվազել է, այնուհետև՝ դադարել: 1923 թ. վերջին Ամերիկյան նպաստամատուցի ղեկավարությունից ներքին հրահանգ է եղել, ըստ որի՝ որբերին տեղավորեն տներում՝ իբրև սպասուհի, արհեստա-

103 Սուրիական փարեցոյց, Ա տարի (Գահիրէ, Զարեհ Պէրպլերեան, 1924), 57-58:

104 Սուրիական փարեցոյց, 57:

105 Լալէեան, Յուշամարեան, 209:

106 Նույն տեղում, 201-202:

107 Նույն տեղում:

108 Տաթևեան, «Հալեյի հայկական որբանոցը», 38:

նոցներում՝ իբրև աշակերտ, իսկ ավելի մեծահասակներն էլ մեկնեն տարբեր երկրներ: Այս հրահանգին Աստուր Լևոնյանն ընդդիմացել է՝ առաջարկելով որբանոցի խնամատարությունը հանձնել ազգային մարմիններին՝ հույս ունենալով արհեստանոցի եկամուտներով և հայ բարերարների նպաստներով շարունակել որբանոցի գործունեությունը, որին էլ Նպաստամատույցը չի համաձայնել, անգամ որպես փոխզիջումային տարբերակ առաջարկել են Լևոնյանին Բեյրութի իրենց հաստատություններից մեկում պաշտոն տալ:

Բանակցությունները տևում են ամիսներ: Դեպքերի մանրամասներին տեղեկանում ենք Տեր Ներսես քահանա Թավուզճյանի՝ Ջունեյիի իր կարգակից եղբորը՝ Տեր Գարեգին քահանա Պողարյանին գրած նամակից՝ թվագրված 7 հունիս 1924 թ.: Նա տեղեկացնում է, որ Նպաստամատույցի նպատակն է պահել արհեստանոցը, իսկ դպրոցը տեղափոխել Ջիրեյլ (Բիրլիոս): Բացի այդ՝ նշենք, որ ներքին տարածայնություններ էին առաջ եկել Լևոնյանի և Նպաստամատույցի պատասխանատու աշխատակից Մըրֆիի մեջ: Վերջինիս ավարտական քննության օրը պահանջել էր որբանոցի 15 աղջիկների՝ արաբ ընտանիքներում որպես սպասուհի աշխատանքի տեղավորել, իսկ ավելի ուշ առաջարկել, որ աշխատանոցի տղաներից շատերը լքեն արհեստանոցը: Երկու պահանջներն էլ հիմնավոր պատճառներով մերժվել էին, սակայն ի վերջո Աստուր Լևոնյանը հրաժարական է տվել, իսկ նրա փոխարեն պարտականությունները ստանձնել է որբանոցի հոգաբարձության անդամ Տիգրան Պեքճիպաշյանը¹⁰⁹: Այս ընթացում Ա. Լևոնյանը դիմել է Կիլիկիո Տան Սահակ Բ կաթողիկոսին, ՀԲԸՄ-ին, Հալեպի առաջնորդարանին՝ խոստանալով առկա եկամուտներով և գործերով պահել որբանոցը ևս երկու տարի, բայց դրական արդյունքի չի հասել:

Որբերի մի մասը տեղափոխվել են Նպաստամատույցի Լիբանանի կենտրոններ՝ մասնավորապես Ջիրեյլ: Ամերիկյան նպաստամատույցի վարչության և ՀԲԸՄ-ի համատեղ որոշմամբ՝ որբերի մի մասը մեկնել է Ֆրանսիա՝ ազարակներում աշխատելու համար: Որբերի անվտանգության և աշխատանքով ապահովելու հարցում Գաբրիել Նուրատունկյանը¹¹⁰ կարողացել էր Ֆրանսիայի հողային նախարարության հետ պայմանավորվածություն ձեռք բերել: Աղջիկների մեծ մասը Հալեպում և Բեյրութում որպես սպասուհի է սկսել աշխատել: Սակայն նշենք, որ այնուամենայնիվ, եղել են որբեր, որոնք որևէ հարազատ չեն ունեցել: Այս խմբի որբերից տարիքով մեծ՝ մոտավորապես 50 հոգի, տեղափոխվել են ՀԲԸՄ Հալեպի Կիլիկյան արհեստանոց-որբանոց¹¹¹:

Որբանոցի գործունեության վերջին շրջանում կարևոր դեր է ունեցել Նպաստամատույցի տնօրենի օգնական Լուի Հեքիմյանը¹¹², ով որբանոցի կարիքների համար ջանք չի խնայել ու զբաղվել է որբերի տեղավորման աշխատանքներով:

109 Լալեան, *Յուշանկարեան*, 219:

110 Գաբրիել Նուրատունկյանը Հայ ազգային պատվիրակության նախագահն էր (մայիս 1921-1923) և ՀԲԸՄ փոխնախագահը (1921-1932):

111 *Դար մը պայրմութիւն*, 151:

112 Հազարապետ Լուի Հեքիմյանը Եգիպտոսում անգլիական բանակում կարևոր պաշտոն է ունեցել: 1918 թ. Պորտ Սաիդում նա տեղի հայությանը աջակցել է, մասնակցել է նաև որբերի մի կայանից մյուսը փոխադրելու աշխատանքներին: Մասնակցել է նաև Այնթափի 1920-1921 թթ. ինքնապաշտպանության մարտերին:

Որբանոցի գործունեությունը դադարեցվել է 1924 թ. ամռանը, երբ բոլոր որբերը հիմնականում հարազատ, օգնող ձեռք են գտել կամ արդեն կարողացել են իրենց աշխատանքով օրվա ապրուստը հայթայթել:

Մինչ այժմ Սաբուն Խանի և որբանոցի այլ շենքերից շատերի վրա նշմարվում են հայ որբերի հետքերը՝ անուն ազգանունները՝ փորագրված իրենց «դողդոջուն մատներով»¹¹³: Նշենք, որ որբանոցի սաներից է եղել նաև հայտնի նկարիչ Կալենցը, ում Անդրանիկ Ծառուկյանը հետևյալ կերպ է բնութագրում. «Հարությունը կը հաջողեր զարմանալի նմանություն մը տալ իր գծած պատկերներուն: Գծագրությունը դարձած էր առօրյա իր միակ զբաղումը: Տասը տարեկանին հայտնի էր արդեն, թե ուժեղ բան մը կը խլրտի իր մեջ»¹¹⁴:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ որբանոցը վստահելի ապաստան է եղել որբերի համար: Այն գործել է մեր ժողովրդի համար օրհասական ժամանակահատվածում՝ իր գործունեությունն անընդմեջ շարունակելով գրեթե տասը տարի. փաստ, որ քիչ որբանոցների է հաջողվել: Իր գործունեության ընթացքում որբանոցն ընդունել է շուրջ 8.000 որբի, որոնցից 4.000-ը դուրս են եկել որբանոցից երկարատև կամ կարճատև մնալուց հետո: Միայն 1924 թ. 450 աղջիկներ ամուսնացել են ու հայ ընտանիքներ կազմել: Որբանոցի գործունեության տարիներին նշանակալի մեծ դեր է ունեցել Վերապատվելի Շիրաճյանը: Ինդրո առարկա ժամանակահատվածում տարբեր առիթներով որբանոցը փակելու բազմաթիվ փորձեր են արվել, մի քանի անգամ Պատվելի Շիրաճյանը փնտրվել է իբրև «վտանգավոր տարր», բանտարկվել ու աքսորի սպառնալիքներ ստացել: Այնուամենայնիվ, հարկ է մեջբերել Պատվելիի գործընկեր, աջակից բժիշկ Հովհաննես Պողոսյանի խոսքերը, որը նշում է, որ շատերը ձաղկեցին ու քննադատեցին Վեր. Շիրաճյանի որբախնամ գործը հայաջինջ շրջանում, սակայն նրանցից շատերը ոչ միայն թաքստոցներում էին և չէին համարձակվում որբեր հավաքել, այլև վախենում էին անգամ դուրս գալ իրենց թաքստոցներից¹¹⁵: Ահարոն Շիրաճյանը հաջորդ ղեկավարությանը փոխանցեց կայացած, ներքին վարչական ստորաբաժանումներով գործող, համեմատաբար առողջ միջավայրում որբերին կրթություն ու ապագայի համար կայունություն ապահովող հաստատություն: Հաջորդ ղեկավարությունն էլ Ատուր Լևոնյանի գլխավորությամբ հնարավոր քայլերը ձեռնարկեց որբանոցի հետագա գործունեության ու որբերի վերջնական տեղավորման հարցերում: Որբանոցը մինչև վերջ հավատարիմ է մնացել իր կոչմանը՝ որբերին պատրաստել գործնական կյանքին, որպեսզի որբանոցից դուրս գալուց հետո կարողանային ապրել սեփական միջոցներով:

113 Մինասեան, «Մանկութիւն չունեցողներուն», 23:

114 Ծառուկյան, *Մանկություն չունեցող*, 84:

115 Պողոսեան, «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը», 414:

Narine V. Margaryan

PhD in History

THE ARMENIAN ORPHANAGE OF ALEPPO (1915-1924)

Key words: Armenian Genocide, deportations, Aleppo, orphans, orphanage, workshops, education, relief, survival, Aharon Shirachyan, Atur Levonyan, memoirs.

During and after the Armenian Genocide many Armenian benevolent, missionary orphanages were opened in different places of the Ottoman Empire to save the remnants of the Armenian people. The Aleppo orphanage has a unique place in the chain of these orphanages. It was one of the few established by the Armenian initiative during the Genocide and continued its uninterrupted activities till 1924.

The paper describes the activities of the orphanage, numbers of orphans, details of educational, financial, healthcare and manufactory spheres. The activities of the caretaker bodies as well as the problems of the orphanage and the ways of their settlement are analyzed. The paper also deals with the political situation of the region, which has had a direct impact on the orphanage. The main sources of the paper are the Bulletin published by the orphanage, the Bulletin prepared by the Armenian National Delegation as well as the memoirs of the orphans and periodicals.

Нарине В. Маргарян

кандидат исторических наук

АРМЯНСКИЙ СИРОТСКИЙ ПРИЮТ АЛЕППО (1915-1924)

Ключевые слова: Геноцид армян, депортация, Алеппо, сироты, сиротский приют, мастерская, образование, вспомоществование, спасение, Аарон Шираджян, Атур Левонян, мемуары.

В годы Геноцида армян и после в различных городах Османской империи с целью спасения оставшихся осколков армянского народа были открыты многочисленные армянские благотворительные миссионерские сиротские приюты. Из подобного рода заведений можно выделить армянский сиротский приют в Алеппо. Особенностью данного приюта являлось то, что он был основан по инициативе самих армян еще в то время, когда процесс уничтожения армянского населения Османской империи был в самом разгаре, и бесперебойно функционировал до 1924 года.

В статье представлены основные аспекты деятельности сиротского приюта: сведения о численности сирот, подробности организации образовательного процесса, финансировании, мерах по обеспечению здоровья и организации мастерских, а также проблемы, с которыми сталкивалось заведение, и меры по их решению.

В статье также освещены события региональной политики рассматриваемого времени, которые имели непосредственное влияние на деятельность сиротского приюта.

Основными первоисточниками для написания статьи послужили бюллетень сиротского приюта, бюллетень, подготовленный Армянской национальной делегацией, а также мемуары воспитанников сиротского приюта и периодика времен событий.

REFERENCES

Aharonyan, Ver Y. P. Վեր. Ա. Շիրաճեան՝ քաջ սասշնորդը [Rev. A. Shiradzian: The Brave Leader], *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Alt'uncan, Asatur, «Նամակ խմբագրութեան» [A Letter to Editorial Board], *Suriakan mamul* (Aleppo), 17 September, 1922, no. 64;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթոնյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12;

Ch'olaqean, Yakob. «Հայ վերապրողներու տեղաբաշխումը եւ կրթական գործի կազմակերպումն ու դպրոցները Սուրիոյ մէջ (1918-1946)» [The Settlement of the Armenian Survivors and the Organization of the Education and Schools in Syria] in *Armenians of Syria, Conference Proceedings*. Aleppo: HU PESS, 2018: 261-304;

Det, «Որբանոցի մէջ հանդէս մը» [A party in the Orphanage]. *Hay Dzayn* (Aleppo), 8 January, 1919, no. 48;

Erets'yan, Tigran. *Որբերու բոնար 1915-1921* [The Orphans' Nest, 1915-1921]. Aleppo: Ani, A. E'qmeqchean, Salipe, 1934;

Khrlobean, Rev. Tigran. «Այնպէս ինչպէս կը ճանչնամ Վեր. Ահարոն Շիրաճեանը» [How I know Rev. Aharon Shiradzian]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Kyureghyan, Armenak. *Կեանքս 1915-1918 թուականներին* [My Life in 1915-1918]. <http://www.raa-am.com/raa/public/publish.php?clear=1&mid=5&more=1&cont=33&obid=112&content=show>;

Lale'ean, Sargis. *Յուշանկարեան նուիրուած Ատուր Յ. Լեւոնեանի: Բնքնակենսագրութիւն եւ դրուագներ իր կեանքէն ու գործէն* [Memoires Devoted to Atur Y. Levonyan: Autobiography and Episodes from His Life and Activities]. Beirut: Atlas, 1967;

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրութեան պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Margaryan, Narine. *Հայոց ցեղասպանութեան հետեւանքով Սիրիայում հաստատուած հայ տարագիրներին կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները 1915-1924 թթ.* [The Status of the Armenian Refugees Established in Syria as a Result of the Armenian Genocide and the Armenian-Arab Relations in 1915-1924]. Yerevan: Collage, 2013;

Minasean, Mihran. ««Մանկութիւն չունեցողներուն» տաքով բոնար՝ Հալէպի հայկական որբանոցը» [The Warm Nest of Children without a Childhood: the Armenian Orphanage in Aleppo]. *Shavigh* (Aleppo), 1999, no. 1;

Najaryan, Eghia. «Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում (1918 հոկտեմբեր – 1919 հունիս)» [Armenian-Arab Relations in Syria (October 1918 – June 1919)]. *Merdzavor ev Mijin Arevelqi erkrner u zhoghovurdner*, 6 (1976): 128-169;

Nat'anean, Miqael. «Որբերու աշխարհէն, Հայ լեզուի մարտիրոսութիւնը» [From the world of the orphan: Martyrdom of Armenian Language]. *Hay Dzayn* (Aleppo), 7 January, 1919, no. 47;

Poghosean, Toqt'. «Հիմնադիրը ազգային մեծ ձեռնարկի մը» [The Founder of the Great National Initiative]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Poyachean, Elmas. «Հայկական որբանոցի կեանքէն» [From the Life of the Armenian Orphanage]. *Janasér* (Beirut), 1 October, 1964;

Sharvoghlean, Aram. «Կարգ մը թուանշաններ որբանոցի կեանքէն», [Some Data on the Orphanage Life]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Shirach'ean, Aharon. «Վեր. Շիրաճեանի Գործակիցները» [Rev. Shirachian Partners]. *Janasér* (Beirut), 1 October, 1964, no. 19;

Sperts'i. «Որբանոցը. Ա» [The Orphanage: A]. *Taragir* (Aleppo), 18 December, 1918, no. 4;

Sperts'i. «Որբանոցը. Բ» [The Orphanage: B]. *Taragir* (Aleppo), 18 December, 1918, no. 5;

T'op'uzyan, Hovhannes. *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն* [The History of Syrian and Lebanese Armenian Communities]. Yerevan: Academy of Sciences of Arm. SSR, 1986;

Tat'evan, Bakur. «Հալէպի հայկական որբանոցը» [Armenian Orphanage in Aleppo]. *Geghard, Suriahay taregirq* 2 (1976-1978): 376-387;

Tsarukyan, Andranik. *Մանկություն չունեցող մարդիկ* [People Without a Childhood]. Yerevan: Haypethrat, 1963;

Kevorkian, Raymond and Tachjian, Vahe (eds.). *Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, 1906-1940* [A Century History of the Armenian General Benevolent Union, 1906-1940]. Cairo, Paris-New York: Impression, Brochage, 2006;

«Ամանորի հանդէս որբանոցի մէջ» [New Year Party in the Orphanage]. *Hay Dzayn* (Aleppo) 9 January, 1919, no. 49;

«Այժմու հայ որբանոցը» [The Armenian Orphanage Nowadays]. *Taragir* (Aleppo), 13 December, 1918, no. 2;

«Հալէպի հայկական որբանոցը» [The Armenian Orphanage in Aleppo]. *Suriakan mamul* (Aleppo), 17 August, no. 55, 1922;

«Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կաջութեան, որբանոցներու, հոգաբար մարմիններու մասին և վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր [Armenian Orphans. Bulletin on Armenian Orphans, Orphanages, Caring Offices and Statistical Lists]. Manuscript bulletin, 1923, unpublished.

«Հարցումներ պատկանեալ իշխանութեան» [Questions Addressed to Concerned Authorities]. *Suriakan mamul* (Aleppo), 12 November, 1922, no. 80;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rp'e'ean, 1924;

Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919) [Bulletin of the Armenian Orphanage in Aleppo]. Aleppo, 1919.

**ՄԱՐԻ ԵՎ ՎԻԼՀԵԼՄ ՇՊԻՔԵՐՆԵՐ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԿԱՆԱՏԵՄ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀՈՒՄԱՆԻՍԱՏ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Վիլհելմ Շպիքեր, Մարի Շպիքեր, գերմանացի ականատեսներ, վկայություններ:

Մարի և Վիլհելմ Շպիքերները Հայոց ցեղասպանության գերմանացի հումանիստ ականատեսներից են, ովքեր ձեռնամուխ են լինում մարդասիրական աշխատանքների՝ փորձելով օգնել հայ արքայալիներին, որոշ դեպքերում՝ նաև փրկել նրանց: Շպիքեր ամուսիններն Օսմանյան կայսրության հայերի շրջանում իրենց գործունեությունը ծավալել են դեռևս 19-րդ դարի վերջից, նախ՝ Կ.Պոլսում, ապա՝ Մարաշում: Առաջին աշխարհամարտի ու Հայոց ցեղասպանության տարիներին ամուսինները Հալեպում էին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել գերմանացի Շպիքեր ամուսիններին որպես Հայոց ցեղասպանության ականատեսներ, նրանց մարդասիրական գործունեությունը, վերհանել և ակտիվ գիտական շրջանառության մեջ դնել նրանց վկայությունները ներառող սկզբնաղբյուրները: Ներկայացվում է, թե ինչ հանգամանքներում նրանք կարողացան մնալ հումանիստական դիրքերում, անգամ կյանքեր փրկել (թեկուզ և ժամանակավոր) ինչպես Հայոց ցեղասպանության տարիներին, այնպես էլ հետագայում:

Հոդվածը գերազանցապես պատրաստվել է Շպիքեր ամուսինների զեկույցների, «Արևելքում քրիստոնեական օգնության միություն» առաքելության ու Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիվի, ինչպես նաև ժամանակի գերմանալեզու մամուլի և առաջնային այլ գրականության հիման վրա:

Հայոց ցեղասպանության տարիներին եղել են բազմաթիվ օտար ականատեսներ, որոնց մի մասի վկայությունները, հուշերը հետագայում անհայտ են մնացել կամ սակավ ուսումնասիրվել: Եթե բրիտանացիները կամ ֆրանսիացիները ստիպված էին Առաջին աշխարհամարտի սկսվելուց առաջ կամ դրա սկսվելուն պես լքել իրենց գործունեության վայրը՝ որպես թշնամի երկրի հպատակներ, ապա զգալի թվով ամերիկացիներ, գերմանացիներ, շվեյցարացիներ ու սկանդինավներ, այնուամենայնիվ, մնացել էին Օսմանյան կայսրությունում՝ դառնալով Հայոց ցեղասպանության ականատեսներ: Վերջիններիս շարքում հատկապես պետք է կարևորել գերմանացիների վկայությունները: Բանն այն է, որ երբեմն թուրք կամ թուրքամետ ժխտողական պատմաբանները փորձում են նվազեցնել շատ ականատեսների վկայությունների կարևորությունը: Նրանց հիմնական փաստարկներից մեկն այն է, որ շատ ականատեսներ «կողմնակալ» վերաբերմունք են հանդես բերել՝ փորձելով իրենց վկայություններով ի շահ սեփական երկրի վնաս հասցնել Օսմանյան կայսրությանը: Գերմանացի ականատեսների պարագայում այս «փաստարկն» ուղղակի հիմնազուրկ է դառնում, քանզի Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակից երկիր էր, հետևաբար նրա քաղաքացիները պակաս շահագրգռված չէին պատերազմում թուրքերի, ուրեմն նաև գերմանա-

թուրքական դաշինքի հաջողություններով և նման վկայություններով սեփական երկրին վնասելու որևէ շահագրգռվածություն չէին կարող ունենալ:

Եթե փորձենք ընդհանրացնել, թե հիմնականում որ խմբերի ներկայացուցիչներ էին գերմանացի ականատեսները, կատանանք հետևյալ պատկերը. ա) սպաներ, զինվորականներ, ռազմական ոլորտի ներկայացուցիչներ, բ) դեսպանատան, հյուպատոսությունների աշխատակիցներ, գ) երկաթուղիների, (Բաղդադի և Անատոլիական), առևտրային և բանկային (Deutsche Bank, Palästina Bank) ոլորտի ներկայացուցիչներ, դ) գերմանական առաքելությունների և հումանիտար-կրթական բնագավառի այլ ներկայացուցիչներ:

Այս համատեքստում Մարի և Վիլհելմ Շպիբերների վկայություններն առանձնանում են մի քանի հանգամանքներով: Շախ՝ ամուսինները երկու՝ իրարից ամբողջովին տարբեր հաստատությունների՝ Հալեպի գերմանական ռեալական դպրոցի և Բաղդադի երկաթուղու աշխատակիցներ էին, հետևաբար առնչվում էին մարդկանց ավելի լայն շրջանակի հետ: Բացի այդ, երկուսն էլ Օսմանյան կայսրությունում էին շատ երկար ժամանակ՝ Մարի 1897 թ., իսկ Վիլհելմը 1898 թ. ի վեր, հետևաբար շատ լավ էին ճանաչում ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին ու կայսրությունում տիրող ավանդույթներն ու բարքերը, որոշ չափով՝ նաև լեզուները: Չլինելով ռազմական ոլորտի ներկայացուցիչներ՝ նրանք գերծ էին իրենց վկայություններով զինվորական գաղտնիք հրապարակելու վտանգից: Շպիբերների վկայությունների հավաստիությունը Գերմանական կայսրության կանցլերին ուղարկած իր նամակներում երաշխավորել է նաև Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռյոսերը: Անգամ Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ժամանակ դրանք օգտագործվել են վերջինիս փաստաբանների կողմից: Նրանց վկայությունները հիմնականում հստակ են. նշվում է իրադարձությունների վայրը, առկա են զգալի թվով այլ ականատեսների (նաև գերմանացի) կամ դեպքերի մասնակիցների անուններ, թվային տվյալներ:

Շպիբեր ամուսինները որպես ականատեսներ և հումանիստներ

Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի տարիների ընթացքում ծառայած զինվորների և սպաների թիվը՝ հաշվի առնելով ու ավելացնելով վերոհիշյալ մյուս բնագավառների ներկայացուցիչներին՝ կարելի է փաստել, որ Հայոց ցեղասպանության հարյուրավոր (գուցե հազարավոր) գերմանացի ականատեսներ (նաև մասնակիցներ) են եղել², որոնց մի փոքր մասը հայերի հետ առնչվում էր ցեղասպանությունից ավելի քան մեկ տասնամյակ առաջ:

1 Աշխարհամարտի տարիներին գերմանացի սպաների թիվն Օսմանյան կայսրությունում հասնում է 700-800-ի, իսկ զինվորներինը՝ շուրջ 12.000-ի: Vahakn Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide: a Review of the Historical Evidence of German Complicity* (Cambridge: Blue Crane Books, 1996), 110.

2 Պետք է նկատել, որ ելնելով վերոնշյալից՝ Հայոց ցեղասպանության գերմանացի ականատեսների, առավել ևս մասնակիցների «ցուցակագրումը» և նրանց վերաբերյալ լայնածավալ ու հնարավորինս մեծ թվով վկայությունների ընդգրկմամբ աշխատություն-հանրագիտարանը (նաև գերմանացի գործընկերների ներգրավմամբ) խիստ օգտակար կարող էր լինել իրավիճակն ավելի հստակ պատկերացնելու համար՝ միաժամանակ ունենալով լուրջ կիրառական նշանակություն:

Երանցից էին Շպիքեր ամուսինները, ովքեր Օսմանյան կայսրությունում էին գտնվում դեռևս 19-րդ դարի վերջից: Մարի Լյուդեքեն (հետագայում՝ Մարի Շպիքեր, Marie Spiecker)³ Կ.Պոլիս էր ժամանել դեռևս 1897 թ. ապրիլի 14-ին «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միությանը (ԱՔԲԳՕՍ)»⁴ պատկանող Կ.Պոլսի Բերեք թաղամասում բացված գերմանական որբանոցում⁵ աշխատելու նպատակով, ուր մեկ տարի անց ժամանում է նաև Վիլհելմ Շպիքերը (Wilhelm Spiecker)⁶: 1899 թ. գարնանը նրանք ամուսնանում են և տեղափոխվում Մարաշ՝ ստանձնելու 1896 թ. հիմնադրված ԱՔԲԳՕՍ-ի⁷ միսիոներական կայանի ղեկավարումը⁸, որտեղ Վիլհելմ Շպիքերը մնում է մինչև 1907 թ. (որպես կայանի ղեկավար միայն մեկ տարի)⁹: 1911 թ. Վիլհելմ Շպիքերը փորձում էր աշխատանքի անցնել

3 Մարի Շպիքերը (Marie Spiecker) (օրիորդական ազգանունը՝ Լյուդեքե) ծնվել է 1872 թ. մարտի 1-ին Նոյշտեդտիում (Պոմերան): Մասնագիտությամբ ուսուցչուհի էր: Մարաշում 1900-1906 թթ. ունեցել է չորս դուստր: Որբախնամ, աղքատախնամ և կրթական գործունեությունից զատ զբաղվել է նաև հոգևոր-քարոզչական գործունեությամբ: Այս մասին ավելի մանրամասն տես Marie Spiecker, “An die Pflege-Eltern unserer Marasch-Waisen,” *Mitteilungen aus dem Orient* (Frankfurt a. Main), April, 1900, 62-63; Marie Spiecker, “Der Herr thut Großes,” *Mitteilungen aus dem Orient*, Juli, 1900, 132-133; Marie Spiecker, “Hier ist eine Gelegenheit,” *Mitteilungen aus dem Orient*, Juli, 1903, 155-157; Pauline Skarnikat, “Reiseerlebnisse unserer Geschwister,” *Mitteilungen aus dem Orient*, Januar, 1904, 65-67.

4 Միությունը հիմնադրվել էր 1896 թ. հուլիսի 2-ին և նախապես կոչվել «Հայաստանի օգնության գերմանական միություն» (ՀՕԳՄ)՝ ունենալով երկու կենտրոնական կոմիտե (Մայնի Ֆրանկֆուրտի և Բեռլինի) ու մի շարք ենթակոմիտեներ: Հետագայում ՀՕԳՄ-ը տրոհվում է, ՀՕԳՄ-ի ժառանգորդը դառնում է Մայնի Ֆրանկֆուրտի կոմիտեն՝ վերանվանվելով «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միություն» (ԱՔԲԳՕՍ):

5 Որբանոցի բացման որոշումը կայացվել էր 1896 թ. օգոստոսի 28-ին ՀՕԳՄ երկրորդ համագումարի ժամանակ: “Deutscher Hilfsbund für christliches Liebeswerk im Orient e.V. (Hg.),” *Skizzen und Bilder aus dem Orient* (Dinglingen (Baden): St. Johannis-Druckerei, 1899), 54.

6 Վիլհելմ Շպիքերը (Wilhelm Spieker, հանդիպում է նաև Spieker տարբերակը, իսկ արևմտահայերեն գրականության մեջ՝ Սփիքըր) ծնվել է 1876 թ. հունիսի 6-ին Բելլեում (Լիպպե-Գետմոդ, Բիլեֆելդի մոտ): Մասնագիտությամբ ուսուցիչ էր: Որբախնամ-կրթական աշխատանքներից զատ Վիլհելմ Շպիքերը Մարաշում ակտիվ է եղել նաև աստվածաշնչյան թեմաներով հավաքներ, հոգևոր-քարոզչական գործունեություն իրականացնելու բնագավառում: Ավելի մանրամասն տես Wilhelm Spieker, “Eine Hochzeitsreise nach Armenien,” *Mitteilungen aus dem Orient* (Frankfurt a. Main), September, 1899, 84-85; Skarnikat, “Reiseerlebnisse unserer Geschwister,” 65-67; Խմբագրական, “Aus Marasch,” *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), Januar, 1906, 51.

7 ԱՔԲԳՕՍ-ի արխիվների մեծ մասն այրվել է Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի ունբակոծության ժամանակ, ինչի հետևանքով էլ ժամանակին իրենց աշխատակիցների՝ Շպիքերների մասին տեղեկություններն այս արխիվում սակավաթիվ են:

8 Խմբագրական, “Bericht für das Jahr 1907,” *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), April, 1908, 104. Մարաշի գերմանական միսիոներական կայանը հիմնադրվել էր դեռևս 1896 թ. աշնանը, սակայն առաջին գերմանացի աշխատակիցն այստեղ ժամանել էր միայն 1898 թ. սկզբին: Ելնելով հողվածի թեմայից՝ խիստ հակիրճ է ներկայացվում Շպիքերների՝ Մարաշում ծավալած գործունեությունը:

9 Խմբագրական, “Bericht für das Jahr 1907,” 104. 13 փետրվարի 1906 թվագրությամբ «ԱՔԲԳՕՍ Մարաշ ուղարկված աշխատակիցների օրենսդրության» տակ Վիլհելմ և Մարի Շպիքերներին են պատկանում առաջին երկու ստորագրությունները: Archiv des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient, Mappe O-001, Bestimmungen für die Deutschen Hilfsbund für christliches Liebeswerk im Orient auszusendenden Geschwister in Marasch, Frankfurt a. Main, 1906, 15.

Յոհաննես Լեփսիուսի ղեկավարած «Գերմանական արևելյան առաքելությունում»։ Վերջինս Վիլհելմին Ուրֆայի կամ Ուրմիայի կայաններում որպես ուսուցիչ աշխատանքի վերցնելու նպատակահարմարությունը հասկանալու համար ԱԲԲԳՕՄ տնօրեն Շուխարդտից տեղեկություններ է խնդրում նրա նախկին աշխատանքի մասին՝ խոստանալով դրանք գաղտնի պահել¹⁰։ Շուխարդտի հակիրճ պատասխանում գերագանցապես դժգոհություններ էին արտահայտվում Մարաշում Շպիքերի գործունեության վերաբերյալ։ Այնուամենայնիվ, ըստ Շուխարդտի, ակնկալվող աշխատանքը Վիլհելմը լիովին ի վիճակի էր կատարել¹¹։

Առաջին աշխարհամարտի տարիներին Շպիքեր ամուսինները Հալեպում էին, ուր և ականատես էին եղել Հայոց ցեղասպանությանը։ Մարին աշխատում էր գերմանական ռեալական դպրոցում (Realschule), իսկ Վիլհելմը՝ Բաղդադի երկաթուղում։ Ի տարբերություն շատերի՝ Շպիքեր ամուսինները չէին լուել, անմիջապես փորձել էին ընդվզել ստեղծված իրավիճակում, նամակներ ու զեկույցներ էին գրել՝ մանրամասն շարադրելով բռնագաղթն ու դրա հետևանքները, անգամ փորձել էին կյանքեր փրկել։ Շպիքերների մարդասիրական գործունեությանն աջակցել է նաև Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյուպերը (1871-1929)¹², որին ամուսինները, որպես դեպքերի ակասատեսներ կամ մասնակիցներ, պարբերաբար փոխանցում էին իրենց զեկույցները։ Դրանք հյուպատոսը կից գրությամբ ուղարկում էր ռայխսկանցյեր Բեթման Հոլվեգին՝ ավելացնելով, որ տեղեկության աղբյուրը խիստ հավաստի է։

Շպիքերների վկայությունները բովանդակային առումով մի քանի հիմնական ուղղություններ էին ներառում՝ արքայի, սպանությունների իրականացման ձևեր, բռնաբարություններ, որբերի անմխիթար վիճակի նկարագրություններ, իրենց կամ գործընկերների կողմից ցուցաբերված օգնության դեպքեր, թուրքերի պահվածքը սպանություններից հետո։

Իր զեկույցներից մեկում Վիլհելմ Շպիքերը¹³ պատմում էր, թե ինչպես էր 1915 թ.

10 Lepsiushaus Potsdam e. V., Archiv, LAH 079, LE 1.170-1.186, NC 11.840-12.009, N. 11910, Herrn Direktor Schuchardt, 1.

11 Lepsiushaus Potsdam e. V., Archiv, LAH 079, LE 1.170-1.186, NC 11.840-12.009, N. 11909, Herrn Missionsdirektor Dr. Lepsius, 1.

12 Աջակցությունը փախադարձ էր։ Շպիքերներից բացի Ռյուպերի աջակիցների շարքում նշվում է նաև ԱԲԲԳՕՄ աշխատակցուհիներ Բեստրիցե Ռոհների, Բողիլ Բյորնի, Հանսինե Մարխերի, Կլարա Պֆայֆերի, Կալերավելթի գեղության քույրերի տան աշխատակցուհի և Հալեպի աղջիկների գերմանական դպրոցի տնօրեն Լինա Վայնկաուֆի ու այլոց անունները։ Kai Seyffarth, *Entscheidung in Aleppo - Walter Röbbler (1871-1929)* (Bremen: Donat Verlag, 2015), 128.

13 Վիլհելմ Շպիքերի մասին դրական է արտահայտվում նաև Հ. Գալուստեանը. «...Ան [Մր. Սփիքըր] կատարեալ հայասեր էր և չափազանց բարի անձնատրուբին մըն էր։ Մեծ պատերազմի առն թուրքիոյ մէջ գտնուող գերմանացի միսիոնարներէն շատեր Հայոց հանդէպ իրենց բարեկամական դիրքը փոխեցին, սակայն Մր. Սփիքըր միշտ անկեղծ բարեկամ մըն էր և ջերմեռանդ պաշտպան մըն էր և Հայ ժողովուրդին եւ տեղահանութեանց միջոցին Հայ տարագրեալներուն օգնելով իր կյանքն ալ գոն տուաւ։ Անմոռանալի են իր սէրն ու գոհողութիւնները մեր ազգին համար»։ Գրիգոր Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չեյթուն* (Նիւ Եորք, 1934), 490։ Գրեթէ նույնությամբ Շպիքերին բնութագրում է նաև Վ. Գրիգորյանը. «...Վերջինս [միստր Սփիքըր] ազնիվ, բարի և շատ հայասեր մարդ էր։ Պատերազմի ժամանակ գերմանացի միսիոնարներից ոմանց նման նա չփոխեց իր վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Նա ջերմեռանդ կերպով պաշտպանում էր հայերին և ինքն

հուլիսի վերջին ութ հայ կանանց ու աղջիկների փրկել Ռ-աս-ուլ-Այնի ճանապարհից ու վերցրել իր խնամքի տակ: Նրանցից մեկին (ամուսինը սպանվել ու այրվել էր իր աչքերի առջև Խարբերդից Ռ-աս-ուլ-Այն ընկած ճանապարհին, իսկ յոթ ամսական միակ զավակը սովամահ էր եղել) Թուեմ (Touem) կոչվող կայարանի 7-8 աշխատակիցներն այնպես էին բռնաբարել, որ բժշկի և Շպիքերների կողմից վերջիններիս տանը խնամքի տակ վերցվելուց միայն երկու օր անց էր գիտակցության եկել¹⁴: Եվս մեկ կնոջ (իր երկու դուստրերի հետ միասին) Վիլհելմս Լինսմեյերի (Linsmeyer) օգնությամբ փրկել էր մի տասնապետի ու մոտ 15 զինվորի ձեռքից¹⁵: 14-ամյա մեկ այլ հայ աղջկա նրանք փրկել էին Հոջա կայարանի ղեկավարի բռնաբարությունից՝ սպառնալով նրան եղելության մասին տեղեկացնել Բաղդադի երկաթուղու ղեկավարությանը¹⁶: Այնուհետև Շպիքերը, շարադրելով սպանված ու Եփրատ նետված հայ կանանց ու երեխաների դիակների, կանանց նկատմամբ իրականացվող կամայականությունների, վերջիններիս ինքնասպանության մի շարք դեպքերի մասին, փաստում է, որ Ռ-աս ուլ-Այնում դեռևս կենդանի մնացած մարդիկ հազարավոր հայ գաղթականների մնացորդներն են միայն ու բացառապես կանայք ու երեխաներ¹⁷: Անգամ գերմանացիների (Բաղդադի երկաթուղու աշխատակից Լինսմեյերի և պահեստապետ Չենմանի) մոտ աշխատող երեք մահմեդական աշխատակիցներն էին լքել իրենց աշխատանքը՝ հայերին սպանելու նպատակով, քանզի վերջիններիս որպես պարզև տներ էին խոստացել հայկական գյուղերում¹⁸:

1915 թ. սեպտեմբերի 2-ին գրված և հյուպատոս Ռյուպերի միջոցով ուսյասկանցների ուղարկված մեկ այլ նամակում Շպիքերը պատմում է հուլիս-օգոստոս ամիսներին Մարաշ կատարած իր այցի մասին, որտեղ նկարագրում է մի շարք գյուղերում՝ Սամում, Կարաբյույուքում, Չյուրուքկոզում, Ֆընդըջաքում, Ֆոնուզում ու այլուր իրականացված սպանությունների, բռնաբարությունների, կանանց վաճառքի դեպքերի մասին: Միայն Մարաշի մի դպրոցում Շպիքերը տեսել էր հարյուրից ավելի հայ կանանց ու երեխաների դիակներ՝ «պատառոտված փորերով, կտրատված ձեռքերով և բոլոր հնարավոր խեղումներով, որոնց թվում կային մեկից երկու տարեկան երեխաներ»¹⁹:

ել գոհ գնաց հայերի ցեղասպանության ժամանակ»: Վարդան Գրիգորյան, *Հայությանը նախընտրված կյանք. Հայրենասիրի Հեղվիզ Բյուլի հայանապատ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911-1951 թթ.)* (Երևան, ՀՀ ԳԱԱ, ՀՅԹԻ, 1996), 19:

14 Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 46:

15 Wolfgang Gust (Hg.), “Der Konsul in Aleppo (Röbler) an den Reichskanzler (Bethmann Hollweg),” Anlage zu No. 81, in *Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts* (Springer: Klampen Verlag, 2005), 217.

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, 217-218:

18 Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 47. Հեղինակն իր հերթին հղում է անում A 23991. PA AA-Türkei 183, Bd. 38 փաստաթղթին:

19 Gust, “Der Konsul in Aleppo (Röbler) an den Reichskanzler (Bethmann Hollweg),” Anlage 5, 286.

Շպիքերը վկայում է նաև շրջակա գյուղերից Մարաշ բերված ու այստեղ գնդակահարված տասնյակ հայերի մասին, որոնց թվում անգամ երկու տարեկան երեխաներ կային²⁰: Շղթայակապ տղամարդիկ նախ մահմեդական բնակչության կողմից նվաստացումների էին ենթարկվել, որից հետո սպանվել: Անգամ գնդակահարվելուց հետո մահմեդականները շարունակել էին պատառոտել նրանց մարմինները: Նա նաև հավելում է, որ այդ ամբոխը Մարաշի ԱԶԲԳՕՄ կայանի Սալեմ հիվանդանոցի մոտով անցնելիս «Կեցցե Գերմանիան» էր գոչում²¹:

Բազմաթիվ են առանձին դեպքերի նկարագրությունները Վիլիելմ Շպիքերի վկայություններում. թուրքերի և քրդերի կողմից քարավանների վրա իրականացված հարձակումներ, կանանց նկատմամբ գործադրված բռնություններ, սպանություններ, դիակապտություն, անարգանք՝ հաճախ նաև հստակ անուններով ու թվային տվյալներով: Նա մանրամասն նկարագրում է Այրան-Փնար կոչվող բնակավայրում տեղի ունեցած բռնաբարություններն ու սպանությունները. «2500 հոգուց բաղկացած այս քարավանում ես տղամարդկանց չտեսա, բացառությամբ, հավանաբար, 30-40 հոգուց: 15 տարեկանից բարձր տղամարդիկ առանձնացվել էին և, հավանաբար, սպանվել: Մտածված կերպով այս հայերը շրջանցող ու վտանգավոր ճանապարհներով էին բերվել. Մարաշի վրայով չորս օրվա ճանապարհով բերվելու փոխարեն նրանք արդեն մեկ ամիս ճանապարհին էին: [...] Այնթապի մոտակայքում այս քարավանի բազմաթիվ կանայք Այնթապից քաղաքացիական անձանց կողմից գիշերը բռնաբարվել էին: Այրան-Փնար կոչվող վայրում հարձակման ժամանակ տղամարդիկ և կանայք կապկապվել էին ծառերին ու այրվել»²²:

Այնուհետև Շպիքերը նկարագրում է սպանությունների, անարգանքների ու բռնաբարությունների տեսարաններ Այնթապից, Մարաշից, Ալբիստանի մոտ գտնվող Բյովերեն գյուղից, Այնթապից հյուսիս գտնվող Բաշ-Փնար բնակավայրից: «Ինձ հետ ճամփորդում էին [Մարաշից] վեց հայ աղջիկներ, որոնցից հինգը ուսուցիչների ամերիկյան սեմինարիայից, մեկը գերմանական որբանոցից էին: Քարավանից 20 քայլ հեռավորության վրա զինվորներից մեկը [նրանք վեցն էին – Հ.Մ.)] սկսեց օդ կրակել: Մեկ ուրիշ զինվոր խլեց աղջիկներից մեկի ձեռքից անձրևանոցը և վստահաբար այլ բռնություններ կիրականացնել, եթե ես չմիջամտեի: Երբ ես իմ մտրակով գնացի նրա վրա, բոլորը փախան»²³: Իսկ Մարաշի մոտ գտնվող Ջամուպիլ բնակավայրի ճանապարհին Շպիքերի միջամտությամբ փրկում է իրեն ուղեկցող հային, որի վրա մոլլան ուղղել էր իր հրացանը²⁴: Փաստացի, իր օրինակով Շպիքերը բազմիցս կարողացել էր ցույց տալ, որ անհրաժեշտ ցանկություն ու կամք դրսևորելու դեպքում հնարավոր է կյանքեր

20 Նույն տեղում, 287:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, 287-288: Այս քարավանը նախապես մոտ 2.800 հոգուց էր բաղկացած և Գյուրյունից արսորվածներն էին ու հիմնականում ապահովված ընտանիքներից: Նրանց թվում կային նաև 400 բողոքական հայեր: Ալբիստանի ու Գյուրյունի կայմակամները նրանցից համապատասխանաբար 200 և 1.020 թուրքական լիրա էին վերցրել՝ խոստանալով ապահով Այնթապ հասցնել:

23 Նույն տեղում, 289:

24 Նույն տեղում:

փրկել, առավել ևս թեթևացնել հայերի տառապանքները՝ օգտվելով գերմանացի լինելու հանգամանքից:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչ վիճակում էին քարավանները ժամանում Հալեպ՝ նա նշում է, որ Խարբերդից և Սվազից արտաքսված 18.000 հայերից քաղաք էին հասել 350 կին ու երեխա, իսկ Էրզրումից՝ 1.900-ից միայն 11-ը²⁵: Երբեմն կանանց ու երեխաների քարավանները օրեր շարունակ քայլել էին են ամբողջովին մերկ վիճակում:

Միևնույն զեկույցում Վիլհելմ Շպիքերը նկարագրում է Մարաշում գտնվող մի «այսպես կոչված հիվանդանոց»․ «[...] ես մի կիրակի մոտ 20 մետր լայնություն ու 40 մետր երկարություն ունեցող մի բակում տեսա 30 մահացած՝ այս ու այն կողմ ընկած: Մոտ 20-ն արդեն թաղվել էին այդ օրը: Այս 30 դիակները մինչև երեկո այդտեղ մնացին: Իմ կինը հանձնարարեց դրանք մթության մեջ տանել՝ վճարելով երեք հոգու մեկական մեջիդի: Դիակներից մեկի մաշկը մնաց տեղափոխողներից մեկի ձեռքերին կպած, այնպես որ քայքայման գործընթացն արդեն սկսվել էր: Մահացածների մեջ այրող արևի տակ այս ու այն կողմ ընկած էին մահացողներ ու ծանր հիվանդներ, մոտ 1.000 հոգի: Ամբողջն այնպիսի սարսափելի տեսարան էր ներկայացնում, ինչպիսին ես երբեք նախկինում՝ անգամ ամռանը, Մարաշում նկարագրված 24 հոգու գնդակահարության ժամանակ չէի տեսել [...]»²⁶:

Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունը նման զեկույցները գաղտնի էր պահում, իսկ դեռևս 1915 թ. աշնանից գործող գրաքննության օրենքն արգելում էր Գերմանիայում նման նյութերի տպագրումը: Փոխարենը Վիլհելմ Շպիքերի այս զեկույցը գրեթե ամբողջությամբ 1916 թ. նոյեմբերին հրատարակվում է շվեյցարական “Schweizerische Orient-Mission” պարբերականում՝ «Թուրքիայում մահացած մի գերմանացու գրառումներից» վերնագրով, ավագ ուսուցիչ, դոկտոր Էդուարդ Գրաստերի գրավոր թույլտվությամբ: Պարբերականում Շպիքերից մեջբերված հատվածն ավարտվում է արտաքսման հանձնաժողովի մի թուրք պաշտոնյայի պատասխանով, որին Վիլհելմ Շպիքերը դիմել էր չորս հայ երեխաների խնդրանքով. «Դուք չեք հասկանում, թե դուք ինչ եք ուզում: Մենք ցանկանում ենք ջնջել հայկական անունը: Ինչպես Գերմանիան է ցանկանում միայն գերմանացիներից բաղկացած լինել, այնպես էլ մենք ենք ցանկանում թուրքեր, միայն թուրքեր»²⁷:

Վիլհելմ Շպիքերը նշում է նաև այլ գերմանացիների անուններ, որոնք ականատես էին եղել սպանությունների զանազան տեսարանների²⁸:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 290:

27 M. Piranian, “Aus den Auszeichnungen eines in der Türkei verstorbenen Deutschen,” in *Schweizerische Orient-Mission*, 1. Jgg, November, 1916, S. 13-15. Kirchliches Archivzentrum Berlin, BMW 1-1982-06, Deutsche evangelische Missionshilfe (DEM), Orient - und Islam - Kommission, 10-12, <http://kab.scopearchiv.ch/Data/7/D36404.pdf> դիտվել է 20.02.2019.

28 Յոհ. Լեփսիուսի կողմից կազմված և 1919 թ. լույս տեսած դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի մեջ Վիլհելմ Շպիքերի վերոնշյալ վկայությունները բացակայում են: Johannes Lepsius (Hg.), *Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke* (Potsdam: Tempel Verlag, 1919).

Վիլհելմ Շպիբերի գեկույցները ուսյասկանցլերին էր փոխանցում ոչ միայն Հալեպի հյուպատոս Ռյոպլերը: Կայսեր՝ Քաղաքացիական հարցերով հավատարմագրված գրասենյակի կողմից 1916 թ. սեպտեմբերի 10-ին ուսյասկանցլեր Բեթման-Հոլվեգին փոխանցված գեկույցում Վիլհելմ Շպիբերը շարունակում է ականատեսի իր վկայություններն աքտրվածների նկատմամբ իրագործվող դաժանությունների, մարդկանց թալանելու, նվաստացնելու և ոչնչացնելու բազմաթիվ եղանակների մասին ու ավելացնում. «Ինչ էս գրում եմ, միայն մի չնչին մասն է բոլոր այն սարսափների, որոնք երկու ամսից ի վեր այստեղ տեղի են ունենում, և որոնք ամեն օր ավելի մեծ ծավալների են հասնում: Սա միայն չնչին մասն է այն ամենի, որոնք էս ինքս եմ տեսել ու տեղեկացել ականատես դարձած ծանոթներից ու ընկերներից: Այս ամենի համար, ինչի մասին էս գեկույցում եմ, կարող եմ յուրաքանչյուր պահի թվային տվյալներ ու ականատեսների անուններ նշել»²⁹:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ իր գեկույցներում Վիլհելմը նկարագրել է ինչպես բռնագաղթի տարբեր տեսարաններ, այնպես էլ դրա ընթացքում իր միջամտությամբ փրկվածների պատմություններ:

Վիլհելմ Շպիբերի կինը՝ Մարին, ևս ապրել է Հալեպում ու անմասն չի մնացել տարագիրների մասին տարբեր գեկույցներ կազմելուց, ինչպես նաև անձամբ տարատեսակ աջակցություն ցուցաբերելուց: Այդ ժամանակ Մարին աշխատում էր որպես ուսուցչուհի Հալեպի գերմանական ռեալական դպրոցում: Նրա և ավագ ուսուցիչ դր. Մարտին Նիպագեի³⁰ հեղինակած գեկույց-նամակում խոսվում էր դպրոցի հարևանությամբ գտնվող շինության մասին (հատկացվել էր հատկապես ծանր հիվանդ աքտրյալներին), սակայն կատարվող իրադարձություններն ու դրանց հետևանքները փորձ էր արվում ներկայացնել գերմանական կրթության, հետևաբար նաև ազդեցության տարածման կարևորության համատեքստում՝ փորձելով գոնե այդ կերպ որոշակի աջակցություն ստանալ սեփական իշխանություններից. «[...] Մենք չենք ցանկանում կանգ առնել այն արյունալի սարսափների վրա, որոնցով ուղեկցվում է հայերին իրենց բնօրրանից տեղափոխումը. ոչ հազարավոր տղամարդկանց, ովքեր առանձնացված կամ երբեմն իրենց հարազատների աչքի առջև սպանվել էին, ոչ անթիվ աղջիկների, կանանց ու երեխաների, որոնք ենթարկվել էին իրենց հսկողների և նրանց հանցակիցների անարգանքին ու խեղամանը և որոնց մերկ դիակներն ընկած են ճանապարհների [...] Մենք ենթադրում ենք, որ Արտաքին գործերի նախարարությունն իր ներկայացուցիչների միջոցով տեղյակ է այն ամենին, ինչ կատարվում է այստեղ: [...] Մեր գործը չէ հայերի՝ իրենց բնօրրանից արտաքսման քաղաքական իրավունքը քննարկելը: Հետևյալը, սակայն, մենք ցանկանում ենք ու պարտավոր ենք բարձրաձայնել, որ գերմանական դպրոցական աշխատանքն այս երկրում երկարաժամկետ կտրվածքով անվերականգնելի վնասներ է կրում կանանց ու երեխաների զանգվածային սպանու-

29 Gust, "Das Geheime Zivil-Kabinet des Kaisers (Valentini) an den Reichskanzler (Bethmann Hollweg)," Anlage 4, "Bericht eines deutschen Beamten von der Bagdadbahn," 498-500.

30 Նիպագեն Հալեպ էր ուղարկվել Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության կողմից որպես տեղի գերմանական ռեալական դպրոցի ավագ ուսուցիչ: Gust, Anlage 3, "Bericht des deutschen Oberlehrers Dr. Niepage," 497.

թյան տեսքով արքայազնի այս սարսափելի ձևերի պայմաններում, մի զանգվածային սպանություն, ինչպիսին պատմությունը մինչ այժմ դեռ չի տեսել»³¹:

Մարի Շպիքերը ոչ միայն գեկուցում էր իրավիճակի մասին, այլև փորձում էր անձամբ որևէ աջակցություն ցույց տալ խիստ ծանր վիճակում գտնվող տարագրյալների: Նա օճառ էր գնել ու բաժանել դեռևս կենդանի մնացած բազմաթիվ կանանց ու երեխաների (տղամարդիկ այլևս չկային այնտեղ): Բացի այդ, մի քանի կանայք նրա ղեկավարության ներքո սնունդ էին պատրաստում դեռևս կենդանի մնացածների համար, իսկ ինքը սնունդ էր բաժանում գաղթականներին³²: Այնուամենայնիվ, երբ տիֆի համաճարակն ավելի է տարածվում, Մարին ու դպրոցի մյուս աշխատակիցները ևս վարակվում են³³:

Մարին թեև վաղուց չէր հանդիսանում ԱԲԲԳՕՄ աշխատակից, սակայն ելնելով ստեղծված իրավիճակից՝ 1916 թ. հոկտեմբերի 18-ի նամակով ֆինանսական աջակցության է խնդրում նրանցից. «Մենք միայն այստեղ՝ քաղաքում ունենք 600-800 փոքրիկներ, որոնք որևէ հարազատ չունեն: Թե որտեղից կարող ենք մենք հայթայթել ամենաանհրաժեշտը, չգիտենք, դրան ավելանում է մոտալուտ ձմեռը»³⁴: Մարին, ինչպես նաև ամուսինն, իրենց վստահելի անձանց միջոցով կարողանում էին տարագիրներին նաև գումար բաժանել, որն ուղարկվել էր 1915 թ. աշնանը³⁵: Դրանով կարիքավորների համար առաքված գումարներն իրենց գործնական կիրառումն էին գտնում: Մարի Շպիքերն պարբերաբար հանդիպումներ էր ունենում հյուպատոս Ռյուպերի հետ, ումից նաև գումար էր ստանում՝ տարագիրներին բաժանելու և օգնելու համար: Վերջինս նման հանդիպումը տեղի է ունեցել 1917 թ. փետրվարի 3-ին³⁶:

Վիլիելմ Շպիքերը, ցավոք, չի կարողանում վերադառնալ հայրենիք: Նա մահանում է Օսմանյան կայսրությունում (նրա մահվան հստակ օրն անհայտ է) հիվանդության հետևանքով³⁷: Որոշ ժամանակ անց Մարին, որը նաև չորս երեխաների մայր էր, վերադառնում է հայրենիք՝ Գերմանիա: Մարին հայրենիք վերադարձից հետո անգամ շարունակում է օգտակար լինել հայ ժողովրդին: 1921 թ. հունիսին Սողոմոն Թեղիլյանի դատավարության ժամանակ Մարի Շպիքերը, ի թիվս այլոց, հանդես է գալիս որպես վկա, որի վկայությունները դատարանը պետք է լսեր դատավարության

31 Lepsius, "Deutsche Realschule in Aleppo," 165-167. Այս վկայություններն ամբողջ ծավալով հրատարակվել են Հալեպի գերմանական ռեալական ավագ դպրոցի ուսուցիչ, դր. Մարտին Նիպագեի հեղինակմամբ նաև առանձին գրքով 1917 թ., որը վերահրատարակվել է 1975 թ.: Niepage Martin, *The Horrors of Aleppo. Seen by a German Eyewitness* (London: T. Fisher Unwin LTD, 1917).

32 Gust, "Das Geheime Zivil-Kabinet des Kaisers (Valentini) an den Reichskanzler (Bethmann Hollweg)," Anlage 3, "Bericht des deutschen Oberlehrers Dr. Niepage," 494.

33 Նույն տեղում:

34 Marie Spieker, "Aus Briefen der Geschwister im Orient," *Sonnen-Aufgang. Mitteilungen des deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient e. V.* (Frankfurt a. Main), Februar 1916, 34.

35 Lepsius, "Kaiserlich Deutsches Konsulat, Aleppo, den 29. Januar 1916," 231.

36 Հանդիպումների ժամանակացույցը տես Seyffarth, *Entscheidung in Aleppo*, 252-269.

37 Heini Melidonian, *Vergangen, ... aber nicht vergessen! Erinnerungen und Erlebnisse eines armenischen Waisenkindes und der Missions-Station Marasch in der asiatischen Türkei* (Chemnitz: Kommissionsverlag, 1937), 21.

երկրորդ օրը՝ հունիսի 3-ին³⁸: Սակայն դատավարության կարճվելու պատճառով նա այդպես էլ ելույթ չի ունենում՝ պայմանավորված «դատարանի և երդվյալ ատենակալների կողմից հաստատված դատավճռի կայացման համար առկա ապացույցների բավարար լինելու հանգամանքով»³⁹: Որպես գրավոր վկայություն վերցվում է Մարիի ամուսնու՝ 1915 թ. հոկտեմբերի 6-ի զեկույցը⁴⁰: Այդ ժամանակ Մարին բնակվում էր Ռ-ուլերեն քաղաքում (ժամանակակից Թյուրինգիա երկրամաս, Roßleben a. d. Unstrut)⁴¹:

Մարի Շպիբերի հետագա գործունեության մասին տվյալները բացակայում են:

Ամփոփելով Շպիբեր ամուսինների վկայությունները Հայոց ցեղասպանության տարիներին ինչպես տարագրության, բռնությունների ու սպանությունների, այնպես էլ այդ ընթացքում իրենց գործունեության մասին՝ պետք է փաստել հետևյալը.

Լինելով Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանական կայսրության հպատակների վկայություններ՝ Շպիբերները չէին կարող միտում ունենալ իրենց զեկույցներով ու նկարագրություններով հանիրավի վնաս հասցնել իրենց դաշնակից երկրին, հետևաբար նաև Գերմանիային:

Շպիբերներն իրենց վկայություններում նշում են ցեղասպանության ականատես մի շարք այլ գերմանացիների անուններ:

Իրենց օրինակով Շպիբերները ցույց են տալիս, որ անհրաժեշտ վճռականություն հանդես բերելու պարագայում անգամ առանց լուրջ լծակների հնարավոր էր ոչ միայն այս կամ այն աջակցությունը ցուցաբերել հայ տարագիրներին, այլև առանձին դեպքերում անգամ փրկել նրանց մեկ տասնյակից ավելի թուրքերի ձեռքից: Գիծը

Նրանց աջակցության ձևերը տարբեր էին. տարագիրներին սնունդ կամ օճառ բաժանելուց մինչև Եվրոպայից օգնություն հայթայթելը, ստացված (նաև հյուպատոս Ռ-յուպերի միջնորդությամբ) միջոցներն իրենց վստահելի հայերի միջոցով տարագիրներին բաշխելը, այս ու այն կողմ ընկած դիակները թաղելը, իրենց զեկույցները Հալեպի հյուպատոսին փոխանցելը, որն էլ դրանք փոխանցում էր ռայխսկանցլերին, որոշ դեպքերում անգամ կանանց ու երեխաներին (հնարավոր է՝ որոշ ժամանակով) փրկելը՝ ապաստան տալով անգամ սեփական հարկի տակ:

38 Tessa Hofmann (Hg.), *Der Völkermord an den Armeniern. Der Prozeß- Talaat Pascha* (zweite ergänzte Ausgabe, Göttingen & Wien: Gesellschaft für bedrohte Völker, 1980), 5.

39 Նույն տեղում, 129:

40 Նույն տեղում, 131-132:

41 Հողվածի հեղինակը նամակով դիմել է Ռ-ուլերենի քաղաքապետարանին՝ Մարի Շպիբերի կամ նրա ժառանգների մասին լրացուցիչ տվյալներ գտնելու խնդրանքով, սակայն հողվածն ավարտելու պահին դեռևս որևէ պատասխան չի ստացվել:

MARI AND WILHELM SPIECKERS: A GERMAN HUMANIST COUPLE WITNESSING THE ARMENIAN GENOCIDE

Key words: Armenian Genocide, Ottoman Empire, Wilhelm Spiecker, Mari Spiecker, German eyewitnesses, testimonies.

SUMMARY

During World War I, thousands of Germans were working and serving in the Ottoman Empire, and a part of them witnessed the Armenian Genocide. Mari and Wilhelm Spieckers were in the Ottoman Empire starting from the end of the 19th century, and in 1915 they were working in Aleppo. Eyewitnessing deportation of Armenians they did not keep silence. They were sending reports with descriptions of violence and murders to the Consul of Aleppo. The latter was sending those to the Chancellor of the German Empire emphasizing that the information in these reports is highly credible. Not being satisfied with this, the humanist couple tried personally to be useful to the refugees. They distributed food and soap to them, found money for them, and in some instances saved lives by using the fact of being Germans.

Այկ Մ. Մարտիրոսյան

кандидат исторических наук

МАРИ И ВИЛЬГЕЛЬМ ШПИКЕРЫ: НЕМЕЦКИЕ СУПРУГИ ГУМАНИСТЫ, СВИДЕТЕЛИ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, Вильгельм Шпикер, Мари Шпикер, немецкие оцевидцы, свидетельства.

РЕЗЮМЕ

В годы Первой мировой войны в Османской империи работали и находились на военной службе тысячи немцев, часть которых стала свидетелями Геноцида армян. Мари и Вильгельм Шпикеры ещё с конца 19-го века находились в Османской империи, а в 1915 году они работали в Алеппо. Став очевидцами депортации армян, они не стали молчать, отправляя рапорты с описанием насилий и убийств консулу Германии в Алеппо, который передавал эти сведения канцлеру Германии, отмечая крайнюю степень достоверности этих рапортов. Не довольствуясь этим, супруги гуманисты пытались лично помогать депортированным армянам: раздавали еду и мыло, добывали деньги для них, а в некоторых случаях, пользуясь своим положением представителей нации, являющейся союзником Османской империи, спасали им жизни.

REFERENCES

Grigoryan, Vardan. *Էստոնուհի Հեդվիգ Բյուլի հայանպաստ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* [Life Dedicated to Armenians: Pro-Armenian Activity of Estonian Hedwig Büll in Cilicia and Syria (1911-1951)]. Yerevan: NAS RA, AGMI, 1996;

Kalousdian, Krikor. *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չէյթուն* [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988.

ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՐԱՇԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՄԻԳՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ (1896-1909 թթ.)

Բանալի քառեր՝ Մարաշ, Կիլիկիա, կրթություն, ուսում, որբեր, որբանոցներ, միսիոներներ, Համիդյան կոտորածներ:

Հոդվածը նվիրված է համիդյան կոտորածներից հետո Մարաշի որբանոցների կրթական կյանքի կազմակերպմանը հայ և օտարազգի մարդասերների և մարդասիրական կազմակերպությունների կողմից: Անդրադարձ է կատարվում հայկական, անգլիական և գերմանական որբանոցների լուսավորական ու կրթական հաջողություններին: Ներկայացնելով Մարաշի որբանոցներում ապաստանած երեխաների կրթական կյանքի հնարավորինս համապարփակ ուսումնասիրությունը՝ առանձնացրել ենք հայկական, անգլիական և գերմանական որբանոցներում իրականացվող կրթական ծրագրերի նշանակությունը սաների կյանքում: Հենվելով սկզբնաղբյուրային և օժանդակ գրականության վրա՝ հոդվածը փաստում է, որ հայկական որբանոցների հիմնումը բավական բարդ գործընթաց էր, և միանգամայն հասկանալի է, որ անհրաժեշտ միջոցների բացակայության պայմաններում, որքան էլ մեծ լինեք ցանկությունը հայ որբերին արժանավայել կրթություն տրամադրելու, հոգածության, խնամքի համար, այնուամենայնիվ, գումարի պակասը պետք է սահմանափակեր այդ հնարավորությունները: Եվ թերևս դա էր պատճառը, որ հայկական որբանոցները չէին կարողանում երկարատև գործունեություն ծավալել: Դրանով է պայմանավորված հայկական որբանոցների գործունեության մասին տեղեկությունների սակավությունը: Այս պայմաններում, բնականաբար, մեծ էր օտար մարդասերների ներդրումը, որոնք լրացրեցին, օժանդակեցին և արեցին հնարավոր ամեն ինչ հայ որբերի կյանքը բարելավելու ուղղությամբ:

Մարաշ քաղաքի ու գավառի հայ բնակչության թիվը. համիդյան կոտորածները Մարաշում

Մարաշն Օսմանյան կայսրության հայաշատ կենտրոններից, ինչպես նաև Կիլիկիայի կարևորագույն ու հարուստ քաղաքներից մեկն էր, որը հանդիսանում էր Հալեպի նահանգի Մարաշ գավառակի կենտրոնը: Մինչև 1911 թ. ընդգրկված էր Հալեպի վիլայեթի կազմում, որից հետո առանձնացվում է և դառնում առանձին գավառ (սանջակ)¹: Մարաշի սանջակն արևելքում սահմանակից էր Խարբերդի վիլայեթին, հյուսիսում՝ Սերաստիայի, արևմուտքում՝ Ադանայի վիլայեթներին, իսկ հարավում՝ Հալեպի նահանգի նույնանուն գավառին՝ ընդգրկելով 18.405 քառ. կմ տարածք²: 1890 թ.

1 Միհրան Մինասեան, «Անտիպ փաստաթղթերի կիլիկեան կոտորածներու օրերուն Մարաշի հայութեան իրավիճակին մասին», *Հանդէս Ամսօրեայ*, հունվար-դեկտեմբեր, 1-12 (2017), 306:

2 Ռուբեն Հ. Գասպարյան, «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», *Լրաբեր հասարակական գիտությունների* 1-2 (2011), 28:

Մարաշի գավառը բաժանված էր 5 գավառակի (5 սահիե, 552 գյուղ)³, իսկ 1905 թ. հրատարակված «Սալնամեի Դեկլեթի Օսմանիկ» պաշտոնական վիճակագրության համաձայն՝ սանջակի կազմում էին Մարաշի և նրա ենթակա Ջեյթունի, Ալախթանի, Անտերունի և Փագարճըզի գավառակները՝ գյուղախմբերով և գյուղերով⁴:

Կ.Պոլսի հայոց պատրիարք Օրմանյանի 1912 թ. վիճակագրական տեղեկությունների համաձայն՝ Մարաշի թեմում (այն իր մեջ պարունակում էր Մարաշի, Ալախթանի և Փագարճըզի գավառակների տարածքը) հայ բնակչության թիվը հասնում էր 37.500-ի, Ջեյթունում՝ 21.000-ի, Ֆրնուզում՝ 7.000-ի: Գավառի 178.000 բնակիչներից 65.000-ը հայեր էին⁵: Հովսեփ Տեր-Վարդանյանի հաղորդմամբ Մարաշում հաշվվում էր մոտավորապես 75-80.000 բնակչություն, որոնց մեկ երրորդը հայ քրիստոնյաներ էին. 5.500՝ կաթոլիկ, 8.000՝ բողոքական, 16.500՝ հայ առաքելական⁶:

1890-ական թթ. սկիզբ առաջ հայերի զանգվածային կոտորածները հատկապես ծանր էին Ուրֆայի և Մարաշի սանջակներում: Յոհաննես Լեփսիուսի տեղեկության համաձայն՝ Մարաշում համիդյան կոտորածներին զոհ գնաց շուրջ 1.390 հայ⁷: Համիդյան ջարդերից հետո հրաշքով փրկված հազարավոր երեխաներ խնամքի ու հոգատարության կարիք ունեին:

Միսիոներական քարոզչության, կրթալուսավորական գործունեություն ծավալված հաստատությունների, բարեգործական աշխատանքների ձեռնարկումները եղան այն հիմնաքարը, որով հնարավոր եղավ պահել և պահպանել հայ որբերին, զբաղվել նրանց կրթության և դաստիարակության հարցերով:

Համիդյան կոտորածներից հետո առ 1909 թ. Մարաշում գործել են տասը որբանոց-վարժարաններ, այդ թվում՝ վեց ազգային, չորս միսիոներական⁸:

Ստորև առանձին ներկայացնում ենք հայ որբերի համար նախատեսված Մարաշ քաղաքում գործող որբանոցները և դրանց աշխատանքը կազմակերպող մարդասերների գործունեությունը:

3 Տե՛ս Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Մատենադարան «Արաքս»-ի (Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894), 313:

4 Գասպարյան, «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը», 28:

5 Գրիգոր Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջեյթուն (Ե. Ե. Լոնկ Այլընտ Սիթի, Կոչնակ, 1988), 33:

6 Յովսեփ Տեր-Վարդանեան, Մարաշի ջարդը 1920-ին (Հալեպ, Արեւելք, 2010), 51:

7 Johannes Lepsius, *Armenia and Europe: An Indictment*, trans. Harris Rendel (London: Hodder and Stoughton, 1897), 308.

8 Հողվածում անդրադառնում ենք չորս ազգային որբանոցներին, քանի որ մնացած երկուսից մեկը Ազգային այրիանոցն է, որը բացվել է 1909 թ., որտեղ աշխատել են կանայք և զբաղվել գույալա-յագործությամբ: Տե՛ս Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ, 491: Մյուսը՝ Գրիգոր Պեհեսնիյանի որբանոցն է, որի գործունեության մասին մեզ չի հասցողվել բավարար տեղեկություն ձեռք բերել, «Բիւրակն» թերթում միայն նշված է, որ կա նման որբանոց, որտեղ ապրում են 12 աղջիկներ: Տե՛ս Սմբատ Գալթեան, «Մարաշ, քաղաքային, տեղագրական, ազգագրական, տնտեսական, կրթական եւ այլ տեղեկութիւններ», *Բիւրակն* (Կոստանդնուպոլիս), 19 նոյեմբեր 1898, թիւ 43, 759:

Հայկական որբանոցներ

Ա. Ճենանյանի որբանոցը

1896 թ. Հարություն Ճենանյանի⁹ ջանքերով Մարաշի Ս. Ստեփանոս եկեղեցու բակում բացվում է Ճենանյանի որբանոցը, որը գործել է մինչև 1914 թ.¹⁰: Որբանոցի գործունեությանը մեծապես նպաստել են հատկապես Ավետարանական-Ռուսիկյանց ընկերությունները¹¹: Այս որբանոցում պատասպարվել և ուսում է ստացել մոտ 40 տղա¹²:

Որբանոցն ուներ նաև իր խորհուրդը. այն բացվել էր Ս. Ստեփանոս եկեղեցում՝ ի հիշատակ Ճենանյանի մկրտության: Որբանոցի վարչությունում որպես հոգաբարձու, ուսուցիչ և պատասխանատու անձ մեծ ներդրում է ունեցել Սողոմոն Ոսկերչյանը, որը ղեկավարել է դպրոց-որբանոցը և կրթել բազում սաներ¹³: Որբանոցի հոգաբարձուների խորհրդի անդամներ են եղել Սահակ Տեր-Պետրոսյանը, Աբրահամ և Բաղդասար Չորպաճյանները, Նշան Էտալյանը, Կարապետ Նալչաջյանը և Սարգիս Թիվալիյանը, որոնք կարողացել են իրենց ներդրումն ունենալ ազգային և կրթական գործում¹⁴:

Բ. Հակոբ Գումրույանի որբանոցը

Այս որբանոցը նույնպես բացվել է 1896 թ.: Ծախսերը ևս հոգացել է Հարություն Ճենանյանը, սակայն իր մեծ ներդրումն է ունեցել նաև Հակոբ Գումրույանը: Տեր և տիկին Գումրույանների գործունեության շնորհիվ որբերի թիվը հասել է 60-ի¹⁵: Սակայն ֆինանսական խնդիրների պատճառով որբանոցն անցել է ամերիկացիների և գերմանացիների հովանու ներքո. այդ ժամանակ այնտեղ արդեն ապրում էին մոտ 100 որբ տղաներ¹⁶:

Գ. Իսահակ Ժամհարյանց որբանոց

1898 թ. հիմնվել է Իսահակ Ժամհարյանց որբանոցը: Այս որբանոցը հովանավորում էր Ժամհարյանների ընտանիքին բարեկամ մի մոսկվացի վաճառական՝ ի պատիվ իրենց հանգուցյալ հոր հիշատակի: Ժամհարյանց որբանոցում դաստիարակություն և ուսում էր ստանում 90 որբ:

9 Հարություն Ճենանյանը եղել է ԱՄՆ «Հայ ավետարանական եկեղեցու միության» վերատեսուչ, կարողացել է միջոցներ գտնել, որի շնորհիվ հարյուրավոր աղքատներ հնարավորություն են ունեցել ստանալ կրթություն: Մարաշում բացառիկ ներդրում է ունեցել կրթական հաստատություն ստեղծելով, որտեղ կրթություն և դաստիարակություն են ստացել 250-ից ավելի տղաներ: Տե՛ս Յովհաննես Անտոխեսան, «Սիրուած դեմքեր», *Բիւրակն* (Կոստանդնուպոլիս), 8 յունվար 1905, թիւ 2, 36:

10 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 482:

11 Այս ընկերությունների հիմնական նպատակն էր բացել դպրոցներ և կյանքի կոչել կրթական գործը՝ ապահովելով երեխաների ուսման ու կրթության միջոցները: Ավելի մանրամասն տե՛ս Վարդի Բէլիշեան, «Մարաշ-դպրոցներ», <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppe/sandjakofmarash/educationandsport/educationalassociations.html>, դիտվել է 12.12.2018:

12 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 483:

13 Տէր-Վարդանեան, *Մարաշի ջարդը 1920-ին*, 55:

14 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 483:

15 Նույն տեղում, 485:

16 Տէր-Վարդանեան, *Մարաշի ջարդը*, 59:

Համաձայն բարերարների հորդորի՝ որբանոցներում հայեցի ուսում ստանալուց գատ, սովորում էին նաև արհեստներ, ինչպես նաև մուճակագործություն, կոշկակարություն և այլն: Որբանոցի հոգաբարձության նախագահը քահանա Հովհաննես Վարժապետյանն էր, իսկ անդամները՝ Տեր-Մինասյանը, Տիգրան Մերճանյանը, Մովսես Առաքելյանը:

Գ. Ազգային որբանոց

1909 թ. Կ.Պոլսի ազգային խնամատարության ջանքերով Մարաշում բացվում է ազգային որբանոցը, որտեղ պատսպարված էին 115 տղա (մանչ) և 90 աղջիկ սաներ, որոնք հավաքվել էին Մարաշի շրջակա գյուղերից և քաղաքներից¹⁷: Այստեղ տեսչությամբ զբաղվում էր Խաչատուր Գռուզյանը:

1910 թ. որբանոցի բացվելուց 7-8 ամիս հետո նրանց միացան նաև Այնթապի որբանոցի սաները, և աշակերտների ընդհանուր թիվը հասավ 360-ի¹⁸:

Ամերիկյան և անգլիական որբանոցներ

Օսմանյան կայսրությունում համիդյան կոտորածներից հետո, ինչպես հայտնի է, հիմնվում են միսիոներական կայաններ: Հայ բնակչության, հատկապես երիտասարդության շրջանում, գիտության և լուսավորության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ մեծ աշխատանք տարան նաև եվրոպացի և ամերիկացի միսիոներները՝ «գայթակղելով» նրանց որակյալ ուսմամբ և մասնագիտական կարողությունների կատարելագործման հնարավորություններով¹⁹:

Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության հայերի շրջանում միսիոներական գործունեության ամենաարդյունավետ ոլորտը լուսավորությունն էր. Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի տարածքում բացվեցին բազմաթիվ ամերիկյան և գերմանական որբանոցներ:

Միսիոներների նախաձեռնությամբ բացվող դպրոցները և նրանց բարեկարգ վիճակը, ինչպես նաև թուրքական կառավարող շրջանների թույլտվությունն ակնհայտորեն նպաստում էին բողոքականության տարածմանը:

Թուրքական կառավարությունը հանդուրժում էր միսիոներների կրթական ձեռնարկումները, քանի որ ի դեմս միսիոներական դպրոցների՝ տեսնում էր կարևոր օջախներ հայ ժողովրդի միասնությունը պառակտելու և դավանաբանական հակամարտություններն ավելի սրելու համար, իսկ դպրոցական հարմարավետ շենքերը, ըստ էության, հետագայում անցնելու էին թուրքերի ձեռքը՝ իբրև հաստատուն կապիտալ²⁰:

17 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 491:

18 Նույն տեղում, 491:

19 Նույն տեղում, 484:

20 Ստեփան Հ. Փայասյան, «Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին», *Բանբեր Հայաստանի արխիվների* no. 2 (2006), 111:

Ա. Էպեն-Էզեր (Աբեննեզեր)²¹ աղջիկների որբանոց

1896 թ. ամերիկյան առաջին որբանոցը բացվում է Մելբոն Հայրապետյանի տանը, որտեղ տեսուչ և տեսչուհի էին Մկրտիչ աղան և տիկին Դշխուն Տեր-Մկրտչյանը: Այնուհետև բացվում են երկրորդ²², երրորդ²³, չորրորդ²⁴ և հինգերորդ²⁵ որբանոցները, որոնք համալրվում են նոր աշակերտներով: Հայ որբերին հավաքագրող Մարաշի առաջին միսիոներուհիներից էր ամերիկացի տիկին Լին²⁶, սակայն պետք է նշել, որ նա, որբան էլ նվիրված էր որբախնամ գործունեությանը, առողջական խնդիրների պատճառով չկարողացավ շարունակել միսիոներական աշխատանքը: Նրան հաջորդեց օրիորդ Ագնես Սալմոնդը, որը բնութագրվում էր որպես ազնիվ և քրիստոնյա ընտանիքի գավակ և կարծես ծնված էր հատուկ այդ գործի համար²⁷:

Իր ծնողներից միշտ լսելով միսիոներական կյանքի պատմությունները՝ Ագնեսի մեջ արթնացել էր որբախնամ գործունեությամբ զբաղվելու հետաքրքրություն: Լոնդոնում ժողովներ, ցույցեր էին գումարվում, ինչպես նաև թերթերում տպագրվում էին սուկալի պատմություններ Հայաստանի մասին: Իբրև ականատես վկաներ, ներկա եղող հայերը պատմում էին մանուկների և կանանց տառապանքներից: Ժողովների և կոնցերտների արդյունքում կազմվում է Հայաստանի բարեկամներ (Friends of Armenia) ընկերությունը, որին անդամագրվում է օրիորդ Ագնեսը²⁸:

1898 թ. նա մեկնում է Մարաշ, արժանանում է թե՛ ամերիկյան, թե՛ հայ բարեկամների ջերմ ընդունելությանն ու ուշադրությանը: Առաջին գործը որպես ականատես՝ տեղեկություն և նամակներ հավաքելն էր, որից հետո նա այդ ամենն ուղարկում է Լոնդոն, ինչի արդյունքում նրան հնարավորություն են տալիս շարունակել որբախնամ գործունեությունը²⁹:

Հենց օրիորդ Ագնեսի ջանքերի շնորհիվ է բացվում «Էպեն-Էզեր» որբանոցը, որը նա ղեկավարում է 1897-1914 թթ.³⁰: Շատ կարճ ժամանակում օրիորդ Ագնեսին հաջող-

21 «Էպեն-Էզեր» նշանակում է «Աստված մեզ մինչև այստեղ առաջնորդեց»: Տե՛ս «Էպեն Էզեր Աղջկանց որբանոց», Նոր Մարաշ տեղեկատու Գերմանիկ-Վասպուրական մշակութային միության, no. 4 (2010), 37:

22 Բացվել է Աստվածաբանական ճեմարանի արևելյան շենքում, տե՛ս նույն տեղում, 36:

23 Այս որբանոցը բացվել է տեր և տիկին Ավետիս Իվեզյանի տեսչությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

24 Տեր և տիկին Հակոբ Նուսխեճյանների գլխավորությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

25 Նաջարյան Օհան աղայի և տիկնոջ հսկողությամբ, տե՛ս նույն տեղում, 31:

26 Հետաքրքիր է տիկին Լին 1896 թ. նոյեմբերի 28-ի հետևյալ գրառումը «Ես չեմ կարող Ձեզ բառերով նկարագրել, թե ինչպիսի ուրախություն ինձ համակեց, երբ ես ամռանը Կ.Պոլսում տեղեկացա, որ պետք է Գերմանիայից 250 յիւրս սրանամ Մարաշում 50 որբի խնամքի համար... Գերմանիայից այս պայմանավորվածության մասին լուրն սրացվեց, ինչպես երկրից մի նվեր», Հայկ Մ. Մարտիրոսյան, Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919 թթ. (Երևան, Զանգակ, 2016), 37:

27 Մանրամասն տե՛ս Ephraim K. Jernazian, *Judgment unto Truth Witnessing the Armenian Genocide*, trans. Alice Haig (New Brunswick and London: 1990), 18-19.

28 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 487:

29 Նույն տեղում, 487:

30 «Էպեն Էզեր Աղջկանց որբանոց», 36:

վում է գերազանց առաջադիմության հասցնել որբանոցի սաներին: Որբանոցին հարակից տարածքում նոր շենք է հիմնվում, որտեղ տղաները սովորում էին արհեստներ՝ ոստայնանկություն, կոշկակարություն, հացագործություն, աղջիկները՝ ձեռագործություն³¹: Սակայն և՛ տղաների, և՛ աղջիկների ընդունակություններ զարգացնողը դպրոցն ու քոլեջներին էին, և նրանցից շատերը օրիորդ Ագնեսի շնորհիվ դարձան բժիշկներ, վարժուհիներ, ուսուցիչներ³²:

Օրիորդ Ագնեսն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում նաև բարոյական և հոգևոր դաստիարակությանը: Բոլոր սաներն ամեն կիրակի քաղաքի եկեղեցիներ և կիրակնօրյա դպրոցներ էին այցելում³³:

Կարելի է անվարան նշել, որ օրիորդ Ագնեսի գործունեության շնորհիվ Էպեն-Էգերը դարձավ որբերի ապաստան, որտեղ նրանք կրթվեցին, յուրացրեցին արհեստներ՝ այդ ամենի հետ ստանալով հոգևոր ու բարոյական դաստիարակություն:

Գերմանական որբանոցները

1896 թ. օգոստոսի 28-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի է ունենում «Հայաստանի օգնության գերմանական միության» (ՀՕԳՄ)³⁴ երկրորդ համաժողովը: Այն կարևոր դեր կատարեց Մարաշում որբահավաքման և որբախնամության գործում³⁵:

Գերմանացի հայասեր Էռնեստ Լոհմանի օժանդակությամբ Մարաշ է տեղափոխվում օրիորդ Աննա Ռուբախը³⁶, որը 1898 թ. ստանձնում է ղեկավարել Բեթշալում³⁷ որբանոցը: Ավելի քան մեկ տարի Ա. Ռուբախը կայանի միակ գերմանացի աշխատակիցն էր: 1900 թ. հոկտեմբերին որբանոցում երեխաների թիվը կտրուկ աճում է՝ 30-ից հասնելով 180-ի: Երեխաներն ապրում էին երկու շինություններում, ավագ տարիքի 110 տղաներն առաջին որբանոցում՝ Բեթշալումում, իսկ կրտսեր տարիքի

31 Աղջիկների պատրաստած ձեռագործերը տեղ գտան Լոնդոնի շուկայում: Նույն տեղում, 37:

32 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 489:

33 Նույն տեղում, 490:

34 Հայաստանի օգնության գերմանական միությունը (ՀՕԳՄ) հիմնվել 1896 թ. հուլիսի 2-ին: Մանրամասն տե՛ս Աշոտ Ն. Հայրունի, *Հովհաննես Լեւիսիուսի ստաբիլությունը* (Երևան, Նաիրի, 2002), 47:

35 Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 36:

36 Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության (ԱՔԲԳՕՄ) առաջին ներկայացուցիչն է, որը 1897 թ. սեպտեմբերի 5-ին լինում է Բեբեքի, նոյեմբերի 13-ին՝ Մեգիրեի կայանում, այնուհետև հաստատվում Մարաշում, տե՛ս Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 37:

37 Բեթշալում երբայերենից թարգմանաբար նշանակում էր Խաղաղության տուն: Այս շենքն ի սկզբանե եղել էր երկու տուն, որոնց տերերը մինչև 19-րդ դարի վերջ եղել են հայեր: Նրանցից մեկի տերը որդիների և դուստրերի ամուսինների հետ համիդյան կոտորածների ժամանակ սպանվել է: Երկրորդ տանտիրոջն ու ընտանիքին ևս փորձել էին սպանել, սակայն տան սենյակներից մեկի հատակին փորված թաքստոցի շնորհիվ ամբողջ ընտանիքին հաջողվել էր փրկվել: Թուրքերը սպանել էին ընտանիքի մորը, որը կանգնել էր թուրքերի առաջ՝ ընտանիքի մյուս անդամներին թաքսվելու համար ժամանակ տալով: Տե՛ս Մարտիրոսյան, *Գերմանական միախոնեղական գործունեությունն*, 47:

70 տղաները՝ որբանոցի երկրորդ վարձակալված շենքում³⁸: 1901 թ. գերմանական հյուպատոսության նախկին շենքը վերակառուցվում և ծառայում է որպես որբանոց:

1904 թ. ամռանը Բեթշալոմում երեք տները ստանում են անուններ. առաջին տունը կոչվում է «Մեր», երկրորդ տունը՝ «Հավատք», երրորդը՝ «Հույս»: Բեթշալոմի շենքային հաջորդ ընդարձակումը լինում է 1908 թ., որն էլ հնարավորություն է տալիս 50 որբի օթևան տալու: Այս չորրորդ շինությունն էլ անվանվում է «Ողորմածություն»³⁹:

1898 թ. նոյեմբերի 28-ին բացվում է Բեթել⁴⁰ որբանոցը: 1899թ. մայիսի 27-ին այստեղ է ժամանում Վիլիելմ Շպիքերը կոչ՝ Մարի Շպիքերի⁴¹ հետ: Շպիքերն իր գործին նվիրյալ անձի, հայ ժողովրդի անկեղծ բարեկամի համբավ ուներ⁴²:

Մարաշի որբանոցներում ներմուծվում է կառավարման նոր մեթոդ. յուրաքանչյուր երեխային «մայրիկ»⁴³ է նշանակվում՝ ավագ տարիքի որբուհի, որը որոշ չափով պետք է հետևեր նրանց կարգապահությանը⁴⁴: Շպիքերն իր առաքելությունը կատարելով՝ որբանոցի գործը հանձնում է պաստոր Բրունեմանին⁴⁵, որն ընդլայնում է որբանոցի տարածքը, տղաներին առանձնացնում է գերմանական որբանոցում, աղջիկներին՝ ամերիկյան: Գերմանացի միսիոներներն ամերիկացի իրենց գործընկերների համեմատ ավելի շատ դրամական միջոցներ և հովանավորներ ունեին, որի արդյունքում նրանց գործունեությունն ավելի բեղուն էր⁴⁶:

Գերմանական որբանոցներում առաջնահերթությունը տրվում էր կրթությանը. այդ է վկայում որբանոցների հիմնումից և որբերի հավաքագրումից հետո դպրոցների բացումը: Դպրոցները տալիս էին սկզբնական շրջանում տարրական գիտելիքներ, իսկ ավելի բարձր առաջադիմություն ունեցողները հնարավորություն էին ստանում շարունակել կրթությունը Մարաշի ամերիկյան քոլեջում, բացառիկ դեպքերում՝ նաև Գերմանիայում: Դասապատրաստման աշխատանքներում ներգրավված էին նաև հայեր. աղբյուրներում նշվում են Հովհաննես Հայդոսթյանի, Կարապետ Կերիկյանի և այլոց անունները: Ավագ տարիքի պատանիներին դասավանդում էր ուսուցիչ Շպիքերը, իսկ աղջիկների որբանոցից լավագույններին ուղարկում էին ամերիկյան քոլեջ՝ ուսուցչուհիներ դառնալու նպատակով⁴⁷:

38 Նույն տեղում, 43:

39 Նույն տեղում, 43-44:

40 Եբրայերենից թարգմանաբար նշանակում է Աստծո տուն: Տե՛ս նույն տեղում, 41:

41 Միսիոներների մասին մանրամասն տե՛ս Մարտիրոսյան *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 148:

42 Վարդան Գրիգորյան, *Հայությանը նվիրված կյանք. Էստրոնտի Հեղվիգ Բյուրի հայանպասք գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* (Երևան, ՀՀ ԳԱԱ ՀՑՏԻ, 1996), 19:

43 Որբանոցները ղեկավարող կանանց անվանում էին «մայրիկ» կամ «տան մայրիկ»: Տե՛ս Մարտիրոսյան *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 20:

44 Նույն տեղում, 42:

45 Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ*, 490:

46 Նույն տեղում, 491:

47 Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 45:

1908 թ. հոկտեմբերին աղջիկների որբանոցում կառուցվում է 96 երեխայի և չորս դասարանի համար նախատեսված դպրոց: Այնուհետև աշակերտների թիվն աճում է՝ հասնելով 207-ի:

Որբանոցում առկա էին կրթական գործընթացի հետ կապված դժվարություններ, մասնավորապես՝ դասագրքերի և ուսուցիչների պակասության հետ կապված խնդիրը⁴⁸: Չկային աշխարհագրության, բնագիտության և պատմության դասագրքեր, իսկ 207 երեխայի համար կար ընդամենը 3 ուսուցչուհի՝ նախկին որբուհիներ Սենեմը, Դշխունը և Օվսաննա Գյոնդյանը:⁴⁹ Դասագրքերի խնդիրը լուծելու համար փորձ է արվում մի քանի գիրք թարգմանել գերմաներենից: Ուսուցչուհիների թիվն էլ հետագայում ավելանում է⁵⁰:

Ի դեպ, որբանոցում դասագրքերի լեզուն հայատառ թուրքերենն էր, սակայն սաներն առաջին երեք տարում յուրացնում էին նաև արևմտահայերենն ու օսմաներենը, որոնց հետագայում ավելանում է նաև անգլերենը: 7-րդ դասարանից սկսած անցնում էին գերմաներեն և անգլերեն:

Տղաների որբանոցում ևս կրթական ոլորտում փոփոխություններ են տեղի ունենում: Երեխաների կրթությանը զուգահեռ հոգ էր տարվում նաև արհեստներ ուսուցանելու մասին, որն ուներ մի քանի նպատակ. նախ՝ որբերը դրանով հնարավորություն էին ստանում իրենց հետագա կյանքում սեփական վաստակով ապրելու, երկրորդ՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կողմից պատրաստված իրերը հանվում էին վաճառքի տեղում կամ Գերմանիայում, երրորդ՝ արհեստ սովորած երեխաներն օգտակար էին լինում որբանոցին՝ հոգալով իրենց հազուստի, կոշիկների և այլ անհրաժեշտ պարագաների համար⁵¹:

Ինչպես որբանոցներն էին առանձնացված տղաների և աղջիկների, այնպես էլ կրթական գործն ու արհեստների ուսուցանումն էր իրականացվում առանձին-առանձին: Կրտսեր տարիքի աղջիկներն ուսանում էին դպրոցում, ավագ տարիքի աղջիկները՝ որևէ արհեստ սովորում: Աղջիկները ստանում էին նաև երկու ժամ Աստվածաշնչի պատմության, մեկ ժամ երգեցողության դաս⁵²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ գերմանացի միսիոներները տարբերվում էին ամերիկյան միսիոներներից նրանով, որ բացի կրթական-մարդասիրական ծրագրերից, ունեին նաև այլ նպատակ՝ տնտեսության հետագա զարգացման համար որոշ նախադրյալների ձևավորում: Որբանոցների մեջ կարևորություն էին տալիս արհեստանոցների ստեղծմանը: Ամերիկյան միսիոներությունն առավելապես նվիրված էր կրթական գործունեությանը: Ավելացնենք, որ ամերիկյան միսիոներների հաջողության նախադրյալներից պետք է համարել նրանց ոչ քիչ ներկայացուցիչների

48 Նույն տեղում, 45:

49 Տեղին է նկատել, որ աղջիկների կրթությունը համեմատաբար նոր երևույթ էր հայ իրականության մեջ, իսկ նրանց համար ուսուցչուհիներ գտնելը՝ բարդ խնդիր:

50 Մարտիրոսյան, *Գերմանական միսիոներական գործունեությունն*, 45:

51 Նույն տեղում, 46:

52 Նույն տեղում, 47:

մարդասիրական վերաբերմունքը տառապյալ հայերի նկատմամբ, հատկապես թուրքերի կազմակերպած ջարդերի և կոտորածների պայմաններում⁵³:

Հարկ ենք համարում փաստել, որ 1909 թ. օգոստոսի 7-ից 1910 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում *մարաշցի* (ընդգծումն իմն է՝ Ն.Բ.) որբերի թվաքանակն ըստ որբանոցների՝ համաձայն «Կիլիկիոյ Որբախնամ Կեդրոնական հանձնաժողովի տեղեկագրի» հետևյալն էր՝ Ազգային որբանոցում՝ 71 տղա և 124 աղջիկ, գերմանականում համապատասխանաբար 14 և 26, անգլիականում՝ 2 և 3, չ՛էնանեանում՝ 1 տղա և 1 աղջիկ:⁵⁴

Ամփոփելով փաստենք, որ ամերիկյան ու գերմանական միսիոներների հիմնած դպրոցների ազդեցությունն արևմտահայ կրթական կյանքի վրա, ընդհանուր առմամբ, պետք է գնահատել դրական. դրանք նպաստել են սաների այս կամ այն մասնագիտության մեջ խորանալուն, լեզուների իմացությանը, գիտամանկավարժական և թարգմանական գրականության ստեղծմանը, թեև այդ ամենի ընդհանուր ուղղվածության պարագայում հաճախ մերժվում էր բուն հայկականը:

Թեև «քրիստոնյա» եվրոպական պետությունները գրեթե ոչինչ չարեցին հայերի քաղաքական վիճակը բարելավելու համար, սակայն քրիստոնյա եկեղեցիների, ընկերությունների և միսիոներների օժանդակությամբ հնարավոր եղավ ծավալել կրթական բեղուն գործունեություն:

Kristine V. Najaryan

THE ORGANIZATION OF EDUCATIONAL LIFE OF MARASH ORPHANAGES AFTER THE HAMIDIAN MASSACRES (1896-1909)

SUMMARY

Key words: Marash, Cilicia, education, study, orphans, orphanages, missionaries, Hamidian massacres.

The article examines the organization of educational life of Marash orphanages by the Armenian and foreign humanists and humanitarian organizations after the Hamidian period. Reference is made to the full enlightenment and educational success of the Armenian, English and German orphanages.

Based on primary and secondary sources the article concludes that the organization of the Armenian orphanages was complicated enough and there were a lot of financial problems and difficulties. That's why the Armenian orphanages could not expand a long a

53 Արման Ջ. Կիրակոսյան, *ԱՄՆ-ի արքայաբն քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար- 1914 թ.)* (Երևան, ԵՊՀ, 2014), 315:

54 Տե՛ս Տեղեկագիր Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական Յանձնաժողով 1909 օգոստոս 7-1910 դեկտեմբեր 31 եւ 1911 յունվ. 1-1911 յունիս 30 (Կ.Պոլիս, տպագրութիւն Օ. Արձուման, 1911), 90:

ctivity. The main conclusion is that Marash was considered to be an important educational center and had a great contribution to the life of the Armenian orphans. The activity of foreign and the Armenian missionaries greatly promoted and encouraged this humanitarian work.

Кристине В. Наджарян

ОРГАНИЗАЦИЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА В СИРОТСКИХ ПРИЮТАХ МАРАША ПОСЛЕ ГАМИДОВСКИХ ПОГРОМОВ (1896-1909)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Мараш, Киликия, образование, обучение, сироты, приюты, миссионеры, гамидовская резня.

В статье рассматривается организация армянскими и иностранными миссионерами учебного процесса в приютах Мараша после гамидовских погромов. Отмечены успехи армянских, английских и немецких приютов в области образования и просвещения. Представляя разностороннее исследование учебного процесса детей нашедших убежище в приютах Мараша, отмечается важное значение образования в жизни воспитанников армянских, английских и немецких приютов. Опираясь на первоисточники и вторичную литературу, можно утверждать, что основание армянских приютов было достаточно сложным процессом, и как бы то ни было велико желание дать армянским сиротам достойное образование, недостаток необходимых средств ограничивал возможности. Скорее всего, именно это стало причиной того, что армянские приюты не могли развернуть долгосрочную деятельность. По этой же причине об их функционировании нет подробной информации. В этих условиях, несомненно, вклад иностранных деятелей, оказывающих огромную поддержку, делающих все возможное для улучшения условий жизни армянских сирот, был особенно велик.

REFERENCES

Avetisean, Jovanne's. «Սիրուած դէմքեր» [Favorite Faces]. *Byurakn* (Constantinople), 8 January, no. 2, 1905;

Davt'ean, Smbat. «Մարաշ, քաղաքային, տեղագրական, ազգագրական, տնտեսական, կրթական եւ այլ տեղեկութիւններ» [Marash, Urban, Topographic, Ethnographic, Economic, Educational and Other Information]. *Byurakn* (Constantinople), 19 November, no. 43, 1898;

Gasparyan, Ruben. «Կիլիկիայի հայ բնակչությունը և վարչական բաժանումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին» [The Armenian Population and the Administrative Division of Cilicia at the End of the XIX Century and Beginning of the XX century]. *Banber Hayastani arkhivneri* 1-2 (2011);

Gasparyan, Ruben. *Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.)* [Armenian Massacres in Cilicia (90s of XIX century – 1921)]. Yerevan: HH GAA Gitut'yun, 2005;

Grigoryan, Vardan. *Էստրոնտի Հեղվիզ Բյուլի հայանպասք գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում 1911-1951 թթ.* [Life Dedicated to Armenians: Pro-Armenian Activity of Estonian Hedwig Büll in Cilicia and Syria (1911-1951)]. Yerevan: HH GAA AGMI, 1996;

Hayruni, Ashot. *Հովհաննես Լեփսիուսի առաքելությունը* [Mission of Johannes Lepsius]. Yerevan: Nairi, 2002;

Kalousdian, Krikor. *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չէյթուն* [Marash or Germanicia and Heroic Zeitun]. N. Y.: Koch'nak, 1988;

Kirakosyan, Arman. *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914թ.)* [US Foreign Policy and Western Armenians (19th century -1914)]. Yerevan: YSU, 2014;

Martirosyan, Hayk. *Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը 1896-1919 թթ.* [German Missionary Activity in the Ottoman Empire: Marash Station (1896-1919)]. Yerevan: Zangak, 2016;

P'ayaslyan, Step'an. «Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին» [American Protestant Missionary Activity in the Ottoman Empire in the First Half of the 19th Century]. *Banber Hayastani arkhivneri* no. 2 (2006): 120-134;

Qeshishean, Vardi. «Մարաշ-դպրոցներ» [Marash – Schools]. <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppe/sandjakofmarash/educationandsport/educationalassociations.html>;

Ter-Vardanian, Hovsep'. *Մարաշի ջարդը 1920-ին* [The Massacre of Marash in 1920]. Aleppo: Arevelq, 2010;

«Լպեն Էզեր Աղջկանց որբանոց» [Epen Ezer Girls' Orphanage]. *Nor Marash teghekatu Germanik-Vaspurakan mshakutayin miutyanyan*, no. 4 (2010);

Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ [Cilicia: An Attempt of Geographical Discription]. Saint Petersburg: I. Libermann tparan, 1894;

Տեղեկագիր Կիլիկիոյ որբախնամ կեդրոնական Յանձնաժողովի 1909 օգոստոս 7-1910 դեկտեմբեր 31 և 1911 յունիս. 1-1911 յունիս 30 [Newsletter of Cilician Orphan Care Central Committee 7 August 1909 – 31 December 1910 and 1 January 1911 – 30 June 1911]. Constantinople: O. Ardzuman, 1911.

ՎԱՆԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ (1870-ԱԿԱՆ ԹԹ. – 1914)

Բանալի բառերը՝ համիդյան կոտորածներ, Մեծ եղեռն, Վանի գավառակ, վանքեր, Վարա-գավանք, Լիմ, Կտուց:

Հոդվածում ներկայացվում և վերլուծության է ենթարկվում Վանի գավառակի տարածքում XIX դարի վերջին – XX դարի սկզբներին գործող հայկական վանքերի կացությունը: Նշված ժամանակաշրջանում հայկական վանական կյանքն ինչպես Վանի գավառակում, այնպես էլ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում բնութագրվում է շարունակական անկման միտումներով, ինչը պայմանավորված էր քրդերի կողմից վանքերի պարբերական ասպատակումներով և հայ բնակչության շարունակական աշխարհականացմամբ ու դրա հետ կապված՝ վանականի կյանքն ընտրողների թվի նվազմամբ:

Վերոնշյալի հետևանքով՝ 1870-ական թթ. – 1910-ական թթ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում ամայանում են Վան-Վասպուրականի բազմաթիվ վանքեր:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո հայկական ազգային կառույցների գործունեության շնորհիվ՝ Վանի վանքերի սոցիալ-տնտեսական վիճակն սկսում է ցույց տալ բարելավման միտումներ, հետզհետե սկսում է աշխուժանալ վանական կյանքը: Սակայն 1914 թ. բռնկված Առաջին աշխարհամարտը և Մեծ եղեռնը մեկընդմիջտ կասեցնում են այդ գործընթացը:

Ա. Վանի գավառակի վարչական և եկեղեցական-թեմական բաժանումը

Վանի գավառակը (կազա) համանուն գավառի (սանջակ) և նահանգի (վիլայեթ) կենտրոնն էր (թուրքերեն՝ «*մերքեզ կազա*»): Օսմանյան կայսրության՝ XIX դարի վերջի – XX դարի սկզբի վարչատարածքային բաժանմամբ՝ գավառակը կազմված էր կենտրոնական կուսակալանիստ Վան քաղաքից ու անմիջապես կուսակալի ենթակայության տակ գտնվող շրջակա գյուղերից (Վան-Տոսպ մերքեզ նահիե (կենտրոնական գյուղախումբ)) և երեք այլ նահիեններից՝ Թիմար (գտնվում էր Վան-Տոսպից դեպի հյուսիսարևմուտք), Արճակ (Վան-Տոսպից և Թիմարից դեպի արևելք) և Հայոց Ձոր (Վան-Տոսպից դեպի հարավ)¹:

Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ 1913-1914 թթ. Վանի թեմական իշխանությունների կողմից կազմված վիճակագրության՝ Վան քաղաքում կար 4.230 տուն, 22.470 շունչ հայ, Վան-Տոսպի շրջանի 20 հայաբնակ բնակավայրերում՝ 1.592 տուն, 9.614 շունչ հայ: Արճակի նահիեն ուներ 22 հայաբնակ բնակավայր՝ 1.013 տուն, 6.679 շունչ հայ բնակչությամբ, Թիմարի նահիեն՝ 40 հայաբնակ բնակա-

1 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», *Մտրճ* (Թիֆլիս), 1904, № 3, 42-43: Տե՛ս նաև Владимир Маевский, *Военно-Статистическое описание Ванскаго и Битлисскаго вилаетовъ, I. Географический очеркъ* (Тифлисъ: Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 10-11:

վայր՝ 2.525 տուն, 15.411 շունչ հայ բնակչությամբ և Հայոց Ձորի նահիեն՝ 30 հայաբնակ բնակավայր՝ 1.383 տուն, 8.482 շունչ հայ բնակչությամբ: Այսպիսով, Մեծ եղեռնի նախօրյակին Վանի գավառակի հայ բնակչության թիվը կազմում էր 10.743 տուն, 62.656 շունչ²:

Վանի գավառակի առանձին շրջանների թեմական պատկանելությունը խայտաբղետ էր: Վան քաղաքն ու Վան-Տոսպի գյուղերը, Արճակի գյուղախումբն ամբողջությամբ, ինչպես նաև Թիմարի գյուղախումբը մասամբ գտնվում էին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի իրավասության ներքո՝ Վանի արքեպիսկոպոսական վիճակի կազմում, Թիմարի գյուղախմբի մի շարք հայաբնակ վայրեր ենթակա էին Լիմ-Կտուց վանական վիճակի հովվական իշխանությանը, Հայոց Ձորի գյուղախումբը Աղթամարի կաթողիկոսության թեմ էր³:

Վանի թեմը հիշատակվում է X դարից հետո՝ որպես Վարագավանքի թեմ: Վանքի վանահայրությունն ու վիճակի առաջնորդությունն ի սկզբանե գրեթե անբաժան էին, այսինքն՝ Վարագավանքի վանահայրը նաև թեմի առաջնորդն էր: Դարերի ընթացքում թեմը հաջորդաբար ենթարկվել է Աղթամարի և Էջմիածնի կաթողիկոսների հոգևոր իրավասությանը, իսկ 1828 թ. հետո անցել է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի ենթակայության տակ: XIX դարի վերջին – XX դարի սկզբին Վանի թեմը և նրան կից՝ Լիմ-Կտուցի և Հեքյարիի վիճակներն ընդգրկում էին Վանի նահանգի գրեթե ամբողջ տարածքը⁴:

Լիմ կղզու թեմը հիշատակվում է XIV դարից: Մինչև 1898 թ. կազմում էր անջատ վանահայրություն, երբեմն Աղթամարի կաթողիկոսության իրավասության տակ: 1898 թ. կցվում է Կտուցի վանահայրությանը⁵:

Կտուցի վանքը և թեմը հաստատվել էին Լիմից անջատված միաբանների կողմից՝ XV դարում (այլ տվյալներով՝ XVII դարում): 1828 թ. անցել է Վանի առաջնորդության իրավասության տակ, իսկ 1898 թ. միավորվել Լիմի վանական վիճակի հետ: Լիմ-Կտուց միացյալ վանական վիճակը կցվել է Վանի առաջնորդությանը 1904 թ.՝ Ազգային կենտրոնական վարչության որոշմամբ⁶:

Երբեմնի ազդեցիկ Աղթամարի կաթողիկոսությունը XX դարի սկզբի դրությամբ արդեն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին էր զիջել նախկին եկեղեցական վիճակների մեծ մասը՝ կորցնելով իր նշանակությունը: 1895 թ. Աղթամարի կաթողիկոս

2 Տե՛ս Ա-Դօ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին* (Երևան, «Լոյս», 1917), 11-13, 18, 21:

3 Տե՛ս Մաղաբիա Օրմանեան, *Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը* (Կոստանդնուպոլիս, հրատարակիչք Վ. և Հ. Տէր-Ներսեսեան, 1911), 261, 265: Տե՛ս նաև Արշակ Ալպոյաճեան, «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1908), 312-313, 346: Հայոց Ձորի թեմական պատկանելության վերաբերյալ մասնավորապես տե՛ս Թեղդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօրին աղէկրալի 1915 տարիին* (Մի Շորք, 1985), 37, Սամվել Կարապետյան, *Հայոց Ձոր* (Երևան, ՀՃՈՒՀ, 2015), 32:

4 Տե՛ս Ալպոյաճեան, «Առաջնորդական վիճակներ», 312:

5 Նույն տեղում, 313:

6 Նույն տեղում:

Խաչատուր Շիրոյանի (1864 – 1895) մահից հետո կաթողիկոսության աթոռը մինչև Մեծ եղեռնը մնացել է թափուր՝ հանձնվելով Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից ուղարկված տեղապահների և Տնօրեն խորհրդի կառավարմանը⁷:

Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1904 թ. տվյալների՝ Վանի թեմում (Վան-Տոսպ, Ադիջևազ, Բերկրի, Արճեշ) կային 114 եկեղեցի և 25 կանգուն (անվանապես գործող) վանք, Լիմ-Կտուցի թեմում (Թիմար)՝ 24 եկեղեցի և 8 վանք, Ադթամարի թեմում (Կարճկան, Ոստան, Կեցան, Կարկառ, Հայոց Ձոր, Շատախ)՝ 193 եկեղեցի և 41 վանք⁸:

Բուն Վանի գավառակի տարածքում Մեծ եղեռնի նախաշեմին կար անվանապես գործող 16 վանք, այդ թվում՝ Վան-Տոսպի գյուղախումբ՝ 5 (Վարագավանք, Սուրբ Գրիգորի կամ Սալնապատի վանք, Կարմրավորի Սուրբ Աստվածածին վանք, Սուրբ Խաչ վանք, Կոունկ Վանից կամ Ծովահայաց Սուրբ Աստվածածնի վանք), Թիմարի նահիե՝ 5 (Կտուցի Սուրբ Կարապետ վանք կամ Կտուց անապատ, Լիմ անապատ կամ Սուրբ Գևորգի վանք, Այլորի Սուրբ Աստվածածին վանք, Սուրբ Էջմիածին վանք, Էրերնա Սուրբ Սահակի վանք), Արճակի նահիե՝ 1 (Արճակի Սուրբ Աստվածածին) և Հայոց Ձորի նահիե՝ 5 (Անգղի Սուրբ Աստվածածինը, Սրխու Սուրբ Նշան կամ Սուրբ Մարի-նոսը, Խեքա Սուրբ Գևորգը, Սուրբ Աբրահամը, Ծիծաղաբեր Սուրբ Աստվածածինը)⁹:

Բ. Մեծ եղեռնի նախաշեմին Վանի գավառակի հայկական վանքերի սոցիալ-տնտեսական կացության ընդհանուր բնութագիրը

Պատմական Վան-Վասպուրականը Արևմտյան Հայաստանի վանքերով և սրբավայրերով առավել հարուստ տարածքներից մեկն էր: Ուսումնասիրողները դա պայմանավորում են հետևյալ երեք հիմնական հանգամանքներով. ա) հնում այդ տարածքը Հայաստանի առավել ընդարձակ և բազմամարդ նահանգներից մեկն էր, բ) Վասպուրականի թագավորները, եկեղեցական նվիրապետությունն ու ժողովուրդը եռանդուն են եղել վանքաշինության հարցում, գ) նահանգը նյութապես բավական հարուստ էր, ունեցել է խաղաղության և բնականոն զարգացման համեմատաբար ավելի երկար ժամանակաշրջաններ¹⁰:

XIX դարի վերջին – XX դարի սկզբների ընթացքում վանական կյանքը ինչպես Վանի գավառակում, այնպես էլ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում բնութագրվում է շարունակական անկման միտումներով: Դա պայմանավորված էր երկու հիմնական գործոնով՝ քրդերի կողմից վանքերի պարբերական ասպատակումներով

7 Տե՛ս Ներսէս Ակինեան, *Գաւազանագիրք Կաթողիկոսաց Ադթամարայ: Պատմական ուսումնասիրութիւն* (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1920), 192: Տե՛ս նաև Ալաօյաճեան, «Առաջնորդական վիճակներ», 345:

8 Տե՛ս «1904 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց» (Կ.Պոլիս, տպ. Յ. Մատթեոսեան, 1904), 371-372, 394-395:

9 Հաշվարկը արվել է մեր կողմից՝ ըստ տարբեր աղբյուրների:

10 Տե՛ս Համազասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1947), 976:

և հայ բնակչության շարունակական աշխարհականացմամբ ու դրա հետ կապված՝ վանականի կյանքն ընտրողների թվի նվազմամբ:

Հատկապես մեծ ավերածություններ պատճառվեցին Վանի վանքերին համիդյան կոտորածների ժամանակ: 1895-1896 թթ. կողոպտվեցին և ավերվեցին Վանի գավառակի գրեթե բոլոր գործող վանքերը: Այսպես, Հայոց Ձորում տուժեցին Սպիտակ Սուրբ Աստվածածնի, Անգղա Սուրբ Աստվածածնի, Սրխու, Էրմերա Սուրբ Աստվածածին, Խեքա Սուրբ Գևորգ վանքերը¹¹, Թիմարում՝ Ալյուրի, Էրերնա Սուրբ Սահակ, Սուրբ Էջմիածին վանքերը, Լիմ և Կտուց անապատների «Դրսի տուն» (վանական համալիրի՝ համապատասխան կղզիներից դուրս գտնվող) հատվածները¹², Արճակում՝ Սուրբ Աստվածածին վանքը¹³: Վան քաղաքի և շրջակա գյուղերի ջարդի ընթացքում (1896 թ. հունիս)՝ կողոպտվեցին և հրկիզվեցին Վան-Տոսպի գյուղախմբի վանքերը (Վարագավանք, Կարմրավոր Սուրբ Աստվածածին, Սուրբ Խաչ, Սալնապատի Սուրբ Գրիգոր), սպանվեցին վանքային միաբանության անդամներ, վանքերին կից գործող դպրոցների աշակերտներ, վանքերում ապաստանած հայեր¹⁴: Միայն Լիմի ու Կտուցի անապատների՝ համապատասխան կղզիներում տեղակայված հատվածները, շնորհիվ իրենց անհասանելի դիրքի, խուսափեցին հարձակումներից՝ իրենց հերթին ապաստան տալով շուրջ 10.000 հայ փախստականի¹⁵:

Համաձայն 1896 թ. կազմված համագումար վիճակագրության՝ համիդյան ջարդերի արդյունքում Հայոց Ձորում թալանվել և հրկիզվել էին 5 վանք և 6 եկեղեցի, սպանվել էին 14 քահանա և վարդապետ, Թիմարում՝ համապատասխանաբար՝ 5 վանք, 2 քահանա և վարդապետ, Վան-Տոսպում և Արճակում՝ 4 վանք և 2 եկեղեցի, 4 քահանա և վարդապետ¹⁶:

Վերոնշյալի հետևանքով՝ 1870-ական թթ. – 1910-ական թթ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում Վան-Վասպուրականի բազմաթիվ վանքեր ամայացան և մատնվեցին անխնամության: Մեկ տվյալի համաձայն՝ Վասպուրականում 1870-ական թթ. կեսերին կար 70 գործող վանք՝ 1.500 միաբաններով, իսկ արդեն 1910-ական թթ. սկզբներին՝ միայն 30 կանգուն վանք¹⁷:

Դեռևս 1873 թ. Վանի Ալյուր գյուղի Սուրբ Աստվածածին վանքում տեսչական այցով գտնվող Երեմիա եպիսկոպոս Տեկանցն իր նոթերում կենկատակ արձանագրում էր, որ վանքում միաբան չլինելու պատճառով միաբանության պաշտոն են վարում 4

11 Տե՛ս «Աղթամարայ հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի վերջին թողոթն եւ տեղեկագիրը», *Արարասր* (Սբ. Էջմիածին), 1896, Ե., մայիս, 247:

12 Տե՛ս «Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում», *Արարասր*, 1896, Բ., փետրվար, 89:

13 Տե՛ս «Աշխարհանք» շաբաթաթերթ գրական, քաղաքական, փոփոխական (Վան), թիվ 18, 29 մայիս 1911, 12:

14 Տե՛ս «Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին», *Արարասր*, 1896, ԺԲ., դեկտեմբեր, 579:

15 Տե՛ս Մակար վրդ. Տեր-Յովհաննէսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», *Բիզանդիոն* (Կ.Պոլիս), փետրվար 21 (մարտ 6) 1911, թիվ 4366:

16 Տե՛ս «Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին», *Արարասր*, 1896, ԺԲ., դեկտեմբեր, 586:

17 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը. VI. Հայոց Ձորի հայ վանքերը», *Աշխարհանք*, 20 մարտի 1911 (թիվ 10), 273:

կատուներ¹⁸: Մեծ եղեռնի նախօրյակին Վանի գավառակի միայն հատուկենտ վանքեր ունեին կայուն միաբանություն, այն էլ՝ սովորաբար բաղկացած մեկից երեք անդամներից (Վարագավանք, Լիմ, Կտուց): Մնացած վանքերը միայն անվանապես էին գործող՝ տնօրինվելով այցելող հոգևորականի, հարևան հայաբնակ բնակավայրի քահանայի, հոգաբարձու մարմնի, երբեմն անգամ՝ վանքում բնակություն հաստատած որևէ պատահական աշխարհիկ անձի կողմից:

Վանքերի ամայացման հետևանքով առանց որևէ վերահսկողության թողնված վանքապատկան ընդարձակ կալվածքները գրավվում և օգտագործվում էին քուրդ և հայ գյուղացիների կողմից՝ չնչին վարձավճարի դիմաց, երբեմն՝ ձրի:

Անգամ առավել խոշոր գործող վանքերի միաբանները բողոքում էին նյութական միջոցների սղությունից և դրա հետևանքով՝ վանքային շինությունների, վանքապատկան տնտեսության անմխիթար վիճակից: Այսպես, Լիմ անապատի միաբան Մակար վարդապետ Տեր-Հովհաննիսյանը 1911 թ. իր թղթակցություններից մեկում արձանագրում էր, որ վանքը չունի կալի մեքենա, ինչի հետևանքով փչանում է հացահատիկի որոշ մասը, իսկ Լիմի անապատի ենթակայության տակ գտնվող և անվանապես գործող վանքերի (Էջմիածին, Սուրբ Սահակ) շենքերի մեծ մասը գրեթե ավերակ է¹⁹:

Քրդական հարձակումների հետևանքները հաղթահարելու, անմխիթար տնտեսական վիճակը բարելավելու հրամայականը հանգեցնում էր նրան, որ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի համաձայնությամբ որոշ վանքերի նկատմամբ հաստատվում էր աշխարհիկ անձանցից կազմված հոգաբարձություն: Այսպես, համիդյան կոտորածներից հետո նման հոգաբարձություն էր սահմանվել Վարագավանքի նկատմամբ (մանրամասն տե՛ս հոդվածի Վարագավանքին վերաբերող բաժնում):

Վանքի կառավարման գործառնությունը դրվում էր որևէ աշխարհիկ անձի կամ հոգաբարձության վրա նաև այն պարագայում, երբ վանքը տարբեր պատճառներով (բնական մահ, կոտորածներ) այլևս դադարում էր ունենալ միաբաններ, կամ էլ վանքում ապրող միաբաններն իրենց գառամյալ տարիքի պատճառով այլևս անկարող էին վարել վանահայրության պաշտոնից բխող պարտականությունները²⁰:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը, գավառական խորհուրդները ծրագրեր էին մշակում կանգուն շենքեր ունեցող, սակայն սակավաթիվ միաբանությամբ կամ միաբաններից գուրկ վանքերը կրթական նպատակներով ծառայեցնելու ուղղությամբ: Այսպես, Վանի գավառակի վանքերից շատերում (Վարագավանք, Սալնապատի Սուրբ Գևորգ, Կարմրավոր Սուրբ Աստվածածին) բացվում են գիշերօթիկ դպրոց-որբանոցներ 1894-1896 թթ. համիդյան կոտորածների արդյունքում ծնողներին կորցրած երեխաների համար: Նշված դպրոցները պահելու համար, ի թիվս այլ միջոցների, օգտագործվում էր տվյալ վանքի վանքապատկան կալվածքներից ստացվող հասույթների մի

18 Տե՛ս Երեմիա Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.* (Երևան, Հայաստանի ԳԱԱ պատմ ինստ., 1991), 266:

19 Տե՛ս Մակար վրդ. Տեր-Յովհաննեսյան, «Վանա ծովն եւ իր կղզիները», *Բիզանդիոն*, 23 փետրվարի (8 մարտի) 1911, թիվ 4368, 1:

20 Տե՛ս Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, 995:

մասը²¹: Վանքերից շատերում դպրոցներն ու գիշերօթիկ վարժարանները գործում էին որոշ ընդհատումներով նախքան Մեծ եղեռնը:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո Վանի վանքապատկան տնտեսությունների կառավարման արդյունավետության բարձրացման հարցում որոշակի ներդրում են ունենում նաև Հ. Յ. Դաշնակցության տեղական կառույցները: Այսպես, օրինակ, Հայոց Ձորում դաշնակցական գործիչները կարողանում են որոշ չափով կարգ ու կանոն մտցնել վանքապատկան կալվածքների վարձակալության հարցերում, ավելացնել վարձակալությունից ստացված հասույթները և ուղղել դրանք գավառակի հայկական դպրոցների ծախսերի վրա²²:

Շնորհիվ ազգային-համայնքային կառույցների գործունեության՝ Վանի վանքերի սոցիալ-տնտեսական վիճակը սկսում է հետզհետե ցույց տալ բարելավման միտումներ: Սկսում է աշխուժանալ վանական կյանքը, ինչն արտահայտվում է Վան-Վասպուրականի առանձին խոշոր վանքերում վանականների թվի որոշակի ավելացմամբ: Սակայն 1914 թ. բռնկված Առաջին աշխարհամարտը և Մեծ եղեռնը մեկընդմիջտ կասեցրեցին այդ գործընթացը:

Գ. Վան-Տոսպի վանքերը

1. Վարազավանք (Ներքին Վարազ, Ստորին Վարազ, Նոր Մենաստան Սուրբ Իսաչի) Վարազավանքը կամ Ստորին (Ներքին) Վարազա վանական համալիրը Վան-Վասպուրականի և ամբողջ Արևմտյան Հայաստանի առավել նշանավոր վանքերից մեկն էր՝ *«համայն վասպուրականցուց պաշտելի և խնկելի սրբավայր, հոգին ու միտք գրառող, արդար»*²³: Տեղակայված էր Վան քաղաքից հարավ-արևելք, Ներքին Վարազ լեռան արևմտահայաց լանջին, փոքրիկ հարթության վրա:

Մեծ եղեռնի նախաշեմին Վարազավանքը բաղկացած էր յոթ՝ միմյանց կից եկեղեցիներից, ինչի պատճառով տեղի մահմեդական բնակչության շրջանում այն հայտնի էր «Ետտի քիլիսե» (յոթ եկեղեցի) անունով²⁴: Վանքի շուրջը ձգվում էր երկհարկանի մի շինություն, որը ներառում էր վանականների և ուխտավորների համար նախատեսված

21 Նույն տեղում, 1089:

22 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 10, 274: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ Դաշնակցության կողմից Վանի գավառի որոշ վանքերի գույքի նկատմամբ վերահսկողության հաստատումը, վանական գործերին խառնվելը առանձին դեպքերում ուղեկցվեցին եկեղեցական գույքի ապօրինի բռնագրավմամբ և նման բռնագրավումների դեմ ձայն բարձրացնող հոգևորականների նկատմամբ բռնություններով: Տե՛ս Ավետիս Հարությունյան, «Հոգևոր-կրոնական հարաբերությունները Վանի նահանգում եւ Աղթամարի վանքի կողոպտման խնդիրը», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի* 8 (2016), 133-143:

23 Գեորգ Շերենց, *Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց* (Թիֆլիս, տպ. «Վերելիչե եւ Կամենմայիսեր», 1902), 59:

24 Վանական համալիրի եկեղեցիներն էին՝ սուրբ Աստվածածինը (XI դար), սուրբ Գևորգը (գավիթ), սուրբ Նշանը (XI դար), սուրբ Իսաչը, սուրբ Սիոնը, սուրբ Հովհաննեսը կամ սուրբ Աբեղան (X դար) և սուրբ Սոփիան կամ Բերդավորը (981 թ.), տե՛ս Մուրադ Հասրաթյան, «Վարազավանք», *«Բրիտանիայ Հայաստան» հանրագիտարան* (Երևան, Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ., 2002), 962:

47 սենյակներ, փոռ, բաղնիք, Ժառանգավորաց դպրոցը, ինչպես նաև որպես վանքի առաջնորդարան ծառայող երկու մեծ սենյակ²⁵:

Վարագավանքի վերելքով և զարգացմամբ է բնութագրվում Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) վանահայրության մոտ 30-ամյա շրջանը (1857-1885 թթ., որոշ ընդմիջումներով): Խրիմյանի առաջին քայլերից է դառնում վանքը Վանի առաջնորդների իրավասությունից հանելը և այն Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին ուղղակի ենթակա դարձնելը²⁶:

Որպես Վարագավանքի վանահայր՝ Մկրտիչ Խրիմյանի նշանակալից ձեռնարկներից մեկն է դառնում 1857 թ. գարնանը վանքում Ժառանգավորաց վարժարան – գիշերօթիկ դպրոցի հաստատումը, որտեղ սկսում է ուսում ստանալ Վան քաղաքից և շրջակա գյուղերից մոտ 25 երեխա²⁷: Հետագա տարիներին վարժարանի աշակերտների թիվը հասցվում է 40-ի²⁸:

1885 թ. Մկրտիչ Խրիմյանի՝ Կ. Պոլիս կանչվելուց հետո Վարագավանքի վանահայրությունը նորից անցնում է Վանի թեմի առաջնորդներին: Դրանցից հատկապես Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեաթճյանը (պաշտոնավարել է մինչև 1888 թ.) հիմնանորոգում է տպարանը, Ժառանգավորաց դպրոցի կացարանը և այլ շինություններ²⁹:

Գ. Ալեաթճյանի և նրա հաջորդների օրոք վանքը շարունակում է իր ավելի կամ պակաս շեն ընթացքը մինչև 1896 թ. հունիս, երբ Վանի կոտորածի օրերին այն, ի թիվս շրջանի այլ եկեղեցիների և վանքերի, ենթարկվում է քուրդ ջարդարարների հարձակմանը: Վանքի միաբաններից, Ժառանգավորաց դպրոցի աշակերտներից, վանքում աշխատող մշակներից շատերը սպանվում են, վանքապատկան ունեցվածքը՝ շարժական գույքը, անասուններն ու արջառը, թալանվում: Հրկիզվում և ավերակույտի են վերածվում վանքի վարչական շինություններից շատերը: Վանքն առժամանակ ամայանում է³⁰:

Կոտորածների ալիքի մարելուց հետո վանեցիներն անմիջապես ձեռնամուխ են լինում վանքի վերականգնմանը: Որոշվում է վանքի վերաշինության և հետագա կառավարման գործը հանձնել աշխարհականների՝ անմիջապես Կ. Պոլսի պատրիարքարանի իրավասության տակ գործող և քաղաքի երևելի վաճառականներից բաղկացած հոգաբարձության: Հոգաբարձության մարմնին հաջողվում է մի քանի տարվա ընթացքում վերականգնել ավերված շինությունները, կառուցել նոր կացարաններ վանքի միաբանների, Ժառանգավորաց դպրոցի աշակերտների, վարժարանի ուսուցչական կազմի և ուխտավորների համար: Հաջողությամբ է պսակվում վանքի տնտեսության վերականգնումը, այն հասցվում է «աննախընթաց պայծառությամբ»³¹:

25 Տե՛ս Երուսնդ Լալայեան, «Վասպուրական. Նշանատր վանքեր», *Ազգագրական հանդես* (Թիֆլիս), 1911, գիրք XXI, 66:

26 Տե՛ս Շերենց, *Մրբավայրեր*, 64:

27 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», 51:

28 Տե՛ս Շերենց, *Մրբավայրեր*, 64:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», 52:

31 Նույն տեղում: Տե՛ս նաև Համբարձում Երամեան, *Յուշարձան*, հատ. Ա (Աղեքսանդրիա, տպ. Արամ Գասապեան, 1929), 433-434, նույնը, հատ. Բ., 133:

1909 թ. Վանի նահանգ այցելած արևելահայ ուսումնասիրող Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) հաղորդում է, որ վանքապատկան տնտեսությունն ընդգրկում էր 1.000 գլուխ ոչխար, 30-ից ավելի կով ու մատակ, 20-ից ավելի եզներ: Վանքն ուներ հսկայական արոտատեղիներ, ավելի քան 150 դեպյատին³² վարելահող, լավ պարտեզ, ընդարձակ ծառաստան, ջրաղաց, որի համար ջուր էր բերվել Վարագ լեռան լանջերից բխող աղբյուրներից: Բացի դրանից, վանքը տարեկան շոշափելի դրամական նպաստներ էր ստանում տարբեր կտակներից և հիմնադրամներից: Վանքի եկամուտների մեծ մասը ծախսվում էր դպրոցի վրա, մնացածը՝ միաբանության պետքերի և 40 մշակների վրա³³:

Նույն՝ 1909 թ. տվյալներով՝ Վարագավանքի Ժառանգավորաց վարժարանն ուներ երեք նախակրթական և չորս սովորական դասարաններ, որոնցում սովորում էր ավելի քան 60 երեխա³⁴: Վարժարանի առաջընթացը մեծապես պայմանավորված էր 1905 թ. այդ հաստատության տեսուչ նշանակված Արտակ Դարբինյանի գործունեությամբ: Նա մի շարք բարելավումներ է մտցնում դպրոցում, մասնավորապես՝ կազմում է ուսումնական նոր ծրագիր, որը համընկնում էր Կովկասի հայկական միջնակարգ դպրոցների, հատկապես Գևորգյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի ծրագրերին³⁵:

Վանի հայերի և Վարագավանքի կյանքում նշանակալից իրադարձություններ են դառնում 1910 թ. Ժառանգավորաց վարժարանի և Վարագավանքում Խրիմյան հայրիկի գործունեության 50-ամյա հոբելյանի տոնակատարությունները: Դրա առթիվ վանք եկած ուխտավորների շրջանում, ինչպես նաև Վանում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում կազմակերպվում են հանգանակություններ, որոնց արդյունքում հավաքված գումարներն ուղղվում են ի պետս վարժարանի կարիքների³⁶:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ 1914 թ. հունիսին Վարագավանք այցելած ռուսահայ հոգևորական Ռուբեն Բեկգուլյանցը հաղորդում էր, որ այն բավական բարեկարգ վիճակում է, թեև իր վրա դեռևս կրում է համիդյան ավերածությունների հետքերը: Վանքին կից շարունակում էր գործել Ժառանգավորաց գիշերօթիկ դպրոցը՝ 70 աշակերտով: Ընթացքի մեջ էր դպրոցի նոր շենքի կառուցումը³⁷:

Վանքում հատուկ ուշադրություն էր դարձվել մեղվապահության և թռչնապահության զարգացման վրա: Կար մեղվանոց՝ 12 նոր մեղվափեթակներով: Թռչնաբան էին բերվել և պահվում էին լավագույն ցեղատեսակների թռչուններ: Վանքում կար

32 Մեկ դեպյատինը մոտավորապես հավասար է մեկ հեկտարի:

33 Տե՛ս Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները* (Երևան, տպ. «Կուլտուրա», 1912), 24:

34 Նույն տեղում:

35 Տե՛ս Ժառանգավորաց դպրոցի սան Գարեգին Մովսիսյանի հուշերը, <http://www.raa-am.com/raa/public/publish.php?mid=5&more=2&cont=33&obid=112&uid=2012> դիտվել է 21.01.2019:

36 Տե՛ս Երամեան, *Յուշարձան*, հատ. Ա., 434, նույնի, հատ. Բ., 133:

37 Տե՛ս Рубен Бекгульяни, *По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году* (Ростовъ на Дону: типография Я. М. Искидарова, 1914), 18:

նաև ձիթահանք: Մենաստանի տնտեսական կառավարումը գտնվում էր վանական տեսչական խորհրդի ձեռքում, որը կազմված էր երևելի վանեցի հայերից³⁸:

1913 թ. Վարազավանք է այցելում Վանի նորանշանակ նահանգապետ Թահսին բեյը, որը, հաշվի առնելով վանքի առաջադիմությունը, վանքին ճտահան մեքենա (ինկուբատոր) է նվիրում, ինչպես նաև լուսանկարվում է Ժառանգավորաց վարժարանի սաների հետ³⁹:

1914 թ. վանքի միաբանությունը բաղկացած էր ընդամենը երեք վարդապետներից⁴⁰ (համեմատության համար՝ 1873 թ. վանք այցելած Երեմիա Տեկանցը հաղորդում է, որ վանքի միաբանությունը բաղկացած էր 14 անդամներից, այդ թվում՝ 8 վարդապետ⁴¹): Փոխվանահայրը (վանահայրն ի պաշտոնե Վանի թեմի առաջնորդն էր) 86-ամյա Վրթանես ծայրագույն վարդապետ Տեկանցն էր (սպանվել է թուրք ոստիկանների կողմից 1915 թ. ապրիլի 7-ին)⁴²:



Լուս. 1. Վարազավանք. ընդհանուր տեսարան (Бекгульянц Р., По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году, Ростовъ на Дону, 1914)

38 Նույն տեղում, 16-17:

39 Նույն տեղում, 18-19:

40 Նույն տեղում, 18:

41 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 272:

42 Տե՛ս Թ-էողիկ, *Գողգոթա հայ հոգևորականության*, 43:



Լուս. 2. Վարազավանքի հոգևորականներն ու սպասավորները Սենեքերիմ արքայի գահի շորջ («Արաքս» պատկերագարի հանդես, Ս. Պետերբուրգ, 1893, Գիրք Ա)



Լուս. 3. Վարազավանքի դպրոցի սաները ծղոտե գլխարկներ հյուսելուց (Бекгульянц Р., По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914)



Լուս. 4. Վանի կուսակալ Թահսին բեյը Վարազավանքում (Бекгульянци Р., По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914)

2. Ս. Գրիգոր վանք (Սալնապատի վանք, Սալնաձորի անապատ)

Վանքը գտնվում էր Վան քաղաքից դեպի հարավ-արևելք՝ 6 կմ հեռավորության վրա, Վարազա լեռան ստորոտում ձգվող մի ձորակի մեջ բարձրացած բլրակի գագաթին⁴³: Մեծ եղեռնի նախօրյակին վանքը բաղկացած էր Ս. Աստվածածնի և Ս. Կարապետի եկեղեցիներից և մի ժամատնից, շրջապատված էր պարսպով, ուներ վանականների և ուխտավորների համար նախատեսված կացարաններով առանձին շենք⁴⁴: Ամռանը վանքի տարածքը բավական հով էր, ուստի և Վանից շատ ընտանիքներ գալիս էին այնտեղ ամառանոց՝ ապաստանելով վանքի սենյակների կամ վրանների մեջ⁴⁵:

1873 թ. գարնանը վանք այցելած Երեմիա Տեկանցը հաղորդում էր, որ վանքն առանց միաբանների է, ունի միայն վանահայր: Վանքում էին ապրում մեկ մշակ, մեկ գառնարած, մեկ տնտես՝ իր երկու որդիներով: Վանքի թեմին էին պատկանում Վան-Տոսայի 11 հայաբնակ գյուղեր⁴⁶:

43 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 80:

44 Նույն տեղում, 83:

45 Նույն տեղում, 80: Տե՛ս նաև Շերենց, *Միբավայրեր*, 53:

46 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 243:

Ա-Դոյի տվյալներով (1909 թ.) վանքապատկան տնտեսությունը հարուստ չէր, ուներ ընդամենը 120 ոչխար և 30-ի չափ այլ անասուններ: Վանքապատկան արոտատեղիներն ու վարելահողերը տրված էին կապալով՝ տարեկան 30 ոսկի եկամտի դիմաց⁴⁷:

Վանքում գործում էր գիշերօթիկ դպրոց-որբանոց (բացվել էր 1898 թ.), որի ծախսերը հոգվում էին Հայոց պատրիարքարանի միջոցով տարբեր բարերարներից ստացվող նպաստներով (այդ թվում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում գործող որբախնամ ազգային ընկերությունը)⁴⁸: 1909 թ. տվյալներով՝ որբանոցն ուներ 40 սան⁴⁹:

3. Կարմրավորի Ս. Աստվածածին վանք

Կարմրավորի Ս. Աստվածածին վանքը գտնվում էր Վարազա և Զիաթնուկ լեռների լանջին տարածված փոքրիկ հարթության վրա: Հեռավորությունը Վանի Այգեստան թաղամասից՝ երեք, իսկ Վարազավանքից՝ մեկ կիլոմետր էր⁵⁰: Մեծ եղեռնի նախօրյակին վանքը բաղկացած էր մի եկեղեցուց և մի գավիթից, պարսպապատ էր: Եկեղեցին շինված էր հասարակ, անտաշ քարերից⁵¹: Վանքը վերանորոգվել է 1868-70 թթ., ապա՝ 1895-96 թթ. համիդյան կոտորածների ընթացքում դրան պատճառած ավերածություններից հետո⁵²:

1873 թ. ապրիլին վանք այցելած Երեմիա Տևկանցը հաղորդում էր, որ վանքը վանահայր չունի, ենթարկվում է ուղղակիորեն Վանի թեմի առաջնորդին: Վանքում ապրում էին մեկ միաբան, որը տեղափոխվել էր Լիմ անապատից, մեկ վերակացու, մեկ տիրացու, երկու մշակ, հինգ հոտաղ, երկու տնտես⁵³:

1880-81 թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում բռնկված սովից, ինչպես նաև 1895-96 թթ. կոտորածներից հետո վանքում առժամանակ բացվել էր որբանոց-գիշերօթիկ դպրոց⁵⁴:

Վանքն ուներ վարելահողեր, որոնք կառավարվում էին հատուկ հոգաբարձական մարմնի կողմից: 1910-ական թթ. սկզբներին վանքում էր ապրում մի վարդապետ, իբր վանահայր՝ ստանալով հոգաբարձությունից ուտեստ, հանդերձ և ամսական 30 դուրուշ ռոճիկ⁵⁵:

47 Տե՛ս Ա-Դ-ու, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 25:

48 Տե՛ս Տրդատ եպս. Պալեան, *Հայ վանորայք* (Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008), 264:

49 Տե՛ս Ա-Դ-ու, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 25:

50 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», գիրք XXI, 77:


51 Նույն տեղում:

52 Նուն տեղում, 51:

53 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 246:

54 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 51-52:

55 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 80: Թեոդիկը նշում է Մեծ եղեռնի նախօրյակին վանքի վանահոր անունը՝ Եղիշե վարդապետ Խերանյան, որն ըստ երևույթին Լալայանի հիշատակած նույն վարդապետն է: Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականություն*, 44:



Լուս. 5. Սալնապատի Ս. Գրիգոր վանք (Լալայեան Երրուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911)



Լուս. 6. Կարմրավորի Ս. Աստվածածին վանք (Լալայեան Երրուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1911)

4. Ս. Խաչ վանք

Վանքը գտնվում էր Վան քաղաքից 5 կմ դեպի հարավ-արևելք՝ Կոտուրաչ գյուղի մոտ, բլրի գագաթին: Բաղկացած էր եկեղեցուց, մատուռից (սուրբ Գևորգ) և գավիթից: XX դարի սկզբներին գավիթի ծածկն արդեն քանդված էր, իսկ եկեղեցին խարխուլ վիճակում էր⁵⁶:

Վանքը ծառայել է Վան քաղաքի և շրջակա գյուղերի բնակչության համար որպես ուխտատեղի և օղակոխության համար հարմար տեղ: «*Հայ եւ թուրք զբօսաշրջիկները պակաս չեն նորա ուռնեսաց տակ քէֆ անելու, բայց ո՛չ մի օգուտ տալով վանքին*», – նշվում է մի վկայության մեջ⁵⁷:

XIX դ. վերջին – XX դ. սկզբներին վանքը կայուն միաբանություն չի ունեցել: 1873 թ. Սուրբ Խաչ այցելած Երեմիա վարդապետ Տևկանցը նշում է, որ վանքի վանահոր պարտականությունները կատարում էր կուրուբաշցի քահանա տեր Խաչատուրը: Բացի նրանից վանքում կային երկու տնտես, չորս մշակ, մեկ հովիվ, մեկ գառնարած: Վանական տնտեսությունը բաղկացած էր 103 անասունից (85 հաստ ոչխար, 4 գոմեշ, 4 եզ, 1 կով, 9 հորթ և այլն)⁵⁸:

Արևմտահայ ազգագրագետ և մանկավարժ Մանուել Միրախորյանի՝ վանք այցելության ժամանակ (1883 թ.) այն ունեցել է վարդապետ վանահայր (անունը չի նշվում), որը մտադիր էր վանքում գիշերօթիկ որբանոց-դպրոց բացել⁵⁹:

5. Կոռնկ Վանից կամ Ծովահայաց Ս. Աստվածածին վանք

Կոռնկ Վանից կամ Ծովահայաց Սուրբ Աստվածածին⁶⁰ վանքը գտնվել է Վան քաղաքից հարավ՝ մոտ հինգ կմ հեռավորության վրա, մի բլրակի գագաթին՝ Ծվստան և Արտամետ գյուղերի միջև: Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ վանական համալիրը բաղկացած էր եկեղեցուց, գավիթից, վանականների և ուխտավորների համար նախատեսված մի քանի սենյակներից, շրջապատված էր պարսպով⁶¹:

Վանքը գործում էր Աղթամարի կաթողիկոսության ենթակայության տակ: Մշտական միաբանությունից զուրկ էր: Վանքապատկան կավածքները ներառում էին պողաբեր այգի, ինչպես նաև 225 օրավար անջրդի վարելահող, որը տարեկան 15

56 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 86:

57 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 47:

58 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 241:

59 Տե՛ս Մանուել Միրախորեան, *Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի: Տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն պիտանի գիտնոց*, մասն Բ. (Կ. Պօլիս, տպ. Մ. Կ. Սարբեան, 1885), 241:

60 Մանուել Միրախորյանը վանքի «Կոռնկ Վանից» անվան ծագումը կապում է հետևյալ ավանդության հետ. «Մի օր, երբ քահանայն պարսարագ կը մատուցանէ, Ս. Խորհրդեան գինին կը պակսի, կոռնկ մի յանկարծ եկեղեցուց պարտահանէն ներս կը մտնէ և կիջնէ սեղանին վերայ քահանային առջեւ՝ յիւր բերան բռնած հասուն մի ողկոյզ խաղողի. պարսարագիչ քահանայն մեծ երկիւղածութեամբ կառնու զայն (ողկոյզ) եւ վարագորի ետերը քամելով՝ Ս. Խորհուրդն կը կատարէ»: Տե՛ս Միրախորեան, *Նկարագրական ուղևորություն*, մասն Բ., 227-229:

61 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 85:

ուսկի կապալով տրված էր երկու-երեք արտամետցու: Նրանք էլ վանքում բնակեցրել էին մի գյուղացի ընտանիք, որը վարում էր տնտեսությունը⁶²:

Դ. Թիմարի և Արճակի վանքերը

1. Կոտուցի Ս. Կարապետ վանք (Կոտուց անապատ)

Կոտուց անապատը գտնվում է Վանա լճի համանուն կղզու վրա: XIX դարի վերջին – XX դարի սկզբին վանքային համալիրը բաղկացած էր միայն մեկ՝ Ս. Կարապետ տաճարից, բազմաթիվ խցերից և «դրսի տուն» կոչվող հատվածից (գտնվում էր կղզու հանդեպ՝ լճի հարավային ափին, բաղկացած էր միաբանների համար մի քանի սենյակներից, փոքրիկ հասարակ եկեղեցուց, դպրոցական փոքրիկ շենքից և տնտեսական մասից (գոմեր, հացահատիկի շտեմարաններ):

1910-ական թթ. սկզբների դրությամբ Կոտուց անապատին էին պատկանում 300 գլուխ ոչխար և 100 գլուխ տավար, ընդարձակ վարելահողեր, անտառներ, այգիներ, մեկ ջրաղաց, ձիթհանք, խանութներ Վանում, Ադրիանապոլսում, Թիֆլիսում, Պոլսում⁶³: Վանքապատկան տնտեսությունից ընդհանուր եկամուտը հասնում էր 300 օսմանյան լիրայի, որը ծախսվում էր գլխավորապես միաբանությունը և որբանոցը պահելու վրա⁶⁴: Որբանոցը գտնվում էր «Դրսի տուն» հատվածում և 1909 թ. ուներ շուրջ 15 սան⁶⁵:

Մեծ եղեռնի նախօրյակին Կոտուց անապատի հոգևոր տեսչությանն էին ենթարկվում Թիմարի 8 գյուղեր (Այլուր, Խավենց, Դուլաշեն, Աննավանք, Ամենաշատ, Մարմետ, Եկմալ, Ջիրաշեն)⁶⁶:

1873 թ. դրությամբ անապատի միաբանությունը բաղկացած էր 33 հոգուց՝ 12 վարդապետ, 4 ավագ սարկավագ, 2 ուրարակիր, 5 դպիր, 11 մահտեսի⁶⁷: Դրա համեմատ՝ 1909 թ. Կոտուց այցելած Ա-Դ-ոն նշում է, որ վանքն ուներ միայն երեք վարդապետներից բաղկացած միաբանություն: Վանահայրության պաշտոնի տեղապահ Ստեփանոս վարդապետ Աղազատյանն ապրում էր «Դրսի տանը» և իր ձեռքում էր պահում վանքի տնտեսության ընդհանուր հսկողությունը: Դրսի գործերը վարելու պարտականությունը դրված էր Գրիգոր վարդապետի վրա, որը շարունակ շրջում էր վանքապատկան կալվածքներով, հետևում վար ու ցանքին, ինչպես նաև պտղին⁶⁸ էր հավաքում⁶⁹:

62 Տե՛ս Շերենց, *Մորավայրեր*, 45:

63 1910 թ. ամռանը Վանի նահանգ այցելած Երվանդ Լալայանը ներկայացնում է Կոտուց անապատի կալվածքների մանրամասն ցուցակը: Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXII, 93:

64 Նույն տեղում:

65 Տե՛ս Ա-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 29:

66 Նույն տեղում:

67 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 205-251:

68 Գյուղացիների կողմից վանքերին բնամթերքի տեսքով տրվող հարկ:

69 Տե՛ս Ա-Դ-օ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, 29:

Ա-Դ-ոն նաև հաղորդում է, որ միաբանության վարդապետներն ապրում էին իրար հետ սիրով, իսկ վանքի տնտեսության մեջ նկատելի էր հոգացողություն: Առանձին հոգատարությամբ էր պահվում Կտուցի փոքրիկ մատենադարանը, ուր խնամքով դարսված պահպանվում էին հին ձեռագիր Ավետարաններ և այլ կրոնական գրքեր⁷⁰:

2. Լիմ անապատ (Ս. Գևորգ վանք)

Լիմ անապատը գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևելքում տեղակայված Լիմ կղզու վրա, որը Վանա լճի վեց կղզիներից ամենամեծն ու ընդարձակն է⁷¹:

XIX դարի վերջին – XX դարի սկզբներին Լիմի վանական համալիրը բաղկացած էր Ս. Գևորգ եկեղեցուց, վանականների խցերից և «Դրսի տուն» հատվածից, որը գտնվում էր լճի՝ կղզուն հանդիպակաց հարավային ափին⁷²: «Դրսի տուն» կոչվող հատվածն իր հերթին բաղկացած է եղել միաբանների համար նախատեսված սենյակներից, մոտ 15 սան ունեցող գիշերօթիկ դպրոց-վարժարանից, որի համար 1883 թ. կառուցվել էր նոր շենք, և տնտեսական մասից⁷³:

1896 թ. համիդյան կոտորածի ժամանակ «Դրսի տունը» ենթարկվել էր քրդերի ասպատակության և թալանի: Դրա հետ մեկտեղ՝ կոտորածների տարբեր ժամանակաշրջաններում Լիմի անապատի՝ կղզու հատվածը ապաստան էր տվել հազարավոր հայերի⁷⁴:

1873 թ. գարնանը վանք այցելած Տևկանցը հաղորդում է, որ այն ուներ 32 միաբան (14 վարդապետ, 2 ավագ սարկավագ, 2 ուրարակիր, 8 դպիր, 7 մահոտեսի)⁷⁵: 1880-ական թթ. սկզբներին Լիմի մեջ կար գրեթե 50 միաբան⁷⁶, սակայն հետագայում վանականների թիվը հետզհետե նվազել է: Արդեն 1910-ական թթ. սկզբներին Լիմի անապատի միաբանությունը բաղկացած էր միայն ութ անդամից (յոթ վարդապետ և մեկ եպիսկոպոս)⁷⁷: 1911 թվականից վանահայրն էր Հովհաննես վարդապետ Հյուսյանը, որի շնորհիվ 1915 թ. փրկվել և Էջմիածին են տեղափոխվել Լիմի ձեռագրերի մի մասն ու եկեղեցական սպասքը (Մեծ եղեռնի նախօրյակին Լիմն ուներ հարուստ

70 Նույն տեղում: Մեծ եղեռնի ընթացքում (1915-16 թթ.) Կտուց անապատից Էջմիածին տեղափոխվեցին և ներկայումս Մատենադարանում են պահվում 202 ձեռագիր մատյան: Տե՛ս Լուսինե Թումանյան, «Լիմ եւ Կտուց մենաստանները Մեծ եղեռնի օրերին», *Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, ԿԹ. տարի, 2013, Դ (ապրիլ), 106):

71 Տե՛ս Շէրեց, *Սրբավայրեր*, 76: Աղբյուրները Լիմ անունը ստուգաբանում են հունարեն «լիմնե»՝ լիճ կամ «լիմի» («լիմեն»)՝ նավահանգիստ, ապաստարան բառերից: Տե՛ս Համագասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1940), 4:

72 Լալայեան, «Վասպուրական», XXII, 85:

73 Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 45:

74 Տե՛ս Տէր-Յովհաննիսիւսն, «Վանայ ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

75 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 260:

76 Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 44:

77 Տե՛ս Տէր-Յովհաննիսիւսն, «Վանայ ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

մատենադարան՝ շուրջ 550 ձեռագրերով և 3,000-ից ավելի տպագիր գրքերով)⁷⁸:

Լիմ անապատի հոգևոր տեսչության տակ գտնվում էին Թիմարի գյուղախմբի 16 հայաբնակ գյուղեր՝ Ջանիկ, Դարաբեկ, Նորշեն, Ատեր, Նորավանց, Գոմս, Շահ-գյալդի, Խառաշիկ, Ամուկ, Փիրկարիբ: Լիմի ենթակայության տակ էին գործում Թիմարի Սուրբ Աստվածածին (Խաթուն Տիրամոր) և Էջմիածնի Սուրբ Սահակ վանքերը⁷⁹:

Վանքն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, անտառներ, այգի, չորս ջրաղաց, ինչպես նաև խանութներ Վանի մեջ և այլուր⁸⁰: Վանքի տնտեսությունից հասույթն ուղղվում էր միաբանության և վարժարանի ծախսերը հոգալու վրա:




Լուս. 7. Կտուց անապատ (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911)

78 Տե՛ս Թումանյան, «Լիմ եւ Կտուց մենաստանները», 104: Տե՛ս նաև Գեղամ Բաղայան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին. Մաս առաջին: Վանի վիլայեթի կենտրոնական, հյուսիսային և արևելյան գավառները», «Վեմ» համահայկական հանդես, Է (ԺԳ) տարի, թիվ 2 (50), ապրիլ-հունիս, 2015, 125:

79 Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 46:

80 Վանքապատկան կալվածքների ցուցակը տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXII, 91-92:



Լուս. 8. Լիմ անապատ (Լալայեան Երուանդ, Վասպուրական. Նշանատր վանքեր, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911)

3. Ալյուրի Ս. Աստվածածին վանք

Ալյուրի Սուրբ Աստվածածին վանքը գտնվել է Թիմարի գյուղախմբի Ալյուր հայաբնակ գյուղից դեպի արևմուտք՝ մոտ 10 թույն հեռավորության վրա: Վանքի հիմնադրման ժամանակի մասին տեղեկություններ չեն պահպանվել, ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարից ոչ ուշ⁸¹:

1873 թ. ապրիլին վանք այցելած Ե. Տևկանցը նշում է, որ վանական համալիրը բաղկացած էր սրբատաշ քարերով կառուցված գլխավոր եկեղեցու շենքից, գավիթից և վարչական-տնտեսական պետքերի համար օգտագործվող մի քանի փոքր շինություններից (առաջնորդարան, վարժարան, տնտեստուն, մառան, գոմ, հարդանոց): Վանքի վանահայրն էր Կարապետ վարդապետը, որը ձմեռը վարժապետություն էր անում վանքին կից վարժարանում, որտեղ սովորում էին գյուղի տղաները, իսկ ամառը զբաղվում էր հողագործությամբ՝ վանքապատկան հողերի մշակմամբ⁸²:

1900-ական թթ. սկզբներին վերաբերող վկայությամբ՝ վանքն այլևս չունեի մշտական վանահայր, այլ գտնվում էր Կոտուց անապատի իրավասության տակ՝ կառավարվելով այնտեղից վանք պարբերաբար այցելող վանականների կողմից⁸³:

81 Նույն տեղում, 99: Տե՛ս նաև Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 343:

82 Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 266: Վանքի վանահոր մասին, առանց նրա անունը տալու, հիշատակում է նաև 1883 թ. վանքն այցելած Մանուել Միրախորյանը: Տե՛ս Միրախորեան, *Նկարագրական ուղեւորություն*, մասն Բ, 280:

83 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 74:

Հաղորդվում էր, որ թեև վանքն ուներ որոշ սեփական կալվածքներ և գյուղատնտեսական պարագաներ, սակայն կանոնավոր տնտեսության բացակայության պայմաններում վանքի հողերից ու հանդից օգտվում են Ալյուր գյուղի բնակիչները⁸⁴:

4. Ս. Էջմիածին վանք

Ս. Էջմիածնի վանքը⁸⁵ գտնվում էր Վանա լճի արևելյան ափին՝ Կտուց և Լիմ անապատների «Դրսի տուն» հատվածները միացնող ճանապարհի վրա: Վանքային համալիրը բաղկացած էր երկու եկեղեցիներից՝ Սուրբ Էջմիածին ու Սուրբ Աստվածածին, և մեկ մատուռից⁸⁶ (այլ տվյալներով՝ մեկ մատուռից (Վերին Էջմիածին) և մեկ եկեղեցուց (Ներքին Էջմիածին)⁸⁷): Մեկ այլ սկզբնաղբյուրի հեղինակ՝ Գեորգ Շերենցը, չմանրամասնելով վանքի եկեղեցական շինությունների թիվը, անվանում է այն «փոքրիկ վանք»⁸⁸:

1873 թ. վանք այցելած Տեղապետը հաղորդում է, որ այն ծառայում էր որպես Լիմ անապատի ազարակ, ուներ մեկ վանահայր և մեկ միաբան⁸⁹:

20-րդ դարի սկզբներին վանքն արդեն զուրկ էր մշտական միաբանությունից. հիշատակվում է միայն ոմն վարդապետ վանահայր⁹⁰: Գտնվում էր Լիմի անապատի տնօրինության տակ, որի անդամները պարբերաբար այցելում էին վանք՝ հետևելով վանքապատկան կալվածքներին (ընդարձակ թթաստան՝ 2.000-3.000 թթենիներով, պարտեզներ, անտառներ, արտեր, վարելահողեր, արոտատեղի և այլն)⁹¹:

5. Էրերնա Սուրբ Սահակ

Էրերնա Ս. Սահակ վանքը գտնվել է Թիմարի գյուղախմբի Էրերին հայաբնակ գյուղի հարավային կողմում բարձրացող լեռան լանջին: Վանքը պարսպապատ էր, բաղկացած էր մեկ գմբեթավոր տաճարից և գավիթից: Մեծ եղեռնին նախորդող շրջանում այն լքված էր⁹², շինություններն անմխիթար վիճակում էին⁹³:

84 Նույն տեղում:

85 Ավանդության համաձայն՝ վանքի տարածքը եղել է անապատականների ճգնաժամ, որոնց մի անգամ տեսիլքով հայտնվել է երկնքից իջնող Հիսուս Քրիստոսը (Միածինը). այդ տեսիլքից էլ վանքը ստացել է իր անունը: Տե՛ս Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, 350:

86 Տե՛ս Լալայեան Ե., «Վասպուրական», XXI, 99:

87 Տե՛ս Տեր-Յովհաննեսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

88 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75:

89 Տե՛ս Տեղապետը, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 254-255:

90 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75:

91 Տե՛ս Տեր-Յովհաննեսեան, «Վանա ծովն եւ իր կղզիները», 1 (թիվ 4368):

92 Լիմ անապատի միաբան Մակար վարդապետ Տեր-Հովհաննեսյանը՝ 1911 թ. գրված իր ակնարկում հաղորդում է, որ յոթանասուն տարի է, ինչ վանքը իբրև անպետք-ռչինչ մի բան տրված է ուրիշներին: Տե՛ս «*Բիզանդիոն*», 1913 թ. փետրվար 23 (մարտ 8), № 4368): Նշվածից կարելի է եզրակացնել, որ վանքը լքվել էր դեռևս 1840-ական թվականներին:

93 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 75-76:

Վանքին էին պատկանում որոշակի հողային կալվածքներ, որոնք տրված էին վարձակալությամբ շրջակա գյուղերի բնակիչներին⁹⁴: 1873 թ. Էրերնա Ս. Սահակ այցելած Երուսաղ Տևկանցը նշում է, որ վանքում բնակություն էր հաստատել Էրերին գյուղից մի ընտանիք, որը զբաղվում էր երկրագործությամբ՝ հող չտանելով, սակայն, վանքի շինություններին⁹⁵:

1910-ական թթ. սկզբներին Լիմի միաբանները նախատեսում էին Սուրբ Սահակ վանքում բացել ամառային դպրոց՝ վանքի գիշերօթիկ վարժարանի սաների համար, սակայն միջոցների բացակայությունը և Մեծ եղեռնի արհավիրքը խոչընդոտեցին այդ ծրագրի իրականացմանը⁹⁶:

6. Արճակի Ս. Աստվածածին

Ս. Աստվածածին վանքը տեղակայված էր Արճակ բնակավայրից դեպի հարավ: Կառուցված էր բարձունքի վրա. նրա առջևից գեղեցիկ և ընդարձակ տեսարան էր բացվում դեպի Արճակի հովիտ: 1883 թ. վանք այցելած Մանուել Միրախոբյանը նշում է, որ վանքի տաճարը շինված էր քարուկիրով, ճարտարապետության առումով որևէ կերպ աչքի չէր ընկնում, և միայն մի քանի ուռենիներ էին շուք տալիս ամայի մենաստանին⁹⁷:

Թեմական պատկանելությամբ Վարազավանքին էր: Մինչև 1896 թ. վանքը գործող էր, ուներ շեն վիճակ, կանոնավոր տնտեսություն, երկամյա դպրոց, սակայն համիդյան ջարդերի ժամանակ վանքի վանահայրը սպանվում է, վանքը՝ կողոպտվում և լքվում, վանքապատկան կալվածքները՝ մատնվում անտերության⁹⁸:

Ե. Հայոց Ձորի վանքերը

1. Անգղա Սուրբ Աստվածածնի (Գաբենից Սուրբ Գևորգի) վանք

Անգղա Սուրբ Աստվածածնի վանքը գտնվում էր Հայոց Ձորի գյուղախմբի Անգղ գյուղից մոտ 1,5 կմ դեպի հարավ-արևելք: Բաղկացած էր մի փոքրիկ, անշուք եկեղեցուց, որը հին, հասարակ շենք էր⁹⁹: Ուսումնասիրության առարկա ժամանակաշրջանում վանքը համարվում էր գործող, սակայն չունեի միաբաններ՝ կառավարվում էր Անգղ գյուղում ապրող Տեր-Գեորգյան քահանայական գերդաստանի կողմից¹⁰⁰:

94 Տե՛ս *Բիզանդիոն*, 23 փետրվարի (8 մարտի) 1911 թ., № 4368:

95 Տե՛ս Տևկանց Ե., *Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական*, 256:

96 Տե՛ս *Բիզանդիոն*, 1911 թ. փետրվար 23 (մարտ 8), № 4368:

97 Տե՛ս Միրախոբյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Բ., 128:

98 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 83-84: Տե՛ս նաև «Աշխարհն» շաբաթաթերթ, Վան, 29 մայիսի 1911, թիվ 18, 12-13: Տե՛ս նաև Ռսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա. մաս, 345:

99 Լալայեան, «Վասպուրական», XXI, 100:

100 Տե՛ս Շերենց, *Սրբավայրեր*, 99: Տե՛ս նաև Լալայեան, «Վասպուրական», XXI, 100: 1873 թ. ամռանը վանք այցելած Տևկանցը հաղորդում է, որ վանքում բացի տեր Գեորգ քահանայից ապրում էին նաև մշակներ՝ երեք գուրթնավոր, մեկ հովիվ, մեկ գառնարած: Տե՛ս Տևկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 280:

1882 թ. վանքում բացվում է Միացյալ ընկերության վարժարան, որը գործում է մինչև 1896 թ.¹⁰¹ վանքի հետ միասին թալանվելով և հրդեհվելով համիդյան ջարդերի օրերին¹⁰¹:

1911 թ. վերաբերող վկայության համաձայն՝ վանքի եկեղեցին խարխուլ և անշուք վիճակի մեջ էր, վանքը՝ անբնակ: Հաղորդվում էր, որ վանքապատկան կալվածքները (ընդարձակ հողեր, ծառաստաններ, մարգագետին, ջրաղացներ և այլ շինություններ) նախկինում սեփականություն էին մի քահանայի և նրա ընտանիքի (ըստ երևույթին, խոսքը վերաբերվում է Տեր-Գեորգյաններին), որոնք Աղթամարին վճարում էին տարեկան մի չնչին տուրք (մուքաթա), իսկ վերջին տարիներին Աղթամարը վանքապատկան հողերը տալիս էր վարձակալությամբ՝ տարեկան 40 չափ ցորեն (մոտ 17 լիրա) վճարի դիմաց¹⁰²:

2. Էրեմերու Ս. Աստվածածին (Ծիծաղաբեր Ս. Աստվածածին) վանք

Ծիծաղաբեր Ս. Աստվածածին վանքը¹⁰³ գտնվում էր Հայոց Ձորի Էրեմեր հայաբնակ գյուղից մոտ կես կիլոմետր դեպի արևելք՝ հարթավայրի մեջ հրվանդանաձև երկարած բլրաճյուղի վերջավորության վրա¹⁰⁴: Վանքը բաղկացած էր մեկ եկեղեցուց և կից գավիթից և շրջապատված էր պարսպով¹⁰⁵: Նշանավոր էր իր սքանչելի տեսարանով, ծառատնկիներով, բերրի և արգավանդ հողերով¹⁰⁶:

Մեծ եղեռնին նախորդող ժամանակաշրջանում վանքը կայուն միաբանություն չի ունեցել: Վանահայրության պաշտոն էին կատարում Էրեմերի քահանաները: 1895 թ. վերջերին վանքը ենթարկվում է քրդերի ասպատակությանը: Վանահայր Տեր Մարտիրոս քահանան փախչում է Վան, սակայն զոհվում է 1896 թ. հունիսին քաղաքում բռնկված ջարդերի ընթացքում¹⁰⁷:

1903 թ. տվյալներով՝ վանքի տարածքում էր գործում Էրեմերի դպրոցը՝ մեկ ուսուցչով և 40 աշակերտով¹⁰⁸:

1911 թ. վերաբերող մի վկայությամբ՝ վանքի տարածքում ապրում էր մի քահանա իր ընտանիքով, որը տնօրինում էր վանքի կալվածքները՝ դրա դիմաց Աղթամարի կաթոռիկոսությանը վճարելով տարեկան միայն 25 չափ (10 լիրա) ցորեն¹⁰⁹:

101 Տե՛ս Ծերենց, *Մոթավայրեր*, 100:

102 Վանքի մասին մանրամասն տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 46-51:

103 Ըստ ավանդության՝ վանքը կառուցվել է Թադեոս առաքյալի կողմից այն վայրում, որտեղ նրան ժպտացող Տիրամոր տեսիլք է երևացել. դրանից էլ ծագել է վանքի՝ Ծիծաղաբեր անունը: Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 56: Տե՛ս նաև Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս, 757:

104 Տե՛ս Լալայեան, «Վասպուրական», XXI, 56: Տե՛ս նաև Կարապետյան, *Հայոց Ձոր*, 77:

105 Լալայեան, «Վասպուրական», XXI, 56:

106 Նույն տեղում:

107 Նույն տեղում, 101:

108 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 82:

109 Տե՛ս Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 11, 290:

3. Սրխու Ս. Նշան կամ Ս. Մարինոսի վանք

Վանքը գտնվում էր Հայոց Ձորի հարավային կողմում՝ քրդաբնակ Կալպալասան բնակավայրից մոտ 2 կմ հեռավորության վրա: Տեղակայված էր քարածայրի կողքին, քարոտ հովտի մեջ: Բաղկացած էր կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցուց և նրան հարող տարբեր շինություններից¹¹⁰:

1883 թ. վանք այցելած Մ. Միրախոյանը նշում է, որ այն դեռևս մասամբ շեն էր, երկու տարի առաջ (1881 թ.) ուներ վանահայր, որը, սակայն, թողել-գնացել է վանքից¹¹¹: Աղթամարի կաթողիկոսությունը, որի իրավասության տակ էր գտնվում վանքը, վարձակալությամբ տեղացի գյուղացիներին էր հանձնել վանքի 400 չափ արտերը¹¹²: 1895 թ. համիդյան ջարդերի օրերին վանքը թալանվել է¹¹³:

1911 թ. վերաբերող մի վկայության մեջ նշվում էր, որ վանքն ամայի և անբնակ է, թեև «տարիներ առաջ» այն ունեցել է կանոնավոր շինություններ և բազմաթիվ միաբաններ: Վանքապատկան հողերը՝ արդեն 300 չափ, շարունակում էին վարձակալել տեղացի գյուղացիները՝ տարեկան 35 չափ ցորեն (15 օսմանյան լիրա) վճարի դիմաց¹¹⁴:

4. Խեթա Ս. Գևորգ

Գտնվում էր Հայոց Ձորի հայաբնակ Խեթ (Հայկ) գյուղից դեպի հարավ-արևմուտք՝ մոտ 20 րոպե հեռավորության վրա: 1883 թ. վանքն այցելած Մ. Միրախոյանը հիշատակում է վանահայր Ստեփան Տեր-Սարգսյանին, որի ջանքերով վանքում շինվել էին մի քանի նոր սենյակներ և խուցեր: Վանքում գործել է նաև վարժարան¹¹⁵:

Ս. Գևորգ վանքը կիսել է Հայոց Ձորի այլ վանքերի ճակատագիրը՝ թալանվելով և ավերվելով 1895 թվականին¹¹⁶: Ըստ երևույթին, դրանից հետո վանքը լքվել է:

1911 թ. վերաբերող մի վկայության մեջ հաղորդվում է, որ վանքի շինությունները վերջին տարիներին անտեր մնալով՝ քայքայվել ու խարխլվել են¹¹⁷:

Վանքն ուներ ընդարձակ վարելահողեր, որոնք Աղթամարի կաթողիկոսությունը տալիս էր վարձով՝ տարեկան 40 չափ ցորենի (մոտ 17 լիրա) դիմաց¹¹⁸:

110 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 114: Վանքի կառույցների մասին ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, 118-123:

111 Տե՛ս Միրախոյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Ա., 141:

112 Նույն տեղում, 140:

113 Տե՛ս *Արարապ*, 1896, Ե., 247:

114 Տե՛ս Մենակ, «Հայոց Ձորը», թիվ 11, 289:

115 Տե՛ս Միրախոյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Ա., 164:

116 Տե՛ս *Արարապ*, 1896, Բ, 88, Ե, 247:

117 Տե՛ս Ա. Մենակ, «Հայոց Ձորը» թիվ 11, 289:

118 Նույն տեղում:

5. Խեթրա Ս. Աբրահամ վանք

Վանքը գտնվել է Հայոց Ձորի հայաբնակ Խեթր գյուղից մոտ 2 կմ դեպի հարավ-արևելք՝ Ս. Գևորգ վանքից մեկ ժամ հեռավորության վրա, ձորադաշտի մի լեռան ստորոտում¹¹⁹: 1873 թ. վանքը դեռևս վանահայր ուներ՝ տեղի Պետրոս անունով, որը միաժամանակ նաև Խեթի Ս. Գևորգ վանքի առաջնորդն էր¹²⁰:

1883 թ. Ս. Աբրահամ այցելած Մ. Միրախոյանը նկարագրում է վանքի գլխավոր եկեղեցին որպես գեղեցիկ շինվածքով կանգուն շինություն: Նա նաև հաղորդում է, որ վանքն ամայի էր, մենակյացների սենյակները՝ կիսակործան¹²¹:

Վանքն ուներ հողային կալվածքներ, որոնք տրվում էին վարձակալությամբ¹²²:

Robert A. Tatoyan

PhD in History

ARMENIAN MONASTERIES AND MONASTIC LIFE IN VAN SUB-DISTRICT ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (1870s – 1914)

SUMMARY

Key words: Hamidian massacres, Armenian genocide, Van sub-district, monasteries, Varagavank, Lim, Ktuts.

Monastic life in the Armenian monasteries of both Van and the whole Western Armenia in the late XIX – early XX century is characterized by a steady decline. This decline was a result of two main factors: 1) periodic attacks and robberies of monasteries by the Kurds (particularly, during the Hamidian massacres in 1895-1896, when almost all active monasteries of Van province were looted and destroyed), 2) gradual secularization of the Armenian population and, correspondingly, a decrease in the number of persons who choose monastic life.

Because of these processes during 1870 – 1910s many of the monasteries of Van-Vaspourakan province were abandoned and left almost unattended.

After the Young Turk Revolution of 1908, the economic situation of the Van monasteries has demonstrated some tendencies of improvement owing to the activities of the Armenian national structures. The gradual revival of monastic life resulted in the increase in the number of monks in some monasteries of Van -Vaspurakan. However, the First World War and the Armenian Genocide put an end to this process.

119 Տե՛ս Կարապետյան, *Հայոց Ձոր*, 100: Տե՛ս նաև *Աշխատանք*, 1911, թիվ 11, 289:

120 Տե՛ս Տեկանց, *Ճանապարհորդություն Բարձր Հայք*, 172:

121 Տե՛ս Միրախոյան, *Նկարագրական ուղեորություն*, մասն Ա, 165:

122 Տե՛ս Շէրենց, *Սրբավայրեր*, 103:

АРМЯНСКИЕ МОНАСТЫРИ И МОНАСТЫРСКАЯ ЖИЗНЬ В ВАНСКОМ ОКРУГЕ
НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (1870-е гг. – 1914)

РЕЗЮМЕ

Ключевые слова: гамидовская резня, Геноцид армян, Ванский округ, монастыри, Варагаванк, Лим, Ктуц.

Жизнь в армянских монастырях как Вана, так и по всей территории Западной Армении в конце XIX – начале XX веков характеризуется тенденциями постепенного упадка. Этот процесс был обусловлен двумя основными факторами: периодическими налетами курдов на монастыри (в частности, во время Гамидовских погромов в 1895-1896 годах почти все действующие монастыри провинции Ван были разграблены и разрушены); постепенной секуляризацией армянского населения и уменьшением числа людей, выбирающих монашескую жизнь.

В результате данного процесса в период с 1870-х гг. по 1910-е гг. было покинуто множество монастырей Ван-Васпуракана.

После младотурецкой революции 1908 г. благодаря деятельности армянских национальных организаций экономическое положение ванских монастырей начало проявлять тенденции к улучшению. Постепенное оживление монашеской жизни выразилось в некотором увеличении числа монахов в отдельных монастырях Ван-Васпуракана. Однако Первая мировая война и Геноцид армян положили конец этому процессу.

REFERENCES

A-Do. *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին* [Big Events in Vaspourakan in 1914-1915]. Yerevan: Luys, 1917;

A-Do. *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները* [The Vilayets of Van, Bitlis and Erzerum]. Yerevan: Kultura, 1912;

Akinean, Nerses. *Գաւազնազգիրք Վայոթիկոսաց Աղթամարայ: Պատմական ուսումնասիրութիւն* [Chronological List of the Armenian Catholicoses of Akhtamar: Historical Study]. Vienna: Mkhitarean, 1920;

Alp'oyachean, Arshak. «Առաջտորդական վիճակներ», 1908 *Ընդարձակ Օրացոյց Ա. Փրկչեան հիւանդանոցի Հայոց* ["The Dioceses" in 1908 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople: Y. Matt'eosean, 1908;

Badalyan, Gegham. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրերին. Մաս առաջին: Վանի վիլայեթի կենտրոնական, հյուսիսային և արևելյան գավառները» [Historical and Demographic Overview of Western Armenia on the

Eve of the Armenian Genocide. Part One: Central, Northern and Eastern Provinces of Van Vilayet]. *Vem* VII (13) no. 2 (50) (2015): 112-143;

Begulyants', Ruben. *По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году* [In Turkish Armenia. Impressions from the Journey in Summer 1914]. Rostov on Don: Iskidarov, 1914.

Harut'yunyan, Avetis. «Հոգևոր-կրոնական հարաբերությունները Վանի նահանգում և Աղթամարի վանքի կողպուման խնդիրը» [Spiritual-religious relations in Van province and the question of looting of Aghtamar monastery]. *Ejmiatsin* VIII (2016): 133-143;

Hasrat'yan, Murad. «Վարագավանք», «Քրիստոնյա Հայաստան» հանրագիրարանի [“Varagavank” in “Christian Armenia” Encyclopedia]. Yerevan: Armenian Encyclopedia, 2002;

Karapetyan, Samvel. *Հայոց Ձոր* [Hayots Dzor]. Yerevan: RAA publishing, 2015;

Lalayan, Ervand. «Վասպուրական. Նշանաւոր վանքեր» [Vaspourakan: Prominent monasteries]. *Azgagrakan Handes*, girq XXII (1911): 85-100;

Lalayan, Ervand. «Վասպուրական. Նշանաւոր վանքեր» [Vaspourakan: Prominent monasteries]. *Azgagrakan Handes*, girq XXII (1911): 85-100;

Mayevsky, Vladimir. *Военно-Статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ*, [Military and Statistical Description of Van and Bitlis Vilayets]. Tiflis: Tipografia shtaba Kavkazskogo voennogo okruga, 1904;

Menak, A. «Հայոց Ձորը. VI. Հայոց ձորի հայ վանքերը» [Hayots' Dzor. VI. The Armenian Monasteries of Hayots' Dzor]. *Ashkhatanq* (Van), 20 March, 1911, no. 10;

Menak, A. «Հայոց Ձորը. VI. Հայոց ձորի հայ վանքերը» [Hayots' Dzor. VI. The Armenian Monasteries of Hayots' Dzor]. *Ashkhatanq* (Van), 29 May, 1911, no. 18;

Mirakhoryan, Manuel. *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի հ. 1* [Descriptive Journey to the Armenian Populated Provinces of the Eastern Turkey, vol. I]. Constantinople: M. K. Sarëean, 1884;

Mirakhoryan, Manuel. *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, հ. 2* [Descriptive Journey to the Armenian Populated Provinces of the Eastern Turkey, vol. II]. Constantinople: M. K. Sarëean, 1885;

Ormanean, Maghakia. *Հայոց եկեղեցին և իր պարմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը* [The Armenian Church: Her History, Doctrine, Rule, Discipline, Liturgy, Literature and Existing Condition]. Constantinople: V. and H. Ter-Nersesian, 1911;

Paleian, Tachat. *Հայ վանորայք* [Armenian Monasteries]. Ejmiatsin: Holy See Publishing, 2008;

Sherents', Georg. *Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից և ուսումնարանաց* [Holy Places: Location of the Main Churches, Monasteries and Educational Institutions of Van-Vaspourakan Province]. Tiflis: Vereich'ev i Kamenmakher, 1902.

T'eodik. *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօրին աղէվրալի 1915 ցարիին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;

Ter-Hovhannisyán, Makar. «Վանա ծովն և իր կղզիները» [The Lake of Van and its Islands]. *Byzandion* (Constantinople), 21 February (6 March), 1911, no. 4366;

Ter-Hovhannisyán, Makar. «Վանա ծովն և իր կղզիները» [The Lake of Van and its Islands]. *Byzandion* (Constantinople), 23 February (8 March), 1911, no. 4368;

Tevkants', Eremia. *Ճանապարհորդությունն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.* [Journey to Upper Armenia and Vaspourakan]. Yerevan: NAS RA Institute of History, 1991;

Tseruk. «Վանի նահանգը ներկայումս» [The Province of Van at Present]. *Murch* (Tiflis), 1904, no. 3;

T'umanyan, Lusine. «Լիմ և Կտուց մենաստանները Մեծ Եղեռնի օրերին» [The Monasteries of Lim and Ktuts during the Armenian Genocide]. *Ejmiatsin*, IV, 2013, 96-107;

Voskean, Hamazasp. *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա. մաս [The Monasteries of Van-Vaspourakan, part I]. Vienna: Mkhitaréan, 1940;

Voskean, Hamazasp. *Վասպուրական-Վանի վանքերը*, Գ. մաս [The Monasteries of Van-Vaspourakan, part III]. Vienna: Mkhitaréan, 1947;

Yeramyán, Hambardzum. *Յուշարձան, հ. 1* [A Monument vol. I]. Alexandria: Aram Gasapean, 1929;

Yeramyán, Hambardzum. *Յուշարձան, հ. 2* [A Monument, vol. II]. Alexandria: Aram Stepanéan, 1929;

«1904 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց» [1904 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople: Y. Matt'eosean, 1904;

«Աղթամարայ հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի վերջին թուղթն և տելեկագիրը» [The Last Letter and Bulletin of Deceased Khachatour Catholicos of Akhtamar]. *Ararat* (Ejmiatsin), May 1896;

«Հայաստանեայց եկեղեցին Տանկաստանում» [The Armenian Church in Turkey]. *Ararat* (Ejmiatsin), February, 1896;

«Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին» [Bulletin of Massacres in Vaspourakan]. *Ararat* (Ejmiatsin), December 1896.

**ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՄԱՌԹՅՈՒՆԻՑ (ՄԻՆՉԵՎ 1908 Թ.).
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

Բանասիր քառերը՝ Օսմանյան կայսրություն, պարբերական մամուլ, երիտթուրքեր, երիտթուրքական մամուլ, «Իչդիհադ», «Մեշվերեթ», «Միզան»:

Հոդվածը երիտթուրքական պարբերական մամուլի պատմության (մինչև 1908 թ.) շուրջ համառոտ անդրադարձն է: Հատկապես կենտրոնացում է արվել երիտթուրքական մամուլի պատմության առաջին փուլի վրա: Հոդվածը լուսաբանում է նշված շրջանի երիտթուրքական առաջատար թերթերի հիմնադրման/սկզբնավորման, տարածման պատմությունը, որն ընդգրկում էր 1890-ական թթ. մինչև 1908/1909 թթ.: Այս շրջանում թերթերը տպագրվում էին Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ գլխավորապես Կահիրեում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլ վայրերում, քանի որ Օսմանյան կայսրությունում գործող արդուլհամիդյան գրաքննությունն ու տիրող բռնաճնշումները կայսրության տարածքում սեփական գաղափարները, քաղաքական հայացքները ազատորեն տարածելու հնարավորություն չէին տալիս:

**Մինչև 1908 թ. հեղաշրջումը տպագրվող երիտթուրքական առաջատար
պարբերականները**

Երիտթուրքական մամուլն ուսումնասիրելիս անհրաժեշտաբար պետք է այս թեմատիկան դիտարկել տարբեր ժամանակային կտրվածքով և մի քանի գիտակարգային մոտեցումներով: Հարկ է նշել, որ երիտթուրքական հեղաշրջումից առաջ և հետո երիտթուրքական մամուլի ընդհանուր ուրվագիծն սկզբունքորեն փոխվել է՝ ընթանալով այլ գաղափարական ուղղություններով և նպատակային ուղեգծով: Եթե մինչև երիտթուրքերի հեղաշրջումը այս գաղափարական հոսանքին հարող և պատկանող թերթերը, խուսափելով արդուլհամիդյան գրաքննությունից և բռնաճնշումների քաղաքականությունից, ստիպված էին հիմնական գործունեությունը ծավալել Օսմանյան կայսրության տարածքից դուրս, ապա հեղաշրջումից հետո երիտթուրքական մամուլը ներկայացնողների համար կատարելապես այլ իրավիճակ է ստեղծվում, որոնք կարող էին գործունեություն ծավալել կայսրության տարածքում, ինչպես նաև վերածվելով իշխանական լրատվամիջոցների՝ զերծ մնալ գրաքննությունից և ճնշումներից, ընդդիմադիր լրատվամիջոցներին պարտադրված այլ խնդիրներից:

Երիտթուրքական մամուլի առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ թերթերի զգալի մասը ոչ թե պատկանում էր և ներկայացնում միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության կամ երիտթուրքական ինչ-որ շրջանակի կամ խմբի, այլ այդ թերթերը գլխավորապես անհատների սեփականությունն էին, իսկ վերջիններս կա՛մ երիտթուրքական քաղաքա-

կան թևի անդամ էին, կա՛մ էլ հարում էին երիտթուրքերի գաղափարական ուղղվածությամբ:

Հիմք ընդունելով երիտթուրքական մամուլի զարգացման առանձնահատկությունները, արտաքին գործոնները, պատմական իրողությունը՝ երիտթուրքական մամուլի պատմությունը, ինչպես արդեն նշվեց, կարելի է բաժանել երկու հիմնական փուլի, որոնք համապատասխանաբար կընդգրկեն արդուլիամիդյան շրջանը և սահմանադրության վերականգնումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Երիտթուրքական մամուլի զարգացման առաջին փուլն ընդգրկում է 1890-ական թթ. մինչև 1908/1909 թթ., երբ երիտթուրքական շարժումը ձևավորման փուլում էր և ընդդիմություն էր: Երկրորդ փուլը ընդգրկում է 1908/1909 թթ. մինչև 1918 թ., երբ երիտթուրքերը Օսմանյան կայսրության դեկին էին, ինչն էլ ենթադրում էր երիտթուրքական մամուլի կարգավիճակի ամբողջական և սկզբունքային փոփոխություն, այն է՝ ընդդիմադիր դաշտում և տարագրության մեջ գործունեությունից անցում իշխանական դաշտում գործունեության: Սա որակապես փոխում էր ոչ միայն երիտթուրքական թերթերի տարածման եղանակները, այլև բովանդակային առումով հիմնովին փոխում էր թերթերի ուղղվածությունը: Հատկանշական է, որ ընդդիմադիր շրջանում երիտթուրքական թերթերը կոչված էին վեր հանելու և քննադատելու կայսրության թերությունները, առաջ քաշելու իրենց քաղաքականությունը, սակայն իշխանության գալուց հետո փոխվում են առաջնահերթությունները, ինչպես նաև սկզբունքային փոփոխության են ենթարկվում թիրախները և կիրառվող բառապաշարը:

Երիտթուրքական մամուլի առանձնահատկությունները կարելի է դիտարկել ոչ միայն ժամանակային բաժանումով, այլ նաև ընդհանուր կտրվածքով: Ինչպես նշվեց, երիտթուրքերին հարող կամ պատկանող լրատվամիջոցները ոչ միայն պատկանում էին անմիջականորեն «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը, այլև անհատների՝ երիտթուրք գործիչների կամ այդ գաղափարները կիսողների: Ժամանակի ընթացքում թերթերի սեփականատերերի գաղափարների փոփոխությանը զուգահեռ փոխվում էր նաև լրատվամիջոցների քաղաքական կողմնորոշումը, իսկ իշխող երիտթուրքական գաղափարախոսությունից հրաժարումն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության քաղաքականության քննադատությունը բերում էր ոչ միայն պետության կողմից ճնշումների, այլ նաև դառնում էր թերթի փակման պատճառ, ինչպես եղավ երիտթուրքական շարժանը հարող «Միզան» թերթի դեպքում, որը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի օսմանյան մամուլի ամենանշանավոր և հայտնի օրգաններից էր¹:

Առաջին փուլի ընթացքում երիտթուրքական մամուլը ստիպված էր գործել Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, մասնավորապես Կահիրեում, Եվրոպական երկրներում՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլ վայրերում: Օսմանյան կայսրությունում գործող արդուլիամիդյան գրաքննությունն ու բռնաճնշումները կայսրու-

1 Muammer Göçmen, “Jön Türk Basını,” <https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=352209>, դիտվել է 14.05.2019:

թյան տարածքում ազատ գործելու հնարավորություն չէին տալիս², ինչի արդյունքում էլ երիտթուրքերն իրենց՝ արտասահմանում տպագրվող պարբերականների միջոցով էին փորձում արտահայտել սեփական գաղափարներն ու վեր հանել օսմանյան հասարակության և պետության խնդիրները՝ քննադատելով օսմանյան ղեկավարությանն Աբդուլ Համիդի գլխավորությամբ:

Արդեն երկրորդ փուլի ընթացքում երիտթուրքական մամուլը Օսմանյան կայսրության տարածքում գործելու հնարավորություն է ստանում՝ վերածվելով իշխանամերձ կամ անմիջականորեն իշխանական մամուլի: Բացի դրանից, կարգավիճակի փոփոխությունը հնարավորություն էր տալիս գործելու առանց լրացուցիչ բարդությունների: Այս ընթացքում, երբ երիտթուրքերի իշխանության ամրապնդումից հետո ավելի է խստացվում այլախոհ լրատվամիջոցների և լրագրողների դեմ տարվող ճնշումների ու սահմանափակումների քաղաքականությունը, երիտթուրքերին հարող թերթերի թիվը շարունակաբար աճում է:

Այս փուլերը ևս կարելի է պայմանականորեն բաժանել առանձին ենթափուլերի: Օրինակ՝ 1908-1918 թթ. առաջին ենթափուլը, որ ընդգրկում էր սահմանադրության ընդունումից մինչև 1913 թ. հեղաշրջումը, համեմատաբար ազատ գործելու և նվազ գրաքննության շրջան էր: Մինչդեռ երիտթուրքերի ձեռքում քաղաքական իշխանության կենտրոնացումից հետո ընդդիմադիր պարբերականները և սյունակագիրները ենթարկվում էին սուր գրաքննության:

Երիտթուրքերը ձգտում էին տապալել արդուլիամիդյան բացարձակապետությունը, ձգտում էին իշխանության՝ ցանկանալով այն վերածել իրենց տնտեսական վերելքի և տիրապետության գործիքի: Լինելով նոր օսմանների, հատկապես Իբրահիմ Շինասիի, Նամըք Քեմալի, Ալի Սուավիի տեսական գաղափարների՝ լեզվի մաքրման, ազգի, կրոնի դերի, հայրենիքի, անձի ազատության, դրա համար զոհողություններ կատարելու հետևորդները, կոմիտեի ստեղծման պահից սկսած՝ փորձեցին դրանք քաղաքական հիմքի վրա դնել³: Այս գաղափարախոսների ազդեցության ներքո լինելով հանդերձ՝ նրանք չէին հարում գաղափարախոսական մեկ ուղղության՝ հաճախ դրսևորելով ոչ հետևողական քաղաքական մոտեցումներ, ինչն ակնհայտորեն իր անդրադարձն էր ունենում այդ շրջանի նրանց պարբերականներում:

Աբդուլիամիդյան բռնատիրական և լրտեսական համակարգը երիտթուրքական մի շարք պարագլուխների ստիպում է հեռանալ երկրից: Փարիզը դառնում է վտարանդի երիտթուրքերի քարոզչության կենտրոններից: Եվ քարոզչության լավագույն և գործունե ղեկավարներից է դառնում մամուլը, քանի որ, ինչպես իրենք են նշում, երկրից երկիր թերթերն ավելի ապահով էին հասնում, քան երկրի ներսում⁴: Հատկանշական

2 Ալբերտ Խառատյան, «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870 —1890-ական թթ.)», *Պատմա-քանասիրական հանդես* 4 (1985), 113:

3 Erik Jan Zürcher, *The Young Turk Legacy and Nation building from the Ottoman Empire to Atatürk's Turkey* (London, New York: I. B. Tauris, 2010), 8.

4 Mehmet Burak Durdu, “Osmanlı Devletinde Jön Türk Hareketinin Başlaması ve Etkileri, Osmanlı Tarihi Araştırma ve Uygulama,” *Merkezi Dergisi Otam* 14 no. 14 (2003): 291-318.

է, որ սուլթանի պատվիրակները ժամանակ առ ժամանակ գնում էին Փարիզ և Լոնդոն՝ քանակցելու երիտօրօրքի թերթերի խմբագիրներ Մուրադ բեյի, Ահմեդ Ռեզայի և Սեիմ բեյի հետ, նրանց պարզևատրում էին, տարբեր միջոցներով և տարբերակներով համոզում, որպեսզի նրանք հրաժարվեն իրենց գործունեությունից⁵:

Արդեն 1879-1907 թթ. արտասահմանում լույս էր տեսնում շուրջ 120 ընդդիմադիր թերթ, որոնցից աչքի էին ընկնում «Միզան», «Մեշվերեթ», «Իսթիքլյալ» և «Օսմանլը» պարբերականները, ինչպես նաև Աթենքում, Բուխարեստում, Լոնդոնում, Մոֆիայում լույս տեսնող այլ թերթեր: Հատկանշական է, սակայն, որ երիտօրօրքական շարժման սկզբնական ընդդիմադիր լինելու տարիներին հիմնադրված և գործող բազմաթիվ առաջատար թերթեր իրենց գոյությունը չկարողացան պահել արդեն երիտօրօրքերի կառավարման ու իշխանության տարիներին, ինչպես, օրինակ «Միզանը», այլ հայտնի թերթերից «Օսմանլըն», «Մեշվերեթը»:

Այս թերթերի էջերում երիտօրօրքերն «իրենց դասակարգային ուղղվածության և աշխարհայացքի հետևանքով երկրի սոցիալական և քաղաքական բազմաթիվ խնդիրներ հանգեցնում էին թագավորող միապետի արատներին»⁶: Միաժամանակ նշված թերթերում ավելի ու ավելի հաճախ սկսվում է կիրառվել թուրքերի՝ «Միլլեթ ի հաքիմի» (տիրապետող-դոմինանտ ազգ) լինելու գաղափարը, և մամուլը դառնում է երիտօրօրքական գաղափարների տարածման ամենագործուն եղանակներից:

Երիտօրօրքերի «Միզան» թերթը


Օսմանյան կայսրության առավել հայտնի պարբերականներից էր երիտօրօրքական «Միզան» (թուրք.՝ *Mizan*/կշեռք) թերթը: Միաժամանակ և՛ քաղաքական, և՛ գրական ուղղվածություն ունեցող պարբերականը հիմնադրվել է Կոստանդնուպոլսում 1886 թ. Մեհմեթ Մուրադ Միզանջի⁷ կողմից: Օսմանյան այս պարբերականի առաջին համարը լույս է տեսել 1886 թ. օգոստոսի 21-ին⁸: Իր պատմության ընթացքում «Միզանը» տպագրվել է տարբեր պետություններում և քաղաքներում, ինչը կապված էր թերթի ընդդիմադիր քաղաքական ուղղվածության հետ:

5 Նույն տեղում:

6 *Հոդիզան* թերթ (Թիֆլիս), թիվ 34, 1909:

7 Մեհմեթ Մուրադ բեյը (1854-1917) պատմության ուսուցիչ էր, ավարտել էր Ս. Պետերբուրգի համալսարանը: Թանգիմաթի շրջանի հայտնի գրողներից է, խմբագիր, քաղաքագետ, պատմաբան: Նա հեղինակել է «Թուրքիայի ուժն ու թուլությունը» գրքույկը, որը երիտօրօրքական գրականության ամենաընթերցված գրքերից էր այդ ժամանակաշրջանի: Տե՛ս Emil Birol, *Mizancı Murad Bey, Hayati ve Eserleri* (Istanbul: Üniversitesi Edebiyat Fakültesi, 1979), 229-399:

8 Göçmen, “Jön Türk Basını.”



1. Միզան نازيم (Միտիւթին եւ առաջդիմութիւն կուսակցութեան պաշտօնաթերթ. շաբաթաթերթ), Ա. տարի, թիւ 21, 24 Մայիս 1897:

Հիմնադրումից հետո թերթը լույս էր տեսնում Կոստանդնուպոլսում շաբաթական մեկ անգամ: «Միզանում» տպագրվում էին շաբաթվա նորությունները, գրական և գիտական հոդվածներ, նոր գրքերի մասին տեղեկություններ: Միևնույն ժամանակ թերթն անդրադառնում էր քաղաքական և հասարակական հարցերի: Արդյո՞ւ Համիդ Երկրորդ սուլթանի սահմանած խիստ գրաքննության և ճնշումների քաղաքականության հետևանքով թերթը ևս թիրախավորվում էր: Այս ամենի արդյունքում էլ 1890 թ. դեկտեմբերի 11-ին թերթը ժամանակավորապես դադարեցնում է տպագրությունը Կոստանդնուպոլսում՝ 158 թվակիր համարով: Այս ընթացքում «Միզանը» հնարավորություն չի ստանում վերսկսելու աշխատանքն Օսմանյան կայսրության տարածքում, և թերթի վերահրատարակումը հնարավոր է դառնում միայն արտասահմանում⁹: Սակայն միայն վեց տարի անց՝ 1896 թ. է հաջողվում թերթը վերահրատարակել Կահիրեում: Մեհմեթ Մուրադը ևս տեղափոխվում է Կահիրե: Այս ընթացքում թերթի հիմնադիրը կապ է հաստատում երիտթուրք գործիչների հետ և սկսում ակնհայտորեն հարել այդ շարժմանը՝ գլխավորելով երիտթուրքական շարժման աջ թևը: Թերթը նույնպես գաղափարախոսական փոփոխություններ է կրում և սկսում է ներկայանալ որպես երիտթուրքական առաջատար պարբերականներից մեկը, որտեղ էլ առաջ են քաշվում երիտթուրքերի գաղափարներն ու օսմանյան ղեկավարության քննադատությունները: Այս ընթացքում թերթում սուր քննադատական հոդվածներով հանդես է գալիս Թունալը Հիլմին¹⁰, ով երիտթուրք գործիչներից էր և սկստիվորեն ներկայանում էր երիտթուրքական մամուլում՝ թղթակցելով «Միզան» և «Մեշվերեթ» թերթերին:

9 Abdullah Uçman, “Mizan,” in *TDV İslam Ansiklopedisi*, <https://islamansiklopedisi.org.tr/mizan-gazete>, դիտվել է 07.05.2019.

10 Թուրք քաղաքական գործիչ, Օսմանյան կայսրության խորհրդարանի անդամ, ապա՝ Թուրքայի Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր: Եվրոպայում երիտթուրքական շարժման առաջին տարիների ակտիվիստներից է եղել, 1895 թ. միացել է Ժնևում երիտթուրքական խմբին: *St'u Sükrü Hanioğlu, Tunali Hilmi bey in "devlet modeli"* (Istanbul: İstanbul Üniversitesi İktisat Fakültesi, 2011), 109:

Ինչ վերաբերում է Հայկական հարցի շուրջ թերթի դիրքորոշմանը, ապա այստեղ Մուրադ բեյը հանդես էր գալիս համիդյան դիրքերից՝ ոչ միայն հակահայկական հողվածներ տպագրելով, այլև նպաստելով այլ հեղինակների կողմից այդ ուղղությամբ գործելուն: Նա ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները համարում էր դիվանագիտական բանասարկությունների արգասիք՝ դեմ լինելով կայսրությունից հայերի անջատողական ձգտմանը, քանի որ այդպիսի շարժումները ոտնձգություն էր համարում՝ ընդդեմ մահմեդականների հպարտությանը:

Թերթի տպագրության երկրորդ շրջանը սկսվում է Կահիրեում 1896 թ. հունվարի 21-ից մինչև նույն թվականի հուլիսի 8 (159-184 թվակիր համարներով): Թերթի խմբագրակազմը Կահիրեից տեղափոխվում է Փարիզ՝ շարունակելով պարբերականի հրատարակությունը¹¹: Փարիզում թերթը դառնում է երիտթուրքերի գլխավոր պարբերականը, որը շարունակում էր օսմանյան ղեկավարությանը քննադատող հողվածների շարքը: 1897 թ. թերթի խմբագրությունը՝ Փարիզում 18 համար տպագրելուց հետո (1896 թ. դեկտեմբերի 14-1897 թ. մայիսի 3) տեղափոխվում է Ժնև (1897 թ. մայիսի 10-1897 թ. հուլիսի 19)¹²:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո թերթը հնարավորություն է ստանում տպագրություն իրականացնելու Կոստանդնուպոլսում, որով սկսում է թերթի տպագրության երրորդ փուլը: Այնուամենայնիվ, Օսմանյան կայսրություն վերադառնալուց հետո թերթում սկսում են տպագրվել երիտթուրք ղեկավարներին քննադատող հողվածներ, ինչն էլ անհետևանք չի մնում: 1909 թ. ապրիլի 15-ին 135 թվակիր համարով¹³ Աբդուլ Համիդի կողմնակիցների ապստամբությունից հետո, երիտթուրք ղեկավարների որոշմամբ թերթը փակվում է, քանի որ երիտթուրքերը մեղադրում են պարբերականին՝ սուլթանի կողմնակիցների հետ կապեր հաստատելու և նրանց աջակցելու համար¹⁴: Ավելին՝ թերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր Մեհմեթ Մուրադը կալանավորվում է¹⁵: Թերթի վերջին՝ 135-րդ համարը լույս է տեսնում 1909 թ. ապրիլի 14-ին¹⁶:

Այսպիսով, բավական հետաքրքիր քաղաքական և գաղափարական գծով «Միզան» թերթը հիմնադրվում է որպես ընդդիմադիր պարբերական, ապա հարում երիտթուրքական շարժմանը, իսկ երիտթուրքերի դեմ քննադատական հողվածներ հրատարակելուց հետո վերջնականապես փակվում է: Այնուամենայնիվ, այս թերթը մեծ կարևորություն ունի օսմանյան մամուլի պատմության մեջ, քանի որ հանդես էր գալիս ոչ միայն քաղաքական օրակարգով, այլև պարբերականի էջերում անդրադարձ էր կատարվում գրական և մշակութային կյանքին: «Միզանը» առանձնանում էր նաև

11 Göçmen, *Jön Türk Basını*.

12 Uçman, “Mizan.”

13 Նույն տեղում:

14 “*Mizancı Mehmed Murad*,” https://www.yeniakit.com.tr/kimdir/Mizanc%C4%B1_Mehmed_Murad_, դիտվել է՝ 10.02.2019:

15 Նույն տեղում:


16 1886-1890 թթ. Կ. Պոլսում հրատարակվում է պարբերականի 158 համար, 1896 թ. հունվար-հուլիս ամիսներին Կահիրեում՝ 26 թիվ, 1896-1897 թթ. Փարիզում՝ 18 թիվ, 1897 թ. մայիս-հուլիս ամիսներին Ժնևում՝ 11 թիվ, 1908 թ. հուլիսի 30-1909 ապրիլի 14-ին Պոլսում՝ 135 թիվ:

տնտեսական խնդիրներին վերաբերող իր հոդվածներով¹⁷: Թուրք հեղինակ Հըֆզը Թոփուզը «Միզանը» համարում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «ամենաբոցաշունչ պարբերականներից»¹⁸:

Այսպիսով, թերթն օսմանյան շրջանի կարևորագույն պարբերականներից էր և երիտթուրքական գաղափարների տարածման հիմնական միջոցներից մեկը:

Երիտթուրքերի «Մեշվերեթ» թերթը

«Մեշվերեթ» (թուրք.՝ *Meşveret/խոսքիտրդ*) թերթը երիտթուրքական կարևոր պարբերականներից էր: Այն հիմնադրվել էր Փարիզում, 1895 թ. Ահմեդ Ռ-ըզայի կողմից, որը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադիրներից էր¹⁹: Թերթը լույս էր տեսնում Փարիզում, քանի որ խիստ ընդդիմադիր հայացքներով պարբերականը Աբդուլ Համիդ Երկրորդ սուլթանի խիստ գրաքննություն պայմաններում չէր կարող գործել Օսմանյան կայսրությունում: «Մեշվերեթն» ակտիվ դերակատարում ուներ երիտթուրքական գաղափարների տարածման գործում՝ իր ստեղծման առաջին տարիներին կատարելով նաև երիտթուրքական շարժման մամուլի օրգանի դերը:



2. Մեշվերեթ, Փարիզ, Ա. տարի, թի 7, 14 Մարտ 1908:

«Մեշվերեթ» թերթը լույս էր տեսնում ամսական երկու անգամ: 1895-1898 թթ. լույս է տեսել «Մեշվերեթ» թերթի շուրջ 30 համար թուրքերենով, իսկ 1895-1908 թթ.՝ պարբերականի 200-ից ավելի համար ֆրանսերենով²⁰: Թերթում տեղ էին գտնում օսմանյան ղեկավարությանը քննադատող մեծ թվով հոդվածներ: Միաժամանակ անդրադարձ էր կատարվում օսմանյան հասարակությանը հուզող թեմաների²¹: Թերթի անդրանիկ

17 Göçmen, "Jön Türk Basin".

18 Topuz Hifzi, *Türk Basin Tarihi* (Istanbul: Remzi Kitabevi, 2014), 83.

19 Ահմեդ Ռ-ըզան ծնվել է Կոստանդնուպոլսում 1859 թ., մոր կողմից ավստրացու արյուն ունի: Նա քաղաքական, պետական գործիչ էր, գրող, կրթական ուղղությամբ բարեփոխումների կողմնակից, Սենատի անդամ: Մոր ազդեցությունը զգալի է եղել նրա մտածողության վրա՝ արևմտամետ լինելու առևտրությամբ: St'u Eminatp Malkoç, "Doğu-Bati Ekseninde Bir Osmanlı Aydini: Ahmet Riza Yaşami ve Düşünce Dünyasi," *Yayinlandigi İstanbul Üniversitesi Yakın Dönem Türkiye Araştırmaları Dergisi 11* (2007), 96: Նաև՝ Murtaza Korlaelci, "Ahmed Riza (1859-1930)," *Felsefe Dünyasi 4* (1992), 47:

20 Şükrü M. Hanioğlu, "Jön Türk Basini," C. 3 (Istanbul: TCTA, 1985), 846-847.

21 Malkoç, "Doğu-Bati Ekseninde," 96.

համարում հրատարակված խմբագրական հոդվածում նշվում էր, որ այն նպատակ չի դնում կործանելու կառավարող դինաստիան, քանի որ իրենց օտար են ուժի միջոցով կարգավորվող լուծումները: Ըստ հոդվածի՝ իրենք բարենորոգումներ են պահանջում ոչ այս կամ այն նահանգի, այլև ամբողջ կայսրության համար:

Սուր քննադատական թեմաներով աչքի էր ընկնում թերթի հիմնադիր Ահմեդ Ռ-ըզան: Նա հմուտ պարսկագետ էր, գերազանց տիրապետում էր ռուսերենին: Նա թերթի միջոցով քարոզում էր իսլամական աշխարհի հոգևոր ավանդույթների վերածնության անհրաժեշտությունը: Մեծ ծավալով անդրադարձել է Հայկական հարցին՝ փորձելով ապացուցել, որ այն արտաքին հրահրումների արդյունք է: Հոդվածներից մեկում Ահմեդ Ռ-ըզան պանիսլամական դիրքերից օսմանյան և պարսկական կառավարություններին կոչ էր անում միասնական ջանքերով կանխել հայկական պետության վերականգնման վտանգը:

«Միություն և առաջադիմության» ծրագիրն առաջին անգամ Ահմեդ Ռ-ըզայի շնորհիվ տպագրվել է այս թերթում 1895 թ. դեկտեմբերի 3-ի ֆրանսերեն համարում²²:

Թերթում Ահմեդ Ռ-ըզայի գլխավոր քաղաքական գիծը հակառուսականությունն էր: Նա շատ երիտթուրքերի պարագլուխների պես ձգտում էր կապեր հաստատել եվրոպական առաջադիմական և սոցիալիստական շրջանակների հետ:

«Մեշվերեթի» սյունակագիրների թվում էին ժամանակի հայտնի հոդվածագիրներից Հոջա Քադրի Էֆենդին, Շերաֆեդդին Մադնումին, Աբդուլլահ Ջևդեթը: Ինչ-որ շրջանում թերթի հրատարակման աշխատանքներին մասնակցել է նաև «Միզան» թերթի հիմնադիր Մուրադ բեյը²³:

Թերթի սուր քննադատական և մեղադրական հոդվածներից հետո Օսմանյան կայսրությունը դիմում է Ֆրանսիային՝ դադարեցնելու թերթի տպագրությունն այդ երկրի տարածքում: Ֆրանսիան համաձայնում է կատարել օսմանյան դեկավարության խնդրանքը, և «Մեշվերեթ» թերթի տպագրությունը Ֆրանսիայում արգելվում է: Ահմեդ Ռ-ըզան ստիպված էր նոր երկրներ փնտրել, որտեղ հնարավորություն կատարար շարունակելու թերթի տպագրությունը: Այսպիսով, թերթը նախ տեղափոխում են Շվեյցարիա, ապա նաև՝ Բելգիա, որտեղ էլ շարունակվում է տպագրությունը²⁴: Հետաքրքրական է, որ այստեղ փակվում է թերթի թուրքերեն բաժինը՝ շարունակելով միայն ֆրանսերեն բաժնի աշխատանքները²⁵:

Թերթը մեծ կարևորություն ուներ երիտթուրքական մամուլի շարքերում, քանի որ աչքի էր ընկնում սուր քննադատական, հասարակական ու քաղաքական ծանր թեմաներ բարձրացնելով: Թերթն առանձնանում էր նաև նրանով, որ իրենց գաղափարները տարածելու համար եզակի հնարավորություն էր ստեղծում բազմաթիվ երիտթուրք գործիչների համար: Պետք է նշել նաև, որ այս թերթում Հայկական հարցի շուրջ հոդ-

22 Ziyad Ebüzziya, “Ahmed Riza,” in *TDV İslam Ansiklopedisi*, C. 2 (İstanbul: TDV Yayınları, 1989): 125.

23 Hanioğlu, “*Jön Türk Basını*,” 206.

24 “*Gazetecilik- Türk basınının doğuşu ve gelişimi*,” T.C. Millî Eğitim Bakanlığı (Ankara: MEB Yayını, 2008), 22.

25 Hanioğlu, “*Jön Türk Basını*,” 846-847.

վաճներով թղթակցել են նաև հայեր՝ տուրք տալով թուրքական գաղափարախոսական մտտեցումներին:

Երիտթուրքերի «Օսմանլը» թերթը

«Օսմանլը» (թուրք.՝ *Osmanli/osmanli-oumanliyan*) անունով մի քանի թերթ է լույս տեսել Օսմանյան կայսրությունում: Երիտթուրքական գաղափարներին հարող «Օսմանլը» անունով երկլեզու (ֆրանսերեն և թուրքերեն) թերթը սկսել են հրատարակել 1897 թ. դեկտեմբերի 1-ին²⁶: Թերթի վրա աշխատում էին Իսհաք Սյուքութին և Աբդուլլահ Ջևդեթը, որոնք երիտթուրքական շարժման ակտիվ անդամներից էին: Թերթը, ինչպես ժամանակի երիտթուրքական լրատվամիջոցների զգալի մասը, լույս է տեսել Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ Ժնևում (1897-1900 թթ.), ապա նաև տպագրությունը շարունակել Անգլիայում (1900-1904 թթ.): Թերթը տպագրվել է մինչև 1904 թ. դեկտեմբերի 7-ը, որի ընթացքում լույս է տեսել 142 համար: Ժամանակի ընթացքում տպագրվել են նաև անգլերեն հավելվածներ, որոնք տարածվել են եվրոպական երկրներում: Թերթի մի քանի համար լույս է տեսել նաև Եգիպտոսում՝ Կահիրեում, որը երիտթուրքական գաղափարախոսների կարևոր կենտրոններից էր:

Թերթում իրենց անդրադարձներն ու հողվածներն են տպագրել երիտթուրքական գաղափարակից հողվածագիրներ, գրողներ Աբդուլլահ Ջևդեթը, Իսհաք Սյուքութին, Մեհմեթ Ռեշիդը, Թունալը Հիւմին, Նուրի Ահմեդը, Ալի Հայդարը, Ահմեդ Ռեզան և այլք²⁷:

«Օսմանլըն» արտասահմանում տպագրվող երիտթուրքական այն թերթերից էր, որը ոչ միայն հանդես էր գալիս կայսրության ղեկավարության և քաղաքականության քննադատությամբ, այլև փորձ էր կատարում տարածելու երիտթուրքական գաղափարները: Ինչպես և այլ երիտթուրքական թերթեր, այն ստիպված էր անգամ արտասահմանում դիմակայել Աբդուլ Համիդ Երկրորդի և նրա համախոհների քայլերին՝ հաճախակի փոխելով տպագրության վայրը:

Կարևոր է նաև այն, որ 1894-1896 թթ. արդուլիամիդյան ջարդերի ժամանակ «Օսմանլը» թերթը լույս էր ընծայում հատուկ անգլերեն հավելված, որտեղ ուշադրության կենտրոնում Հայկական հարցն ու հայերն էին²⁸: Այս քայլով թերթի խմբագիրները փորձում էին անգլալեզու ընթերցողներին համոզել, որ հայերի զանգվածային կոտորածների հետևում ոչ թե թուրք բնակչությունն է, այլ Աբդուլ Համիդ սուլթանն ու նրա շրջապատը՝ միաժամանակ փորձելով երիտթուրքերին ներկայացնել որպես այլընտրանք Աբդուլ Համիդին, և որ հենց նրանք են ունակ կատարելու սկզբունքային փոփոխություններ Օսմանյան կայսրության քաղաքական և հասարակական կյանքում²⁹:

26 Nuri Inuğur, “*Basin ve Yayin Tarihi*,” (Istanbul: Der Yayinlari, 1993), 297.

27 Նույն տեղում:

28 Юрий А. Петросян, “Армянский вопрос на страницах редкого эмигрантского издания младотурок,” *Պարմա-բանասիրական հանդես* 2 (1982), 173-178:

29 *Osmanli* (Geneve) no. 2, 1.

Երիտթուրքական այլ պարբերականներ

Արդեն երիտթուրքերի կառավարման շրջանում, բացի վերոնշյալ պարբերականներից, լույս են տեսնում նաև այս քաղաքական ուժին հարող այլ պարբերականներ, որոնց մի մասը ևս համառոտ անդրադարձի կարիք ունի՝ ավելի ընդհանրական դարձնելու այս շրջանի մամուլի վերաբերյալ տեղեկությունը և օսմանյան մամուլի ընդհանուր պատկերը:

Ինչպես վերևում նշեցինք, երիտթուրք գործիչները բավական մեծ ուշադրություն էին հատկացնում մամուլին՝ փորձելով մեծ թվով թերթերի միջոցով իրենց կարծիքներն ու տեսակետները հասանելի դարձնել լսարանին: Ուստի երիտթուրքերի կառավարման ընթացքում ստեղծվում էին տասնյակ թերթեր, որոնք ոչ միշտ էին կարողանում հեղինակություն և ճանաչում ձեռք բերել՝ հիմնականում ապահովելով ավելի շատ քանակ, քան որակ: Այնուամենայնիվ, դրանք ևս կազմում էին երիտթուրքական մամուլի հատուկ մասը և լուծում էին տարատեսակ, հաճախ նաև տեղային խնդիրներ: Նման թերթերից էին «Շուրայը Ումմեթը», «Իչդիհադը» և այլ պարբերականներ, որոնք կարևոր դեր ունեին երիտթուրքական մամուլի զարգացման և ձևավորման գործընթացում:

«Շուրայը Ումմեթը»

«Շուրայը Ումմեթը» (թուրքատառ օսմաներեն՝ Şura-yi Ümmet/Ազգային խորհուրդ) պարբերականը հիմնադրել են հայտնի երիտթուրք գործիչներ Բեհաեդդին Շաքիրն³⁰ ու Սամիփաշագաղե Սեգահին³¹ 1902 թ. Կահիրեում³²:

«Շուրայը Ումմեթը» պարբերականը նոր ծավալով և հզորությամբ տպագրվել է 1908 թ. հուլիսից՝ դառնալով երիտթուրքերի կարևոր գաղափարական թերթերից մեկը: Թերթը ոչ միայն հանդես էր գալիս երիտթուրքական գաղափարների տարածմամբ և պաշտպանությամբ, այլ նաև հաճախ էր քննադատում այլ թերթերի և հողվածագիրների, որոնք չէին կիսում երիտթուրքական գաղափարախոսությունը³³:

Պարբերականը տարբեր ժամանակահատվածներում լույս է տեսել տարբեր ձևաչափերով. եղել է ինչպես օրաթերթ, այնպես էլ ամսագիր: Պարբերականում հողվածներով հանդես են եկել Ալի Քեմալը³⁴, Ահմեթ Ֆերիթը³⁵, Յուսուֆ Աքչուրան³⁶ և այլք: Թերթը, որոշ դադարներով հանդերձ, տպագրությունը շարունակել է մինչև 1929 թ.՝ լույս տեսնելով ընդհանուր 220 համարով³⁷:

30 Թուրք քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության անմիջական իրագործողներից: «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկրորդ քարտուղար:

31 Թուրք ռեալիստական հեքիաթասաց, վիպասան:

32 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 39 (Ankara: Türkiye Diyanet Vakfı, 2010), 240-242:

33 Inuğur, “*Basın ve Yayın Tarihi*,” 311.

34 Թուրք գրող, քաղաքական-հասարակական գործիչ, խմբագիր:

35 Թուրք քաղաքական գործիչ, մտավորական, դիվանագետ, երեսփոխան:

36 Գրող և հասարակական գործիչ:

37 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 39, 240-242.

«Իչդիհադ»

«Իչդիհադ» (թուրք.՝ İctihad/ճգնել³⁸) պարբերականը ևս կարելի է դասել երիտթուրքերի կարևոր թերթերի շարքում: Պարբերականը տպագրությունը սկսել է Օսմանյան կայսրության տարածքից դուրս՝ Ժնևում, 1904 թ. սեպտեմբերին³⁹: Երկլեզու (թուրքերեն, ֆրանսերեն) ամսագիրը հիմնել և ղեկավարել է հայտնի երիտթուրք գործիչ Աբդուլլահ Ջևդեթը⁴⁰: 1905 թ. Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպանը Աբդուլլահ Ջևդեթի⁴¹ դեմ դատական հայց է ներկայացնում, ինչին հետևում են ճնշումները, որի արդյունքում Ջևդեթը ստիպված է լինում թերթի խմբագրությունը տեղափոխել Եգիպտոս⁴²: Թերթը 1906-1908 թթ. տպագրվում է Կահիրեում, 1911-1932 թթ.՝ Կոստանդնուպոլսում:

Ջևդեթը հրատարակում է ամսագրի 358 համար մինչև 1932 թ. դեկտեմբեր:



5. «Իչդիհադի տուն», Ֆաթիհ/Կոստանդնուպոլիս

(<https://odatv.com/abdullah-cevdetin-kutuphanesinde-neler-gordum-2307171200.html>)

38 Թերթի անվանումն օսմաներենից թարգմանաբար նշանակում է ճգնել, ճիգ ու ջանք թափել, չափազանց աշխատել, կրոն կամ որևէ վարդապետություն հաստատել, իսլամական կրոնի մեկնություն:

39 *İslâm Ansiklopedisi*, C. 21, (Istanbul: Türkiye Diyanet Vakfı, 2000), 446-448.

40 Արաբկիրում ծնված, քրդական արմատներով թուրք հասարակական-քաղաքական գործիչ, մտավորական, ակնաբույժ, բանաստեղծ և թարգմանիչ:

41 *TDV İslâm Ansiklopedisi*, C. 21, 446-448.

42 Նույն տեղում:

**FROM THE HISTORY OF YOUNG TURKISH PRESS: A SHORT REVIEW
(UNTIL 1908)**

SUMMARY

Key words: The Ottoman Empire, periodicals, Young Turkish press, “Meshveret,” “Ichitihad,” “Mizan.”

The scientific article presents a brief history of the Young Turkish Press (until 1908). Special attention is given to the first segment of this process. The article is devoted to the analysis of the process of the emergence and distribution of the leading young Turkish newspapers of the first period (1890-1908 / 1909).

During this period, newspapers were published outside the Ottoman Empire, mainly in Cairo, France, Switzerland, and other places, because Abdul Hamid’s censorship and persecutions throughout the Ottoman Empire restricted their ideas and political views from freely circulating.

Элина З. Мирзоян

кандидат филологических наук

**ИЗ ИСТОРИИ МЛАДОТУРЕЦКОЙ ПРЕССЫ (ДО 1908 Г.):
КРАТКИЙ ОЧЕРК**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Османская империя, периодические издания, младотурки, младотурецкая пресса, «Ичтихат», «Мешверет», «Мизан».

Статья представляет собой краткий обзор младотурецкой периодической прессы (до 1908 г.). Особое внимание уделено первому этапу истории младотурецкой прессы. Статья освещает историю основания и распространения ведущих младотурецких газет указанного периода, которая охватывает период с 1890-х по 1908/1909 гг. В это время газеты печатались за пределами Османской империи, в основном в Каире, Франции, Швейцарии и других местах, так как действующая в Османской империи абдुлгамидовская цензура и проводимые репрессии не давали возможности свободно распространять собственные идеи и политические взгляды на территории империи.

REFERENCES

Gladishev, Andrey. “«Le Courier de Smyrne»: из истории антирусской пропаганды в Турции в н. 1820-х годов,” [“«Le Courier de Smyrne»: From the History of anti-Russian Propaganda in Turkey (1820's)]. *Izvestiya Saratovskogo universiteta. Novaya seriya. Seriya istoriya i mejhdunarodniye otnosheniya* 13 no. 2 (2013);

Kharatyan, Albert. Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870–1890-ական թթ.), [The Ottoman Censorship and the Press of Western Armenia (from the 1870s to the 1890s)]. *Patmabanasirakan handes* 4 (1985): 103-116;

Kharatyan, Albert. *Արևմտահայ մամուլի իր պատմության ավարտին (1900-1922 թթ.)* [The Western-Armenian Press at the End of its History (1900-1922)]. Yerevan, NAS RA, Institute of History, 2015;

Petrosyan, A. Yuri. Армянский вопрос на страницах редкого эмигрантского издания младотурок [The Armenian Question in the Emigrant Publication of the Young Turks]. *Patmabanasirakan handes* 2 (1982): 173-178;

Petrosyan, A. Yuri. *Турецкая публицистика эпохи реформ Османской империи (конец XVIII начало XX в.)* [Turkish Publicism of Reforms in the Ottoman Empire (XVIII-XX)]. Moskva: Nauka, 1985;

Zheltakov, D. Anatoli. *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)* [The Press in Turkish Social, Political and Cultural Life (1729-1908)]. Moskva: Nauka, 1972;

Հորիզոն [Horizon] t'ert, Tiflis, 1909.

ՀՈՒՅՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանասյի քառեր*¹ Հույների ցեղասպանություն, Օսմանյան պետություն, հայ պատմագրություն, կոտորած, տեղահանություն, Փոքրասիական աղետ, Պոնտոս, Թրակիա

Հույների ցեղասպանության հարցն՝ ամենատարբեր հանգամանքներով պայմանավորված՝ տասնամյակներ շարունակ լռության է մատնվել²: Պետք է նշել, որ չնայած Հայոց ցեղասպանության պատմագրության զարգացմանը, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Սփյուռքում քիչ են այն հայ պատմաբանները, ովքեր հետազոտել են Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած տարիներին Օսմանյան պետության հակահունական քաղաքականության շարժառիթներն ու հետևանքները: Կարելի է անվարան ընդգծել, որ հարցին ուսումնասիրողներն անդրադարձել են կա՛մ հակահայկական քաղաքականության և Հայոց ցեղասպանության համատեքստում, կա՛մ ժամանակի հույն-թուրքական հարաբերությունների ձևաչափով:

Ներկայացնելով հայ պատմագրության մեջ հարցին անդրադարձած հեղինակներին՝ հիմնական շեշտը դնում ենք Գևորգ Վարդանյանի «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)» մենագրության վրա:

20-րդ դարակզբին Օսմանյան պետության իրագործած ցեղասպանության հետևանքով բնաջնջվեց, բռնի իսլամացվեց և տարագրվեց ևս մեկ քրիստոնյա ժողովուրդ. Թրակիայում, Փոքր Ասիայում և Պոնտոսում վերջ դրվեց տեղի հունական քաղաքակրթությանը³:

Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման գործընթացը, ինչպես նաև 1970-80-ական թթ. Արևմուտքում Հրեից հոլոքոստի թեմայի նկատմամբ հետաքրքրության աճը նպաստեցին Հույների ցեղասպանության հարցի բարձրացմանը (1980-1990-ական թթ.)³: Հատկանշական է, որ այն իրականություն դարձավ շնորհիվ Պոնտոսի հույների համառ և հետևողական ջանքերի: 1994 թ. փետրվարի 24-ին Հունաստանի Հանրապետության խորհրդարանը մայիսի 19-ը հայտարարեց Հույների ցեղասպանության հիշատակի օր, որը կապված է Մուստաֆա Բեմալի Սամսուն հասնելու

1 Հրապարակումը նվիրվում է Պոնտոսի հույների ցեղասպանության 100-ամյակին:

2 Թեոֆանի Մակիդիս, *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս*, հեղինակագործած թարգմանությունը՝ Թեհմինե Մարտոյանի (Ալեքսանդրուպոլիս, 2014), 18:

3 Այդ մասին մանրամասն տե՛ս Գևորգ Վարդանյան, «Պոնտոսի հույները և հանրապետական Թուրքիան. պատմական հիշողություն և նոր մարտահրավերներ», *Շամանակակյից Եվրասիա* III, no. 2 (2014), 86-105:

հետ⁴: Հույների ցեղասպանությունը ոգեկոչվում է նաև սեպտեմբերի 14-ին՝ կապված 1922 թ. Ջնյոնիայի քրիստոնյաների կանխամտածված բնաջնջման, ապա՝ քաղաքի հրկիզման հետ:

Հայ պատմագրություն մեջ օսմանահպատակ հույների պատմության նախացեղասպանական և բուն ցեղասպանական շրջանին որոշակիորեն անդրադարձել են Մանվել Ջուլյանը⁵, Ջոն Կիրակոսյանը⁶, Հրաչ Բարթիկյանը⁷, Վահագն Դադրյանը⁸, Ռիչարդ Հովհաննիսյանը⁹, Հովհաննես Ինճիկյանը¹⁰, Հրաչիկ Սիմոնյանը¹¹, Արման Կիրակոսյանը¹², Արսեն Ավագյանը¹³, Գևորգ Քիլիմջյանը¹⁴, Արտեմ Ուլունյանը¹⁵ և այլք:

Վերը հիշատակված հեղինակներից առանձնանում է հատկապես պատմաբան Գևորգ Քիլիմջյանը: Նրա հետազոտությունները նվիրված են Բալկանյան պատե-

4 Մակիդիս, *Հույների ցեղասպանությունը*, 154:

5 Մանվել Ջուլյան, ««Դեվլիբնե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների», *Պարմա-բանասիրական հանդես* no. 2-3 (1959), 247-256:

6 Ջոն Կիրակոսյան, *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը* (XIX դարի 70-ական թթ.) (Երևան, «Հայաստան», 1978):

7 Հրաչ Բարթիկյան, «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ», *Պարմա-բանասիրական հանդես* no. 2-3 (1999), 397-407: Հրաչ Բարթիկյան, Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին, *Պարմա-բանասիրական հանդես* no. 2 (1981), 290-299:

8 Vahagn Dadrian, “The Determinants of the Armenian Genocide,” working paper GS 02. (Yale Center for International and Area Studies, H.F. Guggenheim Foundation, 1998), 1-32; Vahagn Dadrian, *The History of the Armenain Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence-Oxford: Berghahn Books, 1995); Vahagn Dadrian, *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (New Brunswick: Transaction Publishers, 1999).

9 Ռիչարդ Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն, հարոր I. Առաջին տարին, 1918-1919* (Երևան, ՀՀ ԳԱԱ, 2005); “Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities,” ed. by Richard G. Hovannisyan (California: Mazda Publishers, 2009); Richard Hovannisyan, “Armenia on the Road to Independence, 1918 (Los Angeles: University of California Press, 1967).

10 Հովհաննես Ինճիկյան, *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* (Երևան, «Հայաստան», 1984), Оганнес Инджикян, *Буржуазия Османской империи* (Ер., Изд-во АН Арм. ССР, 1977).

11 Հրաչիկ Սիմոնյան, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* (Երևան, «Հայաստան», 1986):

12 Արման Կիրակոսյան, *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.)* (Երևան, «Գիտություն», 1999):

13 Арсен Авакян, *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* (Երևան: “Գիտություն,” 1999); Арсен Авакян, *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, отв. ред. Г. Аветисян (Երևան: “Գիտություն,” НАН РА, 2001).

14 Գևորգ Քիլիմջյան, *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988); Նույնի, «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 8 (1970), 11-16; Նույնի, «Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 10 (1976), 32-41:

15 Артем Улунян, *Политическая история современной Греции (конец XVIII в. – 90-е гг. XX в.)* (Москва: ИВИ РАН, 1998), 233.

րազմներից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբն ընկած ժամանակահատվածում հույն-թուրքական հարաբերությունների և հույների առաջին բռնի տեղահանությունների քննարկմանը:

Պատմաբան Գևորգ Վարդանյանի¹⁶ «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)» մենագրությունը¹⁷ հայրենական պատմագրության մեջ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան պետության մեջ հույների դրությունը, բնակության շրջանները, թուրքական իշխանությունների՝ հույն ժողովրդի բռնի տեղահանությունների և կոտորածների հետևողական քաղաքականությունը համապարփակ ներկայացնելու առաջին փորձն է: Մենագրությունն ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսից 20-րդ դարի առաջին քառորդն ընկած ժամանակահատվածը:

Իհարկե, ուսումնասիրության մեջ հիշատակվող որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են ժամանակագրական այդ շրջանակներից, ինչը պայմանավորված է քննության առարկա հիմնահարցն առավել խորությամբ հետազոտելու անհրաժեշտությամբ: Վարդանյանն այս հետազոտությամբ հայ պատմագրության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում Կ.Պոլսի հունական տիեզերական պատրիարքարանի, հունական կազմակերպությունների տեղեկագրերն ու արխիվային փաստաթղթերի ժողովածուների նյութերը, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների վերաբերյալ: Հույն ժողովրդի պատմության և Օսմանյան պետության մեջ նրանց դրության հետ կապված հարցերի մեկնաբանման համար հեղինակն օգտագործել է ինչպես հույն և հայ, այնպես էլ եվրոպացի ու ամերիկացի հասարակական գործիչների, դիվանագետների, զինվորականների, բժիշկների, ժամանակակիցների աշխատանքները՝ այդ թվում նամակներ, հուշագրություններ և այլն¹⁸:

Գևորգ Վարդանյանն իր հետազոտությունն իրականացնելիս նկատում և փաստում է, որ հույն ուսումնասիրողներն ավելի շատ են սկսել անդրադառնալ սեփական ժողովրդի ցեղասպանության պատմության հիմնահարցին՝ գիտական հետաքրքրության բարձրացումը կապելով Հունաստանում հաստատված գաղթական հույների հիշողության պահպանման հետ: Հեղինակը հավաստիացնում է, որ հիշողությունն այն հիմնական շարժիչ ուժն էր, որը հիմնահարցի վերաբերյալ գիտական և քաղաքական մեծ հետաքրքրություն առաջացրեց¹⁹:

16 Հյուսիսային Կարոլինայի համալսարանի դոկտորանտ և դասախոս Գևորգ Վարդանյանը պատմական գիտությունների թեկնածու է, շուրջ երկու տասնյակ գիտական հրատարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության հեղինակ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ հայերի և հույների ցեղասպանությունների պատմություն, Օսմանյան և Ռուսական կայսրությունների համեմատական հետազոտություն, հանրային պատմություն և այլն: 2017-2018 թթ. ղեկավարել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Մինչ այդ եղել է նույն հիմնարկի գիտաշխատող, բաժնի վարիչ, գիտական քարտուղար և այլն:

17 Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Կոլաժ», 2012, 196 էջ):

18 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում*, 10-11:

19 Նույն տեղում, 13:

Մենագրության առաջին գլխում («*Հույների բնակության շրջաններն ու դրությունն Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին և XX դարի սկզբին*») ներկայացնելով հույների դրությունը՝ Վարդանյանը խիստ կարևոր է համարում հույն բնակչության թվաքանակի վերաբերյալ ամենատարբեր աղբյուրների համադրումն ու վերլուծությունը և հանգում այն եզրակացության, որ թեև թուրքական մարդահամարների տվյալները դիտավորությամբ կեղծված են, այնուամենայնիվ, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան պետության մեջ ապրում էր շուրջ 2,5 մլն հույն: Անդրադառնալով հույների ծանր վիճակին՝ հեղինակը փաստում է, որ թուրքական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին պետականության հարուստ ավանդույթներ ունեցող և զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող հույների ազգային առաջընթացը²⁰: Դիտարկելով իրադարձությունների ընթացքը՝ հետազոտողը եզրակացնում է, որ 1894-1896 թթ. հայերի կոտորածների ժամանակ սուլթան Աբդուլ Համիդն ուղղափառ հույների նկատմամբ վարել է սիրաշահման քաղաքականություն: Ըստ հեղինակի՝ այն պայմանավորված էր միջազգային բարդ իրադրությամբ՝ խուսափել Հունաստանի հետ առճակատումից, ինչպես նաև սեպ խրել հույն և հայ քրիստոնյաների հարաբերությունների մեջ, թշնամանք սերմանել նրանց միջև, հասնել հույների չեզոքությանը Հայկական հարցում՝ ամեն գնով թույլ չտալով նրանց միջամտությունը և այլն:

Գևորգ Վարդանյանը, այնուամենայնիվ, լուրջ բացթողումներ է նկատում վերոհիշյալ քաղաքականության մեջ և այն հիմնավորում առանձին վայրերում հույների կոտորածներով: Նա առանձնացնում է թուրքացման քաղաքականության ջատագովներից հատկապես դոկտոր Նազրմին, ով 1910 թ. առաջ է քաշել Մակեդոնիան մահմեդական գաղթականներով բնակեցնելու ծրագիրը²¹: Հեղինակը համոզմունք է հայտնում, որ 1913-1914 թթ. բռնագաղթը պետական քաղաքականություն էր, երիտթուրքերի բռնի օսմանացման (թուրքացման) քաղաքականության բաղադրիչն էր և նպատակ ուներ զրկելու Էգեյան ծովափը հույն (քրիստոնյա) բնակչությունից: Վարդանյանը թուրքացման քաղաքականության բաղկացուցիչ է համարում հույների տնտեսական դիրքերի թուլացումը, ապա՝ տնտեսությունից նրանց դուրս մղելը կամ «տնտեսության թուրքացումը», որն ամբողջացնում է երիտթուրքերի «հունական» քաղաքականության էությունը²²:

Ամփոփելով ուսումնասիրության առաջին գլխի արդյունքները՝ հեղինակը եզրակացնում է, որ օսմանյան իշխանությունների կողմից 1913-1914 թթ. հույն ժողովրդի նկատմամբ իրագործվեց բռնի տեղահանությունների քաղաքականություն, որը թուրքական կողմը հետևողականորեն փորձել է ներկայացնել որպես բնակչության «կամա-

20 Նույն տեղում, 47:

21 Նույն տեղում, 65, 71:

22 Նույն տեղում, 78:

վոր փոխանակում»։ Դրա նպատակն ըստ հետազոտողի՝ Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հունաթափումն էր, որը տնտեսական պատժամիջոցների հետ միասին Օսմանյան պետության թուրքացման քաղաքականության մի մասն էր կազմում։

Մենագրության երկրորդ գլխում («Օսմանյան կայսրության հույն բնակչությունն Առաջին համաշխարհային և 1919-1922 թվականների հույն-թուրքական պատերազմների տարիներին։ Հայ-հունական համագործակցության փորձերը») հեղինակը փաստում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական փուլում հույների հավաժանքները, ընդհանուր առմամբ, նույն քաղաքականության շարունակությունն էին, որ նրանց նկատմամբ կիրառվեց Բալկանյան պատերազմների վերջին շրջանում և 1914 թ. գարնան ու ամռան ամիսներին։ Վարդանյանը, սակայն, ժամանակի ընթացքում հակահունական քաղաքականության «արմատավորում և խորացում» է տեսնում։

Ուսումնասիրողը նկատում է, որ եթե նախորդ շրջանում հիմնական շեշտը դրվում էր արտաքսումների վրա, իսկ գործողության տարածքը միայն Թրակիան և Փոքր Ասիայի արևմտյան ծովափն էին, ապա Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (սկսած 1916 թվականից) հույների զանգվածային ջարդերն ընդգրկեցին կայսրության ամբողջ տարածքը։ Մեկնաբանելով Պոնտոսում հակահունական քաղաքականությունը, որը տարվում էր պատերազմի հենց սկզբից, հեղինակն իրադարձությունների բռուն ծավալման՝ հույն բնակչության նկատմամբ «իսկական հաշվեհարդարի» տարեթիվ նշում է 1916 թ. ապրիլը՝ այն կապելով ռուսների կողմից տարածքի գրավման, այնուհետև նահանջի հետ։ Համեմատելով Պոնտոսում տեղի ունեցած ջարդերն ու արտաքսումները՝ Գևորգ Վարդանյանն առանցքային ոչ մի տարբերություն չի նկատում ո՛չ Փոքր Ասիայում, ո՛չ Թրակիայում։ Հեղինակը նշում է, որ Պոնտոսում տեղի ունեցածը դիտարկվել է որպես առանձին՝ «պոնտական ազգի» ցեղասպանություն՝ պայմանավորված այդ խնդրով հիմնականում զբաղվող, պոնտական ծագում ունեցող հույներով։ Վարդանյանը նպատակահարմար և արդարացված է համարում դրանք դիտարկել որպես մեկ ցեղասպանություն՝ չտարանջատելով միմյանցից²³։

Հույն-թուրքական պատերազմի տարիներին (1919-1922 թթ.) Օսմանյան պետության հունաթափումը տեղի է ունեցել առավել մեծ ծավալներով և ընդհանուր առմամբ ավարտին հասցվել երկիրը հույներից «ազատելու» քաղաքականությունը։ Հեղինակը փաստում է, որ Փոքր Ասիայում՝ հատկապես Պոնտոսում և Էգեյան ծովի ափերի հունաշատ շրջաններում, հույն բնակչությունը բնաջնջվեց։ Միայն Առաջին աշխարհամարտի տարիներին Պոնտոսից տեղահանվածների ու կոտորվածների թիվը հասնում էր շուրջ 100.000 մարդու²⁴։ Ամփոփելով 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին Օսմանյան պետության տարածքում հույն ժողովրդի զանգվածային տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրության արդյունքները՝ Գևորգ Վարդանյանը հավաստիացնում է, որ քեմալականներն «ավարտին հասցրին» երիտթուրքերի որդեգրած քաղաքականությունը, որի նպատակը կայսրության տարածքի

23 Նույն տեղում, 97-98:

24 Նույն տեղում, 100:

«մաքրումն» էր հույն հպատակների²⁵: Թեմայի ուսումնասիրության համատեքստում հետաքրքիր է հատկապես հեղինակի անդրադարձը հայ-հունական համագործակցության փորձերին (XX դարի առաջին քառորդ): Ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան պետության տարածքում գրեթե զուգահեռաբար իրականացվող երկու ժողովուրդների զանգվածային կոտորածների և արտաքսումների քաղաքականությունը՝ հետազոտողն ընդգծում է հնարավոր համագործակցության փաստը: Հատկանշական է հեղինակի՝ ընթերցողի ուշադրության բևեռումը 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին Պոնտոսի լեռներում համատեղ ինքնապաշտպանության բազմաթիվ դեպքերի և հայ-հունական միացյալ մարտախմբերի գործունեության վրա: Վարդանյանի հավաստմամբ՝ բազմաթիվ են այն օրինակները, երբ հույներն իրենց հնարավորության սահմաններում օգնում էին հայերին²⁶:

Ուսումնասիրության երրորդ գլխում («*Հունական հարցը Լոզանի վեհաժողովում: Հայերի և հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների թուրքական քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները*») հեղինակը դիտարկում է Օսմանյան պետության և հասարակության մեջ հույների ներգրավվածությունն ու նրանց դերակատարությունը:

Բնական համարելով միևնույն պետության, վարչակարգի և գործող անձանց իրագործած ցեղասպանությունների զգալի նմանություններն ու ընդհանրությունները (տնտեսական պատժամիջոցներ, զորակոչ, աշխատանքային գումարտակների ստեղծում, բռնի իսլամացում, զանգվածային տեղահանություններ և կոտորածներ, մշակութային, կրթական և կրոնական հաստատությունների ոչնչացում)՝ հեղինակը հատկապես ընդգծում է դրանց տարբերությունները՝ մարդկային կորուստների թվաքանակ, քրդական տարր և այլն²⁷:

Անդրադառնալով հույների բռնագաղթի և կոտորածների փուլային զարգացմանը՝ կապված ժամանակագրության և աշխարհագրության հետ, հեղինակը դժվարանում է պնդել մեկ կոնկրետ ծրագրի առկայության փաստը, մինչդեռ ակնհայտ է համարում, որ 1914-1923 թթ. հույների տեղահանություններն ու կոտորածները (Արևելյան Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս), կազմելով մեկ միասնական քաղաքականություն, կրել են պետական բնույթ և իրագործվել կայսրության հույն բնակչությունից ազատվելու դիտավորությամբ²⁸:

Իրականացնելով հետևանքների համեմատություն՝ հեղինակն ամփոփում է. «1914-1923 թթ. թուրքական երկու վարչակարգերի կողմից քրիստոնյաների նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության հետևանքը եղավ երկու ժողովուրդների՝ մի դեպքում արևմտահայության, մյուս դեպքում՝ օսմանահպատակ հույների հայրենազրկումը: Նրանց պատճառովեց առեղծված մարդկային, նյութական և հոգեբանական

25 Նույն տեղում, 132:

26 Նույն տեղում, 136-137:

27 Նույն տեղում, 167:

28 Նույն տեղում, 168:

կորուստ... Չնայած մեծաքանակ հույներ (գլխավորապես Պոնտոսից) գաղթեցին Ռուսաստան, նախկին խորհրդային հանրապետություններ և ԱՄՆ, այնուամենայնիվ, նրանց ճշող մեծամասնությունը հանգրվան գտավ Հունաստանում: Իսկ հայերի հոծ զանգվածներ տարածվեցին աշխարհով մեկ՝ ԱՄՆ-ից մինչև Ավստրալիա»²⁹:

Գևորգ Վարդանյանն օգտագործել է Հայոց ցեղասպանության պատմության հայտնի ուսումնասիրողներ Վահագն Դադրյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, մասամբ նաև թուրք պատմաբան, սոցիոլոգ Թաներ Աքչամի մոտեցումները, սակայն չի հետևել նրանցից և ոչ մեկի՝ ցեղասպանություն երևույթը բացատրելու ձևաչափին: Նա քննարկում է բազմաթիվ գործոններ՝ կրոնական, թուրքական ազգայնականության, ժամանակի միջազգային քաղաքական և այլն: Սակայն այս հետազոտության մեջ որևէ գործոնի առանձին առաջնային կամ եզակի նշանակություն և կարևորություն չի տրվում Հույների ցեղասպանության պատճառներն ու ընթացքը բացատրելու հարցում: Ավելին, հույների բնաջնջման նպատակադրությունը հաստատող փաստաթղթի բացակայությունը չի կաշկանդել հեղինակին այդ քաղաքականությունը ցեղասպանություն որակելու հարցում: Այդուհանդերձ, Վարդանյանի՝ հակահունական քաղաքականության աստիճանական արմատականացման օգտին արվող փաստարկները հիշեցնում են գերմանացի պատմաբան Հանս Մոմզենի «cumulative radicalization» դրույթը, որն օգտագործվել է ինչպես Հրեից հոլոքոստի, այնպես էլ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, թեև հեղինակն այն որպես նմուշ-օրինակ չի դիտարկել:³⁰

Ամփոփելով փաստենք, որ հետազոտությունն ունեցել է կիրառական կարևոր նշանակություն, մասնավորապես, 2015 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հույների ցեղասպանության փաստը ճանաչելիս և այն դատապարտող փաստաթուղթը կազմելիս օգտագործվել են աշխատության մեջ ներկայացված դրույթներն ու մշակումները:

29 Նույն տեղում, 172-173:

30 Hans Mommsen, "Hitler's Reichstag Speech of 30 January 1939," *History and Memory* 9, no. 1-2 (1997), 147-161, տե՛ս նաև հետևյալ ուսումնասիրությունը՝ Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford: Oxford University Press, 2005).

Tehmine R. Martoyan

PhD in History

THE ISSUE OF THE HISTORY OF GREEK GENOCIDE IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

SUMMARY

Key-words: Greek Genocide, Ottoman Empire, Armenian historiography, massacre, deportation, Asia Minor disaster, Pontus, Trance.

Researches dealing with the Greek pre-genocidal and genocidal period are written by the Armenian historians Manvel Zulalyan, John Kirakosyan, Hratch Bartikyan, Vahakn Dadryan, Richard Hovhannisyanyan, Gevorg Kilimjyan, etc.

Gevorg Vardanyan's monograph "The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster (1914–1923)" is the first attempt of comprehensive research which presents and analyzes the mass deportations and massacres of the Greeks in the Ottoman Empire from 1914 to 1923.

In 2015 the provisions of the monograph were used during the recognition and formation of the document of the Greek Genocide at the Parliament of the Republic of Armenia.

Тегмине Р. Мартоян

кандидат исторических наук

ВОПРОС ИСТОРИИ ГЕНОЦИДА ГРЕКОВ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид греков, Османская Империя, армянская историография, резня, депортация, Малоазийская катастрофа, Понт, Фракия.

Тему предгеноцидного и геноцидного периода истории османских греков, в армянской историографии частично упоминули Манвел Зулалян, Джон Киракосян, Грач Бартикян, Ваакн Дадрян, Ричард Оганнисян, Геворк Килимджян и др. Монография историка Геворка Варданяна «Греческое население в Османской империи и Малоазийская катастрофа» стала первой попыткой всестороннего рассмотрения положения греков в Османской империи в конце 19-го и начале 20-х веков. Исследование имело важное прикладное значение, в частности, при признании факта Греческого Геноцида в Национальном Собрании Республики Армения в 2015 г. представленные в работе положения и разработки были использованы при формулировке подтверждающего документа.

REFERENCES

Avagyan, Arsen. *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* [The Genocide of 1915. The Mechanisms of Decision-making and Implementation]. Yerevan: Gitutyun, 1999;

Avagyan, Arsen. *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)* [The Circassian Factor in the Ottoman Empire and Turkey (The Second half of the XIX c.- The first quarter of the XX c.)]. Yerevan: NAS RA, Gitutyun, 2001;

Bart'ikyan, Hrach'. «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ» [The Greeks of Russia and Soviet Union: Resettlements and Deportations]. *Patma-banasirakan handes* 2-3 (1999): 397- 407;

Bart'ikyan, Hrach'. «Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին» [The Greek Encyclopedia “Hidra” about Armenia and the Armenians]. *Patma-banasirakan handes* 2 (1981): 290-299;

Hovannisyán, Rich'ard. *Հայաստանի Հանրապետություն, Հարրր I. Մուշին տարին, 1918-1919* [Republic of Armenia, volume I, The First Year, 1918-1919]. Yerevan: NAS RA Institute of History, Tigran Mets, 2005;

Inchikyan, Hovhannes., *Буржуазия Османской империи* [The Bourgeois of the Ottoman Empire]. Yerevan: NAS RA, 1977;

Inchikyan, Hovhannes. *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* [The Fall of the Ottoman Empire: Socio-Economic Review]. Yerevan: Hayastan, 1984;

Qilimjyan, Gevorg. *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* [Turkish-Greek Relations in 1908-1914]. Yerevan: YSU, 1988;

Qilimjyan, Gevorg. «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը» [About the Question of the Young Turks' National Policy]. *Lraber Hasarakakan Gitut' yunneri* 10 (1976): 11-16;

Qilimjyan, Gevorg. «Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)» [The Greek-Turkish Relations on the Eve of the World War I]. *Lraber Hasarakakan Gitut' yunneri* 8 (1970): 32-41;

Kirakosyan, John. *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)* [The Bourgeois Diplomacy and Armenia in the 70s of the 19th century]. Yerevan: Hayastan, 1978;

Kirakosyan, John. *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության ինտիդը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թթ.)* [The British Diplomacy and the Question of Western Armenians in the 30s of the 19th century]. Yerevan: Gitutyun, 1999;

Malkidis, T'eofanis. *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս* [The Greek Genocide, Trace, Asia Minor, Pontus]. Alexandroupolis, Limuna, 2014;

Simonyan, Hrach'. *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* [Ideology and Policy of the Turkish National Bourgeois]. Yerevan: Hayastan, 1986;

Ulunyan, Artem. *Политическая история современной Греции* [Political History of Modern Greece]. Moscow: Institute of General History, NAS, 1998;

Vardanyan, Gevorg. *Հոյն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* [The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster, 1914-1923]. Yerevan: Collage, 2012;

Vardanyan, Gevorg. «Պոնտոսի հույները և հանրապետական Թուրքիան. Պատմական հիշողություն և նոր մարտահրավերներ» [The Greeks of Pontus and the Republican Turkey: Historical Memory and New Challenges]. *Modern Eurasia* no. 3 (2) (2014): 86-105;

Zulalyan, Manvel. ««Դեվշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների» [“Devshirme” in the Ottoman Empire According to Armenian and Turkish Sources]. *Patma-banasirakan handes* 2 (1959): 247-256.

**ՊԱՏՄԵԼՈՎ ԱՆՊԱՏՄԵԼԻՆ. ՏՐԱՊԻՉՈՒՆԻ ՀԱՅԵՐԻ
ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Տրապիզոն, Հարություն Կիրակոսյան, հուշեր, հայերի տեղահանություն, հայերի կոտորած, Ակն, Արաբկիր:

Հարություն Կիրակոսյանն իր հուշագրության մեջ ներկայացնում է իր և իր ընտանիքի փորձառությունը Մեծ եղեռնի տարիներին: 1915 թ., լինելով ընդամենը 11 տարեկան, նա անցել է տարագրության ճանապարհը՝ կորցնելով ընտանիքի անդամներին և միայն հրաշքով փրկվելով: Նա մեկն էր այն սակավաթիվ հայերից, որոնք ոչ միայն փրկվեցին, այլ նաև իրենց փորձառությունը հուշագրության տեսքով հանձնեցին ապագա սերունդներին:

Հուշագրությունը գրվել է Մեծ եղեռնից 50 տարի անց: Անշուշտ, ժամանակն իր ազդեցությունն է ունեցել դեպքերը վերհիշելու և պատմելու հեղինակի նախաձեռնության վրա: Այդուհանդերձ, այս հուշագրությունը բավական կարևոր սկզբնաղբյուր է Հայոց ցեղասպանության և հատկապես տրապիզոնահայության տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրության համար:

Հայոց ցեղասպանության ընթացքում զանգվածային տեղահանություններ և կոտորածներ տեղի ունեցան Օսմանյան կայսրության բոլոր վարչական միավորներում: Այս առումով Տրապիզոնի նահանգը բացառություն չէր: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Տրապիզոնի նահանգում բնակվում էր 73.395 հայ, որոնցից 5.539-ը՝ նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում¹: Պատերազմի ժամանակ Տրապիզոնն ուներ ռազմավարական բացառիկ նշանակություն Օսմանյան իշխանությունների համար, այդ պատճառով նահանգում հակահայկական գործողությունները գտնվում էին երիտթուրք պարագլուխների անմիջական վերահսկողության տակ: Այստեղ հակահայկական քաղաքականության մեջ առանցքային դեր ունեին Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչեղի Նայիլը²: Ականատեսների վկայությամբ՝ հակահայկական միջոցառումներն արագանում են, երբ հունիսի 22-23-ին Տրապիզոն է ժամանում Բեհաեդդին Շաքիրը³: Արդեն հունիսի 26-ին հրաման է ստացվում, որ հայերը մի քանի օրվա ընթացքում պետք է տեղահանվեն: Սկզբում տեղահանվում են տղամարդիկ, այնուհետև՝ կանայք և երե-

1 Ռոբերտ Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* (Երևան, ՀՅԹԻ, 2015), 120:

2 Մելինե Անույան, *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատապարտությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, ՀՅԹԻ, 2013), 101-102:

3 Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* (New York: I.B. Tauris, 2011), 469.

խաները: Տղամարդկանց մեծ մասը սպանվում է Դեյիրմենդերե կոչված վայրում, որը գտնվում էր քաղաքից 10 րոպե հեռավորության վրա: Որոշ կանայք և երեխաներ խեղդամահ են արվում ծովում: Երեխաների մյուս մասն էլ ուղարկվում է «Կարմիր մահիկի» հիվանդանոց, որտեղ նրանց թունավորում են: Տեղահանվողներին պատկանող թանկարժեք իրերն ու ամբողջ ունեցվածքը թալանվում է⁴:

Տրապիզոնից հայերի առաջին խմբի տեղահանությունը տեղի է ունենում 1915 թ. հուլիսի 1-ին: Այդ օրը գորբերը շրջապատում են Տրապիզոնի հայաբնակ հատվածը և սկսում տեղահանել քաղաքի բնակիչներին, որոնց ոչ մեծ խմբերով տեղափոխում են Դեյիրմենդերե, ապա՝ Գյումուշխանե: Ընդհանուր առմամբ շուրջ 6.000 մարդ է տեղահանվում քաղաքից հուլիսի 1-ից 3-ն ընկած հատվածում⁵:

Հարություն Կիրակոսյանը Տրապիզոնից տեղահանված հազարավոր հայերից մեկն էր: Ծնվել է 1903 թ. (ամիսն ու օրը հայտնի չեն), ընտանիքի յոթ երեխաներից ամենակրտսերն էր: 1915 թ. ընդամենը 11 տարեկան էր, երբ, կորցնելով ընտանիքը, ազգականների և այլ հայերի հետ 62 օր տարագրության ճանապարհ է անցնում: Ընտանիքի անդամներից փրկվում են միայն ավագ եղբայրը՝ Ավետիսը, որը սովորելիս է եղել Կրասնոդարում, և քույրերից մեկը, որովհետև ամուսնացած է եղել Թիֆլիսում: Հարությունը միայն հրաշքով է փրկվել, ապա մի թուրք որդեգրել է նրան, որի ընտանիքի հետ տեղափոխվել է Կոնիա: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո նա փախել է Կոստանդնուպոլիս, որտեղ մեկ տարի մնալուց հետո վերադարձել է Տրապիզոն: 1919 թ. նրա եղբայրը, որն ապրում էր Ռուսաստանի Կրասնոդար քաղաքում, գալիս է Տրապիզոն և նրան տանում Ռուսաստան, որտեղ էլ սկսվում է նրա կյանքի հաջորդ փուլը:



Լուս. 1. Չախից՝ Հարություն Կիրակոսյանը, աջից՝ եղբայրը՝ Ավետիս Կիրակոսյանը, կենտրոնի անձն անհայտ է (Հարություն Կիրակոսյանի ընտանեկան արխիվ):

4 Նույն տեղում, 477:

5 Նույն տեղում, 480:

Այնուհետև Հարությունը տեղափոխվում է Երևան, երկու տարի սովորում և 1925 թ. ավարտում է Երևանի №2 դպրոցը: Բացի այդ, ջութակ նվագել է սովորում Երևանի կոնսերվատորիայում, սակայն ձիուց վայր ընկնելու հետևանքով մատը վնասում է՝ չկարողանալով շարունակել ուսումը: Որոշ ժամանակ անց եղբոր՝ Ավետիսի հետ մեկնում է Վրաստան և 1930 թ. ընդունվում Անդրկովկասի ինժեներամելիորատիվ համալսարանի (Закавказский инженерно-мелиоративный институт) հիդրոտեխնիկական ֆակուլտետը՝ ավարտելով այն 1935 թ.: Թիֆլիսում Հարությունը բնակվում է Կամենի փողոց, տուն №1, բնակարան 7 հասցեում: 1937 թ.՝ եղբոր բանտարկվելուց հետո, ադրբեջանցի ընկերոջ միջնորդությամբ առանց պետական մարմիններում ձևակերպման տեղավորվում է աշխատանքի Թիֆլիսի պետական ադրբեջանական թատրոնում որպես ջութակահար՝ աշխատելով օրավարձով:

Հայրենական պատերազմի ժամանակ, ռազմաճակատ մեկնելու ճանապարհից հետ է կանչվում, քանի որ հրաման էր տրվել Վրաստանից ռազմաճակատ չուղարկել բարձրագույն կրթություն ունեցող անձանց, և գործուղվում է աշխատանքի Ռոստով՝ Անդրկովկասի մետալուրգիական գործարան՝ որպես նախագծման բաժնի ինժեներ: 1946 թ. ընտանիքով տեղափոխվում է Կիրովական (այժմ՝ Վանաձոր) և աշխատում տեղի քիմիական կոմբինատում: 1951 թ. կրկին վերադառնում է Թիֆլիս և շարունակում աշխատել Ռոսթավիի մետալուրգիական գործարանում:

1962 թ. ընտանիքով տեղափոխվում է Հայաստան, աշխատում է «Հայհիդրոէներգաշին» կազմակերպությունում: Մահացել է Երևանում 1973 թ. հունվարին:

Մեծ եղեռնից կես դար անց՝ 1965 թ. մարտի 5-ին, աշակերտական տետրի մեջ իր ձեռագրով հատուկ եղբորորդու՝ Ռաֆայել Իշխանյանի համար նա գրի է առնում իր կյանքի պատմությունը, մասնավորապես ցեղասպանության ժամանակ իր փորձառությունը: Բացի իր անձնական փորձառությունից, նա իր 12 թերթանոց տետրի վերջում գրի է առել նաև մեկ այլ տրապիզոնցու՝ Սուրեն Օհանյանի պատմությունը: Հուշերի վերջում թվականն է՝ 5/04. 65 թ., իսկ տետրի կազմի հետևամասում՝ տետրի արտադրության թիվը՝ 1964 թ.: Հուշերը թանգարան-ինստիտուտին է փոխանցել Ռաֆայել Իշխանյանի որդին՝ Վահան Իշխանյանը:

Այստեղ հրապարակում ենք Հարություն Կիրակոսյանի հուշերն ուղղագրական և կետադրական ուղղումներով: Առանձին բառերի, անձնանունների և տեղանունների վերաբերյալ տալիս ենք լրացուցիչ բացատրություններ ինչպես տողատակում, այնպես էլ ուղղանկյուն փակագծերի մեջ:

Հարություն Կիրակոսյանի հուշերը

1915 թ. Տրապիզոնի հայկական բոլոր թաղամասերի պատերին տեղի թուրք կառավարության կողմից հետևյալ բովանդակությամբ թղթեր փակցվեցին. «Հայտարարությունից երեք օր հետո... Տրապիզոնի հայությունը պետք է տեղահանվի, տեղահանությունը պետք է կատարվի երեք խմբով»:


Հայտարարության օրերին ոստիկանները շրջում էին հայկական թաղերում, հանգստացնում ժողովրդին՝ ասելով, որ նրանք չմտածեն, քանի որ նրանց տեղահանե-

լու են Գյումուշխանե⁶, Երզնկա, և իբր այնտեղ պետությունը նրանց համար հնարավոր բոլոր միջոցները կատեղծի մինչև պատերազմի ավարտը, որից հետո նորից կարող են վերադառնալ իրենց տները. առայժմ նրանք կարող են փակել իրենց դռները և բանալիները հանձնել կառավարությանը՝ ապահով լինելով իրերի համար:

Լրացավ հայտարարության երեք օրը. չորրորդ օրն առավոտյան ոստիկանները, հավաքելով մեր թաղի հայերին, խումբ-խումբ հանեցին քաղաքից դուրս՝ հայոց գերեզմանատնից ոչ հեռու գտնվող մի հարթավայր, և ասկյարներով շրջապատելով՝ տարան (աքսորյալների առաջին խումբը մեր թաղի հայերն էին):

Հասանք Տրապիզոնին մոտ գտնվող քիրեյխանեն (կրի գործարան) [հավանաբար կրի արտադրության վայր, թրք. Kireç բառից – Ն. Հ.]: Շրջապատված «պահապան» ասկյարներով՝ առաջին օրը գիշերեցինք այդտեղ՝ բացօթյա:

Մի քանի օր հետո խիստ հսկողության տակ հասանք փոքրիկ գյուղաքաղաք Գյումուշխանե: Դեռ քաղաք չմտած՝ մեզ մոտեցան մի խումբ չեթեներ՝ [անկանոն զինվորականներ, ավագակախումբ – Ն. Հ.] զինված ատրճանակներով, դամաներով (երկբերան դաշույն), կրծքները ծածկված փամփիշտակալներով:



Լուս. 2. Հարություն Կիրակոսյանի հուշատետրից մեկ էջ (Հարություն Կիրակոսյանի ընտանեկան արխիվ):

6 Բնակավայր Տրապիզոնի վիլայեթում՝ Տրապիզոն քաղաքից մոտ 105 կմ հարավ:

Չեթենները խումբը կանգնեցրին քաղաքի կենտրոնում՝ ճանապարհի վրա: Նրանց ավագը, խիստ հայացքով մոտենալով խմբին, կարգադրեց տղամարդկանց առանձնացնել՝ ասելով, թե այդ գիշեր տղամարդիկ և կանայք ջոկ-ջոկ պետք է գիշերեն:

Առանձնացան տղամարդիկ, որոնց հետ բաժանվեցին նաև իմ հասակի 10-15 տարեկան տղաներ. ես մնացի կանանց խմբում:

Մույթը վրա էր հասել. չեթենների ավագը հրամայեց տանել տղամարդկանց, իսկ կանանց լցրին մի ախոռ և դռան մոտ կանգնեցրին երկու զինված ասկյար:

Առաջին սարսափը տիրեց ողջ խմբին: Մի քանի կանայք գիկումները (ջրի պղնձե ամաններ) մեկնում էին դրսում կանգնած թուրք կանանց և տղաներին ու խնդրում, որ ջուր բերեն: Նրանք տանում էին գիկումները և այլևս չէին վերադառնում:

Խոր մթության մեջ ախոռի զանազան անկյուններից լսվում էին ծանր հեկեկանքներ. ոչ ոքի քունը չէր տանում: Խմբի անդամներից յուրաքանչյուրը զգում էր, որ ինչ-որ զարհուրելի բան է կատարվելու. շատերը լաց էին լինում և շշնջում, թե տղամարդկանց տարան սպանելու: Լուսացավ: Առավոտյան ասկյարները, ախոռի դուռը բանալով, դիմեցին մեզ. «չըբըն դիշարի գյավուրլար (դու՛րս եկեք, անհավատներ)»: Խումբն ամբողջությամբ դուրս եկավ ախոռից, ասկյարներն անմիջապես շրջապատեցին մեզ և հրամայեցին քայլել:

Կանանցից շատերը խնդրում, աղաչում էին ասկյարներին, որ ասեն, թե ուր տարան իրենց ամուսիններին, որդիներին: Ասկյարները պատասխանում էին, որ նրանք շուտով կգան:

Գնում ենք՝ շրջապատված ասկյարներով: Մի քանի օրից, դեռ Երզնկա չհասած, գիշերելու համար մեզ նորից լցրին մի մեծ ախոռ: Մույթն ընկել էր: Ներս մտան մի քանի չեթեններ և սկսեցին պտտվել խմբի մեջ, մեկ էլ ախոռի զանազան մասերում լացուկոծ լսվեց: Չեթենները մայրերից խլում էին նրանց աղջիկներին և թևերից բռնած, քարշ տալով տանում էին: Դուստրերին փրկելու մայրերի բոլոր դիմադրություններն ու ջանքերն իզուր էին: Խեղճերի դիմադրության ամեն մի փորձ պատասխանվում էր չեթենների քացիներով: Գիշերվա խավարում իրենց գավակներից գրկված մայրերի լացուկոծը սգի էր մատնել բոլորին: Այդ օրից անցել է 50 տարի. սգավոր մայրերի վիշտն ու կսկիծը մինչև հիմա էլ մնացել են հիշողությանս մեջ:

Առավոտյան չեթենները եկան, շրջեցին խմբի մեջ և մի փոքր խորհրդակցելուց հետո նրանցից չորսը մոտեցան ախոռի դռանը և կարգադրեցին աքսորյալներին մեկ-մեկ դուրս գալ: Հերթով մոտենում էինք դռանը, չեթենները խուզարկում էին մեզ, խլում թաքցրած զարդերը և դրամներն ու թողնում դուրս: Ավարը հավաքելուց հետո նրանք նստեցին ձիերն ու հեռացան: Այնուհետև նորից ասկյարներով շրջապատված՝ մենք շարժվեցինք:

Մի քանի օր հետո հասանք Երզնկա, մեզ նստեցրին ճանապարհի եզրին՝ հայոց գերեզմանատան մոտ (գերեզմանատանը Էրզրումի գաղթականներն էին): Երեք օր մնացինք Երզնկայում, սովորականի նման գիշերում էինք հողի վրա՝ գլխներիս տակ դնելով մի քար:

Մեզ մոտենում էին թուրք, քուրդ տղաներ, հայիոյում, քարեր նետում, ծաղրում: Լուռ տանում էինք ամեն մի ցավ, հայիոյանք, վիրավորանք. կորցրել էինք մեր մարդկային արժանապատվությունը: Ասկյարների հսկողությունը մեզ վրա այնքան էլ խիստ չէր, բայց հեռանալ կամ փախուստի դիմել, միևնույն է, չէինք կարող, քանի որ յուրաքանչյուր թուրք կամ քուրդ իրեն հանդիպած ցանկացած հայի իրավունք ունեւ տեղն ու տեղը սպանել:

Չորրորդ օրվա առավոտյան ճանապարհվեցինք, մի քանի օրից հասանք Քեմախ, գիշերելու համար մեզ իջեցրին Եփրատի ափը: Բոլորը ցրվեցին խմբից ոչ շատ հեռու, ցախ և զանազան խոտեր հավաքելու համար: Մեր սնունդը ճանապարհին արտերից հավաքած հատիկներն ու խաշած զանազան կանաչիներն էին:

Սովորական երևույթ էր ճանապարհին քաղցի, հոգնածության կամ հիվանդության պատճառով խմբից հետ մնացողներին սպանելը. լսված հրացանի յուրաքանչյուր ձայնից զգում էինք, որ նորից ասկյարները սպանեցին մեկին: Չէինք հետաքրքրվում սպանվածների ով լինելով, որովհետև դա արդեն սովորական երևույթ էր դարձել մեզ համար, և համոզված էինք, որ նույն վախճանն էլ կարող է մեզ վիճակվել:

Օրը մթնում էր, մեզանից յուրաքանչյուրը ոտքերի փաթաթած չուլերը կարգի էր բերում. քայլելուց շատերի ոտքերն ուռել էին ու վերքեր առաջացել: Խմբից շատերը պառկել էին, մյուսներն էլ պատրաստվում էին քնել: Մեկ էլ խմբի մեջ շշուկ տարածվեց, թե երկու կին իրենց գցել են գետը: Ոմանք ցավում էին, շատերն էլ երանի էին տալիս խեղդվածներին, թե ազատվեցին տանջանքներից:

Առավոտ է, լուսացավ, խմբից յուրաքանչյուրը սկսեց զբաղվել իր առօրյա հոգսերով, նորից շշուկ, թե այնինչը իրեն գցեց գետը:

Ցերեկ է, մեզ մոտեցան մի քանի չեթեներ, շոջեցին ամբողջ խումբը: Բայց ոչ որի ոչ մի վնաս չտվեցին և հեռացան: Մթնեց, ևս մի գիշեր Եփրատի գով ափին անցկացրինք:

Երրորդ օրն առավոտյան լույսը նոր էր սփռել իր թները, երբ ասկյարները հրամայեցին պատրաստվել ճանապարհվելու: Սկսեցինք պատրաստվել, ոմանք ոտքերը փաթաթեցին չուլերով, շատերն էլ նախորդ օրվա պատրաստած «ճաշը» կերան ու վեր կացան ճանապարհվելու: Ասկյարներն իրենց սովորական կոպիտ հայիոյանքներով, հրացանների կոթերի հարվածներով շտապեցնում էին մեզ:

Գնում էինք, շարունակում ճանապարհը. ինչ-որ վախ ընկավ բոլորիս սիրտը, զգում էինք, որ այստեղ ինչ-որ վատ բան է կատարվելու:

Անցել էինք ոչ շատ տարածություն, հասանք այն կամուրջը, որը Եփրատի ձախ ափը միացնում էր աջ ափին: Հետ նայեցինք, ի՞նչ, մի խումբ ձիավոր չեթեներ մեզ էին հետևում, հասկացանք այդ օրվա մեր գլխին գալիք զուլումը: Լսեցինք խմբի վերջից հրացանի չորս կրակոց, նորից սպանեցին խմբից հետ մնացածներին: Անցնում ենք կամուրջը, մեկ էլ ի՞նչ, կանանցից երեքին միայն տեսա իրենց գետը գցելիս, նորից երանի էինք տալիս խեղդվածներին:

Չնայած համոզված էինք, որ մեր մահվան օրերը հաշված էին, հասկացել էինք, որ կոտորվելու ենք, մահն անխուսափելի է, այնուամենայնիվ, չէինք տխրում, կենդանի

մեռելներ էինք, փառք էինք տալիս, որ շուտով ազատվելու ենք, վերջ է դրվելու մեր տանջանքներին:

Հասանք Քեմախից ոչ հեռու մի ձոր, որտեղից հոսում էր բարակ մի առու: Տեղավորվեցինք ձորի աջ լանջում՝ ոչ մեծ մի տափարակի վրա: Մեզանից յուրաքանչյուրը տեղավորվեց գիշերելու փոքր հողատարածության վրա: Մեկ էլ ի՞նչ, աքտոյալներիս հետևող չեթեների խումբը մեզանից ոչ հեռու մի բարձունքի վրա իջավ ձիերից: Չեթեների մեծը կարգադրեց խումբը բաժանել երեք մասի՝ կանանց, տղաների, աղջիկների ու երիտասարդ կանանց:

Սարսափը տիրեց մեզ, զգում էինք, որ այսօր մեր վերջին օրն է, չէինք խոսում, գույներս գցել էինք, սարսուռ էր տիրել մեզ: Մեկ էլ ի՞նչ, խորհրդակցեցին չեթեները՝ չենք իմանում, նրանց մեծը ձեռքով ցույց տալով մեզ՝ առանձնացած տղաներիս, հրամայեց միանալ կանանց, ուրախացանք, ժպիտ անցավ մեր այտերով, բարձր ձայնով «եաշասըն փատիշահումուզ (կեցցե՛ մեր թագավորը)» գոռացինք ու վազ տալով միացանք խմբին: Մեր մայրերը, որոնց տիրել էր հուզումը, տեսնելով մեզ իրենց մոտ, ուրախությունից թրջեցին իրենց աչքերն արտասուքով:

Օրը մթնում էր, բացի մեր խմբից՝ չեթեները մյուսներին շրջապատած տարան, ո՛ր...

Մենք՝ մնացածներս, սկսեցինք մեր սովորական զբաղմունքը՝ օջախներ վառել, «կերակուր» եփել:

Մթնեց, պատկեցինք քնելու, խմբի կանանցից շատերը չէին քնում, հեկեկում էին, ցամաքել էր նրանց արտասուքը:

Առավոտ էր, արևի ճառագայթները մոտակա սարերից իջնում էին ցած, լուսացավ, պատրաստվեցինք շարունակել ճանապարհը:

Գնում էինք, ճանապարհը ձգվում էր Եփրատին զուգահեռ: Նրա ափերը սևացել էին մեզանից առաջ նույն մեր բախտին արժանացած այլ գյուղերից ու քաղաքներից աքտոյալ հայ կանանց, տղամարդկանց և անչափահասների դիակներով, իսկ ճանապարհին հաճախ ընկած էին հայերի նեխած, քայքայված, այլանդակված դիակները: Քայլում էինք՝ այդ ողբալի տեսարաններին ակնառես լինելով: Քարացել էր մեր սիրտը, արտասուքներս չորացել, տեսնում էինք այն, ինչ մեզ էր սպասում:

Գնում էինք, քայլում ուռած, հին շորերով փաթաթված, վերքոտ ոտքերով: Մի քանի օրից հասանք Էզին (Ակն): Նորից իջանք գիշերելու Եփրատի ափին: Էզինը փոքրիկ գյուղաքաղաք էր, նրա բնական գեղեցկությունը գերազանցում էր մինչ այդ մեր տեսած քաղաքները: Եփրատի երկու ափերի բարձունքները ծածկված էին բազմատեսակ այգիներով և պտղատու ծառերով: Խումբը հանգստանում էր Եփրատի աջ ափին, մենք՝ տղաներս, ցրվեցինք մոտակա թթի այգիները՝ հավաքելու ծառերի տակ թափված չոր թուփը և այլ մրգեր: Ակնում չէր մնացել ոչ մի հայ. բոլորը տեղահան էին արված:

Խմբում ծխում էին նորից օջախները, կանայք զբաղված էին իրենց օրվա «կերակուրը» պատրաստելով: Գիշերեցինք այդ օրը ևս, նորից Եփրատի հոսանքի զովը փակեց մեր աչքերը: Քնեցին շատերը, իսկ ոմանց աչքերը չէին փակվում, չէին քնում,

նրանց առօրյա ցավերը չէին հեռանում, չէին մոռանում իրենց զավակներին և հարազատներին:

Առավոտ է, զարթնեց խումբը, վեր կացանք, նորից մեզնից յուրաքանչյուրը զբաղված էր իր առօրյա հոգսերով: Մեկ էլ ի՞նչ, քրոջս ամուսնու մայրը, որի միակ տղային տարել էին Գյումուշխասնե տղամարդկանց հետ, ամբողջ ճանապարհին մտածում էր նրա մասին, հույս էինք տալիս, հանգստացնում խեղճ պատավին, թե մի մտածիր, Երվանդը ողջ է, կգա: Նա կտրել էր հույսը և շատ հանգիստ մոտեցավ Եփրատի ափին ու իրեն գցեց ջուրը, խառնվեց ջրի ալիքներին, անհայտացավ՝ վերջ տալով ցավերին: Նրան հետևեց նաև մի ուրիշը, որն ուժասպառ էր եղել, այլևս հնարավորություն չունեի շարունակելու տանջալի ճանապարհը:

Երկու օր գիշերեցինք Ակնում, երրորդ օրն առավոտյան շարունակեցինք ճանապարհը, չեմ հիշում որ գյուղից ոչ հեռու, մեզ նստեցրին գիշերելու, օրը նոր էր մթնել, ասկյարները սկսեցին հրաձգությունը, չանցավ շատ ժամանակ՝ մեզ մոտեցան մի խումբ զինված քրդեր: Ասկյարները հեռացան մեզանից: Զինված քրդերը հրացանի սպառնալիքների տակ տարան մեզ մոտակա գյուղը և լցրին առանց ծածկի, ոչ բարձր պատերով շրջապատված մի ախոռ:

Գիշերեցինք այդ օրը: Առավոտյան եկան մի քանի զինված քրդեր, ախոռի մուտքի երկու կողմերը շարքով, ծալապատիկ նստեցին: Զինված մեր նոր «պահապան» քրդերը մեզ՝ խմբի անդամներին, մեկ-մեկ դուրս բերելով, պառկեցնում, այլանդակ ձևով խուզարկում և եթե դրամ էին գտնում, վերցնում էին և հանում հագուստները, որոնք իրենց դուր էին գալիս: Վերջացավ խուզարկությունը. զինված քրդերի սպառնալիքների տակ սկսեցինք քայլել՝ շարունակելով ճանապարհը:

Գյուղի մեջ, թե գյուղից դուրս, քուրդ կանայք, թե տղաները, հետևելով մեզ՝ քարեր էին շարտում, ծեծում խմբից շատերին: Տանում էինք ամեն մի ցավ ու վիրավորանք: Մայրս նկատեց, որ գլխավորապես հարվածում էին տղաներին, հանեց իր վերին շորը, հագցրեց ինձ, որ չնկատեն իմ տղա լինելը. այդպես քայլեցի այդ օրը:

Մի քանի օրից, դեռ չհասած Արաբկիրի, ճանապարհին զգացինք ծանր, նեխած լեշերի հոտ: Կարճ ժամանակից հետո ճանապարհից ոչ շատ հեռու մի հարթավայրում տեսանք արևի կիզիչ ճառագայթներից ուռած, այլանդակված մի քանի հարյուր սպանված հայերի դիակներ:

Անցանք այդ ողբալի տեսարանը: Հասանք Արաբկիրից ոչ հեռու մի դաշտավայր՝ գիշերելու: Այդ պատմական, հին հայկական փոքրիկ քաղաքում չէր մնացել ոչ մի հայ. բոլորը գոհ էին դարձել երիտասարդ թուրքերի դաժանություններին:

Սովորականի նման մեզ մոտենում էին թուրք, քուրդ աղջիկներ և տղաներ, ծիծաղում, քարեր շարտում, բռունցքներն իրար խփելով գոռում էին. «քյաֆերլեր գեբերին, սիզե էյի լյազիմ տուր» (գլավուրներ, սատկե՛ք, ձեզ այդպես է հարկավոր):

Մեկ օր գիշերեցինք Արաբկիրի մոտակա այդ դաշտավայրում: Մի քանի օրից հասանք Եփրատի այն մասը, որտեղից լաստով տեղափոխվեցինք գետի ձախ ափն ու շարունակեցինք քայլել: Անցանք Գյումիշ-մադեն կոչված վայրը, վաթսուներկուերորդ օրն էր, հասանք Խարբերդից ցածր, տափարակ վայրում գտնվող Մամուրեթ-

ույ Ազիզ⁷ քաղաքը: Տարան մեզ հայոց գերեզմանատունը: Չորս օր մնացինք գերեզմանատանը. Մեզանից առաջ ուրիշ հայ արքայալներ էին իջևանել այդտեղ: Իմբից ոչ ոքի չէին թողնում դուրս գալ գերեզմանատանից: Այդտեղ մեզ տալիս էին հաց ու բերում տակառներով ջուր:

Ամառվա կիզիչ շոգը ծանրացրել էր գերեզմանատան աղտեղության ծանր հոտը: Իմբից ոմանք մահացան, ոմանք էլ կիսամեռ վիճակում էին: Մի փոլիս (ոստիկան) և մի ասկյար հավաքեցին տղաներիս, ստիպեցին փորել ոչ շատ խորը մի մեծ փոս ու կարգադրեցին մեռելների, ինչպես նաև ցույց տալով մի քանի հոգու, ովքեր դեռ մահացած չէին, կիսակենդան մարմինները քարշ տալ, լցնել փոսը և ծածկել հողով: Կատարեցինք ոստիկանի հրամանը: Դեռ չմահացածների աղերսը, նրանց բերանից հազիվ լսելի բառերը չէին հուզում մեր քարացած սրտերը, անուշադիր էինք թողնում նրանց ողբը, չէինք կարող չկատարել փոլիսի հրամանը, հակառակ դեպքում մեզ էլ նույն վիճակին կմատնեին:

Հինգերորդ օրն էր, առավոտյան մեզ դուրս բերեցին գերեզմանատանից, շրջապատված ասկյարներով և բաշխրոզուկներով, տարան: Հասանք Ուլ-Ազիզից ոչ հեռու Գյուլջուկ կոչված փոքրիկ լիճը: Երեկո էր, մութը վրա էր հասել, սկսվեց կոտորածը, հրացաններով և սառը գեներով:

Հանգստացավ ամեն ինչ, երկու տղա կենդանի էինք մնացել դիակների մեջ: Մութ գիշեր էր, զգույշ վեր կացանք ու սկսեցինք ճանապարհ ընկել Ուլ-Ազիզ: Հասանք քաղաք, իմացանք, որ կառավարությունը որբանոց է բացել և հավաքում է կենդանի մնացած հայ որբերին: Իմանալով որբանոցի տեղը՝ երկու դժբախտներս գնացինք, դիմեցինք որբանոցի մյուդիր Թահսին բեյին: Նա ընդունեց մեզ: Չանցավ շատ ժամանակ, նույն օրն ևեթ, Թահսին բեյը ինձ կանչեց իր մոտ, նրա մոտ էր նաև իր մեծ տղան՝ Մյուքերեմը, որը հազիվ կլիներ իմ հասակին. հայրը պատվիրեց տղային տանել ինձ իր տուն: Մյուքերեմի հետ գնացի տուն, լողացրին ինձ, փոխեցին շորերս, անունս դրեցին Իսմայիլ, և մնացի Թահսին բեյի տանը: Նա ուներ երկու տղա և մեկ աղջիկ: Բացի ինձանից, նրա տանը կային ևս երկու երզնկացի երիտասարդ հայ աղջիկներ: Փոքրի, որը հազիվ կլիներ իմ հասակին, անունը դրել էին Իգպալ, իսկ մեծինը, որը կլիներ քսան տարեկան՝ Ֆաթմա:

Անցել էր տասը օր ինչ Թահսին բեյի տանն էի. նրա բնակարանը բաղկացած էր հինգ սենյակից, սենյակներից մեկում քնում էինք ես, Իգպալը և Ֆաթման: Մենք միմյանց հետ գաղտնի հայերեն էինք խոսում, այնպես, որ Թահսին բեյի ընտանքիքի անդամներից ոչ ոք չլսի մեր խոսակցությունը, իսկ ընդհանրապես մեր խոսակցության լեզուն տաճկերենն էր: Իգպալն ու Ֆաթման պատմում էին իրենց կրած տանջանքների մասին, որոնք չէին տարբերվում մեր կրած զարհուրանքներից:

Իմանալու համար, թե ինչ է անում իմ ընկերը, որին թողել էի որբանոցում, գնացի այն շենքը, որտեղ որբերն էին: Դժբախտաբար, այնտեղ ոչ մի որբ չէր մնացել: Հետաքրքրվեցի Թահսին բեյի տղայից՝ Մյուքերեմից, թե ինչ արեցին որբերին: Նա

7 Մամուրեթ-ույ Ազիզը բնակավայր է Խարբերդի վիլայեթում, Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք:

պարզ ասաց, որ նրանց տարան կոտորեցին: Քառասունինը տարի անց պարզվեց, որ Թալեաթ փաշան հրաման էր տվել տաճիկ կառավարության կողմից տարբեր վայրերում բացված որբանոցներում գտնվող բոլոր հայ որբերի կյանքին անխնա վերջ տալ⁸:

Մեկուկես տարի Ուլ-Ազիզում մնալուց հետո Թահսին բեյի ընտանիքի հետ ֆուրգոններով ճանապարհվեցինք Կոնիա: Ճանապարհին եղա Մալաթիայում, Սեբաստիայում, Կեսարիայում, և հասանք Կոնիա: Վերոհիշյալ քաղաքների հայերին աքսորել էին: Ուլ-Ազիզում մի քանի թրքացած հայերի պատահեցի, Կեսարիայում ևս՝ մի քանի թրքախոս հայերի: Կոնիայում ևս կային կոտորածներից ողջ մնացած հայ որբեր և ընտանիքներ:

1918 թիվն էր, վերջացավ Առաջին համաշխարհային պատերազմը. հարմար մի առիթ գտնելով՝ ծայտյալ հեռացա Թահսին բեյի տնից, նստեցի գնացք և մի քանի օրից հասա Սկյուտաք⁹, որտեղ Պոլսո բարեգործական ընկերության ներկայացուցիչները գնացքից իջնող որբերին և հայ ընտանիքներին հավաքում, տանում էին Պոլսի Գում Գափու մայր եկեղեցին¹⁰, որտեղ զանազան վայրերից հավաքված էին շատ որբեր, ինչպես նաև կանայք ու տղամարդիկ:

1913 թվին մեծ եղբայրս Տրապիզոնից մեկնել էր Ռոստով՝ ուսումը շարունակելու: Ես, իմանալով այդ, մեկ տարի Պոլսո մայր եկեղեցում մնալուց հետո որոշեցի մեկնել Տրապիզոն, ապա՝ Ռոսասատան եղբորս գտնելու:

8 Մեծ եղեռնի 50-ամյակը նշանավորվեց այն փաստող բազմաթիվ հրատարակությունների երևան գալով: Այստեղ թերևս դժվար է միանշանակ պնդել, թե հատկապես որ աղբյուրի վրա հիմնվելով է հեղինակը խոսում բոլոր երեխաների ֆիզիկական ոչնչացման մասին, սակայն փաստ է, որ դեպքերից 49 տարի անց հրատարակված աղբյուր է Արամ Աստուխյանի կազմած «Շայիմ բեյի հուշերը» (երկրորդ հրատարակություն), որտեղ ներկայացված են Թալեաթի կողմից հայ երեխաներին ոչնչացնելու մտադրությունը փաստող փաստաթղթեր: Տե՛ս օրինակ 1915 թ. դեկտեմբերի 12-ի և 1916 թ. հունվարի 23-ի հրամանները (Արամ Աստուխյան, *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոլորածները և Թալեաթ փաշա* (Պեյրոթ, 1965: Երևան, Արևիկ, 1990), 125-129: Դեկտեմբերի 12-ի հեռագրում մասնավորապես նշվում է. «Հաւաքեցէք եւ սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել զուլումը, որոնք ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք»: Հեռագրի մեկնաբանության մեջ նշվում է, որ ««Կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք» պարբերութիւնը կը նշանակէ. – «Անապատները ղրկեցէք», այսինքն՝ մեռցուցէք»։ տե՛ս Արամ Աստուխյան, *Մեծ ոճիրը*, 125: Այդուհանդերձ, հեռագրից պարզ է դառնում, որ այդ ամենը չէր վերաբերում այն որբերին, որոնք «չեն կրնար յիշել զուլումը», ուստի այդքան էլ ճիշտ չէ պնդել, որ նպատակը բոլոր հայ երեխաների ֆիզիկական ոչնչացումն է եղել: Այնուհայտ է, որ այն երեխաները, որոնք ֆիզիկապես չէին ոչնչացվելու, թրքացվելու էին թուրքական որբանոցներում: Հայ երեխաների թրքացման գործընթացի մասին առավել մանրամասն տե՛ս Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4 no. 1 (2016), 25-44:

Նոյն՝ 1965 թ. հրատարակված մեկ այլ կարևոր աղբյուր է Գերսամ Ահարոնեանի «Յուշամատենան Մեծ եղեռնի» գիրքը, որտեղ ևս խոսվում է դիտարկվող խնդրի մասին: Տե՛ս Գերսամ Ահարոնեան, *Յուշամատենան Մեծ եղեռնի (1915-1965)* (Պեյրոթ, Ատլաս, 1965), 86, 255:

Ցեղասպանության տարիներին հայ երեխաների ճակատագրի մասին տե՛ս նաև, Vahakn Dadrian, “Children as Victims of Genocide: The Armenian Case,” *Journal of Genocide Research* 5, no. 3 (2013): 421-427:

9 Պոլսի ափական հատվածում գտնվող թաղամաս:

10 Խոսքը, հավանաբար, Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին է:

Դիմեցի Պոլսո քարեգործական ընկերության նախագահին. նա տվեց ինձ ճանապարհաձև, ու մեկնեցի Տրապիզոն: Երեք օրվա ճանապարհորդությունից հետո նավը հասավ Տրապիզոն: Իջա նավից, ապա նավակով դուրս եկանք նավամատույց ու քաղաք: Գտա մի քանի հայրենակից հայերի, որոնք բախտի բերմամբ ողջ էին մնացել: Տեղավորվեցի նրանց մոտ, գիշերեցի, հաջորդ օրը նրանց խորհրդով դիմեցի Տաճկաստանում մեծահարուստ Իբրանույանի մագազինի դիրեկտոր [խանութի տնօրեն] Միհրան էֆենդիին աշխատանքի ընդունվելու համար: Միհրան էֆենդին չմերժեց իմ խնդրանքը, ընդունվեցի իբրև գործակատար, և իր օգնական Թագվոր էֆենդիին կարգադրեց անվճար ինձ տալ պատրաստի շորեր և կոշիկ:

Սկսեցի աշխատել: Ճանապարհը դեպի Ռուսաստան ազատ էր: Վեց ամիս հետո եղբայրս տեղեկացավ, որ կենդանի եմ, եկավ Տրապիզոն, վերցրեց ինձ, ու մեկնեցինք Եկատերինոպոլ (Կրասնոդար): Սկսվեց իմ կյանքի երկրորդ շրջանը:

Սուրեն Օհանյանի պատմածը

Տրապիզոնի հայերի աքսորը սկսվելուց երկու-երեք օր առաջ շատ մայրեր 4-ից 10-12 տարեկան զավակներին տարան պատվելիների դպրոցը, երեխաների կյանքը փրկելու համար: Այնտեղ էր նաև մեր դպրոցի ուսուցիչներից Թորոս էֆենդիի տղան՝ Սուրեն Օհանյանը, որը ներկայումս գտնվում է Երևանում, նա պատմեց հետևյալը:

Պատվելիների դպրոցի ընդարձակ բակում հավաքվել էին երեք հարյուրից ավելի երեխաներ: Երեք օր դպրոցի բակում գիշերեցինք, չորրորդ օրը եկան մի քանի փոլիսներ և ասկյարներ, առանձնացրին մեզ՝ 7-ից 12 տարեկան երկու հարյուրի չափ տղաներիս, կազմեցին մի խումբ և, շրջապատված ասկյարներով, տարան Տրապիզոնից ոչ հեռու Ջևիզլիք¹¹ կոչված վայրը և բոլորին սպանեցին: Ինձ և մի քանի տղաների թուրքերը վերցրին իբրև հոգեզավակ: Այդպիսով փրկվեցինք մահից, իսկ պատվելիների դպրոցում մնացած փոքրերին հավաքեցին և տարան լցրին ծովն ու խեղդեցին:

Տրապիզոնի հայության տեղահանումից մեկ ամիս առաջ քաղաքի աչքի ընկնող մարդկանց, մոտավորապես 30 հոգու, որոնց թվում էր նաև Արսեն Եսայանի հայրը՝ Սեդրակ էֆենդին, լցրին նավակները, Մամսուն, թե Կերասուն, լավ չեմ հիշում, տեղափոխելու պատրվակով հեռացրին ծովափից, հրացաններից կրակ բացեցին զոհերի վրա, սպանեցին ու ծովը լցրին: Մեկը, որ թերևս վիրավորված էր, լողալով դուրս եկավ ծովափ ու պատմեց եղելության մասին քաղաքի հայերին:

Ահա տաճիկ երիտասարդ իթթիհատականների կողմից ծրագրված եղեռնում զոհված մեկուկես-երկու միլիոն հայերի չնչին մի տոկոսի զարհուրանքների համառոտ պատմությունը, որին ես սկանառես եմ եղել:

11 Բնակավայր Տրապիզոնի վիլայեթում՝ Տրապիզոն քաղաքից մոտ 30 կմ հարավ-արևմուտք:

Narine S. Hakobyan

**TELLING THE UNTOLD: DEPORTATIONS AND MASSACRES OF TRAPIZON
ARMENIANS IN THE MEMOIRS OF HARUTYUN KIRAKOSSIAN**

SUMMARY

Key-words: Armenian Genocide, Trapizon (Trebizond), Harutyun Kirakossian, memoires, deportation of Armenians, massacres of Armenians, Akn, Arabkir.

In his memoir Harutyun Kirakossian presents his and his family's experience during the Armenian Genocide. In 1915, at the age of eleven, he walked in the death march, lost his family, and survived by chance. He was one of the few Armenians, who not only survived the Armenian Genocide but also wrote memoirs telling his stories to the future generations.

The memoir was written in 1964, 50 years after the Genocide. Of course, time had influence on how he recalls and represents his story. Nevertheless, this memoir is a very important primary source documenting the Armenian Genocide in general, and the experience of Trapizon Armenians, in particular.

Нарине С. Акопян

**РАССКАЗЫВАЯ НЕОПИСУЕМОЕ: ДЕПОРТАЦИИ И МАССОВЫЕ УБИЙСТВА
АРМЯН ТРАПЕЗУНДА В ВОСПОМИНАНИЯХ АРУТЮНА КИРАКОСЯНА**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Трапезунд, Арутюн Киракосян, мемуары, депортация армян, резня армян, Акн, Арабкир.

В своих воспоминаниях Арутюн Киракосян описывает испытания, выпавшие во время Геноцида армян всей его семьи. В 1915 году, когда ему было всего 11 лет, он прошел маршем смерти, потерял семью и выжил лишь чудом, став одним из немногих армян, которые не только остались живы, но и написали воспоминания, передавая описания их испытаний будущим поколениям.

Мемуары были написаны в 1964 году, через 50 лет после Геноцида. Конечно, время оказало свое влияние на написанное, многие детали были забыты. Однако эти мемуары являются очень важным первоисточником для изучения Геноцида армян и особенно депортации и истребления армян Трапезунда.

REFERENCES

Aharonyan, Gersam. *Յուշանկարեան Մեծ եղեռնի* [Commemorative Book on Medz Yeghern]. Beirut: Atlas, 1965;

Anumyan, Meline. *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատաւարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* [Recognition and Condemnation: The Trials of Young Turks (1919-1921 and 1926)]. Yerevan: AGMI, 2013;

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Orphans in the State Orphanages of the Ottoman Empire]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-44;

T'at'oyan, R'obert. *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* [The Question of Western Armenian Population Number in 1878-1914]. Yerevan: AGMI, 2015.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Հասմիկ Գ. Գրիգորյան, պատմ. գիտ. թեկն., մշակութաբան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության իրազորման մեխանիզմները, ցեղասպանության ռճրագործներն ու զոհերը, ոչ զինված դիմադրությունը ցեղասպանությունների ժամանակ, հետցեղասպանություն և հետհիշողություն:

Էլ. հասցե՝ grigoryanhasmik86@yahoo.com

Hasmik G. Grigoryan, PhD in History, cultural anthropologist, researcher at the Department of Contemporary Anthropological Studies, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Republic of Armenia.

Research fields – the mechanisms of Genocide implementation, perpetrators and victims of Genocide, non-armed resistance during the genocides, post-genocide and post-memory.

E-mail: grigoryanhasmik86@yahoo.com

Асмик Г. Григорян, канд. ист. наук, культуролог, научный сотрудник Отдела этнологии современности, Институт археологии и этнографии, Национальная академия наук Республики Армения.

Область исследований – механизмы исполнения Геноцида, изучение жертв и преступников, не вооруженное сопротивление, пост-геноцид и пост-память.

Эл. почта: grigoryanhasmik86@yahoo.com

Նարինե Վ. Մարգարյան – պատմ. գիտ. թեկն., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտնական քարտուղար:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանությունից հետո Մերձավոր Արևելքի արաբական երկրներում հայտնված հայ տարագիրների վիճակը, նրանց սոցիալ-տնտեսական, քաղաքական ինտեգրումը այդ երկրներում, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները տեղի արաբական ժողովուրդների հետ:

Էլ. հասցե՝ narine.margaryan@genocide-museum.am

Нарине В. Маргарян – канд. ист. наук, востоковед, ученый секретарь Фонда «Музей-институт геноцида армян».

Область исследований – положение армянских депортированных лиц на Ближнем Востоке после Геноцида армян, их интеграция в общественно-политическую жизнь арабских стран, а также их взаимоотношения с местным арабским населением.

Эл. почта: narine.margaryan@genocide-museum.am

Narine V. Margaryan, PhD in history, Orientalist, Academic-secretary, Armenian Genocide Museum Institute Foundation.

Research fields – the plight of Armenian refugees in the Arabic countries of the Middle East after the Armenian Genocide, the process of their social – economic and political integration as well as their relations with local Arab population.

E-mail: narine.margaryan@genocide-museum.am

Հայկ Մ. Մարտիրոսյան, պատմ. գիտ. թեկնածու, թուրքագետ, պատմաբան, Էռլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ-Ալեքսանդր համալսարանի (Գերմանիա) հրավիրյալ գիտնական, Յոհաննես Լեփսիուսի տուն-արխիվի (Պոտսդամ) աշխատակից:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ համիդյան կոտորածներ, Հայոց ցեղասպանություն, եվրոպացի ականատեսներ, գերմանական առաքելությունների սկզբնավորում գործունեություն և կայաններ, առաքելությունների աշխատակիցների կենսագրություններ, գերմանական մամուլի արձագանքներ:

Էլ. հասցե՝ martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Hayk M. Martirosyan, PhD in History, turkologist, historian, visiting scholar at the Friedrich-Alexander University (Germany) of Erlangen-Nuremberg, an employee of Johannes Lepsius's House-Archive (Potsdam).

Research fields – Hamidian massacres, Armenian Genocide, European eyewitnesses, initiation of German missions, activities and stations, biographies of mission employees, German press echoes.

E-mail: martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Айк М. Мартиросян, кандидат исторических наук, тюрколог, историк, приглашенный ученый Эрланген-Нюрнбергского университета им. Фридриха-Александра (Германия), сотрудник Дома-архива Иоганна Лепсиуса (Потсдам).

Области исследований – Гамидовская резня, Геноцид армян, европейские очевидцы, инициирование немецких миссий, деятельность и станции, биографии сотрудников миссий, эхо немецкой прессы.

Эл. почта: martirosyan@lepsiushaus-potsdam.de; martirosyan.haykm@gmail.com

Քրիստինե Վ. Նաջարյան, բանասեր, կրթության գործի կազմակերպման մասնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Կրթական ծրագրերի բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության դասավանդման հիմնախնդիրներ, արևմտահայ կրթական կյանք:

Էլ. հասցե՝ kristnajaryan@genocide-museum.am

Kristine V. Najaryan, philologist, specialist in education, PhD student, Head of the Educational Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Genocide education, educational life in Western Armenia.

E-mail: kristnajaryan@genocide-museum.am

Кристина В. Наджарян, филолог, специалист по образованию, соискатель фонда «Музей-институт Геноцида армян», заведующая Отдела образовательных программ Фонда «Музей-институт Геноцида армян».

Область исследований - задачи преподавания Геноцида армян, изучение образовательной жизни в Западной Армении.

Эл. почта: kristnajaryan@genocide-museum.am

Ռոբերտ Ա. Թատոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. հասցե՝ r.tatoyan@gmail.com

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@gmail.com

Роберт А. Татоян, кандидат исторических наук, старший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда «Музей-институт Геноцида армян».

Области исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@gmail.com

Էլինա Ջ. Միրզոյան, բան. գիտ. թեկն., արևելագետ (թյուրքագետ), սիյուն-բազետ, բանասեր (հայոց լեզու և գրականություն), ՀՅԹԻ Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թյուրքահայ, թյուրքական մամուլում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն, ազգային ինքնություն, հայկական թեմատիկան թյուրքական տպագիր մամուլում:

Էլ. հասցե՝ elina.mirzoyan@genocide-museum.am

Elina Z. Mirzoyan, PhD in Philology, orientalist, philology, specialists of Diaspora Studies, researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – The Armenian Genocide in the Turkish, Armenian-Turkish Press, national Identity.

E-mail: elina.mirzoyan@genocide-museum.am

Элина З.Мирзоян, канд. фил. наук, востоковед, филолог, диаспоравед, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян”, Старший преподаватель ЕГУ.

Область исследований – вопрос Геноцида армян на страницах турецкой и армяно-турецкой прессы, национальная идентичность, армянская тематика на страницах турецкой прессы.

Эл. почта: elina.mirzoyan@genocide-museum.am

Թեհմինե Ռ. Մարտոյան, պատմ. գիտ. թեկն., միջազգայնագետ-արևելագետ (իրանագետ), «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Չմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման և քաղաքի հրկիզման պատմություն, զոհի հոգեբանական ժխտում և այլն:

Էլ. հասցե՝ tehminemartoyan@gmail.com

Tehmine R. Martoyan, PhD in History, Specialist on International Relations/Oriental Studies (Iranology), Senior Researcher at the Department of Organizing Museum Exhibitions, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the history of the annihilation of the Armenians and Greeks of Smyrna and the fire of the city, psychological denial of victim, etc.

E-mail: tehminemartoyan@gmail.com

Тегмине Р. Мартоян, канд. ист. наук, специалист по международным отношениям/востоковед (иранист), старший научный сотрудник Отдела организаций музейных выставок Фонда “Музей-Институт Геноцида армян”.

Область исследований – история истребления армян и греков в Смирне и поджога города, психологическое отрицание жертвы.

Эл. почта: tehminemartoyan@gmail.com

Նարինե Ս. Հակոբյան, միջազգայնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցողը, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածներ:

Էլ. հասցե՝ hakobyan.narine@genocide-museum.am

Narine S. Hakobyan, international relations specialist, PhD student at the Armenian Genocide Museum-Institute Foundation, junior researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian massacres of 1894-1896.

E-mail: hakobyan.narine@genocide-museum.am

Нарине С. Акопян, специалист по международным отношениям, соискатель Фонда “Музей-Институт Геноцида армян”. Младший научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-Институт Геноцида армян.”

Область исследований – массовые убийства армян в 1894-1896 годах.

Эл. почта: hakobyan.narine@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Յեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են անվագն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ *Յեղասպանագիտական հանդեսի* տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Յեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը, պաշտոնը և աշխատավայրը, էլ. փոստի հասցեն:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 100-150 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի ազգանուն, անուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հարոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական փարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'p'e'ran, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշարակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թ-էշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)” in Armenian Genocide – 100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարատրություններ Հայաստան-Սփիոք յարաբերությունների համատեքստում», *Սփիոք և ինքնություն* (խմբ.՝ Շահան Գանտահարյան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in *Diaspora and Identity* (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տոբն. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

Հղումներ

10. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition-ի*:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդաններից մինչև Պաղեսարին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդաններից մինչև Պաղեսարին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”; որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146. Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը:
Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle. Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը:
Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը:

Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
 2. Վերժինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90, հոդվածների ժողովածու* (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
 3. Сурен Манукян, "Наказание за верность". От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.
- 2) Բազմակի ոչ շարունակական հղումներնրի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով(երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:

Օր.՝

1. Dadrian, "Ottoman Archives," 471.
2. Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:
3. Манукян, "Наказание за верность," 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier):

Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
2. Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը:

Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.
2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հողվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հողվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», «и др.», “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հողվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “*King Lear* and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆանել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը: Օր.՝

1. Rutz, “*King Lear*,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը (երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

11. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոս 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտ 2017 թ.:

12. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

13. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ë ë
Թ թ - T' t'
Ճ ճ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Չ չ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրելի օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ ճ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ յ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք կ - Q q
Եվ էվ Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ i
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia